

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ – 2022, №2

ՀՀ ԳԱԱ ՏԻ

ԵՐԵՎԱՆ - 2022

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

- ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ. գ. դ., պրոֆեսոր **Յուրի Մուվարյան** (Հայաստան)
տ. գ. դ. **Դավիթ Հարությունյան** (Հայաստան)
տ. գ. դ., պրոֆեսոր **Ռոբերտ Սարինյան** (Հայաստան)
տ. գ. դ., պրոֆեսոր **Աշոտ Մարկոսյան** (Հայաստան)
տ. գ. դ., պրոֆեսոր **Մերգել Դոխոյան** (Ռուսաստան)
տ. գ. դ., պրոֆեսոր **Մերգել Քակեջյան** (Ռուսաստան)
բ.գ.թ. **Վլադիմիր Գերասիմով** (Ռուսաստան)
տ. գ. թ., դոցենտ **Մերի Մանուչարյան** (Հայաստան)
տ. գ. թ., դոցենտ **Բելլա Գաբրիելյան** (Հայաստան)
տեխ.գ.թ. **Ստեփան Պապիկյան** (Հայաստան)
տ. գ. թ. **Գեղեցիկ Աֆունց** (Գերմանիա)
տ. գ. թ. **Վլադիմիր Ասրիյան** (Իսպանիա)
տ. գ. թ. **Եվգենյա Հակոբյան** (Հայաստան)
տ. գ. թ. **Շողեր Պողոսյան** (Հայաստան)
տ. գ. թ. **Էլյանորա Մաթևոսյան** (Հայաստան)

Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՌՈՒԲԵՆՏ ՄԱՐԻՆՅԱՆ

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
(գիտական հոդվածների ժողովածու – 2022, №2) / Պատ. խմբագիր՝ Ռ.Ն.Սարինյան. ՀՀ ԳԱԱ Մ. Քո-
թանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: - Եր., 2022, 490 էջ:

Ժողովածուն օգտակար կլինի տնտեսության տարբեր ոլորտների հիմնախնդիրների լուծման
գործում, քանի որ նրանում տեղ գտած հոդվածները բազմալորտ են և ընդգրկում են գիտական չորս
ուղղություններ: Բոլոր հոդվածներն իրենց մեջ պարունակում են գիտական նորություններ, որոնք
կարող են օգնել օրենսդիր և գործադիր մարմիններին տնտեսության մեջ առկա հիմնախնդիրնե-
րին համակարգային լուծում տալուն:

Ժողովածուն գիտական ուղեցույց է գիտությամբ հետաքրքրված անձանց՝ գիտաշխատողների,
հայցորդների, ասպիրանտների, ինչպես նաև բուհերի դասախոսական անձնակազմի համար:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

0015, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 58-19-71

E-mail: nas_ie@sci.am

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2022

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА**

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ – 2022, №2

**НАН РА ИЭ
ЕРЕВАН - 2022**

Рекомендовано к изданию решением
ученого совета Института экономики
им. М. Котаняна НАН РА

Редакционный совет:

Академик НАН РА, д.э.н., профессор **Юрий Суварян** (Армения)
д. э. н. **Давид Арутюнян** (Армения)
д. э. н., профессор **Роберт Саринян** (Армения)
д. э. н., профессор **Ашот Маркосян** (Армения)
д. э. н., профессор **Сергей Дохолян** (Россия)
д. э. н., профессор **Сергей Календжян** (Россия)
к.ф.н. **Владимир Герасимов** (Россия)
к. э. н., доцент **Мери Манучарян** (Армения)
к. э. н., доцент **Белла Габриелян** (Армения)
к. т. н. **Степан Папикян** (Армения)
к. э. н. **Гегецик Афуңц** (Германия)
к. э. н. **Владимир Асриян** (Испания)
к. э. н. **Евгения Акопян** (Армения)
к. э. н. **Шогер Погосян** (Армения)
к. э. н. **Элянора Матевосян** (Армения)

Ответственный редактор сборника:

доктор экономических наук, профессор
РОБЕРТ САРИНЯН

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения.
Сборник научных статей -2022, №2 / Отв. редактор Р.Н.Саринян. Институт экономики им.
М. Котаняна НАН РА. Ер., 2022, 490 с.

Сборник полезен для решения проблем в различных областях экономики, так как публикуемые в сборнике статьи являются многоотраслевыми и включают в себя 4 научных направления. Все статьи содержат в себе научные новшества, которые могут помочь законодательным и исполнительным органам власти системно решать проблемы, возникшие в экономике.

Сборник является научным справочником для лиц, интересующихся наукой: научных сотрудников, соискателей, аспирантов, а также профессорско-преподавательского состава ВУЗ-ов.

Институт экономики имени М. Котаняна НАН РА

Республика Армения,
0015, Ереван, ул. Св. Григора Лусаворича 15
Тел. (+3741) 58-19-71, E-mail: nas_ie@sci.am

© Институт экономики имени М. Котаняна НАН РА, 2022

**NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ECONOMICS NAMED AFTER M. KOTANYAN**

**THE CONTEMPORARY ISSUES OF
SOCIO-ECONOMIC DEVELOPMENT IN THE
REPUBLIC OF ARMENIA**

SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2022, №2

Institute of Economics of the NAS RA

YEREVAN - 2022

Approved for publication by the decision of the
Scientific Council of Institute of Economics named after M. Kotanyan
National Academy of Sciences of the Republic of Armenia

Editorial Board:

Academician of NAS RA, D. Sc. (Economics), Professor **Yuri Suvaryan** (Armenia)
D. Sc. (Economics) **Davit Harutyunyan** (Armenia)
D. Sc. (Economics), Professor **Robert Sarinyan** (Armenia)
D. Sc. (Economics), Professor **Ashot Markosyan** (Armenia)
D. Sc. (Economics), Professor **Sergey Dokholyan** (Russia)
D. Sc. (Economics), Professor **Sergey Qalenjyan** (Russia)
Ph.D. (Philology) **Vladimir Gerasimov** (Russia)
Ph.D. (Economics), Associate Professor **Meri Manucharyan** (Armenia)
Ph.D. (Economics), Associate Professor **Bella Gabrielyan** (Armenia)
Ph.D. (Technical Sciences) **Stepan Papikyan** (Armenia)
Ph.D. (Economics) **Geghecik Afunts** (Germany)
Ph.D. (Economics) **Vladimir Asriyan** (Spain)
Ph.D. (Economics) **Yevgenya Hakobyan** (Armenia)
Ph.D. (Economics) **Shogher Poghosyan** (Armenia)
Ph.D. (Economics) **Elyanora Matevosyan** (Armenia)

Science editor: D. Sc. (Economics), Professor
ROBERT SARINYAN

The Contemporary Issues of Socio-Economic Development in the Republic of Armenia, Scientific journal of articles, 2022, №2 / Responsible Editor: Robert N. Sarinyan, Institute of Economics named after M. Kotanyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia. Yerevan, 2022, 490 p.

The journal can be useful for solving problems in various areas of the economy, since the articles published in the journal are multi-sectoral and include 4 scientific directions. All the articles contain scientific novelties that can help to legislative and executive authorities to systematically solve the problems that have arisen in the economy.

The journal is a scientific guide for people interested in science: researchers, applicants, postgraduates, as well as the teaching staff of universities.

Institute of Economics named after M. Kotanyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia

15 Surb Grigor Lusavorich Street
Yerevan 0015, Republic of Armenia
Tel. (+374 10) 58-19-71
E-mail: nas_ie@sci.am

© Institute of Economics named after M. Kotanyan of the NAS RA, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

1. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՇՈՒՐՋ
(Դավիթ Հարությունյան, Եվգենյա Հակոբյան) 17
2. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ
(Դավիթ Հարությունյան, Տաթևիկ Շահինյան)..... 31
3. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՓԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԾԱԽՍԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ (Ստեփան Պապիկյան)..... 43
4. ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
(Եվգենյա Հակոբյան, Անահիտ Մարկոսյան) 53
5. ԲԱՆԿԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(Արման Տոնիկյան) 65
6. ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(Գրիգոր Մանուկյան) 79
7. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ
(Աննա Մակարյան) 95
8. ԻՆՈՎԱՅԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (Մարիամ Պողոսյան, Լիլիթ Մուրադյան) 113
9. ՖԻՍԿԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ
(ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ) (Արշակ Վարժապետյան) 126

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ (Մերի Մանուկարյան)..... 142
2. ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (Աշոտ Մարկոսյան, Աշոտ Խաչատրյան) 154

3. ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ) (Մտեփան Պապիկյան, Մանուկ Պապիկյան, Լիանուշ Բարսեղյան).....	170
4. ՀԱՑԱՀԱՏԻՎՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 2020-2022 ԹԹ. ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ (ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ) (Վարդան Ալեքսանյան, Գևորգ Քեշիշյան, Սերգեյ Շիրոկով, Իրինա Տրուշկինա, Ալիկ Մահակյան).....	182
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՈՒՄ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (Աշոտ Ոսկանյան, Կարինե Մնացականյան).....	192
6. ԽԱՂՈՂԻ ՀԱՄԱԽԱՈՆ ԲԵՐՔԻ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ (Արման Հարությունյան, Գևորգ Քեշիշյան).....	206
7. ԽԱՂՈՂԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲԻԶՆԵՍ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (Արման Հարությունյան).....	221
8. ՊԱՐԵՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Հովհաննես Ասատրյան, Լիանա Ազատյան).....	234
9. ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (Մերի Մուրադյան).....	248
10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ, ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐԸ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Աշոտ Ոսկանյան, Մարգո Ղազարյան)	259
11. ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (Լիանա Ազատյան, Հովհաննես Ասատրյան).....	276

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

1. ՏՏ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Շողեր Պողոսյան).....	290
2. ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (Սվետլանա Դալլաքյան, Սարգիս Սարգսյան).....	303
3. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՇՈՒՐՁ (Արմինե Զախարյան).....	321
4. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ. ԶԻՆԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Գևորգ Հարությունյան).....	341
5. ԿԱՆԱԶ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ՀԱԿԱԴԱՐՁ ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ (Մարտ Դեթլոֆֆ).....	355
6. ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ (Հակոբ Թարվոնյան).....	368

**4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

1. ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿԱՄ «ԵՎ ՆՈՐԻՑ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ» (Ռոբերտ Սարինյան).....	383
2. «ՌԱՅԻՆՆԱԼ ՄԱՐԴՈՒ» ՍՈՂԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԿԱՆԸ ԿԱՄ ՌԻԶԱՐԴ ԹԵՅԼԵՐԻ «ՄԽԱԼ ՎԱՐՔԱԳԻԾԸ» (Ռոբերտ Սարինյան, Բելլա Գաբրիելյան).....	395
3. ԵՐԿՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԻ ԿԵՐՏՄԱՆ ՄԵԹՈՂՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ (Տաթևիկ Փարսադանյան).....	406

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ (Արինա Գրադինարովա)	419
5. «ՆՈՐ ԱՂՔԱՏՆԵՐ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ (Գոհար Վարդանյան, Գառնիկ Մամիկոնյան)	431
6. ԳՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԺԻ ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (Լիանա Հարությունյան)	444
7. ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵԶՐՈՒՅԹԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ (Լիլիթ Մուրադյան, Մարիամ Պողոսյան).....	459
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԵՐ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ	474
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	480

СОДЕРЖАНИЕ

1. МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ И ФИНАНСЫ

1. РАЗМЫШЛЕНИЯ О ГОРНОДОБЫВАЮЩЕМ СЕКТОРЕ АРМЕНИИ
(Давит Арутюнян, Евгения Акопян)..... 17
2. ГОРНОДОБЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ КАК ЗАЛОГ УСТОЙЧИВОГО
ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
(Давит Арутюнян, Татевик Шагинян) 31
3. ЭКОНОМИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОПРЕДЕЛЕНИЯ ЗАТРАТ ПОСЛЕ
ЗАКРЫТИЯ АРМЯНСКОЙ АЭС (Степан Папикян) 43
4. ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ОСНОВЫ, РЕГУЛИРУЮЩИЕ
ГОРНОДОБЫВАЮЩУЮ ПРОМЫШЛЕННОСТЬ РА
(Евгения Акопян, Анаит Маркосян) 53
5. БАНКИЗАЦИЯ В АРМЕНИИ
(Арман Тоникян) 65
6. СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ИНВЕСТИЦИОННЫХ ПОТОКОВ РА
(Григор Манукян) 79
7. ВЛИЯНИЕ ЦЕНТРАЛИЗАЦИИ ЭКСПОРТА ТОВАРОВ НА РЕАЛЬНЫЙ
ЭКСПОРТ И ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ (Анна Макарян) 95
8. РОЛЬ ИННОВАЦИЙ В ОЦЕНКЕ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ
СТРАНЫ (Мариам Погосян, Лилит Мурадян)..... 113
9. ВЛИЯНИЕ ФИСКАЛЬНОЙ ПОЛИТИКИ НА ЭКОНОМИКУ
(НА ПРИМЕРЕ РА) (Аршак Варжапетян) 126

2. ПРОБЛЕМЫ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

1. ВЛИЯНИЕ КЛИМАТИЧЕСКОГО ФАКТОРА НА ПРОДОВОЛЬСТВЕННУЮ
БЕЗОПАСНОСТЬ РА (Мери Манучарян) 142
2. ПРОБЛЕМЫ ЭКСПОРТА АГРОПРОДОВОЛЬСТВЕННОЙ ПРОДУКЦИИ В
АРМЕНИИ (Ашот Маркосян, Ашот Хачатрян)..... 154

3. ИССЛЕДОВАНИЯ ПО ВОССТАНОВЛЕНИЮ ОРОСИТЕЛЬНЫХ СИСТЕМ РА (НА ПРИМЕРЕ ОБЩИНЫ КАРБИ) (Степан Папикян, Манук Папикян, Лиануш Барсебян)	170
4. АНАЛИЗ ДИНАМИКИ МЕЖГОДОВЫХ КОЛЕБАНИЙ СРЕДНЕМЕСЯЧНЫХ ИМПОРТНЫХ ЦЕН НА ОСНОВНЫЕ ЗЕРНОВЫЕ В ПЕРИОД 2020-2022 ГГ. И ПРОГНОЗЫ (ПО ДАННЫМ РА) (Вардан Алексанян, Геворг Кешипян, Сергей Широков, Ирина Трушкина, Алик Саакян)	182
5. АНАЛИЗ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕСУРСНОГО ПОТЕНЦИАЛА В КРЕСТЬЯНСКИХ ХОЗЯЙСТВАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (Ашот Восканян, Карине Мнацаканян)	192
6. СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ВЗАИМОСВЯЗИ МЕЖДУ ОБЪЕМОМ ВАЛОВОГО СБОРА ВИНОГРАДА И ОБЪЕМОМ ВИНОПРОДУКЦИИ ПО ДАННЫМ РА (Арман Арутюнян, Геворг Кешипян)	206
7. ПРОИЗВОДСТВО ВИНОГРАДА КАК БИЗНЕС И ВОЗМОЖНОСТИ ПОВЫШЕНИЯ ЕГО ЭФФЕКТИВНОСТИ В РА (Арман Арутюнян)	221
8. ПОЛИТИКА РЕГУЛИРОВАНИЯ ПРОДОВОЛЬСТВЕННЫХ РЫНКОВ РА: ОСОБЕННОСТИ И НЕДОСТАТКИ (Оганнес Асатрян, Лиана Азатян)	234
9. ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ СИСТЕМОЙ ОРОШЕНИЯ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ (Мери Мурадян)	248
10. МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА, ИЗВЛЕЧЕННЫЕ УРОКИ И ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ В РА (Ашот Восканян, Марго Казарян)	259
11. СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ РА В КОНТЕКСТЕ ВНЕДРЕНИЯ ЗАРУБЕЖНОГО ОПЫТА (Лиана Азатян, Оганнес Асатрян)	276

3. РАЗВИТИЕ СФЕРЫ УСЛУГ И СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

1. ПРОБЛЕМЫ СОДЕЙСТВИЯ НЕПРЕРЫВНОМУ И ВТОРИЧНОМУ ОБРАЗОВАНИЮ С ИТ-НАПРАВЛЕНИЕМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (Шогер Погосян)	290
2. БИЗНЕС И ИННОВАЦИОННАЯ ЭКОНОМИКА (Светлана Даллакян, Саргис Саргсян)	303

3. О ЦИФРОВОЙ ТРАНСФОРМАЦИИ СЕКТОРА ОБРАЗОВАНИЯ РА (Армине Захарян).....	321
4. ЦИФРОВАЯ ТРАНСФОРМАЦИЯ ЭКОНОМИКИ: ОПЫТ КИТАЯ И ПУТИ ЕГО ПРИМЕНЕНИЯ В АРМЕНИИ (Геворг Арутюнян).....	341
5. НЕОБХОДИМОСТЬ ПРИМЕНЕНИЯ ОБРАТНОЙ ЛОГИСТИКИ В РА В КОНТЕКСТЕ ВНЕДРЕНИЯ ЗЕЛЕННОГО МАРКЕТИНГА (Маро Детлофф).....	355
6. ТЕКУЩЕЕ СОСТОЯНИЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ СРЕДЫ В РА И ПУТИ ЕЕ УЛУЧШЕНИЯ: ЭКСПЕРТНЫЙ ОПРОС (Акоп Тарпошян).....	368

4. ТЕОРЕТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ И ИСТОРИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

1. ОБЗОР ИЛИ «И СНОВА О ПАРАДОКСАХ ЭКОНОМИЧЕСКОГО УЧЕНИЯ КАРЛА МАРКСА» (Роберт Саринян).....	383
2. ВОПРОС ИСТИННОСТИ МОДЕЛИ «РАЦИОНАЛЬНОГО ЧЕЛОВЕКА» ИЛИ «ПЛОХОЕ ПОВЕДЕНИЕ» РИЧАРДА ТЕЙЛОРА (Роберт Саринян, Белла Габриелян).....	395
3. МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ СОСТАВЛЕНИЯ РЕЙТИНГА СТРАНЫ (Гатевик Парсаданян).....	406
4. ЭВОЛЮЦИЯ КАТЕГОРИИ ПУБЛИЧНЫХ ФИНАНСОВ (Арина Градинарова).....	419
5. ПОНЯТИЕ «НОВЫЕ БЕДНЫЕ»: ИСТОРИЯ И ПРОЯВЛЕНИЯ (Гоар Варданян, Гарник Мамиконян).....	431
6. ОБ ОБЩЕМ ДВИЖЕНИИ ЦЕН И ЦЕНООБРАЗОВАНИИ (Лиана Арутюнян).....	444
7. О ТРАКТОВКАХ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ (Лилит Мурадян, Мариам Погосян).....	459

ПРИЛОЖЕНИЯ

ПРИЛОЖЕНИЕ 1. НАШ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ.....	476
ПРИЛОЖЕНИЕ 2. НАШИ АВТОРЫ.....	484

CONTENT

1. MACROECONOMIC PROBLEMS AND FINANCE

1. REFLECTIONS ON THE ARMENIAN MINING SECTOR
(**Davit Harutyunyan, Yevgenya Hakobyan**)..... 17
2. MINING INDUSTRY AS A GUARANTEE OF SUSTAINABLE ECONOMIC
DEVELOPMENT (**Davit Harutyunyan, Tatevik Shahinyan**)..... 31
3. ECONOMIC ISSUES OF DETERMINING EXPENSES AFTER THE CLOSURE OF
THE ARMENIAN NPP (**Stepan Papikyan**) 43
4. LEGISLATIVE BASES REGULATING THE RA MINING INDUSTRY
(**Yevgenya Hakobyan, Anahit Markosyan**) 53
5. BANKIZATION IN ARMENIA (**Arman Tonikyan**) 65
6. STATISTICAL ANALYSIS OF RA INVESTMENT FLOWS (**Grigor Manukyan**)..... 79
7. THE IMPACT OF GOODS EXPORT CONCENTRATION ON THE REAL
EXPORTS AND ECONOMIC GROWTH (**Anna Makaryan**)..... 95
8. THE ROLE OF INNOVATIONS IN ASSESSING THE ECONOMIC SECURITY
OF THE COUNTRY (**Mariam Poghosyan, Lilit Muradyan**) 113
9. THE IMPACT OF FISCAL POLICY ON THE ECONOMY
(WITH THE EXAMPLE OF RA) (**Arshak Varzhapetyan**)..... 126

2. PROBLEMS OF THE REAL SECTOR OF THE ECONOMY

1. THE INFLUENCE OF THE CLIMATIC FACTOR ON THE FOOD SECURITY OF
RA (**Meri Manucharyan**) 142
2. THE PROBLEMS OF AGRI-FOOD PRODUCTS' EXPORT IN ARMENIA
(**Ashot Markosyan, Ashot Khachatryan**)..... 154
3. STUDIES ON THE RESTORATION OF IRRIGATION SYSTEMS OF RA
COMMUNITIES (THE CASE OF KARBI COMMUNITY)
(**Stepan Papikyan, Manuk Papikyan, Lianush Barseghyan**) 170

4. THE ANALYSIS OF DYNAMIC OF THE MONTHLY AVERAGE IMPORT PRICES OF THE MAIN GRAINS IN THE PERIOD 2020-2022 AND FORECASTS (BY THE DATA OF RA) (Vardan Aleksanyan, Gevorg Keshishyan, Sergey Shirokov, Irina Trushkina, Alik Sahakyan)	182
5. ANALYSIS OF THE USE OF RESOURCE CAPACITY IN RURAL ECONOMIES OF THE REPUBLIC OF ARMENIA (Ashot Voskanyan, Karine Mnatsakanyan).....	192
6. THE STATISTICAL ANALYSIS OF THE INTERDEPENDENCE BETWEEN THE VOLUME OF THE GROSS HARVEST OF GRAPE AND THE VOLUMES OF THE WINERY PRODUCTS BY RA DATA (Arman Harutyunyan, Gevorg Keshishyan)	206
7. GRAPE PRODUCTION AS A BUSINESS AND POSSIBILITIES TO INCREASE ITS EFFICIENCY IN RA (Arman Harutyunyan).....	221
8. THE CASE STUDY OF FOOD MARKET REGULATION POLICY IN ARMENIA: PECULIARITIES AND SHORTCOMINGS (Hovhannes Asatryan, Liana Azatyan).....	234
9. IRRIGATION SYSTEM MANAGEMENT PROBLEMS AND THEIR SOLUTION WAYS (Meri Muradyan).....	248
10. INTERNATIONAL BEST PRACTICES OF STATE SUPPORT FOR AGRICULTURE, LESSONS LEARNED AND POSSIBILITIES OF APPLICATION IN THE RA (Ashot Voskanyan, Margo Ghazaryan)	259
11. THE IMPROVING OF THE AGRICULTURAL INSURANCE SYSTEM OF RA BASED ON FOREIGN BEST PRACTICES (Liana Azatyan, Hovhannes Asatryan)...	276

3. SERVICE SECTOR DEVELOPMENT AND SOCIAL-DEMOGRAPHIC PROBLEMS

1. THE PROBLEMS OF PROMOTING LIFE-LONG LEARNING AND SPECIALIZED TRAINING EDUCATION WITH IT DIRECTION IN THE REPUBLIC OF ARMENIA (Shogher Poghosyan).....	290
2. BUSINESS AND INNOVATION ECONOMY (Svetlana Dallaqyan, Sargis Sargsyan)	303
3. ON THE DIGITAL TRANSFORMATION OF THE RA EDUCATION SECTOR (Armine Zakharyan)	321

4. DIGITAL TRANSFORMATION OF THE ECONOMY: THE CASE OF CHINA AND THE WAYS OF ITS APPLICATION IN ARMENIA (Gevorg Harutyunyan)	341
5. IN THE CONTEXT OF INTRODUCING GREEN MARKETING, THE NECESSITY OF APPLICATION OF REVERSE LOGISTICS IN RA (Maro Detloff)	355
6. STATE OF ENTREPRENEURIAL ENVIRONMENT IN RA AND WAYS OF IMPROVING IT. EXPERT SURVEY (Hakob Tarposhyan).....	368

4. THEORETICAL RESEARCH AND HISTORY OF ECONOMIC THOUGHT

1. REFLECTION OR “AND AGAIN ABOUT THE PARADOXES OF THE ECONOMIC DOCTRINE OF KARL MARX” (Robert Sarinyan).....	383
2. THE QUESTION OF THE TRUTH OF “ THE RATIONAL MAN” MODEL OR “MISBEHAVING” OF RICHARD THALER (Robert Sarinyan, Bella Gabrielyan).....	395
3. METHODOLOGICAL BASES FOR CREATING A COUNTRY'S RATING (Tatevik Parsadanyan)	406
4. EVOLUTION OF THE PUBLIC FINANCE CATEGORY (Arina Gradinarova)	419
5. THE CONCEPT OF "NEW POVERTY": HISTORY AND MANIFESTATIONS (Gohar Vardanyan, Garnik Mamikonyan)	431
6. ON AN INTERPRETATION OF OVERALL PRICE MOVEMENT AND PRICING (Liana Harutyunyan)	444
7. ON INTERPRETATIONS OF THE CONCEPT OF COMPETITIVENESS (Lilit Muradyan, Mariam Poghosyan).....	459

ANNEX

ANNEX 1. OUR EDITORIAL BOARD.....	478
ANNEX 2. OUR AUTHORS.....	487

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՇՈՒՐՋ

Դավիթ Վլադիմիրի Հարությունյան Եվգենյա Արտաշեսի Հակոբյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման հիմքում ընկած են լինում մեկ կամ մի քանի գործոն: Հայաստանի Հանրապետության տնտեսության թռիչքաձև վերելք կարելի է ապահովել հարուստ հանքավայրերի շնորհիվ: Քանի որ արդյունահանվող ռեսուրսները մեծ ներուժ ունեն տնտեսության զարգացման և վերելքի համար¹, ուստի հանքարդյունաբերության ոլորտի ուսումնասիրությունն ու զարգացման հեռանկարների վերլուծությունն *արդիական է*: Սույն հոդվածի *նպատակն է* ուսումնասիրել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ներկայիս վիճակը, վեր հանել ոլորտում առկա էական հիմնախնդիրները, և մշակել դրանց լուծման ուղիներ: Տվյալ նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել են մի շարք *խնդիրները*, մասնավորապես. Ուսումնասիրել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ներկայիս վիճակը, վեր հանել ոլորտում առկա խնդիրները և ներկայացնել դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ:

Գրականության վերլուծություն: Հանքարդյունաբերության ոլորտը եղել և մնում է ինչպես տնտեսագետների, այնպես էլ ոլորտն ուսումնասիրող այլ մասնագետների ուշադրության կենտրոնում: Հրապարակվել են բազմաթիվ գիտական հոդվածներ և աշխատություններ, որոնցում հեղինակները ներկայացնում են տարբեր երկրների հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ընդհանուր միտումները, տեղեկատվություն հանքանյութերի մասին, հանքահումքային արտադրանքների մասնաբաժինը երկրների ՀՆԱ-ում, այդ զուգահեռներում փորձելով տարբեր լուծումներ առաջարկել ոլորտի զարգացմանը նպաստելու ուղղությամբ և այլն: Մասնավորապես, 2021 թվականին Ջավեն Մկրտչյանի «Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսությունում, որում հիմնավորվել է, որ առաջիկա տարիներին ՀՀ տնտեսական աճի գործոնների շարքում հանքագործական արդյունաբերությունը շարունակելու է ունենալ կարևոր դերակատարում²: Ուշադրության է արժանի 2020 թվականին

¹ Dr San Bilal (Editor), Head of Programme, Economic Transformation - Trade, Investment and Finance, ECDPM, Great insights, Mining for development, volume 6, issues 3 July/August 2017, p 3

² Մկրտչյան Ջ, «Հայաստանի Հանրապետության հանարդյունաբերության զարգացման տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները» Ը.00.02՝ տնտեսության, նրա ոլորտների

Ա.Մարկոսյանի և Ա.Մկրտչյանի՝ «Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության ոլորտում հանքային ռենտայի ձևավորման հիմնախնդիրները» հոդվածը¹, որում բացահայտվել է, որ ՀՀ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում ստեղծված հանքային ռենտան (2018 թ. շուրջ 210 մլրդ դրամ) կազմում է զգալի մեծություն, սակայն, չհարկվելով, պետական բյուջեն զրկվում է էական եկամուտներից: Հեղինակների կողմից առաջարկվել է ուսումնասիրվող ոլորտում հարկազանձման կառուցակարգի արմատական փոփոխման միջոցով վերացնել այդ բացը: Իսկ Ն.Ու.Աբդունազարովան² կարևորում է հանքահումքի վաճառքից մուտքերի գրագետ կառավարումը հարուստ երկրների կայուն զարգացման գործում: Իսկ մեկ այլ հեղինակի կարծիքով, բնական ռեսուրսների ծավալն ու բազմազանությունը մեծապես որոշում են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները³: Կ.Չ.Կոժոգուլովը Ղրղզստանի լեռնամետալուրգիական արդյունաբերության զարգացման միտումները հոդվածում նշում է, որ Ղրղզստանի Հանրապետության տնտեսության զարգացման կարևոր նախապայմաններից է հանքային պաշարների ճիշտ օգտագործումը: Իսկ բարձր լեռնային տարածաշրջանների համար այն հանդիսանում է բնակչության բարեկեցության բարձրացման գրեթե միակ ուղին⁴: Կարծում ենք, որ վերջինս համադրելի է նաև Հայաստանի Հանրապետության համար, քանի որ այստեղ ևս բարձր լեռնային տարածաշրջաններում կենտրոնացած է բավականին խիտ բնակչություն, որոնց բարեկեցության բարձրացման նախապայման ևս կարող է հանդիսանալ հանքային պաշարների ռացիոնալ օգտագործումը և վերամշակումը: Դեգտերյովա Ե.Ա.–ն Եվրոմիության ռազմավարական հումքային ռեսուրսների շուկայի գերազգային կարգավորման առանձնահատկություններին նվիրված հոդվածում պնդում է, որ ռազմավարական հանքա-հումքային ռեսուրսների երաշխավորված հասանելիությունը դարձել

տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

https://www.bok.am/sites/default/files/2021-05/015-Zaven_Khachatryan%201_compressed.pdf

¹ <https://paara.am/wp-content/uploads/2012/04/ASHOT-MARKOSYAN-ZAVEN-MKRTCHYAN.pdf>

² Абдуназарова Н.У., Махкамов Н.Х. Повышение эффективности макроэкономического управления и фискальной политики в странах, богатых природными ресурсами, ЭКОНОМИЧЕСКАЯ ТЕОРИЯ И МАКРОЭКОНОМИКА, ЭКОНОМИКА И ФИНАНСЫ 2017, 4, стр 4, <https://cyberleninka.ru/article/n/povyshenie-effektivnosti-makroekonomicheskogo-upravleniya-i-fiskalnoy-politiki-v-stranah-bogatyh-prirodnymi-resursami/viewer>

³ Пацала С.В., Горошко Н.В., НОВОСИБИРСКАЯ ОБЛАСТЬ В ХОЗЯЙСТВЕ РОССИИ: ДОБЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ, Вестник ПНИПУ. Социально-экономические науки. 2021. № 3, стр 197, <https://cyberleninka.ru/article/n/novosibirskaya-oblast-v-hozyaystve-rossii-dobyvayuschaya-promyshlennost/viewer>

⁴ Кожоголов К.Ч., Проблемы и перспективы развития горнодобывающей промышленности Кыргызстана, стр 9 <https://cyberleninka.ru/article/n/problemy-i-perspektivy-razvitiya-gornodobyvayushey-promyshlennosti-kyrgyzstana/viewer>

է ԵՄ Ժամանակակից տնտեսության մրցունակության բարձրացման և կայուն զարգացման անհրաժեշտ պայման¹: Ոլորտի ուսումնասիրմամբ զբաղվողների համար լրջագույն հիմնախնդիր է արդյունաբերական թափոնների հետ կապված խնդիրը, մասնավորապես. Կալդիբան Ն.Ա.-ն և Սուլտանով Ի.Կ-ն համատեղ աշխատության մեջ ներկայացնում են արդյունաբերական թափոններից ստացված վտանգները, նշելով, որ արդյունաբերական թափոնների կուտակման խնդիրները որոշ դեպքերում նույնիսկ դիտարկվում է որպես ազգային անվտանգության բաղադրիչներից մեկը: Որպես հանքարդյունաբերության ոլորտում ռեսուրսների խնայողության խնդրի լուծում դիտվում է արտադրական նոր տեխնոլոգիաների կատարելագործումն և զարգացումը, որոնք թույլ են տալիս վերացնել ցանկացած տեսակի թափոններ²:

Ելնելով ոլորտի ուսումնասիրմամբ զբաղված հեղինակների աշխատություններից, նրանց կատարած մեկնաբանություններից և եզրակացություններից, կարելի է ենթադրել, որ թեմայի *ուսումնասիրվածության աստիճանը* բավարար մակարդակի վրա է:

Մեթոդաբանություն: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտին վերաբերող ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հեղինակների գիտական հոդվածները, համաշխարհային բանկի տվյալները, ՀՀ տեղեկատվական հարթակներում տեղ գտած տեղեկատվությունը, ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, ՀՀ օրենքները և այլն: Հոդվածի վերլուծության ժամանակ կիրառվել են տվյալների հավաքագրման, վերլուծության և համադրման մեթոդները:

Վերլուծություն: ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացումն այժմ գտնվում է երկու լուրջ հարցերի միջև. օգտագործելով ամբողջ ներուժը զարգացնել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը՝ շահագործելով հնարավոր բոլոր հանքերը, ինչը հղի է էկոլոգիական բազմաթիվ բացասական հետևանքներով, կամ շարունակել նույն տեմպերով, այսինքն՝ շահագործել որոշ հանքավայրեր, և հանքային արտադրանքը բացառապես արտահանել: Նկատենք, որ աշխարհի զարգացած շատ երկրներում այժմ բազմաթիվ հանքեր են շահագործվում, որոնց շահագործումից էկոլոգիական վնասը հասցված է նվազագույնի, և որոնցից ստացված արդյունքները, արտահանումից գատ, նաև տեղում վերամշակվում են:

Հայաստանի Հանրապետության տարածքում առկա են ռազմավարական նշանակություն ունեցող բազմաթիվ օգտակար, թանկարժեք և կիսաթանկարժեք հանածոներ: Հայաստանի Հանրապետության ընդերքը պարունակում է մետաղական օգտակար հանածոների հետևյալ հիմնական տեսակները՝ երկաթ, պղինձ,

¹ Дергерёва Е.А., ОСОБЕННОСТИ НАДНАЦИОНАЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ РЫНКОВ СТРАТЕГИЧЕСКИХ СЫРЬЕВЫХ РЕСУРСОВ В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ*, стр 47, <https://cyberleninka.ru/article/n/osobennosti-nadnatsionalnogo-regulirovaniya-rynkov-strategicheskikh-syrievyh-resursov-v-evropeyskom-soyuze/viewer>

² Н. А. Калдыбаев , И. К. Султанов ОПЫТ И ПЕРСПЕКТИВЫ ПЕРЕРАБОТКИ ОТХОДОВ КАМНЕДОБЫВАЮЩИХ ПРЕДПРИЯТИЙ КЫРГЫЗСКОЙ РЕСПУБЛИКИ, Earth Sciences | Juvenis scientia 2017 № 10, стр 7

մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, այլումին: Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում բացի հիմնական մետաղներից առկա են հազվագյուտ և ցրված տարրեր՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, գալիում, թալիում, բիսմութ և այլն¹: Հայաստանում հանդիպում են հայտնի գրեթե բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Ոչ մետաղական հանքային պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ Հայաստանի Հանրապետությունն աշխարհում առաջատար տեղ է գրավում: Հանրապետության փոքրիկ տարածքում հանդիպում են աշխարհում հայտնի գրեթե բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Հատուկ արժեք ու նշանակություն են ներկայացնում հրաբխային պրոցեսների արդյունքում առաջացած լեռնային ապարները, որոնցից են՝ տուֆերը, պեռլիտները, պեմզաները, ցեոլիտները, հրաբխային խարամները և այլն, զգալի են նաև բազալտների, գրանիտների, նեֆելինային սիենիտների, մարմարների պաշարների ծավալները²: Վերջիններիս արդյունահանման համար տրված թույլտվությունների գերակշռող մասը նախատեսված է շինարարական քարերի, լցանյութերի կամ բազմանպատակային օգտագործվող այլ նյութերի համար: Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվել, գնահատվել և օգտակար հանածոյի պետական հաշվեկշռում հաշվառված են ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի հանքավայրերի պաշարներ, որոնք բավարար են տնտեսության զարգացումն ապահովելու համար³:

Հայաստանում են գտնվում աշխարհում ամենաորակյալ և ամենաշատ փքվող լեռնային ապարների՝ պեռլիտ, օբսիդիան և այլն, պաշարները: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք էջում ներկայացված տեղեկատվության համաձայն, Արագած-պեռլիտի հաստատագրված պաշարները կազմում են 150 մլն. խմ, իսկ կանխատեսվող պաշարների ընդհանուր քանակը հասնում է մինչև 3 մլրդ խմ-ի: Հանրապետությունում քարտեզագրված են 100-ից ավելի բազալտի, անդեզիտի հանքավայրեր, որոնցից մի քանիսը միակն են իրենց բաղադրությամբ (Խավաջի բազալտի հանքանյութի MgO-ի պարունակությունը հասնում է մինչև 11%): Իրենց նշանակությամբ և որակական ցուցանիշներով անգնահատելի են Հայաստանի տարածքում գործող քվարցիտների, կարբոնատների, ցեոլիտների, հրաբխային խարամների և պեմզաների, կավերի, բենտոնիտների, դիատոմիտների, գիպսի հանքավայրերը՝ մեծ պաշարներով⁴: Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 24 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 1 մոլիբդենային, 1 այլումինահանքային, 1 մագնեզիումասիլիկատային ապարների և քրոմիտի, 3 երկաթահանքային հանքավայրեր⁵:

¹ <http://www.minenergy.am/page/472>

² Ավագյան Հ.Ս. Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, օգտագործման արդի հիմնախնդիրները, Երևան, Գիտություն հրատարակչություն, 2011 թ, էջ 15

³ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=91380>

⁴ <http://www.minenergy.am/page/472>

⁵ Նույն տեղում

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին: Ոլորտի կարևորությունն ընդգծելու համար կարելի է միայն նշել, որ խոշոր հարկ վճարողների ցանկում ոլորտի կազմակերպությունները զբաղեցնում են առաջատար դիրքեր: Արտահանվող նյութերի առնվազն կեսը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին, որոնք երկրից արտահանվող արտադրանքների ցուցակում առավել կարևոր տեղ են զբաղեցնում: Ինչպես նշվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք-էջում, ներկայումս Հայաստանի լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանքը հիմնականում խտանյութերն են (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաև կապարի խտանյութեր), ինչը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրերի տնտեսական ներուժը: Հայաստանում արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների վերամշակման արտադրության կազմակերպումը փակ և ավարտուն ցիկլերով՝ հանույթից մինչև պատրաստի արտադրանքի ստեղծում, հնարավորություն կտա ստանալ բարձր արժողությամբ արտադրանք, որն էլ կապահովի ՀՆԱ-ի աճ¹: Մետաղական օգտակար հանածոների գծով Հայաստանի Հանրապետության թիվ մեկ շտեմարանը համարվում է Սյունիքի մարզը: Այստեղ հայտնի են մետաղածնական կազմավորման բոլոր տիպերի հանքավայրերն ու հանքաերևակումները: Ներկայիս դրությամբ Սյունիքի մարզում հայտնի են հետախուզված և Պաշարների պետական հանձնաժողովների (ՊՊՀ) կողմից հաստատված արդյունաբերական պաշարներով 9 հանքավայրեր և 9 դեռևս չհետախուզված հանքաերևակումներ: Այստեղ է գտնվում պղնձամոլիբդենային կազմավորման աշխարհում խոշորագույն հանքավայրերից մեկը՝ Քաջարանի հանքավայրը, նույն կազմավորման Ագարակի և Հանքասարի այժմ շահագործվող, Դաստակերտի մասամբ շահագործված հանքավայրը, Կազան լճի հանքաերևակումը, Այգեձորի հետախուզված և դեռևս չշահագործվող, Շահումյանի ոսկի-բազմամետաղային շահագործվող, Արևիսի ոսկի-բազմամետաղային հետախուզվող հանքավայրերը, Մուցքի (Բարձրավանի) հանքաերևակումը, Լիճքի պղնձի հետախուզված և դեռևս չշահագործվող հանքավայրը, Լիճքվազ-Թեյի և Տերտերասարի ոսկու (ոսկի-սուլֆիդային կազմավորման) հանքավայրերը, Սվարանցի և Կամաքարի երկաթի խոշորագույն (Հայաստանի մասշտաբով) հանքավայրն ու հանքաերևակումը և մի քանի ոսկու, պղնձի, բազմամետաղների հանքաերևակումներ²: Չնայած երկրի տարածքում առկա մեծ թվաքանակով հանքավայրերին, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այժմ շահագործվող բոլոր հանքավայրերը շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ: Բացառություն չի կազմում նույնիսկ աշխարհում մեծ ճանաչում գտած, Ջանգեզուրի պղնձամոլիբդենային

¹ <http://www.minenergy.am/page/472>

² Ավագյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի (Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ.

կոմբինատի կողմից շահագործվող Քաջարանի խոշորագույն հանքավայրը¹: Նշված կոմբինատի կողմից թողարկվում են պղնձի և մոլիբդենի խտանյութեր՝ կիսաարտադրանքներ, որոնց մեծ մասը կես գներով վաճառվում են արտասահմանյան երկրներին: Նշենք, որ Քաջարանի հանքաքարերում պղնձից ու մոլիբդենից բացի, հայտնաբերված են տասից ավելի օգտակար տարրեր՝ ոսկի, արծաթ, ռենիում, սելեն, բիսմուտ, կապար, ցինկ, նիկել, կոբալտ, վանադիում, սկանդիում, երկաթ, պլատինոիդների խմբի մետաղներ, որոնց զգալի մասը բոլորովին չի կորզվում (վանադիում, սկանդիում, մագնետիտ հանքաքարի երկաթը, պիրիտ հանքանյութն իր երկաթով ու ծծմբով) և թափվում են պոչամբարներ ու անտեղի կորստի մատնվում և, թունավորում ու ապականում միջավայրը: Նշված օգտակար տարրերից մի քանիսը՝ ոսկին, արծաթը, ռենիումը, սելենը, բիսմուտը, կապարը, ցինկը, նիկելը, կոբալտը, պլատինոիդները, որոնք սերտորեն կապված են պղնձի և մոլիբդենի հետ, վերջիններիս հետ էլ ուղիղ համեմատական քանակներով անցնում են խտանյութերի մեջ և, ցավալին այն է, որ խտանյութերի վաճառքի պարագայում դրանք չեն գնահատվում (բացառությամբ պղինձ խտանյութում առկա ոսկուց և այն էլ այն պարագայում, եթե ոսկու պարունակությունը խտանյութում ցածր չէ 3,5 գ/տ քանակից), դրանց արժեքները չեն փոխհատուցվում, այսինքն՝ այդ շատ արժեքավոր տարրերը նվիրվում են օտարներին²: Նկատենք, որ Ջանգեզուրի կոմբինատի կողմից թողարկված մոլիբդենի խտանյութերի մի մասը վերամշակման է ենթարկվում Երևանի մաքուր երկաթի գործարանում, սակայն նշված օգտակար տարրերն այդպես էլ չեն կորզվում: Դեռևս 2008 թվականին կատարած հետազոտության արդյունքում Հ.Ս.Ավագյանը նշել է, որ շահագործող բոլոր ձեռնարկություններում (գրեթե առանց բացառության) օգտակար հիմնական տարրերի կորզումները շատ ցածր են և կազմում են 60-70, բացառիկ դեպքերում՝ 80%³: Ցավալի է փաստել՝ շուրջ 14 տարի անց էական ոչինչ չի փոխվել հանքերի շահագործման մեջ: Շահագործող բոլոր ձեռնարկությունները, ձգտելով կարճաժամկետ հատվածում ստանալ գերշահույթ, հանքավայրերից կորզում են միայն մեծ քանակությամբ տարրեր, իսկ մնացած մասը, որը հնարավոր է վերամշակել, թողնում են գոյացած պոչամբարներում: Հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման թվով 21 պոչամբարներ, որոնց ծավալներն անցնում են մի քանի մլն. խմ-ից և զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես: Ներկայում պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ⁴: Վերջինս ոլորտի կառավար-

¹ Նույն տեղում

² Նույն տեղում

³ Ավագյան Հ.Ս. Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ

⁴ Նույն տեղում

ման լրջագույն խնդիր է, քանի որ, ստացվում է, որ ՀՀ հանքերում առկա հանքանյութերն օգտագործվում են ոչ լիարժեք, այսինքն՝ առկա են մեծ քանակությամբ կորուստներ: Մինչդեռ, տեղում գնահատման և ուսումնասիրման արդյունքում, կարելի է արդյունավետ օգտագործել, դրանք վերամշակելով և համապատասխան ոլորտներում կիրառելով: Այս խնդրի լուծման համար, մեր կարծիքով, նպատակահարմար է, որ կառավարության կողմից նախաձեռնվի օրենսդրական կարգավորմամբ մի մեխանիզմ, ըստ որի կստեղծվի ոլորտի ուսումնասիրմամբ զբաղված մասնագետներից բաղկացած հատուկ հանձնաժողով, որն առաջին հերթին կզբաղվի պոչամբարներում առկա թափոնների գնահատմամբ և դրանց հետագա կիրառման բնույթի բացահայտմամբ, ինչն էլ հիմքեր կստեղծի օգտակար հանածոների արդյունավետ կառավարման համար: Օգտակար հանածոների պաշարների արդյունավետ կառավարման նպատակն է հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման ապահովումը, ինչը հնարավոր է իրականացնել բնապահպանական, սոցիալական և տնտեսական հիմնահարցերի համակցված և համակարգված գործողությունների շնորհիվ: Իսկ ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է ստեղծել մեխանիզմներ, որոնք թույլ կտան ապահովելու հանրապետությունում ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական հումքի համալիր մշակումը, արժեքավոր տարրերի առավելագույն կորզումը, պատրաստի արտադրանքի ստացումը, բարձր արտադրողականության, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրումը, ընդերքի տնտեսապես արդյունավետ շահագործումը և ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Երկրի տնտեսության մեջ ունենալով առանցքային մասնաբաժին ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը միշտ էլ եղել և մնում է տարբեր կառավարությունների ուշադրության կենտրոնում: Ինչպես նշվում է 2018թ փետրվարի 22-ին հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության բնական պաշարների կառավարման ռազմավարություն»-ում, Հայաստանի Հանրապետության բնական պաշարների արդյունավետ օգտագործման համակարգի համար առաջնային նախապայմանը բնական պաշարների կայուն կառավարումն է, որը հիմք է հանդիսանում օգտակար հանածոների պաշարների, անտառների, հողային և ջրային ռեսուրսների օգտագործման ու պահպանության, կենսաբազմազանության ապահովման ոլորտի պետական քաղաքականության իրականացման և դրանից բխող առաջնահերթությունների ու գործողությունների սահմանման և պաշարների կառավարմանն ուղղված առաջնահերթ ռազմավարական խնդիրների իրականացման համար¹:

Հանքարդյունաբերությունը Հայաստանի Հանրապետությունում երբևէ չի ունեցել և այժմ էլ չունի ավարտուն տեխնոլոգիական շրջափուլեր: Քաջարանի, Ագարակի, Կապանի, Շամլուղի և մյուս կոմբինատները թողարկում են միայն կիսաարտադրանքներ՝ պղնձի և մոլիբդենի խտանյութեր, որոնց մեծ մասն արտահանվում է: Ինչպես վկայում են ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի և

¹ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=94116>

ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքերում ներկայացված տվյալները¹, մետաղական հանքաքարերի խտանյութերի արտահանման ծավալները 2017-2018 թթ հիմնականում ունեցել են աճման միտում: Սակայն 2018 թվականին 2017 թվականի համեմատ հանքահումքային որոշ ապրանքների արտահանման ծավալներում, այդուհանդերձ գրանցվել է նվազման միտում, ինչը կապված է եղել ՀՀ-ում այդ տարի կատարվող քաղաքական իրավիճակների փոփոխություններով: Իսկ արդեն 2019-2020 թթ պղնձի, թանկարժեք մետաղների հանքաքարի խտանյութերի արտահանման ծավալները նորից սկսել են աճման միտում ունենալ: Ընդհանրապես, ցանկացած հանքավայրից օգտակար բոլոր տարրերի 100 տոկոսանոց կորզում հնարավոր չէ: Սակայն, ինչպես արդեն նկատել էինք, այդ կորուստները մեր հանրապետությունում շահագործվող գրեթե բոլոր հանքավայրերում աննախադեպ չափերի են հասնում: Խնդրի լուծման ուղի է հանդիսանում ոլորտում նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը, որը նվազագույնի կհասցնի կորուստների չափերը: Դեռևս 2008 թվականին երկրաբանական գիտությունների դոկտոր Հ.Ս.Ավագյանն իր աշխատություններից մեկում² նշել էր, որ ՀՀ Սյունիքի մարզի խոշոր քաղաք Կապանում պետք է կառուցել խտանյութերի վերամշակման համալիր մետալուրգիական գործարան՝ հազեցած նորագույն տեխնիկայով և տեխնոլոգիաներով, որտեղ հնարավոր կլինի բարձր ու գերբարձր տոկոսներով խտանյութերից կորզել բոլոր (կորզելի քանակներով) օգտակար տարրերը, մինչդեռ այս առաջարկությունն անկատար է մնացել, սակայն տարիներ անց այն դեռևս չի կորցրել իր հրատապությունը: Ուստի սույն հոդվածի շրջանակներում ևս մենք այս լրջագույն հիմնախնդիրը կրկնում ենք: Հարկ է նշել, որ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների խթանման ուղղությամբ Կառավարությունների կողմից տարբեր միջոցառումներ են իրականացվում, սակայն դեռևս այս ոլորտ ներդրումների ներհոսքի ակտիվություն չի նկատվում: Վերջինս, մեր կարծիքով, պայմանավորված է երկրում տիրող անկայուն ներքին քաղաքական միջավայրով, որը անվստահություն է ներշնչում ներդրողներին: Անվստահության մյուս պատճառ կարող է հանդիսանալ երկրաբանական հետազոտությունների անբավարար իրականացանումը: Զարգացած շատ երկրներ, որոնք ունեն հզոր հանքարդյունաբերություն, բազմիցս ապացուցել են, որ երկրաբանական գիտությունների զարգացումը, ինչպես նաև երկրաբանական ինստիտուտի ստեղծումը, օրինակ՝ Կանադայում, զգալիորեն նպաստում են հանքարդյունաբերական ոլորտի զարգացմանը, հետևաբար նաև՝ օտարերկրյա ուղակի ներդրումների ներհոսքին:

Գիտական նորույթ: Ուսումնասիրելով ՀՀ հանքարդյունաբերական ոլորտը, զարգացման ներկայիս աստիճանը, ՀՀ հանքերում առկա հանքանյութերը,

¹ Տես <https://armstat.am/am/>,
<https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIExportStatistics>

² Ավագյան Հ.Ս. Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ.

դրանց արտահանման դինամիկան, վեր են հանվել ոլորտի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրները:

Եզրակացություն:

Ուսումնասիրելով ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ներկայիս վիճակը, հանգել ենք մի շարք եզրակացությունների, որոնցից հիմնականներն են՝

1. Հանքարդյունաբերական ոլորտի զարգացումը կախված է ոչ միայն նորագույն տեխնիկական և տեխնոլոգիական միջոցառումների կիրառումից, այլ նաև տվյալ երկրի՝ հանքահումքային ռեսուրսներով հագեցվածությունից: Այդ առումով Հայաստանի Հանրապետությունն ունի մեծ պոտենցիալ, քանի որ երկրի տարբեր մարզերում առկա են բազմաթիվ հանքավայրեր, որոնք հարուստ են ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական օգտակար հանածոներով:
2. Քաջարանի հանքաքարերում պղնձից ու մոլիբդենից բացի, հայտնաբերված են բազմաթիվ այլ օգտակար տարրեր, որոնցից որոշները բոլորովին չեն կորզվում, այլ թափվում են պոչամբարներ ու անտեղի կորստի մատնվում՝ միաժամանակ թունավորելով ու աղտոտելով շրջակա միջավայրը: Կարծում ենք, որ նշված խնդիրը, մարդկային գործունից բացի, կախված է նաև տեխնիկաների թերհագեցվածությունից, որի լուծման համար նպատակահարմար է ներդնել հանքահարստացման նորագույն այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի հիմնական օգտակար տարրերի կորզումները հանքաքարերից խտանյութերի մեջ հասցնել առավելագույն մակարդակի, ինչպես նաև բարձր տոկոսներով կորզել բոլոր՝ հիմնական տարրերի հետ հարակից տարածված տարրերը:
3. ՀՀ հանքերում առկա հանքանյութերն օգտագործվում են ոչ լիարժեք, այսինքն՝ առկա են մեծ քանակությամբ կորուստներ: Վերջինները՝ տեղում գնահատման և ուսումնասիրման արդյունքում, կարելի է արդյունավետ օգտագործել, դրանք վերամշակելով և համապատասխան ոլորտներում կիրառելով: Այս խնդրի լուծման համար, մեր կարծիքով, նպատակահարմար է, որ կառավարության կողմից նախաձեռնվի օրենսդրական կարգավորմամբ մի մեխանիզմ, ըստ որի կստեղծվի ոլորտի ուսումնասիրմամբ զբաղված մասնագետներից բաղկացած հատուկ հանձնաժողով, որը առաջին հերթին կզբաղվի պոչամբարներում առկա թափոնների գնահատմամբ և դրանց հետագա կիրառման բնույթի բացահայտմամբ, ինչն էլ հիմքեր կստեղծի օգտակար հանածոների արդյունավետ կառավարման համար: Օգտակար հանածոների պաշարների արդյունավետ կառավարման նպատակն է հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման ապահովումը, ինչը հնարավոր է իրականացնել բնապահպանական, սոցիալական և տնտեսական հիմնահարցերի համակցված և համակարգված գործողությունների շնորհիվ: Իսկ ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է ստեղծել մեխանիզմներ, որոնք թույլ կտան ապահովելու հանրապետությունում ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական հումքի համալիր մշակումը, արժեքավոր տարրերի առավելագույն կորզումը, պատրաստի արտադրանքի ստացումը, բարձր արտադրողականությամբ, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրումը, ընդերքի տնտեսապես

արդյունավետ շահագործումը և ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավագյան Հ.Ս. Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ
2. Ավագյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի (Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ
3. Մկրտչյան Զ. «Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները» Ը.00.02՝ տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, https://www.bok.am/sites/default/files/2021-05/015-Zaven_Khachatryan%201_compressed.pdf
4. Абдуназарова Н.У., Махкамов Н.Х. Повышение эффективности макроэкономического управления и фискальной политики в странах, богатых природными ресурсами, ЭКОНОМИЧЕСКАЯ ТЕОРИЯ И МАКРОЭКОНОМИКА, ЭКОНОМИКА И ФИНАНСЫ 2017, 4, стр 4,
5. Дегтерёва Е.А., ОСОБЕННОСТИ НАДНАЦИОНАЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ РЫНКОВ СТРАТЕГИЧЕСКИХ СЫРЬЕВЫХ РЕСУРСОВ В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ*, стр 47,
6. Калдыбаев Н. А., Султанов И. К. ОПЫТ И ПЕРСПЕКТИВЫ ПЕРЕРАБОТКИ ОТХОДОВ КАМНЕДОБЫВАЮЩИХ ПРЕДПРИЯТИЙ КЫРГЫЗСКОЙ РЕСПУБЛИКИ, Earth Sciences | Juvenis scientia 2017 № 10,стр 7
7. Кожоголов К.Ч., Проблемы и перспективы развития горнодобывающей промышленности Кыргызстана, стр 9
8. Пацала С.В., Горошко Н.В., НОВОСИБИРСКАЯ ОБЛАСТЬ В ХОЗЯЙСТВЕ РОССИИ: ДОБЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ, Вестник ПНИПУ. Социально-экономические науки. 2021. № 3, стр 197
9. Dr San Bilal (Editor), Head of Programme, Economic Transformation - Trade, Investment and Finance, ECDPM, Great insights, Mining for development, volume 6, issues 3 July/August 2017, p 3
10. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=91380>
11. <https://armstat.am/am/>
12. <http://www.minenergy.am/page/472>
13. <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIEExportStatistics>

References

1. Avagyan H.S. Hayastani hanqahowmqayin r'esowsrneri', Er&an HH GAA «Gitowt'yown» hratarakchownt'yown, 2008 t'
2. Avagyan H.S. Hayastani Hanrapetowt'yan metaghakan o'gtakar hanac'oneri gnahatowmn y'st marzeri (Syowniqi & Vayoc D'ori marzer), Er&an, HH GAA «Gitowt'yown» hratarakchownt'yown, 2008 t'
3. Mkrtchyan Z, «Hayastani Hanrapetowt'yan hanardyownaberowt'yan zargacman tntesa-e'kologiakan himnaxndirneri'» Y'.00.02` tntesowt'yan, nra olortneri tntesagitowt'yown & kar'avarowm masnagitowt'yamb tntesagitowt'yan t'eknac'owigitakan astitwani haycman atenaxosowt'yan seghmagir, https://www.bok.am/sites/default/files/2021-05/015-Zaven_Khachatryan%201_compressed.pdf
4. Abdunazarova N.U., Mahkamov N.H. Povyshenie jeffektivnosti makrojekonmicheskogo upravlenija i fiskal'noj politiki v stranah, bogatyh prirodnyimi resursami, JeKONOMIChESKAJa TEORIJa I MAKROJeKONOMIKA, JeKONOMIKA I FINANSY 2017, 4, str 4,
5. Degterjova E.A., OSOBENNOSTI NADNACIONAL'NOGO REGULIROVANIJa RYNKOV STRATEGIChESKIH SYR"EVYH RESURSOV V EVROPEJSKOM SOJuZE*, str 47,
6. Kaldybaev N. A., Sultanov I. K. OPYT I PERSPEKTIVY PERERABOTKI OTHODOV KAMNEDOBYVAJuShhIH PREDPRIJaTIJ KYRGYZSKOJ RESPUBLIKI, Earth Sciences | Juvenis scientia 2017 # 10, str 7
7. Kozhogulov K.Ch., Problemy i perspektivy razvitija gornodobyvajushhej promyshlennosti Kyrgyzstana, str 9
8. Pacala S.V., Goroshko N.V., NOVOSIBIRSKAJa OBLAST'" V HOZJaJSTVE ROSSII: DOBYVAJuShhAJa PROMYShLENNOST'', Vestnik PNIPU. Social'no-jekonomicheskie nauki. 2021. # 3, str 197
9. Dr San Bilal (Editor), Head of Programme, Economic Transformation - Trade, Investment and Finance, ECDPM, Great insights, Mining for development, volume 6, issues 3 July/August 2017, p 3
10. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=91380>
11. <https://armstat.am/am/>
12. <http://www.minenergy.am/page/472>
13. <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIExportStatistics>

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՇՈՒՐՋ

Դավիթ Վլադիմիրի Հարությունյան Եվզենյա Արտաշեսի Հակոբյան

Համառոտագիր: Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման հիմքում ընկած են լինում մեկ կամ մի քանի գործոն: Հայաստանի Հանրապետության տնտեսության թռիչքաձև վերելք կարելի է ապահովել հարուստ հանքավայրերի շնորհիվ: Քանի որ արդյունահանվող ռեսուրսները մեծ ներուժ ունեն տնտեսության զարգացման և վերելքի համար, ուստի հանքարդյունաբերության ոլորտի ուսումնասիրությունն ու զարգացման հեռանկարների վերլուծությունն *արդիական է*: Սույն հոդվածի *նպատակն է* ուսումնասիրել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ներկայիս վիճակը, վեր հանել ոլորտում առկա էական հիմնախնդիրները, և մշակել դրանց լուծման ուղիներ: Տվյալ նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել են հետևյալ *խնդիրները*, մասնավորապես. ուսումնասիրել և ներկայացնել ՀՀ տարբեր հանքավայրերում առկա հանքանյութերը, ուսումնասիրել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ներկայիս վիճակը, ուսումնասիրել և վերլուծել վերջին տարիներին հանքահումքային արտադրանքի արտահանման ծավալները, վեր հանել ոլորտում առկա խնդիրները և ներկայացնել դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտին վերաբերող ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հեղինակների գիտական հոդվածները, համաշխարհային բանկի տվյալները, ՀՀ տեղեկատվական հարթակներում տեղ գտած տեղեկատվությունը, ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, ՀՀ օրենքները և այլն: Հոդվածում վերլուծության ժամանակ կիրառվել են տվյալների հավաքագրման, վերլուծության և համադրման մեթոդները: Ուսումնասիրելով ՀՀ հանքարդյունաբերական ոլորտը, զարգացման ներկայիս աստիճանը, ՀՀ հանքերում առկա հանքանյութերը, դրանց արտահանման դինամիկան, վեր են հանվել ոլորտի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրները և տրվել են դրանց լուծմանն ուղղություններ: Վերլուծության արդյունքում ստացվել են արդյունքներ, որոնցից հիմնականն են հետևյալները. հանքարդյունաբերական ոլորտի զարգացումը կախված է ոչ միայն նորագույն տեխնիկական և տեխնոլոգիական միջոցառումների կիրառումից, այլ նաև տվյալ երկրի՝ հանքահումքային ռեսուրսներով հագեցվածությունից: Այդ առումով Հայաստանի Հանրապետությունն մեծ ներուժ ունի, քանի որ երկրի տարբեր մարզերում առկա են բազմաթիվ հանքավայրեր, որոնք հարուստ են ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական օգտակար հանածոներով, ՀՀ հանքերում առկա հանքանյութերն օգտագործվում են ոչ լիարժեք, այսինքն՝ առկա են մեծ քանակությամբ կորուստներ: Վերջինները՝ տեղում զնահատման և ուսումնասիրման արդյունքում, կարելի է արդյունավետ օգտագործել՝ դրանք վերամշակելով և համապատասխան ոլորտներում կիրառելով:

Բանալի բառեր. հանքարդյունաբերություն, արտահանում, հանքահում-
քային արտադրանք, օգտակար հանածոներ, ՀՆԱ, նորագույն տեխնոլոգիաներ,
հանքավայրեր, խտանյութեր:

РАЗМЫШЛЕНИЯ О ГОРНОДОБЫВАЮЩЕМ СЕКТОРЕ АРМЕНИИ

Давит Владимирович Арутюнян
Евгения Арташесовна Акопян

Аннотация. Экономическое развитие каждой страны основано на одном или нескольких факторах. Быстрый подъем экономики Республики Армения может быть обеспечен благодаря богатым рудникам. Поскольку добытые ресурсы имеют большой потенциал для развития и роста экономики, поэтому изучение горнодобывающей отрасли и анализ перспектив развития являются актуальными. Целью данной статьи является изучение современного состояния горнодобывающей промышленности РА, выделение существенных проблем в сфере и разработка путей их решения. Для достижения поставленной цели в работе были поставлены следующие задачи, а именно: изучить и представить полезные ископаемые, присутствующие в различных шахтах РА, изучить текущее состояние развития горнодобывающей промышленности РА, изучить и проанализировать объем экспорта минеральных продуктов в последние годы, осветить существующие проблемы в области и представить мероприятия, направленные на их решение. Информационной основой статьи послужили научные статьи как отечественных, так и зарубежных авторов, относящиеся к сфере, данные Всемирного банка, информация на информационных площадках РА, нормативно-правовые акты, регулирующие сферу, законы РА и т.д. При анализе в статье использовались методы сбора данных, анализа и сравнения. Изучив горнодобывающий сектор РА, текущий уровень развития, полезные ископаемые, имеющиеся в шахтах РА, динамику их экспорта, были выделены проблемы, препятствующие развитию сектора, и даны направления их решения. В результате анализа были получены результаты, основными из которых являются следующие. развитие горнодобывающей отрасли зависит не только от применения новейших технических и технологических мероприятий, но и от насыщенности страны полезными ископаемыми. В этом смысле Республика Армения имеет большой потенциал, так как в разных регионах страны имеется много рудников, богатых как металлическими, так и неметаллическими полезными ископаемыми, полезные ископаемые в рудниках Армении используются не полностью, т.е., потерь много. Последние, в результате оценки и изучения на местах, могут быть эффективно использованы путем их обработки и применения в соответствующих областях.

Ключевые слова: горнодобывающий сектор, экспорт, минеральные продукты, полезные ископаемые, ВВП, новейшие технологии, рудники, концентраты.

REFLECTIONS ON THE ARMENIAN MINING SECTOR

Davit Vladimir Harutyunyan
Yevgenya Artashes Hakobyan

Abstract. The economic development of each country is based on one or more factors. A rapid rise of the economy of the Republic of Armenia can be ensured thanks to rich mines. As the mined resources have a great potential for the development and growth of the economy, therefore, the study of the mining industry and the analysis of development prospects are **relevant**.

The purpose of this article is to study the current state of the RA mining industry, highlight the significant problems in the field, and develop ways to solve them. To achieve this goal, the following **objectives** were set in the work, namely: to study and present the minerals present in different mines of RA, to study the current state of development of the RA mining industry, to study and analyze the volume of export of mineral products in recent years, to highlight the existing problems in the field and to present measures aimed at solving them. Scientific articles of both domestic and foreign authors related to the field, data of the World Bank, information on RA information platforms, normative legal acts regulating the field, RA laws, etc. were the information basis for the article.

The methods of data collection, analysis and comparison were used during the analysis of the article. By studying the RA mining sector, the current level of development, the minerals available in the RA mines, the dynamics of their export, the issues hindering the development of the sector were highlighted and directions for their solution were given. As a result of the analysis the following outcomes were obtained, the main of which are the following: the development of the mining sector depends not only on the application of the latest technical and technological measures, but also on the country's saturation with mineral resources. In that sense, the Republic of Armenia has great potential, because there are many mines in different regions of the country, which are rich in both metallic and non-metallic minerals, the minerals in the mines of Armenia are not fully used, that is, there are a lot of losses. The latter, as a result of on-site assessment and study, can be effectively used by processing and applying them in relevant fields.

Keywords: mining, exports, mineral products, minerals, GDP, latest technologies, mines, concentrates.

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Դավիթ Վլադիմիրի Հարությունյան Տարևիկ Վազգենի Շահինյան

Հոդվածը ստացվել է՝ 12.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը ազգային տնտեսության հիմնաքարերից է՝ արդյունաբերության և արտահանման մեջ խոշորագույն ավանդ ունեցող ոլորտներից մեկը: Երկիրը հարուստ է հանքանյութերով՝ պղինձ, ոսկի, արծաթ, ցինկ, ինչպես նաև արդյունաբերական նշանակության օգտակար հանածոներով, օրինակ՝ դիատոմիտ, գիպս, կրաքար, պեռլիտ և ռենիումի աղ: Հայաստանում հանդիպում են հայտնի համարյա բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված են հաստատված պաշարներով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայրեր (43 մետաղական, 760 ոչ մետաղական, 44 ստորերկրյա քաղցրահամ և 24 հանքային ջրերի), ինչպես նաև օգտակար հանածոների 580 հանքենակումներ (131 մետաղական և 449 ոչ մետաղական), օգտակար հանածոների ավելի քան 130 տեսակներ, որոնցից շուրջ 25-ը՝ մետաղական: Հանքավայրերը հիմնականում կենտրոնացած են Լոռու մարզում՝ Ալավերդու և Թեղուտի, Սյունիքի մարզում՝ Կապան-Քաջարանի շրջաններում: Իսկ գործող հանքավայրեր կան գրեթե բոլոր մարզերում¹:

Արդիականություն. Չնայած հանքարդյունաբերությունը ՀՀ տնտեսության կարևոր ճյուղերից է, առանձին գործառնությունները, ընդհանուր առմամբ, բավարար չափով չեն նպաստում երկրի կայուն տնտեսական զարգացմանը: Ոլորտը զարգանում է առանց պաշարների կայուն օգտագործման երկարաժամկետ ծրագրի, հարկման, շրջակա միջավայրի պահպանության պատշաճ օրենսդրության և բնապահպանական ու սոցիալական հետևանքների գնահատման: Ոլորտը կանոնակարգողներն ու պատասխանատուները ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում իրականացնում են նախաձեռնություններ այն բարեփոխելու ուղղությամբ՝ հանքարդյունաբերությունը համարելով ՀՀ տնտեսության գերակա ոլորտներից մեկը, ինչն էլ պայմանավորում է հետազոտության թեմայի արդիականությունը:

Նպատակ. Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը, վեր հանել ոլորտի կայուն զարգացմանը խոչընդոտող առկա խնդիրները՝ հիմնավորելով ոլորտի կարևորությունը ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման գործում:

Խնդիրներ. Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները:

¹ Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, <http://www.minenergy.am/page/472>

- ✓ Ուսումնասիրել ու բացահայտել ոլորտի դերը երկրների սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
- ✓ Վերլուծել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը, բացահայտել ոլորտը կարգավորող օրենքներում և իրավական ակտերում առկա բացթողումներն ու անորոշությունները:
- ✓ Հիմնավորել հանքարդյունաբերական ոլորտի առանցքային նշանակությունը երկրի կայուն տնտեսական զարգացման գործում:

Գրականության վերլուծություն. Հանքարդյունաբերությունը կարևորագույն դեր է խաղում շատ երկրների տնտեսական զարգացման հարցում՝ զգալի տնտեսական հնարավորություններ ապահովելով զարգացող երկրների համար:

Դարեր շարունակ գերակայում էր այն համոզմունքը, որ բնական պաշարների առատությունը երկրի զարգացման կարևորագույն գրավականներից մեկն է:

Հանքարդյունաբերության վերաբերյալ տնտեսական հետազոտությունների մեծ մասը վերաբերում է հանքարդյունաբերության մակրոտնտեսական ազդեցությանը դիտարկելով ազգային տնտեսության օգուտները կամ դրանց բացակայությունը: Եվ կասկած չկա, որ հանքարդյունաբերությունը կարող է երկրների համար լինել եկամուտների կարևոր աղբյուր: Բնական պաշարների գրագետ կառավարումը կարող է հանդիսանալ տնտեսական աճի շարժիչ ուժ և զգալի ազդեցություն ունենալ ազգային տնտեսությունների վրա, ինչպես օրինակ Չիլիի, Պերուի, Բոտսվանայի, Գանայի, Մալիի, Պապուա Նոր Գվինեայի և այլ դեպքերում¹:

Այնուամենայնիվ, 1970-80-ականներին սակավ բնական պաշարներով «ասիական վագրերի» Հոնկոնգի, Սինգապուրի, Հարավային Կորեայի և Թայվանի աննախադեպ տնտեսական աճը հանգեցրեց ընդհանուր համոզմունքների վերանայման²:

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը ներկայումս գտնվում է երկու ծայրահեղ սցենարների խաչմերուկում: Հանդիսանալով տնտեսական աճի պոտենցիալ շարժիչ ուժ՝ այն վիճելի թեմա է Հայաստանում: Բնակչության մի մասի, մասնավորապես քաղաքացիական հասարակության մոտ, կա զգալի անվստահություն հանքարդյունաբերության նկատմամբ³:

Հարկ է նշել՝ Հայաստանի Հանրապետությունում կարող են զարգացվել լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերության մի շարք ճյուղեր, որոնց արդյունավետությունը կասկած չի հարուցում⁴: Այսպիսով, այս և մի շարք

¹ G. Walser, Economic impact of world mining, World Bank Group Mining Department, Washington, DC (United States), Apr 2002; p. 86-88

² Gary McMahon, Susana Moreira, The Contribution of the Mining Sector to Socioeconomic Public Disclosure Authorized and Human Development, Extractive Industries for Development Series, № 30, April 2014, p. 3-4, pp. 58

³ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն-2, Հավելված 2, Երևան, 2020 թ.

⁴ Հ.Ս. Ավագյան, Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2011, էջ 24-25

այլ փաստեր հաշվի առնելով՝ պետք է սկսել քայլեր ձեռնարկել ոլորտի զարգացման ուղղությամբ՝ հաշվի առնելով ու նվազեցնելով ոլորտի բնապահպանական ազդեցությունն ու հետևանքները:

Մեթոդաբանություն. Մույն հետազոտության շրջանակում օգտագործվել են գիտական՝ պատմական-տրամաբանական, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ մեթոդները:

Վերլուծություն. Մետաղների արդյունահանումը հին պատմություն ունի Հայաստանի Հանրապետությունում: Պղնձի արդյունահանումը սկսվել է Հայաստանի հյուսիսային շրջանում գտնվող Ալավերդիում դեռևս 1770-ական թվականներին, իսկ 1840-ականներին Կապանում սկսել են արդյունահանել պղինձ: XX դարի կեսերին գործարկվել է Քաջարանի ավելի խոշոր պղնձամուլիբդենային հանքը¹:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի տնտեսությունում տեղի են ունեցել խոշոր կառուցվածքային փոփոխություններ: Եթե 1990 թվականին արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում էր 45%, ապա տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում նվազեց՝ հասնելով 28%-ի²: Արդյունաբերության վրա հիմնվող տնտեսությունից Հայաստանը վերածվեց գյուղատնտեսության և առևտրի վրա հիմնվող տնտեսության: Այնուամենայնիվ, հանքարդյունաբերությունն արդյունաբերության այն փոքրաթիվ ճյուղերից է, որը տնտեսական զարգացման միտումներ է ունեցել:

Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի «Ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության դերը» զեկույցում ընդգրկված հանքարդյունահանման ինդեքսով Հայաստանը 182 երկրների շարքում առաջին 25 երկրների թվում է³: Ինդեքսը ցույց է տալիս, որ աշխարհի հանքարդյունաբերական երկրներից շատերը շարունակում են ապավինել իրենց բնական ռեսուրսներին՝ որպես տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ:

Տնտեսական ազդեցությունը հատկապես դրսևորվում է ՀՆԱ-ի, ընդհանուր ներդրումների, օտարերկրյա ուղղակի ներդրումների, արտահանման, պետական եկամուտների և զբաղվածության վրա⁴:

2015-2016թթ. Համաշխարհային բանկը՝ Արդյունահանող ճյուղերի գործառնությունների խորհրդատվական գրասենյակ - բազմադոնորային հավատարմագրային հիմնադրամի շրջանակներում աջակցեց «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» զեկույցի մշակմանը⁵:

¹ Համաշխարհային բանկ, Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում-Հայաստան, «Մվիդի Ջիոլոջիքլ Էյ-Բի» ընկերություն, 2016 թ.

² Տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

³ «Ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության դերը» զեկույց, <https://www.icmm.com/>

⁴ Լ. Հարությունյան, Հանքարդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները, էջ 77-88

⁵ Սղբյուրը՝ <http://documents.worldbank.org/curated/en/289051468186845846/Armenia-Strategic-mineral-sectorsustainability-assessment>

Զեկույցում ուսումնասիրվել է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը, ինչպես նաև գնահատվում է ոլորտի ներուժը կայուն տնտեսական զարգացմանը նպաստելու գործում:

2018թ. թավշյա հեղափոխությունից և դրան հաջորդած խորհրդարանական ընտրություններից հետո, նոր կառավարությունը հայտարարեց, որ մտադիր է հետևողական կերպով նպաստել ոլորտի կայուն զարգացմանը: Համաձայն Կառավարության ծրագրի բնապահպանական, սոցիալական և տնտեսական տեսանկյունից կենսունակ հանքարդյունաբերության ոլորտ ստեղծելու կարիք կա, և այդ նպատակով անհրաժեշտ է մշակել հանքային ոլորտի քաղաքականություն:

Կառավարության 2018-2022թթ. ծրագիրը ներառում է Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակման և բարեփոխումներին վերաբերող գործողություններ¹: Հիմնվելով «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» առաջարկությունների վրա, ինչպես նաև ոլորտի ապագա զարգացման նպատակով, կառավարությունը նախաձեռնեց Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) ոլորտը կարգավորող նախարարությունն է և իր 2018-2022թթ. ծրագրում նախարարությունը նշել է Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը որպես հիմնական առաջնահերթություն:


2018 թվականին Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի (մետաղական և ոչ մետաղական) տնտեսության մեջ ընդհանուր մասնաբաժինը կազմել է ՀՆԱ-ի 4,4% (հանքարդյունաբերության ոլորտի մասնաբաժինը՝ 2,9% կամ 166 մլրդ ՀՀ դրամ, հանքարդյունաբերությանը վերաբերող վերամշակման ոլորտի մասնաբաժինը՝ 1,5%): Ընկերությունների հարկային վճարումները կազմել են 259 մլն ԱՄՆ դոլար 2018 թվականին, իսկ հանքարդյունաբերության ոլորտի զբաղվածների թիվը՝ 8,561²: Գծապատկերի միջոցով ներկայացնենք ՀՀ-ում ՀՆԱ-ի մեջ հանքարդյունաբերության մասնաբաժինը 2014-2021 թվականների համար:

Հանքարդյունաբերության ոլորտում ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականությունը հակասական զարգացումների է հանգեցրել: Այսպիսով, թեև ՀՀ կառավարությունը 2019 թվականի ծրագրում հանաքարդյունաբերությունը դիտարկում էր որպես տնտեսական աճի ապահովման օժանդակ միջոց՝ վերջինս 2018 թվականին գրանցել է 15,5% -ի հասնող անկում, ինչի հետևանքով ոլորտը տնտեսական աճին ունեցել է 0,5 %-ով բացասական նպաստում: Ոլորտը 2019-2020 թվականների ընթացքում եղել է տնտեսական աճի ապահովման ոչ թե օժանդակ, այլ հիմնական ուղղություններից մեկը: 2019 թվականի տարեվերջի դրությամբ հանքարդյունաբերության ոլորտը գրանցել է 37,1% աճ: Իսկ 2020 թվականի ընթացքում, թեև աճի տեմպը զգալիորեն դանդաղել է՝ այն, այնուամենայնիվ, շարունակել է մնալ դրական, և տարեվերջին կազ-

¹ ՀՀ Կառավարության 2018 - 2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր

² Տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

մել է 8,4%: Արդյունքում հանքարդյունաբերությունը եղել է այն բացառիկ ոլորտներից մեկը, որը 2020-ին դրական նպաստում է ունեցել ՀՆԱ-ի անկմանը՝ որպես այդպիսին դառնալով տնտեսական աճի ապահովման ոչ թե օժանդակ, այլ հիմնական միջոց:



Գծապատկեր 1. ՀՆԱ-ի մեջ հանքարդյունաբերության մասնաբաժինը 2014-2021(%)¹

Խոսելով 2021 թվականի մասին, հարկ է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքի ծավալների աճի տեմպի անընդհատ դանդաղման հետևանքով հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կուտակային աճը կազմել է 0,1%: Այս զարգացումները պայմանավորված են հանքարդյունաբերության ամենախոշոր՝ մետաղական հանքաքարի արդյունահանման ճյուղում մայիսից օգոստոսն ընկած ժամանակաշրջանի տնտեսական ակտիվության նախ՝ դանդաղմամբ, իսկ սեպտեմբերի արդյունքներով՝ արդեն իսկ անկումով: Մասնավորապես, հունվարից ապրիլն ընկած ժամանակահատվածում ոլորտում արտադրության ծավալների աճը կազմել է 8,2%, իսկ ահա հունվար-օգոստոս ամիսներին նվազել է՝ կազմելով 2,7%²:

Հանքարդյունաբերության ոլորտի վերլուծության հիմքում ընկած են հիմնական հանքարդյունահանող և վերամշակող ընկերությունները տվյալները: Ընկերությունները պատկանում են առաջին 1000 խոշոր հարկ վճարողների թվին, որոնց տվյալներն ունեն բաց հասանելիություն ՀՀ Հարկային ծառայության պաշտոնական կայք-էջում՝ հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերում³: 2021 թվականի տվյալների համաձայն ցանկի հենց առաջին հորիզոնականն է զբաղեցնում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», որի

¹ Տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

² Տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

³ ՀՀ Հարկային ծառայության պաշտոնական կայք-էջ՝

https://www.petekamutner.am/Content.aspx?itm=tsTILists&fbclid=IwAR0WsUykHXXw3jGAjzHcDb3lv12li8tgr_RZUOT8GW93aoDPfpNjOBGdphs

մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի և վճարների ընդհանուր գումարը կազմել է 48,84 միլիարդ դրամ, որից 12,23 միլիարդը կազմել է շահութահարկը, իսկ 7,89 միլիարդը՝ եկամտային հարկը: 2020 թվականի համեմատ ընկերության վճարած հարկերն աճել են 13,6%-ով կամ 5,8 մլրդ դրամով: Ցանկի 5-րդ հորիզոնականում «Գեոպրոմայնին Գոլդ» ընկերությունն է, որի կողմից վճարված հարկերի և վճարների ընդհանուր գումարը կազմել է 20,84 միլիարդ դրամ, շահութահարկը՝ 4,49 միլիարդ, իսկ եկամտային հարկը՝ 2,64 միլիարդ դրամ: Հանքարդյունաբերության ոլորտի խոշոր հարկատուների եռյակն ամփոփենք «Թեղուտ» ընկերությամբ, որի վճարած հարկերի և վճարների ընդհանուր գումարը կազմել է 15,33 միլիարդ դրամ: Շահութահարկը կազմել է 2,91 միլիարդ դրամ, եկամտային հարկը՝ 1,76 միլիարդ, իսկ ընկերությունը ցանկում զբաղեցրել է 10-րդ հորիզոնականը¹: Հարկ է նշել, որ Թեղուտի հանքավայրը կրկին վերագործարկվել է 2019 թվականի հուլիսից՝ մեկուկես տարվա դադարից հետո: Վերագործարկման արդյունքում վերականգնվել է պղնձի ու մոլիբդենի խտանյութի արտադրությունը: Եվ հենց Թեղուտի գործոնով պայմանավորված՝ հանքարդյունաբերության ոլորտը սկսել է թափ հավաքել ու էական տեմպերով աճել: Արդյունքում կարելի է նկատել, որ հանքարդյունաբերությունը Հայաստանում երեք անգամ ավելի արագ է աճում, քան մշակող արդյունաբերությունը:

Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկի 44-րդ հորիզոնականն է զբաղեցնում «Լիդիան Արմենիա» ընկերությունը՝ վճարած հարկերի և վճարների 4,3 միլիարդ դրամ ծավալով, որից ընդամենը 136,6 միլիոն դրամ շահութահարկ և 231,1 միլիոն եկամտային հարկ: Հարկ է նշել, որ նշված ցուցանիշն առաջընթաց է «Լիդիան Արմենիայի» համար, քանի որ վերջինս 2019 թվականին հայտնվել էր ցանկի 444-րդ հորիզոնականում՝ վճարած հարկերի և վճարների 407 միլիոն դրամ ծավալով²: Ընկերությունը ծրագրել էր շահագործել Ամուլսարի ոսկու հանքավայրը, սակայն 2018 թվականի երկրորդ կեսից սկսած քաղաքացիական հասարակության մի ստվար զանգված խոչընդոտներ է ստեղծում՝ համոզված լինելով, որ հանքի շահագործումն անդառնալի վնասներ է հասցնելու բնությանը:

Հանքարդյունաբերական ընկերությունները, հիմնական հարկատեսակներից բացի, վճարում են նաև ռոյալթիներ, բնապահպանական ու բնօգտագործման վճարներ: Ռոյալթիները հարկի բնույթ ունեցող լրացուցիչ վճարներն են, որոնք վճարում են ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունները: Այն վճարվում է եռամսյակային կանխավճարներով՝ նախորդ տարվա եկամուտ/գին մոդելի հիման վրա, իսկ հաշվարկման համակարգը մի փոքր բարդ է, քանի որ ներառում է շահութաբերության բաղադրիչը: ՀՀ Կառավարությունը նախատեսում է վերանայել ռոյալթիի համակարգը՝ կիրառելով ռոյալթիների նոր, հավելյալ բաղադրիչ, որը կիրառվում է այն ժամանակ, երբ կազմակերպությունների շահույթները գերազանցում են որոշակի շեմը: Հանքարդյունաբերական ընկերությունները հարկեր են վճարում նաև տեղական բյուջեներ, ինչն էլ

¹ Տվյալները՝ ՀՀ Հարկային ծառայության պաշտոնական կայք-էջ

² Տվյալները՝ ՀՀ Հարկային ծառայության պաշտոնական կայք-էջ

սոցիալական կորպորատիվ պատասխանատվության և համապատասխան միջոցառումների շրջանակներում լուծում է որոշակի սոցիալական ու ենթակառուցվածքային խնդիրներ:

Հանքարդյունաբերությունը մեծ կարևորություն ունի նաև արտաքին առևտրում՝ հաշվի առնելով առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն: Արտահանման կառուցվածքում հանքանյութերի մասնաբաժինը նվազել է, սակայն հանքանյութերը շարունակում են մեծ տեղ զբաղեցնել արտահանման կառուցվածքում: Մասնավորապես՝ 2017 թվականի համեմատ 2018 թվականին արտահանման կառուցվածքում հանքանյութերի մասնաբաժինը նվազել է 3%-ով՝ կազմելով 27,4%: Ներմուծման կառուցվածքում հանքանյութերի բաժինը 14,6% է եղել, որը ևս նվազել է մոտ 1%-ով: 2018 թվականին հանքանյութեր, մետաղներ և արտադրանք, թանկարժեք քարեր և մետաղներ ապրանքախմբի մասնաբաժինն ընդհանուր արտահանման կառուցվածքի կեսից ավելին է եղել: Նույն թվականին հանքահումքային արտադրանքի ներմուծման ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 11,4%-ով, իսկ հանքահումքային արտադրանքի արտահանման ծավալը կրճատվել է 4,7%-ով¹: Հանքահումքային արտադրանքի ներմուծման ծավալներն ավելացել են ինչպես 2019 թվականին, այնպես էլ 2020 և 2021 թվականների ընթացքում, ինչը չենք կարող ասել արտահանման ծավալների մասին, որը 2020 թվականի ընթացքում անկում է գրանցել: Այն մեծապես պայմանավորված է 2020 թվականի մարտ ամսից Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համավարակի տարածմամբ, ինչպես նաև սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ թուրք-ադրբեջանական ագրեսիայով՝ Արցախյան 2-րդ պատերազմի բռնկմամբ: Այս ամենն իրենց ազդեցությունն են ունեցել Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության վրա, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 13,2 %-ով²:

Վերոնշյալ ցուցանիշները վերլուծելով կարող ենք նշել, որ թեև ՀՆԱ-ում հանքարդյունաբերության մասնաբաժինը փոքր է, սակայն արտահանման կառուցվածքում այն էական կշիռ ունի, ինչն էլ, իր հերթին, ապահովում է երկրում արտարժույթի առաջարկը: Կարելի է նշել, որ տնտեսական աճի ու աշխատատեղերի ստեղծումից, մինչև արտաքին առևտրաշրջանառության զարգացման հնարավորություններ՝ հանքարդյունաբերությունը մեծ դերակատարություն ունի Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Ունենալով մեծ պոտենցիալ, ոլորտը բավարար չափով չի նպաստում երկրի կայուն տնտեսական զարգացմանը, ինչը կարելի է որակել որպես ձեռնարկված միջոցառումներում առկա մի շարք բացթողումների, օրենսդրական դաշտում առկա թերությունների, գնահատման, մշտադիտարկման և կիրարկման վատ ուղու վրա լինելու հետևանք:

Գիտական նորույթը. Իրականացված ուսումնասիրությունների ու վերլուծությունների հիման վրա մշակել հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող նոր օրենսդրական փաթեթ, որը թույլ կտա ապահովել ոլորտի ընդհանուր

¹ Տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

² Տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

կայուն զարգացման հնարավորությունները:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները. Ներկայացված ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ինչպես ոլորտով հետաքրքրված հետազոտողներին, այնպես էլ քաղաքացիական հասարակությանը՝ օգնելով ոլորտի զարգացման կարևորության մասին ճիշտ պատկերացումներ կազմել ու ստիպելով վերանայել ոլորտին վերաբերող իրենց գործողությունների պլանը:

Եզրակացություններ. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտը՝ որպես արտահանումից ստացվող եկամուտների, օտարերկրյա ուղղակի ներդրումների և քաղաքաբնակ կենտրոններից դուրս համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման աղբյուր, կարևոր կշիռ ունի ազգային տնտեսության մեջ:

Չնայած այն հանգամանքին, որ ոլորտի զարգացման հիմնահարցերը մշտապես գտնվում են հետազոտողների և ոլորտի շահագրգիռ կողմերի ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ հասարակության լայն շերտերի համար ոլորտի զարգացումը շարունակում է նվազ կարևորություն ունենալ: Այն մեծապես պայմանավորված է ինչպես շրջակա միջավայրի պահպանության համապատասխան օրենսդրության մեջ առկա բացթողումներով, այնպես էլ հասցված վնասների փոխհատուցման գրագետ մշակված համակարգի բացակայությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համեմատած բազմաթիվ այլ ոլորտների հանքարդյունաբերությունը մեր երկրի համար ապահովում է բարձր հարկային եկամուտներ: Վերլուծությունների արդյունքում կարելի է նկատել, որ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի հարկային օրենսդրությունը գրեթե չի տարբերվում տնտեսության այլ ճյուղերի օրենսդրությունից, ինչն էլ ոլորտի զարգացման հերթական խոչընդոտներից մեկն է:

Ամփոփելով կարելի է նշել, որ հանքարդյունաբերության ոլորտում միայն ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվող շարունակական բարեփոխումների գործընթացը կարող է նպաստել ոլորտի զարգացմանը՝ հանդիսանալով ՀՀ կայուն տնտեսական զարգացման կարևորագույն նախադրյալ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Հարությունյան, Հանքարդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները, էջ 77-88
2. G. Walser, Economic impact of world mining, World Bank Group Mining Department, Washington, DC (United States), Apr 2002; p. 86-88
3. Gary McMahon, Susana Moreira, The Contribution of the Mining Sector to Socioeconomic Public Disclosure Authorized and Human Development, Extractive Industries for Development Series, № 30, April 2014, p. 3-4, pp. 58
4. «Ազգային տնտեսություններում հանքարդյունաբերության դերը» զեկույց, <https://www.icmm.com/>
5. Համաշխարհային բանկ, <http://documents.worldbank.org/curated/en/289051468186845846/Armenia-Strategic-mineral-sectorsustainability-assessment>
6. Համաշխարհային բանկ, Հանքարդյունաբերության ոլորտի կայունության

- նազմավարական գնահատում-Հայաստան, «Սվիդիշ Ջիոլոջիքըլ Էյ-Բի» ընկերություն, 2016 թ.
7. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն-2, Հավելված 2, Երևան, 2020 թ.
 8. ՀՀ Կառավարության 2018 - 2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր
 9. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, <http://www.minenergy.am/page/472>
 10. ՀՀ Հարկային ծառայության պաշտոնական կայք-էջ՝ https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists&fbclid=IwAR0WsUykHXXw3jGAjzHcDb3lv12li8tgr_RZUOT8GW93aoDPfpNjOBGdphs
 11. ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/?nid=82&id=2236>

References

1. H.S. Avagyan, Ler'nahanqayin & metalowrgiakan ardyownaberowt'yowneri zargacman owghinern ow her'ankarnery' Hayastani Hanrapetowt'yownowm, Er&an 2011, e'j 325
2. L. Harowt'yownyan, Hanqardyownaberowt'yan kayown zargacman himnaxndirneri', e'j 77-88
3. G. Walser, Economic impact of world mining, World Bank Group Mining Department, Washington, DC (United States), Apr 2002; p. 86-88
4. Gary McMahan, Susana Moreira, The Contribution of the Mining Sector to Socioeconomic Public Disclosure Authorized and Human Development, Extractive Industries for Development Series, № 30, April 2014, p. 3-4, pp. 58
5. «Azgayin intesowt'yownerowm hanqardyownaberowt'yan dery'» zekowyc, <https://www.icmm.com/>
6. Hamashxarhayin bank, <http://documents.worldbank.org/curated/en/289051468186845846/Armenia-Strategic-mineral-sectorsustainability-assessment>
7. Hamashxarhayin bank, Hanqardyownaberowt'yan olorti kayownowt'yan r'azmavarakan gnahatowm-Hayastan, «Svidish Jiolojiqy'l E'y-Bi» y'nkerowt'yown, 2016 t'.
8. Hayastani hanqardyownaberowt'yan olorti qaghaqakanowt'yown-2, Havelvac' 2, Er&an, 2020 t'.
9. HH Kar'avarowt'yan 2018 - 2022 t'vakanneri gorc'owneowt'yan mijocar'owmneri c'ragir
10. Hayastani Hanrapetowt'yan e'nergetik ent'akar'owcvac'qneri & bnakan pasharneri naxararowt'yown, <http://www.minenergy.am/page/472>
11. HH Harkayin c'ar'ayowt'yan pashtonakan kayq-e'j՝ https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists&fbclid=IwAR0WsUykHXXw3jGAjzHcDb3lv12li8tgr_RZUOT8GW93aoDPfpNjOBGdphs
12. HH vitwakagrakan komite, <https://armstat.am/am/?nid=82&id=2236>

**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

**Դավիթ Վլադիմիրի Հարությունյան
Տաթևիկ Վազգենի Շահինյան**

Համառոտագիր: Հանքարդյունաբերության ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արդյունաբերության կարևոր ոլորտներից մեկը և ոլորտի պատասխանատուների համար առաջնային է ոլորտի զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումների իրականացումը:

Հատկապես արդիական է հանքարդյունաբերության ոլորտի վերլուծությունն ու կայուն զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտումը, քանի որ ոլորտը մեծ դերակատարություն ունի ՀՀ կայուն տնտեսական զարգացման գործում:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը, վեր հանել ոլորտի կայուն զարգացմանը խոչընդոտող առկա խնդիրները՝ հիմնավորելով ոլորտի կարևորությունը ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման գործում:

Հետազոտության ընթացքում խնդիր է դրվել ուսումնասիրել ու բացահայտել հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական ազդեցության ուղղությունները, վերլուծել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը՝ հիմնավորելով հանքարդյունաբերական ոլորտի առանցքային նշանակությունը երկրի կայուն տնտեսական զարգացման գործում:

Օգտագործվելով գիտական՝ պատմական-տրամաբանական, ինչպես նաև վերլուծական-սինթետիկ մեթոդները, հոդվածի շրջանակում ուսումնասիրվել է ոլորտի տնտեսական ազդեցության հիմնական ուղղությունները: Վերլուծվել է վերջին տարիների ընթացքում ՀՆԱ-ի մեջ հանքարդյունաբերության մասնաբաժինը՝ վեր հանելով փոփոխությունների վրա ազդեցություն ունեցած հիմնական գործոնները: Բացահայտվել է հանքարդյունաբերության ոլորտի մեծ կարևորությունը արտաքին առևտրում, ինչպես նաև ներկայացվել է վերջին տարիների ընթացքում ոլորտի մասնաբաժինը արտահանման և ներմուծման ծավալներում:

Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում առաջարկվում է վերանայել ոլորտի բարեփոխմանն ուղղված շարունակական բարեփոխումների գործընթացը, մասնավորապես ոլորտը կարգավորող հարկային օրենսդրությունը:

Վերլուծությունների արդյունքում **ստացվել է հետևյալ գիտական նորույթը.** Իրականացված ուսումնասիրությունների ու վերլուծությունների հիման վրա մշակել հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող նոր օրենսդրական փաթեթ, որը թույլ կտա ապահովել ոլորտի ընդհանուր կայուն զարգացման հնարավորությունները:

Վերլուծությունների արդյունքում ստացված արդյունքները կարող են օգտակար լինել ինչպես ոլորտով հետաքրքրված հետազոտողներին, այնպես էլ քաղաքացիական հասարակությանը՝ օգնելով ոլորտի զարգացման կարևորության մասին ճիշտ պատկերացումներ կազմել ու ստիպելով վերանայել ոլորտին վերաբերող իրենց գործողությունների պլանը:

Բանալի բառեր. Հանքարդյունաբերության ոլորտ, տնտեսական ազդեցություն, ՀՆԱ, հարկային եկամուտներ, ռոյալթիներ, արտաքին առևտուր, արտահանում, ներմուծում:

ГОРНОДОБЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ КАК ЗАЛОГ УСТОЙЧИВОГО ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

Давит Владимирович Арутюнян
Татевик Вазгеновна Шагинян

Аннотация. Горнодобывающий сектор является одним из важных секторов промышленности Республики Армения, и осуществление непрерывных мер, направленных на развитие сектора, имеет первостепенное значение для лиц, ответственных за сектор.

Анализ горнодобывающего сектора и выявление факторов, препятствующих устойчивому развитию, *особенно актуальны*, поскольку этот сектор играет важную роль в устойчивом экономическом развитии Армении.

Цель статьи - изучить горнодобывающий сектор РА, выделить существующие проблемы, препятствующие устойчивому развитию сектора, обосновав важность сектора в социально-экономическом устойчивом развитии РА.

В ходе исследования *была поставлена задача* изучить и выявить направления экономического влияния горнодобывающей отрасли, проанализировать горнодобывающий сектор РА, обосновав ключевое значение горнодобывающего сектора в стабильном экономическом развитии страны.

В рамках статьи с использованием научных-историко-логических, а также аналитико-синтетических методов изучены основные направления экономического влияния отрасли. Проанализирована доля горнодобывающей промышленности в ВВП за последние годы, выделены основные факторы, влияющие на изменения. Выявлено большое значение горнодобывающей отрасли во внешней торговле, а также представлена доля отрасли в объемах экспорта и импорта за последние годы.

В результате исследований и анализов *рекомендуется* пересмотреть процесс непрерывных реформ, направленных на реформирование сектора, в частности налогового законодательства, регулирующего данный сектор.

В результате анализа была получена следующая научная новизна: На основе проведенных исследований и анализов разработать новый законодательный пакет, регулирующий горнодобывающую отрасль, позволяющий обеспечить возможности общего устойчивого развития отрасли.

Полученные результаты могут быть полезны как интересующимся данным сектором исследователям, так и гражданскому обществу, помогая формировать правильные представления о важности развития сектора и заставляя их пересматривать свой план действий, связанных с сектором.

Ключевые слова: Горнодобывающий сектор, экономическое воздействие, ВВП, налоговые поступления, роялти, внешняя торговля, экспорт, импорт.

MINING INDUSTRY AS A GUARANTEE OF SUSTAINABLE ECONOMIC DEVELOPMENT

Davit Vladimir Harutyunyan
Tatevik Vazgen Shahinyan

Abstract. The mining sector is one of the important sectors of the industry of the Republic of Armenia, and the implementation of continuous measures aimed at development of the sector is of paramount importance for those responsible for the sector.

The analysis of the mining sector and the identification of factors hindering sustainable development are *particularly relevant*, as this sector plays an important role in the sustainable economic development of Armenia.

The purpose of the article is to study the mining sector of the Republic of Armenia, highlight the existing problems that impede the sustainable development of the sector, substantiating the importance of the sector in the socio-economic sustainable development of the Republic of Armenia.

The objective of the research was to study and identify the directions of economic influence of the mining industry. To analyze the RA mining sector, justifying the key importance of the mining sector in the country's sustainable economic development.

In the framework of the article the main directions of the economic influence of the industry are studied *using scientific-historical-logical, as well as analytical-synthetic methods*. The share of the mining industry in GDP in the last few years has been analyzed, and the main factors influencing the changes have been identified. The great importance of the mining industry in foreign trade is revealed, as well as the share of the industry in the volume of exports and imports in the last few years.

As a result of research and analysis, *it is recommended* to review the process of continuous reforms aimed at reforming the sector, in particular the tax legislation governing the sector.

As a result of the analysis, the following scientific novelty was obtained: Based on the research and analysis carried out, develop new legislative package regulating the mining industry, which will provide opportunities for the overall sustainable development of the industry.

The obtained results can be useful for both researchers interested in the sector and civil society, helping to form the right ideas about the importance of developing the sector and forcing them to reconsider their action plan related to the sector.

Keywords: Mining sector, economic impact, GDP, tax revenues, royalties, foreign trade, exports, imports.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՓԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԾԱԽՍԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԸ ¹

Ստեփան Ռաֆիկի Պապիկյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Հայկական ատոմակայանը տեղակայված է Արարատյան դաշտավայրում, Մեծամոր քաղաքի մոտ: Երևանից մոտ 30կմ դեպի արևմուտք: Կայանը բաղկացած է ՋՋԷՌ-440 երկու էներգաբլոկներից:

ՀՀ կառավարության որոշման համաձայն 2015թ. սկսվել են կայանի կյանքի տևողության երկարացման աշխատանքները: Ներկայումս իրականացվում է մինչև 2026թ Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը:

Արդիականություն:

Ներկայում աշխարհի 31 երկիր շահագործում է ատոմակայան: Իտալիան դադարեցրեց բոլոր գործող ատոմակայանները և հրաժարվեց ատոմային էլեկտրակայաններից: Բելգիան, Գերմանիան, Իսպանիան, Շվեյցարիան, Թայվանը քաղաքականություն են վարում միջուկային էներգիայի չօգտագործման համար: Նիդեռլանդները և Շվեդիան նույնպես ծրագրում էին հրաժարվել միջուկային էներգետիկայից: Լիտվան և Ղազախստանը ժամանակավորապես դադարեցրին ատոմային էներգիա ունենալը: Նրանք ծրագրում են կառուցել նոր ատոմակայաններ²:

Միջուկային էներգիայի մերժումից բացի, առկա են դրա նվազման միջոցառումներ և միտումներ: Որպես ատոմային էներգիայի առաջնորդներ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան («Երեք մղոն կղզի» ատոմակայանում վթարից, ինչպես նաև Չեռնոբիլի ատոմակայանում վթարից հետո) և հատկապես Ճապոնիա («Ֆուկուսիմա -1» ատոմակայանի վթարից հետո), ինչպես նաև որոշ այլ ատոմակայաններ ունեցող երկրներ փակել են դրանց զգալի մասը: Միջուկային էներգիայի արտադրության գազաթնակետը գրանցվել է 2006 թվականին: Միջուկային էներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության մեջ 1996-ի 17,6% -ից նվազել է 2015-ին՝ 10,7%:

Նպատակը: Ուսումնասիրել Հայկական ատոմակայանի էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրիտ հաշվարկման համար անհրաժեշտ ծախսերը՝ նախագծում, կառուցում, շահագործում և կոնսերվացիա: Վերջին բաղադրիչի ճշգրիտ որոշելը բարդ և դժվարին խնդիր է: Ինչպիսի տարբերակ կընտրվի Հայկական

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5B285 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Պապիկյան Ս.Ռ. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման հարցերը էներգետիկ անվտանգության տեսակետից: // «Հայկական Բանակ» ք. Երևան, 2019թ. 48-56էջ:

ատոմակայանի ապամոնտաժման համար, որը հնարավորություն կտա մեղմացնել ռիսկերը:

Գրականության վերլուծություն:

Այս աշխատությունը ներկայացնում է Ռուսաստանում միջուկային էներգիայի զարգացման այլընտրանքային սցենարների բազմաչափ համակարգային վերլուծության կիրառման արդյունքները՝ օգտագործելով միջազգային գնահատման գործիքները¹: Ցանկացած միջուկային էներգետիկ համակարգի զարգացում երկար և բազմափուլ գործընթաց է: Հեռանկարները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել արտաքին բազմաթիվ էական գործոններ, ինչպես նաև մակրոտնտեսության զարգացման ուղղությունների անորոշությունը: Նման առաջադրանքում իրականացվել է բազմաչափ մոտեցում: Վերլուծվել է տեխնոլոգիայի մրցունակությունը: Օգտագործվել են տնտեսական ցուցանիշները, որոնք բնութագրում են անվտանգությունը, շրջակա միջավայրի ազդեցությունը, իրականացման ռիսկերը և զարգացման հեռանկարները:

Այս հետազոտությունում հեղինակները դիտարկում են մինչև 2050 թվականը Ռուսաստանում ատոմային էներգիայի զարգացման ռազմավարությունը և մինչև 2100 թվական հեռանկարները: Հիմնավորվել է, որ ռազմավարությունը չի լուծում կյանքի ցիկլի վերջին փուլերի խնդիրները: Այն չի արտացոլում միջուկային տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված բնապահպանական խնդիրները: Նրանք գտնում են, որ ռազմավարությունը չի կարող իրականացվել առանց նպատակային գործունեության՝ հիմնավորելու: Անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել օգտագործված միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման խնդիրները: Իրականացնել ռադիոակտիվ թափոնների կառավարման պետական համակարգի ձևավորումը: Առաջարկվում է պատրաստել «Ատոմային էներգիայի զարգացման բնապահպանական հիմնավորում» պայմանական վերնագրով փաստաթուղթ²:

«Միջուկային էներգետիկական Հայաստանում. պատմություն, հեռանկարներ, այլընտրանքներ» աշխատանքում Ա. Մարկոսյանը հիմնականում անդրադառնում է Հայկական ատոմակայանի հնարավոր զարգացման խնդիրներին: Տրված է նաև համաշխարհային էներգետիկայի զարգացման միտումները՝ պայմանավորված միջուկային էներգետիկայի հարցերով³:

Մեթոդաբանություն:

Սույն հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել համընդհանուր գիտական մեթոդներ՝ տրամաբանական, համեմատական վեր-

¹ Алексеев П.Н. ,Бландинский В.Ю.,Баланин А.Л. Оценка эффективности сценариев развития ядерной энергетики России с использованием многокритериального анализа. “Атомная Энергия” том 128, номер1 3-6С.

² Большов Л.А., ,Линге И.И. Стратегия развития ядерной энергетики России и вопросы экологии. “Ядерная Энергия” том 127, номер 6, 2019г., 303-309С.

³ Մարկոսյան Հ.Ա. Միջուկային էներգետիկական Հայաստանում.պատմություն, հեռանկարներ, այլընտրանքներ/Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019թ:

լուծության և այլն, որոնք հնարավորություն են տալիս հանգել համապատասխան եզրակացության:

Վերլուծություն

Միջազգային մակարդակով օգտագործում են միջուկային տեղակայանքները շահագործումից հանելու երեք հիմնական ռազմավարություն՝ ապամոնտաժում, հետաձգված ապամոնտաժում և թաղում: Ինչպիսի ռազմավարություն կրնտրվի Հայկական ատոմակայանի ապամոնտաժման համար, դեռևս անհայտ է: Պարզ է, որ այն կախված է շրջակա միջավայրի, անվտանգության, տեղական պայմաններից, ֆինանսական հնարավորություններից:

Այժմ աշխարհը վերադարձել է միջուկային էներգիայի լայն տարածմանը: Շատ երկրներ հայտարարել են իրենց միջուկային էներգետիկական զարգացնելու մասին: Համաձայն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) միջուկային ռեակտորների տեղեկատվական համակարգի՝ 2019 թվականի հունիսի դրությամբ աշխարհում գործում են 449 ատոմային ռեակտորներ 397,650 ՄՎտ գումարային հզորությամբ: 54 միջուկային ռեակտորներ գտնվում են կառուցման փուլում:

Ատոմակայանների շահագործումից հանելու երեք տարբերակ գոյություն ունի: Առաջինը երկարաժամկետ անվտանգ պահեստավորումն է: Այս դեպքում օգտագործված միջուկային վառելիքը և ռադիոակտիվ թափոնները ԱԷԿ-ից տեղափոխվում են հատուկ պահեստարաններ: Առաջնային շրջանի կառուցվածքներն ու սարքավորումները պահվում են հսկողության տակ: 60-70 տարվա ընթացքում ռադիոակտիվությունը ընկնում է: Այնուհետև ապամոնտաժվում է¹:

Երկրորդ տարբերակը՝ թաղումն է: Ռադիոակտիվ թափոնները տեղափոխվում են ռեակտորի շենք: Այնուհետև աշխատանքներն իրականացվում են, ինչպես առաջին դեպքում: Երրորդ տարբերակը ապամոնտաժումն է: Էներգաբլոկի անջատումից վեց տարի անց իրականացվում է շենքերի և սարքավորումների ապամոնտաժում: Սկսվում է ՀԱԷԿ-ը շահագործումից հանելու ծախսերը: Ամբողջ գործընթացը Հայաստանին կարժենա 238.75 միլիոն եվրո կամ 310.37 միլիոն դոլար:

Կայանի հետագա շահագործման դեպքում ևս 10 տարի, առաջանալու են օգտագործված միջուկային վառելիք և ռադիոակտիվ թափոններ: Դրանց պահեստավորման համար անհրաժեշտ կլինի լրացուցիչ ֆինանսավորում:

Աշխարհում ընդունված է ատոմակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի սակագնի մեջ ներառել ատոմակայանի հետագա շահագործումից հանելու ծախսերը: Դրանք կուտակվում են հատուկ անձեռնմխելի ֆոնդում: Խորհրդային տարիներին՝ 1976 թվականից մինչև 1989 թվականը այդ նպատակների համար միջոցներ չեն կուտակվել: Երկրորդ էներգաբլոկի վերագործարկումից հետո միջոցներ են հավաքվել 20 տարվա գործունեության համար: Սակայն դա աննշան գումար է: Երկու էներգաբլոկները միասին պետք է գործեին 60 տարի: Միայն

¹ Папикян С.Р. Особенности развития ядерной энергетики в Армении // “Энергетика за Рубежом” М, №1; 2020, С. 35-38.

երկրորդի 20 տարվա շահագործման դեպքում՝ շահագործումից հանելու գինը ներառված էր սակագնի մեջ: Այժմ կայանը շահագործումից հանելու համար Հայաստանը չունի միջոցներ:

Երկու էներգաբլոկները գտնվում են մեքենական սրահում: Հարց է առաջանում: Ինչպե՞ս է գործարկվելու երկրորդ էներգաբլոկը, երբ առաջինը շահագործումից հանվում է¹:

Դրա համար անհրաժեշտ է այն ներկայացնել տարեկան բերված ծախսերի տեսքով: Այսինքն՝

$$З = U_{տ} + E_n K, \quad (1)$$

որտեղ K -ն կայանի կապիտալ ներդրումներն են, դրամ

E_n -ն արդյունավետության նորմատիվային գործակիցն է, ընդունվում է հավասար 0.12-ի,

$U_{տ}$ -ն տարեկան շահագործման ծախսերն են, դրամ/տարի:

Տարեկան շահագործման ծախսերի մեջ մտնում են՝ ամորտիզացիայի և ընթացիկ նորոգման, շահագործող անձնակազմի աշխատավարձը, ընդհանուր կայանային և վառելիքի հետ կապված ծախսերը: Այս ծախսերի մեջ անհրաժեշտ է գնահատել նաև կայանի ապամոնտաժման համար անհրաժեշտ ծախսերը, որի իրական մեծության գնահատումը բավական բարդ է:

$$U_{տ} = U_{ամ} + U_{աշխ} + U_{ը.կ.} + U_{վ}, \quad (2)$$

Հետևաբար, կարող ենք գրել

$$U_{տ} = U_{ամ} + U_{աշխ} + U_{ը.կ.} + U_{վ} + U_{2h} \quad (3)$$

Այսինքն, U_{2h} բաղադրիչը կարող է ըստ նախնական գնահատականների զգալի չափով թանկացնել ատոմային էլեկտրակայանի կողմից արտադրված էլեկտրական էներգիայի սակագինը:

Որոշենք կայանի կապիտալ ներդրումները

$$K_{կ} = \overline{K} \cdot N_{կ}, \quad (4)$$

որտեղ \overline{K} -ն էլեկտրակայանի կառուցման տեսակարար կապիտալ ներդրումներն են՝ դրամ/ԿՎտ,

$N_{կ}$ - կայանի էլեկտրական հզորությունը, ՄՎտ:

Գոյություն ունեն բազմաթիվ պատճառներ կանխատեսելու էլեկտրաէներգիայի գինը: Որոշ փոփոխականներ կապված են ապամոնտաժման, թափոնների հեռացման հետ: Կանխատեսումների ռիսկը մեծ է: Կարող են ճիշտ չգնահատվել այդ ռիսկերը:

¹ Папикян С.Р. Армянская АЭС. Сегодня и завтра.// “Энергия: экономика, техника, экология . №7, г.М., 2007.

Գոյություն ունեցող միջուկային օբյեկտների վերաբերյալ հավաստի տեղեկատվությունը բացակայում է:

Ատոմակայաններ կառուցվելու դեպքում պետական երաշխիքներն կարևոր են: Երաշխիքները կարող են պահանջել .

- շինարարության ծախսեր;
- արտադրողականության մակարդակի պահպանում;
- տեխնիկական սպասարկման ծախսեր (բացառությամբ վառելիքի ծախսերի);
- միջուկային վառելիքի ծախսեր.
- շահագործումից հանելու ծախսեր:

Ենթադրվում էր, որ ԱԷԿ-ի շահագործումից հանելը պետք է վճարվեր էլեկտրական էներգիայի վաճառքից ստացված միջոցներից:

Համեմատության համար կարելի է համարել այլ ԱԷԿ-ներ, օրինակ՝ Իգնալինայի ԱԷԿ-ը Լիտվայում, որի շահագործումից հանելը, ինչպես և ինքնարժեքի կառուցվածքը, այնուամենայնիվ կտարբերվի Օստրովեց ԱԷԿ-ից: Ըստ ծրագրի՝ ատոմակայանը կփակվի 38 տարի՝ երկու հազար աշխատողների ջանքերով: Այդ գործընթացը նախատեսում է 3,8 միլիարդ դոլար:

Ապամոնտաժման ֆոնդը պետք է կազմվի ոչ ավելի, քան կայանի շահագործման առաջին 30 տարիների ընթացքում:

Ապամոնտաժման ֆոնդի 30-ամյա ձևավորմամբ ատոմակայանը շահագործումից հանելու ծախսերը էլեկտրաէներգիայի արժեքը կկազմի 0,75 ցենտ (60 տարեկան՝ 0,37 ցենտ, իսկ 15 տարեկան՝ 1.5 ցենտ):

1982թ. հոկտեմբերի 15-ին ՀԱԷԿ-ում տեղի ունեցավ վթար,որի հետևանքով առաջացավ հրդեհ: Արդյունքում մալուխները շարքից դուրս եկան, առաջացան բարդություններ թիվ 1 բլոկի ռեակտորի հովացման ռեժիմի պահպանման հետ: Մասնագետների հմուտ և գրագետ գործողությունների շնորհիվ վթարը կանխվեց: Հետագայում ստուգումները ցույց տվեցին,որ ՀԱԷԿ-ի տարածքում գամմա ճառագայթման ֆոնը էական փոփոխություններ չի կրել:

ՀԱԷԿ-ի շահագործումից հանելու ծախսերի գնահատման համար օգտագործվում է տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության միջուկային էներգիայի գործակալության կողմից մշակված «Միջուկային տեղակայանքները շահագործումից հանելու ծախսերի գնահատման հողվածների ստանդարտ ցանկ» մեթոդը:

Ընդհանուր ծախսերը բաժանված են հետևյալ հինգ կատեգորիաների՝

1. աշխատավարձ,
2. ներդրումային ծրագիր,
3. աշխատած վառելիքի ծախսեր,
4. թափոնների հեռացման հետ կապված ծախսեր,
5. շահագործման ծախսեր:

Գիտական նորույթը: Հիմնավորվել է Հայկական ատոմակայանը շահագործումից հանելուց հետո կոնսերվացիայի համար անհրաժեշտ ծախսերը: Այն հնարավորություն կտա ճշգրիտ գնահատել և կանխատեսել կատարվող ծախսերը: Դրամական միջոցների արդյունավետ օգտագործման տեսակետից Հայկական

ատոմակայանի կոնսերվացիայի համար շահավետ տարբերակ է երկարաժամկետ ռազմավարությունը:

Եզրակացություն

1. Հայկական ատոմակայանի էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրիտ հաշվարկման համար անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր անհրաժեշտ ծախսերը՝ նախագծում, կառուցում, շահագործում և կոնսերվացիայի: Վերջին բաղադրիչի ճշգրիտ որոշելը բարդ և դժվարին խնդիր է: Ինչպիսի տարբերակ կընտրվի Հայկական ատոմակայանի ապամոնտաժման համար, որը հնարավորություն կտա մեղմացնել ռիսկերը:
2. Առաջարկվող միջոցները կամ արտաքին պետական պարտք կամ էլեկտրական էներգիայի սակագնի թանկացում: Երկու տարբերակի դեպքում վճարում է սպառողը: Հետևաբար խոսել ատոմակայանում արտադրվող էլեկտրական էներգիայի էժան սակագնի մասին վիճահարույց է: Նախնական գնահատումներով ՀԱԷԿ-ի կոնսերվացիայի համար կծախսվի մոտ 400 միլիոն դոլար: Գործնականում, եթե ուսումնասիրում ենք միջազգային փորձը կարելի խոսել մոտ մեկ միլիարդ դոլարի լրացուցիչ դրամական միջոցների մասին: Դրամական միջոցների արդյունավետ օգտագործման տեսակետից ՀԱԷԿ-ի կոնսերվացիայի համար շահավետ տարբերակ է երկարաժամկետ ռազմավարությունը: Շահագործումից հանելու երկարատև գործընթացը շահավետ է, քանի որ նյութական միջոցների ծախսերը կատարվում են ժամանակի ընթացքում:
3. Նոր ատոմակայանի նախագծման և կառուցման պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել նաև չնախատեսված մի շարք հարցեր պայմանավորված հողատարածքի երկարաժամկետ օգտագործման, անվտանգության ռիսկի գնահատման, տասնյակ տարիների ընթացքում գումարի արժեզրկման և այլ չնախատեսված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Алексеев П.Н., Бландинский В.Ю., Баланин А.Л. Оценка эффективности сценариев развития ядерной энергетики России с использованием многокритериального анализа. “Атомная Энергия” том 128, номер 1 3-6 С.
2. Большов Л.А., Линге И.И., Стратегия развития ядерной энергетики России и вопросы экологии. “Ядерная Энергия” том 127, номер 6, 2019г., 303-309С.
3. Պապիկյան Ս.Ռ. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման հարցերը էներգետիկ անվտանգության տեսակետից: // «Հայկական Բանակ» ք. Երևան, 2019թ. 48-56էջ:
4. Մարկոսյան Հ.Ա. Միջուկային էներգետիկական Հայաստանում. պատմություն, հեռանկարներ, այլընտրանքներ/Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019թ:
5. Папикян С.Р. Особенности развития ядерной энергетики в Армении // “Энергетика за Рубежом” М, №1; 2020, С. 35-38.
6. Папикян С.Р. Армянская АЭС. Сегодня и завтра.// “Энергия: экономика, техника, экология” . №7, г.М., 2007.

References

1. Alekseev P.N., Blandinskij V.Ju., Balanin A.L. Ocenka jeffektivnosti scenarijev razvitija jadernoj jenergetiki Rossii s ispol'zovaniem mnogokriterial'nogo analiza. "Atomnaja Jenergija" tom 128, nomer1 3-6 S.
2. Bol'shov L.A., Linge I.I. Stradegija razvitija jadernoj jenergetiki Rossii i voprosy jekologii. „Jadernaja Jenergija,, tom 127, nomer 6, 2019g., 303-309S.
3. Papikyan S.R'. Hayastani Hanrapetowt'yan e'nergetikayi zargacman harcery' e'nergetik anvtangowt'yan tesaketik: // "Haykakan Banak" q. Er&an, 2019t'. 48-56e'j:
4. Markosyan H.A. Mijowkayin e'nergetikan Hayastanowm. patmowt'yown, her'a-nkarner, ayly'ntranqner/Er&an, HH GAA "Gitowt'yown" hratarakchowt'yown, 2019t':
5. Papikjan S.R. Osobennosti razvitija jadernoj jenergetiki v Armenii // „Jenergetika za Rubezhom,, M, #1; 2020, S. 35-38.
6. Papikjan S.R. Armjanskaja AJeS. Segodnja i zavtra.// "Jenergija: jekonomika, tehnika, jekologija". #7, g.M., 2007.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՓԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԾԱԽՍԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ստեփան Ռաֆիկի Պապիկյան

Համառոտագիր: *Արդիականություն:* Ներկայում աշխարհի 31 երկիր շահագործում է ատոմակայան: Իտալիան դարձավ առաջին երկիրը, որը դադարեցրեց բոլոր գործող ատոմակայանները և ամբողջությամբ հրաժարվեց ատոմային էլեկտրակայաններից: Բելգիան, Գերմանիան, Իսպանիան, Շվեյցարիան, Թայվանը երկարաժամկետ քաղաքականություն են վարում միջուկային էներգիայի դադարեցման համար:

Համաշխարհային ընդունված պրակտիկայում ընդունված է ատոմակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի սակագնի մեջ ներառել ատոմակայանի հետագա շահագործումից հանելու ծախսերը, որոնք կուտակված են հատուկ անձեռնմխելի ֆոնդում:

Հետազոտության *նպատակն* է ուսումնասիրել Հայկական ատոմակայանի էլեկտրական էներգիայի սակագնի ճշգրիտ հաշվարկման համար անհրաժեշտ ծախսերը՝ նախագծում, կառուցում, շահագործում և կոնսերվացիա: Վերջին բաղադրիչի ճշգրիտ որոշելը բարդ և դժվարին խնդիր է: Պետք է որոշել, թե Հայկական ԱԷԿ-ի ապամոնտաժման որ տարբերակն է պետք ընտրել, որպեսզի նվազեցվեն ռիսկերը:

Սույն հետազոտության համար *մեթոդաբանական* հիմք են հանդիսացել համընդհանուր գիտական մեթոդներ՝ տրամաբանական, համեմատական վերլուծության և այլն, որոնք հնարավորություն են տալիս հանգել համապատասխան եզրակացության:

Գիտական նորույթը: Հիմնավորվել է Հայկական ատոմակայանը շահագործումից հանելուց հետո կոնսերվացիայի համար անհրաժեշտ ծախսերը: Այն հնարավորություն կտա ճշգրիտ գնահատել և կանխատեսել կատարվող ծախսերը: Դրամական միջոցների արդյունավետ օգտագործման տեսակետից Հայկական ատոմակայանի կոնսերվացիայի համար շահավետ տարբերակ է երկարաժամկետ ռազմավարությունը:

Նախնական գնահատումներով ՀԱԷԿ-ի կոնսերվացիայի համար կծախսվի մոտ 400 միլիոն դոլար: Գործնականում, եթե ուսումնասիրում ենք միջազգային փորձը կարելի խոսել մոտ մեկ միլիարդ դոլարի լրացուցիչ դրամական միջոցների մասին: Դրամական միջոցների արդյունավետ օգտագործման տեսակետից ՀԱԷԿ-ի կոնսերվացիայի համար շահավետ տարբերակ է երկարաժամկետ ռազմավարությունը: Շահագործումից հանելու երկարատև գործընթացը շահավետ է, քանի որ նյութական միջոցների ծախսերը կատարվում են ժամանակի ընթացքում:

Բանալի բառեր. Ատոմակայան, հզորություն, տուրբին, էլեկտրական և ջերմային էներգիա, վառելիք, շահագործում, սարքավորում, բերված ծախսեր:

ЭКОНОМИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОПРЕДЕЛЕНИЯ ЗАТРАТ ПОСЛЕ ЗАКРЫТИЯ АРМЯНСКОЙ АЭС

Степан Рафикович Папикян

15	«Մեյլաթ Բանկ» ՓԲԸ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1
16	«Յոնիբանկ» ԲԲԸ	32	2	2	2	3	4	2	2	3	1	1	2	57
17	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	28	4	3	4	5	5	5	7	5	3	4	0	73
	Ընդամենը	261	22	22	25	27	36	41	36	28	10	23	18	550

Հայաստանում ամենաշատ մասնաճյուղերն ունի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, որն ավելի շատ կենտրոնացած է Երևանում և Շիրակի մարզում: Մասնաճյուղերի թվով երկրորդը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն է, իսկ երրորդը «Արդշինբանկ» ՓԲԸ-ն: Մասնաճյուղերի քիչ թվով առանձնանում են «Արմսիվիսբանկ» ՓԲԸ-ն, «Մեյլաթ Բանկ» ՓԲԸ-ն, «ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ-ն և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն:

Երևանում մասնաճյուղերի թվով առաջատար է «Յոնիբանկ» ԲԲԸ-ն, Արագածոտնում՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, Արարատում՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, Արմավիրում և Գեղարքունիքում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ու «ԱԿԲԱ ԲԱՆԿ»

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի պաշտոնական կայք-էջերում 30.06.2022թ. դրությամբ հրապարակված տվյալների հիման վրա

ԲԲԸ-ն, Լոռիում և Կոտայքում՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն, Շիրակում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, Սյունիքում՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, Վայոց Ձորում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, Տավուշում՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «Արդշինբանկ» ՓԲԸ-ն և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն:

17 առևտրային բանկից Արցախում մասնաճյուղեր ունեն 5-ը, ընդ որում՝ ամենաշատը՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ն, իսկ մեկական՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ու «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Բացի Երևանից, ըստ մասնաճյուղերի թվի՝ ՀՀ-ում բանկայնացման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Կոտայքի մարզում՝ 41 մասնաճյուղ, իսկ ամենացածրը՝ Վայոց Ձորում՝ 10 մասնաճյուղ:

50-ից ավելի մասնաճյուղեր ունեցող ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերն իրենց գործունեությամբ բանկայնացմանը նպաստում են առավելապես Շիրակի, Լոռվա, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցի զարգացման, հետևապես ռեզիոնալ բանկայնացման գործընթացում պետք է ուշադրություն դարձնել նաև օրենսդրական փոփոխություններին. այսօր բանկի և բանկի յուրաքանչյուր մասնաճյուղի գործունեության համար տարեկան միանվագ պետական տուրքի չափերը համապատասխանաբար կազմում են 8 մլն դրամ և 1 մլն դրամ¹, ինչը բավականին բարձր դրույք է և խոշոր ոչ տոկոսային ծախս է առաջացնում հատկապես մեծ թվով մասնաճյուղեր ունեցող առևտրային բանկերի համար: Օրինակ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն բացի գլխամասային գրասենյակի գործունեության համար տարեկան միանվագ վճարվող 8 մլն դրամ պետական տուրքից, բոլոր մասնաճյուղերի գործունեության համար տարեկան միանվագ վճարում է նաև 72 մլն դրամ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն՝ 62 մլն դրամ, իսկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն՝ 61 մլն դրամ:

Պետական տուրքի գծով նման ծախսերը կարող են խոչընդոտել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի աշխարհագրության ընդլայնման միջոցով բանկայնացման մակարդակի բարձրացման գործընթացին, ընդ որում՝ պետական տուրքի չափի որոշման համար սահմանված դրույքաչափի հիմնավորումը բացակայում է:

Հայաստանում բանկայնացման մակարդակի աճին նպաստում են նաև «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, մասնավորապես այն, որ 01.07.2022թ-ից ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 300 հազար դրամը գերազանցող բոլոր գործարքներն իրականացվում են միայն անկանխիկ եղանակով², և օրենսդրական փոփոխություններն առաջիկա տարիներին էլ ավելի են մեծացնելու անկանխիկ վճարումների մասշտաբները:

¹ Աղբյուրը՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, 19-րդ հոդված, 5-րդ կետ

² «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, 1-ին կետ

Եզրակացություն

Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների, հաշվարկների և վերլուծությունների վրա՝ Հայաստանում բանկայնացման վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

- բանկայնացումը պահանջում է բանկային համակարգի զարգացման այնպիսի ձևաչափ, որը կավելացնի բանկային ծառայությունների պահանջարկը,

- բանկայնացման մակարդակի աճը ավելացնում է ֆինանսական ռեսուրսներին հասանելիության հնարավորությունները, ինչն էլ անհատներին ու բիզնեսի ներկայացուցիչներին դարձնում է տնտեսապես ավելի անկախ, մրցակցային և սոցիալապես պատասխանատու,

- ֆինանսական ծառայությունների մատուցման ժամանակի, տեղանքի և գնի արդյունավետ որոշումն ու համադրումը բանկայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմնաքարերից են,

- բանկի և դրա մասնաճյուղ(եր)ի գործունեության համար պետական տուրքի դրույքաչափերը չհիմնավորված բարձր են, ինչը բանկերի տարածքային զարգացման միջոցով բանկայնացման մակարդակի բարձրացման համար խոչընդոտ է, հետևապես՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը պետք է Հայաստանի բանկերի միության աջակցությամբ հանդես գան օրենսդրական փոփոխությունների կատարելու նախաձեռնությամբ՝ առաջարկելով սահմանել պետական դրույքի շեմեր՝ ելնելով բանկի մասնաճյուղերի թվից,

- Հայաստանում օրենսդրական փոփոխություններով խթանվում է անկանխիկ գործառնությունների կազմակերպումը, ինչն իր հերթին մեծացնում և շարունակելու է մեծացնել բանկայնացման շրջանակը,

- բանկայնացումը ենթադրում է տարածքային և ֆինանսական հասանելիություն հաճախորդների տարբեր խմբերի համար, իսկ ֆինանսական տեխնոլոգիաները նպաստում են հեռավար սպասարկմանը, ուստի առևտրային բանկերը պետք է անընդհատ իրագործեն ֆինանսական նորարարություններ թվայնացման և թվային փոխակերպման միջոցով,

- Հայաստանում բանկայնացման մակարդակը բարձր է մայրաքաղաքում, իսկ մարզերում՝ միայն քաղաքային բնակավայրերում, քանի որ գյուղական համայնքներում ենթակառուցվածքները զարգացած չեն,

- երկրում բանկայնացման իրատեսական մակարդակը որոշելու համար առկա է խնդիր՝ կապված հաճախորդների նույնականացման կամ բանկային հաշիվների քանակի հաշվարկում հաճախորդի կրկնակի գրանցման բացառման հետ: Այս դեպքում ՀՀ Կենտրոնական բանկը պետք է օգտագործի իր կողմից կառավարվող հաշիվների ռեգիստրի տվյալները: Իսկ առևտրային բանկերը, հատկապես՝ խոշոր 5-յակից դուրս գործողները, չեն տրամադրում հաճախորդների նույնականացման տվյալներ մրցակցության և շահերի բախման պատճառով,

- բանկայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպման և դրա մակարդակի բարձրացման համար կարևոր նշանակություն ունի ֆինանսական կրթումը, ուստի առևտրային բանկերն իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում պետք է հաճախորդների տարբեր խմբերի

համար իրականացնեն ուղղորդող, խորհրդատվական, ուսուցողական և ճանաչողական կրթական ծրագրեր:

Հիմնվելով կատարված աշխատանքի հիմնական դրույթների և վերլուծությունների վրա՝ որպես գիտական նորույթ կարելի է առանձնացնել այն, որ աշխատանքում ներկայացվել է բանկայնացման համընդգրկուն սահմանում՝ բացահայտելով դրա իրատեսական մակարդակի գնահատման հնարավորությունը:

Այսպիսով, Հայաստանում բանկայնացման մակարդակը տարիների ընթացքում գնալով աճում է և ներկա թվայնացման ժամանակաշրջանում բանկերն իրենց կառուցվածքում ստեղծում են նոր ստորաբաժանումներ, որոնք ֆինանսական տեխնոլոգիաների կիրառմամբ մեծացնում են ֆինանսական հասանելիությունը ժամանակի և տարածության մեջ՝ բանկային ծառայությունները մատչելի դարձնելով հասարակության լայն շերտերի համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք (ընդունման ամսաթիվը՝ 18.01.2022)
2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (ընդունման ամսաթիվը՝ 27.12.1997)
3. Тосунян Г.А. Банкизация России: Право, экономика, политика, Олимп-Бизнес, М. 2008 - 400 с.
4. Тосунян Г.А. Энергия финансов преобразит Россию // Национальный банковский журнал. № 2. 2006
5. Интервью президента Ассоциации российских банков (АРБ) Гарегина Тосуняна, "Голос Армении" (Ереван), 23 сентября, 2006
6. Business Ethics: A European Review, Volume 18, Number 4, October 2009, 478 pages
7. Արցախի Հանրապետության Սոցիալական զարգացման և միզբազմալի նախարարության պաշտոնական կայք-էջ՝ <http://mss.nkr.am>
8. ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք-էջ՝ www.cbs.am
9. ՀՀ Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք-էջ՝ www.armstat.am
10. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի պաշտոնական կայք-էջեր
11. Официальный сайт EXDEX "Индекс Обмена Валют": www.exdex.ru

References

1. «Ankanxik gorc'ar'nut'yunneri masin» HH o'renq (y'ndunvan amsat'ivy': 18.01.2022)
2. «Petakan turqi masin» HH o'renq (y'ndownman amsat'ivy'՝ 27.12.1997)
3. Tosunjan G.A. Bankizacija Rossii: Pravo, jekonomika, politika, Olimp-Biznes, M. 2008 - 400 с.
4. Tosunjan G.A. Jenergija finansov preobrazit Rossiju // Nacional'nyj bankovskij zhurnal. # 2. 2006
5. Interv'ju prezidenta Associacii rossijskih bankov (ARB) Garegina Tosunjana, "Golos Armenii" (Erevan), 23 sentjabrja, 2006
6. Business Ethics: A European Review, Volume 18, Number 4, October 2009, 478 pages

7. Arcaxi Hanrapetut'yan Socialakan zargacman ev migraciayi naxararut'yan pashtonakan kayq-e'j: <http://mss.nkr.am>
8. HH Kentronakan banki pashtonakan kayq-e'j: www.cbs.am
9. HH Vitwakagrakan komitei pashtonakan kayq-e'j: www.armstat.am
10. HH tarac'qum gorc'ogh ar'evtrayin bankeri pashtonakan kayq-e'jer
11. Oficial'nyj sajt EXDEX "Indeks Obmena Valjut": www.exdex.ru

ԲԱՆԿԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արման Սամվելի Տոնիկյան

Համառոտագիր: Բանկայնացման ուսումնասիրության կարևորությունը հիմնավորվում է նրանով, որ բանկերն առանցքային նշանակություն ունեն տնտեսության կայուն զարգացման և հասարակության բարեկեցության համար, ուստի հողվածում նպատակ է դրվել գնահատել բանկայնացման մակարդակը Հայաստանում:

Հետազոտության նպատակից բխող խնդիրների շրջանակում հողվածում մեկնաբանվել է բանկայնացման էությունը, առանձնացվել են բանկայնացման մակարդակի վրա ազդող գործոններն ու բանկայնացմանը ներկայացվող պահանջները, ուսումնասիրվել է ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հաճախորդների և նրանց հաշիվների դինամիկան, վերլուծվել է առևտրային բանկերի մասնաճյուղային գործունեությունն՝ ըստ տարածաշրջանների, հաշվարկվել է մասնաճյուղերի խտությունն՝ ըստ մարզերի, մեկնաբանվել են որոշ օրենսդրական փոփոխությունների հետևանքները բանկայնացման գործընթացում, ինչպես նաև ներկայացվել են ՀՀ-ում բանկայնացման մակարդակի բարձրացման հնարավորությունները:

Հետազոտության համար աշխատանքում կիրառվել են մաթեմատիկական բանաձևային հաշվարկների, վիճակագրական շեղումների համեմատության և տրամաբանական դատողությունների վրա հիմնված մեթոդները:

Հողվածի վերջում առանձնացվել են կիրառական առաջարկություններ Հայաստանում բանկայնացմանը նպաստող օրենսդրական փոփոխությունների, ֆինանսական նորարարությունների, բանկերի հաճախորդների նույնականացման և ֆինանսական կրթման (գրագիտության) վերաբերյալ:

Բանալի բառեր. բանկայնացում, բանկայնացման մակարդակ, բանկային համակարգ, առևտրային բանկեր, մասնաճյուղեր, հաճախորդներ, բանկային հաշիվներ, ֆինանսական հասանելիություն

БАНКИЗАЦИЯ В АРМЕНИИ

Арман Самвелович Тоникян

Аннотация. Важность изучения банкизации обосновывается тем, что банки имеют ключевое значение для стабильного развития экономики и благосостояния общества, следовательно в статье была поставлена цель оценить уровень банкизации в Армении.

В рамках задач, вытекающих из цели исследования, в статье была истолкована сущность банкизации, выделены факторы, влияющие на уровень банкизации, и требования к банкизации, изучена динамика клиентов коммерческих банков действующих в РА и их счетов, проанализирована филиальная деятельность коммерческих банков по регионам, рассчитана плотность филиалов по марзам, интерпретированы последствия некоторых законодательных изменений в процессе банкизации, а также представлены возможности повышения уровня банкизации в РА.

Для исследования в работе использовались методы, основанные на расчетах по математическим формулам, сравнении статистических отклонений и логическом обосновании.

В конце статьи были выделены практические рекомендации относительно законодательных изменений, финансовых инноваций, идентификации клиентов банка и финансового образования (грамотности), способствующих банкизации в Армении.

Ключевые слова: банкизация, уровень банкизации, банковская система, коммерческие банки, филиалы, клиенты, банковские счета, финансовая доступность

BANKIZATION IN ARMENIA

Arman Samvel Tonikyan

Abstract. The importance of studying bankization is substantiated by the fact that banks are of key importance for the stable development of the economy and the welfare of society, therefore, the aim of the article was to assess the level of bankization in Armenia.

Within the framework of the tasks arising from the purpose of the study, the article interpreted the essence of bankization, highlighted the factors affecting the level of bankization, and the requirements for bankization. The dynamics of clients of commercial banks operating in the Republic of Armenia and their accounts were studied, the branch activity of commercial banks by region was analyzed, the density of branches by region was calculated, the consequences of some legislative changes in the bankization process were commented on, and the possibilities of increasing the level of banking activity in the Republic of Armenia were presented.

The methods based on mathematical formula calculations, comparison of statistical deviations and logical reasoning were used in the article.

Pactical recommendations were highlighted regarding legislative changes, financial innovations, identification of bank customers and financial education (literacy) that promote bankization in Armenia.

Keywords: bankization, level of bankization, banking system, commercial banks, branch, customers, bank accounts, financial accessibility

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Թաթուլի Մանուկյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Երկարատև հեռանկարում տնտեսական զարգացման հիմքի ձևավորման, կայուն տնտեսական աճի, դրա կառուցվածքային փոփոխության, ապրանքերի մրցունակության բարձրացման, հասարակական նշանակության ոլորտների զարգացմանը նպաստող գործոններից է ներդրումների ծավալի ավելացումը:

COVID-19 և արցախյան երկրորդ պատերազմը էապես ազդեցին Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Պետության կողմից իրականացվող միջոցառումներին զուգահեռ նվազեց օտարերկրյա ներդրումների ծավալը: Վերջինիս վերականգնումը, պետք է հանդիսանա կառավարության տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

Հոդվածի նպատակն է բացահայտել ներդրումների ներգրավման հնարավոր ուղիները հակաճգնաժամային կառավարման գործընթացում, որի համար առանձնացվել են հետևյալ խնդիրները. ուսումնասիրել Հայաստանում ներդրումների գրավչությունը պայմանավորող գործոնները, վերլուծել կառավարության ներդրումային աջակցության առանձնահատկությունները, իրականացնել ներդրումային հոսքերի վիճակագրական վերլուծություն, համակարգված ներկայացնել ճգնաժամի ժամանակ հակաճգնաժամային միջոցառումները:

Գրականության վերլուծություն: Հայաստանում ներդրումների գրավչությունը պայմանավորված է տեխնոլոգիական շուկայի ներուժով, մրցունակ աշխատուժով, հանքային, ջրային ռեսուրսների պաշարի առկայությամբ, հողատարածքների ցածր օգտագործմամբ, ռազմավարական դիրքով, օֆշորային իրավասությունների ցուցակում երբևէ չհայտնվելով, փողերի լվացման դեմ պայքարի արդի օրենսդրությամբ, բանկային համակարգի անվտանգությամբ, կայունությամբ, Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) անդամակցությամբ, որի ատվելություններից են ԵԱՏՄ անդամ երկրներից հումքի մաքսազերծված ներմուծում, ԵԱՏՄ անդամ երկրների միջև ոչ սակագնային առևտրային միջոցառումների և տեխնիկական խոչընդոտների բացակայությամբ, ԵԱՏՄ անդամ երկրների միջև փոխադարձ առևտրի ընթացքում մաքսային ձևակերպումներ բացակայում, որով նվազում են ֆինանսական ծախսերը և կանխվում ժամանակի կորուստը: Վերը նշվածին զուգահեռ «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով երաշխավորում է օտարերկրյա և ներքին ներդրողների նկատմամբ հավասար վերաբերմունք, ներդրողների գույքը բռնագրավելու կառավարության կարողության սահմանափակումը, կառավարության կողմից ազգայնացման կամ բռնագրավման դեպքում ամբողջական փոխհատուցումը, առևտրային վեճերի լուծման հայաստանյան և միջազգային դատարանների մուտքի ապահովվումը, գրեթե տնտեսության լայն ոլորտներում (բացառությամբ այն ոլորտների, որտեղ ներդրումները կարող են սահմանափակվել ազգային պաշտպանության անհրաժեշտ

տության պատճառով) ներդրման հասանելիությունը, տարբեր ձևերով և հինգ տարի օրենսդրական անբարենպաստ փոփոխություններից պաշտպանվածությունը, ներդրում կատարելու համար հիմնականում նախնական հաստատման բացակայումը, բացառությամբ այն ներդրումային հաստատությունների ինչպիսիք են՝ բանկերը, ներդրումային ընկերությունները և որոշ հանրային ծառայության ընկերություններ, գործում է միջազգային մակարդակով Հայաստանի ունեցած քանի տասնյակ երկրների հետ երկկողմանի ներդրումային համաձայնագրեր (ԵՆՀ): «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքի 10-րդ հոդվածով օտարերկրյա ներդրողներին թույլ է տալիս տնօրինել իրենց եկամուտները, Հայաստանում բացել բանկային հաշիվներ և օգտագործել, 11-րդ հոդվածը օտարերկրյա ներդրողներին երաշխավորում է հնարավորություն՝ «ազատորեն արտահանելու իրենց սեփականությունը, շահույթը և այլ միջոցները, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար, կամ որպես փոխհատուցում:

Ներդրումային գործընթացը պահանջում է ներդրումային ոլորտում անհրաժեշտ ռեսուրսներ: Զարգացող երկրները (բացառությամբ նավթային երկրների) տուժում են ներքին խնայողությունների ցածր տեմպերից՝ անհատական եկամուտների ցածր տեմպերի և ֆինանսական աղբյուրների սահմանափակության պատճառով: Հետևաբար, արտաքին ֆինանսավորման աղբյուրները, ինչպիսիք են աշխատողների տրանսֆերտները, օտարերկրյա օգնությունները և օտարերկրյա ուղղակի ներդրումները, կարևոր են այդ երկրների ֆինանսական աղբյուրների պակասը փոխհատուցելու համար: Արտաքին ֆինանսավորումը նպաստում է ՀՆԱ-ի աճին, արտադրողականության և մրցունակության բարձրացմանը, գործազրկության նվազեցմանը, արտահանման աճին, առևտրային հաշվեկշռի բարելավմանը¹:

Ներդրումային որոշումների վրա ազդող գործոններից են՝ քաղաքական կայունությունն ու անվտանգությունը, ֆինանսավորման հասանելիությունը, կապիտալի արժեքը, անշարժ գույքի գները:

Քաղաքական կայունությունն ու անվտանգությունը՝ իրավականի կայունության հետ մեկտեղ և կարգավորող միջավայրը ավելի մեծ կշիռ ունեն, քան մյուս նկատառումները, ինչպիսիք են ցածր հարկային դրույքաչափերը և աշխատուժի ծախսերը: Քաղաքական իրադարձությունները դարձել են փոփոխական օտարերկրյա ուղղակի ներդրումների որոշիչներից մեկը, ներառյալ²:

Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված է դրսից փոխանցվող գումարներից (տրանսֆերտներ, վարկեր, ներդրումներ և այլն), հետևաբար՝ օտարերկրյա ներդրումների աճն ուղիղ խթան է տնտեսության զարգացմանը: Այդ իսկ

¹ Abdelhadi S., Bashayreh A.՝ W Mohammad The effect of fragility on foreign direct investment deterioration: the case of MENA countries, Journal of Sustainable Finance & Investment, Alomari (2021): DOI: 10.1080/20430795.2020.1857636

² Abdelhadi S., Bashayreh A.՝ W Mohammad The effect of fragility on foreign direct investment deterioration: the case of MENA countries, Journal of Sustainable Finance & Investment, Alomari (2021): DOI: 10.1080/20430795.2020.1857636

պատճառով ՀՀ կառավարությունները մշտապես փորձել են երկիրը գրավիչ դարձնել օտարերկրյա ներդրողների համար: Հայկական սփյուռքն է օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացման գլխավոր աղբյուրը, որի ներդրումների ծավալը ներդրումների ընդհանուր ծավալի մեջ կեսից ավելի է¹:

Օտարերկրյա ուղղակի ներդրումներ հիմնված է չորս հիմնական դրդապատճառների վրա՝ շուկայի որոնում, ռեսուրսների որոնում, արդյունավետության որոնում, և ռազմավարական ակտիվների որոնում: Ռազմավարական ակտիվներ փնտրվում է զարգացած երկրներում և տարածաշրջաններում: Ավելի հավանական է, որ կհոսի դեպի առատ ռազմավարական ակտիվներ ունեցող երկրներ: Լ. Սարգսյանի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա համակարգված ներկայացվել է ՕՈՒՆ-ի հիմնական շարժառիթները²:

Տնտեսության ազատականացումը ավելի խոցելի է դառնում ֆինանսական ճգնաժամերի և տնտեսական ցնցումների նկատմամբ: Ավելի խիստ և անհամաչափ ազդեցություն է թողնում աղքատների վրա, ովքեր ունեն ցածր հմտություններ, կրթություն, անհասանելի վարկային միջոցներ: Ճգնաժամի ժամանակ կապիտալի արտահոսքի և դրան հաջորդող կոշտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը նվազեցնում է գործարար ակտիվությունը և զբաղվածությունը³:

2008 թվականի բանկային ճգնաժամից հետո համաշխարհային տնտեսությունն ընկավում է որպես ավելի ռիսկային, քան նախկինում: Օտարերկրյա ներդրողը, մտնելով անձանոթ միջավայր, միշտ բախվում է ռիսկերի: Համեմատաբար ռիսկերի կառավարման ավելի լավ հմտություններ ունեցող ընկերությունների համար օտար երկիրն այնքան էլ ռիսկային չէ, որքան կարծում են թույլ ռիսկային կառավարում ունեցող ընկերություններ⁴: 2008 թվականից հետո պարտքային ճգնաժամին հաջորդեց ցածր ինֆլյացիան և դեֆլյացիան, քանի որ վարկային ճգնաժամը պահանջարկի բացասական շոկ առաջացրեց: 2019 ճգնաժամի, ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում այսօր ունենք ստագֆլյացիոն պարտքային ճգնաժամ, որը պայմանավորված է մատակարարման ցնցումներով, ինչը բերում է 1970-ականների ոճի ստագֆլյացիայի և 2008 թվականի պարտքային ճգնաժամի համադրումով:

Համաճարակի հետևանքով առաջացած ճգնաժամը զարգացած երկրներին դրդել է նախազգուշական միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու խոցելի հայրենական բիզնեսը օտարերկրյա ընկերությունների կողմից տիրանալուց: Այն

¹ Չաքարյան Հ. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈւՂԴԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (80), 2018թ. 62-71

² Հայաստանի ներդրումները. մարտահրավերներ և հնավարություններ/ Սարգսյան Լ. և ուրիշներ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ 2020, էջեր 13-17, -320

³ Agarwal M., Atri P., Kundu S. Foreign Direct Investment and Poverty Reduction: India in Regional Context, South Asia Economic Journal 18(2) 135–157, 2017, DOI: 10.1177/1391561417713129

⁴ Casson M., Silva T. Foreign direct investment in high-risk environments: an historical perspective, Business History, 55:3, (2013). 375-404, DOI: [10.1080/00076791.2013.771343](https://doi.org/10.1080/00076791.2013.771343)

կտրուկ հակադրվում է զարգացող երկրներում տիրող իրավիճակին, որտեղ ներդրումային քաղաքականությունը կարգավորող կամ սահմանափակող բնույթի բաժին է ընկել ընդհանուրի միայն 14%-ը (ձեռնարկված 109 միջոցառումներից միայն 15-ը)¹:

Այնուամենայնիվ, բոլոր ճգնաժամերը վաղ թե ուշ ավարտվում են, և ցանկացած անկում փոխարինվում է աճով: Եթե պետությունը պատրաստ է դրան, ապա շուկաների անկումը չի վնասի ներդրումներին: Միջազգային ներդրումների վերելքը սկսվել է², սակայն դրա արագացման համար կարող է որոշ ժամանակ պահանջվել: Ընկերությունները և ֆինանսիստները կպատրաստվեն մեծ ուշադրություն դարձնել կապիտալ ծախսերին, միաժամանակ կզգուշանան արտադրողական ակտիվներում և ենթակառուցվածքներում նոր օտարերկրյա ներդրումներից:

Մեթոդաբանություն: Ներկայացված հետազոտության համար հիմք է հանդիսացել հայրենական և օտարերկրյա տնտեսագետների հրատարակած գրքերը, հոդվածները, գիտաժողովի նյութերը, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային բանկի պաշտոնական տվյալները և հրապարակումները: Հետազոտության ընթացում կիրառվել են համեմատական, արստրակցիայի, ընդհանրացման վերլուծական մեթոդներ:

Վերլուծություն: «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (ԱՆԻՖ) շրջանակում 2020 թ. մայիսի 8-ին հաստատվեց ԱՆԻՖ-ի դուստր ձեռնարկություն հանդիսացող «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդը: Այն իրականացնում է ՀՀ կառավարության նախատեսած մինչև 80 մլրդ ՀՀ դրամ հանրագումարով փուլային ներդրումներ: 2021 թվականին մեկնարկել է ներդրումների առաջին փուլը՝ շուրջ 5 մլրդ ՀՀ դրամ պորտֆելով³: Ֆոնդով հնարավոր է տնտեսության վերականգնում համաճարակի հետևանքներից խթանելով տնտեսական ակտիվության բարձրացումը, աշխատատեղերի ստեղծումը, արտահանումը, մարզերի համաչափ զարգացումը:

ԱՆԻՖ-ի 2019-2021 թթ. գեկույցի համաձայն Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտներում գործընկերների հետ համատեղ ծրագրերով ներդրվել է 214 մլն ԱՄՆ դոլար, որի 91 %-ը գործընկերների, 9 %-ը՝ ԱՆԻՖ-ի կողմից: ԱՆԻՖ-ի շնորհիվ կյանքի են կոչվել երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող երկու խոշոր ներդրումային ծրագրեր: Մինչ օրս ֆոնդի կողմից 6 ընկերությունում իրականացվել է ընդհանուր առմամբ մոտ 10 մլն դոլարի ներդրումային ծրագիր, որի արդյունքում ստեղծվել է ավելի քան 170 աշխատատեղ⁴:

¹ Конференция организации объединенных наций по торговле и развитию, доклад о мировых инвестициях, инвестиции в устойчивое восстановление, организация объединенных наций Женева, 2021 год, с. 25-28, -55 с

² <https://data.worldbank.org/indicator>

³ <https://drive.google.com/file/d/1vwDNhpJQG8sdo9z5pzWwZDNwpT-PVsnL/view>

⁴ <https://anif.am/am/2022/05/23/%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81/>

Հիմք ընդունելով ԱՆԻՖ-ի 2019-2021 թթ. գեկույցի տվյալները, վերլուծության արդյունքում պարզվել, որ առաջին փուլի համար նախատեսված գումարի 5.3%-ը ուղղվել է գյուղատնտեսությանը, 0.6%-ը առողջապահությանը, 21.4%-ը հյուրընկալությանը, 39.5%-ը «ԵՄ-Հայաստան ՓՄՁ ֆոնդի համալրմանը, որով նախատեսվում է մասնավոր ընկերությունների բաժնետիրական կապիտալի համալրմամբ բիզնեսի ընդլայնման նախագծերի իրագործմանը, 1.4%-ը լոգիստիկային: Հասանելի տեղեկատվության հիման վրա ներդրումների տիպոլոգիայի շրջանակը ուսումնասիրելով կարող ենք փաստել, որ ներդրումների 36%-ը ուղղված է շուկաների հայտնաբերմանը, բնական ռեսուրսների բնագավառում ներդրումը, խոսքը վերաբերվում է գյուղատնտեսությանը, որը գերակա ճյուղ է համարվում կազմել է 5.3%-ը, արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումները կարող են համարվել «ԵՄ-Հայաստան ՓՄՁ ֆոնդի համալրմանը ուղղվող ֆինանսական ռեսուրսների մի մասը, որոնց մասով տեղեկատվությունը բացակայում է: «Ձեռնարկատեր + Պետություն» ֆոնդի միջոցների օգտագործման ուղղությամբ նպատակահարմար է, որ հիմնականը հանդիսանան արդյունավետության բարձրացմանն ուղղված ֆինանսավորման ծավալը: Դրանք կարող են նպաստել հմտություններ պահանջող աշխատատեղերի, արտահանումների ավելացմանը, տեխնոլոգիաների փոխանակմանը, գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերում ներառված ֆինանսական աջակցություններից են.

1. ՓՄՁ-ների վարկավորման աջակցություն՝ բարվոք վարկային և հարկային պատմություն ունեցող տնտեսավորող սուբյեկտներին տրամադրվող վարկերի ծավալները կազմել են 2,5 մլն-ից մինչև 50 մլն ՀՀ դրամի չափով (բայց ոչ ավելի, քան տարեկան շրջանառության 10%-ը) 3 տարի մաքրման ժամկետով: Առաջին 2 տարվա ընթացքում տոկոսները գանձվում են 0%, իսկ վերջին տարում՝ 12%: Գործում է նաև արտոնյալ ժամկետ առաջին 6 ամիսների համար: Միկրոձեռնարկատիրությանը, օժանդակության ձևեր՝ միանվագ աջակցություն է, որը որոշվել է 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների իրացման շրջանառության 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով, բարձր տեխնոլոգիաների օժանդակության ձևեր՝ մրցույթի արդյունքներով հաղթող տնտեսավարողներին տրամադրվող միանվագ դրամաշնորհն է, արդյունավետ աշխատատեղերի պահպանման աջակցության օժանդակության ձևեր՝ միանվագ դրամաշնորհն է, իսկ շահառուն՝ 2020 թվականի փետրվարի 1-ից մինչև 2020 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում անընդհատ 2-ից 100 աշխատակից ունեցող ռեզիդենտ տնտեսավարողն է, մրցունակ գործարար ծրագրերի իրագործման աջակցությունը՝ «զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող շահառուների ձեռնարկատիրական գաղափարների իրագործմանը և շահառուների գործարար ծրագրերի նորարարական զարգացմանը նպաստելու միջոցով, որի շահառու՝ ՀՀ տարածքում գրանցված կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, իսկ

օժանդակության ձևը՝ արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրումն է:

2. Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական աջակցությունը դրսևորվել է վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորմամբ, մայր գումարի արտոնյալ ժամկետի սահմանմամբ, համաֆինանսավորման (կոուպերատիվների դեպքում) վարկերի տրամադրմամբ:

3. Աջակցություն բոլոր ձեռնարկություններին. վարկերի համաֆինանսավորում, վերաֆինանսավորում. վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանում գործունեություն ծավալած և դրական հարկային և վարկային պատմություն ունեցող ընկերություններին տրամադրվում է ֆինանսական աջակցություն պետական համաֆինանսավորման, սուբսիդավորման կամ վարկերի վերաֆինանսավորման տեսքով: Որոշակի գործառնական ծախսեր (աշխատավարձեր, հարկեր, հումքի և սարքավորումների ձեռքբերում, կոմունալ վճարումներ և սնունդ) հոգալու համար նախատեսված մինչև 250 մլն դրամ գումար: Համաֆինանսավորումը լուծում է գրավի բացակայության խնդիրը և բարելավում վարկավորման պայմանները, վերաֆինանսավորումը հիմնականում ուղղված է արժույթային ռիսկի խնդրի լուծմանը, իսկ սուբսիդիաներն ուղղված են տոկոսադրույքների ծախսերը փակելուն:

Ներդրումային հոսքերի վիճակագրության վերլուծության նպատակով ուսումնասիրվել է ՕՈՒՆ կազմի և կառուցվածքի դինամիկան:

Աղյուսակ 1

2017-2021թթ. ՕՈՒՆ-ի կազմը, մլն ԱՄՆ դոլար¹

Ցուցանիշներ	2017	2018	2019	2020	2021
1 Զուտ պարտավորությունների ստանձնում, մլն ԱՄՆ դոլար	252.9	266.8	100.9	47.2	378.8
1.1 Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	70	302.5	-23.3	54.2	392.7
1.1.1 Բաժնետիրական կապիտալ առանց վերաներդրած եկամտի	57.2	222.7	85.6	49.9	99.2
1.1.2 Վերաներդրված եկամուտ	12.8	79.8	-108.9	4.3	293.5
2.Ներդրում պարտքային արժեթղթերում	183	-35.7	124.2	-7.1	-13.9

ՕՈՒՆ աճել են բացառությամբ 2019-2020թ-ին, որը հիմնականում պայմանավորված COVID-19- ով և պատերազմով: 2019-2020 թթ-ին նախորդ տարվա հետ համեմատ ՕՈՒՆ նվազումը հարաբերական մեծությամբ կազմել է համապատասխանաբար 62% և 53 %, սակայն 2021 թ-ին աճել է 2018 –ին արձանագրված ցուցանիշի 42%, իսկ 2020թ-ի համեմատ այն գերազանցել է 8 անգամ, նման իրավիճակը պայմանավորված է պահանջարկի մեծացմամբ, ընկերությունների շահույթի ավելացմամբ, համավարակի հետ կապված սահմանափակումների թուլացմամբ, արտաքին տնտեսական հարաբերությունների վերա-

¹ https://www.armstat.am/file/article/sv_02_19a_430.pdf

կանգնմամբ: 2020թ-ին Հայաստանի ՀՆԱ 1 տոկոս անկման պայմաններում ՕՌԻՆ նվազեց 9.7 տոկոսային կետով: Ուսումնասիրելով ՕՌԻՆ դինամիկան ակնհայտ է, որ բացառությամբ 2019 թ-ին (առավել հավանական է, որ շահույթի անկումն ուղղակիորեն ազդել է վերաներդրված եկամտի վրա) հիմնականում իրականացվել է բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում: ՀՀ-ում գործող օտարերկրյա կապիտալով ընկերությունների մի մասը ամենամեծ վերաներդրումը կատարել են 2021թ-ին, որին կարող էր նպաստել վստահության բարձրացումը, դրական սպասումները, ձևավորված շահույթը, բիզնեսի առանձնահատկությունը: Ավելի խորքային կլիներ վերլուծությունը, եթե հասանելի լիներ կոնկրետ ընկերությունների մասով տեղեկատվությունը: 2018 և 2020թ.-ին պարտքային գործիքների արժեքը եղել է բացասական: Նման դեպքում պարտքային գործիքի միջոցով ներդրումներ իրականացրած ընկերությունները պարտքային գործիքների ժամկետները լրանալիս կատարել են մարումներ ըստ պայմանագրի պայմանների: Ըստ ՀԲ տվյալների 2017 թ-ի հետ համեմատ 2020թ.-ին ՕՌԻՆ նվազումը աշխարհում կազմել է 44 %, ՀՀ-ում 5.3 անգամ, Վրաստանում 3.6 անգամ, իսկ Ղրղզստանում ՕՌԻՆ-ի սալդոն եղել է բացասական և այն աճել է 2.7 անգամ: 2008-2009թթ. ճգնաժամին համաշխարհային մասշտաբով ՕՌԻՆ 2009թ-ին 2007թ-ի համեմատ նվազել է 2.1 անգամ: ՕՌԻՆ-ը կրճատվել և վերականգնվել են, այնուամենայնիվ 2007թ-ի հետ համեմատ վերականգնելը չի հաջողվել, առավելագույն վերականգնման ծավալը եղել է 2016 թ-ին: Վերջինս հարաբերական մեծությամբ կազմել է մոտ 2007թ-ի ՕՌԻՆ-ի 87%: ՀՀ-ում 2008թ-ի համեմատ ՕՌԻՆ 2010թ-ին նվազել են 1.7 անգամ: ՕՌԻՆ-ը պարբերաբար կրճատվել և վերականգնվել են: Առավելագույն վերականգնումը եղել է 2011թ-ին, որը կազմել է 2008թ-ի ներդրումների ծավալի 70%-ը: Ի տարբերություն 2008-2009թթ. COVID-19-ով ճգնաժամի պայմաններում, 2021թ-ին ՕՌԻՆ գերազանցել են մինչճգնաժամային ներդրումների ծավալը, սակայն չի վերականգնել 2008-2009թթ մինչճգնաժամային ՕՌԻՆ ծավալը¹: COVID-19 ճգնաժամի պայմաններում երկրները խթանում են թվային տնտեսությունում ՕՌԻՆ-ի ներգրավումը: Այնուամենայնիվ պահանջարկի անկումը, ընկերությունների շահույթի անկումը, տնտեսական սահմանափակումները, միջազգային մակարդակով ընկերությունների վերամիավորումների կրճատումը իրենց ազդեցությունը ունեցան Հայաստանի և աշխարհում իրականացվող ՕՌԻՆ ծավալի նվազման վրա:

ՕՌԻՆ կատարողականի գնահատման առումով ուսումնասիրվել է ՕՌԻՆ/ՀՆԱ հարաբերակցությունը: Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ է Հայաստանի ՕՌԻՆ կատարողականը ունեցել է նվազման միտում: 2020թ-ին 2017թ-ի համեմատ նվազումը կազմել է մոտ 5.5 անգամ: Մինչդեռ կառավարությունը թիրախավորել է օտարերկրյա ուղղակի ներդրումներ ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել 6%-ի: ՕՌԻՆ կատարողականի նվազման առումով Հայաստանը զիջում է Վրաստանին: 2020թ-ին 2017թ-ի համեմատ ՕՌԻՆ/ՀՆԱ հարաբերակցության նվազումը կազմել է 3.4 անգամ: ՕՌԻՆ/ՀՆԱ հարաբերակցության տեսանկյունից

¹ <https://data.worldbank.org/indicator>

Հայաստանը ավելի լավ վիճակում է Ղրղզստանի, համաշխարհային մակարդակով ձևավորված արդյունքի համեմատ:

Աղյուսակ 2

ՕՈՆ/ՀՆԱ հարաբերակցությունը 2017-2020թթ-ին¹

	2020	2019	2018	2017
Աշխարհ	1.4	1.7	1	2.7
Հայաստան	0.4	0.7	2.1	2.2
Վրաստան	3.4	7.8	7.2	11.8
Ղրղզստան	-5.2	4.6	1.7	-1.4

Տնտեսությունում իրականացված ներդրումներն արտացոլող կարևոր ցուցանիշներից է հիմնական միջոցների համախառն կուտակման ցուցանիշը, որն արտացոլում է միջոցների ներդրումը հիմնական կապիտալի նյութական կրող հանդիսացող օբյեկտներում (Աղյուսակ 3): Հիմնական միջոցների համախառն կուտակման ցուցանիշը մի կողմից կարևոր գործոն է երկարաժամկետ կայուն տնտեսական աճի համար, մյուս կողմից էլ բնութագրում է հասարակության վստահությունը ապագայի նկատմամբ: 2016-2021թթ.-ին հիմնական միջոցների համախառն կուտակման ցուցանիշը բացարձակ գումարով ունեցել է աճի միտում, էական աճ արձանագրվել է 2017 և 2021թթ-ին համապատասխանաբար 10.4% և 16%, իսկ 2019-2020թթ-ին 2.7% և 6.1%: 2016-2021 թթ-ին ՀՆԱ-ի նկատմամբ հիմնական միջոցների համախառն կուտակման գործակիցը, բացառությամբ 2018-2019թթ-ին աճել է 0.9 տոկոսային կետով կազմելով 18.2%, մինչդեռ զիջում է 2012թ-ի նշված գործակցին 5.4 տոկոսային կետով: Հիմնական միջոցների համախառն կուտակման գործակցի էական՝ 1.9 տոկոսային կետով աճ արձանագրվել է 2020թ-ին համաճարակի և պատերազմի պայմաններում՝ նախորդ տարվա համեմատ ՀՆԱ 5% նվազման և հիմնական կապիտալի համախառն կուտակման 6% աճի դեպքում: Տնտեսական գործունեության սահմանափակումների թուլացմամբ տնտեսական ակտիվության վերականգման, հիմնական կապիտալի համախառն կուտակման բացարձակ աճի պայմաններում 2021 թ-ին հիմնական միջոցների համախառն կուտակման գործակիցը աճել է մոտ 0.5 տոկոսային կետով նախորդ տարվա համեմատ: Երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման նպատակով ցանկալի է ՀՆԱ-ի նկատմամբ հիմնական միջոցների համախառն կուտակման գործակիցը մոտ լինի 25%-ին, որին հասնելու համար կառավարությունը պետք է մշտական հետևողական լինի:

¹ <https://data.worldbank.org/indicator>

ՀՆԱ-ի նկատմամբ հիմնական միջոցների համախառն կուտակման հարաբերակցությունը

Ցուցանիշներ	2016	2017	2018	2019	2020	2021
ՀՆԱ, մլն դրամ	5067293.5	5 564493.3	6017 035.2	6543321.8	6181903.1	6982963
Հիմնական կապիտալի համախառն կուտակում մլն դրամ	879567	982 042.7	1007306.5	1 034 865.5	1098767	1275192
Հիմնական միջոցների համախառն կուտակում/ՀՆԱ	17.3	17.6	16.7	15.8	17.7	18.2

Ուսումնասիրությունների մեծ մասում ճգնաժամի սկսվելուց ի վեր տնտեսական ակտիվության թուլությունը արտացոլվում է որպես բիզնեսում ներդրումների հիմնական սահմանափակող գործոն, որտեղ ֆինանսական կամ այլ բախումներ ավելի փոքր դեր են խաղում¹:

Ներդրումների աճը հնարավոր է բյուջետային ծախսերի կառուցվածքի փոփոխմամբ ի հաշիվ՝ կապիտալ ծախսերի: Հակաճգնաժամային կառավարման պայմաններում, ներդրումների տեսանկյունից առանցքային գործոններից է պետական բյուջեի կապիտալ ծախսը, որի վրա կարող է ազդել պետական բյուջեի կապիտալ ծախսերի փաստացի կատարողականը: Վերջինս, ըստ ՀՀ կառավարության ծրագրի 2021 թվականի կատարման զեկույցի, 2021 թ-ին կազմել է 92.3%, 2020թ.-ին 84.9%, 2019թ.-ին՝ 73.5%, իսկ 2018թ.-ին՝ 74.0%: 2022 թ բյուջեի մասին օրենքով նախատեսված է մեծածավալ պետական ներդրումների իրականացումը ենթակառուցվածքներում և մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ոլորտներում, ինչպես նաև՝ տնտեսության արտահանելի հատվածի խթանմանն ուղղված միջոցառումները, որոնք կնպաստեն երկրի մրցունակության և ընդհանուր արտադրողականության բարձրացմանը: 2022-ի պետական բյուջեի կապիտալ ծախսերի նախատեսվող աճը կազմում է մոտ 60 %, բացարձակ գումարով մոտ 347 մլրդ դրամ, ՀՆԱ-ի 4.5%-ը: 2022 թվականի առաջին եռամսյակում ՀՀ կառավարությունը նախատեսել էր կատարել 67,2 մլրդ դրամի կապիտալ ծախսեր, սակայն փաստացի կատարվել է 34,6 մլրդ դրամի ծախս, թերակատարումը կազմել է 48,5 տոկոսով, ինչը չի նպաստում տնտեսության արագ վերականգնմանը և զարգացմանը, որի արդյունքում էլ կղանդաղի տնտեսական աճը ինչպես ընթացիկ, այնպես էլ հաջորդ տարիներին:

Պետական պարտքը ճգնաժամի հաղթահարման գինն է, հետևաբար հակաճգնաժամային միջոցառումների իրականացման նպատակով ավելանում է պետական բյուջեի պակասուրդը, որի հետևանքով էլ պետական պարտքը: Պետական պարտքը 2008-ից սկսած անընդհատ աճել է և 2017-ի տվյալներով

¹ Martinez-Cillero M., Lawless M., O’Toole C., Slaymaker R. Financial frictions and the SME investment gap: new survey evidence for Ireland, Venture Capital, (2020): DOI: 10.1080/13691066.2020.1771826

կազմել է 3,279.6 մլրդ դրամ կամ 6,774.6 մլն ԱՄՆ դոլար, ՀՆԱ-ի 58,9 տոկոսը, իսկ 2021 կազմել է 4,429.6 մլրդ դրամ(ՀՆԱ 63.4 տոկոսը): Կատարված համապատասխան հաշվարկների արդյունքով պարզվել է, որ 2017-2021 թթ-ին պետական պարտքի աճի տեմպը Gagr-ով կազմել է 4.62 %, իսկ Gagr-ով է իրական աճի միջին տեմպը 2018-2020թթ-ին կազմել է 2.65 %¹:

ՀՆԱ աճի տեմպը Gagr-ով 2.65 %: Հետևաբար ՀՆԱ աճի տեմպի 1% փոփոխության դեպքում պետական պարտքը ավելացել է 1.74%-ով: Եթե պարտք է վերցնում պետությունը մոտավորապես ՀՆԱ-ն աճի տեմպը գոնե հավասար լինի պետական պարտքի աճի տեմպին:

Պետական պարտքի աճի և իրականացվող տնտեսական մասնակի բարեփոխումների պայմաններում ՀՆԱ-ի կառուցվածքը գրեթե չի փոխվել: Եթե ուսումնասիրենք ՀՆԱ-ի կառուցվածքը, ակնհայտ է, որ 2018 թվականից ՀՆԱ-ի կեսից ավելին բաժին է ընկնում առևտրին և ծառայություններին(2020-ին 50.8%), որտեղ հարկային բեռը ցածր է, արդյունաբերությունը 18.1%-ից աճել է 2020թ.-ի կազմել է 20.1%, գյուղատնտեսությունը հակառակը՝ 13.9-ից նվազել է մինչև 11.2%, գրեթե անփոփոխ է մնացել շինարարությունը: Էական փոփոխություններ չեն նկատվում ՀՆԱ-ի կառուցվածքում, քանի որ ակնհայտ շարունակվում է նախկին կառուցվածքով ՀՆԱ-ի հավելաճը և տնտեսական աճի սպառման կամ պահանջարկով առաջ տարվող մոդելը: ՀՆԱ-ի կառուցվածքի անհրաժեշտ փոփոխություններ, ոլորտային լուծումներ չունենալու դեպքում հնարավոր չէ խթանել գործարար միջավայրի զարգացումը և ներդրումների զգալի հոսքերի ներգրավումը:

Գիտական նորույթը: Հակաճգնաժամային ներդրումային քաղաքականության մշակման նպատակով հիմնավորվել է ներդրումային միջավայրի բարելավման հիմնական ուղիները:

Եզրակացություն:

1. Ճգնաժամի ժամանակ հակաճգնաժամային միջոցառումների ձեռքով հսկողության մեխանիզմը (manual control mechanism) արդարացված է, որով պայմաններ են ստեղծում ներդրումային գրավչության համար: Հակաճգնաժամային ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքը սահմանափակ թվով ներդրումային նախագծերի և ծրագրերի վրա կենտրոնանալն է: Հակաճգնաժամային նախագծերի արդյունավետությունը մեծապես պետք է որոշի նորարարությունը:

2. Տնտեսական և քաղաքական ճգնաժամի պայմաններում անշարժ գույքը դառնում է գրավիչ բավարար խնայողությունների սեփականատերերի համար, հետևյալ հիմնավորումներով՝ անշարժ գույքը ներդրումային այլընտրանք չունի. (ճգնաժամի պատճառով ներդրումային հնարավոր ակտիվները կորցրել են իրենց իրացվելիության զգալի մասը), բաժնետոմսերի և այլ արժեթղթերի շուկան շատ անկայուն է, կրիպտոարժույթները շարունակում են մնալ շատ անկայուն գործիք, անշարժ գույքի սովորական մարդու համար հասկանալի արժեք է:

¹ Հաշվարկների համար հիմք է հանդիսացել armstat.am տվյալները

Հետևաբար շինարարության ոլորտի խթանումը հնարավորություն է տալիս փոխհատուցել ճգնաժամի հետևանքով ոլորտում պահանջարկի անկումը:

3. Ֆինանսական համակարգը գնալով պետք է կենտրոնանա արդյունաբերական ֆինանսների վրա, այլ ոչ սպառողական: Բարեփոխումները պետք է խթանի ընկերություններին և ֆինանսական հաստատություններին լրջորեն գնահատել հեռանկարային ներդրումների շահութաբերությունը: Վերահսկողությունը պետք է կենտրոնացվի դեպի փոքր և միջին բիզնես, հատկապես ագրոպարենային ոլորտ:

4. «Ձեռնարկատեր + Պետություն» ֆոնդի միջոցների օգտագործման ուղղությամբ համապարփակ վերլուծության արդյունքները ստանալու համար պետք է շահառու հանդիսացող ընկերությունները յուրաքանչյուր տարի հրապարակեն ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշները որակյալ ֆինանսական հաշվետվությունների միջոցով:

5. Ճգնաժամի ժամանակ համակարգային նշանակություն ունեցող ընկերություններին պետության ֆինանսական աջակցության չափը պետք է կապակցվի ընկերության զբաղվածության մակարդակի հետ դիֆերենցելով այն. եթե ընկերությունը վարկային ծրագրի ողջ ընթացքում պահպանում է զբաղվածությունը 90%-ից ավելի մակարդակում, ապա պետությունը պետք է ստանձնի գործառնական ցիկլի անընդհատության ապահովման համար վարկի գումարը և դրա տոկոսները, զբաղվածությունը պահպանելով առնվազն 80%-ի մակարդակում, ապա պետությունը կստանձնի վարկի գումարը, 60-70%-ի մակարդակում պետությունը կստանձնի վարկի տոկոսագումարը:

6. Հարկային վճարումների և սոցիալական վճարների գծով հետաձգում տրամադրվում են հետևյալ դեպքերում. եթե նրանց եկամուտը, վաճառքից կամ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով գործառնություններից գուտ հասույթը նվազի ավելի քան 10%, միաժամանակ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում վնասի բացակայության դեպքում: **Արտոնյալ ժամանակահատվածը պետք է կախված լինի** ընկերության գուտ հասույթի նվազումից: Մասնավորապես, հետաձգում տրվի.

- 1 տարի՝ ա) եկամուտների 50%-ից ավելի նվազման կամ բ) կորուստների առկայության և եկամուտների միաժամանակյա նվազման դեպքում՝ ավելի քան 30%-ով:

- 9 ամիս՝ ա) եկամուտների 30%-ից ավելի նվազման կամ բ) կորուստների առկայության և եկամուտների միաժամանակյա նվազման դեպքում՝ ավելի քան 20%-ով:

- 6 ամիս՝ եկամուտների 20%-ից ավելի նվազման դեպքում:

- 3 ամիս եկամուտների 10-20%- նվազման դեպքում:

7. Անհրաժեշտ է համապարփակ ներդրումային ռազմավարություն, որով կպարզվի ներդրումների առաջնահերթ ոլորտները հաշվի առնելով ազգային համեմատական առավելությունները, թիրախավորումների չափման և ստուգման հնարավորությունը: Դրան զուգահեռ ձևավորել մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ, որով կգնահատվի արտոնությունների, խթանների ար-

ժեքը, վերջիններից օգտվող ընկերությունների կատարողականը և ներդրումների տիպոլոգիան: Տրամադրվող խթաններից ստացվող արդյունքները գնահատելիս հաշվի առնել շահառուների կատարած ներդրումների ծավալը, ստեղծած աշխատատեղերը, իրացման, արտահանման ծավալը, վճարվող հարկերի աճը, խթանների ծավալի և իրացվող արտադրանքի հարաբերակցությունը, խթանների ծավալի և աշխատատեղ հարաբերակցությունը: Այդ ամենը կբարձրացնի ներդրումային քաղաքականության արդյունավետությունը:

8. «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքի 11-րդ հոդվածը օտարերկրյա ներդրողներին երաշխավորում է հնարավորություն՝ «ազատորեն արտահանելու իրենց սեփականությունը, շահույթը և այլ միջոցները, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար, կամ որպես փոխհատուցում»: Ներդրողների պաշտպանության երաշխիքների համար օրենքում պետք է նշել «Ժամանակին և արագ փոխանցման» մասին: «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքի 8-րդ հոդվածը ներդրողներին պաշտպանում է ազգայնացումից և բռնագրավումից, առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ: Սույն դրույթով սահմանվում է, որ բռնագրավումը ենթակա է «անհապաղ փոխհատուցման՝ ընթացիկ շուկայական կամ անկախ աուդիտների գնահատումներով որոշված գներով», սակայն անհրաժեշտ է նշվի ժամանակին փոխհատուցում գործոնը, իսկ ձգձգման դեպքում նշվի վճարի տոկոս գործոնը: Միաժամանակ պետք է վերացնել օտարերկրյա ներդրումների բոլոր առավելությունները ազգայինի նկատմամբ:

9. Ներդրումների ակտիվացմանը կարող է նպաստել ներդրումային ապահովագրման ֆոնդերը, ներդրումների պաշտպանության հետ կապված խնդիրների, մասնավորապես ներդրումային վեճերը կարգավորող ներդրումային օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Զաքարյան Հ. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈւՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, «21-րդ ԴԱԸ», թիվ 4 (80), 2018թ. 62-71
2. Հայաստանի ներդրումները. մարտահրավերներ և հնարավորություններ/ Սարգսյան Լ. և ուրիշներ, Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ 2020, էջեր 13-17, -320
3. Ёонференция организации объединенных наций по торговле и развитию, доклад о мировых инвестициях, инвестиции в устойчивое восстановление, организация объединенных наций женева, 2021 год, с. 25-28, -55 с
4. Abdelhadi S., Bashayreh A.' W Mohammad The effect of fragility on foreign direct investment deterioration: the case of MENA countries, Journal of Sustainable Finance & Investment, Alomari (2021): DOI: 10.1080/20430795.2020.1857636

5. Agarwal M., Atri P., Kundu S. Foreign Direct Investment and Poverty Reduction: India in Regional Context, South Asia Economic Journal 18(2) 135–157, 2017, DOI: 10.1177/1391561417713129
6. Martinez-Cillero M., Lawless M., O’Toole C., Slaymaker R. Financial frictions and the SME investment gap: new survey evidence for Ireland, Venture Capital, (2020): DOI: 10.1080/13691066.2020.1771826
7. Mendelsohn R., Fels A. Australia’s foreign investment review board and the regulation of Chinese investment, China Economic Journal, 7:1, (2014) 59-83, DOI:10.1080/17538963.2013.874068
8. https://www.armstat.am/file/article/sv_02_19a_430.pdf
9. <https://anif.am/am/2022/05/23/%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81/>
10. <https://data.worldbank.org/indicator>
11. <https://drive.google.com/file/d/1vwDNhpIQG8sdo9z5pzWwZDNwpT-PVsnL/view>

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Թաթուլի Մանուկյան

Համառոտագիր: Հոդվածի արդիականությունը: COVID-19 և արցախյան երկրորդ պատերազմը էապես ազդեցին Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Դրան զուգահեռ նվազեց օտարերկրյա ներդրումների ծավալը: Նման ճգնաժամային պայմաններում տնտեսության վերականգնումը, պետք է հանդիսանա կառավարության տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

Հոդվածի նպատակն է բացահայտել ներդրումների ներգրավման հնարավոր ուղիները հակաճգնաժամային կառավարման գործընթացում: Նշված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները. ուսումնասիրել Հայաստանում ներդրումների գրավչությունը պայմանավորող գործոնները, վերլուծել կառավարության ներդրումային աջակցության առանձնահատկությունները, իրականացնել ներդրումային հոսքերի վիճակագրական վերլուծություն, համակարգված ներկայացնել ճգնաժամի ժամանակ հակաճգնաժամային միջոցառումները:

Մեթոդաբանություն: Հոդվածի հիմքում ընկած է հայրենական և օտարերկրյա տնտեսագետների ուսումնասիրությունները, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային բանկի պաշտոնական տվյալները և հրապարակումները: Հետազոտության ընթացում կիրառվել են համեմատական, աբստրակցիայի, ընդհանրացման վերլուծական մեթոդներ:

Մտացված հիմնական արդյունքները: «Ձեռնարկատեր + Պետություն» ֆոնդի շահառու հանդիսացող ընկերությունները յուրաքանչյուր տարի պետք է հրապարակեն ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշները որակյալ

Ֆինանսական հաշվետվությունների միջոցով: Ճգնաժամի ժամանակ համակարգային նշանակություն ունեցող ընկերություններին պետության ֆինանսական աջակցության չափը պետք է կապակցվի ընկերության զբաղվածության մակարդակի հետ: Հարկային վճարումների և սոցիալական վճարների գծով հետաձգման ժամանակահատվածը պետք է կախված լինի ընկերության զուտ հասույթի նվազման և կորուստների մեծության հետ: Ներդրումային ռազմավարության շրջանակում թիրախավորումների չափման և ստուգման հնարավորությունը, ձևավորվող մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներով հնարավոր կլինի գնահատել արտոնությունների, խթանների արժեքը, վերջիններից օգտվող ընկերությունների կատարողականը և ներդրումների տիպոլոգիան:

Հողվածի գիտական նորույթ: Գիտական աղբյուրների և վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա ներկայացվել են հակաձգնաժամային ներդրումային քաղաքականության մշակման առաջարկներ:

Բանալի բառեր. ներդրումային քաղաքականություն, ներդրումների արդյունավետություն, ստագֆլյացիան պարտքային ձգնաժամ, հակաձգնաժամային ներդրումներ, հիմնական կապիտալի համախառն կուտակում

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ИНВЕСТИЦИОННЫХ ПОТОКОВ РА

Григор Татулович Манукян

Аннотация. Актуальность статьи. COVID-19 и вторая Арцахская война существенно повлияли на социально-экономическое положение Армении. Вместе с тем уменьшился объем иностранных инвестиций. Восстановление экономики в таких кризисных условиях должно стать одним из важных направлений экономической политики правительства.

Цель статьи - выявить возможные пути привлечения инвестиций в процесс антикризисного управления. Для достижения заявленной цели были выявлены следующие проблемы: изучить факторы, определяющие инвестиционную привлекательность Армении, проанализировать особенности государственной поддержки инвестиций, провести статистический анализ инвестиционных потоков, системно представить антикризисные меры в период кризиса.

Методология. Основу статьи составляют книги, статьи, материалы конференций, изданные отечественными и зарубежными экономистами, официальные данные и публикации Статистического комитета РА, Всемирного банка. В ходе исследования использовались аналитические методы сравнения, абстрагирования и обобщения.

Получены основные результаты. Компании, являющиеся бенефициарами фонда «Предприниматель + Государство», должны ежегодно публиковать финансовые и экономические показатели деятельности посредством качественных финансовых отчетов. В условиях кризиса объем государственной финансовой

поддержки системообразующих компаний должен быть привязан к уровню занятости в компании. Срок отсрочки по уплате налогов и социальных отчислений должен зависеть от уменьшения чистой прибыли компании и размера убытков. Возможность измерять и проверять таргетированность в рамках инвестиционной стратегии, с появляющимися механизмами мониторинга и оценки, можно будет оценивать стоимость привилегий, стимулов, эффективность компаний, использующих последние, и типологию инвестиций.

Научная новизна. По результатам анализа научных источников и статистических данных представлены предложения по разработке антикризисной инвестиционной политики.

Ключевые слова: инвестиционная политика, эффективность инвестиций, стагфляционный долговой кризис, антикризисные инвестиции, валовое накопление основного капитала

STATISTICAL ANALYSIS OF RA INVESTMENT FLOWS

Grigor Tatul Manukyan

Abstract. Relevance of the article. COVID-19 and the second Artsakh war significantly affected the socio-economic situation of Armenia. Along with that, the volume of foreign investments decreased. The recovery of the economy in such crisis conditions should be one of the important paths of the government's economic policy.

The purpose of the article is to identify the possible ways of attracting investment in the anti-crisis management process. In order to achieve the stated goal, the following objectives were identified: study the factors determining the attractiveness of investments in Armenia, analyze the features of the government's investment support, carry out a statistical analysis of investment flows, systematically present anti-crisis measures during a crisis.

Methodology. The basis of the article is the books, articles, conference materials published by domestic and foreign economists, the official data and publications of the Statistical Committee of the Republic of Armenia, the World Bank. Analytical methods of comparison, abstraction, and generalization were used during the research.

The main results obtained. Companies that are beneficiaries of the "Entrepreneur + State" fund must publish financial and economic performance indicators through quality financial reports every year. During the crisis, the amount of state financial support to the systemically important companies should be linked to the company's employment level. The period of deferment for tax payments and social security contributions should depend on the reduction of the company's net income and the size of the losses. The ability to measure and verify targeting within the framework of the investment strategy, with emerging monitoring and evaluation mechanisms, it will

be possible to assess the value of privileges, incentives, the performance of companies using the latter, and the typology of investments.

Scientific Novelty. In order to develop an anti-crisis investment policy, the main ways to improve the investment environment are substantiated. Based on the results of the analysis of scientific sources and statistical data, to present proposals for the development of anti-crisis investment policies.

Keywords: investment policy, investment efficiency, stagflationary debt crisis, anti-crisis investment, gross fixed capital formation

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

Աննա Ռուզվելտի Մակարյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Զարգացող երկրների անցումը դեպի ավելի դիվերսիֆիկացված արտահանման կառուցվածք, պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններիս մոտ հիմնականում գերակշռում են «ավանդական» համարվող ապրանքների արտադրությունը կամ արդյունահանումը և որոնց արտահանումը բավականին բարձր տեսակարար կշիռ է կազմում ապրանքների արտահանման կառուցվածքում (որոշների դեպքում վերջիններս հակված են դեպի «ռեսուրսային անեծք») ¹:

Մեր կողմից կատարված հաշվարկները ² վկայում են այն մասին, որ ապրանքների և ծառայությունների իրական արտահանման վրա ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի վիճակագրորեն նշանակալի ազդեցության գնահատումը թույլ կտա հստակեցնել ՀՀ-ի համար արտահանման դիվերսիֆիկացիայի կամ կենտրոնացվածության անհրաժեշտությունը, ինչը պայմանավորում է **տվյալ թեմայի արդիականությունը**: Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ՀՀ կառավարությանը խթանելու այն ոլորտների ապրանքների արտահանումը, որոնք ավելի մեծ չափով կնպաստեն ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների փոփոխությանը, ինչ էլ իր հերթի ավելի մեծ տնտեսական աճի տեմպեր կապահովի:

Հոդվածի **հիմնական նպատակն** է գնահատել ապրանքների արտահանման կենտրոնացվածության դերը ապրանքների և ծառայությունների իրական արտահանման վիճակագրորեն նշանակալի փոփոխությունների բացատրման գործում կարճաժամկետ ժամանակահատվածում՝ եռամսյակային տվյալների հիման վրա (2013թ. I եռ. -2022թ. I եռ.) նվազագույն քառակուսիների (OLS) գնահատման եղանակով, ինչպես նաև գնահատման արդյունքների հիման վրա հստակեցնել ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնայնությունները:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները**՝

¹ Siswana, S., & Phiri, A. (2020). Is Export Diversification or Export Specialization Responsible for Economic Growth in BRICS Countries? The International Trade Journal, 35(3), p.244. doi:10.1080/08853908.2020.1842823:

² Dokholyan, S.V., Makaryan, A.R. (2022). The role of exports of semi-manufactured gold, metallic ores and concentrates in ensuring economic growth in Armenia in the short run. // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու -2022, №1) / Պատ. խմբագիր՝ Ռ.Ն. Սարիսյան. ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ: - Եր.: 2022, էջ 69-70:

- Եռամսյակային տվյալների հիման վրա հաշվարկել Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսները 2013թ. I եռ. -2022թ. I եռ. ժամանակահատվածի կտրվածքով,
- Տնտեսաչափական գնահատում իրականացնել և բացահայտել ապրանքների արտահանման կենտրոնացվածության դերը ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների փոփոխությունների բացատրման գործում,
- Առաջարկել ՀՀ ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնությունները, որոնք ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր կապահովեն:

Գրականության ակնարկ: Առաջին փորձերից մեկը պարզելու, թե արտահանման կառուցվածքը ինչպիսի ազդեցություն ունի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի վրա արվել է Գրինվելի և այլոց (1999թ.)¹ կողմից, որոնք 66 երկրի (1980-1990թթ. տվյալների գնահատմամբ) արտահանման կառուցվածքի հիման վրա փորձել են պարզել, թե որ ապրանքների խմբի արտահանումն է վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի վրա: Հեղինակները պարզել են, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն է թողել մետաղների, տեքստիլ արտադրանքի, ինչպես նաև նավթամթերքի արտահանումը և հանգել են, որ արտահանման կառուցվածքը կարևոր նշանակալի դերակատարում ունի²:

Լին (2011թ.)³, 1970-1974թթ. և 2000-2004թթ-ի 71 երկրի տվյալների վերլուծության և գնահատման հիման վրա պարզել է, որ այն երկրները, որոնք հիմնականում մասնագիտանում են բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրվող ապրանքների ապրանքների արտահանման մեջ (ավիացիային վերաբերող, դեղագործության ոլորտը ներկայացնող և էլեկտրոնիկա համարվող), ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր են արձանագրել:

Ադաթիյան և Աչարյան (2015) 1965-2005թթ. 65 երկրների տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների հիման վրա պարզել են, որ արտահանման դիվերսիֆիկացիան ասոցացվում է տնտեսական աճի հետ, և արտահանման ծավալն է որոշիչ գործոնը⁴:

Մանիան և Ռիեբերը (2019թ.) պարզել են, որ Լատինական Ամերիկայի երկրների պարագայում առկա ապրանքների հիման վրա արտահանման կենտրոնացվածության աստիճանից բխող կառուցվածքային փոփոխությունը հան-

¹ Greenaway, D., Morgan, W., & Wright, P. (1999). Exports, export composition and growth. *The Journal of International Trade & Economic Development*, 8(1), 41–51. doi:10.1080/09638199900000004

² Տե՛ս նույն տեղում, էջ 48–50:

³ Lee, J. (2011). Export specialization and economic growth around the world. *Economic Systems*, 35(1), p.59. doi:10.1016/j.ecosys.2010.11.002

⁴ Aditya, A., & Acharyya, R. (2013). Export diversification, composition, and economic growth: Evidence from cross-country analysis. *The Journal of International Trade & Economic Development*, 22(7), p.975. doi:10.1080/09638199.2011.619009

գեցրել է նրան, որ տվյալ կառուցվածքի պարագայում ավելացել է երկրի կախումը ներմուծված ապրանքներից, և արտահանման կառուցվածքի հետագա կենտրոնացվածության աստիճանի բարձրացումը բացասաբար ազդեցություն ունի երկարաժամկետ կայուն տնտեսական աճի վրա¹:

Լին և Ժանգը (2019թ.) գնահատելով արտահանման դիվերսիֆիկացիայի ազդեցությունը տնտեսական աճի վրա 64 ցածր եկամուտների մակարդակ ունեցող և փոքր համարվող երկրների 2001-2015թթ. տվյալների հիման վրա պարզել են, որ արտահանման դիվերսիֆիկացիան դեպի մի քանի հարակից ոլորտները կարող է ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր ապահովել²:

Ռասը և Աքրամը (2017թ.) 5 հիմնական հարավասիական երկրների՝ Հնդկաստանի, Պակիստանի, Նեպալի, Բանգլադեշի և Շրի Լանկայի 1995-2014թթ. տարեկան տվյալների գնահատման արդյունքում եզրահանգել են, որ երկարաժամկետ հատվածում կապ կա ընդհանուր գործոնային արտադրողականության և արտահանման դիվերսիֆիկացիայի միջև և վերջինս դրական ազդեցություն ունի արտադրողականության աճի վրա տվյալ երկրների պարագայում³:

Սույն թեմատիկայի շրջանակում Ցեդեն և այլք (2018թ.)⁴ Էստոնիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Սլովակիայի և Սլովենիայի, իսկ Օուեդրագոն և Սոուրուեման (2018) 1995-2015թթ. Սաբ-Սահարյան Աֆրիկայի 40 երկրների տվյալների հիման վրա պարզել են որոշակի կախվածություններ⁵:

Տվյալների նկարագիր և մեթոդաբանություն: Որպեսզի պարզենք կարճաժամկետ ժամանակահատվածում ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի դերը իրական արտահանման վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները բացատրելու գործում, մոդելը սահմանվել է որպես հետևյալը՝

Ապրանքների և ծառայությունների իրական արտահանում = f(ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճան, նախորդ ժամանակահատվածի ապրանքների և ծառայությունների իրական արտահանում) (1)

¹ Mania, E., & Rieber, A. (2019). Product export diversification and sustainable economic growth in developing countries. *Structural Change and Economic Dynamics*. 51(2019), p.149. doi:10.1016/j.strueco.2019.08.006

² Lee, D., Zhang, H. (2019). Export Diversification in Low-income Countries and Small States: Do Country Size and Income Level Matter? IMF Working Paper No. 19/118, Washington, DC: International Monetary Fund. pp.9-10.

³ Rath, B. N., & Akram, V. (2017). Export diversification and total factor productivity growth in case of South Asian region. *Journal of Social and Economic Development*, 19(1), 196–210. doi:10.1007/s40847-017-0037-z

⁴ Čede, U., Chiriacescu, B., Harasztosi, P., Lalinsky, T., & Meriküll, J. (2018). Export characteristics and output volatility: comparative firm-level evidence for CEE countries. *Review of World Economics*, 154(2), 347–376. doi:10.1007/s10290-018-0312-x

⁵ Ouedraogo, R., & Sourouema, W. S. (2018). Fiscal policy pro-cyclicality in Sub-Saharan African countries: The role of export concentration. *Economic Modelling*. 74, p.224. doi:10.1016/j.econmod.2018.05.017

Տնտեսաչափական գնահատումն իրականացվել է եռամսյակային տվյալների՝ 2013թ.-ի առաջին եռամսյակից մինչ 2022թ. առաջին եռամսյակը ընկած ժամանակահատվածի հիման վրա (37 եռամսյակ): Այս ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ՀՀ Վիճակագրական կոմիտեն, թեպետ 2012թ.-ից է անցում կատարել «Ազգային հաշիվների համակարգ 2008»-ին, սակայն եռամսյակային արտահանման տվյալները ՀՀ ՎԿ-ի կողմից սկսել են հրապարակվել միայն 2013թ.-ից սկսած¹, իսկ նախորդ տարիների տվյալները համադրելի չեն նոր մեթոդաբանության հիման վրա հաշվարկած տվյալների հետ: Որպես բազիսային տարի հանդես է եկել 2013թ.-ը:

Ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի հաշվարկի համար հիմք է հանդիսացել Դոխոլյանի և Մակարյանի մոտեցումը (2022)² և Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի (ՀՀԻ) եռամսյակային արժեքները հաշվարկվել են Ներդաշնակեցված համակարգի (Harmonized System (HS)) դասակարգման քառանիշ մակարդակի ծածկագրերի՝ նվազագույնը 397 և առավելագույնը՝ 672 ապրանքային դիրքերի արտահանման արժեքների հիման վրա³: Իսկ երկրի ինդեքսի եռամսյակային արժեքները (37 եռամսյակի համար) հաշվարկվել են հետևյալ բանաձևի հիման վրա՝

$$HHI_j = \frac{\sqrt{\sum_{i=1}^n \left(\frac{x_{ij}}{\sum_{i=1}^n x_{ij}} \right)^2} - \sqrt{\frac{1}{n}}}{1 - \sqrt{\frac{1}{n}}} \quad (2)^4$$

Որտեղ՝

x_{ij} -ը j -րդ երկրի i -րդ «HS» համակարգի քառանիշ մակարդակի ծածկագրերով ապրանքային դիրքի t -րդ ժամանակահատվածի արժեքն է ԱՄՆ դոլարով արտահայտված:

n -ը ապրանքային դիրքերի քանակն է՝ մեր պարագայում «HS» համակարգի քառանիշ մակարդակի ծածկագրերի քանակն է, որոնք j -րդ երկիրը արտահանել է t -րդ ժամանակահատվածի ընթացքում:

Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի արժեքը տատանվում է 0-ից մինչև 1-ը ընկած միջակայքում: Որքան ինդեքսի արժեքը ձգտում է 1-ի, այնքան ապրանքների արտահանումը ավելի բարձր կենտրոնացվածության աստիճանի է և արտա-

¹ ՀՀ ՎԿ (2022). «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» տարեկան տվյալների առցանց բազա՝ ըստ «ԱՀՀ 2008»-ի, <https://www.armstat.am/am/?nid=202>

² Dokholyan, S.V., Makaryan, A.R. (2022). The role of exports of semi-manufactured gold, metallic ores and concentrates in ensuring economic growth in Armenia in the short run. // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու -2022, №1) / Պատ. խմբագիր՝ Ռ.Ն. Մարինյան. ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ: - Եր.: 2022, էջ 68:

³ ՀՀ ՎԿ (2022). «Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման», <https://www.armstat.am/am/?nid=148>

⁴ Siswana, S., & Phiri, A. (2020). Is Export Diversification or Export Specialization Responsible for Economic Growth in BRICS Countries? The International Trade Journal, 35(3), p.251. doi:10.1080/08853908.2020.1842823

հանման կառուցվածքում մեկ կամ մի քանի ապրանքային դիրք բավականին բարձր տեսակարար կշիռ ունեն, մինչդեռ երբ ինդեքսի արժեքը ձգտում է 0-ի, այնքան ավելի ցածր կենտրոնացվածության աստիճանի է ապրանքների արտահանումը:

Ապրանքների և ծառայությունների արտահանման անվանական արժեքները վերցվել են ՀՀ Վիճակագրական կոմիտեի համապատասխան տվյալների բազայից¹ և այնուհետ հաշվարկվել են համապատասխան եռամսյակի իրական արժեքները՝ ՀՀ դրամով արտահայտված: Ռեգրեսիոն հավասարման գնահատման նպատակով բոլոր փոփոխականների արժեքները սեզոնային ճշգրտման են ենթարկվել՝ սահող միջինի եղանակով (Moving Average), այնուհետ հաշվարկվել են վերջիններիս լոգարիթմված արժեքները (բնական): Ստացված փոփոխականների ստացիոնարությունը ստուգելուց («Augmented Dickey-Fuller» թեստի միջոցով), պարզվել է, որ փոփոխականները ստացիոնար չեն, և վերջիններս ստացիոնար են դարձել, երբ վերցվել է դրանց առաջին տարբերությունը: Մուլտիկոլիերության խնդիր ևս չի եղել: Ռեգրեսիոն հավասարումը գնահատվել է նվազագույն քառակուսիների (OLS) եղանակով և պարզվել է, որ ՀՀԻ-ի t-2-րդ եռամսյակի արժեքի փոփոխությունն է վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենում ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների վրա: Ինչպես նաև, որ առկա է ավտոկոռելիացիայի խնդիր, որը լուծվել է հավասարման մեջ սահող միջինի երրորդ պրոցես (MA(3)) մտցնելով: Եվ արդյունքում գնահատվել է հետևյալ հավասարումը նվազագույն քառակուսիների եղանակով՝

$$dlrexp_{it} = \alpha_0 + \alpha_1 * dlrexp_{it-1} + \alpha_2 * dlhhis_{it-2} + \varepsilon_t + \varepsilon_{t-3} \quad (3)$$

Որտեղ՝

$dlrexp_{it}$ -ն t-րդ եռամսյակի ապրանքների և ծառայությունների իրական՝ սեզոնային ճշգրտված լոգարիթմված արժեքի առաջին տարբերությունն է:

$dlrexp_{it-1}$ -ն t-1-րդ եռամսյակի ապրանքների և ծառայությունների իրական՝ սեզոնային ճշգրտված լոգարիթմված արժեքի առաջին տարբերությունն է:

$dlhhis_{it-2}$ -ն t-2-րդ եռամսյակի ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի սեզոնային ճշգրտված լոգարիթմված արժեքի առաջին տարբերությունն է:

$\alpha_0, \alpha_1, \alpha_2$ -ն մոդելի անհայտ պարամետրերն են:

ε_t -ն t-րդ եռամսյակի մոդելի սխալն է, ε_{t-3} -ն՝ MA(3) պրոցեսի պարամետրը:

«Jarque-Bera» թեստի միջոցով, պարզվել է, որ մոդելի սխալները նորմալ բաշխում ունեն: «Breusch-Godfrey Serial Correlation LM» թեստի հիման վրա պարզվել է, որ վերացվել են սխալների միջև ավտոկոռելիացիան, «Breusch-Pagan-Godfrey» հետերոսպետիկությունը ստուգելու թեստի միջոցով պարզվել է, որ վերջինս բացակայում է: «Ramsey RESET» թեստի միջոցով նաև պարզվել է, որ մոդելի հետ կապված սպեցիֆիկացիայի խնդիր չկա:

¹ ՀՀ ՎԿ (2022). «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» եռամսյակային տվյալների առցանց բազա՝ ըստ «ԱՀՀ 2008»-ի, <https://www.armstat.am/am/?nid=202>

Վերլուծություն, արդյունքներ և քննարկում: ՀՀ ապրանքների արտահանումը 2015թ.-ից սկսած, նախորդ տարվա նկատմամբ որոշակի անկում գրանցելուց հետո, 2016-2021թթ.-ներին հիմնականում է աճ է արձանագրել բացառությամբ 2020թ.-ին, որը պայմանավորված էր կորոնավիրուսի համավարակով (տե՛ս աղյուսակ 1): Աճը հիմնականում պայմանավորված է եղել «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքային խմբի և հատկապես «Պղինձի հանքաքար, խտանյութ» և հատկապես «Մոլիբդենի հանքաքար, խտանյութ» ապրանքային դիրքերի ծավալների փոփոխությամբ 2020-2021թթ.-ներին, որի արդյունքում խմբի տեսակարար կշիռը արտահանման կառուցվածքում կազմել էր շուրջ 31% (պղինձի հանքաքար, խտանյութի դեպքում՝ 25.5%)¹: Սա էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի բարձրացմանը, ինչպես նշվել էր Դոխոլյանի և Մակարյանի (2022թ.) կողմից²: Հատկապես 2021թ.-ին մետաղական խտանյութերի, այլումինե փայլաթիթեղների, երկաթամիահալվածքի արտահանման ծավալների զգալի աճը նախորդ տարվա նկատմամբ պայմանավորված է եղել մետաղների համաշխարհային գների աճով³: Իսկ սա, իր հերթին փաստում է մետաղների համաշխարհային գների տատանումների նկատմամբ ՀՀ ապրանքների արտահանման խոցելիության մասին:

Աղյուսակ 1

Ապրանքների արտահանումը 2013-2021թթ.-ին՝ ըստ հիմնական ապրանքային դիրքերի (մլն ԱՄՆ դոլար)⁴

	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
ԱՊՐԱՆՔՆԵՐ	1,478.7	1,547.3	1,485.3	1,791.7	2,237.7	2,412.8	2,647.2	2,537.0	3,016.0
<i>Այդ թվում՝</i>									
Պղինձի հանքաքար, խտանյութ	279.9	235.9	316.6	356.7	571.5	525.5	626.7	604.4	769.3
Սիգարետ և սիգար	68.0	116.6	171.1	209.5	237.7	266.2	273.0	241.4	239.1
Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր	186.3	163.9	106.1	151.6	207.5	198.3	253.2	202.6	246.3
Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի	73.6	81.9	96.9	131.2	147.6	176.9	224.0	255.8	133.8
Երկաթամիահալվածք	102.4	109.7	55.5	62.0	84.4	125.9	142.4	99.2	188.7
Այլումինե փայլաթիթեղներ <0,2մմ	80.4	88.5	82.8	78.7	96.4	92.8	95.1	94.7	118.3
Ադամանդե քար	88.1	118.0	67.4	104.7	96.6	77.2	54.1	71.3	105.6
Էլեկտրաէներգիա	78.0	81.3	81.2	61.0	71.0	80.0	65.6	69.4	50.9
Ոսկերչական իրեր	22.1	23.6	18.8	18.3	35.2	40.2	42.6	28.7	75.2
Մոլիբդենի հանքաքար, խտանյութ	6.7	8.7	5.8	0.9	8.6	7.6	17.9	103.7	122.3

¹ ՀՀ ՎԿ (2022). «Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման», <https://www.armstat.am/am/?nid=148>

² Dokholyan, S.V., Makaryan, A.R. (2022). The role of exports of semi-manufactured gold, metallic ores and concentrates in ensuring economic growth in Armenia in the short run. // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (զիտական հոդվածների ժողովածու -2022, №1) / Պատ. խմբագիր՝ Ռ.Ն. Սարինյան. ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ: - Եր.: 2022, էջ 69:

³ World Bank (2022). Commodity Monthly Prices September 2022 Online Database, <https://www.worldbank.org/en/research/commodity-markets#1>

⁴ ՀՀ ՎԿ (2022). «Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման», <https://www.armstat.am/am/?nid=148>

Եթե 2013-2019թթ.-ին ՀՀ տարածքում զբոսաշրջիկներին մատուցված ծառայություններից ստացված եկամուտները ծառայությունների արտահանման կառուցվածքում կազմել են շուրջ 60% (2019թ.-ին՝ 63%), ապա 2020-2021թթ.-ին այդ ցուցանիշը նավագել էր՝ հատկապես համավարակով պայմանավորված և այն կազմել էր 26.1% 2020թ.-ին (տե՛ս Աղյուսակ 2): 2020-2021թթ.-ին զգալիորեն աճել են համակարգչային և տեղեկատվական ծառայությունների արտահանման ծավալները, փոխադրման ծառայությունների արտահանումից ստացված եկամուտների ծավալները: Մինևս 2021թ.-ին արձանագրվել էր մշակող արդյունաբերության կողմից արտապատվիրման աշխատանքներից ստացված եկամուտների ամենամեծ ցուցանիշը (հայտնի հագուստի բրենդերի համար վերջիններից ներմուծված միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների հիման վրա վերջնական հագուստի պատրաստման նպատակով կարի ծառայությունների մատուցումը և այլն): Թեպետ որոշակիորեն նվազել է ճամփորդության տեսակարար կշիռը ծառայությունների արտահանման կառուցվածքում, սակայն այն շարունակում է հանդես գալ որպես ՀՀ տնտեսության խոցելիության աղբյուր արտաքին շուկերի հանդեպ:

Աղյուսակ 2

Ծառայությունների արտահանումը 2013-2021թթ.-ին՝ (մլն ԱՄՆ դոլար)¹

	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
ՕՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1,521.5	1,622.2	1,513.8	1,672.5	2,022.8	2,202.3	2,433.7	1,099.3	1,738.1
<i>Այդ թվում՝</i>									
Ճանապարհորդություն	880.4	965.8	935.8	1,016.5	1,203.7	1,329.0	1,528.0	287.3	784.2
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	110.5	129.8	130.5	173.1	211.6	235.8	261.7	328.5	382.4
Տրանսպորտ	171.5	181.7	163.5	188.7	231.6	256.3	275.4	232.4	304.4
Այլ կողմերին պատկանող նյութական թեսուրսների վերամշակման ծառայություններ՝ ապրանքներ վերամշակման համար հաշվետու երկրում	72.8	97.4	55.7	129.2	122.4	160.4	119.5	134.7	171.5
Եինարարություն	222.3	211.4	163.2	149.6	207.2	191.1	178.1	77.7	88.6

Ընդհանուր առմամբ, մոդելում ներառված փոփոխականները բացատրում են ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների փոփոխության շուրջ 34%-ը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ մենք տվյալ հետազոտության նահատակներից ելնելով ռեգրեսիոն հավասարման մեջ չենք ներառել այլ փոփոխականներ և/կամ գործոններ, որոնք կարող են վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենալ իրական արտահանման ծավալների փոփոխության վրա:

¹ ՀՀ ՎԿ (2022). «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=203>

Գնահատման արդյունքներ (գնահատման եղանակ՝ նվազագույն քառակուսիներ)	
<i>Կախյալ փոփոխական՝</i>	Գնահատում #1:
<i>dlrexpsa_t</i>	Ընտրանք՝ 2013թ. I եռ.-2022թ. I եռ. Ճշգրտված ընտրանք՝ 2013թ. IV եռ.-2022թ. I եռ.
<i>dlrexpsa_{t-1}</i>	0.379 (2.180)**
<i>dlhhiasa_{t-2}</i>	-0.216 (-3.398)***
<i>հաստատուն</i>	0.010 (2.031)*
<i>MA(3)</i>	-0.901 (-10.746)***
<i>R-քառակուսի</i>	0.397
<i>Ճշգրտված R-քառակուսի</i>	0.336
<i>ներառված եռամսյակներ</i>	34

*Նշում՝ փակագծերում t վիճակագրի արժեքներն են: * նշանակալի է 10% մակարդակում, ** նշանակալի է 5% մակարդակում, *** նշանակալի է 1% մակարդակում.*

ՀՀ ապրանքների կենտրոնացվածության: Ընդհանուր առմամբ, կարճա-ժամկետ ժամանակահատվածում Հերֆինդալ-Հիրշմաննի ինդեքսի արժեքի բարձրացումը 1%-ով t-2-րդ ժամանակահատվածում կարող է հանգեցնել ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների կրճատմանը 0.22%-ով t-րդ ժամանակահատվածում: Հետևաբար, ակնկալվում է, որ երկու եռամսյակ առաջ ՀՀ ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի բարձրացումը բացասաբար է ազդում ապրանքների և ծառայությունների իրական արտահանման վրա: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ հակառակ արդյունք է ակնկալվում, երբ ապրանքների արտահանումը ավելի դիվերսիֆիկացված է դառնում: Հետևաբար, ապրանքների արտահանման ավելի բարձր դիվերսիֆիկացիայի աստիճանը կարող է հանգեցնել ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների ավելացմանը, իսկ դա էլ իր հերթին՝ ավելի բարձր տնտեսական աճի տեմպերի:

Մյուս կողմից Հերֆինդալ-Հիրշմաննի ինդեքսի հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում անվանական արժեքները և համապատասխանաբար տվյալ ժամանակահատվածի արտահանման կառուցվածքը, և հետևաբար անվանական արժեքների համեմատաբար մեծ մեծությունները կարող է պայմանավորված լինեն ֆիզիկական ծավալների կրճատմամբ, որն էլ ուղեկցվել է գների աճով և ոչ թե ապրանքների իրական արտահանման աճով՝ բազիսային տարվա գներով հաշվարկված¹: Միևնույն ժամանակ գնահատման արդյունքների հիման

¹ Այդ մասին տե՛ս Dokholyan, S.V., Makaryan, A.R. (2022). The role of exports of semi-manufactured gold, metallic ores and concentrates in ensuring economic growth in Armenia in the short run. // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու -2022, №1) / Պատ. խմբագիր՝ Ռ.Ն. Սարինյան. ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ: - Եր.: 2022, էջ 69-72:

վրա հեղինակները պարզել են, որ «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքային խումբը ներկայացնող հատկապես «Պղինձի հանքաքար, խտանյութ» և «Մոլիբդենի հանքաքար, խտանյութ» ապրանքային դիրքերի արտահանման իրական ծավալների փոփոխությունը բացասաբար է ազդում իրական ՀՆԱ-ի վրա¹:

Իսկ կարճաժամկետ ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների իրական արտահանման աճը 1%-ով t-1-րդ ժամանակահատվածում կարող է հանգեցնել ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների ավելացմանը միջինում 0.38%-ով t-րդ ժամանակահատվածում:

Եթե Գրինվեյլը և այլք (1999թ.)² պարզել էին, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն է ունեցել մետաղների արտահանումը, ապա մեր կողմից ստացված արդյունքներով մետաղական խտանյութի արտահանման ծավալների աճով պայմանավորված ՀՀ ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի բարձրացումը, բացասաբար է ազդում ապրանքների և ծառայությունների իրական արտահանման և հետևաբար ՀՆԱ-ի վրա: Մեր կողմից ստացված արդյունքները մոտ են Մանիայի և Ռիեբերի (2019թ.) կողմից Լատինական Ամերիկայի վերաբերյալ ստացված արդյունքներին, համաձայն որոնց արտահանման կառուցվածքի հետագա կենտրոնացվածության աստիճանի բարձրացումը բացասաբար է անդրադառնում երկարաժամկետ կայուն տնտեսական աճի վրա³, այն տարբերությամբ, որ մենք գնահատել ենք միայն կարճաժամկետ ազդեցությունը:

Հետաքրքրական է նկատել, որ ՀՀ –ի պարագայում մեր արդյունքները նաև նման են համեմատաբար ավելի ցածր եկամուտների մակարդակ ունեցող երկրների կտրվածքով Լինի և Ժանգի (2019թ.) եզրահանգմանը, համաձայն որի արտահանման կենտրոնացվածության աստիճանի խորացումը բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա⁴: Միննույն ժամանակ, թեպետ Բանգլադեշի, Հնդկաստանի, Պակիստանի, Նեպալի և Շրի Լանկայի պարագայում դիվերսիֆիկացիան կարող է նվազեցնել տարբեր տեսակի շոկերի ազդեցությունը արտահանման ծավալների վրա՝ հիմնական արտահանվող ապրանքների ցանկի ընդլայնմամբ (Ռասը և Աքրամը, 2017թ.)⁵, սակայն ըստ Ցեդեի և այլոց (2018թ.)

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 71-72:

² Greenaway, D., Morgan, W., & Wright, P. (1999). Exports, export composition and growth. *The Journal of International Trade & Economic Development*, 8(1), pp.48–50. doi:10.1080/09638199900000004.

³ Mania, E., & Rieber, A. (2019). Product export diversification and sustainable economic growth in developing countries. *Structural Change and Economic Dynamics*. 51(2019), p.149. doi:10.1016/j.strueco.2019.08.006

⁴ Lee, D., Zhang, H. (2019). Export Diversification in Low-income Countries and Small States: Do Country Size and Income Level Matter? *IMF Working Paper 19/118*, Washington, DC: International Monetary Fund. p.13

⁵ Rath, B. N., & Akram, V. (2017). Export diversification and total factor productivity growth in case of South Asian region. *Journal of Social and Economic Development*, 19(1), pp.207-208. doi:10.1007/s40847-017-0037-z

Էստոնիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Սլովակիայի և Սլովենիայի ընկերությունների պարագայում ավելի շատ ապրանքներ արտահանումը կամ ավելի շատ երկրներ արտահանելը, ոչ միշտ է, որ վերջիններիս վաճառքի ավելի բարձր կայունության մակարդակ կարող է ապահովել¹: Հետևաբար, ՀՀ-ի պարագայում դիվերսիֆիկացիայի ավելի բարձր մակարդակը ոչ միշտ կարող է կայունություն ապահովել, ընկերությունների համար: Այս պարագայում կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում ՀՀ-ի համար առաջնայնություն կարող է հանդիսանալ Լի և Ժանգի կողմից (2019թ.)² առաջարկվող արտահանման այն դիվերսիֆիկացիան, որը պայմանավորված կլինի տնտեսության կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեցող մի շարք և մրցունակ համարվող ոլորտները ներկայացնող ապրանքների արտահանման ծավալների աճով, ինչը կարող է տնտեսական աճի և տնտեսական կայունության հանգեցնել:

Ի տարբերություն Սաբ-Սահարյան Աֆրիկայի 40 երկրների (Օուեդրաոգո և Սոուրոուեմա, 2018)³ ՀՀ-ում 2013-2021թթ.-ներին «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքային խմբի արտահանման ծավալների աճով պայմանավորված ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի բարձրացումը չի կարող ՀՀ-ին բնութագրել որպես վերջինով պայմանավորված պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնող երկրի: Արտահանման ծավալների աճը էականորեն չեն ավելացրել հարկային մուտքերը բյուջե (խոշոր և ռոյալթի վճարող հիմնական ընկերությունների տվյալների հիման վրա հաշվարկված) 2013-2020թթ.-ին (հատկապես 2016-2017թթ.-ներին), իսկ 2021թ.-ի ինչպես նաև 2022թ.-ին առաջին կիսամյակի արդյունքները հիմնականում պայմանավորված են արտահանման տուրքերով, որոնք կչեղարկվեն 2023թ.-ին: Իսկ համաձայն ռոյալթիի հաշվարկի նոր մեթոդաբանությանը⁴ արտահանման ծավալների աճով պայմանավորված ՀՀ-ն կարող է վերածվել պրոցիկլիկ հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնող երկիր միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում կախված մետաղների համաշխարհային գներից:

Մյուս կողմից ապրանքների դիվերսիֆիկացիայի տեսանկյունից ավելի բարձր տնտեսական աճի տեմպերի ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է արտահանման կառուցվածքում ավելացնել մշակող արդյունաբերությունը ներկայացնող ապրանքների տեսակարար կշիռը՝ և հատկապես բարձր տեխնո-

¹ Čede, U., Chiriacescu, B., Harasztosi, P., Lalinsky, T., & Meriküll, J. (2018). Export characteristics and output volatility: comparative firm-level evidence for CEE countries. *Review of World Economics*, 154(2), 347–376. doi:10.1007/s10290-018-0312-x

² Lee, D., Zhang, H. (2019). Export Diversification in Low-income Countries and Small States: Do Country Size and Income Level Matter? IMF Working Paper 19/118, Washington, DC: International Monetary Fund. p.19.

³ Ouedraogo, R., & Sourouema, W. S. (2018). Fiscal policy pro-cyclicality in Sub-Saharan African countries: The role of export concentration. *Economic Modelling*. 74, p.224. doi:10.1016/j.econmod.2018.05.017

⁴ ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» առ 15.06.2022թ., ՀՕ-149-Ն

լոգիսական (Ադաթիյա և Աչարյա, 2015թ.¹, Միսվանա և Ֆիրի, 2020թ.²): Հետևաբար, ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների և տնտեսական աճի ավելի բարձր աճի տեմպեր ապահովելու տեսանկյունից առաջնայնությունը պետք է լինի ՀՀ արտահանումը ավելի դիվերսիֆիկացված դարձնելը՝ կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում առաջնայնություն տալով այն ապրանքախմբերին, որոնք համարվում են համեմատական առավելություններ ունեցող խմբեր և կարևոր արտահանման ծավալների ավելացման տեսանկյունից (այդ խմբերի բացահայտման նպատակով կարող է կիրառվել ապրանքների քարտեզավորման եղանակը, ինչպես արվել է Մակարյանի³ կողմից 2018թ.-ին), իսկ արդեն երկարաժամկետ հատվածում՝ ապրանքների արտահանման կառուցվածքում մշակող արդյունաբերությունը ներկայացնող ապրանքների արտահանման տեսակարար կշռի բարձրացմանը (հատկապես բարձր-տեխնոլոգիական): Ինչ վերաբերում է ծառայությունների արտահանման կառուցվածքը ավելի դիվերսիֆիկացված դարձնելուն, ապա անհրաժեշտ է կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում ավելացնել ժամանակակից համարվող ծառայությունների՝ համակարգչային և տեղեկատվական, ինչպես նաև այլ գործնական ծառայությունների (հատկապես տվյալագիտություն և անալիտիկա) արտահանման ծավալները, իսկ վերջինիս քայլերը ներկայացրել են Դոխոյանը և Մակարյանը⁴:

Գիտական նորոյթ: Տնտեսաչափական գնահատման արդյունքների հիման վրա բացահայտվել է ՀՀ ապրանքների արտահանման կենտրոնացվածության ազդեցությունը ապրանքների և ծառայությունների իրական արտահանման վրա կարճաժամկետ ժամանակահատվածում, ինչպես նաև հատկացվել են ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնայնությունները:

¹ Aditya, A., & Acharyya, R. (2013). Export diversification, composition, and economic growth: Evidence from cross-country analysis. *The Journal of International Trade & Economic Development*, 22(7), p.975. doi:10.1080/09638199.2011.619009

² Siswana, S., & Phiri, A. (2020). Is Export Diversification or Export Specialization Responsible for Economic Growth in BRICS Countries? *The International Trade Journal*, 35(3), p.244. doi:10.1080/08853908.2020.1842823

³ Մակարյան Ա.Ռ., Արտահանման խթանման նպատակով համապատասխան ոլորտների ընտրությունը և զբաղվածության քաղաքականության առաջնայնությունները ՀՀ-ում // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ: -Եր.: ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, – էջ 66-79:

⁴ Դոխոյան, Ս.Վ., Մակարյան, Ա.Ռ. Ֆիլիպինների տնտեսական զարգացման ուղին // «Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում» (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում-2021 Մաս II), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ան. ՏԻ.- Եր.: 2021, –էջ 273-275:

Եզրակացություններ: Մի կողմից հաշվի առնելով վերջին տարիներին ՀԲ-ի և ԱՀԿ-ի շեշտադրումը տարբեր երկրների կողմից ավելի դիվերսիֆիկացված արտահանման կառուցվածք ապահովելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ 2019-2021թթ.-ին 2013-2014թթ. համեմատ ՀՀ ապրանքների արտահանման ավելի կենտրոնացված դառնալու փաստը, ՀՀ պարագայում իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնայնությունները բացահայտելու նպատակով մեր կողմից իրականացվել է տնտեսաչափական գնահատում նվազագույն քառակուսիների գնահատման եղանակով՝ եռամսյակային տվյալների հիման վրա (2013թ. I եռ. -2022թ. I եռ.):

Գնահատման արդյունքները ցույց են տվել, որ կարճաժամկետ ժամանակահատվածում ապրանքների արտահանման կենտրոնացվածության աստիճանի բարձրացումը 1%-ով t-2-րդ ժամանակահատվածում կարող է, միջինում, հանգեցնել ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների կրճատմանը 0.22%-ով t-րդ ժամանակահատվածում: Հետևաբար, ապրանքների արտահանման ավելի բարձր դիվերսիֆիկացիայի աստիճանը կարող է հանգեցնել իրական արտահանման ծավալների աճին, ինչն էլ իր հերթին ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր կարող է ապահովել:

Այս իսկ պատճառով մեր կողմից առաջարկվել է՝

- Կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածի կտրվածքով առաջնայնություն տալ այն ապրանքային խմբերին, որոնք համարվում են մրցունակ, համեմատական առավելություններ ունեցող և որոնք կարևոր են արտահանման ծավալների աճ ապահովելու տեսանկյունից:
- Երկարաժամկետ հատվածում անհրաժեշտ կլինի ապրանքների արտահանման կառուցվածքում ավելացնել մշակող արդյունաբերությունը ներկայացնող ապրանքային խմբերի տեսակարար կշիռը (հատկապես բարձր-տեխնոլոգիական):
- Ծառայությունների արտահանման կառուցվածքը ավելի դիվերսիֆիկացված դարձնելու նպատակով կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում ավելացնել ժամանակակից համարվող ծառայությունների արտահանման ծավալները:

Հետագոտության շրջանակում ստացված արդյունքները կարող են կիրառվել ՀՀ էկոնոմիկայի, ֆինանսների և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների կողմից՝ համապատասխան ռազմավարություններ, կառավարության ծրագրեր, հայեցակարգեր, օրենսդրական կամ ենթաօրենսդրական փաստաթղթեր մշակելու և պատրաստելու նպատակով:

Գրականության ցանկ/ References

1. Դոխոլյան, Մ.Վ., Մակարյան, Ա.Ռ. Ֆիլիպինների տնտեսական զարգացման ուղին//«Տնտեսական նորոգություններ». գործարկման ուղիները Հայաստանում» (Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում-2021 Մաս II), ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ.Լ. Հարությունյան.-

- Եր.: 2021,–էջ 255-284: [Doxolyan, S.V., Makaryan, A.R'. Filipinneri tntesakan zargacman owghin//««Tntesakan norogowt'yownner». gorc'arkman owghinery' Hayastanowm» (Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm -2021 Mas II), HH GAA M. Qot'anyani anvan tntesagitowt'yan institowt: Pat. xmbagir` V.L. Harowt'yownyan.- Er.: 2021, –e'j 255-284:]
2. Մակարյան Ա.Ռ., Արտահանման խթանման նպատակով համապատասխան ոլորտների ընտրությունը և զբաղվածության քաղաքականության առաջնայնությունները ՀՀ-ում // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր` Վ. Լ. Հարությունյան.-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, – էջ 66-79: [Makaryan A.R', Artahanman xt'anman npatakov hamapatasxan olortneri y'ntrowt'yowny' & zbaghvach'owt'yan qaghaqakanowt'yan ar'ajnaynowt'yownneri' HH-owm//Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm (gitajhoghovi nyowt'er) / HH GAA M. Qot'anyani anvan tntesagitowt'yan institowt: Pat. xmbagir` V. L. Harowt'yownyan.-Er.: HHGAA «Gitowt'yown» hrat., 2018, – e'j 66-79:]
 3. Dokholyan, S.V., Makaryan, A.R. (2022). The role of exports of semi-manufactured gold, metallic ores and concentrates in ensuring economic growth in Armenia in the short run. // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու -2022, №1) / Պատ. խմբագիր` Ռ.Ն. Սարինյան. ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ: - Եր.: 2022, էջ 64-78: [Dokholyan, S.V., Makaryan, A.R. (2022). The role of exports of semi-manufactured gold, metallic ores and concentrates in ensuring economic growth in Armenia in the short run. // Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm (gitakan hodvac'neri jhoghovac'ow -2022, №1) / Pat. xmbagir` R'.N. Sarinyan. GAA M. Qot'anyani anvan TI: - Er.: 2022, e'j 64-78:]
 4. Aditya, A., & Acharyya, R. (2013). Export diversification, composition, and economic growth: Evidence from cross-country analysis. *The Journal of International Trade & Economic Development*, 22(7), 959–992. doi:10.1080/09638199.2011.619009
 5. Čede, U., Chiriacescu, B., Harasztosi, P., Lalinsky, T., & Meriküll, J. (2018). Export characteristics and output volatility: comparative firm-level evidence for CEE countries. *Review of World Economics*, 154(2), 347–376. doi:10.1007/s10290-018-0312-x
 6. Greenaway, D., Morgan, W., & Wright, P. (1999). Exports, export composition and growth. *The Journal of International Trade & Economic Development*, 8(1), 41–51. doi:10.1080/09638199900000004
 7. Lee, D., Zhang, H. (2019). Export Diversification in Low-income Countries and Small States: Do Country Size and Income Level Matter? IMF Working Paper No. 19/118, Washington, DC: International Monetary Fund. 24p
 8. Lee, J. (2011). Export specialization and economic growth around the world. *Economic Systems*, 35(1), 45–63. doi:10.1016/j.ecosys.2010.11.002

9. Mania, E., & Rieber, A. (2019). Product export diversification and sustainable economic growth in developing countries. *Structural Change and Economic Dynamics*. 51 (2019), 138–151. doi:10.1016/j.strueco.2019.08.006
10. Ouedraogo, R., & Sourouema, W. S. (2018). Fiscal policy pro-cyclicality in Sub-Saharan African countries: The role of export concentration. *Economic Modelling*. 74, 219-229. doi:10.1016/j.econmod.2018.05.017
11. Rath, B. N., & Akram, V. (2017). Export diversification and total factor productivity growth in case of South Asian region. *Journal of Social and Economic Development*, 19(1), 196–210. doi:10.1007/s40847-017-0037-z
12. Siswana, S., & Phiri, A. (2020). Is Export Diversification or Export Specialization Responsible for Economic Growth in BRICS Countries? *The International Trade Journal*, 35(3), 243-261. doi:10.1080/08853908.2020.1842823
13. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» առ 15.06.2022թ., ՀՕ-149-Ն [HH o'renqy' «Hayastani Hanrapetowt'yan Harkayin o'rensgreqowm lracowmner & p'op'oxowt'yowmner katarelow masin» ar' 15.06.2022t'., HO'-149-N]
14. ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» առ 15.07.2021թ., ՀՕ-310-Ն [HH o'renqy' ««Petakan towraqi masin» o'renqowm p'op'oxowt'yown & lracowm katarelow masin» ar' 15.07.2021t'., HO'-310-N]
15. ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» առ 15.06.2022թ., ՀՕ-150-Ն [HH o'renqy' ««Petakan towraqi masin» o'renqowm p'op'oxowt'yown katarelow masin» ar' 15.06.2022t'., HO'-150-N]
16. ՀՀ ՊԵԿ (2022). ՀՀ ՊԵԿ-ի 2014-2021թթ. դեկտեմբեր և 2022թ. հունիս ամիսների ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տեղեկատվության առցանց տվյալների բազաներ, <https://www.petekamutner.am> [HH PEK (2022). HH PEK-i 2014-2021t't'. dektember & 2022t'. hownis amisneri HH petakan ekamowtneri komitei koghmich verahskvogh ekamowtneri veraberyal teghekatvowt'yan ar'canc tvyalneri bazaner, <https://www.petekamutner.am>]
17. ՀՀ ՊԵԿ (2022). Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2013-2021թթ. հունվար-դեկտեմբեր և 2022թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում վճարված հարկերի մեծությունների ցանկերի առցանց տվյալների բազաներ, <https://www.petekamutner.am> [HH PEK (2022). Ar'ajin 1000 xoshor hark vtwaroghneri koghmich 2013-2021t't'. hownvar-dektember & 2022t'. hownvar-hownis amisneri y'nt'acqowm vtwarvac' harkeri mec'owt'yowmneri cankeri ar'canc tvyalneri bazaner, <https://www.petekamutner.am>]
18. ՀՀ ՎԿ (2022). «Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման», <https://www.armstat.am/am/?nid=148> (մուտք՝ 29.08.2022թ.) [HH VK (2022). «Artaqin ar'&tri tvyalneri baza y'st apranqayin anvanacowcaki 4-nish dasakargman», <https://www.armstat.am/am/?nid=148> (mowtq՝ 29.08.2022t'.)]

19. ՀՀ ՎԿ (2022). «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» եռամսյակային և տարեկան տվյալների առցանց բազաներ՝ ըստ «ԱՀՀ 2008»-ի, <https://www.armstat.am/am/?nid=202> (մուտք՝ 09.05.2022թ.) [HH VK (2022). «HNA o'gtagorc'owmy' (himmakan c'axsayin baghadrichnerov)» er'amsyakayin & tarekan tvyalneri ar'canc bazaner` y'st «AHH 2008»-i, <https://www.armstat.am/am/?nid=202> (mowtq` 09.05.2022t'.)]
20. ՀՀ ՎԿ (2022). «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=203> (մուտք՝ 29.08.2022թ.) [HH VK (2022). «Vtwarayin hashvekshir' 6» ar'canc tvyalneri baza, <https://www.armstat.am/am/?nid=203> (mowtq` 29.08.2022t'.)]
21. World Bank (2022). Commodity Monthly Prices September 2022 Online Database, <https://www.worldbank.org/en/research/commodity-markets#1> (accessed:05.09. 2022)

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ**

Աննա Ռուզվելտի Մակարյան

Համառոտագիր: *Հողվածի արդիականությունը:* 2013-2021թթ-ին ՀՀ ապրանքների արտահանման ավելի կենտրոնացված դառնալու միտումը, ինչպես նաև ԱՀԿ-ի և ՀԲ-ի շեշտադրումները ավելի դիվերսիֆիկացված արտահանման կառուցվածք ունենալու ուղղությամբ, Հայաստանի համար առաջնային են դարձնում իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնայնությունների բացահայտումը:

Նպատակը: Գնահատել ապրանքների արտահանման կենտրոնացվածության դերը ապրանքների և ծառայությունների իրական արտահանման վիճակագրորեն նշանակալի փոփոխությունների բացատրման գործում կարճաժամկետ ժամանակահատվածում՝ եռամսյակային տվյալների հիման վրա (2013թ. I եռ.-2022թ. I եռ.) նվազագույն քառակուսիների գնահատման եղանակով, ինչպես նաև գնահատման արդյունքների հիման վրա հստակեցնել ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնայնությունները:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ *խնդիրները*՝

- Եռամսյակային տվյալների հիման վրա հաշվարկել Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսները 2013թ. I եռ.-2022թ. I եռ. ժամանակահատվածի կտրվածքով,
- Տնտեսաչափական գնահատում իրականացնել և բացահայտել ապրանքների արտահանման կենտրոնացվածության դերը ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների փոփոխությունների բացատրման գործում,

- Առաջարկել ՀՀ ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնայնությունները, որոնք ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր կապահովեն:

Մտացված հիմնական արդյունքներ: Կարճաժամկետ ժամանակահատվածում Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի արժեքի բարձրացումը 1%-ով t-2-րդ եռամսյակում կարող է հանգեցնել ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների կրճատմանը 0.22%-ով t-րդ եռամսյակում: Հետևաբար, հակառակ արդյունք է ակնկալվում, երբ ապրանքների արտահանումը ավելի դիվերսիֆիկացված է դառնում: Ուստի, արտահանման ավելի բարձր դիվերսիֆիկացիայի աստիճանը կարող է հանգեցնել իրական արտահանման ծավալների ավելացմանը, իսկ դա էլ իր հերթին՝ ավելի բարձր տնտեսական աճի տեմպերի:

Գիտական նորոյթ: Տնտեսաչափական գնահատման արդյունքների հիման վրա բացահայտվել է ՀՀ ապրանքների արտահանման կենտրոնացվածության ազդեցությունը ապրանքների և ծառայությունների իրական արտահանման վրա կարճաժամկետ ժամանակահատվածում, ինչպես նաև հստակեցվել են ապրանքների և ծառայությունների իրական արտահանման ծավալների աճի ուղղությամբ հիմնական առաջնայնությունները:

Բանալի բառեր. իրական արտահանում, ապրանքների արտահանում, ծառայությունների արտահանում, արտահանման կենտրոնացվածություն, արտահանման դիվերսիֆիկացիա, Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս, տնտեսական աճ, շայաստան

ВЛИЯНИЕ ЦЕНТРАЛИЗАЦИИ ЭКСПОРТА ТОВАРОВ НА РЕАЛЬНЫЙ ЭКСПОРТ И ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ

Анна Рузвелтовна Макарян

Аннотация. Актуальность статьи: В 2013-2021гг. тенденция увеличения степени централизации экспорта товаров РА, а также акценты ВТО и ВБ в направлении более диверсифицированной структуры экспорта, делают первостепенным выявление приоритетов в направлении роста объемов реального экспорта для Армении.

Цель: Оценить роль централизации экспорта товаров в объяснении статистически значимых изменений реального экспорта товаров и услуг в краткосрочном периоде на основе квартальных данных (I кв. 2013г. - I кв. 2022г.) путем метода оценки наименьших квадратов, а также основываясь на результаты оценки выявить основные приоритеты роста объемов реального экспорта товаров и услуг.

Для достижения вышеуказанной цели были поставлены *следующие задачи*.

- Рассчитать квартальные индексы Херфиндаля-Хиршмана (в разрезе I кв. 2013г. - I кв. 2022г.),
- Провести эконометрическую оценку и выявить роль централизации экспорта товаров в объяснении изменений в реальных объемах экспорта товаров и услуг,
- Предложить основные приоритеты в направлении роста реальных объемов экспорта товаров и услуг РА, которые обеспечат более высокие темпы экономического роста.

Основные результаты: повышение значения индекса Херфиндаля-Хиршмана на 1% в период времени $t-2$, может привести к сокращению реального экспорта товаров и услуг на 0.22% в период времени t . Следовательно, ожидается обратный результат, когда экспорт товаров станет более диверсифицированным. Следовательно, более высокая степень диверсификации экспорта может привести к увеличению объемов реального экспорта, а это, в свою очередь, к более высоким темпам экономического роста.

Научная новизна: на основе результатов эконометрической оценки было выявлено влияние централизации экспорта товаров РА на реальный экспорт товаров и услуг в краткосрочной перспективе, а также выявлены основные приоритеты роста объемов реального экспорта товаров и услуг.

Ключевые слова: реальный экспорт, экспорт товаров, экспорт услуг, централизация экспорта, диверсификация экспорта, индекс Херфиндаля-Хиршмана, экономический рост, Армения

THE IMPACT OF GOODS EXPORT CONCENTRATION ON THE REAL EXPORTS AND ECONOMIC GROWTH

Anna Ruzvelt Makaryan

Abstract. Relevance of the article: In the period 2013-2021, the increasing pattern of concentration of exports of goods of the Republic of Armenia, and the emphasis of the WTO and World Bank on ensuring a more diversified export composition, stresses the need for identifying the priorities that would lead to the growth of real exports for Armenia

The purpose: To estimate the role of export concentration of goods in explaining the statistically significant changes in the real exports of goods and services in the short run using quarterly data spanning from the first quarter of 2013 and the first quarter of 2022 based on the least squares estimation method (OLS); and based on the estimation results to identify the main priorities for the growth of real exports of goods and services:

The following objective have been set to achieve the above-stated goal:

- To compute the quarterly values of Herfindahl-Hirschmann index (period: 2013q1-2022q1);
- To estimate and identify the role of concentration of exports of goods in explaining changes in the real exports of goods and services;
- To propose the main priorities to ensure growth of real exports of goods and services for the Republic of Armenia, which will result in higher rates of economic growth.

Main results: an increase of the value of Herfindahl-Hirschmann index by 1% in period $t-2$, could cause a decline in in real exports of goods and services by 0.22% in period t . Consequently, the opposite could be expected when the export of goods becomes more diversified. Therefore, a higher degree of export diversification may lead to an increase in the real exports, and this, in its turn, to higher rates of economic growth.

Scientific novelty: based on the estimation results, the impact of the concentration of exports of goods of Armenia on the real exports of goods and services in the short run has been determined, and the main priorities for the growth of real exports of goods and services have be identified as well.

Keywords: real exports, exports of goods, exports of services, export concentration, export diversification, Herfindahl-Hirschmann Index, economic growth, Armenia

THE ROLE OF INNOVATIONS IN ASSESSING THE ECONOMIC SECURITY OF THE COUNTRY

Mariam Vardan Poghosyan
Lilit Murad Muradyan

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Introduction: In the context of post-pandemic and intensifying wars in the world, there is a need to consider such a factor affecting economic development as economic security. There is a bunch of studies defining economic development by connecting it to not only economic factors but also non-economic factors. But the new global agenda is clearly related to ensuring the welfare of society and creating an environment for stable and secure economies. The impact of the pandemic was noticeable in all spheres of life and the economy, in particular, the global economic growth rate in 2020 was -3.3%, a decrease of 5.89% compared to 2019, the global unemployment rate was 6.57%¹. The thesis that developing and transitional countries suffer the most from global crises does not need additional evidence. Therefore, there is a need to analyze the methodology for assessing economic security, the use of which will further contribute to the management of risks in crisis situations in Armenia.

In order to ensure economic development, raise the standard of living of the population and take a leading position in the global economy, the state needs to have a system of economic security that will stimulate normal economic growth not only in the event of external threats, crises, but also internal threats.

The relevance of the article. Since its inception, the UN has always attached importance to the fundamental significance of economic security for the well-being of people. And since March 2020, Covid-19 has created a new urgent agenda for ensuring security around the world. The pandemic has escalated into a full-scale shock of economic instability around the world, the consequences of which have escalated into growing instability.² The war also contributed to this growing instability for Armenia, which, combined with the pandemic, led to a systemic problem of economic security. In the current crisis and unstable situation, the discussion of the country's economic security system becomes relevant.

The purpose of the article is to identify the main factors of ensuring economic security in the country, in particular the role of innovation in this matter.

The following objectives are set to achieve the purpose:

- To study the elements that determine the system of economic security.
- Consider the indicators of economic security assessment and analyze the main indicators affecting economic security.
- Identify the role of innovation in ensuring economic security.

¹ <https://www.macrotrends.net/countries/WLD/world/gdp-gross-domestic-product>

² https://www.un.org/sites/un2.un.org/files/wp173_2021.pdf

The topic has been studied by various Armenian and foreign authors, researchers. Particularly Russian economists S. Yu. Glazyev¹ and A. Illarionov² have great input in researching state's economic security, as well as Armenian economists A. Markosyan³, T. Manaseryan⁴ and others have studied the topic. The current study makes an attempt to show the connection between innovations and economic security of the country.

Literature review: The multifactorial nature of the concept of economic security and the presence of various definitions determine the complexity of the methodology for assessing economic security. Different researchers have developed different systems of assessment indicators. Before proceeding to the assessment methodology, we have considered several criteria and components that characterize economic security.

In the economic literature, the state security system is represented through external and internal subsystems, which, in turn, consist of a number of components: technological, financial, commercial, food, energy, environmental, information, technical.⁵ According to Golovko, the economic security of the country consists of the following components: financial security, investment, socio-demographic, energy, innovation, technological, food security (Figure 1):

According to one of the foreign authors, the criterion of the economic security of the state is the economic policy carried out in accordance with the chosen strategy for the development of the national economy, as well as the level of confidence in it from both the population and international organizations.⁶

One of the studies conducted by the International Labour Organization (ILO) in the early 2000s showed that in countries where the state provides its citizens with a high level of economic security, the population on average has a higher level of happiness, which is measured by surveys of the national level of life satisfaction and happiness. Income level is not the decisive factor of national happiness, there is positive relationship, but income growth seems to have little impact as rich countries still continue to get rich. According to this report, democracy and the trend towards civil liberties significantly increase economic security, and public spending on social welfare policies also has a positive impact. However, economic growth has only a weak impact on the security measured in the long term. In other words, rapid growth will not

¹ С. Глазьев, "Геноцид, Россия и новый мировой порядок", "ТЕРРА" Москва, 1998 г. <http://rus-sky.com/history/library/glazyev/>

² A. Illarionov, 1999. "The Criteria of Economic Security," Problems of Economic Transition, Taylor & Francis Journals, vol. 41(12), pages 63-92

³ Ա. Մարկոսյան, «Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ», Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2005. - 250 էջ

Այս ամենի համատեքստում դիտարկեցինք նաև հարկերի տոկոսադրույքների դիվերսիֆիկացումը, որը ըստ ուսումնասիրության ցույց է տալիս, որ դրույքաչափերի և հարկատեսակների առումով փոքր և միջին ձեռներեցության համար առկա է խստացված կամ անբարենպաստ պայմաններ, իսկ եկամտային հարկի տեսակետից՝ հարկի դիվերսիֆիկացում այլ պարտադիր վճարերի աճով, որի պարագայում անձի մոտ առկա է լինում եկամտի նվազում կամ գործատուի կողմից աշխատավայրի գուտ հիմքով հատուցման պահպանման դեպքում տնտեսվարողի մոտ աշխատավարձային ֆոնդի աճ: Մեկ այլ խստացման ռեժիմ է նախատեսում նոր 2020-2025թ. ծրագիրը, որը չեղարկելու է շրջանառության հարկը, տնտեսվարողների մոտ ստեղծելու է տնտեսական շոկեր, ընդհուպ գնեթի անուղղակի թանկացում և տնտեսվարող սուբյեկտների գործունեության դադարեցում:

Նշվածի կարգավորման առումով, մենք գտնում ենք, որ տնտեսության համար օր առաջ կարևոր է բորսայական գործիքներով տնտեսության խթանումը, որը ինչպես կներքաշի հավելյալ դրամական միջոցներ պետական բյուջե, այլ նաև առկա խնայողությունների շրջանառում ներդրումների տեսքով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վ. Լ. Հարությունյան, «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», Երևան «Ջանգակ-97», 2007թ., 192 էջ:
2. Վ. Լ. Հարությունյան և ուրիշներ, «Հարկեր և հարկազանձում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010թ., 600 էջ:
3. Գ. Կիրակոսյան և ուրիշներ, «Տնտեսագիտության տեսություն», Երևան 2009թ., 752 էջ:
4. Վ. Բոստանջյանը և Գ. Կիրակոսյանը «Բյուջետային քաղաքականության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», Բանբեր 2021թ., 9 էջ:
5. Ա. Մաթևոսյան, Վ. Ջանվելյան և Շ. Ալեքսանյան, «Հարկաբյուջետային քաղաքականությունը և ՀՀ կառուցվածքային բյուջեի գնահատականը», Եր. Տնտեսագետ 2014թ., 56 էջ:
6. ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Հարկային օրենսգիրք, 01.11.2016թ., 336 էջ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169107>:

7. John Maynard Keynes, The General Theory of Employment, Interest, and Money, 1936, https://www.files.ethz.ch/isn/125515/1366_KeynesTheoryofEmployment.pdf, p. 190.
8. CFA Institute, Monetary and Fiscal Policy, <https://www.cfainstitute.org/en/membership/professional-development/refresherreadings/monetary-fiscal-policy>
9. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Վիճակագրական ցուցանիշներ, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>
10. ՀՀ ԿԲ Բացառական բառարան, 11 էջ, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_18.pdf:
11. ՊԵԿ պաշտոնական կայքէջ, ՀՀ ՊԵԿ հաշվետվություններ, <https://www.petekamutner.am/siPublications.aspx?itn=ts&ptname=AnnualReports> :

References

1. V. L. Harowt'yownyan, «Harkayin qaghaqakanowt'yowny' & nra katarelagorc'man himnaharcery' Hayastani Hanrapetowt'yownowm», Er&an «Zangak-97», 2007t'. , 192 e'j
2. V. L. Harowt'yownyan & owrishner, «Harker & harkagandzowm», HH GAA «Gitowt'yown» hrat. , 2010t'. , 600e'j
3. G. Kirakosyan & owrishner, «Tntesagitowt'yan tesowt'yown», Er&an 2009t'. , 752 e'j
4. V. Bostanjany' & G. Kirakosyany' «Byowjetayin qaghaqakanowt'yan himnaxndirneri' & dranc lowc'man owghinery' hayastani hanrapetowt'yownowm», Banber 2021t'. , 9 e'j
5. A. Mat'osyan, V. Janvelyan & Sh. Aleqsanyan, «Harkabyowjetayin qaghaqakanowt'yowny' & HH kar'owcvac'qayin byowjei gnahatakany'», Er. Tntesaget 2014t'. , 56 e'j
6. HH Azgayin jhoghov, HH Harkayin o'rensgirq, 01.11.2016t'. , 336 e'j, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169107>
7. John Maynard Keynes, The General Theory of Employment, Interest, and Money, 1936, https://www.files.ethz.ch/isn/125515/1366_KeynesTheoryofEmployment.pdf, p 190
8. CFA Institute, Monetary and Fiscal Policy, <https://www.cfainstitute.org/en/membership/professional-development/refresherreadings/monetary-fiscal-policy>
9. HH Vitwakagrakan komite, Vitwakagrakan cowcanishner, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>,
10. HH KB Bacatrankan bar'aran, 11 E'j, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_18.pdf
11. PEK pashtonakan kayqe'j, HH PEK hashvetvowt'yownner, <https://www.petekamutner.am/siPublications.aspx?itn=ts&ptname=AnnualReports>

ՖԻՍԿԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Արշակ Հարությունի Վարժապետյան

Համառոտագիր: Հոդվածի նպատակն է դիտարկել ֆիսկալ կամ հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումներն աշխարհում, առհասարակ, և Հայաստանում: Չնայած այն հանգամանքին, որ հարկաբյուջետային քաղաքականության ուսումնասիրության աստիճանը Հայաստանում բավական խորքային է, սակայն մեր կարծիքով դեռևս առկա են բարեփոխման և կատարելագործման անհրաժեշտություններ՝ հատկապես Covid19 համավարակից հետո: Մեր **խնդիրն** էր ուսումնասիրել սույն հոդվածում հարկաբյուջետային քաղաքականությունը ՀՀ օրինակով՝ դրա ազդեցությունը ՀՆԱ-ի և գործազրկության վրա, հարկային բեռնվածության մակարդակը:

Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և **մեթոդաբանական** հիմք են հանդիսացել ՀՀ ՊԵԿ հաշվետվությունները, ՀՀ գործող օրենսդրական ակտերն ու նորմերը, ինտերնետային կայքերը, միջազգային կառույցների կողմից հրապարակված ֆիսկալ քաղաքականության սահմանումները, Քեյնսյան տեսությունը, հայրենական ու արտասահմանյան մասնագիտական գրականություններն ու հոդվածները, վիճակագրական-տեղեկատվական բազաները և այլն: Բացի հարկաբյուջետային համակարգի առկա վիճակի ուսումնասիրությունից, ուսումնասիրվել է նաև ՀՀ-ում հարկազանձման համակարգը. նկատվել են որոշ ոլորտներ, որտեղ հարկերի մի քանի տեսակներում առկա են ակնհայտ արտոնություններ և հարկային վարչարարության տեսանկյունից առկա չեն գիտական միջավայրի համար նախատեսված հարկային ուղենիշներ և այլն, որոնց մասով մեր կողմից նկատված բացերի ծածկման համար ներկայացրել ենք **կիրառական առաջարկություններ**:

Գիտական նորույթ: Բյուջեի մուտքերի ապահովման գործում հիմնավորվել է առավել որոշիչ մասնաբաժին ունեցող պետական պարտատոմսերի պլանավորումը, իրացումը և տեղաբաշխումը: Առաջարկվել է բորսային կարգավորման մեխանիզմ՝ հիմքում դնելով ֆինանսական միջոցների ներգրավումը պետական պարտատոմսերի ձեռք բերմամբ, տեղաբաշխմամբ, իսկ հարկ եղած դեպքում ԱԱՀ դրույքաչափի կիրառմամբ: Գիտական բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով առաջարկվել է սահմանել եկամտային հարկի զեղչեր՝ հիմք ընդունելով գիտական աստիճանը:

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ Հայաստանում հարկաբյուջետային քաղաքականության տեսակներից, ներկայում գործում է միայն զսպող կամ ռեստրիկտիվ տեսակը: Տասներեք տարվա միջին թվաբանական հաշվարկի արդյունքում փաստվեց, որ հարկային բեռը չի նվազում, իսկ դրան զուգահեռ՝ նույն ժամանակահատվածում միևնույն մեթոդաբանության դիտարկմամբ երևում է, որ ավելանում է պետական պարտքը, իսկ գործազրկության մակարդակում առկա չէ նույնիսկ դրական դինամիկա: Ուսում-

նասիրվել է նաև հարկերի և բյուջեի եկամուտների միջև առկա կապի էկոնոմետրիկ վերլուծությունը, ըստ որի բյուջեի կախվածությունը հարկերից ուժեղ է, ինչը ենթադրում է, որ տնտեսական մեծ շոկերի դեպքում, ինչպիսին էր Covid19-ի Lock Down-ը, բյուջեի եկամտային ապահովման վրա կլինի բացասական մեծ ազդեցություն, որը կհանգեցնի տնտեսական շոկի:

Բանալի բառեր. ՀՆԱ, հարկաբյուջետային քաղաքականություն, հարկ, պետական պարտք, գործազրկություն, բյուջե, հարկային բեռ, շահութահարկ, ԱԱՀ, եկամտային հարկ:

ВЛИЯНИЕ ФИСКАЛЬНОЙ ПОЛИТИКИ НА ЭКОНОМИКУ (НА ПРИМЕРЕ РА)

Аршак Арутюнович Варжапетян

Аннотация: Целью данной статьи является рассмотрение подходов к фискальной политике во всем мире и в Армении. Несмотря на то, что учебный уровень исследования налогово-бюджетной политики в Армении достаточно глубока, на наш взгляд, потребности в реформах и улучшениях все же есть, особенно после пандемии Covid19. Нашей **задачей** в данной статье было изучение фискальной политики на примере РА, ее влияние на ВВП и безработицу, уровень налоговой нагрузки.

Теоретической, информативной и **методологической** основой исследования послужили отчеты КГД РА, действующие законодательные акты и нормы РА, интернет-сайты, определение фискальной политики - опубликованные международными структурами, кейнсианская теория, отечественная и зарубежная профессиональная литература и статьи, информационно-статистические базы данных и другие. Помимо изучения современного состояния бюджетной системы, была изучена система сбора налогов в РА, были отмечены некоторые области, где существуют явные льготы по некоторым видам налогов, и с точки зрения налогового администрирования, никаких налоговых указаний по научному вмешательству и т.д. в отношении которых мы представили **практические рекомендации** по устранению замечаемых нами пробелов.

Научная новизна: Обосновано планирование, реализация и размещение государственных облигаций с наиболее решающей долей в обеспечении доходов бюджета. Предложен механизм биржевого регулирования, основанный на привлечении финансовых средств за счет приобретения и размещения государственных облигаций, а при необходимости применения ставки НДС. В целях создания благоприятной научной среды было предложено учитывая ученую степень, установить льготы по налогу на прибыль.

В результате исследования мы пришли к выводу, что типы фискальной политики в Армении в настоящее время относятся к сдерживающему или ограни-

чительному типу, поскольку в результате 13-летнего среднеарифметического расчета было доказано, что налоговая нагрузка не уменьшается, и параллельно с ним, в тот же период, соблюдая ту же методику, видно, что увеличивается государственный долг, а положительная динамика уровня безработицы практически отсутствует. Также был изучен эконометрический анализ взаимосвязи между налогами и доходами бюджета, согласно которому зависимость бюджета от налогов сильная, что подразумевает, что в случае крупных экономических потрясений, таких как Блокировка Covid19, будет большое негативное влияние на доходную обеспеченность бюджета, что приведет к экономическому шоку.

Ключевые слова: ВВП, фискальная политика, налог, государственный долг, безработица, бюджет, налоговая нагрузка, налог на прибыль, НДС, подоходный налог.

THE IMPACT OF FISCAL POLICY ON THE ECONOMY (WITH THE EXAMPLE OF RA)

Arshak Harutyun Varzhapetyan

Abstract: The **purpose** of this article is to consider the approaches to fiscal policy in the world in general, as well as in Armenia. Despite the fact that the **degree of fiscal policy research** in Armenia is quite deep, in our opinion there are still needs for reform and improvement, especially after the Covid 19 pandemic. **Our problem** in this article was to study the fiscal policy on the example of the RA, its impact on GDP and unemployment, the level of tax burden.

The theoretical, informational and **methodological** basis for the research were the reports of the RA SRC, the current legislative acts and norms of the RA, internet sites, definitions of fiscal policy published by international structures, Keynesian theory, domestic and foreign professional literature and articles, statistical-informational databases, etc. In addition to the study of the current state of the co-budgetary system, the system of taxation in the RA was studied, some areas observed, where there are obvious benefits in some types of taxes, and from the point of view of the tax administration, there are no tax guidelines for the scientific environment, etc., regarding which we have presented **concrete recommendations** to cover the gaps we have noticed.

Scientific novelty: The planning, implementation and distribution of state bonds with the most decisive share in securing the budget revenues was substantiated. A stock exchange regulation mechanism has been proposed, based on the attraction of financial funds through the purchase and allocation of government bonds, and if necessary, the application of the VAT rate. In order to create a favorable scientific environment, it was proposed to establish income tax benefits based on the academic degree.

As a result of the research, we came to the **conclusion** that the types of fiscal policy in Armenia are currently the restraining or restrictive type, because the result of the 13-year average calculation proved that the tax burden does not decrease. So, at the same time, in the same period, with the same methodology, it can be seen that the state debt is increasing and there is almost no positive dynamics in the level of unemployment. An econometric analysis of the relationship between taxes and budget revenues has also been researched, according to which the budget's dependence on taxes is strong, which implies that in the event of major economic shocks, such as the Lock Down of Covid19, there will be a large negative impact on the budget's revenue provision which will lead to an economic shock.

Keywords: GDP, fiscal policy, tax, public debt, unemployment, budget, tax burden, profit tax, VAT, income tax.

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մերի Գազիկի Մանուչարյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 04.10.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Հայտնագործություն արած չենք լինի, որ նշենք, որ երկրի ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն հիմնահարցերից մեկը բնակչության պարենային անվտանգությունն է: Հիմնահարցը հույժ կարևոր է հատկապես այն երկրների համար, որոնց տարածքային, բնակլիմայական և տնտեսական պայմանները հնարավորություն չեն ընձեռում բնակչության պահանջարկի բավարարումն իրականացնել տեղական արտադրության պարենամթերքներով, այսինքն՝ ինքնաբավ լինել: Աշխարհի մասշտաբով ահագնացած համավարակները, տարերային աղետները և կլիմայի փոփոխությունը պարենային անվտանգության համար նոր մարտահրավերներ են ստեղծում: Այս ամենից անմասն չի մնացել նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հաշվի առնելով այն, որ լինելով լեռնային երկիր և ունենալով խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականություն, Հայաստանը բավականին խոցելի է կլիմայի փոփոխությունների հանդեպ, ինչը առավելապես ազդում է երկրի պարենային անվտանգության վրա՝ կանխորոշելով սույն ուսումնասիրության **արդիականությունը**:

Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել կլիմայի փոփոխությունը ՀՀ ամենախոցելի ոլորտի՝ գյուղատնտեսության տեսանկյունից և ներկայացնել դրա ուղիղ համեմատական կապը պարենային անվտանգության հետ:

Նշվածի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- ուսումնասիրել կլիմայի փոփոխության հիմնահարցերը պարենային անվտանգության ապահովման կարևորությունից ելնելով,
- ներկայացնել Հայաստանում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերը և ՀՀ մարզերի խոցելիությունը օդերևութաբանական երևույթների նկատմամբ,
- ուսումնասիրել կլիմայի ապագա կանխատեսումները և ներկայացնել կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվողականության միջոցառումների զարգացումը պարենային անվտանգության բարձրացման տեսանկյունից:

Գրականության վերլուծություն

Հայաստանը՝ որպես լեռնային երկիր, որն ունի խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականություն, բավական խոցելի է կլիմայի փոփոխության

նկատմամբ: Բնականաբար, վերջինս առավելապես ազդում է գյուղատնտեսության, հետևաբար՝ երկրի պարենային անվտանգության վրա: Ոստի, հատկապես վերջին տարիներին, կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական հետևանքները գնահատելիս, առանձնակի շեշտադրվում է նաև բնակչության պարենային անվտանգության վրա հնարավոր ազդեցությունը: Հիմնախնդիրը դիտարկվում է ոչ միայն առանձին երկրների, այլև տարածաշրջանային և միջազգային ընդգրկումով: Դրա ամենացայտուն օրինակներից է 2002թ. Յոհաննեսբուրգում 195 երկրների ղեկավարների մասնակցությամբ «Մոլորակի կայուն զարգացման» համաժողովը, որի ընդունած 21-րդ դարի մարտահրավերների ցանկում առանձնակի կարևորվում է ագրոէկոհամակարգում շրջակա միջավայրի պահպանությունը, կլիմայի գլոբալ փոփոխության ռիսկերի կառավարումը, բնական ռեսուրսների խնայողական օգտագործումը և պարենային անվտանգության հիմնախնդրի լուծումը¹:

Կլիմայի գլոբալ փոփոխությունը մարդկության առջև ծառայած խոշոր մարտահրավերներից է, որի հաղթահարման համար պահանջվում են բոլոր երկրների համատեղ ջանքերը: Հայաստանի Հանրապետությունը Կլիմայի փոփոխության մասին ՄՍԿ-ի շրջանակային կոնվենցիան վավերացրել է 1993թ-ին, Կիոտոյի արձանագրությունը՝ 2002թ-ին, իսկ Կիոտոյի արձանագրության Դոհայի փոփոխությունը՝ 2017թ-ին² ու իր կարգավիճակին համապատասխան կանոնավոր կատարում է Կոնվենցիայի Հավելված 1-ում չընդգրկված երկրների համար սահմանված պարտավորությունները:

Աշխարհի ամենահարուստ երկրները, այդ թվում՝ Ֆինլանդիան, Իսլանդիան, Նիդեռլանդները և Նորվեգիան, ավելի առողջ շրջակա միջավայր են ապահովում երեխաների համար իրենց երկրների սահմաններում, սակայն անհամաչափորեն նպաստում են բնական միջավայրի ոչնչացմանը գլոբալ առումով: «Ինտչենտի հաշվետվության թերթիկ թիվ 17. վայրեր և տարածքներ»-ը համեմատում է, թե ինչպես են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Եվրոպական միության (ԵՄ) 39 երկրները գործում երեխաների համար առողջ միջավայր ապահովելու հարցում: Զեկույցում ներկայացված են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են վնասակար աղտոտիչների ազդեցությունը, այդ թվում՝ թունավոր օդը, թունաքիմիկատները, աղբավայրերը և կապարի առկայությունը, մյուս կողմից լույսի հասանելիությունը, կանաչ տարածքները և անվտանգ ճանապարհները, ինչպես նաև երկրների ազդեցությունը կլիմայական ճգնաժամի վրա, ռեսուրսների սպառմանը և էլեկտրոնային թափոնների ստեղծմանը: Զեկույցում ասվում է, որ եթե աշխարհում բոլորը ռեսուրսներ սպառեն ՏՀԶԿ և ԵՄ երկրներում բնակվող մարդկանց տեմպերով, ապա սպառման մակարդակին համարժեք լինելու համար կպահանջվի 3,3 երկրագունդ: Եթե բոլորը ռեսուրսներ սպառեն այն տեմպերով, որով մարդիկ

¹ Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/. –Եր.: Տնտեսագետ, 2014, էջ 61, («Ամբերդ» մատենաշար), 96 էջ:

² <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/azgayin-mijazgayin-qaxaqakanutyun>

Կանադայում, Լյուքսեմբուրգում և Միացյալ Նահանգներում են սպառում, ապա առնվազն հինգ երկրագունդ կպահանջվի¹:

Կլիմայի փոփոխությունն ունի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն գյուղատնտեսական արտադրության համակարգերի վրա: Ուղղակի ազդեցությունները ներառում են ֆիզիկական բնութագրերի փոփոխության հետևանքով առաջացած ազդեցությունները, ինչպիսիք են ջերմաստիճանի մակարդակը և տեղումների բաշխումը գյուղատնտեսական արտադրության հատուկ համակարգերի վրա: Անուղղակի ազդեցություններն արտահայտվում են, արտադրության վրա ունեցած այլ փոփոխությունների միջոցով, ինչպիսիք են փոշոտողները, վնասատուները, հիվանդությունների փոխանցողները և ինվազիվ տեսակները: Այս անուղղակի ազդեցությունները կարող են մեծ դեր խաղալ: Դրանք շատ ավելի դժվար է գնահատել և նախագծել՝ հաշվի առնելով փոխազդող պարամետրերի մեծ թիվը, որոնցից շատերը դեռևս անհայտ են²:

Մեթոդաբանություն

Հետազոտության մեջ դրված խնդիրների լուծումն իրականացվել է նկարագրական, համեմատության, ընդհանրացման, վիճակագրական, վերլուծական և գրաֆիկական մեթոդների կիրառման եղանակներով:

Վերլուծություն

Դեռևս պատմության մեջ ազրոպարենային համակարգն այսքան նոր և աննախադեպ աղետների չէր առերեսվել, ինչ վերջին տարիներին: Վտանգի է ենթարկվում սննդի ամբողջ համակարգը: Աղետները դուրս են գալիս տնտեսական տիրույթից և կորստաբեր հետևանքներ ունենում պարենային անվտանգության և սնուցման վրա: Գյուղատնտեսությունը կլիմայի փոփոխության հիմնական գործոններից է: Գյուղատնտեսությունն արտանետում է ամբողջ աշխարհում արտանետվող ջերմոցային գազերի քառորդ մասը: Դա այն ոլորտն է, որն ամենախոցելին է կլիմայի փոփոխության տեսանկյունից, քանի որ արտադրությունն իրականացվում է բաց երկնքի տակ և արդյունքային ցուցանիշները գլխավորապես պայմանավորված են բնակլիմայական պայմաններով: Ջերմաստիճանի բարձրացման հետ միասին բոյսերի հիվանդությունները և վնասատուներն ավելի արագ են զարգանում և տարածվում: Հաշվի առնելով ռելիեֆը, աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմաններն ու ոռոգման հնարավորությունները, Հայաստանը դասվում է երկրագործության տեսանկյունից ծայրահեղ ռիսկային երկրների շարքին: Կլիմայի փոփոխությունը Հայաստանում հանգեցրել է կենսաբազմազանության կորստի, էկոհամակարգերի դեգրադացման ու ջրի սակավության, որն էլ ուղիղ համեմատական է պարենային անվտանգությանը:

Պարենային անվտանգությունն առանց զարգացած ոռոգելի գյուղատնտեսության չի կարելի պատկերացնել: Հայաստանում արդեն այդ խնդրի առաջ ենք

¹ Innocenti Report Card 17: Places and Spaces <https://www.unicef-irc.org/places-and-spaces>

² CLIMATE CHANGE AND FOOD SECURITY: RISKS AND RESPONSES, FOOD AND AGRICULTURE ORGANIZATION OF THE UNITED NATIONS, 2015, 122 p.

կանգնած: Ֆերմերները նշում են, որ վերջին տարիներին կտրուկ նվազել է աղբյուրներից ջրի հոսքը և ոռոգման ջրի հասանելիությունը: Իսկ ջրի սակավությունը բերում է գյուղատնտեսության արտադրության նվազման, նվազեցնում է ֆերմերների տնտեսական արդյունավետությունը, որն իր հերթին պարենային անվտանգության խնդիր է առաջացնում:

Հայաստանը կլիմայական հակադրությունների երկիր է. ամենափոքր տարածությունների վրա անգամ նկատվում են բարդ ռելիեֆով պայմանավորված կլիմայի զգալի տարբերություններ: Հանրապետության տարածքում առկա են կլիմայի գրեթե բոլոր տարատեսակները՝ չոր մերձարևադարձայինից մինչև ցուրտ բարձր լեռնային¹:

Հայաստանում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկեր.

- Հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների հաճախականության, ինտենսիվության և տևողության աճ
- Ջրային ռեսուրսների քանակի նվազում
- Անտառային և կանաչ տարածքների կրճատում
- Էկոհամակարգերի հավասարակշռության խախտում
- Պարենային անվտանգության ապահովման խնդիրներ
- Անտառային հրդեհների աճ:

Հայաստանի երկրորդ ազգային հաղորդագրության համաձայն՝ նախորդ 80 տարիների ընթացքում ջերմաստիճանը բարձրացել է 0.85°C-ով, իսկ տեղումները նվազել են 6%-ով: Բացի այդ, հիդրոոդերևութաբանական լուրջ երևույթների հաճախականությունը նախորդ 30 տարիների ընթացքում ավելացել է 1.2 դեպքով, իսկ վերջին 20 տարիների ընթացքում՝ տարեկան 1.8 դեպքով: Կիրառելով PRECIS մոդելը՝ մինչև 2030 թ. սպասվում է ջերմաստիճանի բարձրացում 1°C-ով, մինչև 2070 թ.՝ 2°C-ով և մինչև 2100 թ.՝ 4°C-ով: Մթնոլորտային տեղումները համապատասխանաբար կնվազեն 3, 6 և 9 %-ով: Համաշխարհային բանկի վերլուծությունները, որոնք կատարվել են կլիմայի մոդելների ավելի ընդգրկուն տեսակների հիման վրա, ցույց են տալիս, որ ջերմաստիճանի բարձրացումը կարող է 2050թ-ին տատանվել 1.5°C - 3°C միջակայքում: Կանխատեսվում է նաև, որ կփոխվի ջրային ռեսուրսների մատչելիությունը: Գետային հոսքն ակնկալվում է, որ մինչև 2030 թ. կնվազի 6.7 %-ով, մինչև 2070թ.՝ 14.5 %-ով և մինչև 2100 թ.՝ 24.4 %-ով՝ 1961-1990 ելակետային ժամանակահատվածի համեմատ: Ձնածածկույթն ակնկալվում է, որ մինչև դարի վերջը կկրճատվի ընդհուպ մինչև 20–40 %-ով: Կլիմայի փոփոխություններով պայմանավորված էկոհամակարգերի փոփոխություններն ակնկալվում է, որ ներառեն հետևյալը՝ ալպիական գոտու տարածքի կրճատում 21 %-ով և 100-150մ ուղղահայաց տեղաշարժ, կիսաանապատային և անապատային տարածքների ընդլայնում 30 %-ով, տափաստանային գոտու 150-200մ

¹ Կլիմայի փոփոխության երրորդ ազգային հաղորդագրություն: Երևան, 2015թ., էջ17, 190 էջ:

ուղղահայաց տեղաշարժ և 4 %-ով ընդլայնում, անտառային գոտու 100-200 մ ուղղահայաց տեղաշարժ և Սևանա լճից գոլորշիացման աճ՝ 13–14 %-ով¹:

Մինչև 2030թ. ակնկալվում է ոռոգում պահանջող վայրերում ջերմաստիճանի բարձրացում և տեղումների նվազում, հողից գոլորշիացման ավելացման հետևանքով հողի երկրորդային աղակալում (աղ-ջուր հարաբերակցության մարդածին ավելացում), տեղատարափ անձրևներ ու հեղեղումներ, որոնց հետևանքով կուժեղանա ջրային էրոզիան, իսկ երաշտներն ու խորշակները կուժեղացնեն հողի հողմային էրոզիան: Ձմռանը անասնակերի նվազման պատճառով կենդանիների արածեցումը կարող է ավելի վաղ սկսել և ուշ ավարտվել, որն էլ կարող է ավելացնել արոտավայրերի դեգրադացիան: Հողի խոնավությունն ակնկալվում է, որ կնվազի 10–30 %-ով, գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի խոնավապահովվածությունը՝ 7-13 %-ով, իսկ հողի ջրային դեֆիցիտը կավելանա 25-30%-ով: Հետևաբար, նախալեռնային և ստորին լեռնային շրջաններում անձրևաջրերով սնվող՝ անջրդի հողագործությունը կարող է նվազել²:


Հիդրոմետ ծառայության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կլիմայական գլոբալ փոփոխությունների հետևանքով ՀՀ-ի տարածաշրջանում տեղի է ունեցել հետևյալ կլիմայական փոփոխությունները՝

- ցրտահարության դեպքերի թիվը աճել է, ինչը կարող է ունենալ հետևյալ բացատրությունը՝ ջերմաստիճանի բարձրացումը Արարատյան դաշտում միջին տարեկան կտրվածքով առավել նկատելի է մարտ ամսվա ընթացքում, որով պայմանավորված վեգետացիան ավելի վաղ է սկսվում, ուստի ապրիլին ջերմաստիճանի կտրուկ նվազումը բերում է ցրտահարության դեպքերի հաճախացմանը,
- կարկտահար օրերի թիվը ընտրված կայաններում նվազել է, ինչը կարող է պայմանավորված լինել կարկտաբեր ամպամածություն ձևավորող բարձրադիր ցիկլոնների ներթափանցման դեպքերի կրճատմամբ, ինչպես նաև մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործությամբ,
- հորդառատ տեղումների կրկնելիությունն ունի աճի միտում, ինչը պայմանավորված է հորդառատ տեղումներ առաջացնող մթնոլորտային գործընթացների հաճախացմամբ:

Կլիմայի ընդհանուր փոփոխությունից բացի, կանխատեսվում է, որ տեղի կունենան եղանակային լուրջ իրադարձություններ և մշակաբույսերի հիվանդությունների բռնկումներ և վնասատուների տարածում: Հստակեցման նպատակով գծապատկերով ներկայացնենք ՀՀ մարզերի խոցելիությունը հիդրոօդերևութաբանական երևույթների նկատմամբ:

¹ Հայաստանի Հանրապետություն ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2012 թ. հունիս <https://documents1.worldbank.org/curated/en/260051468221982009/pdf/733320WP0ARMENIA00Armenia0Jun20120Arm.pdf>

² United Nations Framework Convention on Climate Change (UNFCCC). 2010. Second National Communication. Republic of Armenia Ministry of Nature Protection.



Գծապատկեր 1. ՀՀ մարզերի խոցելիությունը հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների նկատմամբ¹

Կլիմայի փոփոխությունը սպառնում է հակադարձել սովի և թերսնման դեմ պայքարում մինչ այժմ գրանցված առաջընթացը: Ինչպես ընդգծվում է Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական հանձնաժողովի (IPCC) վերջին գնահատման զեկույցում, կլիմայի փոփոխությունը մեծացնում և ուժեղացնում է սննդի անվտանգության ռիսկերը առավել խոցելի երկրների և բնակչության համար: Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական հանձնաժողովի (IPCC) կողմից բացահայտված կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած ութ հիմնական ռիսկերից չորսն ուղղակի հետևանքներ ունեն պարենային անվտանգության վրա².

¹ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցման ուղեցույց», Երևան, 2015, էջ 23:
² CLIMATE CHANGE AND FOOD SECURITY: RISKS AND RESPONSES, FOOD AND AGRICULTURE ORGANIZATION OF THE UNITED NATIONS, 2015, 122 p.

- Գյուղական ապրուստի միջոցների և եկամուտի կորուստ,
- Ծովային և ափամերձ էկոհամակարգերի և ապրուստի միջոցների կորուստ,
- Ցամաքային և ներքին ջրային էկոհամակարգերի և ապրուստի միջոցների կորուստ,
- Պարենի անապահովություն և սննդի համակարգերի խաթարում:

Առավել տուժած են համարվում չոր և կիսաչոր տարածքները, դեպի ծով ելք չունեցող երկրները և փոքր կղզիներում գտնվող զարգացող պետությունները: Կլիմայի փոփոխությունը նաև ավելի լայն ազդեցություն կունենա առևտրի հոսքերի, պարենային ապրանքների շուկաների և գների կայունության վրա ազդեցություն ունենալու միջոցով և կարող է նոր ռիսկեր առաջացնել մարդու առողջության համար: Կլիմայի փոփոխությանն արձագանքելու մեծապես ընդլայնված ջանքեր են անհրաժեշտ անհապաղ՝ պաշտպանելու պարենային համակարգերի կարողությունները՝ ապահովելու համաշխարհային անվտանգությունը:

Գիտական նորույթ

Բացահայտվել է ՀՀ-ի համար կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված միջոցառումների ցանկը, ինչպես նաև կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվողականության միջոցառումների զարգացումը պարենային անվտանգության բարձրացման տեսանկյունից:

Եզրակացություն

Գյուղատնտեսությունն ամբողջ աշխարհում կլիմայի փոփոխության նկատմամբ ամենախոցելի ոլորտներից է: Կլիմայական փոփոխությունների ազդեցություններն այս ոլորտում բազմաթիվ են: Ջերմաստիճանի և տեղումների քանակի փոփոխությունները, ինչպես նաև եղանակային վտանգավոր երևույթները մեծ ազդեցություն ունեն բերքատվության, անասնապահության արդյունավետության վրա, անհրաժեշտ ռոտզման ջրի քանակի, գյուղատնտեսական տարաբնույթ գործընթացների վրա, ներառյալ բերքի տեղափոխումն ու պահեստավորումը: Ընդհանուր առմամբ, կլիմայի փոփոխությունն ազդում է գյուղատնտեսության ոլորտի արժեքի ստեղծման և մատակարարման շղթաների յուրաքանչյուր օղակի վրա:

Դիտարկելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է և ունի ռազմավարական նշանակություն երկրի ՀՆԱ-ի համար՝ կլիմայի փոփոխության մարտահրավերներից գյուղատնտեսական գործընթացների ապահովագրումն ու դրանց նկատմամբ ոլորտում հարմարվողականության միջոցառումների իրականացումը կարելի է դասել ազգային ռազմավարական առաջնահերթությունների շարքին:

Կլիմայի ապագա կանխատեսումները ցույց են տալիս, որ Հայաստանը ենթակա կլիմայի^{1,2}:

¹ United Nations Framework Convention on Climate Change (UNFCCC). 2010. Second National Communication. Republic of Armenia Ministry of Nature Protection.

² IPCC. AR4, Chapter 8: Agriculture. <http://www.ipcc.ch/pdf/assessment-report/ar4/wg3/ar4->

• Միջին ջերմաստիճանի բարձրացման՝ մինչև 2030թ. 1°C-ով, մինչև 2070թ.՝ 2°C-ով՝ և մինչև 2100թ.՝ 4°C-ով, ընդ որում 2050թ. այն կգտնվի 1.5°C - 3°C միջակայքում,

• Տեղումների նվազման՝ մինչև 2030թ. 3 %-ով, մինչև 2070թ. 6 %-ով և մինչև 2100թ. 9%-ով, սակայն կանխատեսումները կարող են զգալի տատանվել ըստ ամիսների և ըստ կլիմայի մոդելի,

• Գետային հոսքի նվազման՝ մինչև 2030թ 6.7 %-ով, մինչև 2070թ. 14.5 %-ով և մինչև 2100թ.՝ 24.4 %-ով՝ 1961-1990թթ. ելակետային ժամանակահատվածի համեմատ,

• Չնածածկույթի նվազման՝ 2030թ. 7 %-ով, 2070թ. 16-20 %-ով և 2100թ.՝ 20-40 %-ով,

• Գյուղատնտեսական արտադրության համար առավել սահմանային և ռիսկային միջավայրի, քանի որ ջերմաստիճանի բարձրացումը և տեղումների նվազումը բերքի և արոտավայրերի աճի կրիտիկական փուլում խոնավության մեծ դեֆիցիտ կառաջացնեն:

• Ջերմաստիճանի բարձրացման հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերի, անտառների և գյուղատնտեսական կենդանիների՝ վնասատուների և հիվանդությունների նկատմամբ խոցելիության ավելացման:

• Կլիմայի փոփոխությունը ոլորտի համար կատեղծի ռիսկեր, բայց նաև հնարավորություններ՝ երկուսն էլ անհրաժեշտ է գնահատել:

Հայաստանում կլիմայի ապագա կանխատեսումները ցույց են տալիս ջերմաստիճանի շարունակական բարձրացում և տեղումների նվազում հանրապետության գրեթե ամբողջ տարածքում: Ջրային ռեսուրսների կայուն կառավարումը և կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների, այդ թվում՝ ջրի երկրորդային օգտագործման լուծումների կիրառումն անհրաժեշտ նախապայման են ջրային ռեսուրսների սակավության մարտահրավերը հաղթահարելու համար: Պետք է նշել, որ Հայաստանում կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման անհրաժեշտությունն ամրագրված է ջրային օրենսգրքով: Արդյունաբերության, կենցաղային և օգտագործման այլ տեսակների կողմից ջրի աղտոտվածության աճով, ջրի օգտագործման պահանջարկի ավելացմամբ, ինչպես նաև կլիմայի փոփոխության հետևանքով ջրային ռեսուրսների առկա և կանխատեսվող նվազմամբ պայմանավորված՝ երկրորդային ջրօգտագործումը դառնում է անհրաժեշտ և արդիական, հատկապես՝ Արարատյան դաշտում ոռոգման կարիքները բավարարելու և Սևանա լճի ու տնտեսության տարբեր ճյուղերի վրա ճնշումը նվազեցնելու նպատակով: Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներից անհրաժեշտ կիրառել նաև ջերմակայուն և չորադիմացկուն մշակաբույսերի աճեցում, հակակարկտային ցանցեր, դաշտապաշտ-

wg3- chapter8.pdf /Intergovernmental Panel on Climate Change. Fourth Assessment Report: Climate Change 2007. Working Group I Report “The Physical Science Basis.” Note: World Bank consultant Industrial Economics, Inc. analyzed the data across the 56 available options to develop a mid-range scenario.

պան անտառաշերտեր, ջրամատակարարման համակարգերի բարեկարգում, ջրօգտագործման պլանավորում և ջրային ռեսուրսների ամբարում, ջրավազանների կառավարում և պահպանո, կանաչ տարածքների ավելացում, արևապաշտպան միջոցների կիրառում, բնական պաշարների կայուն օգտագործում. Կենսաբազմազանության պահպանում և այլն:

Հայաստանի համար շատ կարևոր են կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հետևապես չափազանց անհրաժեշտ է կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվողականության զարգացումը և համապատասխան ներուժի ստեղծումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրներ/. –Եր.: Տնտեսագետ, 2014 («Ամբերդ» մատենաշար), 96 էջ
2. Կլիմայի փոփոխության երրորդ ազգային հաղորդագրություն: Երևան, 2015թ., 190 էջ
3. Հայաստանի Հանրապետություն ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2012 թ. հունիս <https://documents1.worldbank.org/curated/en/260051468221982009/pdf/733320WP0ARMEN00Armenia0Jun20120Arm.pdf>
4. «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցմանն ուղեկցյց», Երևան, 2015, 178 էջ
5. CLIMATE CHANGE AND FOOD SECURITY: RISKS AND RESPONSES, FOOD AND AGRICULTURE ORGANIZATION OF THE UNITED NATIONS, 2015, 122 p.
6. Innocenti Report Card 17: Places and Spaces <https://www.unicef-irc.org/places-and-spaces>
7. IPCC. AR4, Chapter 8: Agriculture. <http://www.ipcc.ch/pdf/assessment-report/ar4/wg3/ar4-wg3-chapter8.pdf> /Intergovernmental Panel on Climate Change. Fourth Assessment Report: Climate Change 2007. Working Group I Report “The Physical Science Basis.”
8. Note: World Bank consultant Industrial Economics, Inc. analyzed the data across the 56 available options to develop a mid-range scenario
9. United Nations Framework Convention on Climate Change (UNFCCC). 2010. Second National Communication. Republic of Armenia Ministry of Nature Protection.
10. <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/azgayin-mijazgayin-qaxaqakanutyun>

References

1. Avetisyan S., Hayastani Hanrapetowt'yan parenayin anvtangowt'yan hratap xndirner/. –Er.: Tntesaget, 2014 («Amberd» matenashar), 96 e'j
2. Klimayi p'op'oxowt'yan errorrd azgayin haghordagrowt'yown: Er&an, 2015t'., 190 e'j

3. Hayastani Hanrapetowt'yown KLIMAYI P'OP'OXOWT'YOWNY' EV GYOWGhATNTESOWT'YOWNY' ERKRI MASIN ZEKOWYC 2012 t'. hownis <https://documents1.worldbank.org/curated/en/260051468221982009/pdf/733320WPOARMEN00Armenia0Jun20120Arm.pdf>
4. «Hayastani Hanrapetowt'yownowm gyowghatntesowt'yany' vnas pattwar'ogh bnakan & mardac'in aghetneri r'iskeri nvazecman owghecowyc», Er&an, 2015, 178 e'j
5. CLIMATE CHANGE AND FOOD SECURITY: RISKS AND RESPONSES, FOOD AND AGRICULTURE ORGANIZATION OF THE UNITED NATIONS, 2015, 122 p.
6. Innocenti Report Card 17: Places and Spaces <https://www.unicef-irc.org/places-and-spaces>
7. IPCC. AR4, Chapter 8: Agriculture. <http://www.ipcc.ch/pdf/assessment-report/ar4/wg3/ar4-wg3-chapter8.pdf> /Intergovernmental Panel on Climate Change. Fourth Assessment Report: Climate Change 2007. Working Group I Report “The Physical Science Basis.”
8. Note: World Bank consultant Industrial Economics, Inc. analyzed the data across the 56 available options to develop a mid-range scenario
9. United Nations Framework Convention on Climate Change (UNFCCC). 2010. Second National Communication. Republic of Armenia Ministry of Nature Protection.
10. <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/azgayin-mijazgayin-qaxaqakanutyun>

ՎԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մերի Գազիկի Մանուչարյան

Համառոտագիր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը լինելով լեռնային երկիր և ունենալով խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականություն, բավականին խոցելի է կլիմայի փոփոխությունների հանդեպ, ինչը առավելապես ազդում է երկրի պարենային անվտանգության վրա՝ կանխորոշելով ուսումնասիրության **արդիականությունը:**

Հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել կլիմայի փոփոխությունը ՀՀ ամենախոցելի ոլորտի՝ գյուղատնտեսության տեսանկյունից և ներկայացնել դրա ուղիղ համեմատական կապը պարենային անվտանգության հետ:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- ուսումնասիրել կլիմայի փոփոխության հիմնահարցերը պարենային անվտանգության ապահովման կարևորությունից ելնելով,
- ներկայացնել Հայաստանում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ռիսկերը և ՀՀ մարզերի խոցելիությունը օդերևութաբանական երևույթների նկատմամբ,
- ուսումնասիրել կլիմայի ապագա կանխատեսումները և ներկայացնել կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

ինչպես նաև կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվողականության միջոցառումների զարգացումը պարենային անվտանգության բարձրացման տեսանկյունից:

Հոդվածի հիմնական **գիտական նորույթը** պայմանավորված է հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես. բացահայտվել է ՀՀ-ի համար կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված միջոցառումների ցանկը, ինչպես նաև կլիմայի կանխատեսվող փոփոխություններին հարմարվողականության միջոցառումների զարգացումը պարենային անվտանգության բարձրացման տեսանկյունից:

Ստացված արդյունքները կարևոր նշանակություն ունեն այնպիսի գլոբալ խնդիրների լուծման գործում ինչպիսիք են ռեսուրսների սակավությունը, կլիմայի գլոբալ փոփոխությունը, շրջակա միջավայրի դեգրադացումը և այլն, որոնք կարող են օգտակար լինել ՀՀ տնտեսության զարգացման և պարենային անվտանգության բարձրացման համար:

Բանալի բառեր. պարենային անվտանգություն, կլիմայի փոփոխություն, ռեսուրսներ, շրջակա միջավայր, հարմարվողականություն, կանխատեսում, միջոցառումներ:

ВЛИЯНИЕ КЛИМАТИЧЕСКОГО ФАКТОРА НА ПРОДОВОЛЬСТВЕННУЮ БЕЗОПАСНОСТЬ РА

Мери Гагиковна Манучарян

Аннотация. Учитывая тот факт, что Армения, являясь горной страной и имеющей ярко выраженную вертикальную зональность, достаточно уязвима к климатическим изменениям, что в большей степени сказывается на продовольственной безопасности страны. Данное обстоятельство и предопределяет актуальность исследования.

Цель статьи - рассмотреть изменение климата с точки зрения наиболее уязвимой отрасли РА, сельского хозяйства, и представить его прямую сравнительную связь с продовольственной безопасностью.

Для реализации указанной цели были поставлены следующие задачи:

- изучить вопросы изменения климата исходя из важности обеспечения продовольственной безопасности,
- представить риски, вызванные изменением климата в Армении и уязвимость областей РА к метеорологическим явлениям,
- изучить будущие климатические прогнозы и представить реализацию мер по смягчению последствий изменения климата, а также разработку мер по адаптации к изменению климата с точки зрения повышения продовольственной безопасности.

Основная научная новизна статьи обусловлена проблемами, поставленными в рамках исследования, в частности, раскрыт перечень мероприятий, направленных на смягчение последствий изменения климата для РА, а также разработаны мероприятия по адаптации к прогнозируемым изменениям климата с точки зрения повышения продовольственной безопасности.

Полученные результаты важны в решении таких глобальных проблем, как нехватка ресурсов, глобальное изменение климата, ухудшение состояния окружающей среды и др., что может быть полезно для развития экономики РА и повышения продовольственной безопасности.

Ключевые слова: продовольственная безопасность, изменение климата, ресурсы, окружающая среда, адаптация, прогнозирование, меры.

THE INFLUENCE OF THE CLIMATIC FACTOR ON THE FOOD SECURITY OF RA

Meri Gagik Manucharyan

Abstract. Considering the fact that Armenia, being a mountainous country and having a pronounced vertical zonation, is quite vulnerable to climate changes, which mostly affects the country's food security. This circumstance predetermines the relevance of the study.

The **goal** of the article is to examine climate change from the perspective of the most vulnerable sector of RA, agriculture, and present its direct comparative relationship with food security.

For the implementation of the mentioned goal, the following **objectives** were set:

- to study climate change issues by the importance of ensuring food security,
- to present the risks caused by climate change in Armenia and the vulnerability of RA regions to meteorological phenomena,
- to study future climate forecasts and present the implementation of climate change mitigation measures, as well as the development of climate change adaptation measures from the point of view of increasing food security.

The main scientific novelty of the article is due to the problems posed within the framework of the research, in particular: the list of measures aimed at mitigating climate change for RA was revealed, as well as the development of adaptation measures to predicted climate changes from the point of view of increasing food security.

The obtained results are important in solving such global problems as the scarcity of resources, global climate change, environmental degradation, etc., which can be useful for the development of the RA economy and increase in food security.

Keywords: food security, climate change, resources, environment, adaptation, forecasting, measures

ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշոտ Խաչատուրի Մարկոսյան Աշոտ Պողոսի Խաչատրյան

Հոդվածը ստացվել է՝ 04.10.22, ուղարկվել է գրախոսման՝ 06.10.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Հանքարդյունաբերությունից հետո Հայաստանի արտահանման ամենամեծ ոլորտներից մեկը ագրոպարենային համալիրն է: Հայաստանի ագրովերամշակող արդյունաբերությունը դեռևս խորհրդային շրջանից սկսած և այժմ էլ համարվում է երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը: Այն կարևոր է ինչպես գյուղական համայնքների զբաղվածության, այնպես էլ պարենային, տնտեսական անվտանգության և ագրոպարենային շուկայի ձևավորման ու պարենի կայուն մատակարարման առումով:

Խորհրդային տարիներին այս ոլորտում Հայաստանը արտահանման որևէ ինդիք չուներ: Ներքին սպառումից բացի, ավելացած գյուղ. մթերքն ամբողջությամբ՝ թարմ ու վերամշակված տեսքով, արտահանվում էր Խորհրդային Միության երկրներ: Երրորդ Հանրապետության գոյության առաջին տարիներին կարճ ժամանակ էր պետք հասկանալու համար, որ տնտեսությունը, տնտեսական քաղաքականությունն ու արտաքին առևտուրը միայն մրգի որակական հատկանիշներով կամ «հայկական կոնյակի» հին համբավով չի կարող զարգանալ: Այդտեղ գործում են տնտեսագիտության գրված ու չգրված օրենքներ, որոնք էլ «պայմանավորում» են շուկայի առաջարկի ու պահանջարկի հավասարակշռվածությունը: Ցավոք, երեսուն տարի է ՀՀ-ն չի կարողանում իր ունեցած պարենային արտադրանքով համաշխարհային շուկայում լուրջ դիրքեր զբաղեցնել ու ընդլայնել իր շուկան: Մեր ունեցած պոտենցիալի համեմատությամբ, արտահանման ծավալները չնչին են: Հետևաբար անհրաժեշտ է վերագնահատել իրավիճակն ու համապատասխան դիրքավորվել: Այս հոդվածով նպատակ ունենք ներկայացնելու ագրոպարենային համալիրի այն ճյուղերը, որոնք հեռանկարային են ՀՀ-ի համար արտահանման տեսակետից, ինչպես նաև դրանցում արվելիք անհրաժեշտ քայլերը, որոնք կնպաստեն արտահանման ծավալների աճին:

Ներկայումս Ռուսական շուկան, ելնելով համաշխարհային զարգացումներից, ստեղծված իրավիճակից, կարիք ունի թարմ և մշակված սննդամթերքի մեծ քանակության: Հայաստանի գյուղատնտեսությունը դրանց ոչ մեծ մասի պահանջարկը բավարարելու լուրջ պոտենցիալ ունի: Ուստի այս համատեքստում կարևորվում է ագրոպարենային արտադրանքի արտահանման խթանման մեխանիզմների բացահայտումը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիականությունը:**

Հետազոտության **նպատակը** ագրոպարենային արտադրանքի արտահանման ոլորտի հիմնախնդիրների բացահայտումն է, որի համար ուսումնասիրվել

են արտահանման հնարավորությունները, ինչն էլ քննության է առնվել տնտեսական զարգացման տարբեր տեսանկյուններից:

Գրականության վերլուծություն: Արդի զարգացումների արդյունքում գյուղատնտեսության պետական կարգավորումը զարգացած շուկայական տնտեսության մեջ դարձել է գյուղատնտեսական քաղաքականության անբաժանելի տարր: Ավելին, շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց տնտեսության պետական կարգավորման համակարգը ոչ միայն չի կորցնում իր նշանակությունը, այլ ընդհակառակը, ավելի է բարդանում ու կատարելագործվում¹:

Ա. Բուրդան առաջարկում է օգտագործել «ագրարային ներուժի» հայեցակարգը՝ արտացոլելու գյուղատնտեսական ձեռնարկությունների սկզբնական հնարավորությունները՝ ստեղծելու նոր արժեք, որը կարգավորվում է հենց գյուղատնտեսության ոլորտի արտադրական ռեսուրսների ամբողջությամբ²:

Վորոբյովը կարծում է, որ բնակչության պարենով ապահովումը պետք է լինի պետական կարգավորման և կառավարման առաջնահերթ օբյեկտ³:

Ցածր եկամուտ ունեցող գյուղատնտեսությունը, կախված բնական գործոններից և ունենալով արտադրության ընդգծված սեզոնային, ցիկլային բնույթ, արդյունաբերության համեմատ տեխնոլոգիապես ավելի հետամնաց արդյունաբերություն է:

Այնուամենայնիվ, գյուղատնտեսական արտադրանքը չի կարող վերարտադրվել այլ ոլորտներում կամ փոխարինվել այլ տեսակի ապրանքներով⁴:

Մեթոդաբանություն: Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են պատմական, համակարգային, նկարագրական, համեմատական վերլուծությունների, տնտեսափիճակագրական խմբավորումների մեթոդները:

Վերլուծություն: 20-րդ դարի սկզբներին Հայաստանում արդյունաբերության ճյուղերից համեմատաբար ամենազարգացածը սննդի արդյունաբերությունն էր: Դա պայմանավորված է հիմնականում երկու գործոնով. նախ՝ այս ճյուղի զարգացումը խոշոր ներդրումներ չի պահանջում և, ապահովում է բարձր շահույթ: Հայաստանի բարձրարժեք խաղողը, մրգերը, այնուհետ նաև բանջարեղենը, հիմք հանդիսացան ստեղծելու գինու, կոնյակի, պահածոների արդյունաբերական՝ այն ժամանակվա համար խոշոր արտադրություններ: Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին Արարատյան դաշտում հիմնվեց կոնյակի գործարանային արտադրություն: Երևանում հիմնվեց Շուստովի կոնյակի և գինու գործարանը, որը

¹ Захарова Г.П., Повышение эффективности мер государственной поддержки сельхозтоваропроизводителей в условиях кризиса, Вестник Казанского государственного аграрного университета, 2015. № 4 (38), с. 16-19

² Сагайдак А.Э., Земельная собственность и рента – М.: Агропромиздат, 1991, 80с.

³ Государственное регулирование сельского хозяйства: В.А. Воробьев, С.А. Константинов, В.Д. Шмыков и др. – Мн.: 1999, 157 с., 31

⁴ Романенко Г. А, Роль аграрной науки в реализации Государственной программы развития сельского хозяйства, Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий. 2010. № 3., с. 13–14

զինված էր իր ժամանակին համապատասխան սարքավորումներով: Գինու և կոնյակի արտադրության արագ զարգացման շնորհիվ արդեն 1913թ.-ին սրա տեսակարար կշիռը արդյունաբերության համախառն արտադրանքում կազմում էր 35.3%: 1913թ.-ին արտադրվել է 188 հազար դեկալիտր գինի և 48 հազար դեկալիտր կոնյակ, ինչպես նաև 1 մլն պայմանական տուփ դեղձի և ծիրանի պահածո¹: Սրանք հիմնականում կոնյակի ու գինու հետ էին արտահանվում, որոնց պահանջարկն արտաքին շուկաներում արագորեն մեծանում էր:

Խորհրդային տարիներին, հետպատերազմյան Հայաստանում սննդի արդյունաբերությունը սկսեց մեծ թափով զարգանալ: Սրա համախառն արտադրանքի կառուցվածքում իրենց տեսակարար կշռով առաջատարը խմիչքներն էին: Հաջորդում էին հացն ու հացաբուլկեղենը, հետո՝ պահածոները, ծխախոտը, հրուշակեղենը, կաթնամթերքը:

Գինեգործության և կոնյակագործության սրընթաց զարգացումը պայմանավորված էր բարձր շահավետությամբ: 1985թ.-ին գինիների արտադրությունը 1940-ի համեմատությամբ ավելացել էր շուրջ 9 անգամ, կոնյակինը՝ 17 անգամ: Հայաստանում արտադրվում էր ԽՍՀՄ կոնյակի գրեթե 25%-ը, գինիների՝ 3%-ը: 1988թ.-ին պահածոների արտադրությանը բաժին էր ընկնում սննդի արդյունաբերության ճյուղի համախառն արտադրանքի 10%-ը: Հայաստանի բաժինը ԽՍՀՄ պահածոների արտադրության մեջ կազմում էր 2,3%: Հայաստանում արտադրված պահածոների 75%-ն արտահանվում էր միության մյուս հանրապետություններ:

Գրեթե 150 տարի է, որ Հայաստանում արդյունաբերական մակարդակի են կոնյակագործությունն ու գինեգործությունը: Ահավասիք. 2010թ.-ին հանրապետությունից արտահանվել է 25,4 հազար տոննա կոնյակ²: Նույն տարում արտահանվել է 1,6 հազար տոննա գինի: 2018թ.-ին կոնյակի արտահանման ծավալները կազմել են 73,5 հազար տոննա, գինունը՝ 4,8: 2020թ.-ին արտահանվել է 202,5 հազար տոննա կոնյակ, 2021թ.-ին՝ 99,3 հազար տոննա: Անցած տարի արտահանվել է 5,4 հազար տոննա գինի: Փաստորեն, արտահանման ծավալները կայունորեն աճում են:

Արտահանման թվերն էլ, իրավիճակն էլ փաստում են՝ վերջին տասնամյակում գինեգործությունը Հայաստանում օրինաչափորեն վերելք է ապրում: Այս տարիներին առաջացան ընկերություններ, որոնք սկսեցին բարձրակարգ գինիներ արտադրել, հիմնելով իրենց սեփական խաղողագործական սնտեսությունները: ԽՍՀՄ-ում գինեգործությունն ուղղված էր աղանդերային թնդեցված գինիների արտադրությանը, որոնք մեծ շուկա ունեին: Այսօրվա աշխարհում գործում է գինու մոդա, որը վերջին տարիներին ինտենսիվորեն փոխվում է (սրա կենտրոնը ոչ պաշտոնապես համարվում են Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ-ը): Ոչ վաղ անցյալում աշխարհում առավելապես պահանջված էին սեղանի կարմիր գինիները, այս փուլում՝ մեծանում է սպիտակ գինիների պահանջարկը: Նախկին-

¹ Գ. Սվազյան, Հայաստան 1920-1990թթ. էջ 228

² <https://www.armstat.am/am/?nid=82&id=1252>

նում իրացման 80/20 հարաբերակցությունն էր՝ ի օգուտ կարմիրի, հիմա այն 70/30 է: Վերջին 4-5 տարիներին մեծացել է վարդագույն գինիների պահանջարկը: Աշխարհում գինեգործության մեջ գոյություն ունի նորաձևություն, կան հին աշխարհի գինիներ. Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Պորտուգալիա: Նոր աշխարհի գինիներ. Չիլի, Արգենտինա, Ավստրալիա, Գալիֆորնիա և այլն: Հայաստանի ուղղվածությունը գինեգործության առումով արորիզեց հայկական սորտերի օգտագործումն է գինեգործության մեջ: Հիմա աշխարհում գինու հետաքրքրություն կա այն երկրների հանդեպ, որոնք հանդիսանում են խաղողի և գինու հայրենիք. Հայաստան, Վրաստան, Ռումինիա և այլն: Այս տեղերում ստեղծվող գինիները վերջին տարիներին, պայմանավորված նոր համերով, լուրջ հետաքրքրություն են առաջացրել: Ազդել է նաև այն հանգամանքը, որ փոխվել է սպառողների կոնյունկտուրան: Ի տարբերություն նախկինի, սպառողների շուկան էապես երիտասարդացել է, տեղավորվելով 22-ից 43-44 տարեկանների միջակայքում: Այս տարիքային միջակայքը նորությունների կողմնակից է: Շուկայի զարգացումների առումով այս մոտեցումը Հայաստանում ևս նկատվում է: Հասկանալի է, որ հայկական խաղողը նոր չէ, բայց վերջին տարիներին սրանից ստացվող գինիների բազմազանությունը որոշակիորեն նոր է ու պահանջարկված: Սա կարևոր գործոն է, որի վրա հետագա տարիներին պետք է կառուցել մեր գինեգործության զարգացումը: Այսօր մեր արտադրած տեխնիկական խաղողի 80%-ը բաժին է ընկնում կոնյակի արտադրությանը: Գինեգործությանը մնում է 20%, այն էլ պետք է շատ բարձրորակ խաղող, որպեսզի գինի պատրաստվի: Կառավարության մոտեցումը մեր գինիները ցուցահանդեսներում և այլ կերպ ակտիվորեն գովազդելու առումով լավ է, բայց և «վտանգավոր», որովհետև աստիճանաբար բարձրանում է հայկական գինու պահանջարկը, մինչդեռ Հայաստանը չունի լուրջ քանակություններ այն բավարարելու համար: Հետևաբար, եթե ուզում ենք, որ մեր գինեգործությունը զարգանա, պետք է հստակ ծրագրավորված, ժամանակակից խաղողագործություն ունենալ, հաշվի առնելով նաև բնակլիմայական փոփոխությունները, որ վերջին փուլում բավականին ակտիվորեն տեղի են ունենում: Հասկանալի է դառնում, որ Արարատյան դաշտում խաղողագործությունը հեռանկարային չէ: Այստեղ ստացվող խաղողի որակը լիովին չի համապատասխանում գինեգործության պահանջներին: Հետևաբար, մեզանում պետք է ավելի շատ զարգանա տեղանքային գինեգործությունը: Պետք է լինեն փոքր արտադրողներ, որոնք կարտադրեն քիչ քանակությամբ, բայց բարձրորակ գինիներ: Այդպես, որովհետև մեր արտադրության ծավալները փոքր են, ինքնարժեքը բարձր է և այդ առումով անմրցունակ, իսկ մենք իրավունք չունենք միջին որակի գինի արտադրելու, որովհետև չենք կարողանա մրցունակ լինել միջինից ցածր գնային սեգմենտում: Այնինչ, հատկապես ռուսական շուկայում իրացվող մեր գինիների զգալի մասը էժան ու միջին գնային սեգմենտում է: Հետևաբար, պարտադրված ենք բարձրորակ գինիներով մտնել միջինից բարձր գնային սեգմենտ: Սակայն, դրա համար ունենք որակյալ խաղողի մեծ խնդիր: Ժամանակակից համաշխարհային փորձի տեղայնացում է պետք Հայաստանում, որն էապես տարբերվում է մյուս գինեգործական տարածաշրջաններից իր

ընդգծված կոնտինենտալ կլիմայով, ինչը մի կողմից բերում է շատ բարձր որակի, մյուս կողմից էլ՝ լրացուցիչ ծախսերի: Շատ կարևոր մի գործոն ևս կա: Այն է, որ անհասկանալիորեն, Հայաստանում վերացրին կարանտինը, որը կոպիտ սխալ էր, քանի որ բերեց ֆիլոքսերա վնասատուի մեծ արագությամբ տարածմանը: Կառավարությունը պետք է փորձի կարանտինի կիրառմամբ պահել դեռևս չվարակված տարածքները: Այնինչ կառավարությունն ինքնահոսի է թողել ֆիլոքսերայի տարածումը և որևէ պայքարի միջոցառում գործնականում չի իրականացնում: Տասնամյակներ է, որ հանրապետության հյուսիս-արևելքում ու Արցախում ֆիլոքսերա կա և դա կարելի էր օգտագործել որպես լաբորատորիա: Այդ նպատակով, թեկուզև ուշացումով, այսօր պետք է ուսումնասիրել հայկական արքրիզեն սորտերը և սրանց կայունության աստիճանը ֆիլոքսերայի նկատմամբ, ճշտել, թե որ սորտերն են ավելի կայուն, հասկանալ, թե պատվաստման դեպքում հայկական արքրիզեն սորտերը որ պատվաստակալների վրա իրենց ինչպես կդրսևորեն: Պետք է ուսումնասիրել այս ուղղությամբ համաշխարհային փորձը: Այստեղ էլ գործունեության մեծ դաշտ կա, որով պետք է զբաղվել: Եթե պետությունը նպատակ ունի առաջիկա տարիներին ու տասնամյակներին ևս գինեգործություն, կոնյակագործություն ունենալ, ապա պետք է հնարավորինս արագ ֆիլոքսերայի դեմն առնել: Դրա համար, առաջնահերթ է գոնե կարանտինի վերականգնումը: Հիմա գինեգործ-կոնյակագործների մի մասը հիմնում է ֆրանսիական, իտալական սորտերի խաղողի այգիներ, մյուսները ձգտում են տեղական Ոսկեհատ, Կախեթի, Ռքածիթելի, Կանգուն սորտերի այգիներ հիմնել: Շատ կարևոր է խաղողագործության, գինեգործության և կոնյակագործության համապարփակ, համաչափ զարգացումը: Այլապես այն, ինչ կատարվում է վերջին տարիներին այս ոլորտում, հեռանկարի առումով ոչ մի լավ սպասելիք չի թողնում: Բացի վերոնշյալ հանգամանքներից, վերամշակողներն ու խաղողագործներն այսօր գործում են բոլորովին տարբեր հարթություններում: Այսօր Հայաստանից Ռուսաստան արտահանվող կոնյակը թերևս ամենաանորակն է Հայաստանի կոնյակագործության ամբողջ պատմության ընթացքում: Բացի Երևանի կոնյակի գործարանի արտադրանքից, մյուս արտահանողներից մեծ մասի դեպքում գործ ունենք կեղծված խմիչքի հետ, որը կոնյակ, առավել ևս՝ հայկական կոնյակ համարել չի կարելի: Իրենք՝ արտադրողները, դա չեն ժխտում, բայց և բացատրում են, որ դա ռուս սպառողի պահանջարկի արդյունքն է: Կոնյակի որակի բարձրացման պահանջները կարող են Հայաստանում խաղողագործության զարգացման համար նախադրյալներ ստեղծել: Եթե սկսեն բարձրորակ կոնյակ արտադրել, երկրում ստացվող խաղողի ծավալները չեն բավականացնի: Մա կարող է զարկ տալ խաղողագործությանը, բերքի ծավալները մեծացնելուն ու ծառայեցնելուն կոնյակի արտադրությանը: Բայց սրա համար մեր կառավարությունը պետք է արդյունավետ ծրագրեր մշակի:

Խորհրդային Հայաստանի վերջին տարիներին, մասնավորապես, 1988թ.-ին, հանրապետությունում արտադրվել է ավելի քան 75 հազար տոննա առաջին կարգի միս, 28,5 հազար տոննա երջիկեղեն, 28,2 հազար տոննա պանիր, գրեթե 490 մլն տուփ պահածո, 9,4 մլն գլանակ ծխախոտ, 9,3 մլն դեկալիտր խաղողի

գինի և 1,1 մլն դեկալիտր կոնյակ¹: Սրանք հիմնականում սննդամթերքի այն տեսակներն են, որոնց արտահանման, թեկուզ և, տեսական հնարավորություններ ունեւր Հայաստանի Հանրապետությունը:

Անասնապահական արտադրանքի առումով մեր արտահանման հնարավորությունները, բացի ոչխարի մսից, առայժմ կարելի է ասել զրոյական են այն պարզ պատճառով, որ միայն ոչխարի մսի դեպքում է, որ ՀՀ-ն հիմնականում լիովին ինքնաբավ է եղել: Մնացածի դեպքում ինքնաբավության մակարդակն այնքան էլ բարձր չէ: Իհարկե, վերջին տարիներին ոչ մեծ քանակությամբ տարբեր տեսակների պանիրների արտահանում իրականացվում է: Ընդ որում, վերջին 10 տարիներին, չնայած նրան, որ կովերի գլխաքանակն էապես չի աճել, այդուհանդերձ, պանրի արտահանման ծավալներն ինչ-որ առումով շեշտակիորեն մեծացել են: Ահավասիք. 2007թ.-ին հանրապետությունում արտադրվել է 14,6 հազար տոննա պանիր, որից արտահանվել է 567 տոննա²: 2010թ.-ին արտադրվել է 17 հազար տոննա, որից արտահանվել է 496 տոննա³: 2013թ.-ին արտադրվել է 17,4 հազար տոննա պանիր, արտահանվել է 1,5 հազարը: 2016թ.-ին ունեցել ենք պանրի 22,3 հազար տոննայի արտադրություն, որից 5,5 հազար տոննան է արտահանվել⁴: 2018թ.-ին ունեցել ենք պանրի 4,3 հազար տոննայի արտահանում, 2019թ.-ին՝ 2,15 հազարի, 2020թ.-ին՝ մոտ 3 հազար տոննայի, և 2021-ին՝ ավելի քան 3 հազար տոննայի: Ընդ որում, բոլոր այս տարիներին կաթի արտադրության ծավալներն անկանոն պարբերականությամբ նվազել են: Ահավասիք. 2016թ.-ին արտադրվել է 754 հազար լիտր կաթ, 2018թ.-ին՝ 697 հազար, 2019թ.-ին՝ 668 հազար, 2020-ին՝ 654 և 2021թ.-ին՝ 670 հազար լիտր⁵: Նշենք, որ պանրի արտադրությունն ու արտահանումը Հայաստանում ավանդական է: Նախախորհրդային Հայաստանում, Լոռու տարածաշրջանում պանրի 2 գործարան էր գործում, և այն ժամանակի չափանիշներով որոշակի քանակությամբ պանիր էր արտահանվում: Սովետական շրջանում կային պանրի հազվագյուտ տեսակներ, որոնց ընդհանուր ծավալում Հայաստանի մասնաբաժինը բավականին մեծ էր՝ մի քանի տասնյակ տոկոս:

Այս փուլում պանրի արտահանման ծավալների մեծացման առումով հնարավորությունները մի կողմից մեծանում են, քանի որ պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմով ամբողջ արևմտյան աշխարհը խզել է հարաբերությունները ՌԴ-ի հետ: Հիմա, ու թերևս առաջիկա տարիներին ևս, Ռուսաստանը ամեն տեսակի սննդամթերքի մեծ պահանջարկ է ունենալու: Այդ տեսանկյունից Հայաստանը զարգացումները ճիշտ օգտագործելու դեպքում

¹ Գ. Ավագյան, Հայաստանը 1920-1990թթ.. էջ 228-235

² https://www.armstat.am/file/article/sv_12_07a_121.pdf

https://www.armstat.am/file/article/ft_4nish_07_1.pdf

³ https://www.armstat.am/file/article/sv_12_10a_121.pdf

⁴ https://www.armstat.am/file/article/ft_4nish_11_1.pdf

⁵ https://armstat.am/file/article/sv_11_17a_121.pdf

⁶ https://armstat.am/file/article/sv_10_21a_121.pdf

կարող է այդ պահանջարկի մի փոքր մասն իր արտադրանքով լցնել: Բայց, ինչպես ցույց տրվեց, վերջին տարիներին ՀՀ-ում արտադրվող կաթի ծավալները նվազում են: Մյուս կողմից էլ, 2020թ.-ի արցախյան պատերազմի հետևանքով հայկական կողմը կորցրել է բավականին լուրջ մակերեսներով արոտավայրեր, ինչը բացասաբար է անդրադառնալու անասնազլխաքանակի աճի վրա: Այդուհանդերձ, մասնագետների գնահատմամբ հանրապետությունում եղած շուրջ 1 մլն հա արոտավայրերի վիճակի բարելավման ու ճիշտ օգտագործման դեպքում հնարավոր է անասնազլխաքանակի ավելացում: Արոտավայրերի վիճակի բարելավումը կառավարության գործառույթների շրջանակում է:

Ինչ վերաբերում է անասնապահական մյուս մթերքների թարմ կամ վերամշակված վիճակում արտահանման հնարավորություններին. Հայաստանի արտաքին առևտրի պատմությունն ու այսօրվա վիճակագրությունը փաստում են, որ այս ոլորտում առայժմ որևէ պոտենցիալ չունենք:

Հանրապետության եղած հեռանկարները բուսաբուծության ոլորտում են, առավելապես՝ պտղաբուծության և խաղողագործության: Բայց ունենք տոմատի մածուկի օրինակը, ինչը ցույց է տալիս, որ ոլորտում ճիշտ քաղաքականության իրականացման դեպքում հնարավոր են արտահանման նոր լուրջ տարբերակներ: 2000-ականների սկզբներին խորհրդատվական-մասնագիտական ընկերությունները Հայաստանի համար հաշվարկներ էին կատարել, համաձայն որոնց ՀՀ-ում տոմատի մածուկի արտադրական կարողությունները տեղական սպառումը գերազանցում են 38 անգամ, մրգի խտանյութինը՝ 26, խնձորի հյութինը՝ 15 անգամ: Դրանից ելնելով էլ առաջարկվում էր, որ մեր գործարանները իրենց բիզնես-ծրագրերը կազմեն ելնելով արտաքին շուկայից: Փաստորեն, ներքին շուկան հագեցած է այդ (և ոչ միայն այդ) ապրանքատեսակներով, հումքի խնդիր չկա և պահանջարկի մեծացման դեպքում հնարավոր է շեշտակի ավելացնել արտադրության ծավալները: Այդ պարագայում սահմանափակող միակ գործոնը արտաքին շուկաների պահանջարկն է: Բայց արտաքին շուկայի առումով էլ խնդիր չկա, որովհետև այդ արտադրատեսակներից միայն Եվրամիությունը տարեկան ներմուծում է տարեկան ավելի քան 600 մլն ԱՄՆ դոլարի ապրանք, գումարած՝ Միջին և Մերձավոր Արևելքի շուկաները, որտեղ այդ պահանջարկն անցնում է 100 մլն-ի սահմանագիծը: Մրանցից գատ, կային ու կան նաև ամերիկյան և թերևս աշխարհի ամենատարողունակ ու մեզ համար ամենամատչելի՝ ռուսական շուկան, որի ուղղությամբ, ցավոք, մինչ օրս լուրջ ուսումնասիրություններ չեն արվել:

Հաշվի առնելով, որ Հայաստանը պոտենցիալ մրցունակ է Եվրոպական շուկաներում, իսկ արտադրական կարողությունները գործում են ընդամենը 20%-ի չափով, տրամաբանական էր, որ ՀՀ-ն արտաքին շուկայում կկարողանար գրավել որոշակի դիրք: Եթե մեզանում կրկնապատկվեր արտադրանքը և լրացուցիչ արտադրանք արտահանվեր Եվրամիություն, ապա հայ գործարարներն ի վիճակի էին գրավելու լուրջ մածուկի շուկայի 5%-ը, ծիրանի խյուսի խտանյութի 15%-ը, խնձորի հյութի խտանյութի 0,5%-ը: Դա հնարավոր էր տեսականորեն: Ինչ տեղի ունեցավ իրականում: 1999թ.-ին Հայաստանի Հանրապետությունը

արտահանել է 9163 տոննա տոմատի մածուկ (Հայաստանում արտադրվում է 24 բրիքս լոլիկի մածուկ (24% պինդ նյութ եւ 76% ջուր), կա՛մ անմիջապես լոլիկից, կա՛մ լոլիկի մածուկի խտանյութից): Սա բավականին լուրջ թիվ է: Մինչդեռ 2000-ականների սկզբներից լոլիկի մածուկի արտահանման ծավալները սկսեցին անկում արձանագրել. 2003թ.-ին արտահանվեց 6800 տոննա¹, 2004-ին՝ 6670², 2005թ.-ին՝ 7140³, 2006-ին՝ 4550⁴, 2007թ.-ին՝ 4850⁵, 2008թ.-ին՝ գրեթե 2700⁶, 2009-ին արդեն 850 տոննա, 2010-ին՝ 260 տոննա տոմատի մածուկ⁷: Փաստացի, հայաստանյան ընկերությունները և՛ դրսում, և՛ ներսում իրենց արտադրություններն ընդարձակելու լուրջ հնարավորություններ ունեին, բայց տարեցտարի նվազեցնելով արտահանման ծավալները դուրս մղվեցին շուկայից: Դա տեղի ունեցավ բոլորովին էլ ոչ շուկայական մրցակցությանը չդիմանալու պատճառով, այլ Հայաստանում այդ ոլորտում ներքին հակասությունների արդյունքում: Տոմատ արտադրող հայկական ընկերությունները վարկային ֆինանսավորման լուրջ կարիք ունեին ու երկու-երեք տարի չկարողացան պետությունից ստանալ վարկային ֆինանսավորում և մեծածավալ արտադրություն կազմակերպել: Մինչդեռ նույն ռուսական շուկան պարզապես կլանում էր հայկական արտադրության լոլիկի մածուկը: Հետաքրքիրն այն է, որ դեռ կոմունիստական հասարակարգի օրոք Ռուսաստանի ձկնարդյունաբերության նախարարներից մեկը ներքին հրաման էր իջեցրել ձկան պահածո արտադրող գործարաններին, համաձայն որի ՌԴ-ում տոմատի մածուկով արտադրվող այդ պահածոները պետք է պատրաստվեն միայն հայկական տոմատով, քանի որ սա առանձնանում էր իր խիստ բարձր որակով: Մոսկվայում գործող Հայաստանի ներկայացուցիչներն էլ այդ հրամանը հետագայում օգտագործում էին որպես հայկական տոմատի գովազդ: Հասկանալի է, որ դա չէր մեծ պահանջարկի պատճառը, բայց պայմանները նպաստավոր էին: Բայց արտահանմանը վերաբերող ցուցանիշները փաստում են, որ 2010թ.-ին արդեն մեր տոմատը շուկայից լիովին դուրս էր մղվել: Վերջին մի քանի տարիներին նորից էապես աճել են տոմատի մածուկի արտահանման ծավալները, 2021թ.-ին գերազանցելով 5 հազար տոննայի սահմանագիծը (2020թ.-ին՝ 4.5 հազարի), բայց դա տեղի է ունենում դրսի հումքի, առավելապես ԻԻՀ-ից ավելի նոսր տոմատի հյութի ներկրման, մեր հումքով՝ հարստացման ու արտահանման տարբերակով: Այսկերպ, իհարկե, մեր ընկերությունները դրսի տոմատի շուկայում որոշակի տարածք զբաղեցնում են, ինչը լավ է, բայց, քանի որ լոլիկի մշակության ծավալները տարեցտարի նվազում են, սրանից ստացվող բերքը ևս նվազում է: Քանի որ վերջին տարիներին հանրապետությունում հա-

¹ https://www.armstat.am/file/article/2_zb_iy_nish.pdf

² https://www.armstat.am/file/article/tradear_4.pdf

³ https://www.armstat.am/file/article/4_nish_1.pdf

⁴ https://www.armstat.am/file/article/4_nish_07_1.pdf

⁵ https://www.armstat.am/file/article/ft_4nish_07_1.pdf

⁶ https://www.armstat.am/file/article/ft_4nish_08_1.pdf

⁷ https://www.armstat.am/file/article/ft_4nish_11_1.pdf

րավամերիկյան ցեց վնասատուն է տարածվել ու մինչ օրս դրա դեմ արդյունավետ պայքարի միջոցները չեն գտել, դա մեծապես ազդում է լուրջի բերքի որակի վրա, հետևաբար տեղական արտադրության տոմատի ծավալների աճի հավանականությունը չի մեծանում: Մինչև 2000թ.-ը Հայաստանում լուրջ էր մշակվում ավելի քան 7 հազար հա-ի վրա, վերջին տվյալներով լուրջ մշակվում է 4,7 հազար հա-ի վրա:

Աշխարհում, այսօր բացի լուրջի մածուկից մեծ է մրգերի և նեկտարների պահանջարկը: Հայաստանում տեղական հումքի բազայի վրա արտադրվում են խնձորի, ծիրանի, դեղձի, բալի, մասուրի, նարնջի ու մանգոյի հյութեր՝ ներմուծված խտանյութերից: Հանրապետությունում խնձորի, ծիրանի, դեղձի, բալի հյութերի արտադրության համար բազան, կարելի է ասել, անսպառ է: Հյութերի արտադրության համար հումքի ապրանքային տեսքի բարձր լինելը պարտադիր չէ: Մեզանում արտադրված գյուղմթերքի ավելի քան 30%-ի ապրանքային տեսքը չի բավարարում անգամ ներքին շուկայի ցածր սեգմենտի պահանջարկները: Հետևաբար, այն պետք է վերամշակվի: Եթե ելնենք այն հանգամանքից, որ 2020թ.-ին արտադրվել է պտղի ու հատապտղի 255 հազար տոննա համախառն բերք¹, ապա նույնիսկ սրա 20%-ի դեպքում ստացվում է ավելի քան 50 հազար տոննա հումք, որից հնարավոր է ստանալ նվազագույնը 20 մլն լիտր մրգախյուս, որ «բացված» վիճակում կարող է հասնել ավելի քան 40 մլն լիտր մրգախյութի: Մինչդեռ 2020-ին հանրապետությունում արտադրվել է 11,8 մլն լիտր մրգախյութ, 2021թ.-ին՝ 15,2 մլն լիտր: Նախորդ տարիների ցուցանիշները ևս 11-12 մլնի շրջանակներում են: Նույն 2021թ.-ին հանրապետությունից արտահանվել է 5579 տոննա մրգախյութ (ներկրվել է 4,4 հազար տոննա): Փաստացի, այս փուլում Հայաստանն օգտագործում է իր պոտենցիալ հնարավորությունների 30-40%-ը: Մինչդեռ հարյուրավոր տոննաներով խնձոր, դեղձ, ծիրան է փչանում և չեն կարողանում իրացնել, որովհետև վերամշակողները մթերումներն իրականացում են անհատ միջոտրոնների միջոցով, որոնք գերշահույթով տարված, գյուղացուն գնման այնպիսի գներ են առաջարկում, որի դեպքում արտադրողը բերքահավաքի վրա ավելի շատ ծախս է անում, քան ստացվելիք եկամուտն է: Մյուս կողմից, իհարկե, շուկան գերհագեցած է և իրացման խնդիր կա: Բայց գոնե այս փուլում և առաջիկա տարիների համար ռուսական շուկան «դատարկվել» է ու հայ արտահանողների առաջ բազում դռներ են բացվել նաև այս ուղղությամբ: Այդուհանդերձ, մեր արտադրողների կողմից այս օրերին որևէ ակտիվություն չի զգացվում, մթերումների ծավալների մեծացման միտումներ ընդհանրապես չեն դրսևորվում:

ԽՍՀՄ փլուզումով հայկական մրգերի արտահանման շուկան խիստ փոքրացավ: Իհարկե, կա ռուսական հսկայական շուկան, որտեղ առկա է հայկական մրգի պահանջարկ, բայց այն մասամբ լցվել է այլ երկրների գյուղմթերքով: Մյուս կողմից, կապված տնտեսական դժվարությունների հետ, ԱՊՀ շուկաներում գնողունակությունը ցածր է, հետևաբար՝ իրացման գները ևս ցածր են: Այս պայ-

¹ https://www.armstat.am/file/article/29_gt_2020.pdf

մաններում, որպես լավագույն այլընտրանք հանդես է գալիս չրարտադրությունը: Ամենապարզ հաշվարկներով, նույնիսկ ամենաբարձրորակ թարմ միրգը չրի վերածելիս ավելի մեծ ավելացված արժեք է գոյանում, քան եթե այն իրացվեր թարմ վիճակում: Բացի այդ, չիրը շուտ չի փչանում, կարելի է երկար ժամանակ պահել առանց լրացուցիչ ծախսերի: Այն քաշային և ծավալային առումով մի քանի անգամ զիջում է թարմ մրգերին, ու դրանց համեմատ, սրա տեղափոխման հնարավորություններն անհամեմատ մեծ են: Ի տարբերություն թարմ մրգերի, չիրը հնարավոր է արտահանել ողջ տարին: Նշյալ գործոնները բավարար են չրարտադրության ծավալները շեշտակի զարգացնելու համար: Հատկապես, որ սա Հայաստանի համար ավանդական է պատրաստման և, վերջին ավելի քան հարյուր տարիներին, նաև իրացման առումով: Բնականաբար, դրանց մշակության հիմնական արեալը Արարատյան դաշտն է, որտեղ վերջին տարիներին իրացման անհնարինության պատճառով երբեմն հազարավոր տոննաներով ծիրան ու դեղձ, խնձոր է մնում դաշտերում: Մինչդեռ, Թուրքիան վերջին 1-2 տասնամյակում Իրանից գնում էր ցածրորակ միրգ և օգտագործում որպես չրի հումք՝ դրանով ողողելով աշխարհի շուկաները: Հիմա Իրանը պետականորեն արգելել է իր անորակ միրգը արտահանել Թուրքիա: Ի վերջո, համաշխարհային շուկայում միայն super ապրանք չէ, որ իրացվում է: Հայկական բանակը, ռուսականի մի քանի ստորաբաժանում, բավական են Հայաստանում արտադրված միջին որակի ու անգամ ցածրորակ ամբողջ արտադրանքն իրացնելու համար: 1999թ.-ին, Մոսկվայում կայացած ցուցահանդեսներից մեկի ժամանակ, քաղաքային իշխանության ներկայացուցիչները մեր կառավարության ներկայացուցիչներին առաջարկել են գնել ամիսը 10 տ. միջին որակի չիր մանկատների ու ծերանոցների համար: Դրա կես հնարավորությունն անգամ չենք ունեցել: Այսօր էլ, չնայած արտադրության ծավալների էական աճին, հանրապետությունում չի գտնվի մի ընկերություն, որն ի վիճակի կլինի որոշակի ժամանակային միջակայքում 100 տոննա արտահանում իրականացնելու:

Թեև վերջին տարիներին այս ոլորտում ուսումնասիրություններ չեն իրականացվել, բայց վստահությամբ կարելի է պնդել, որ ինչպես և 20 տարի առաջ, այսօր էլ, Հայաստանում արտադրված չրի մոտ 90%-ը բաժին է ընկնում անհատ գյուղացիներին, և վերամշակումը հիմնականում կատարվում է տնային պայմաններում: Հասկանալիորեն, նաև ժամանակակից չրանոցների օգտագործմամբ, յուրաքանչյուրը տարեկան արտադրում է մի քանի տասնյակ կգ-ից մինչև մի քանի տասնյակ տոննա չիր: Հասկանալի է, որ չրանոցների կառուցման համար հատուկ սարքավորումներ և մեծ ծախսեր պետք չեն: Միակ տեխնոլոգիան արևային չորացումն է: Թուրքիայում, որը համարվում է աշխարհում ծիրանի չրի ամենամեծ արտադրողն ու արտահանողը, մրգի չորացում-չրացումը կատարվում է հիմնականում բաց երկնքի տակ: Նույնը՝ Կալիֆոռնիայում: Հայաստանում այս գործում կան խիստ մասնագիտացած գյուղեր Արտաշատի և Աշտարակի տարածաշրջաններում: Արտաշատի Արևշատ գյուղում, մեր դիտարկումներով, տարեկան արտադրվում է շուրջ 500-600 տոննայից ավելի չիր: Արմավիրում անհատ ձեռներեց կա, որ արտադրում է 60-70 տոննա ու վերջին տարի-

ներին տարեկան տասնյակ տոննաներով ավելացնում է արտադրության ծավալները: Նախկինում մեր չիր արտադրողները ֆինանսական խնդիրներ ունեին: Գյուղացուց ապրանքը գնելիս հարկավոր էր ունենալ գումար, որ տեղում, անմիջապես վճարվեր ապրանքի դիմաց, ինչն ավելի հաճախ չէր արվում: Վերջին 5-6 տարիներին այդ խնդիրը կարելի էր ասել բավականին լավ լուծվել է: Բանկերը մատչելի տոկոսադրույքներով վարկեր են տրամադրում: Պետական մարմիններն աջակցում են ընկերություններին՝ հնարավորություն տալով առանց մեծ ծախսերի մասնակցել Ռուսաստանում և արտասահմանում կազմակերպվող ցուցահանդեսներին: Դրանցում հաճախ հայկական ապրանքը բավարարում է օտարերկրացի գործարարների պահանջները: Սկսում են բանակցությունները և գրեթե բոլոր դեպքերում ավատվում է նրանով, որ մեր ունցած ծավալները չեն բավարարում: Ավելին, վերջին երկու-երեք տարիներին, արդեն հունվար ամսից սկսած, չրերի արտահանմամբ զբաղվող անհատները ընդունված գներից 20-30%-ով թանկ չիր չեն կարողանում գտնել: Մինչդեռ Հայաստանում չրի արտադրական կարողությունները բավական մեծ են: Կա հումքի մեծ պաշար: Հումքային հնարավորությունները տասնապատիկ գերազանցում են արտադրական կարողությունները: Ոլորտը բավականին առաջընթաց տեմպերով զարգանում է: Մի քանի տարի առաջ կատարված վերջին ուսումնասիրություններից մեկի արդյունքներով, երկրում գործում էր չրերի մոտ 5500 արտադրող, որոնցից 5400-ը տարեկան մինչև 1 տոննա արտադրողներ են, 100-ը՝ 1-ից 5 տոննա և 21-ը՝ 5 տոննայից ավելի: Հիմա այդ թվերը բազմապատիկ ավելացել են: Այդուհանդերձ, հայ արտադրողները դեռևս ի վիճակի չեն անհատապես շարունակ մատակարարել պահանջվող մեծ ծավալները: Թերևս նաև պահանջարկը բավարարել չկարողանալն է բերել նրան, որ այս ոլորտում զբաղվողներից որոշները թուրքական արտադրության չրերը խառնում են հայկականին և իրացնում որպես հայկական: Մրանց արտաքին ու համային տարբերությունները մեծ չեն և դրանք զանազանելը բավականին դժվար է: Մինչդեռ, թուրքականի մեկ կգ-ի ինքնարժեքը միջինում գրեթե եռակի անգամ էժան է հայկականից: Շատերը, ներկրելով թուրքականը, այստեղ խառնում են հայկական արտադրության չրերին և արտահանում՝ որպես հայկական: Սա էապես ազդում է Հայաստանում չրարտադրության վրա: Բայց մի դրական պահ կա այն առումով, որ Թուրքիան ավելի շատ ծիրանի չիր է արտադրում, իսկ Հայաստանի արտահանած ծավալներում ծիրանի չիրն ամենաքիչն է:

Գիտական նորույթ: Ագրոպարենային արտադրանքի արտահանման խթանման նպատակով վերլուծվել են ագրոպարենային համալիրի հիմնական ճյուղերը, հիմնավորվել է ոլորտում փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնք կարող են նպաստել արտահանման ծավալների զգալի ընդլայնմանը:

Եզրակացություններ և առաջարկություններ: Կան ոլորտներ, որոնք Հայաստանում ավանդական են ու շուրջ 150 տարվա արդյունաբերության զարգացման պատմություն ունեն: Նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային Հայաստանում սրանք մեր տնտեսության մեջ լուրջ մասնաբաժին են ունեցել: Պայմանավորված Ռուսաստան-Արևմուտք առճակատումամբ, Ռուսաստանի

նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ բացվել են արտահանման լայն հնարավորություններ ՀՀ ագրոպարենային արտադրանքի արտահանման ընդլայնման ուղղությամբ: Արտահանման հիմնական քաշող ճյուղեր կարող են հանդիսանալ կոնյակագործությունը և գինեգործությունը, պանրագործությունն ու չրարտադրությունը, ինչպես նաև տոմատի մածուկի արտադրությունը: Նշված ճյուղերի զարգացման և արտահանման ծավալների ավելացման համար անհրաժեշտ է, որ գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունները կառավարության կողմից ընդունվել, հաստատվելուց հետո նաև կյանքի կոչվեն, ինչպես նաև կառավարությունը կարողանա գյուղատնտեսությանն ապահովել ռոտզման ջրով, բույսերի պաշտպանության նպատակով անհրաժեշտ քիմիկատներով, պարարտանյութերով և այլն: Միայն ոլորտում հետևողական և շարունակական փոփոխությունների շնորհիվ հնարավոր կլինի հասնել արտահանման ծավալների ավելացման:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ադոնց Մ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան: [ՀՍՍՀ ԳԱ հրատ.](#), 1968, 496 էջ
2. Ավագյան Գ., Հայաստանը 1920-1990թթ., (Տնտեսաաշխարհագրական ակնարկ), Երևան, Ոսկան Երևանցի 1997, 418էջ
3. Ավետիսյան Մ., Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Երևան, Լիմուշ հրատարակչություն, 2010, 233 էջ,
4. «Բի Էս ՄԻ» Բիզնեսի Աջակցման Կենտրոնն «Օբսֆամ» բրիտանական կազմակերպության հետ համատեղ 2012 թվականին ուսումնասիրել է Հայաստանում չրարտադրության միտումները, <https://armenpress.am/arm/news/706106>
5. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007, 2013, 2016, 2019-2021
6. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, ՀՀ արտաքին առևտուրը 2010 թվականին , <https://www.armstat.am/am/?nid=82&id=1252>
7. Государственное регулирование сельского хозяйства, В.А. Воробьев, С.А. Константинов, В.Д. Шмыков и др. – Мн.: 1999,157 с., 31
8. Захарова Г.П., Повышение эффективности мер государственной поддержки сельхозтоваропроизводителей в условиях кризиса, Вестник Казанского государственного аграрного университета, 2015. № 4 (38), 157 с. 16-19
9. Романенко Г. А, Роль аграрной науки в реализации Государственной программы развития сельского хозяйства, Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий. 2010. № 3, с.13–14
10. Сагайдак А.Э., Земельная собственность и рента – М.: Агропромиздат, 1991, 80с.
11. <https://www.armstat.am/am/?nid=82&id=1252>
12. https://www.armstat.am/file/article/sv_12_07a_121.pdf
13. https://www.armstat.am/file/article/ft_4nish_07_1.pdf
14. https://www.armstat.am/file/article/sv_12_10a_121.pdf
15. https://www.armstat.am/file/article/ft_4nish_11_1.pdf

16. https://www.armstat.am/file/article/2_zb_iy_nish.pdf
17. https://www.armstat.am/file/article/tradear_4.pdf
18. https://www.armstat.am/file/article/4_nish_1.pdf
19. https://www.armstat.am/file/article/4_nish_07_1.pdf
20. https://www.armstat.am/file/article/ft_4nish_07_1.pdf
21. https://www.armstat.am/file/article/ft_4nish_08_1.pdf
22. https://www.armstat.am/file/article/ft_4nish_11_1.pdf
23. https://www.armstat.am/file/article/29_gt_2020.pdf

References

1. Adonc M., Hayastani jhoghovrdakan tntesowt'yowny' & hay tntesagitakan mitqy' XX dari skzbin, Er&an: HSSH GA hrat., 1968, 496 e'j
2. Avagyan G., Hayastany' 1920-1990t't'.,(Tntesaashxarhagrakan aknark), Er&an, Oskan Er&anci 1997, 418e'j
3. Avetisyan S., Hayastani gyowghatntesowt'yowny' & agroveramshakowmy', Er&an, Limowsh hratarakchownt'yown, 2010, 233 e'j,
4. «Bi E's SI» Biznesi Ajakcman Kentronn «O'qsfam» britanakan kazmakerpowt'yan het hamategh 2012 t'vakanin owsowmnasirel e' Hayastanowm chrartadrowt'yan mitowmnery', <https://armenpress.am/arm/news/706106>
5. Hayastani Hanrapetowt'yan vitwakagrakan komite, Hayastani vitwakagrakan taregirq 2007, 2013, 2016, 2019-2021
6. Hayastani Hanrapetowt'yan vitwakagrakan komite, NH artaqin ar'&towry' 2010 t'vakanin
7. Государственное регулирование сельского хозяйства, В.А. Воробьев, С.А. Константинов, В.Д. Шмыков и др. – Мн.: 1999,157 с., 31
8. Захарова Г.П., Повышение эффективности мер государственной поддержки сельхозтоваропроизводителей в условиях кризиса, Вестник Казанского государственного аграрного университета, 2015. № 4 (38), 157 с. 16-19
9. Романенко Г. А, Роль аграрной науки в реализации Государственной программы развития сельского хозяйства, Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий. 2010. № 3, с.13–14
10. Сагайдак А.Э., Земельная собственность и рента – М.: Агропромиздат, 1991, 80с.

ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշոտ Խաչատուրի Մարկոսյան Աշոտ Պողոսի Խաչատրյան

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվել է ագրոպարենային համալիրի վիճակը, որոշ համեմատություններով նախախորհրդային և խորհրդային շրջանի հետ: Դա արվել է այն նկատառումով, որ պէսզի պատմական փաստերով ներկայացվեն մեր երկրի տնտեսության համար, նաև արտահանման տեսակետից,

հեռանկարային ոլորտները. գինեգործությունն ու կոնյակագործությունը, ջրարտադրությունը, հյուրերի արտադրությունը, լուսիկի մածուկի և պանրի արտադրությունը:

Հողվածի արդիականությունը: Ռուսական շուկան, ելնելով համաշխարհային զարգացումներից ստեղծված իրավիճակից, կարիք ունի թարմ և մշակված սննդամթերքի մեծ քանակությունների: Հայաստանի գյուղատնտեսությունը դրանց ոչ մեծ մասի պահանջարկը բավարարելու լուրջ պոտենցիալ ունի, պարզապես կառավարման, լոգիստիկ, մարկետինգային հարցերում լուրջ բացթողումներ ունենք, որ շատ արագ պետք է շտկվեն: Գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը ևս պետք է վերանայվի, որպեսզի թե՛ արտահանման առումով, և թե՛ մեզ անհրաժեշտ սննդի ներկրման առումով թիրախները ճիշտ ընտրվեն: Համաշխարհային տնտեսությունն այժմ շրջադարձային փուլում է, և թիրախների ճիշտ ընտրությունը կարող է լավ հեռանկարներ բացել արտահանման առումով: Ուստի այս համատեքստում կարևորվում է ագրոպարենային արտադրանքի արտահանման խթանման մեխանիզմների բացահայտումը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիականությունը:**

Հետազոտության **նպատակը** ագրոպարենային արտադրանքի արտահանման ոլորտի հիմնախնդիրների բացահայտումն է, որի համար ուսումնասիրվել են արտահանման հնարավորությունները, ինչն էլ քննության է առնվել տնտեսական զարգացման տարբեր տեսանկյուններից:

Մեթոդաբանություն: Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են պատմական, համակարգային, նկարագրական, համեմատական վերլուծությունների, տնտեսավիճակագրական խմբավորումների մեթոդները:

Գիտական նորույթ: Ագրոպարենային արտադրանքի արտահանման խթանման նպատակով վերլուծվել են ագրոպարենային համալիրի հիմնական ճյուղերը, հիմնավորվել է ոլորտում փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնք կարող են նպաստել արտահանման ծավալների զգալի ընդլայնմանը:

Պայմանավորված Ռուսաստան-Արևմուտք առճակատում, Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ բացվել են արտահանման լայն հնարավորություններ ՀՀ ագրոպարենային արտադրանքի արտահանման ընդլայնման ուղղությամբ: Եվ միայն կառավարության կողմից ոլորտում հետևողական և շարունակական փոփոխությունների շնորհիվ հնարավոր կլինի հասնել արտահանման ծավալների ավելացման:

Բանալի բառեր: Արտահանում, ագրովերամշակում, ագրոպարենային համալիր, գինեգործություն, կոնյակագործություն, պահածոյագործություն, ջրարտադրություն, խաղող, ֆիլոքսերա, շուկա:

ПРОБЛЕМЫ ЭКСПОРТА АГРОПРОДОВОЛЬСТВЕННОЙ ПРОДУКЦИИ В АРМЕНИИ

Ашот Хачатурович Маркосян
Ашот Погосович Хачатрян

Аннотация. В статье представлено современное состояние агропродовольственного комплекса, с некоторыми сравнениями с досоветским и советским периодами. Это сделано для того, чтобы с историческими фактами представить перспективные отрасли экономики нашей страны, в том числе и с точки зрения экспорта. Речь идет о производстве вина и коньяка, сухофруктов, соков, томатной пасты, а также - о пчеловодстве и производстве сыров.

Актуальность статьи. Исходя из ситуации, создавшейся из-за глобальных политических изменений, российский рынок нуждается в большом количестве свежих и переработанных продуктов питания. Во тоже самое время, сельское хозяйство Армении имеет хороший потенциал для удовлетворения спроса небольшой части этого рынка, однако у нас есть серьезные упущения в вопросах управления, логистики и маркетинга, нуждающиеся в очень быстром исправлении. Кроме того, должна быть пересмотрена стратегия развития сельского хозяйства с тем, чтобы были правильно определены необходимые нам целевые виды продуктов питания, как с точки зрения экспорта, так и импорта. Мировая экономика находится сейчас на переломном этапе и правильный выбор целей может открыть хорошие перспективы с точки зрения экспорта. Поэтому в данном контексте важно выявить механизмы стимулирования экспорта агропродовольственной продукции, что определяет актуальность нашего исследования.

Цель статьи. Целью исследования является выявление проблем экспорта агропродовольственной продукции, для чего были изучены возможности экспорта, который был рассмотрен с разных позиций экономического развития.

Для сбора информации использовались методы исторического, систематического, описательного, сравнительного анализа и социально-статистической группировки.

Научная новизна: В целях продвижения экспорта агропродовольственной продукции были проанализированы основные отрасли агропродовольственного комплекса, обоснована необходимость изменений в отрасли, что может способствовать значительному расширению объемов экспорта.

В связи с противостоянием России и Запада, применением санкций против России, открылись широкие экспортные возможности в направлении расширения экспорта сельскохозяйственной и пищевой продукции РА. И только за счет последовательных и непрерывных изменений в отрасли со стороны правительства можно будет добиться увеличения объемов экспорта.

Ключевые слова: Экспорт, агропереработка, агропродовольственный комплекс, виноделие, производство коньяка, консервирование, производство сухофруктов, виноград, филлоксера, рынок.

THE PROBLEMS OF AGRI-FOOD PRODUCTS' EXPORT IN ARMENIA

Ashot Khachatur Markosyan
Ashot Poghos Khachatryan

Abstract: The paper considers the current state of agri-food complex, with some comparisons with pre-Soviet and Soviet era. This was done in order to present with the help of historical facts the prospective sectors for the economy of Armenia, also in terms of export. These sectors are: winemaking and brandy production, dry fruits, juices, tomato paste, as well as beekeeping and cheesemaking.

Relevance of the article: Given the situation created due to the current developments in the global market, the Russian market needs large quantities of fresh and processed food products. Agriculture of Armenia has a solid potential to meet a small part of this demand; however, we have serious gaps in management, logistic and marketing issues that should be addressed very quickly. The strategy of agricultural development should also be revised to be able to correctly select the targets both in terms of export and import of the food that we need. The global economy is now in a turning point, and making mistakes is not desirable at all from the point of view of our interests. Therefore, in this context, it is important to identify the mechanisms of promoting the export of agri-food products, which determines the relevance of our research.

The **goal** of the research is to identify the problems of the export of agri-food products, for which the possibilities of export were studied, which was examined from different perspectives of economic development.

The methods of historical, systematic, descriptive, comparative analysis and socio-statistical grouping were used for the collection of information.

Scientific novelty: In order to promote the export of agri-food products, the main branches of the agri-food complex were analyzed, the need for changes in the sector was justified, which can contribute to the significant expansion of export volumes.

Due to confrontation between Russia and the West, with the application of sanctions against Russia, wide export opportunities have been opened in the direction of expanding the export of agricultural and food products of RA. And only due to consistent and continuous changes in the sector by the government, it will be possible to achieve an increase in export volumes.

Keywords: Export, agro-processing, agri-food complex, winemaking, brandy production, canning, dried fruit production, grapes, phylloxera, market.

ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ստեփան Ռաֆիկի Պապիկյան Մանուկ Ռաֆիկի Պապիկյան Լիանուշ Բարսեղի Բարսեղյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Հոդվածը վերաբերում է ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի MX-0 բաժանարարի 800 մետր երկարությամբ ջրանցքի վերականգնման աշխատանքներին: Այդ նպատակով ուսումնասիրել է ջրանցքի և բաժանարարի իրական տեխնիկական վիճակը: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ անհրաժեշտ է ջրանցքը վերականգնել ամբողջությամբ:

Արդիականություն: Ջրախնայողության խնդիրները կարևոր նշանակություն ունեն ՀՀ-ում հողատարածքները ոռոգելու համար: Այս տեսակետից գոյություն ունեցող ջրանցքների ուսումնասիրությունը կարևոր է և արդիական: Կատարվել են ուսումնասիրություններ, որոշվել է ոռոգման համար անհրաժեշտ ջրի քանակը:

Նպատակը և խնդիրները: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Արագածոտնի մարզի Կարբի համայնքի MX-0 բաժանարարի 800 մետր երկարությամբ ջրանցքի վերականգնման հնարավորությունը, որի դեպքում հնարավոր կլինի քիչ կորուստներով ոռոգելի դարձնել 160 հեկտար հողատարածք: Բացահայտել և գնահատել առկա խոչընդոտները, կատարել համապատասխան առաջարկություններ:

Գոյություն ունեցող վիճակը

Վերականգնման ենթակա Կարբի համայնքի բաժանարարը սկիզբ է առնում MX-0 կետից: Այն հիմնականում գտնվում է անմխիթար վիճակում: Ջուրը հոսում է տարբեր ուղղություններով գետնի վրայով: Այնուհետև ջուրն անցնում է ջրատարով, որն ամբողջությամբ ծածկված է եղեգների հաստ շերտով: Բնական վիճակում ոչինչ չի երևում: Սակայն վերլուծելով իրական վիճակը կարելի է եզրակացնել, որ ջրի հսկայական կորուստ կա հիմնականում ֆիլտրացիայի պատճառով: Տեղ-տեղ բաժանարարն անցնում է հողային հունով: 800 մետր երկարության վրա առկա են ինքնաշեն ջրթողներ, միտումնավոր կոտրված հատվածներ, որոնք գտնվում են անմխիթար վիճակում և ենթակա են նորացման:¹

Կարելի է եզրակացնել, որ ջրի ոչ նորմատիվային հոսակորուստը կազմում է 48 տոկոս: Վիճակն ավելի ծանր է հատկապես ջրատարի վերջնամասում, որտեղ ջուրն անարգել դուրս է եկել ջրատարից և հոսում է դեպի գրունտային ճանապարհ:

Բնակյալական պայմանները

Քասախ գետի ձախափնյա հատվածում գտնվող Կարբի համայնքի մասնա-

¹ Khachatryan E.H., Khachatryan A.E., Risk management of water distribution system in Armenia.// E3SWeb of Conferences Volume 97 05020 (2019), XXII International Scientific Conference

վոր տնտեսությունների մրգատու այգիների հողատարածքների ոռոգման համակարգի ջրաժան կառուցվածքից MX-0 դեպի հարավ-արևմուտք գնացող մոտ 800 մետր երկարությամբ ջրատարի տեղամասում տարածված են ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ, որոնք ներկայացված են երկու շերտերով: Դրանք իրարից տարբերվում են հատիկաչափական կազմով և ֆիզմեխանիկական հատկություններով:

Տեղանքի բնակլիմայական պայմանները բերվում են համապատասխան կլիմայաբանական տեղեկատուներից.

- Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը - 892 ՄՊա,
- Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը- 62 %,
- Օդի տարեկան միջին ջերմաստիճանը- +11,4,
- Օդի տարեկան բացարձակ նվազագույն ջերմաստիճանը - -25 °C;
- Օդի տարեկան բացարձակ առավելագույն ջերմաստիճանը- +41 °C;
- Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը - 126 օր,
- Ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը- 121 սմ,
- Չյան մեջ ջրի առավելագույն քանակը- 664մմ,
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը – 70 սմ:

Բնժեներա-երկրաբանական նկարագրությունը

Ջրատարի տեղամասում տարածված են ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ առաջացումներ, որոնք ներկայացված են երկու շերտերով, որոնք իրարից տարբերվում են հատիկաչափական կազմով և ֆիզմեխանիկական հատկություններով:

Շերտ 1- Ավազակավեր և կավավազեր մուգ դարչնագույնից բաց դարչնագույն, պինդ առածգական, քիչ ծակոտկեն, խոնավ: Պարունակում են 20-30 % բազալտային և տուֆային կազմի տարբեր չափերի բեկորներ:

Ունեն հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկությունները՝

- Բնական խտությունը - 1750 կգ/մ³,
- Մասնիկների խտությունը - 2700 կգ/մ³,
- Դեֆորմացիայի մոդուլը - 25 ՄՊա,

Մահքի դիմադրության ցուցանիշները՝

- tgf - 0,404,
- C - 0.02 ՄՊա,
- Մշակման կարգը – III,
- Կարգն ըստ սեյսմիկական հատկանիշների –II:

Շերտ 2. Տարբեր չափերի / մինչև 1մx1մ / բազալտային և տուֆային կազմերի բեկորներ մինչև 3մ: Մոտ 50% կավավազերի, նաև ավազակավերի խառնուրդով:

Ունեն հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

- Բնական խտությունը - 1800կգ/մ³,
- Մասնիկների խտությունը - 2720 կգ/մ³,
- Դեֆորմացիայի մոդուլը - 60 ՄՊա,

Մահքի դիմադրության ցուցանիշները՝

- tgf - 0,610,

- C - 0.015 ՄՊա,
- Մշակման կարգը – IV,
- Կարգն ըստ սեյսմիկական հատկանիշների –II:

Գրականության վերլուծություն:

Աշխատանքում դիտարկվում են ՀՀ ջրօգտագործման բնագավառում գոյություն ունեցող հիմնախնդիրները, ստորերկրյա ջրային պաշարների գնահատման, կառավարման, արդյունավետ օգտագործման հարցերը¹: Բերված և վերլուծված են ՀՀ ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռները: Հեղինակները առաջարկություններ են ներկայացրել ՀՀ ջրային պաշարների կառավարման և պահպանման հարցերի շուրջ: Կատարված հաշվարկները հնարավորություն են ընձեռնում ճիշտ լուծումներ գտնել ջրային պաշարների կառավարման, ուղղությամբ, որը կնպաստի ոռոգման և ջրամատակարարման աշխատանքների լավացմանը:

Որոշ հեղինակներ ուսումնասիրել են Հայկական Նորատուս գյուղի ջրաբաշխման համակարգում առկա ռիսկերը²: Նպատակն է ապահովել ոռոգման համակարգի անվտանգությունը: Տրված է տարածաշրջանի հակիրճ նկարագրությունը և ոռոգման համակարգի վիճակը: Մոդելավորումն իրականացվել է AWARE-P ծրագրային փաթեթի միջոցով:Ռիսկի մեծությունը որոշվում է մատրիցայի միջոցով:

Մեթոդաբանություն:

Կատարվել են գեոդեզիական հետազոտություններ:Որոնց հիման վրա ուսումնասիրվել են ոռոգման տարբեր ռեժիմների և տարբեր ցանքերի դեպքում ջրի անհրաժեշտ ծավալները³: Օգտագործվել են հիդրոմոդուլի եղանակը, ինպես նաև կորուստների հաշվման մեթոդը⁴: Այն հնարավորություն է տալիս օգտագործելով ճշգրիտ մեթոդներ որոշել ոռոգման համար անհրաժեշտ ջրի քանակները տարբեր կուլտուրանների աճեցման համար:

Վերլուծություն: Հաշվի առնելով ջրի նախագծային կորուստը,որը կազմում է 15 տոկոս,կարող ենք հանգել հետևյալ եզրակացությանը:Ջրի տնտեսումը կազմում է 669377 խորանարդ մետր: Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակներում:

Նախատեսվում է վերանորոգել Արագածոտնի տարածաշրջանի Կարբի համայնքում գոյություն ունեցող MX-0 ոռոգման համակարգը, որը հնարավորու-

¹ Խաչատրյան Է.Հ, Հարությունյան Ա.Ջ., Խաչատրյան Ա.Է. ՀՀ ջրային պաշարների գնահատման, ջրօգտագործման կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները://ՃՇՀԱՀ Գիտական աշխատություններ, ՀI(76), Երևան, 2020թ, էջ. 30-43:

² Խաչատրյան Ա.Է., Պապիկյան Մ.Ռ., Խաչատրյան Ա.Է. ԱՄՆ Օրովիլ և ՀՀ որոշ հիդրոհանգույցների վթարային իրադրության առաջացման պատճառների վերլուծություն // ՃՇՀԱՀգիտ. աշխատու. Ժողովածու, հ.III (66), 2017, էջ 56-66:

³ ՀՀՇՆ 33-01-2014. Հիդրոտեխնիկական կառուցվածքներ. Հիմնական դրույթներ. 2014, 46էջ:

⁴ Papikyan M.R, Papikyan S.R. Accuracy criterion of formulas for determining the chezy coefficient. Power Technology and Engineering, Volume, 27, Number 5, May,1993.

թյուն կտա ապագայում հուսալի կերպով ոռոգել ավելի քան 160 հա հողատարածք:

Բաժանարարի վերականգնման նախագիծը կազմելու համար իրականացվել է դիտողական զննություններ, տոպոգրաֆիական և ինժեներա-էրկրաբանական հետազոտություններ:

Նախագծվող ջրանցքի տակ ընկնող ոռոգման ենթակա հողատարածքը համաձայն տեղեկանքի կազմում է 160 հա, որից

- 7% - բանջարաբուստանային,
- 6% - առվույտ,
- 87% - պտղատու այգի միջշարային խոտածածկով:

Ելնելով մշակվող կուլտուրաների կողմից ոռոգվող հողատարածքի աշխարհագրական դիրքից և հողակլիմայական պայմաններից, տվյալ տարածքին համապատասխանում է №7 ոռոգման ռեժիմը:

Օգտվելով այդ ռեժիմի տվյալներից, 75% ապահովվածության դեպքում հիդրոմոդուլի կարգավորված գրաֆիկի առավելագույն օրդինատը ստացվել է $q=0.62$ ր/վ. հա:

Հաշվարկային ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q = \frac{\omega \cdot q}{\eta} = \frac{160 \cdot 0.62}{0.85} = 117 \text{ ր/վ}$$

որտեղ՝

- ω – ոռոգելի հողատարածքն է,
- q – հիդրոմոդուլի առավելագույն օրդինատն է,
- η – ջրանցքի Օ.Գ.Գ. վերականգնումից հետո:

Հիդրոմոդուլի աղյուսակը և գրաֆիկը ներկայացվում են ստորև:

Հ/Հ	Գյուղատնտեսական մշակաբույսերը	Ոռոգման նորման (Մ), մ ³ /հա	Ջրումների համարները (գ)	Ջրման նորման (տ), մ ³ /հա	Ոռոգման ժամանակահատվածը		Ոռոգման տևողությունը (t)	Հիդրոմոդուլ I հա (q), ր/վ	Մշակաբույսերի տոկոսները (a)	Հիդրոմոդուլի արժեքը (q) · (a) ր/վ
					սկիզբը	վերջը				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Բանջարաբուստանային	7150	1	550	23/IV	15/V	23	0.28	7	0.02
			2	550	25/IV	17/V	23	0.28		0.02
			3	550	27/V	11/VI	16	0.40		0.03
			4	550	12/VI	24/VI	13	0.49		0.03
			5	550	25/VI	06/VII	12	0.53		0.04
			6	550	07/VII	17/VII	11	0.58		0.04
			7	550	18/VII	27/VII	10	0.64		0.04
			8	550	28/VII	05/VIII	9	0.71		0.05
			9	550	06/VIII	16/VIII	11	0.58		0.04
			10	550	17/VIII	28/VIII	12	0.53		0.04
			11	550	29/VIII	11/IX	14	0.45		0.03
			12	550	12/IX	24/IX	13	0.49		0.03
			13	550	25/IX	07/X	13	0.49		0.03

2	Առվույտ	6750	1	750	18/IV	06/V	19	0.46	6	0.03
			2	750	07/V	03/VI	28	0.31		0.02
			3	750	04/VI	21/VI	18	0.48		0.03
			4	750	22/VI	10/VII	19	0.46		0.03
			5	750	11/VII	24/VII	14	0.62		0.04
			6	750	25/VII	09/VIII	16	0.54		0.03
			7	750	10/VIII	25/VIII	16	0.54		0.03
			8	750	26/VIII	09/IX	15	0.58		0.03
			9	750	10/IX	25/IX	16	0.54		0.03
3	Պտղատու այգի միջշարային խոտածածկով	5400	1	600	13/IV	02/V	20	0.35	87	0.30
			2	600	05/VI	23/VI	19	0.37		0.32
			3	600	24/VI	04/VII	11	0.63		0.55
			4	600	05/VII	16/VII	12	0.58		0.50
			5	600	17/VII	28/VII	12	0.58		0.50
			6	600	29/VII	09/VIII	12	0.58		0.50
			7	600	10/VIII	23/VIII	14	0.50		0.44
			8	600	24/VIII	06/IX	14	0.50		0.44
			9	600	07/IX	24/IX	18	0.39		0.34

Ոռգման նորման (M), մ ³ /հա	Ջրումների համարները (g)	Ջրման նորման (m), մ ³ /հա	Ոռգման ժամանակա- հատվածը		Ոռգման ստորաբյուրեր (t)	Հիրրամորուլ 1 հա (q), լ/վ	Մշակաբույսերի Տոկոսները (a)	Հիրրամորուլի արժեքը (q) · (a) լ/վ	լ/վ հա լ/վ 160 հա(Q)
			սկիզբը	վերջը					
3	4	5	6	7	8	9	10	11	12
7150	1	550	23/IV	15/V	23	0.28	7	0.02	3.76
	2	550	25/IV	17/V	23	0.28		0.02	3.76
	3	550	27/V	11/VI	16	0.40		0.03	5.65
	4	550	12/VI	24/VI	13	0.49		0.03	5.65
	5	550	25/VI	06/VII	12	0.53		0.04	7.53
	6	550	07/VII	17/VII	11	0.58		0.04	7.53
	7	550	18/VII	27/VII	10	0.64		0.04	7.53
	8	550	28/VII	05/VIII	9	0.71		0.05	9.41
	9	550	06/VIII	16/VIII	11	0.58		0.04	7.53
	10	550	17/VIII	28/VIII	12	0.53		0.04	7.53
	11	550	29/VIII	11/IX	14	0.45		0.03	5.65
	12	550	12/IX	24/IX	13	0.49		0.03	5.65
	13	550	25/IX	07/X	13	0.49		0.03	5.65
6750	1	750	18/IV	06/V	19	0.46	6	0.03	5.65
	2	750	07/V	03/VI	28	0.31		0.02	3.76
	3	750	04/VI	21/VI	18	0.48		0.03	5.65
	4	750	22/VI	10/VII	19	0.46		0.03	5.65
	5	750	11/VII	24/VII	14	0.62		0.04	7.53
	6	750	25/VII	09/VIII	16	0.54		0.03	5.65
	7	750	10/VIII	25/VIII	16	0.54		0.03	5.65
	8	750	26/VIII	09/IX	15	0.58		0.03	5.65
	9	750	10/IX	25/IX	16	0.54		0.03	5.65
5400	1	600	13/IV	02/V	20	0.35	87	0.30	56.47
	2	600	05/VI	23/VI	19	0.37		0.32	60.24
	3	600	24/VI	04/VII	11	0.63		0.55	103.53
	4	600	05/VII	16/VII	12	0.58		0.50	94.12

	5	600	17/VII	28/VII	12	0.58		0.50	94.12
	6	600	29/VII	09/VIII	12	0.58		0.50	94.12
	7	600	10/VIII	23/VIII	14	0.50		0.44	82.82
	8	600	24/VIII	06/IX	14	0.50		0.44	82.82
	9	600	07/IX	24/IX	18	0.39		0.34	64.00

Նախագծային լուծումներ

Առաջարկվում է ջրատարը ամբողջությամբ ապամոնտաժել և այն փոխարինել LP-40 վաքերով: Հաշվային ելքը կազմում է 117 լ/վրկ: ՊԿ1+52-ում և ՊԿ3+38-ում նախատեսվում են ճանապարհահատումներ: MX-0-ից սկսած ՊԿ0+06 –ից և ՊԿ0+43 –ից իրականացնել աջ ջրթողներ:

Աշխատանքային ծավալներ

1) Հիմնական ջրանցք

№	Աշխատանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Չ/Մ	Քանակը
1.	Փոսորակների քանդում h=0.3 մ IV կարգի գրունտներ	մ ³	288	մ ³	288
2.	Հավաքովի երկաթբետոնյա վաքերի ապամոնտաժում և տեղափոխում 2 կմ հեռավորության վրա	հատ/մ ³	226/20	հատ/մ ³	226/20
3.	Հավաքովի երկաթբետոնյա բլոկների ապամոնտաժում և տեղափոխում 2 կմ հեռավորության վրա	մ ³	53	մ ³	53
4.	ՄԲ-4 վաքերի մոնտաժ	հատ	124	հատ	124
	Հավաքովի երկաթբետոն	մ ³	53.32	մ ³	53.32
	Ամրան	կգ	3412.5	կգ	3412.5
5.	Հետլիցք	մ ³	230.4	մ ³	230.4
6.	Հավաքովի բլոկ (900x600x100) մմ	հատ	125	հատ	125
	Հավաքովի երկաթբետոնյա	մ ³	6.75	մ ³	6.75
	Ամրան	կգ	282.5	կգ	282.5
7.	Կարերի իրականացում ՄԲ-4 վաքերի համար	հատ	125	հատ	125
8.	Անցումային հոր, B15, W4 (15 հատ)	մ ³	27.0	մ ³	27.0

2) Ջրթողներ-20 հատ

№	Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակը
1	Փոսորակի քանդում h=1.0 V կարգի բնահողում	մ ³	80
2	Խրամուղու փորում b=0.7 մ, h=0.8 մ V կարգի բնահողում	մ ³	160
3	10 սմ խորությամբ նախապատրաստական շերտ բերովի փափուկ բնահողից	մ ³	14.0
4	Հակադարձ լիցք բերովի փափուկ բնահողից	մ ³	80
5	Հակադարձ լիցք	մ ³	146
6	Ավելցուկ հողի ցրում	մ ³	154
7	Ավազա-կոպչային նախապատրաստական շերտ δ =10 սմ	մ ³	12
8	Հատակի բետոնապատում δ=30 սմ	մ ³	8
9	Պատերի բետոնապատում	մ ³	50
10	Պողպատե խողովակ dy=300 մմ, δ=6 մմ	մ	6
11	Պողպատե խողովակ dy=250 մմ, δ=6 մմ	մ	108
12	Պողպատե խողովակ dy=300 մմ	մ ³	6
13	Պողպատե խողովակ dy=250 մմ	մ ³	108
14	Մետաղական կոնստրուկցիաների ներկում	մ ²	200
15	Դիաֆրագմա 700x700	հատ/կգ	20/226
16	Հարթ փական	հատ/կգ	20/836

3) Խողովակի անցում (ճանապարհ)-2 հատ

№	Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակը
I. Հողային աշխատանքներ			
1	III կարգի բնահողի քանդում	մ ³	16
2	10 սմ հաստությամբ նախապատրաստական շերտ	մ ³	1.3
3	Հակադարձ լիցք փափուկ բնահողից	մ ³	8.0
4	Հակադարձ լիցք տոփանումով	մ ³	6.7
5	Ճանապարհի խճային ծածկույթ 15 սմ հաստությամբ	մ ³	6.6
II. Բետոնային և ե/բ աշխատանքներ			
6	Բետոնե օձիքների տեղադրում	մ ³	B15 F150 W4 4.6
III. Խողովակաշարեր			
7	Պողպատե խողովակ D430x6	մ	ՊUS 10704-91 12
8	Դիաֆրագմա -4x700x700	հատ/կգ	2/30.8
9	Պողպատե խողովակի D430x6 նորմալ հիդրոմեկուսացում	մ	12

**Արագածոտնի մարզ
1. ԿԱՐԲԻ մայրառու**

	Մշակարարության անվանումը	Փաստացի ոռոգվող հողատարածքները		Ոռոգման նորման	Ջրի պահանջը տարվա ընթացքում
		%	հա	մ ³ /հա	մ ³
1	Բանջարաբուստան.	7	11,2	7150	80080
2	Առվույտ	6	9,6	6750	64800
3	Պտղատու այգի	87	139,2	5400	751680
4	Այլ	0	0,0		0
Ընդամենը		100	160		896560
Ջրի պահանջը ջրանցքի գլխամասում հաշվի առնելով ջրանցքի փաստացի Օ.Գ.Գ. (η=52%)					1724154
Ջրի փաստացի կորուստը (48%)					827594
Ջրի պահանջը ջրանցքի գլխամասում հաշվի առնելով ջրանցքի նախագծային Օ.Գ.Գ. (η=85%)					1054776
Ջրի նախագծային կորուստը (15%)					158216
Ջրի տնտեսումը					669377
Էրացուցիչ հողատարածքների հաշվարկ					
		%	մ ³ /հա	հա	
1	Բանջարաբուստան.	7	7150	6,6	
2	Առվույտ	6	6750	6,0	
3	Պտղատու այգի	87	5400	107,8	
4	Այլ	0		0,0	
Ընդամենը		100		120,4	

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ մյուս բնակավայրերի ոռոգման համակարգերը նույնպես գտնվում են նույն վիճակում: Ուստի կարևորվում է գյուղական բնագավառի ոռոգման համակարգերի ղեկավարման, կադ-

րերի հետ աշխատելու դիվանագիտական խնդիրները: Այդ դրույթները իրենց արտացոլումն են գտել Բ.Գաբրիելյանի մենագրությունում¹: Կարևոր է նաև մեծ ուշադրություն դարձնել ոռոգման համակարգերի հուսալի էներգամատակարարման հարցերին²:

Գիտական նորույթը: Կարբի համայնքի ոռոգման ջրատարի գնահատման արդյունքում հիմնավորվել է ջրատարի արդիականացման անհրաժեշտությունը՝ ջրի խնայողությունը ապահովելու տեսանկյունից:

Եզրակացություն

1. Շրջանի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը բնութագրվում է տարբեր ծագման չորրորդական հասակի բնահողերի հզոր նստվածքներով, որոնց գումարային հզորությունը գերազանցում է 300 մ-ի սահմանը:
2. Ինժեներա-երկրաբանական տեսակետից ուսումնասիրության ենթակա տարածքը բնութագրվում է շինարարության համար բարդ պայմաններով: Հիմնատակ հանդիսացող հիմնական կրող բնահողերը ամբողջ հզորությամբ ջրակալված լինելու պատճառով բնութագրվում են ոչ մեծ կրողունակության ցուցանիշներով:
3. Գրունտային ջրերն ըստ իրենց քիմիական կազմի բաժանվում են երեք հիմնական խմբերի.
 - հիդրոկարբոնատային-քլորիդային-մագնեզիումային
 - սուլֆատային-քլորիդային-նատրիումային:
 - Գրունտային ջրերի հանքայնացումը 02-10գ/լ-ի սահմանում է:
4. Փոստրակների մշակման ժամանակ ջրահեռացման հաշվարկների մեջ անհրաժեշտ է օգտագործել բնահողերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունների մեջ բերված ֆիլտրացիայի գործակիցները:
5. Ուսումնասիրության ժամանակ ջրագծերի տարածման ծրագծերի սահմաններում սողանքային երևույթները բացակայում են:
6. Շինարարության գոտում առկա բնահողերի մշակման պայմանները բարենպաստ են:
7. Ջրանցքներից ջրի կորստի մի մասը բաժին է ընկնում գոլորշիացմանը, որը օդի բարձր ջերմաստիճանի և ռելիեֆի փոքր թեքության արդյունք է: Ջրի տնտեսումը կազմում է 669377մ³:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ա.Է., Պապիկյան Մ.Ռ., Խաչատրյան Ա.Է. ԱՄՆ Օրովիլ և ՀՀ որոշ հիդրոհանգույցների վթարային իրադրության առաջացման պատճառների վերլուծություն // ՃՇՀԱՀ գիտ. աշխատու. Ժողովածու, հ. III (66), 2017, էջ 56-66:

¹ Габриелян Г.В. Управление кадрами как основа инновационного развития организации: Монография. Ереван, Авторское издание, 2021, 217с.

² Папикян С.Р. Проблемы энергоснабжения в сельской местности Армении.// “Энергетика за Рубежом” М, №5; 2021, С. 38-41.

2. Խաչատրյան Է.Հ, Հարությունյան Ա.Ջ.,Խաչատրյան Ա.Է. ՀՀ ջրային պաշարների գնահատման, ջրօգտագործման կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները://ՃՇՀԱՀ Գիտական աշխատություններ, ՀI(76), Երևան, 2020թ, էջ. 30-43:
3. ՀՀՇՆ 33-01-2014.Հիդրոտեխնիկական կառուցվածքներ.Հիմնական դրույթներ. 2014,46էջ:
4. Папикян С.Р. Проблемы энергоснабжения в сельской местности Армении.// “Энергетика за Рубежом” М, №5; 2021, С. 38-41.
5. Габриелян Г.В. Управления кадрами как основа инновационного развития организации:Монография.Ереван, Авторское издание,2021, 217с.
6. Khachatryan E.H., Khachatryan A.E., Risk management of water distribution system in Armenia.// E3SWeb of Conferences Volume 97 05020 (2019), XXII International Scientific Conference “Construction the Formation of Living Enviroment” (FORM-2019) Tashkent, Uzbekistan, April 18-21, 2019.
7. Papikyan M.R, Papikyan S.R. Accuracy criterion of formulas for determining the chezy coefficient. Power Technology and Engineering, Volume, 27, Number 5, May,1993.

References

1. Xachatryan A.E'., Papikyan M.R'., Xachatryan A.E'. AMN O'rovil &HH orosh hidrohangowycneri vt'arayin iradrowt'yan ar'ajacman pattwar'neri verlowc'owt'yown // TwShHAH git. ashxatow. Jhoghovac'ow, h.III (66), 2017, e'j 56-66:
2. Xachatryan E'.H, Harowt'yownyan A.J., Xachatryan A.E'. HH jrayin pasharneri gnahatman, jro'gtagorc'man kar'avarman himnaxndirneri' & dranc lowc'man owghinery'://TwShHAH Gitakan ashxatowt'yowwnner, HI(76), Er&an, 2020t', e'j. 30-43:
3. HHShN 33-01-2014. Hidrotexnikakan kar'owcvac'qner.Himnakan drowyt'ner. 2014,46e'j:
4. Papikyan M.R, Papikyan S.R. Accuracy criterion of formulas for determining the chezy coefficient. Power Technology and Engineering, Volume, 27, Number 5, May,1993.
5. Gabrieljan G.V. Upravlenija kadrami kak osnova innovacionnogo razvitija organizacii:Monografija.Erevan, Avtorskoe izdanie,2021, 217s.
6. Khachatryan E.H., Khachatryan A.E., Risk management of water distribution system in Armenia.// E3SWeb of Conferences Volume 97 05020 (2019), XXII International Scientific Conference “Construction the Formation of Living Enviroment” (FORM-2019) Tashkent, Uzbekistan, April 18-21, 2019.
7. Papikjan S.R. Probleny jenergosnabzhenija v sel'skoj mestnosti Armenii.// “Jenergetika za Rubezhom” M, #5; 2021, S. 38-41.

**ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Ստեփան Ռաֆիկի Պապիկյան
Մանուկ Ռաֆիկի Պապիկյան
Լիանուշ Բարսեղի Բարսեղյան**

Համառոտագիր: *Արդիականություն:* Ջրախնայողության խնդիրները կարևոր նշանակություն ունեն ՀՀ-ում հողատարածքները ոռոգելու համար: Այս տեսակետից գոյություն ունեցող ջրանցքների ուսումնասիրությունը կարևոր է և հանդիսանում է արդիական խնդիր: Կատարվել են ուսումնասիրություններ, որոշվել են ոռոգման համար անհրաժեշտ ջրի քանակը: Հոդվածը վերաբերում է ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի MX-0 բաժանարարի 800 մետր երկարությամբ ջրանցքի վերականգնման աշխատանքներին: Այդ նպատակով ուսումնասիրել է ջրանցքի և բաժանարարի իրական տեխնիկական վիճակը: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ անհրաժեշտ է ջրանցքը վերականգնել ամբողջությամբ:

Նպատակը և խնդիրները: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Արագածոտնի մարզի Կարբի համայնքի MX-0 բաժանարարի 800 մետր երկարությամբ ջրանցքի վերականգնման հնարավորությունը, որի դեպքում հնարավոր կլինի քիչ կորուստներով ոռոգելի դարձնել 160 հեկտար հողատարածք: Հոդվածի *խնդիրներն են* բացահայտել և գնահատել առկա խոչընդոտները, կատարել համապատասխան առաջարկություններ:

Մեթոդաբանություն: Կատարվել են գեոդեզիական հետազոտություններ, որոնց հիման վրա ուսումնասիրվել են ոռոգման տարբեր ռեժիմների և տարբեր ցանքերի դեպքում ջրի անհրաժեշտ ծավալները: Օգտագործվել են հիդրոմոդուլի եղանակը, ինչպես նաև կորուստների հաշվման մեթոդը: Այն հնարավորություն է տալիս օգտագործելով ճշգրիտ մեթոդներ որոշել ոռոգման համար անհրաժեշտ ջրի քանակները տարբեր կուլտուրաների աճեցման համար:

Գիտական նորույթը: Կարբի համայնքի ոռոգման ջրատարի գնահատման արդյունքում հիմնավորվել է ջրատարի արդիականացման անհրաժեշտությունը՝ ջրի խնայողությունը ապահովելու տեսանկյունից:

Կիրառման հնարավորությունները: Նախատեսվում է վերանորոգել Արագածոտնի տարածաշրջանի Կարբի համայնքում գոյություն ունեցող MX-0 ոռոգման համակարգը, որը հնարավորություն կտա ապագայում հուսալի կերպով ոռոգել ավելի քան 160 հա հողատարածք, իսկ ջրի տնտեսումը կկազմի 669377մ³:

Բանալի բառեր. ջրանցք, հոսակորուստ, ոռոգում, պտղատու այգի, առվույտ, երկաթբետոն, հիդրոմոդուլ, գրունտային ջրեր, ֆիլտրացիա, ավազակավ, բնակլիմայական պայմաններ:

ИССЛЕДОВАНИЯ ПО ВОССТАНОВЛЕНИЮ ОРОСИТЕЛЬНЫХ СИСТЕМ РА (НА ПРИМЕРЕ ОБЩИНЫ КАРБИ)

Степан Рафикович Папикян
Манук Рафикович Папикян
Лиануш Барсеговна Барсегян

Аннотация. Актуальность: Вопросы водосбережения важны для орошения земель в Армении, с этой точки зрения изучение существующих каналов является актуальным вопросом. Проведены исследования и определено количество воды, необходимой для орошения. В статье речь идет о реконструкции 800-метрового канала делителя МХ-0 общины Карби Арагацотнского района Республики Армения. Результаты исследования показывают, что канал нуждается в полной реконструкции.

Цель и задачи: Целью статьи является изучение возможности реабилитации 800-метрового канала делителя МХ-0 общины Карби Арагацотнской области, в этом случае можно будет орошать 160 га земли с малыми потерями. Задачи статьи - выявить и оценить существующие препятствия, сделать соответствующие предложения.

Методология: Проведены геодезические изыскания, на основании которых изучены потребные объемы воды для различных режимов орошения, применен гидромодульный метод, а также метод расчета потерь. Это позволяет использовать точные методы для определения количества воды, необходимой для орошения при выращивании различных культур.

Научная новизна: В результате оценки оросительного водопровода общины Карби обоснована необходимость модернизации водопровода, обеспечивающая экономию воды.

Возможности применения: При нынешнем состоянии потери воды составляют 48 процентов. При потерях воды 15 процентов, можно сделать вывод, что экономия воды составляет 669 377 м³. В общине Карби Арагацотнской области планируется отремонтировать существующую оросительную систему МХ-0, что позволит в будущем надежно орошать более 160 га земли. Экономия воды- 669377 м³.

Ключевые слова: Канал, сток, орошение, фруктовый сад, железобетон, гидромодуль, подземные воды, фильтрация, песчаник, климатические условия.

STUDIES ON THE RESTORATION OF IRRIGATION SYSTEMS OF RA COMMUNITIES (THE CASE OF KARBI COMMUNITY)

Stepan Rafik Papikyan
Manuk Rafik Papikyan
Lianush Barsegh Barseghyan

Abstract. Water saving issues are important for land irrigation in Armenia, from this point of view, the study of existing channels is vital and **relevant** issue. Studies have been carried out and the amount of water needed for irrigation has been determined. The article deals with the reconstruction of the 800-meter canal of the MX-0 divider in the Karbi community of the Aragatsotn region of the Republic of Armenia. The results of the study show that the canal needs a complete reconstruction.

Goal and objectives. The goal of the article is to study the possibility of rehabilitating the 800-meter canal of the MX-0 divider in the Karbi community of the Aragatsotn region, in which case it will be possible to irrigate 160 hectares of land with little loss. Identify and assess existing obstacles, make appropriate proposals.

Methodology: Geodetic surveys were carried out, on the basis of which the required volumes of water for various irrigation regimes were studied, the hydro module method was applied, as well as the method for calculating losses. This allows to determine the amount of water needed for irrigation when growing different crops through use of precise methods.

Scientific novelty. As a result of the assessment of the irrigation aqueduct of the Karbi community, the need to modernize the aqueduct was justified, ensuring water savings.

Possibilities of application: It is planned to repair the existing MX-0 irrigation system in Karbi community of Aragatsotn region, which will allow to reliably irrigate more than 160 hectares of land in the future. Water saving will be 669377 m³.

Keywords: Canal, runoff, irrigation, orchard, alfalfa, reinforced concrete, hydromodule, groundwater, filtration, sandstone, climatic conditions.

THE ANALYSIS OF DYNAMIC OF THE MONTHLY AVERAGE IMPORT PRICES OF THE MAIN GRAINS IN THE PERIOD 2020-2022 AND FORECASTS (BY THE DATA OF RA)¹

Vardan Samvel Aleksanyan
Gevorg Harutyun Keshishyan
Sergey Nikolay Shirokov
Irina Riksibay Trushkina
Alik Henrik Sahakyan

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Introduction

Since 2020 in consequences of COVID-19 pandemic were noticeable changes in the trades between countries, in the prices of international trade. Food prices are skyrocketing around the world. In January, international prices for major food items climbed to a level near the heights of the global food price crises of 2007-08 and 2010-11, according to the FAO Food Price Index². In this period COVID-19 pandemic and second Artsakh war has negatively affected to international trade of the Republic of Armenia.

The main purpose of this research is to study the features of the dynamic of the import monthly average prices of the main types of imported grains and to reveal the seasonal, tendency components of these time series in order to forecast the prices in the coming months. To achieve this purpose follow problems have been set and solved:

- to study the intra-yearly fluctuations of the import monthly average prices of the main grains in 2020-2022 in RA,
- through the additive model to disclose the seasonal, tendency and casual component of studied time series 2020-2022 in RA and to build the confident monthly forecasting till the end of 2022.

The object of this research is the time series of the import monthly average prices of the main types of grains in 2020-2022 in RA. In the period of 2020-2022 the wheat, the barley and the maize of grain were the main grains, which were consecutively monthly imported in RA. In 2020-2022 the other types of grains were imported only several months.

Analysis of the Theory

The Republic of Armenia is the grains imported country, therefore any shocks in global trade will immediately impact on the macro and micro economic indicators. In this point of view the increase of the production volumes of grains is vital, and the increase of the production volumes of grains must be occurred by intensive way. The

¹ Исследование выполнено при финансовой поддержке РФФИ и КН РА в рамках научного проекта № 20-510-05020\20 (№ 20RF-054)

² <https://www.ifpri.org/blog/covid-19-and-rising-global-food-prices-whats-really-happening>

intensive growth of grains production is assumed the implementation of advanced technology¹. They are still insufficient the mechanisms of optimization and the ways of economic policy of importation of grains and the import prices of grains. The higher import prices of the grains is unprofitable for the economy of RA as they immediately impact on the welfare of population. On the other hand the lower import prices of the grains are not always granted and they could be threat also².

METHODS

If the fluctuations of time series are described with relative stability, the additive model of time series is applied:

$$Y_t = T + S + E \quad (1),$$

where Y_t is the level of the time series t -th month, T is the tendency component, S is the seasonal component and the E is the casual component.

Additive model of time series is built by following steps:

STEP 1: Alignment of time series with the moving averages,

STEP 2: Calculation of seasonal components (S) for each months,

STEP 3: Calculation of adjusted seasonal components (S) for each months (The sum of the monthly seasonal components must equal to zero),

STEP 4: Calculation of ($T + E = Y - S$) components of time series,

STEP 5: The modeling of trend of time series on the base of ($T + E$) components,

STEP 6: The calculation of ($T + S$) components of time series,

STEP 7: The calculation of residuals ($E = Y - (T + S)$) and the square of residuals (E^2)³.

The trends of studied time series have been presented with linear function:

$$T = a_0 + a_1 t \quad (2),$$

where t is the time values for con level of the consecutively months ($t = 1; 2; 3 \dots \dots 29$), $a_0; a_1$ are parameters, a_1 is the monthly average growth conditioned by tendency⁴.

Analysis

In 2020-2022 the import monthly average prices of main types of grains has been calculated by the authors based on their import values and import volumes.

¹ Avetisyan S. Agriculture and agri-processing in Armenia: Yerevan. Edition LIMUSH, 2010: 233p., p.44

² The problems of the agriculture of the Republic of Armenia and the ways of their solving /A. H. Bayadyan. Yerevan. Edition NAS RA «Gitutyun», 2013.-144p, p.31

³ Econometrics: textbook for Master's students /I.I./ Yeliseeva, S.V. Kurisheva, T.V. Kosteeva and others:/ -M. Finance and statistics, 2007.-576p., p.79-80

⁴ Theory of statistics: textbook/edited by prof.G.L.Gromiko.-2nd edition, -M.INFRA-M, 2005-476p., p.31

Table 1

The 1 US dollar exchange monthly average rate, the import monthly average prices of wheat, barley and maize of grain in 2020-2022 in RA¹

Months	Import monthly average price of wheat, US dollars			Import monthly average price of barley, US dollars			Import monthly average price of maize of grain, US dollars		
	2020	2021	2022	2020	2021	2022	2020	2021	2022
January	211.5	232.6	241.3	186.8	132.1	175.4	171.6	187.5	190.2
February	204.3	242.5	232.4	171.0	136.2	198.3	164.7	200.7	196.2
March	177.9	236.6	143.4	122.8	194.4	152.0	154.3	214.2	225.1
April	198.4	211.7	225.5	117.0	275.6	188.9	211.1	204.5	231.9
May	214.9	212.9	294.7	139.0	204.0	212.3	179.7	223.0	274.5
June	165.1	216.0	-	136.4	142.5	-	176.1	204.8	-
July	181.3	184.9	-	157.8	141.4	-	176.6	203.2	-
August	208.4	199.2	-	130.0	155.8	-	202.3	193.8	-
September	206.4	222.6	-	117.3	159.1	-	176.5	187.4	-
October	213.9	243.6	-	111.5	151.2	-	170.1	215.1	-
November	207.2	256.3	-	131.2	160.5	-	187.2	223.4	-
December	230.8	250.3	-	147.5	170.8	-	190.3	218.7	-

The monthly forecasting of the studied indicators is based on the trend and seasonal components. The forecasting of the studied indicators is built with the confidence intervals (95% confidence level) also.

The calculated components of import monthly average price of wheat are displayed in table 2.

Table 2

The results of additive modeling of intra-yearly fluctuations of the import monthly average price of wheat, barley and maize of grain

Tendency component											
$T = 192.91 + 1.45 \times t$											
Seasonal components for each months											
Jan	Feb	March	April	May	June	July	August	Sept	Oct	Nov	Dec
13.48	11.7	-1.02	3.94	15.9	-7.30	-19.6	-9.7	-9.76	-2.89	-3.81	9.11

In 2020-2022 according to the results of modeling of trend the import monthly average price of wheat monthly increased by 1.45 US dollars. The results of calculation of monthly seasonal components have shown that the import monthly average price of wheat decreased in from March to November. Conditioned by seasonal effect the

¹ <https://www.armstat.am/am/index.php?nid=148&thid%5B0%5D=1001&thid%5B1%5D=1002&thid%5B2%5D=1003&thid%5B3%5D=1004&thid%5B4%5D=1005&years%5B0%5D=2022&years%5B1%5D=2021&year%5B0%5D=2022&year%5B1%5D=2021&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=2>

maximum decline of the import monthly average price of wheat was in July, it decreased by 19.62 US dollars and the maximum growth of the import monthly average price of wheat was in May, it increased by 15.93 US dollars.

Table 3

The results of additive modeling of intra-yearly fluctuations of the import monthly average price of barley

Tendency component											
$T = 135,03 + 1.58 \times t$											
Seasonal components for each months											
Jan	Feb	March	April	May	June	July	Aug.	Sept	Oct	Nov	Dec
-17.9	-4.1	-8.84	31.70	14.75	-6.4	8.84	3.6	-2.6	-13.5	-5.3	-0.01

In 2020-2022 according to the results of linear trend the import monthly average price of barley monthly increased by 1.58 US dollars. The results of calculation of monthly seasonal components have shown that the import monthly average price of barley increased in April-May, in July and in August, in the rest of months it decreased. Conditioned by seasonal effect the maximum growth of the import monthly average price of barley was in April, it increased by 31.70 US dollars. The maximum decline was in January, and it decreased by 17.97 US dollars.

Table 4

The results of additive modeling of intra-yearly fluctuations of the import monthly average price of maize of grain

Tendency component											
$T = 168.75 + 2.01 \times t$											
Seasonal components for each months											
Jan	Feb	March	April	May	June	July	Aug.	Sept	Oct	Nov	Dec
-13.3	-11.7	-8.3	13.5	7.6	0.32	1.92	7.92	-10.9	-1.9	9.2	5.83

In 2020-2022 according to the results of modeling of trend the import monthly average price of maize of grain monthly increased by 2.01 US dollars. The results of calculation of monthly seasonal components have shown that the import monthly average price of maize of grain increased from April to August, and in November – December, and the rest of months the price decreased. Conditioned by seasonal effect the maximum decline of the import monthly average price of maize of grain was in January, it decreased by 13.35 US dollars, and the maximum growth of the import monthly average price of maize of grain was in April, it increased by 13.55 US dollars.




Figure 1. The monthly forecasts of the import average price of wheat for June to December 2022

According to the forecasts, when the other things held constant, the import monthly average price of wheat will continue to grow. In December will achieve to 254.2 US dollars. With 95% of confidence level, the maximum price will be 308.8 US dollars, and the minimum price will be 199.6 US dollars




Figure 2. The monthly forecasts of the import average price of barley for June to December 2022

As the analysis has shown, when the other things held constant, the import monthly average price of barley will increase also. In the end of 2022 in December, it will be 254.2 US dollars. With 95% confidence level, the import monthly average price of barley will range from 121.4 US dollars to 262.4 US dollars.




Figure 3. The monthly forecasts of the import average price of maize of grain for June to December 2022

As it is displayed in figure 3, when the other things held constant, the import monthly average price of maize of grain will continue to increase. In December of 2022 the import monthly average price of maize of grain will be 246.9 US dollars. With 95% confidence level the minimum price will be 214.1 US dollars and the maximum price will be 279.8 US dollars.

Scientific Novelty

In hereby research for the solving the stated problems through the analysis, some theoretical and practical results have been figured out, such as:

- The main components of time series of import monthly average prices of the main types of grains in 2020-2022 have been disclosed.
- The import monthly average prices of the main types of grains have been forecasted and taking account the current economic and politic situation the upper and lower levels of import monthly prices have been predicted to the end of 2022 as well.

Conclusion

In the period of 2020-2022, the import monthly average prices of main grains changed by the seasonal, tendency and casual effects. The additive modeling of studied time series assisted to decompose the time series and to study each components, which effected to time series. According to the results of analysis in 2020-2022 the import monthly average prices of main grains had growth tendency. According to the results of modeling of trend the import monthly average price of wheat monthly increased by 1.45 US dollars, the import monthly average price of barley monthly increased by 1.58 US dollars and the import monthly average price of maize of grain monthly increased by

2.01 US dollars. The results of analysis have shown that in 2020-2022 impacted by seasonal effect the import monthly average price of wheat decreased chiefly in summer and autumn. The import monthly average price of barley and maize of grain decreased chiefly in autumn and winter months.

References

1. Avetisyan S. Agriculture and agri-processing in Armenia: Yerevan. Edition LIMUSH, 2010: 233p., p.44
2. Econometrics: textbook for Master's students /I.I./ Yeliseeva, S.V. Kurisheva, T.V. Kosteeva and others:/ -M. Finance and statistics, 2007.-576p., p.79-80
3. Theory of statistics: textbook/edited by prof.G.L.Gromiko.-2nd edition, -M.INFRA-M, 2005-476p., p.311
4. The problems of the agriculture of the Republic of Armenia and the ways of their solving /A. H. Bayadyan. Yerevan. Edition NAS RA «Gitutyun», 2013.-144p, p.31
5. <https://www.ifpri.org/blog/covid-19-and-rising-global-food-prices-whats-really-happening>
6. <https://www.armstat.am/am/index.php?nid=148&thid%5B0%5D=1001&thid%5B1%5D=1002&thid%5B2%5D=1003&thid%5B3%5D=1004&thid%5B4%5D=1005&years%5B0%5D=2022&years%5B1%5D=2021&year%5B0%5D=2022&year%5B1%5D=2021&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=2>

ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 2020-2022 ԹԹ. ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ (ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

**Վարդան Սամվելի Ալեքսանյան
Գևորգ Հարությունի Քեչիշյան
Սերգեյ Նիկոլայի Շիրոկով
Իրինա Ռըկսիբայի Տրուշկինա
Ալիկ Հենրիկի Սահակյան**

Համառոտագիր: 2020թ. ի վեր Covid-19 համաճարակը, իսկ Հայաստանի Հանրապետությունը նաև արցախյան երկրորդ պատերազմը իրենց ազդեցությունը թողեցին երկրների միջև արտաքին առևտրաշրջանառության, ապրանքների համաշխարհային գների, ֆինանսական շուկաների վրա: Այս փորձություններից անմասն չմնաց նաև Հայաստանի Հանրապետությունը: Երկրի պարենային անվտանգության ապահովումը հիմնականում պայմանավորված է հացահատիկների հիմնական տեսակների անխափան ներմուծմամբ, որոնց գները ուսումնասիրվող տարիներին բնութագրվել են ուրույն դինամիկայով: Դեռևս 2020թ սկսած և շարունակվող տնտեսաքաղաքական իրավիճակում հացահատիկների հիմնական տեսակների ներմուծման գների դինամիկայի վերլուծությամբ և առաջիկա ամիսներին դրանց գիտականորեն հիմնավորված կանխա-

տեսումների անհրաժեշտությամբ է պայմանավորված սույն հետազոտության արդիականությունը: Հոդվածի հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել ներմուծվող հացահատիկի հիմնական տեսակների ներմուծման միջին ամսական գների սեզոնայնության, զարգացման հիմնական միտումի և պատահականության բաղադրիչները՝ առաջիկա ամիսներին ներմուծման միջին գների կանխատեսման համար: Հետազոտությունում ստացված արդյունքներից առանձնացվել են գիտական նորույթի ուժ ունեցող հետևյալ դրույթները.

- Բացահայտվել է 2020-2022թթ. հացահատիկների հիմնական տեսակների ներմուծման միջին ամսական գները բնութագրող ժամանակային շարքի հիմնական բաղադրիչները,
- Կանխատեսվել են հացահատիկի հիմնական տեսակների ներմուծման միջին ամսական գները և հաշվի առնելով ներկայիս տնտեսաքաղաքական տիրող իրավիճակը, մինչև 2022թ. տարեվերջ կանխատեսվել են նաև ներմուծման գների հնարավոր առավելագույն և նվազագույն մակարդակները:

Յորենի ներմուծման ամսական միջին գինը բարձրացել է 1.45 ԱՄՆ դոլարով, զարու ներմուծման ամսական միջին գինը՝ 1,58 ԱՄՆ դոլարով, իսկ եգիպտացորենի հատիկի ներմուծման միջին ամսական գինը՝ 2,01 ԱՄՆ դոլարով: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 2020-2022 թթ. սեզոնայնությամբ պայմանավորված՝ ցորենի ներմուծման միջին ամսական գինը հիմնականում նվազել է ամռան և աշնան ամիսներին: Գարու և եգիպտացորենի ներմուծման միջին ամսական գինը հիմնականում նվազել է աշնան և ձմռան ամիսներին:

Բանալի բառեր. ադրիտիվ մոդել, ներմուծման միջին ամսական գին, գծային տրենդ, կանխատեսում, սեզոնային բաղադրիչ, վստահելիության միջակայք, տրենդի մոդելավորում

АНАЛИЗ ДИНАМИКИ МЕЖГОДОВЫХ КОЛЕБАНИЙ СРЕДНЕМЕСЯЧНЫХ ИМПОРТНЫХ ЦЕН НА ОСНОВНЫЕ ЗЕРНОВЫЕ В ПЕРИОД 2020-2022 ГГ. И ПРОГНОЗЫ (ПО ДАННЫМ РА)

**Вардан Самвелович Алексанян
Геворг Арутюнович Кешишян
Сергей Николаевич Широков
Ирина Рыксибаевна Трушкина
Алик Генрикович Саакян**

Аннотация: С 2020 года эпидемия Covid-19 и вторая Арцахская война негативно повлияли на внешнеторговый оборот между странами, мировые цены на товары и финансовые рынки. Не осталась в стороне от этих испытаний и Республика Армения. Обеспечение продовольственной безопасности страны в основном определяется бесперебойным импортом основных видов зерна, цены на которое в

исследуемый период имели специфическую динамику. Актуальность данной статьи обусловлена необходимостью анализа ежемесячных импортных цен на основные виды зерна в 2020-2022 гг. и их научного прогнозирования в текущей экономической и политической ситуации.

Основной целью настоящего исследования является изучение особенностей динамики импортных среднемесячных цен на основные виды импортируемого зерна и выявление сезонных, трендовых составляющих этих временных рядов для прогнозирования цен на ближайшие месяцы.

Научная новизна данного исследования заключается в следующем:

- Раскрыты основные компоненты временного ряда среднемесячных импортных цен на основные виды зерна в 2020-2022 гг.
- Спрогнозированы среднемесячные импортные цены на основные виды зерна, а также с учетом текущей экономической и политической ситуации прогнозируются верхний и нижний уровни импортных месячных цен до конца 2022 года.

Среднемесячная цена импорта пшеницы ежемесячно увеличивалась на 1,45 доллара США, среднемесячная цена импорта ячменя ежемесячно увеличивалась на 1,58 доллара США, а среднемесячная цена импорта зерна кукурузы ежемесячно увеличивалась на 2,01 доллара США. Результаты анализа показали, что в 2020-2022 годах под влиянием сезонного эффекта среднемесячная цена импорта пшеницы снижалась преимущественно летом и осенью. Среднемесячная цена импорта ячменя и кукурузы на зерно снижалась в основном в осенние и зимние месяцы.

Ключевые слова: аддитивная модель, тенденция, среднемесячные цены на импорт, линейный тренд, прогнозирование, сезонный компонент, доверительный интервал, трендовое моделирование

THE ANALYSIS OF DYNAMIC OF THE MONTHLY AVERAGE IMPORT PRICES OF THE MAIN GRAINS IN THE PERIOD 2020-2022 AND FORECASTS (BY THE DATA OF RA)

Vardan Samvel Aleksanyan
Gevorg Harutyun Keshishyan
Sergey Nikolay Shirokov
Irina Riksibay Trushkina
Alik Henrik Sahakyan

Abstract: Since 2020, the Covid-19 pandemic, as well as the second Artsakh war in the Republic of Armenia, have had an impact on foreign trade turnover between the countries, world commodity prices, and financial markets. The Republic of Armenia did not stand aside from these trials either. Ensuring the country's food security is

mainly due to the unhindered import of the main types of grain, the prices of which in the studied years were characterized by a special dynamic. The relevance of this article is conditioned by the necessity of the analysis of import monthly prices of main types of grains in 2020-2022 and their scientific forecasting in the current economic and politic situation started.

The main purpose of this research is to study the features of the dynamic of the import monthly average prices of the main types of imported grains and to reveal the seasonal, tendency components of these time series in order to forecast the prices in the coming months.

From the results of the study, the following provisions were identified that have the power of scientific novelty.

- The main components of time series of import monthly average prices of the main types of grains in 2020-2022 have been disclosed.
- The import monthly average prices of the main types of grains have been forecasted and taking account the current economic and political situation the upper and lower levels of import monthly prices have been predicted to the end of 2022 as well.

The import monthly average price of wheat monthly increased by USD 1.45, the import monthly average price of barley monthly increased by USD 1.58 and the import monthly average price of maize of grain monthly increased by USD 2.01. The results of analysis has shown that in 2020-2022 impacted by seasonal effect the import monthly average price of wheat decreased chiefly in summer and autumn. The import monthly average price of barley and maize of grain decreased chiefly in autumn and winter months.

Keywords: additive model, tendency, import monthly average prices, linear trend, forecasting, seasonal component, confidence interval, trend modeling

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Աշոտ Երջանիկի Ոսկանյան Կարինե Պետրոսի Մնացականյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Հոդվածի արդիականությունը: Գյուղատնտեսությունն իր ուրույն տեղն է ունի ՀՀ տնտեսությունում՝ 2021թ. կազմելով ՀՆԱ-ի շուրջ 11%-ը¹: Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում կարևորվում են հատկապես գյուղացիական տնտեսությունների դերն ու նշանակությունը, քանի որ դրանք ապահովում են գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 94%-ն²: Ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների արտադրական հնարավորությունները և եկամուտների ներկա մակարդակը չի ապահովում գյուղատնտեսության դինամիկ զարգացում և պարենային ապահովության անհրաժեշտ մակարդակ, ինչը հիմնականում պայմանավորված են այն խնդիրներով, որոնք առկա են ոլորտում:

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության հիմնական **նպատակ է** դիտարկվել առկա ռեսուրսային ներուժի վերլուծությունն ու դրա օգտագործման արդյունավետության բարձրացման **խնդիրները**: Մասնավորապես. բացահայտել ագրարային ոլորտի ռեսուրսների օգտագործման ներկա վիճակը և վեր հանել գյուղացիական տնտեսություններում դրանց օգտագործման հետ կապված խնդիրները:

Գրականության վերլուծություն: Թեմային շրջանակներում ուսումնասիրություններ են կատարվել Ա. Ոսկանյանի, Հ. Ջավադյանի, Ս. Ավետիսյանի, Է. Ղազարյանի, Հ. Ծպնեցյանի, Վ. Ալեքսանյանի և այլոց աշխատություններում: Ուսումնասիրություններ են իրականացվել պետական կառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և տարբեր տնտեսագետների կողմից: Մասնավորապես.

«ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ.» ռազմավարության շրջանակներում³ վեր են հանվել գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվող ռե-

¹ Պարենային ապահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ՎԿ, էջ 9, https://www.armstat.am/file/article/f_sec_4_2021_1.pdf

² ՀՀ ՎԿ տարեգիրք 2021թ., էջ 352 <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>

³ «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ.» ռազմավարություն, ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 19-ի N1886-Լ որոշում

սուրսների արդյունավետության օգտագործման հետ կապված խնդիրներին և տրվել արդյունավետության բարձրացման ուղղությունները:

Բաց հասարակության հիմնադրամի կողմից հրատարակած «Սուրսի-դավորման և ֆինանսավորման սխեմաները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանումը» հետազոտության¹, շրջանակներում ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության, գյուղացիական տնտեսությունների ֆինանսավորման գործընթացը՝ վերլուծելով և համապատասխան գնահատականներ տալով վարկավորման առանձնահատկություններին և պայմաններին, ներառյալ՝ վարկավորման ծավալներին, տոկոսադրույքներին, ինչպես նաև պետական սուրսի դավորման ծրագրերին:

«Գյուղատնտեսության ճգնաժամը Հայաստանում» աշխատությունում² անդրադարձ է կատարվել գյուղացիական տնտեսություններին պատկանող վարելահողերի չափերին, դրանց պատճառով առաջ եկած խնդիրներին, ռոտզման համակարգի առկա խնդիրներին, գյուղական բնակավայրերում զբաղվածությանը, ինչպես նաև տնտեսությունների եկամուտների և ֆինանսական ռեսուրսներին, դրանց ապահովման ուղիներին:

Եվրոպական միության հարևանության ծրագրի «Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտների գնահատումն Արևելյան գործընկերության երկրներում, Հայաստանի Հանրապետություն» հետազոտության³ շրջանակներում անդրադարձ է եղել գյուղացիական տնտեսություններին պատկանող վարելահողերին, դրանց չափերին, ռոտզման համակարգի խնդիրներին, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսներին: Առկա ռեսուրսային ներուժի մասին կան հիշատակումներ ոլորտին առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում, հայեցակարգերում, ինչպես նաև ռազմավարություններում և տարբեր ծրագրերում:

Ս. Ավետիսյանի «Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը» գրքում «Գյուղատնտեսության ներկա վիճակը» բաժնում հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել հողային, ջրային ռեսուրսների վիճակին⁴, իսկ

¹ Արտակ Ենգոյան, «Սուրսի դավորման և ֆինանսավորման սխեմաները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանումը» հետազոտություն

² ԳՅՈՒՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ / Հ. Վերմիշյան, Ա. Վարտիկյան, Է. Գևորգյան, Ս. Միսիկյան, Ա. Ղալամդարյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2022. -155 էջ: <http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/19277.pdf>

³ «Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտների գնահատումն Արևելյան գործընկերության երկրներում, Հայաստանի Հանրապետություն» Եվրոպական միության հարևանության ծրագրի, http://library.cmsa.am/media/docs/%D4%B3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6.pdf

⁴ Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը.-Եր.: «Լիմուշ» հրատարակչություն, 2010.-էջ 25, 238 էջ

«Ֆերմեր» գործնական ձեռնարկում հեղինակների կողմից ներկայացվել է աշխատանքային ռեսուրսները, դրանց օգտագործման արդյունավետությունը¹:

Մեթոդաբանություն

Հետազոտության ընթացքում օգտագործվել են համակարգային մոտեցման, ինչպես նաև ինդուկցիայի և դեդուկցիայի, վիճակագրական, վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

Հոդվածի համար տեղեկատվական և մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումները, վիճակագրական տարեգրքերը, ամսագրերի և տարբեր գիտական հոդվածների նյութերը, ինչպես նաև Կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված տվյալները:

Վերլուծություն


Ժամանակակից տնտեսության զարգացման մարտահրավերներն ու պարենային ապահովման ներկա խնդիրների լուծման հրամայականը պահանջում են հանրապետությունում ագրարային բարեփոխումները և իրականացվող քաղաքականությունն ուղղել գյուղացիական տնտեսությունների կայացմանը, զարգացմանը և խոշորացմանը: Ներկա իրավիճակով պայմանավորված կարևորվում է գյուղացիական տնտեսություններում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, որը կհանգեցնի տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանն ու եկամուտների ավելացմանը և կնպաստի ոլորտի մրցունակության բարձրացմանն ու պարենային անվտանգության ապահովմանը: Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորներին, հատկապես փոքր գյուղացիական տնտեսություններին, վերապահված է կարևոր դերակատարություն: Մեր կանխատեսամբ դեռևս փոքր գյուղացիական տնտեսությունները կպահպանեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալներում բարձր տեսակարար կշիռ:

Հողային ռեսուրսներ: Հաշվի առնելով հողային ռեսուրսների կարևորությունը՝ ուսումնասիրվել է գյուղացիական տնտեսությունների վարելահողերի նպատակային օգտագործման վիճակը: Նպատակային չեն օգտագործվում 443.99 հազ. հա վարելահողերի շուրջ 49,8%-ը²: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2020թ. 2015թ. համեմատ բոլոր մարզերում ունեցել է կրճատման միտում: Առկա վարելահողերի հաշվով 2020թ. ամենացածր նպատակային օգտագործում դիտվել են Վայոց ձորի և Տավուշի մարզերում՝ համապատասխանաբար 23,89% և 25,32%, իսկ ամենաբարձրն Արարատի մարզում՝ 66,67 տոկոս: Հանրապետության առումով վարելահողերի օգտագործումը կազմել է 50,25 տոկոս³ (**գծապատկեր 1**):

¹ Ֆերմեր. գործնական ձեռնարկ. -Եր.: ՀԱԱՀ, 2018. -էջ 418, 512 էջ

² «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվություն (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտներ) 2020թ. փաստաթղթի <https://cadastre.am/storage/files/2020hanr-hashvekishir-22.pdf>, ՀՀ ՎԿ 2021թ. տարեգիրքում <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>

³ ՀՀ ՎԿ տարեգիրք 2021թ. <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>, «ՀՀ հողային ֆոն-



Գծապատկեր 1. Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, տոկոս¹

Ջրային ռեսուրսներ: Հանրապետության բուսաբուծության համախառն արտադրանքի 70-75%-ից ավելին ստացվում է ոռոգելի հողատարածություններից: Ջրային ռեսուրսների օգտագործումն ու պահպանումն ագրարային ոլորտի համար ունի կենսական նշանակություն:

Հանրապետության տարածքում ջրի հոսքը բաշխված է ծայրահեղ անհամաչափ, ինչպես ըստ տարածքի, այնպես էլ ըստ տարվա ամիսների: Տարեկան հոսքի ավելի քան 50%-ն բաժին է ընկնում գարնանային շրջանին և միայն 20%-ն՝ ամռանը, այսինքն՝ ջրի առավելագույն պահանջի շրջանին: Ներկայումս հանրապետության տնտեսության կարիքների համար հավաքվում և օգտագործվում է գետերի հոսքի մոտ 48%-ը, ջրային պաշարների մնացած մասը (շուրջ 6.5 միլիարդ մ³) հոսում է հարևան պետություն: Գետերի ողջ բնական հոսքը հավաքվում է միայն տարվա ամռան ամիսներին: Հենց այդ հանգամանքն է որոշում ճյուղի տեխնիկական քաղաքականությունը, ջրամբարներում գետերի տարեկան հոսքի ավելի խորը կարգավորման անհրաժեշտությունը, միաժամանակ իրականացնելով ջրային ռեսուրսների առավել խնայողական և ռացիոնալ

դի առկայության և բաշխման հաշվետվություն (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտներ) 2015թ, 2016թ, 2017թ, 2018թ, 2019թ., 2020թ. փաստաթղթեր, https://www.cadastre.am/page/land_balance, <https://cadastre.am/storage/files/2020hanr-hashveks Shir-22.pdf>

¹ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածքները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019, 2020թ», ՀՀ ՎԿ էջ 63, 64, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2014-2018թթ.» ՀՀ ՎԿ, Եր.: 2019, էջ 46, «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվություն (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտներ) 2015թ, 2016թ, 2017թ, 2018թ, 2019թ փաստաթղթերից, https://www.cadastre.am/page/land_balance

օգտագործման միջոցառումներ¹: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է նախագծել և կառուցել փոքր և միջին տարողությամբ ջրամբարներ, որոնք հնարավորություն կտան արդյունավետ և ճիշտ բաշխել հանրապետությունում առկա սակավ ջրային պաշարները, ինչպես նաև իրականացնել համապատասխան մասնագետների պատրաստում և վերապատրաստում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսություններում ոռոգման համակարգի հետ կապված առկա հիմնական խնդիրներն են.

- Ջրամատակարարման համակարգերի մաշվածությունը և քայքայվածությունը, որոնց պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը հանգեցնում է արտահոսքի ու կորուստների (հատկապես ներհամայնքային ցանցերում): Հարցումները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսություններին հասանելի ջրի կորուստները բավականին բարձր են՝ մոտ 70 տոկոս, ինչը պայմանավորված է համայնքների հին և մաշված ցանցերով ու մագիստրալների մաքրման աշխատանքների գրեթե բացակայությամբ: Ներքին ցանցերը հանդիսանում են համայնքի սեփականություն՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով երկար ժամանակ չեն նորոգվում և մաքրման աշխատանքներ գրեթե չեն իրականացվում, որի պատճառով ոռոգման ջուրը չի հասնում տնտեսություններին, որն էլ հողի չմշակման պատճառ է դառնում:
- Շատ գյուղացիական տնտեսությունների համար խնդիր է ջրամբարներում կուտակված ջրի ոչ ճիշտ ու անարդյունավետ բաշխումը: Ըստ տնտեսությունների ջուրը հատկապես անհրաժեշտ է բույսին աճի այն փուլում, երբ նպաստում է բերքի ձևավորմանը, այլ ոչ թե այն ժամանակ, երբ կարողանում են ջուր հասցնել: Հոսքի մեծ մասը տնտեսությունները սկսում են ստանալ զարնանը և միայն փոքր մասը՝ ամռանը՝ ջրի առավելագույն պահանջի շրջանին, որի արդյունքում արդեն հուլիս և օգոստոս ամիսներին առաջ է գալիս ոռոգման ջրի պակաս, ջրամատակարարման ժամանակացույցի խախտում:
- Արարատի և Արմավիրի մարզերի ոռոգման համակարգի մաս են կազմում խորքային հորերը, որոնք աշխատում են պոմպերի միջոցով: Խորքային հորերի պոմպերը հաճախ չեն աշխատում և երկար ժամանակ է պահանջվում դրանց վերանորոգման և նորից շահագործման համար: Սա իր հերթին առաջ է բերում համայնքներում ջրի մատակարարման ժամանակացույցի խախտման և ոռոգման ջրի պակասի:
- Գանձումների ցածր մակարդակը: Տարեվերջին ՋՕԸ-ը, չկարողանալով ամբողջությամբ հավաքագրել նախորդ տարվա ջրի վարձը, հրաժարվում են ջուր տրամադրել գյուղացիական տնտեսություններին: Այստեղ խնդիր է նաև պայմանագրային պարտավորությունների միակողմանի խախտումը, այ-

¹ Հոկոբյան Լ., Մանուչարյան Մ. «Ջրօգտագործման տնտեսական արդյունավետությունը ՀՀ-ում», Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության մարզերում, Գիտական նյութեր, Եղեգնաձոր 2015, էջ 144-150.

սինքն՝ չի իրականացվում պայմանագրով նախատեսված քանակով ջրի լրիվ մատակարարում, սակայն գյուղացիական տնտեսություններից վճարումներ պահանջվում է կատարել ամբողջությամբ:

- Կրկնակի վճարումները՝ կապված գերնորմատիվ հողերի ջրերի վարձավճարների հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ համակարգում կիրառվող նորմատիվները մշակված են դեռ խորհրդային տարիներին և առանց հողի խրոնոմետրաժ անելու, ջրի վարձ է գանձվում:

Աշխատանքային ռեսուրսներ: Մարզային կտրվածքով, 2020թ. տվյալներով, աշխատանքային ռեսուրսների 10.4%-ը կենտրոնացված են Արարատի, 9.8%՝ Կոտայքի և 9.7%՝ Լոռու մարզերում: Ամենացածր ցուցանիշները գրանցվել են Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում՝ կազմելով համապատասխանաբար 1.7 և 3.9 տոկոս: Ըստ վիճակագրության գյուղական զբաղվածության տեսակարար կշիռը տարիների ընթացքում նվազել է գրեթե բոլոր մարզերում: Մասնավորապես՝ 2020թ. 2016թ. համեմատ ամենաշատը կրճատվել է Լոռու և Վայոց Ձորի մարզերում՝ համապատասխանաբար՝ 27,8 և 33,3 տոկոսներով:

Գյուղատնտեսության ոլորտում աշխատողների տեսակարար կշիռը 2020թ. 2016թ. համեմատ գրեթե բոլոր մարզերում նվազել է: Մասնավորապես՝ Վայոց Ձորի, Տավուշի և Լոռու մարզերում ցուցանիշը կրճատվել է համապատասխանաբար՝ 77,4, 67,1 և 60,9%-ով: Աճ է գրանցվել միայն Արագածոտնի՝ 24,6, Կոտայքի՝ 40 և Սյունիքի մարզերում՝ 28,7 տոկոսով (**աղյուսակ 1**):

Հարցումները վկայում են, որ բուն գյուղատնտեսությամբ զբաղված լինելու ժամանակահատվածը միջին հաշվով կազմում է 3-6 ամիս: Ըստ էության, եթե գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանեկան տնտեսություններն ամբողջ տարին զբաղված են լինում ընդամենը 36%-ը, ապա մնացած ժամանակաշրջանում, եթե զբաղված չեն ոչ գյուղատնտեսական աշխատանքով (օրինակ ուսուցիչ, էլեկտրիկ, ինժիներ կամ չունի արհեստ), ապա գտնվում են պարապտորդի մեջ: Ժամանակավոր (սեզոնային) աշխատողների թիվը ոլորտում կազմում է մոտ 15,6%, կադրերի հոսունության միջին մակարդակը՝ 5,1 տոկոս:

Գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականությունը կազմում է ոչ գյուղատնտեսական ոլորտում աշխատանքի արտադրողականության մոտ 40%-ը:¹

Այսպիսով, համեմատաբար խոշոր գյուղացիական տնտեսություններն ունեն մասնագիտական աշխատողների պակաս, քանի որ աշխատավարձերը ցածր են, աշխատանքը՝ դժվար, իսկ փոքր տնտեսություններում գյուղատնտեսական աշխատանքներով հիմնականում զբաղվում են ընտանիքի անդամները:

¹ Հայաստանի գյուղատնտեսական քաղաքականության ռազմավարության և գործողությունների ծրագիր (ԴԲՌԳԾ), էջ 7

ՀՀ մարզերում աշխատանքային ռեսուրսներն ըստ գյուղատնտեսական զբաղվածության¹

		Աշխատանքային ռեսուրսներ /հազ.մարդ/					Զբաղվածներ /հազ. մարդ/ գյուղական					Գյուղատնտեսական զբաղվածություն /հազ. մարդ/				
		2016թ	2017թ	2018թ	2019թ	2020թ	2016թ	2017թ	2018թ	2019թ	2020թ	2016թ	2017թ	2018թ	2019թ	2020թ
		1.	Արագածոտն	79.8	82.6	69.8	76.1	87.7	37.9	38.6	31.4	34.3	39.0	17.9	19.5	15.3
2.	Արարատ	185.5	182.1	184.1	213.6	229.1	89.5	90.2	77.4	87.3	77.4	54.2	56.7	40.3	43.2	39.0
3.	Արմավիր	209.6	199.4	186.0	183.3	182.8	103.4	90.0	92.1	107.1	93.6	-	-	67.5	84.8	58.5
4.	Գեղարքունիք	129.7	151.5	154.1	170.7	170.2	42.1	54.7	40.6	44.6	50.4	-	-	23.0	22.4	22.8
5.	Լոռի	183.8	189.0	183.5	208.7	213.3	57.1	54.9	33.7	31.3	41.2	49.4	43.1	21.6	13.4	19.3
6.	Կոտայք	197.3	194.0	190.7	219.5	216.0	40.8	40.0	37.1	45.8	46.1	18.0	13.1	11.9	12.3	10.8
7.	Շիրակ	180.9	172.6	179.5	196.5	197.5	49.8	44.9	34.9	46.4	43.8	39.9	34.1	23.5	25.7	28.0
8.	Սյունիք	78.8	85.8	95.0	96.5	94.4	18.1	20.6	24.1	21.3	25.1	14.6	14.2	15.1	12.7	18.8
9.	Վայոց Ձոր	31.2	28.9	28.5	31.6	37.1	13.8	13.3	7.6	8.9	9.2	9.3	9.0	1.6	2.2	2.1
10.	Տավուշ	87.2	94.1	91.7	99.0	112.6	32.7	33.8	18.6	24.1	26.8	22.2	21.9	3.9	5.5	7.3
	ՀՀ	2011,4	2021,3	2007,3	2201.1	2200.0	485.2	481.0	397.5	451.1	452.7	225.5	211.6	223.7	235.9	229.6

¹ ՀՀ ՎԿ կայքէջ <https://www.armstat.am/am/?nid=651>, https://www.armstat.am/file/article/nasel_01.01.2020.pdf,
https://armstat.am/file/article/marzer_2019_17.pdf, https://www.armstat.am/file/article/marzer_2021_17.pdf

Ֆինանսական ռեսուրսներ: Գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցները ձևավորվում են գյուղատնտեսական գործունեությունից, ոչ գյուղատնտեսական աշխատանքներից (պետական համակարգ, արտագնա աշխատանք և այլն) և տարբեր նպատակների համար վերցրած վարկային միջոցներից: Հարցումները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսությունները ֆինանսական միջոցների համալրումը հիմնականում իրականացնում են գյուղատնտեսական վարկերի միջոցով: Մասնավորապես՝ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղացիական տնտեսություններին 2018թ. տրամադրվել է 5282 միավոր ընդհանուր 21,9 մլրդ դրամի վարկ, իսկ 2021թ.՝ 29487 միավոր վարկ, ընդհանուր՝ 72,9 մլրդ դրամի, աճը կազմել է 24205 միավոր վարկ՝ 43,3 մլրդ. դրամ կամ շուրջ 98 %¹:

Ըստ մեր ուսումնասիրությունների՝ գյուղացիական տնտեսությունները, որպես կանոն, ծախսերի պլանավորում և ֆինանսական միջոցների հաշվարկներ չեն իրականացնում: Բացի այդ վերցված վարկային միջոցների որոշ մասն ուղղվում է այլ վարկային պարտավորությունների մարման համար:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների հայթայթման հիմնական ուղղությունն է տարբեր նպատակների համար վերցրած վարկային միջոցները՝ հատկապես «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում տրամադրված միջոցները, որոնք օգտագործվում են ինչպես տնտեսությունում առաջացած խնդիրների լուծման, այնպես էլ այլ վարկային պարտավորությունների մարման համար:

Գիտական նորույթ

Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում ռեսուրսային ներուժի օգտագործման վերլուծությունը հնարավորություն է տալիս առաջարկելու.

1. ՀՀ կառավարությանը նախաձեռնել գյուղացիական տնտեսությունների գրանցման «ռեսսոր», որտեղ յուրաքանչյուր տնտեսության գրանցումը (նաև ըստ համապատասխան օրենքի) կդիտարկվի պարտադիր պայման, պարզորոշ կերևա ռեսուրսների տնօրինման և կառավարման վիճակը, ինչպես նաև տարեվերջյան արդյունքները:
2. Վեր են հանվել ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման խոչընդոտները, որոնց մեղման ուղիներից կարող են լինել տնտեսավորող-ՋՕԸ համագործակցությունում գյուղացիական տնտեսությունների դերի բարձրացումն ու ՋՕԸ-ի պատասխանատվության և գործառույթների ընդլայնումը:
3. Վերլուծվել է ՀՀ գյուղատնտեսությունում աշխատանքային ռեսուրսների զբաղվածության վիճակը: Արդյունքում եզրահանգել ենք. Զբաղվածության

¹ Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2021թ. տարեկան հաշվետվություն, Երևան 2022թ. էջեր 6, 9, 18, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

մակարդակի բարձրացմանը կնպաստի գյուղացիական տնտեսությունների ղեկավարներին և դրանցում ընդգրկված աշխատողներին կենսաթոշակային համակարգում ներգրավելը՝ կենսաթոշակային տարիքը սահմանելով 60 տարեկան: Միաժամանակ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում սահմանված տարիքային շեմում գտնվող գյուղացիական տնտեսությունում զբաղվածների կուտակային ֆոնդերում իրականացված վճարները հետագայում կապահովեն սլյալ թոշակատուին բարձր կենսաթոշակ:

Եզրակացություն

Աշխարհաքաղաքական իրավիճակը, ժամանակակից տնտեսության զարգացման մարտահրավերները, ինչպես նաև պարենային ապահովման խնդիրների լուծման հրամայականը պահանջում են ՀՀ-ում շարունակական դարձնել ագրարային բարեփոխումները և ագրարային քաղաքականությունն ուղղել գյուղացիական տնտեսությունների կայացմանն ու զարգացմանը: Միաժամանակ պետք է գիտակցել, որ հանրապետության գյուղատնտեսությունում ծառայած խնդիրները վերագրվում են գյուղացիական տնտեսություններին և դրանց կողմից օգտագործվող ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմանը, քանի որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 94%-ն ապահովում են շուրջ 317 հազ. գյուղացիական տնտեսություններ: Միևնույն ժամանակ տնտեսություններում են արտադրվում հացահատիկի 44,1%, պտղի և հատապտուղների 23%, բանջարեղենի 11,4%, կարտոֆիլի 21,3%, կաթի և կաթնամթերքի 35,8%, մսի 18%, ձվի 62,7% օգտագործվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ մի մասն էլ իրացվում ապրանքափոխանակության սկզբունքներով: Ուստի գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների հիմնական նպատակ պետք է դառնա ապրանքայնության մակարդակի և մրցունակության շարունակական բարձրացումը, իսկ դրան հասնելու հիմնական ուղիներից է ռեսուրսային ներուժի ներկա վիճակի վերլուծությունն ու դրանց օգտագործման հետ կապված խնդիրների վերհանումը:

Կատարված ուսումնասիրությունը, իրականացված հարցումներն ու վերլուծությունները ցույց են տվել, որ գյուղացիական տնտեսություններում բավականին խնդիրներ են ծառայած հողային, ջրային, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման բնագավառում: Նպատակային չեն օգտագործվում 443.99 հազ. հա վարելահողերի շուրջ 49,8%-ը: Ցածր է նաև ոռոգման համակարգի գործունեության արդյունավետությունը, ջրի կորուստները հասնում են 45-50%, ինչը պայմանավորված է ջրամատակարարման համակարգերի մաշվածությամբ և քայքայվածությամբ, ինչպես նաև ներքին ցանցերի մաքրման աշխատանքների գրեթե բացակայությամբ: Խնդիրներ կան տարվա տարբեր ամիսներին գյուղացիական տնտեսությունների աշխատուժի ծանրաբեռնված օգտագործման ուղղությամբ, ցածր է ոլորտում աշխատանքի արտադրողականությունը: Մասնավորապես. բուն գյուղատնտեսությամբ զբաղված լինելու ժամանակահատվածը միջին հաշվով կազմում է 3-6 ամիս: Ըստ էության, եթե գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանեկան տնտեսություններն ամբողջ տարին զբաղված են լինում

ընդամենը 36%-ը, իսկ մնացած ժամանակաշրջանում, եթե զբաղված չեն ոչ գյուղատնտեսական աշխատանքով, ապա գտնվում են պարապուրդի մեջ:

Հետազոտությունների ու հարցումների արդյունքում աշխատանքում առաջադրված մոտեցումները հնարավորություն կտան արդյունավետ դարձնելու գյուղացիական տնտեսություններում ռեսուրսային ներուժի օգտագործումը, դրանով իսկ նպաստելու գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորների կայացմանը, ապրանքայնության մակարդակի և մրցունակության բարձրացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը.- Եր.: «Լիմուշ» հրատարակչություն, 2010.- էջ 25, 238 էջ:
2. Արտակ Ենգոյան, «Մուրփիդավորման և ֆինանսավորման սխեմաները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանումը» հետազոտություն:
3. Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2021թ. տարեկան հաշվետվություն, Երևան 2022թ. էջեր 6, 9, 18
<https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>
4. «Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտների գնահատումն Արևելյան գործընկերության երկրներում, Հայաստանի Հանրապետություն» Եվրոպական միության հարևանության ծրագիր, <http://library.cmsa.am/media/docs/%D4%B3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6 %D6%87 %D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6.pdf>
5. ԳՅՈՒՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ / Հ. Վերմիշյան, Ա. Վարտիկյան, Է. Գևորգյան, Ս. Միչիկյան, Ա. Ղալամդարյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2022. -155 էջ:
<http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/19277.pdf>
6. «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածքները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019, 2020թ», ՀՀ ՎԿ: Եր.: 2020թ. 2021թ.- էջ 63, 64:
7. «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ.» ռազմավարություն, ՀՀ կառավարության 2019թ.դեկտեմբերի 19-ի N1886-Լ որոշում:
8. Հայաստանի գյուղատնտեսական քաղաքականության ռազմավարության և գործողությունների ծրագիր (ԴՔՌԳԾ), էջ 7:
9. ՀՀ ՎԿ տարեգիրք 2021թ. <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>,
10. «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվություն (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների) 2015թ, 2016թ, 2017թ, 2018թ, 2019թ., 2020թ.

- 2021թ. փաստաթղթեր, https://www.cadastre.am/page/land_balance, <https://cadastre.am/storage/files/2020hanr-hashvekshir-22.pdf>
11. «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2014-2018թթ.» ՀՀ ՎԿ, Եր.: 2019, էջ 46:
 12. Պարենային սպահովություն և աղքատություն, 2021թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ՎԿ, էջ 9, https://www.armstat.am/file/article/f_sec_4_2021_1.pdf
 13. ՀՀ ՎԿ կայքէջ <https://www.armstat.am/am/?nid=651>, https://www.armstat.am/file/article/nasel_01.01.2020.pdf, https://armstat.am/file/article/marzer_2019_17.pdf, https://www.armstat.am/file/article/marzer_2021_17.pdf
 14. Ֆերմեր. գործնական ձեռնարկ.-Եր.: ՀԱԱՀ, 2018.-էջ 418, 512 էջ:

References

1. Avetisyan S. Hayastani gyowghatntesowt'yowny' & agroveramshakowmy' .-Er.: «Limowsh» hratarakchowt'yown, 2010. -e'j 25, 238 e'j
2. Artak Engoyan, «Sowbsidavorman & finansavorman sxemanery' gyowghatntesowt'yownowm, gyowghatntesakan apranqneri artahanman xt'anowmy'» heta-zotowt'yown
3. Gyowghatntesowt'yan petakan ajakcowt'yan c'ragrer, 2021t'. tarekan hashvetvowt'yown, Er&an 2022t'. e'jer 6, 9, 18, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>
4. «Gyowghatntesowt'yan & gyowghakan shrjanneri zargacman olortneri gnahatowmn Ar&elyan gorc'y'nkerowt'yan erkrnerowm, Hayastani Hanrapetowt'yown» Evropakan miowt'yan har&anowt'yan c'ragir, http://library.cmsa.am/media/docs/%D4%B3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6.pdf
5. GYOWGHAKANOWT'YAN TwGNAJhAMY' HAYASTANOWM / H. Vermishyan, A. Vartikyan, E'. G&orgyan, S. Michikyan, A. Ghalamdaryan.- Er.: Fridrix E'bert himnadrami hayastanyan masnatwyowgh, 2022. -155 e'j, <http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/19277.pdf>
6. «Gyowghatntesakan mshakabowyseri canqayin tarac'owt'yownnery', bazmamya tnkarkneri tarac'qneri', hamaxar'n berqy' & mijin berqatvowt'yowny' 2019, 2020t'», HH VK: Er.: 2020t'.2021t'. e'j 63, 64
7. «HH gyowghatntesowt'yan olorti tntesakan zaragacowmn apahovogh himnakan owghghowt'yownneri 2020-2030t'.» r'azmavarowt'yown, HH kar'avarowt'yan 2019t'.dektemberi 19-i N1886-L oroshowm
8. Hayastani gyowghatntesakan qaghaqakanowt'yan r'azmavarowt'yan & gorc'oghowt'yownneri c'ragir (DQR'GC'), e'j 7
9. HH VK taregirq 2021t'. <https://www.armstat.am/file/doc/99526883.pdf>.
10. «HH hoghayin fondi ar'kayowt'yan & bashxman hashvetvowt'yown (y'st npa-

takayin nshanakowt'yan, hoghatesqeri ow gorc'ar'nakan nshanakowt'yan & sep'akanowt'yan sowbyektneri) 2015t', 2016t', 2017t', 2018t', 2019t'. 2020t'. 2021t'. p'astat'ght'er, https://www.cadastre.am/page/land_balance, <https://cadastre.am/storage/files/2020hanr-hashvekshir-22.pdf>

11. Parenayin apahovowt'yown & aghqatowt'yown, 2021t'. hownvar-dektember, HH VK, e'j 9,
12. Parenayin apahovowt'yown & aghqatowt'yown, 2021t'. hownvar-dektember, HH VK, e'j 9, https://www.armstat.am/file/article/f_sec_4_2021_1.pdf
13. HH VK kayqe'j <https://www.armstat.am/am/?nid=651>, https://www.armstat.am/file/article/nasel_01.01.2020.pdf, https://armstat.am/file/article/marzer_2019_17.pdf, https://www.armstat.am/file/article/marzer_2021_17.pdf
14. Fermer. gorc'nakan d'er'nark.-Er.: HAAH, 2018.-e'j 418, 512 e'j

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Աշոտ Երջանիկի Ոսկանյան
Կարինե Պետրոսի Մնացականյան**

Համառոտագիր: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման մարտահրավերով և պարենային ապահովման խնդիրներով պայմանավորված հրամայական է դառնում գյուղացիական տնտեսությունների որպես տնտեսական միավորների լիարժեք կայացումը, ինչպես նաև դրանց կողմից օգտագործվող ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, քանի որ դրանք ապահովում են գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 94 տոկոսը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունների արտադրական հնարավորությունները և եկամուտների ներկա մակարդակը չի ապահովում գյուղատնտեսության դինամիկ զարգացում և պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտ մակարդակ, ինչը հիմնականում պայմանավորված են ոլորտում առկա խնդիրներով:

Հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունների դերը ոլորտի զարգացման, ինչպես նաև պարենային անվտանգության ապահովման գործում հիմնական նպատակ է դիտարկվել առկա ռեսուրսային ներուժի վերլուծությունն ու դրա օգտագործման արդյունավետության բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում ռեսուրսային ներուժի օգտագործման վերլուծությունը հնարավորություն է տալիս, առաջադրված խնդիրներով պայմանավորված, կանխորոշել դրանց լուծման ուղղությունները:

Հաշվի առնելով կատարված հարցումներն ու ուսումնասիրությունները՝ առաջադրված մոտեցումները հնարավորություն կտան բարելավել գյուղա-

տնտեսական առաջնային արտադրական միավորների (գյուղացիական տնտեսությունների) կողմից օգտագործվող ռեսուրսային ներուժի հնարավորությունները, ինչպես նաև բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը, ինչը կրերի տնտեսությունների մրցունակության բարձրացմանն ու եկամուտների ավելացմանը:

Բանալի բառեր. Գյուղատնտեսություն, գյուղացիական տնտեսություն, հողային ռեսուրսներ, ջրային ռեսուրսներ, աշխատանքային ռեսուրսներ, ֆինանսական ռեսուրսներ, վերլուծություն, հիմնախնդիրներ, օգտագործման արդյունավետություն:

АНАЛИЗ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕСУРСНОГО ПОТЕНЦИАЛА В КРЕСТЬЯНСКИХ ХОЗЯЙСТВАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ашот Ерджаникович Восканян
Карине Петросовна Мнацаканян

Аннотация: В связи с вызовами развития сельского хозяйства Республики Армения и проблемами продовольственного обеспечения обязательным становится полное становление крестьянских хозяйств как экономических единиц, а также эффективное использование ими ресурсного потенциала, поскольку они обеспечивают более 94 процентов валовой продукции сельского хозяйства. Исследования показывают, что производственные возможности и нынешний уровень доходов крестьянских хозяйств не обеспечивают динамичного развития сельского хозяйства и необходимого уровня обеспечения продовольственной безопасности, что в основном обусловлено проблемами данной сферы.

С учетом роли крестьянских хозяйств в развитии сферы, а также в обеспечении продовольственной безопасности основной целью был рассмотрен анализ имеющегося ресурсного потенциала и повышение эффективности его использования.

Анализ использования ресурсного потенциала в крестьянских хозяйствах Республики Армения, обусловленный поставленными задачами, дает возможность предопределить направления их решения.

Учитывая проведенные опросы и исследования, предложенные подходы позволят улучшить возможности ресурсного потенциала, используемого первичными сельскохозяйственными производственными единицами (крестьянскими хозяйствами), а также повысить эффективность их использования, что приведет к повышению конкурентоспособности хозяйств и увеличению доходов.

Ключевые слова: Сельское хозяйство, крестьянское хозяйство, земельные ресурсы, водные ресурсы, трудовые ресурсы, финансовые ресурсы, анализ, проблемы, эффективность использования.

ANALYSIS OF THE USE OF RESOURCE CAPACITY IN RURAL ECONOMIES OF THE REPUBLIC OF ARMENIA

Ashot Erjanik Voskanyan

Karine Petros Mnatsakanyan

Abstract: Due to the challenge of the development of agriculture in the Republic of Armenia and the problems of food security, the full establishment of farms as economic units, as well as the effective use of the resource potential used by them becomes an imperative, as they provide more than 94% of the gross agricultural product. Studies show that the production possibilities of farms and the current level of income do not ensure the dynamic development of agriculture and the necessary level of food security, which is mainly due to the existing problems in the sector.

Taking into account the role of agricultural farms in the development of the sector, as well as in the maintenance of food security, the analysis of the available resources and the improvement of the effectiveness of its use was considered as the main goal.

The analysis of the use of resource potential in the agricultural farms of the Republic of Armenia creates an opportunity to predetermine the directions of their solution, determined by the presented problems, which may later lead to scientific novelty.

Considering conducted surveys and studies, the proposed approaches will provide an opportunity to improve the resource potential used by primary agricultural production units, as well as to increase the efficiency of their use, which will lead to an increase in the competitiveness of farms and increase in income.

Keywords. Agriculture, farming, land resources, water resources, labor resources, financial resources, analysis, problems, efficiency of use.

**ԽԱՂՈՂԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԻ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ԾԱՎԱԼՆԵՐԻ ՓՈԽԿԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ**

**Արման Համլետի Հարությունյան
Գևորգ Հարությունի Քեշիշյան**

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Խաղողագործությունը և գինեգործական արտադրանքների արտադրությունը Հայաստանի տնտեսության պատմականորեն զարգացած ճյուղերից է: Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին, սկզբում դանդաղ, ապա կայուն տեմպերով վերականգնվեց և զարգացավ խաղողագործությունը և գինեգործական արտադրանքների արտադրությունը: Խաղողի համախառն բերքը, պայմանավորված լինելով տնկարկների տարածությունների և բերքատվության մակարդակի փոփոխություններով, իր էական ազդեցությունն է թողնում գինեգործության զարգացման վրա: Այս ճյուղերի արտադրանքների փոխկախվածության քանակական գնահատականների ստացումը և դրանցում տեղ գտած օրինաչափությունների բացահայտումը միշտ էլ արդիական է խաղողագինեգործական ճյուղերի մասնագիտացման խորացման գործում:

Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ՀՀ-ում 2000-2021թթ. խաղողի տնկարկների տարածությունների, բերքատվության մակարդակի, համախառն բերքի դինամիկան դրանց ազդեցությունը գինեգործական արտադրանքի ծավալների դինամիկայի վրա: Այս նպատակով խնդիրներ են դրվել՝

- Բացահայտել ՀՀ-ում 2000-2021թթ. խաղողի տնկարկների, բերքատվության մակարդակի և համախառն բերքի զարգացման միտումները,
- Վերլուծել ՀՀ-ում 2000-2021թթ. կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների դինամիկան,
- Բացահայտել 2000-2021թթ. կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա խաղողի համախառն բերքի ազդեցության չափը և այդ փոխկախվածություններում տեղ գտած օրինաչափությունները:

Գրականության վերլուծություն

Գինեգործության զարգացումը ուղղակիորեն պայմանավորված է տեխնիկական սորտի խաղողի արտադրության ծավալներով, սա էլ հաշվի առնելով ոլորտին առնչվող գրականության ուսումնասիրությամբ փորձել ենք ծանոթանալ այն մեթոդաբանությանը, որը կիրառվում է ոլորտը ներկայացնող հետազոտողների կողմից՝ նշված հարցի բացահայտման համար: Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին խաղողագինեգործական ճյուղի ագրոտեխնոլոգիական, տնտեսական հիմնախնդիրներին անդրադարձել են պրոֆեսորներ Ս. Ավետիսյանը, Է.Ս. Ղազարյանը, Ա.Հ. Բայադյանը և ուրիշներ: Հայկական աղբյուրներում հիմնականում անդրադարձ է կատարվում ոլորտի առկա վի-

ճակին, վիճակագրական տվյալների վերլուծությանը: Ներկայումս ՀՀ-ում իրականացվում են մաքրասորտ խաղողի այգիների հիմնման և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման ծրագրեր¹: Ինչպես նշել է Ա.Ն. Բայադյանը, խաղողագործության զարգացման հետագա ընթացքը կապյանաավորվի ոչ այնքան ներքին, որքան արտաքին հանգամանքներով, որի համար պահանջվում է սորտային կազմի և արտադրության տեխնոլոգիաների նոր լուծումներ: Մասնավորապես պետք է ընդլայնվեն սեղանի և խերեսային գինիների հումքային բազան, Էկոլոգիապես մաքուր արտադրանքի եվրոստանդարտի պահանջներին համահունչ խաղողի գինի²: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Դիեգո Ժոզե Ֆերնանդես Լոպեզի և այլոց կողմից ներկայացվող հոդվածը, որում անդրադարձ է կատարվում խաղողի բերքատվության, որակի և կոնկրետ կլիմայական պայմանների միջև կապի բացահայտմանը³: Ջամալին և այլոք հետաքրքիր վերլուծություն են արել պարզելու համար գինեգործությանն առնչվող հետազոտությունների և գինու արտադրության ծավալների կապի բացահայտման ուղղությամբ⁴: Առանձին ուսումնասիրության առարկա է նաև կլիմայի փոփոխության և խաղողի ու գինու որակի, ծավալների փոփոխության կապի բացահայտումը⁵, գինեգործության բիզնես արդյունքների վերլուծությունը⁶: Ստիվենսը գինիների պահանջարկի վերլուծության ժամանակ առանձին տեսակների գինիների գների և խաղողի գնի միջև կապը ներկայացնում է լազային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելի միջոցով:⁷

Մեթոդաբանություն

Հիմնականում սոցիալ-տնտեսական երևույթները ժամանակի ընթացքում միմյանց վրա ազդում են ժամանակի տարբեր պահերի դրությամբ: Սույն հետազոտություն խաղողի համախառն բերքի ծավալները կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա ազդում են ժամանակի ընթացքում՝

-
- ¹ Ս. Ավետիսյան. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը.-Եր.: ԼԻՄՈՒՇ հրատարակչություն, 2010.-233էջ, էջ.44
 - ² ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները /Ա.Ն. Բայադյան. Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2013.-144էջ, էջ 60
 - ³ Diego José Fernández-López, José Ignacio Fernández-Fernández, Celia Martínez-Mora, Juan Antonio Bleda-Sánchez and Leonor Ruiz-García , Productiveness and Berry Quality of New Wine Grape Genotypes Grown under Drought Conditions in a Semi-Arid Wine-Producing Mediterranean Region, *Plants* 2022, 11, 1363, <https://doi.org/10.3390/plants11101363>
 - ⁴ H.R. Jamali, C.C. Steel, E. Mohammadi, Wine research and its relationship with wine production: a scientometric analysis of global trends, *Australian Journal of grape and wine research*, 2020
 - ⁵ Ramón Mira de Orduña, Climate change associated effects on grape and wine quality and production, *Food Research International* Volume 43, Issue 7, August 2010, Pages 1844-1855
 - ⁶ Tajana Čop, Josip Juračak, Mario Njavro, Production and Business Results of Wine Producers in Continental and Adriatic Croatia, *Proceedings in System Dynamics and Innovation in Food Networks* 2019, 93-101
 - ⁷ Steven S. Cuellar and Ryan Huffman “Estimating the demand for wine using instrumental variable techniques” *Journal of Wine Economics*, Volume 3, Issue 2, Fall 2008, P 1–13, p.4-5

որոշակի պահից սկսած: Նմանօրինակ փոփոխված ժամանակային շարքերի դեպքում դինամիկ լագային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելը ներկայացվում է հետևյալ կերպ՝

$$y_t = a + b_0x_t + b_1x_{t-1} + b_2x_{t-2} + \dots + b_kx_{t-k} + \varepsilon_t \quad (1),$$

Որտեղ՝

y_t -ն արդյունքային հատկանիշի փաստացի արժեքն է ժամանակի պահին, $x_t, x_{t-1}, x_{t-2}, \dots, x_{t-k}$ -ն գործոնային հատկանիշի արժեքներն են ժամանակի $t, t-1, t-2, \dots, t-k$ պահերին,

a -ն ազատ անդամն է,

$b_0, b_1, b_2, \dots, b_k$ -ն ռեգրեսիայի գործակիցներն են,

ε_t -ն մոդելում չընդգրկված և պատահական գործոնների ազդեցության չափն է:

Սույն մոդելի ռեգրեսիայի գործակիցները մեկնաբանվում են հետևյալ կերպ՝

b_0 -ն կարճաժամկետ բազմապատկիչն է, որը ցույց է տալիս, թե ժամանակի t պահին գործոնային հատկանիշի մեկ միավորի ավելացումը որքանով է ավելացնում արդյունքային հատկանիշը:

$b_0 + b_1$ -ն ցույց է տալիս, թե ժամանակի t պահին գործոնային հատկանիշի մեկ միավորի ավելացումը որքանով է ավելացնում արդյունքային հատկանիշը $t + 1$ պահին,

$b_0 + b_1 + b_2$ -ն ցույց է տալիս, թե ժամանակի t պահին գործոնային հատկանիշի մեկ միավորի ավելացումը որքանով է ավելացնում արդյունքային հատկանիշը $t + 2$ պահին,

$b_0 + b_1 + b_2 + \dots + b_k$ -ն ցույց է տալիս, թե ժամանակի t պահին գործոնային հատկանիշի մեկ միավորի ավելացումը որքանով է ավելացնում արդյունքային հատկանիշը $t + k$ պահին:

Հաշվարկվում են նաև ռեգրեսիայի հարաբերական գործակիցները՝

$$\beta_k = \frac{b_k}{\sum b_k}, 0 < \beta_k < 1 \text{ և } \sum \beta_k = 1 \quad (2):$$

β_k -ն բնութագրում է ժամանակի $t + k$ պահին արդյունքային հատկանիշի հավելվածում գործոնային հատկանիշի ազդեցությամբ ձևավորված մասերը:


Լագային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելի կառուցման դեպքում հնարավոր է հաշվարկել արդյունքային հատկանիշի վրա գործոնային հատկանիշի ազդեցության միջին ժամանակը՝

$$\bar{l} = \sum_{j=0}^k j \times \beta_j \quad (3)^1:$$


Վերլուծություն

ՀՀ-ում 2000-2021թթ. խաղողի համախառն բերքը և բերքատվության մակարդակն ունեցել են զարգացման միևնույն զարգացման միտումները, իսկ խաղողի տարածությունները գրեթե մնացել են անփոփոխ:

¹ Эконометрика: учебник для магистров /И.И. Елисева [и др.], под ред. И.И. Елисевой.- М.: Издательства Юрайт, 2014.-449с., ст. 286-289



Գծապատկեր 1. ՀՀ-ում խաղողի տնկարկների տարածությունները 2000-2021թթ., հազար հեկտար¹²



Գծապատկեր 2. ՀՀ-ում խաղողի բերքատվության մակարդակը 2000-2021թթ, ցինտ/հեկ³

¹ Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2021թվականին., վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան 2022, 75էջ, էջ. 74, 2020թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2021, 75էջ, էջ. 74, 2019 թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2020, 75էջ, էջ. 74, 2018 թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2019, 75էջ, էջ. 74, 2017թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2018, 75էջ, էջ. 74, 2016 թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2017, 75էջ, էջ. 74, 2015 թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, 39էջ, էջ. 38, 2015 թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, 39էջ, էջ. 38, 2014թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2015, 37 էջ, էջ 36, 2013թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2014, 37 էջ, էջ36, 2012թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2013, 37 էջ, էջ36, 2011թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2012, 37 էջ, էջ36, 2010թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2011, 37 էջ, էջ36, 2009թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2010, 37 էջ, էջ36, 2008թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2009, 37 էջ, էջ36, 2007թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2008, 38 էջ, էջ36, 2006թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2005, 36 էջ, էջ36, 2005թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2004, 37 էջ, էջ36


² Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005 թվականներին, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006, 167էջ, 101, 113, 125 էջ

³ Աղբյուրը՝ հղում 1 և 2

Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2000-2002թթ. գրանցվել է խաղողի տնկարկների տարածությունների կրճատում 2.04 հազար հեկտարով կամ 13.6%-ով, հաջորդող տարիներին տնկարկների տարածությունները ընդլայնվել են մինչև 15.01 հազար հեկտար՝ տարեկան միջին հաշվով ընդլայնվելով 0.11 հազար հեկտարով կամ 0.76%-ով:

Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2000-2020թթ. ՀՀ-ում խաղողի բերքատվության մակարդակը բնութագրվել է փոփոխվող զարգացման միտումներով: 2000-2003թթ. ՀՀ-ում խաղողի բերքատվությունը կրճատվել է 6.6 ց/հեկ-ով կամ 8.5%-ով, 2004-2015թթ. խաղողի բերքատվության մակարդակը 108.9 ցենտ/հեկ-ից հասել է մինչև 188.2 ցենտ/հեկ՝ տարեկան բարձրանալով 7.2 ցենտ/հեկ-ով կամ 5.1%-ով: 2016թ. խաղողի բերքատվության մակարդակը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 41.6%-ով, հետագա տարիներին այն ունեցել է աճի միտում:

Ուսումնասիրվող տարիներին ՀՀ-ում խաղողի համախառն բերքի դինամիկան հիմնականում պայմանավորված է բերքատվության մակարդակի դինամիկայի բնույթով:




Գծապատկեր 3. ՀՀ-ում խաղողի համախառն բերքը 2000-2021թթ., հազար տոննա

1

ՀՀ-ում 2003թ. 2000թ. համեմատությամբ խաղողի համախառն բերքը կրճատվել է 34.2 հազար տոննայով կամ 29.6%-ով: 2004-2015թթ. ՀՀ-ում խաղողի համախառն բերքը ունեցել է աճի միտում՝ տարեկան միջին հաշվով ավելացել է 14.5 հազար տոննայով կամ 6.8%-ով՝ 148.89 հազար տոննայից հասնելով մինչև 308.4 հազար տոննայի: 2016թ. 2015թ. համեմատությամբ ՀՀ-ում գրանցվել է

¹ Աղբյուրը՝ հղում 1 և 2


խաղողի համախառն բերքի կրճատում և կազմել է 178.56 հազար տոննա, սակայն հետագա տարիներին այն ձեռք է բերել աճի միտում՝ 2020-2021թթ. Համապատասխանաբար կազմելով 283.08 հազար տոննա և 236.95 հազար տոննա:



Գծապատկեր 4. ՀՀ-ում կոնյակի արտադրության ծավալները 2000-2021թթ., հազար լիտր¹


Գծապատկեր 4-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ՀՀ-ում ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում կոնյակի արտադրության ծավալները հիմնականում ունեցել են աճի միտումներ: 2000-2006թթ. կոնյակի արտադրության ծավալների տարեկան միջին աճի տեմպը կազմել է 121.1%՝ 2870.0 հազար լիտրից հասնելով մինչև 9058.9 հազար լիտրի, իսկ 2007թ.2006թ. նկատմամբ կոնյակի արտադրության ծավալները ավելացել են շուրջ 1.5 անգամ՝ կազմելով 14079.3 հազար լիտր: 2007-2021թթ. ՀՀ-ում կոնյակի արտադրության ծավալները պահպանել են իրենց աճի տեմպերը՝ տարեկան միջին հաշվով կազմելով 108.9%՝ հասնելով 46696.3 հազար լիտրի:

¹ Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան 2022, 10 էջ, էջ 6, 2019թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2020, 11 էջ, էջ 6-7, 2018թ.՝ ՀՀ ՎԿ, 7 էջ., էջ 7, 2017թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2018, 8 էջ, էջ 7, 2015թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, 7 էջ, էջ 7, 2013թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2014, 6-7 էջ, էջ 7, 2011թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2012, 6-7 էջ, էջ 7, 2009թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2010, 6-7 էջ, էջ 7, 2007թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2008, 5-6 էջ, էջ 6, 2005թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2006, 5-6 էջ, էջ 6, 2003թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2004, 5-6 էջ, էջ 6, 2001թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2002, 5-6 էջ, էջ 6



Գծապատկեր 5. ՀՀ-ում զինու արտադրության ծավալները 2000-2021թթ., հազար լիտր¹

Գծապատկեր 5-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2000-2003թթ. ՀՀ-ում զինու արտադրության ծավալները ունեցել են անկանոն դինամիկա. 2003թ. 2000թ. նկատմամբ դրանք կրճատվել են ավելի քան 54.6%-ով: 2004թ. սկսած ՀՀ-ում գրանցվել է զինու արտադրության ծավալների կայուն աճի տեմպեր: 2004-2021թթ. ՀՀ-ում զինու արտադրության ծավալները տարեկան միջին հաշվով ավելացել են 613.6 հազար լիտրով կամ 12.1%-ով՝ արդյունքում 1747.6 հազար լիտրից հասնելով 12179.1 հազար լիտրի:



Գծապատկեր 6. ՀՀ-ում շամպայնի արտադրության ծավալները 2000-2021թթ., հազար լիտր²

¹ Աղբյուրը՝ հղում 5

² Աղբյուրը՝ հղում 5

Գծապատկեր 6-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ՀՀ-ում շամպայնի արտադրության ծավալները 2000-2009թթ. բնութագրվել են կրճատման, իսկ հաջորդող տարիներին՝ աճի միտումներով: 2000-2009թթ. ՀՀ-ում շամպայնի արտադրության ծավալները տարեկան միջին հաշվով կրճատվել են 15.96 հազար լիտրով կամ 2.99%-ով՝ 600.0 հազար լիտրից նվազելով մինչև 456.4 հազար լիտրի: 2010թ. շամպայնի արտադրության ծավալները նախորդ տարվա նկատմամբ ավելացել են շուրջ 1.3 անգամ՝ կազմելով 618.2 հազար լիտր: 2010-2021թթ. շամպայնի արտադրության ծավալները տարեկան միջին հաշվով ավելանալով 25.94 հազար լիտրով կամ 3.51%, կազմել են 903.6 հազար լիտր:

2000-2021թթ. ՀՀ-ում կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա խաղողի համախառն բերքի ազդեցության չափը և ձևավորված փոխկախվածությունների առանձնահատկությունների բացահայտման նպատակով կիրառվել են լագային բաշխմամբ դինամիկ մոդելներ: Կատարվել են հետևյալ նշանակումները.

y_{1t}, y_{2t}, y_{3t} -ն համապատասխանաբար կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալներն են t -րդ տարում (հազար լիտր),
 x_{t-l} -ն խաղողի համախառն բերքի ծավալներն են՝ $t - l$ տեղափոխված լագով, հազար տոննա:

Աղյուսակ 1

ՀՀ-ում կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա խաղողի համախառն բերքի ազդեցության դինամիկ ռեգրեսիոն մոդելավորման արդյունքները

Արդյունքային ցուցանիշները	Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները
Կոնյակ	$\widehat{y}_{1t} = -10967 + 94.65x_{t-6} + 44.71x_{t-7} + 45.61x_{t-8}$ <p style="text-align: center;">(p - value 0.002 0.003 0.001)</p> $R = 0.869, \quad R^2 = 0.755, \quad R_{adj}^2 = 0.681$ $F = 10.3, \text{ (significance = 0.002)}$ $\beta_6 = 0.511, \quad \beta_7 = 0.242, \quad \beta_8 = 0.246$ $\bar{l} = 6.7$
Գինի	$\widehat{y}_{2t} = -2090.91 + 8.5x_{t-4} + 0.02x_{t-5} + 35.94x_{t-6}$ <p style="text-align: center;">(p - value 0.003 0.002 0.001)</p> $R = 0.895, \quad R^2 = 0.801, \quad R_{adj}^2 = 0.751$ $F = 16.1, \text{ (significance = 0.0001)}$ $\beta_4 = 0.191, \quad \beta_5 = 0.002, \quad \beta_6 = 0.807$ $\bar{l} = 5.6$
Շամպայն	$\widehat{y}_{3t} = 119.45 + 1.23x_{t-4} + 1.03x_{t-5} + 0.72x_{t-6}$ <p style="text-align: center;">(p - value 0.002 0.004 0.006)</p> $R = 0.807, \quad R^2 = 0.651, \quad R_{adj}^2 = 0.556$ $F = 6.84, \text{ (significance = 0.007)}$ $\beta_4 = 0.413, \quad \beta_5 = 0.346, \quad \beta_6 = 0.241$ $\bar{l} = 5.8$

Կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ կոնյակի արտադրության ծավալների և խաղողի համախառն բերքի միջև նշա-

նակալի արդյունքներ ապահովվում են գործոնային հատկանիշի 6-ից 8 տարի լազային տեղաշարժի դեպքում, իսկ գինու և շամպայնի արտադրության ծավալների և խաղողի համախառն բերքի միջև նշանակալի փոխկախվածություններ ձևավորվում է գործոնային հատկանիշի 4-ից 6 տարի լազային տեղաշարժման դեպքում (աղյուսակ 1):

Համաձայն կառուցված լազային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելի՝ ՀՀ-ում 2000-2021թթ. տվյալ տարում խաղողի համախառն բերքի յուրաքանչյուր 1000 տոննայով ավելացումը 6 տարի անց նպաստել է 94.65 հազար լիտրով կոնյակի արտադրության ծավալների ավելացմանը, 7 տարի անց՝ 139.36 հազար լիտրով ավելացմանը, իսկ 8 տարի անց՝ 184.97 հազար լիտրով ավելացմանը: Հաշվարկված ռեգրեսիայի հարաբերական գործակիցները ցույց են տալիս, որ տվյալ տարում կոնյակի արտադրության ծավալների հավելաճի 41.3%-ը պայմանավորված է եղել 6 տարի առաջ խաղողի համախառն բերքի հավելաճով, 24.2%-ը՝ 7 տարի առաջ, իսկ 24.63%-ը՝ 8 տարի առաջ խաղողի համախառն բերքի հավելաճով: Համաձայն հաշվարկված ազդեցության միջին լազի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում խաղողի համախառն բերքի ծավալները կոնյակի արտադրության ծավալների վրա նշանակալի ազդեցություն են թողնում 6.7 տարի անց:

Աղյուսակ 1-ում ներկայացված ռեգրեսիոն մոդելից երևում է, որ ՀՀ-ում տվյալ տարում խաղողի համախառն բերքի հազար տոննայով ավելացումը 4 տարի անց գինու արտադրության ծավալները ավելացրել են 8.5 հազար լիտրով, 5 տարի անց՝ 8.52 հազար լիտրով, իսկ 6 տարի անց՝ 44.46 հազար լիտրով: Ըստ ռեգրեսիայի հարաբերական գործակիցների՝ հաշվետու տարում գինու արտադրության ծավալների հավելաճի 19.1%-ը պայմանավորված է 4 տարի առաջ խաղողի համախառն բերքի հավելաճով, իսկ 0.2%-ը և 80.7%-ը համապատասխանաբար 5 և 6 տարի առաջ խաղողի համախառն բերքի հավելաճերով: Հաշվարկները ցույց են տվել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ-ում խաղողի համախառն բերքը գինու արտադրության ծավալների վրա սկսում է եականորեն ազդել շուրջ 5.6 տարի անց:

Համաձայն կառուցված լազային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելի՝ ՀՀ-ում 2000-2021թթ. տվյալ տարում խաղողի համախառն բերքի յուրաքանչյուր 1000 տոննայով ավելացումը 4 տարի անց նպաստել է 1.23 հազար լիտրով շամպայնի արտադրության ծավալների ավելացմանը, 5 տարի անց՝ 2.26 հազար լիտրով ավելացմանը, իսկ 6 տարի անց՝ 2.98 հազար լիտրով ավելացմանը: Հաշվարկված ռեգրեսիայի հարաբերական գործակիցները ցույց են տալիս, որ տվյալ տարում շամպայնի արտադրության ծավալների հավելաճի 41.3%-ը պայմանավորված է եղել 4 տարի առաջ խաղողի համախառն բերքի հավելաճով, 34.6%-ը՝ 5 տարի առաջ, իսկ 24.1%-ը՝ 6 տարի առաջ խաղողի համախառն բերքի հավելաճով: Համաձայն հաշվարկված ազդեցության միջին լազի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում խաղողի համախառն բերքի ծավալները շամպայնի արտադրության ծավալների վրա նշանակալի ազդեցություն են թողնում 5.8 տարի անց:

Գիտական նորույթ

Սույն հոդվածում առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից կարելի առանձնացնել հետևյալները.

- Բացահայտվել է ՀՀ-ում 2000-2021թթ. խաղողի համախառն բերքի և կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների միջև փոխկախվածության առանձնահատկություններ, որը լավագույնս ներկայացվել է լազային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելի միջոցով:
- Լազային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելների կառուցման արդյունքում հիմնավորվել է 2000-2021թթ. ՀՀ-ում կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա խաղողի համախառն բերքի դինամիկայի ազդեցության միջին լազր:

Եզրակացություն

Սույն հետազոտության ընթացքում կատարված վերլուծությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

- ՀՀ-ում 2000-2021թթ. տվյալ տարում խաղողի համախառն բերքի յուրաքանչյուր 1000 տոննայով ավելացումը 6 տարի անց կոնյակի արտադրության ծավալները ավելացրել է 94.65 հազար լիտրով, 7 տարի անց՝ 139.36 հազար լիտրով, իսկ 8 տարի անց՝ 184.97 հազար լիտրով:
- ՀՀ-ում 2000-2021թթ. տվյալ տարում խաղողի համախառն բերքի հազար տոննայով ավելացումը 4 տարի անց գինու արտադրության ծավալները ավելացրել են 8.5 հազար լիտրով, 5 տարի անց՝ 8.52 հազար լիտրով, իսկ 6 տարի անց՝ 44.46 հազար լիտրով:
- ՀՀ-ում 2000-2021թթ. տվյալ տարում խաղողի համախառն բերքի յուրաքանչյուր 1000 տոննայով ավելացումը 4 տարի անց նպաստել է 1.23 հազար լիտրով շամպայնի արտադրության ծավալների ավելացմանը, 5 տարի անց՝ 2.26 հազար լիտրով ավելացմանը, իսկ 6 տարի անց՝ 2.98 հազար լիտրով ավելացմանը:
- Վերլուծությունները ցույց են տվել, որ 2000-2021թթ. ՀՀ-ում խաղողի համախառն բերքի ծավալները էականորեն սկսում են ազդել կոնյակի արտադրության ծավալների վրա 6.7 տարի անց, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա՝ 5.6 և 5.8 տարի անց:

Կատարված վերլուծության արդյունքները գործնական նշանակություն ունեն ինչպես գինեգործական արտադրանքներ արտադրողների, այնպես էլ խաղողագործների համար: Գինեգործական արտադրանքների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները իրենց օպերատիվ, կարճաժամկետ կամ հեռանկարային բիզնես-ծրագրերի մշակման դեպքում արտադրության ծավալների կանխատեսման դեպքում կարող են նաև հաշվի առնել հաշվետու ժամանակահատվածում խաղողի համախառն բերքի ծավալները և առանձին գինեգործական արտադրանքների ծավալների վրա դրանց ազդեցության լազր:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Ավետիսյան. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը.- Եր.: ԼԻՄՈՒՇ հրատարակչություն, 2010.-233էջ, էջ.44
2. ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները /Ա.Հ. Բայադյան. Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2013.-144էջ, էջ 60
3. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2021 թվականին., վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան 2022, 75էջ, էջ. 74, 2020թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2021, 75էջ, էջ. 74, 2019 թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2020, 75էջ, էջ. 74, 2018 թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2019, 75էջ, էջ. 74, 2017թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2018, 75էջ, էջ. 74, 2016 թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2017, 75էջ, էջ. 74, 2015 թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, 39էջ, էջ. 38, 2015 թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, 39էջ, էջ. 38, 2014թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2015, 37 էջ, էջ 36, 2013թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2014, 37 էջ, էջ 36, 2012թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2013, 37 էջ, էջ 36, 2011թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2012, 37 էջ, էջ 36, 2010թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2011, 37 էջ, էջ 36, 2009թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2010, 37 էջ, էջ 36, 2008թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2009, 37 էջ, էջ 36, 2007թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2008, 38 էջ, էջ 36, 2006թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2005, 36 էջ, էջ 36, 2005թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2004, 37 էջ, էջ 36
4. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005 թվականներին, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006, 167էջ, 101, 113, 125 էջ
5. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան 2022, 10էջ, էջ 6, 2019թ.՝ ՀՀ ՎԿ, Երևան 2020, 11էջ, էջ 6-7, 2018թ.՝ ՀՀ ՎԿ, 7 էջ., էջ 7, 2017թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2018, 8էջ, էջ 7, 2015թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, 7 էջ, էջ 7, 2013թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2014, 6-7 էջ, էջ 7, 2011թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2012, 6-7էջ, էջ 7, 2009թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2010, 6-7 էջ, էջ 7, 2007թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2008, 5-6 էջ, էջ 6, 2005թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2006, 5-6էջ, էջ 6, 2003թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2004, 5-6էջ, էջ 6, 2001թ.՝ ՀՀ ԱՎԾ, Երևան 2002, 5-6էջ, էջ 6
6. Эконометрика: учебник для магистров /И.И. Елисева [и др.], под ред. И.И. Елисевой.- М.: Издательства Юрайт, 2014.-449с., ст. 286-289
7. Diego José Fernández-López, José Ignacio Fernández-Fernández, Celia Martínez-Mora, Juan Antonio Bleda-Sánchez and Leonor Ruiz-García , Productiveness and Berry Quality of New Wine Grape Genotypes Grown under Drought Conditions in a Semi-Arid Wine-Producing Mediterranean Region, Plants 2022, 11, 1363, <https://doi.org/10.3390/plants11101363>
8. Jamali H.R., Steel C.C., Mohammadi E., Wine research and its relationship with wine production: a scientometric analysis of global trends, Australian Journal of grape and wine research, 2020

9. Ramón Mira de Orduña, Climate change associated effects on grape and wine quality and production, Food Research International Volume 43, Issue 7, August 2010, Pages 1844-1855
10. Steven S. Cuellar and Ryan Huffman “Estimating the demand for wine using instrumental variable techniques” Journal of Wine Economics, Volume 3, Issue 2, Fall 2008, P 1–13, p.4-5
11. Tajana Čop, Josip Juračak, Mario Njavro, Production and Business Results of Wine Producers in Continental and Adriatic Croatia, Proceedings in System Dynamics and Innovation in Food Networks 2019, 93-101

References

1. S. Avetisyan. Hayastani gyowghatntesowt'yowny' & agroveramshakowmy'.-Er.: LIMOWSh hratarakchowt'yown, 2010.-233e'j, e'j.44
2. HH gyowghatntesakan artadrowt'yan zargacman himnaxndirneri' & dranc lowc'man owghinery' /A.H. Bayadyan. Er.: HH GAA «Gitowt'yown», hrat., 2013.-144e'j, e'j 60
3. Gyowghatntesakan mshakabowyseri canqayin tarac'owt'yownnery', bazmamy tnkarkneri tarac'owt'yownnery', hamaxar'n berqy' & mijin berqatvowt'yowny' 2021t'vakandin., vitwakagrakan teghekagir, HH VK, Er&an 2022, 75e'j, e'j. 74, 2020t'.` HH VK, Er&an 2021, 75e'j, e'j. 74, 2019 t'.` HH VK, Er&an 2020, 75e'j, e'j. 74, 2018 t'.` HH VK, Er&an 2019, 75e'j, e'j. 74, 2017t'.` HH AVC', Er&an 2018, 75e'j, e'j. 74, 2016 t'.` HH AVC', Er&an 2017, 75e'j, e'j. 74, 2015 t'.` HH AVC', Er&an 2016, 39e'j, e'j. 38, 2015 t'.` HH AVC', Er&an 2016, 39e'j, e'j. 38, 2014t'.` HH AVC', Er&an 2015, 37 e'j, e'j 36, 2013t'.` HH AVC', Er&an 2014, 37 e'j, e'j36, 2012t'.` HH AVC', Er&an 2013, 37 e'j, e'j36, 2011t'.` HH AVC', Er&an 2012, 37 e'j, e'j36, 2010t'.` HH AVC', Er&an 2011, 37 e'j, e'j36, 2009t'.` HH AVC', Er&an 2010, 37 e'j, e'j36, 2008t'.` HH AVC', Er&an 2009, 37 e'j, e'j36, 2007t'.` HH AVC', Er&an 2008, 38 e'j, e'j36, 2006t'.` HH AVC', Er&an 2005, 36 e'j, e'j36, 2005t'.` HH AVC', Er&an 2004, 37 e'j, e'j36
4. Gyowghatntesowt'yowny' Hayastani Hanrapetowt'yownowm 2000-2005 t'vakannerin, vitwakagrakan jhoghovac'ow, HH AVC', Er&an 2006, 167e'j, 101, 113, 125 e'j
5. Ardyownaberakan kazmakerpowt'yownnerowm himnakan artadratesakaneri t'ogharkowmy' bneghen artahaytowt'yamb 2021 t'vakani hownvar-dektemberin, vitwakagrakan teghekagir, HH VK, Er&an 2022, 10e'j, e'j 6, 2019t'.` HH VK, Er&an 2020, 11e'j, e'j 6-7, 2018t'.` HH VK, 7 e'j., e'j 7, 2017t'.` HH AVC', Er&an 2018, 8e'j, e'j 7, 2015t'.` HH AVC', Er&an 2016, 7e'j, e'j 7, 2013t'.` HH AVC', Er&an 2014, 6-7e'j, e'j 7, 2011t'.` HH AVC', Er&an 2012, 6-7e'j, e'j 7, 2009t'.` HH AVC', Er&an 2010, 6-7e'j, e'j 7, 2007t'.` HH AVC', Er&an 2008, 5-6e'j, e'j 6, 2005t'.` HH AVC', Er&an 2006, 5-6e'j, e'j 6, 2003t'.` HH AVC', Er&an 2004, 5-6e'j, e'j 6, 2001t'.` HH AVC', Er&an 2002, 5-6e'j, e'j 6
6. Jekonometrika: uchebnik dlja magistrov /I.I. Eliseeva [i dr.], pod red. I.I. Eliseevoj.- M.: Izdatelstva Jurajt, 2014.-449s., st. 286-289
7. Diego José Fernández-López, José Ignacio Fernández-Fernández, Celia Martínez-

- Mora, Juan Antonio Bleda-Sánchez and Leonor Ruiz-García , Productiveness and Berry Quality of New Wine Grape Genotypes Grown under Drought Conditions in a Semi-Arid Wine-Producing Mediterranean Region, *Plants* 2022, 11, 1363, <https://doi.org/10.3390/plants11101363>
8. Jamali H.R., Steel C.C., Mohammadi E., Wine research and its relationship with wine production: a scientometric analysis of global trends, *Australian Journal of grape and wine research*, 2020
 9. Ramón Mira de Orduña, Climate change associated effects on grape and wine quality and production, *Food Research International* Volume 43, Issue 7, August 2010, Pages 1844-1855
 10. Steven S. Cuellar and Ryan Huffman “Estimating the demand for wine using instrumental variable techniques” *Journal of Wine Economics*, Volume 3, Issue 2, Fall 2008, P 1–13, p.4-5
 11. Tajana Čop, Josip Juračak, Mario Njavro, Production and Business Results of Wine Producers in Continental and Adriatic Croatia, *Proceedings in System Dynamics and Innovation in Food Networks* 2019, 93-101

**ԽԱՂՈՂԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԻ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ԾԱՎԱԼՆԵՐԻ ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ**

**Արման Համլետի Հարությունյան
Գևորգ Հարությունի Քեշիշյան**

Համառոտագիր: Խաղողագիներգործական արտադրանքների փոխկախվածության քանակական գնահատականների ստացումը և դրանցում տեղ գտած օրինաչափությունների բացահայտումը միշտ էլ արդիական է խաղողագիներգործական ճյուղերի մասնագիտացման խորացման գործում: Սույն հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ՀՀ-ում 2000-2021թթ. խաղողի տնկարկների տարածությունների, բերքատվության մակարդակի, համախառն բերքի դինամիկան դրանց ազդեցությունը գիներգործական արտադրանքի ծավալների դինամիկայի վրա: Այս նպատակով խնդիր է դրվել բացահայտել ՀՀ-ում 2000-2021թթ. խաղողի տնկարկների, բերքատվության մակարդակի և համախառն բերքի զարգացման միտումները, վերլուծել ՀՀ-ում 2000-2021թթ. կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների դինամիկան, բացահայտել 2000-2021թթ. կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա խաղողի համախառն բերքի ազդեցության չափը և այդ փոխկախվածություններում տեղ գտած օրինաչափությունները:

Սույն հետազոտությունում բացահայտվել է, որ խաղողի համախառն բերքի ծավալները կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա ազդում են ժամանակի ընթացքում՝ որոշակի պահից սկսած և այդ փոխկախվածությունները ներկայացվել են դինամիկ լագային բաշխմամբ ռեգրեսիոն մոդելների

միջոցով: Վերլուծությունները ցույց են տվել, որ 2000-2021թթ. ՀՀ-ում խաղողի համախառն բերքի ծավալները էականորեն սկսում են ազդել կոնյակի արտադրության ծավալների վրա 6.7 տարի անց, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա՝ 5.6 և 5.8 տարի անց: Հետազոտության արդյունքում բացահայտվել է ՀՀ-ում 2000-2021թթ. խաղողի համախառն բերքի և կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների միջև փոխկախվածության առանձնահատկությունները և հաշվարկվել է կոնյակի, գինու և շամպայնի արտադրության ծավալների վրա խաղողի համախառն բերքի դինամիկայի ազդեցության միջին լազր: Գինեգործական արտադրանքների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները արտադրության ծավալների կանխատեսման դեպքում կարող են նաև հաշվի առնել հաշվետու ժամանակահատվածում խաղողի համախառն բերքի ծավալները և առանձին գինեգործական արտադրանքների ծավալների վրա դրանց ազդեցության լազր:

Բանալի բառեր. խաղողագործություն, արտադրություն, գինեգործություն, արտադրողականություն, արդյունավետություն, շահութաբերություն, զարգացում

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ВЗАИМОСВЯЗИ МЕЖДУ ОБЪЕМОМ ВАЛОВОГО СБОРА ВИНОГРАДА И ОБЪЕМОМ ВИНОПРОДУКЦИИ ПО ДАННЫМ РА

Арман Гамлетович Арутюнян
Геворг Арутюнович Кешишян

Аннотация: Количественная оценка взаимозависимости продукции виноградарства и выявление ее закономерностей всегда актуальны в развитии отраслей виноградарства. Основной целью данного исследования является изучение динамики виноградников, валового сбора и урожайности винограда и их влияния на объемы винодельческой продукции в 2000-2021 гг. в РА. С этой целью были поставлены следующие задачи: изучить основные тенденции развития виноградников, урожайность и валовой сбор винограда в 2000-2021 гг. в РА, изучить динамику объемов продукции коньяка, вина и шампанского в 2000-2021 гг. и выявить взаимозависимость между объемами продукции коньяка, вина и шампанского и валовым сбором винограда и ее закономерностями.

В данном исследовании было выявлено, что объем валового сбора винограда влияет на объем производства коньяка, вина и шампанского во времени, начиная с определенного момента, и эти взаимозависимости были представлены регрессионными моделями динамического лагового распределения. Как показал анализ, валовой сбор винограда начинает существенно влиять на объем продукции бренди через 6,7 лет, на объем продукции вина - через 5,6 лет и на объем продукции шампанского - через 5,8 лет. В результате исследования были выявлены особенности взаимозависимости между валовым сбором винограда и объемами производства коньяков, вин и шампанских вин в РА в 2000-2021 гг. и

рассчитан средний лаг влияния динамики валового сбора винограда на объемы производства коньяков, вин и шампанских вин. Организации, занимающиеся производством винодельческой продукции, также могут учитывать объемы общего урожая винограда в отчетном периоде и лаги их влияния на объемы отдельных винодельческих изделий при прогнозировании объемов производства.

Ключевые слова: виноградарство, производство, винопродукция, урожайность, эффективность, рентабельность, развитие.

THE STATISTICAL ANALYSIS OF THE INTERDEPENDENCE BETWEEN THE VOLUME OF THE GROSS HARVEST OF GRAPE AND THE VOLUMES OF THE WINERY PRODUCTS BY RA DATA

Arman Hamlet Harutyunyan
Gevorg Harutyun Keshishyan

Abstract: The quantitative estimation of the interdependence between the viticulture products and the disclosure of its patterns are always relevant in the development of viticulture branches. The main **aim** of this research is to study the dynamic of the vineyards, the gross harvest and yield capacity of grape and their influence on the volumes of the winery products in 2000-2021 in the RA. For that purpose, the following problems have been stated: to explore the main tendencies of the vineyards, the yield capacity and the gross harvest of grape in 2000-2021 in RA, to identify the dynamics of the product volumes of brandy, wine and champagne in 2000-2021 and to disclose the interdependence between the product volumes of brandy, wine and champagne and gross harvest of grape and its patterns.

In this research the gross harvest of grape impact on the product volumes of brandy, wine and champagne during the period of time and from the certain point of the time. So this interdependence of studied indicators have been presented with help of the dynamic regression models with lag distribution. As the analysis has shown the gross harvest of grape significantly begins to impact on the product volume of brandy 6.7 years later, and on the product volume of wine 5.6 years later and on the product volume of champagne 5.8 years later. As a result of the research the features of the interdependence between the gross harvest of grape and the product volumes of the brandy, wine and champagne has been disclosed, the average influence lags of the gross harvest of grape and the product volumes of the brandy, wine and champagne have been calculated also. The winery companies may take in consideration the volume of the gross harvest of grape in reported year and its average influence lags for forecasting the product volumes of separate winery products.

Keywords: viticulture, production, wine production, productivity, efficiency, profitability, development.

**ԽԱՂՈՂԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲԻԶՆԵՍ ԵՎ ԴՐԱ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Արման Համլետի Հարությունյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

ՀՀ-ում խաղողի արտադրությունը, հատկապես մի շարք մարզերում, բազմաթիվ ֆերմերային տնտեսությունների համար համարվում է եկամտի աղբյուր և բարելավում է դրանց տնտեսական վիճակը: Զարգացող գինեգործության ֆունին խաղողի արտադրության ծավալների մեծացումը և իրացումը դիտվում է որպես արդյունավետ բիզնես: Խաղողի վազը, որպես մշակաբույս, խիստ պահանջկոտ չէ հողի որակական հատկանիշների նկատմամբ՝ աճում է նաև քարքարոտ և ոչ հարուստ հողերում, ինչը ՀՀ սակավ հողային ռեսուրսների չօգտագործվող մասը շրջանառության մեջ դնելու և արդյունավետորեն օգտագործելու հնարավորություն կտա: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հետազոտությունը ունի արդիական բնույթ և արդյունքները կարող են օգտակար լինել խաղողի արտադրությամբ զբաղվող տնտեսությունների գործունեության տնտեսական արդյունավետության բարձրացման գործում:

Հետազոտության հիմնական նպատակն է նախանշել խաղողի արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման ուղղությունները, որից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել խաղողագործության ճյուղին առնչվող վիճակագրական տվյալները, հավաքագրել տվյալներ խաղող արտադրող տնտեսություններից և հաշվարկել խաղողի ինքնարժեքը, հաշվարկել շահութաբերության մակարդակը, բացահայտել արդյունավետության բարձրացմանն առնչվող խոչընդոտները:

Թեման ուսումնասիրվել է ոլորտի մասնագետների կողմից, սակայն խաղողի արտադրության տնտեսական արդյունավետության փաստացի վիճակի գնահատման և խնդիրների բացահայտման տեսանկյունից լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք է զգացվում:

Գրականության վերլուծություն

ՀՀ-ում խաղողի արտադրության ծավալների միտումների և ճյուղում առկա վիճակի վերաբերյալ պարբերաբար տպագրվում են հոդվածներ և հաշվետվություններ: Ոլորտի մասին գիտական տեղեկատվություն հավաքագրելու համար ուսումնասիրվել են որոշ հետազոտողների՝ մասնավորապես Ա. Գաբրիելյանի¹ և Գ. Սամվելյանի² հետազոտության արդյունքները, որոնցում արտացոլված են

¹ Գաբրիելյան Ա.Հ., Խաղողի Կարմրահյուս սորտից վարդագույն չոր գինու պատրաստման տեխնոլոգիայի կատարելագործում: Ագրոգիտություն ամս.9-10, 2015, էջ 398-402:
² Սամվելյան Գ.Ա., Խաղողի սպիտակ սորտերի ընտրությունը՝ որպես հումք, եվրոպական տիպի սպիտակ գինիների պատրաստման համար: Ագրոգիտություն, ամս.3-4,

խաղողի սորտային կազմի ընտրության և արդյունքում որակյալ գինի պատրաստելու հնարավորությունները: Առանձնահատուկ ուսումնասիրության են արժանացել խաղողի տնտեսական արդյունավետությանն առնչվող և գիտական հետաքրքրություն ներկայացնող հետազոտության արդյունքներ՝ մասնավորապես Կ. Թումանյանի և այլոց հոդվածները, որոնցում անդրադարձ է կատարվում շուկայական հարաբերությունների ձևավորման պայմաններում խաղողագործության զարգացմանն առնչվող հարցերին¹, վերականգնման և զարգացման հայեցակարգին² և զարգացման ուղղություններին³: Հետազոտողներից Ա. Հովհաննիսյանը⁴ անդրադարձել է խաղող արտադրող և վերամշակող սուբյեկտների միջև պայմանագրային հարաբերությունների կարգավորմանը, որպես արդյունավետ տնտեսահարաբերությունների ձևավորման հիմքի, Ա. Ջաղինյանը⁵ խաղողի սորտերի ճիշտ ընտրությունը՝ որպես բերքատվության բարձրացման հիմքի: Այլ հեղինակներ ևս անդրադարձել են ՀՀ խաղողագործության և գինեգործության զարգացման միտումներին⁶ և հնարավորություններին⁷:

Ոլորտին առնչվող առավել ծավալուն և խորքային ուսումնասիրություն իրականացվել է «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» պատվերով, ինչը նաև հրատարկվել է հաշվետվության տեսքով⁸, որում ներկայացված է ՀՀ խաղողագործության և գինեգործության շուկայի վիճակը: Ուսումնասիրվել են նաև մի շարք արտասահմանյան հետազոտողների հետազոտության արդյունքներ, որոնք առնչվում են խաղողագործական տնտեսությունների չափերի և տնտեսական գործունեության արդյունավետու-

2013, էջ 169-176:

- ¹ Թումանյան Կ.Գ., ՀՀ-ում խաղողագործության և պտղաբուծության զարգացման հիմնահարցերը շուկայական հարաբերությունների անցման ճանապարհին, Էկոնոմիկա, ամս.3-4, 1993, էջ 44-58:
- ² Թումանյան Կ.Գ., Գասպարյան Ս.Ս.- ՀՀ խաղողագործության և պտղաբուծության վերականգնման ու զարգացման հայեցակարգի մասին, Էկոնոմիկա, ամս. 3, 2000, էջ103-109:
- ³ Թումանյան Կ.Գ., Կազումյան Լ.Ն., Միրզոյան Բ.Ս.- Խաղողագործությունը և գինեգործությունը Հայաստանում շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում, Ագրոգիտություն, ամս. 6, 1999, էջ 536-544:
- ⁴ Հովհաննիսյան Ա., Խաղողի մթերումների պայմանագրեր այգեգործների հետ: «Բարձրորակ խաղող՝ Հայաստանում որակյալ գինիներ արտադրելու համար» թեմայով համաժողովի նյութեր, Երևան, 2003, էջ 38-42:
- ⁵ Ջաղինյան Ա., Խաղողի սորտերի ճիշտ ընտրությունը ու տեղաբաշխումը որպես բերքատվության և որակի բարձրացման ռեզերվ: Խաղողագործական արտադրանքի իրավունքի և շուկայի հիմնախնդիրներին նվիրված միջազգային համաժողով, Երևան, 2002, էջ 28-32:
- ⁶ Հարությունյան Ա. Ֆ., Պողոսյան Ա. Ս., Հայաստանի խաղողագործության և գինեգործության զարգացման միտումները: Խաղողագործական արտադրանքի իրավունքի և շուկայի հիմնախնդիրներին նվիրված միջազգային համաժողով, Երևան, 2002, էջ 2-10:
- ⁷ Հակոբյան Հ.Ժ., Խաղողագործության վիճակը և դրա զարգացման հնարավորությունները ՀՀ-ում: Ագրոգիտություն, ամս. 5-6, 1998, էջ 279-283:

թյանը¹, արտադրության մեքենայացման ազդեցությանը խաղողի արտադրության տնտեսական արդյունավետության վրա², արտադրատեսականու կազմի ազդեցությանը ֆերմերային տնտեսության գործունեության վրա³ և ֆերմերային տնտեսություններում խաղողի արտադրության տնտեսական արդյունավետությանը⁴:

Մեթոդաբանություն

Հետազոտության ընթացքում օգտագործվել են տարբեր գործիքներ և մեթոդներ՝ վիճակագրական և առաջնային տվյալների հավաքագրում և մշակում, հարցումների անցկացում ֆերմերային տնտեսությունների և ոլորտի մասնագետների հետ:

Խաղողի արտադրության տնտեսական արդյունավետության հաշվարկման համար հիմք են հանդիսացել խաղող արտադրող տնտեսությունների շրջանում անցկացված հարցումները, որոնց միջոցով հնարավոր է եղել հաշվարկել փաստացի ինքնարժեքը:

Հարցումներ անցկացվել են հիմնականում միջին չափեր ունեցող ֆերմերային տնտեսություններում, ինչը ըստ մեզ առավել իրական պատկեր ցույց կտա ոլորտում ձևավորված տնտեսական արդյունավետության վերաբերյալ, քանի որ այդ խմբի տնտեսությունները թվաքանակով և ընդհանուր խաղողի այգետարածքների մակերեսում ամենամեծ տեսակարար կշիռ կազմող տնտեսություններ են, միջանկյալ դիրք են գրավում ինտենսիվացման, ապրանքայնության և այլ հատկանիշներով:

Հաջորդ քայլում, հիմք ընդունելով ՀՀ ԱՎԿ կողմից հաշվարկված տարբեր ապրանքատեսակների և ծառայությունների գնային ինդեքսները վերահաշվարկվել է խաղողի ինքնարժեքը 2012-2021 թթ. ժամանակահատվածի համար, որի հիմնական նպատակն է բացահայտել ուսումնասիրվող 10 տարիների ընթացքում խաղողի ինքնարժեքի և հետևաբար արդյունավետության փոփոխության դինամիկան:

Հարցումների արդյունքում փորձ է արվել նաև վերհանել այն խնդիրները, որոնց առնչվում են խաղող արտադրող տնտեսությունները և դրանց վերացումը կարող է հիմք հանդիսանալ տնտեսական արդյունավետության բարձրացման համար:

¹ Beatrice Conradie, Graham Cookson And Colin Thirtle, Efficiency and farm size in western cape grape production: pooling small datasets, June 2006, South African Journal of Economics 74(2):334-343.


² Deng Lei, Wang Ruimei, Mu Weisong, Zhao Jingjie, Farm Size, Agricultural Mechanization and Technical Efficiency -An Empirical Study on Grape Producers in China, International Conference on Education, Sports, Arts and Management Engineering (ICESAME 2016), 850-856.

³ Gordana Manevska-Tasevska, Influence of product assortment on the efficiency of grape-growing family farms in Macedonia - DEA approach, AAWE working paper, December 2011.

⁴ Micael Santos, Ana Marta-Costa1, Cntia Santos1 and Anibal Galindro1, Efficiency of wine grape growers at farm level: a case study, XII Congreso Internacional Terroir, E3S Web of Conferences 50, 01010 (2018).

Վերլուծություն

Խաղող աճում է ՀՀ 10 մարզերից 8-ում, որոնից 5-ում ունի լուրջ տնտեսական նշանակություն: Խաղողի այգետարածությունների տեղաբաշխումը ըստ 2021թ. տվյալների բերված է գծանկար 1-ում:



Գծանկար 1. Խաղողի այգիների տեղաբաշխումը ըստ ՀՀ մարզերի /2021թ./


(կազմվել է հեղինակի կողմից, հիմք է ընդունվել ՀՀ ԱՎԿ - Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2021 թվականին, Տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան 2022:

Խաղողի այգետարածքների զգալի մասը՝ 73 տոկոս, գտնվում են Արարատի և Արմավիրի մարզերում: Նշանակալի այգետարածքներ կան Արագածոտնի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում՝ 24 տոկոս, այլ մարզերում դրանք կամ բացակայում են կամ չունեն զգալի մակերեսներ:


Բերքատվության ցուցանիշը ևս բավական մեծ տատանումներ ունի ըստ մարզերի: Ըստ վերջին 16 տարիների միջինացված ցուցանիշների ամենացածր բերքատվություն արձանագրվել է Կոտայքի և Լոռվա մարզերում, իսկ ամենաբարձր բերքատվություն ապահովել են Արարատի մարզի խաղողագործական տնտեսությունները՝ 202,8 ցենտներ հեկտարից: Բերքատվության տատանումները մի կողմից պայմանավորված են բնակլիմայական պայմաններով, մյուս կողմից էլ աճեցվող խաղողի սորտային առանձնահատկություններով և մշակման ավանդույթներով: Խաղողի բերքատվության և համախառն բերքի դինամիկան 2006-2021թթ. ներկայացված է գծանկար 2-ում: ՀՀ-ում խաղողի բերքատվության պիկեր դիտարկվել են 2015թ և 2020թ. ամենայն հավանականությամբ պայմանավորված տվյալ տարիների բնակլիմայական պայմաններով:

Համախառն բերքից և բերքատվությունից բացի, մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև ապրանքայնության ցուցանիշը, քանի որ տնտեսություններին իրական եկամտով ապահովում է վաճառված արտադրանքը: Ըստ 2021թ. տվյալ-

ների տնային տնտեսությունների կողմից վաճառվել է արտադրված խաղողի 90,1 տոկոսը:



Գծանկար 2. Խաղողի համախառն բերքի և բերքատվության դինամիկան ՀՀ-ում
(կազմվել է հեղինակի կողմից, հիմք է ընդունվել ՀՀ ԱՎԿ Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2006-2021 թթ., Տեղեկագիր, ՀՀ ՎԿ




Գծանկար 3. Խաղողի իրացումը (օգտագործումը) անհատական (ցյուղացիական) տնային տնտեսությունների կողմից /2021թ./

(կազմվել է հեղինակի կողմից, հիմք է ընդունվել ՀՀ ԱՎԿ Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (ցյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2021 թվականին, Տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան 2022

Ընդ որում տնտեսությունում օգտագործման մեջ գերակշիռ մասը՝ 73 տոկոս, օգտագործվել է վերամշակման համար:

Ապրանքայնության մակարդակը հատկապես բարձր է Արարատի և Արմավիրի մարզերում, որտեղ այն համապատասխանաբար կազմել է 93.7 և 96.9 տոկոս: Ապրանքայնությունը շատ ցածր է հատկապես այն մարզերում, որտեղ

խաղողը չի համարվում հիմնական մշակաբույս և չունի ապրանքային նշանակություն: Խաղողի ապրանքայնության դինամիկան ներկայացված է գծանկար 4-ում:



Գծանկար 4. Խաղողի ապրանքայնության մակարդակը տնային տնտեսություններում (%)¹

Գծանկար 4-ից ակնառու կերպով երևում է, որ 2015-2021թթ. Ժամանակահատվածում, խաղողի ապրանքայնության մակարդակը տատանվել է 90 տոկոսի շուրջ, ինչը կարելի է համարել բավականին լուրջ ցուցանիշ և որը բավականին բարձր է նախորդ ժամանակահատվածի նկատմամբ:

15. Trade reforms and food security, Food and agriculture organization of the UN, Rome, 2003, Chapter 2. Food security: concepts and measurement, link: <https://www.fao.org/3/y4671e/y4671e06.htm>
16. WTO agreement on agriculture, (2022): Link: https://www.europarl.europa.eu/ftu/pdf/en/FTU_3.2.7.pdf

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննես Սիմոնի Ասատրյան Լիանա Սամվելի Ազատյան

Համառոտագիր. Ցանկացած երկրի պարենային անվտանգությունը սերտորեն կապված է երկրի պարենային շուկաների բնականոն գործունեության հետ: Այս առումով, բացի շուկայական մեխանիզմներից, շատ կարևոր են պետական քաղաքականությունն ու շուկայի պետական կարգավորման միջոցառումները: ՀՀ-ն Ձուտ ներմուծող երկիր է և ունի պարենային ապահովության համեմատաբար ցածր մակարդակ: Այս փաստն ավելի է ընդգծում պարենային շուկաների պետական քաղաքականության և կարգավորող միջոցառումների մշտական կատարելագործման կարևորությունը:

Թեմայի արդիականությունը կապված է Հայաստանի ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակի հետ: Covid-19-ի համավարակը և Արցախյան պատերազմը ակնառու դարձրեցին Հայաստանի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման հրատապությունը: Պարենային անվտանգության ապահովման երաշխիքներից մեկը պարենային շուկաներում կայունության հաստատումն է, որն էլ իր հերթին պայմանավորվում է պետական միջամտության արդյունավետությամբ:

Հոդվածի հիմնական նպատակն է համակողմանի ուսումնասիրել Հայաստանի պարենային շուկաների կարգավորման մեխանիզմները, գտնել առկա թերություններն ու խնդիրները և մշակել դրանց լուծման հնարավոր մոտեցումները: Մասնավորապես հոդվածի շրջանակներում քննարկվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրվել են ՀՀ պարենային շուկաների կարգավորման մեխանիզմները, դրանց առանձնահատկությունները,
- Իրականացվել է պարենային շուկաների կարգավորման ընթացիկ վիճակի ուսումնասիրում,
- Վեր են հանվել առկա թերությունները և խնդիրները,
- Մատնանշվել են այդ խնդիրների լուծմանն ուղղված մի քանի առաջարկություններ:

Գիտական նորույթ. Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ բացահայտվել են ՀՀ պարենային շուկաների կարգավորման մեխանիզմների թերություններ և մշակվել են դրանց վերացման ուղղություններ: Մասնավորապես, կարևորվում է առաջնային պարենային ապրանքների գների պետական կարգավորումը և այդ ապրանքների ինքնաբավությանը ուղղված պետական աջակցությունը:

Հոդվածում ներկայացված առաջարկությունները ոչ միայն կնպաստեն պարենային շուկաներում կայուն իրավիճակի հաստատմանը, այլև դրական ազդեցություն կունենան ՀՀ պարենային անվտանգության մակարդակի բարձրացման վրա:

Բանալի բառեր. պարենային շուկա, ագրարային քաղաքականություն, պետական կարգավորում, պետական աջակցության ծրագրեր, պարենային անվտանգություն

ПОЛИТИКА РЕГУЛИРОВАНИЯ ПРОДОВОЛЬСТВЕННЫХ РЫНКОВ РА: ОСОБЕННОСТИ И НЕДОСТАТКИ

Оганнес Симонович Асатрян
Лиана Самвеловна Азатян

Аннотация: Продовольственная безопасность любой страны тесно связана с нормальным функционированием продовольственных рынков страны. В связи с этим, помимо рыночных механизмов, большое значение имеют государственная политика и меры государственного регулирования рынка. Армения является страной Нетто-импортером с относительно низким уровнем продовольственной безопасности. Этот факт еще больше подчеркивает важность постоянного совершенствования государственной политики продовольственных рынков и постоянного совершенствования мер регулирования.

Актуальность темы связана с текущим геополитическим положением Армении. Пандемия COVID-19 и Арцахская война подчеркнули актуальность повышения уровня продовольственной безопасности в Армении. Одной из гарантий обеспечения продовольственной безопасности является установление стабильности на продовольственных рынках, что в свою очередь зависит от эффективности надлежащего государственного регулирования.

Основная цель данной статьи – всесторонне изучить механизмы регулирования продовольственного рынка Армении, выявить существующие недостатки и проблемы и разработать возможные подходы их решения. В частности, в рамках данной статьи были рассмотрены следующие **проблемы**.

- Изучены механизмы и особенности регулирования продовольственного рынка РА,
- Изучено текущее состояние регулирования продовольственных рынков,
- Выявлены существующие недостатки и проблемы,
- Указан ряд предложений, направленных на их решение.

Научная новизна: Научная ценность данного исследования заключается в выявлении недостатков в регулировании продовольственного рынка Армении и путей его улучшения. В частности, подчеркивается важность государственного регулирования цен на продукты первой необходимости и государственной поддержки, направленной на повышение самообеспеченности населения продуктами питания.

Перечисленные рекомендации будут способствовать не только установлению стабильной ситуации на продовольственных рынках, но и окажут положительное влияние на повышение уровня продовольственной безопасности Армении.

Ключевые слова: продовольственный рынок, аграрная политика, государственное регулирование, программы государственной поддержки, продовольственная безопасность

THE CASE STUDY OF FOOD MARKET REGULATION POLICY IN ARMENIA: PECULIARITIES AND SHORTCOMINGS

Hovhannes Simon Asatryan
Liana Samvel Azatyan

Abstract: The food security of any country is closely linked to the normal functioning of the country's food markets. In this regard, in addition to market mechanisms, state policy and regulatory measures are very important. Armenia is Net importer country with relatively low levels of food security. This fact further emphasizes the importance of constant improvement of state policy and regulatory measures for food markets.

The relevance of the topic is related to the current geopolitical situation of Armenia. The Covid-19 pandemic and the Artsakh war highlighted the urgency of increasing the level of food security in Armenia. One of the guarantees of ensuring food security is the establishment of stability in food markets, which in turn depends on the effectiveness of the proper state regulation.

The main purpose of this article is to comprehensively study Armenian food market regulation mechanisms, find existing shortcomings and problems and cultivate possible concepts of their solutions. In particular, following **objectives** have been addressed in the scope of this article:

- The peculiarities of the RA food market regulation, the mechanisms that are used and implemented have been studied,
- The assessments of the current functioning of food markets was performed,
- The existing shortcomings and the problems have been revealed,
- Numbers of measures aimed at solving them have been pointed out.

Scientific novelty: The scientific value of this study is the identification of shortcomings in Armenian food market regulation and the ways of its improvement. In particular we emphasize the importance of state regulation of primary food prices and state support aimed at improving self-sufficiency of primary foods.

The recommendations made in this article will not only contribute to the establishment of a stable situation in the food markets, but will also have a positive impact on raising the level of food security in Armenia.

Keywords: food market, agrarian policy, state regulation, state support programs, food security

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մերի Համբարձումի Մուրադյան

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Աշխարհում չկա այնպիսի պետություն, որ չառնչվի ջրային պաշարների արդյունավետ կառավարման խնդիրների հետ: Այս խնդիրն էլ ավելի ակնառու է լեռնային ռելիեֆ ունեցող երկրների համար: Այդպիսիք են Կովկասյան երկրները, որոնց առաջնային խնդիրներից մեկը ջրային ռեսուրսների կառավարումն է, քանի որ, պարենային, էներգետիկ և տնտեսության մյուս ոլորտների խնդիրները կապված են ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հետ: Ավելին, այս տարածաշրջանում պարենային ապահովվածությունը կախված է ոռոգումից:

Մեր հանրապետության համար վերոնշյալ խնդիրները առավել արդիական են, քանի որ բուսաբուծության համախառն արտադրանքի 75%-ից ավելին ստացվում է ոռոգվող երկրագործությունից: Ոռոգման համակարգի օպտիմալ կառավարումը ջրային ռեսուրսների հիմնախնդրի կարևորագույն բաղադրիչներից մեկն է. ինչով էլ պայմանավորված է աշխատանքի ***արդիականությունը:***

Հոդվածի նպատակը: Հոդվածի ***նպատակն է*** Հայաստանում ոռոգման համակարգի իրավիճակը ուսումնասիրության հիման վրա մշակել ոռոգման համակարգի կառավարման բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Ուստի ***խնդիր է*** դրվել.

- ✓ Վերլուծել ոռոգման համակարգի վիճակը,
- ✓ Ուսումնասիրել Հայաստանում ոռոգման համակարգի կառավարման առանձնահատկությունները,
- ✓ Բացահայտել ոռոգման համակարգի կառավարման բարելավման ուղիները

Մեթոդաբանություն: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական տնտեսագետների ուսումնասիրությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տրամաբանական, վիճակագրական և վերլուծության մեթոդները:

Թեմատիկայի մշակումների առումով ուշագրավ դիտարկումներ են արվել Ա.Խ. Մարկոսյանի, Մ.Մ. Մկրտումյանի, Հ.Վ. Թումաջյանի Ջրային ռեսուրսների և ջրային համակարգի կառավարումը, ԵՃՇՊՀ-Եր.: 2011թ (երկու գրքերում), Ա. Կարապետյանի Ջրային ռեսուրսների օգտագործման տնտեսական մեխանիզմների հիմնախնդիրները ՀՀ-ում, Ատենախոսություն, Եր.-2009թ, Ա. Մարգարյանի Ջրային գործուն արդի աշխարհաքաղաքական գործընթացներում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2015 թ. տարեկան գիտական նստաշրջանի նյութեր, և այլ ուսումնասիրություններում:

Վերլուծություն: Հայաստանի Հանրապետության տարածքում հոսող ջրային ռեսուրսները պետական սեփականություն են¹:

Կարելի է ասել, որ Հայաստանում ընդհանուր առմամբ առկա են ջրային ռեսուրսների բավարար պաշարներ, սակայն գետային հոսքերը ունեն սեզոնային ու տատանողական բնույթ, ինչի հետևանքով էլ ջրային ռեսուրսների բաշխվածությունը դառնում է անհավասարաչափ: Այդ տատանումների դեմ պայքարելու համար կառուցված են պատվարներ, որոնց մեծ մասը ծառայում է ոռոգման նպատակով: Քիչ չեն նաև ստորերկրյա ջրային պաշարները: Ավելին՝ խմելու ջրի 96%-ը և ընդհանուր ջրառի 40%-ը կազմում են ստորերկրյա ջրային ռեսուրսները²: Պետք է նշել նաև, որ ստորերկրյա ջրերը նույնպես տեղաբաշխված են անհավասարաչափ: Դրա հետևանքով Արարատյան դաշտում արտեզյան ջրերի ճնշումից առաջանում են ճահիճներ³:

Հանրապետությունը ջրային ռեսուրսների օգտագործումը դասակարգվում է ըստ ոլորտների՝ ոռոգում, խմելու-կենցաղային, հիդրոէներգետիկա, արդյունաբերություն, ռեկրեացիա, ձկնաբուծություն և այլն:

Ջրօգտագործումը ներկայացնենք աղյուսակի տեսքով:

Հայաստանում 2020թ. ջրառը կազմել է 2829.8 մլն մ³, ջրօգտագործումը՝ 2176.3 մլն. մ³ (83.6%-ը՝ գյուղատնտեսություն, ձկնաբուծություն և անտառտնտեսություն, 8.8%-ը՝ արտադրական, կոմունալ տնտեսություն և շինարարություն, 7.6%-ը՝ խմելու): Ջրի տրանզիտային կորուստները կազմել են 653.5 մլն. մ³ կամ ջրառի 23.1%-ը⁴:

Աղյուսակ 1

Ջրօգտագործումը ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների, 2017-2020թթ(մլն, մ³)⁵

	2017թ	2018թ	2019թ	2020թ
Ոռոգում	1236.6	1064.6	1069.5	1067.0
Ձկնաբուծություն	515	489.2	754.3	684.2
Հանքագործական արդյունաբերություն	83.9	84	81.9	84.4
Մշակող արդյունաբերություն	7.7	17.1	8.4	19.4

¹ ՀՀ Ջրային օրենսգիրք, (Ընդունված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հունիսի 4-ին), ՀՕ-373-Ն, Գլուխ 1, Հոդված 4

² Ջեկույց կազմված Համաշխարհային բանկի կողմից Դեպի ջրային ռեսուրսների համալիր կառավարում, էջ 13: /

http://212.42.195.34:92/wp-content/uploads/2019/11/Armenia-IWRM_Arm.pdf

³ Հակոբյան Եվգենյա, Հայաստանի ջրային ռեսուրսները և կառավարման հիմնախնդիրները, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր). -Եր.: «Գիտություն» հրատ., 2012, էջ 144

⁴ ՎԿ, Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020թ., Ջրօգտագործում և ջրհեռացում, էջ 94

⁵ ՎԿ, Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020, 2019թթ., Ջրօգտագործում և ջրհեռացում

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	132.1	237.8	188.5	288.1
Էլեկտրականություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	27.2	28.9	18.6	24.0
Տնտեսական գործունեության այլ տեսակներ	37.5	4.9	2.5	9.2
Ընդամենը	2040	1926.5	2123.7	2176,3

Ինչպես տեսնում ենք ընդհանուր ջրօգտագործման ծավալում գերակշիռը ոռոգումն է: Դա բնական է, քանի որ Հայաստանում գյուղատնտեսությունը մեծապես կախված է ոռոգումից: Մշակաբույսերի համախառն արտադրանքի ավելի քան 80%-ը ստացվում է ոռոգվող հողագործությունից¹:

Ելնելով ոռոգման ջրի կարևորությունից, և ջրային ռեսուրսների օգտագործման ծավալում իր գերակշիռ դերից ջրային ռեսուրսների կառավարումը պետք է սկսել հենց այս ոլորտից:

Գյուղատնտեսության մեջ ջրի կառավարման խնդիրներով զբաղվում են ջրօգտագործողների ընկերությունները, որոնց կառավարման ոլորտում գտնվում է մոտ 200 հազար հեկտար հողատարածք:

Նախկինում՝ Խորհրդային Միության տարիներին հանրապետությունում ջրի կառավարման գործառույթը իրականացվում էր պետության կողմից, ինչը կախված էր տարբեր վերահսկողական խնդիրների և ահռելի ծախսերի հետ: Արդեն 1990-ական թվականներին որոշվեց ապապետականացնել ջրօգտագործման կառավարման գործառույթը, որի նպատակը համակարգի կառավարումը առավել արդյունավետ դարձնելն էր: Հաշվի առնելով միջազգային փորձը և համագործակցելով Համաշխարհային բանկի հետ՝ կառավարությունը որոշեց ստեղծել ոռոգման ջրի մասնակցային կառավարման համակարգ՝ ստեղծվեցին ջրօգտագործողների ընկերությունները: Ոլորտում առկա խնդիրները վեր հանելու և լուծում տալու համար մշակվեց և ընդունվեց «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը:

Այսօր Հայաստանում ջրային համակարգի կառավարման լիազոր մարմինը ՀՀ կառավարությանն առընթեր գործող ջրային տնտեսության պետական կոմիտեն է²: Ոռոգման համակարգի կառավարման լիազոր մարմինը ՋՕԸ 15 ընկերություններն են և «Ջրատ» փակ բաժնետիրական ընկերությունը: Վերջիններս միասին 2020թ կարողացել են ապահովել 85.34 հազ. հա հողատարածքների ջրամատակարարումը³:

¹ Հակոբյան Եվգենյա, Հայաստանի ջրային ռեսուրսները և կառավարման հիմնախնդիրները, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր). -Եր.: «Գիտություն» հրատ., 2012, էջ 145

² ՀՀ կառավարության որոշումը, Ջրային համակարգի կառավարման լիազոր մարմին ճանաչելու մասին, Ընդունված՝ 17 հոկտեմբերի 2002 թվականի N 1653-Ն

³ Հաշվետվության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար-

Ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները հանդիսանում են շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ: ՋՕԸ ղեկավարվելով հասարակության շահերով, իրականացնում են ոռոգման ջրամատակարարման համակարգի օգտագործումն ու պահպանումը: Ջրօգտագործողների ընկերությունները ջրօգտագործողներին ջուր են մատակարարում իրենց սպասարկման տարածքում, իսկ ջրօգտագործողների ընկերությունների միությունները՝ ջրօգտագործողների ընկերություններին՝ իրենց սպասարկման տարածքում: ՋՕԸ կամավորության հիման վրա ստեղծված միություններ են, որոնց նպատակն է միևնույն ջրի աղբյուրի օգտագործումը¹:

Այսպիսով՝ ոռոգման համակարգում ներդրվեց մասնակցային մոդելը, որը պետք է լուծեր ոլորտի ոռոգման ժամանակացույցի, ջրի քանակի, գումարների հավաքագրման և մի շարք այլ խնդիրներ: Հիրավի սկզբնական փուլում այս մոդելի ընդունումը տվեց իր դրական արդյունքները²:

Այդուհանդերձ պետք է նշենք, որ ջրօգտագործող ընկերությունների ստեղծումը բավարար չէր լուծելու համար այնպիսի խնդիրներ ինչպիսիք են.

- Ջրահեռացման համակարգի անմխիթար վիճակը: Հայաստանում առկա ոռոգման ջրագծերը հիմնականում կառուցվել են խորհրդային միության տարիներին և ունեն բարձր մաշվածության աստիճան:
- Ջրի կորուստների բարձր մակարդակը՝ ոռոգման ժամանակ: Ոռոգման ջրի մատակարարումը իրականացվում է մեծապես հողային հուններով³:

Ըստ ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի տվյալների նախատեսվում էր, որ ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ոռոգելի հողատարածքները 2021 թ. պետք է կազմեին 135 հազար հա⁴, մինչդեռ միայն 2020թ հաջողվել է ոռոգել 87,3 հազար հա հողատարածք⁵: Նախատեսվող

րության ջրային կոմիտեի 2020 թվականի գործունեության, Եր-2021, էջ 3
<https://www.scws.am/uploads/files/23/hash-2020.pdf>

¹ ՀՀ ջրային օրենսգիրք, (Ընդունված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հունիսի 4-ին), ՀՕ-373-Ն, Գլուխ 9, Հոդված 72

² Ձեկույց Արարատի և Արմավիրի մարզերում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեության արդյունավետությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների վերաբերյալ, 2021 թ, էջ 4-5

³ ՄԱԶԾ-ԿԿՀ Ծրագիր, «Կլիմայի փոփոխության պայմաններում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում իրավական, ինստիտուցիոնալ, խոցելիության գնահատման և հարմարվողականության պլանավորման բացերի ու խոչընդոտների բացահայտում և վերլուծում» էջ 155, http://www.natureic.am/Content/announcements/12691/NAP_Water%20Assessment%20Report_ARM_final.pdf

⁴ ՀՀ 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Հավելված ՀՀ Կառավարության 2014թ մարտի 27-ի № 442-Ն որոշման, էջ 88

⁵ Հաշվետվություն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի 2021թ գործունեության մասին, Եր-2022, էջ 4

ցուցանիշը չհաջողվեց ապահովել, որի պատճառներից մեկը կարող է լինել ոռոգման համակարգի անմխիթար վիճակը, ոռոգվող ջրի անհամաչափ տեղաբաշխվածությունը:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է բարելավել ոլորտի ներդրումային քաղաքականությունը: Առանց ներդրումների անհրատեսական կլինի այս ոլորտում հասնել դրական արդյունքների: Այս հարցում կարևորում ենք միջազգային կազմակերպություններից ստացվող դրամաշնորհները և տրամադրվող վարկային միջոցները, և իհարկե ՀՀ պետական բյուջեից ներդրվող միջոցները:

Այդպիսի արդյունավետ համագործակցություններ միջազգային կազմակերպությունների հետ արդեն առկա են: Օրինակելի համագործակցություն էր 2010-2012թթ «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ (ՀՄՀ) - Հայաստան» համագործակցության ծրագիրը, որի արդյունքում իրականացվել է Արարատյան դաշտի դրենաժային համակարգը: Ծրագրի արդյունքում ստորերկրյա ջրերի մակարդակը նվազեցվել է 2 մետրով, որը հնարավորություն տվեց մշակել ավելի բարձրարժեք մշակաբույսեր¹:

Մի քանի ջրամբարների կառուցման աշխատանքներ արդեն իսկ սկսվել են: Դրանցից են Ջարգացման գերմանական բանկի ֆինանսավորմամբ սկսված Կապսի ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման համար իրականացված ուսումնասիրությունները, որի արդյունքում նախատեսվում է իրականացնել 2200 հա ոռոգման համար ինքնահոս ջրամատակարարում: Ջարգացման ֆինանսական գործակալության կողմից իրականացվող ֆինանսավորմամբ սկսվել է նաև Վեդիի ջրամբարի կառուցման աշխատանքները: Ոռոգման համակարգի բարելավմանը կնպաստի նաև Եղվարդի ջրամբարի կառուցումը, որի ընդհանուր պահեստավորման ծավալը նախատեսվում է 90 մլն մ³ ²:

Վեդիի ջրամբարի կառուցմամբ կապահովվի Արարատյան հարթավայրի ավելի քան 4000 հա հողակտորների ոռոգումը, այդ թվում 2800 հա տարածքի մեխանիկական ոռոգումը կփոխարինվի ինքնահոս ոռոգման համակարգի: Բացի վերը նշված ջրամբարներից Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է մեկնարկել Գեղարդալճի, Քաղցրաշենի, Բաղրամյան-Նոյակերտի և Մեղրիի ինքնահոս ոռոգման նախագծման ու կառուցման գործընթացները, ինչը նույնպես հնարավորություն կտա նշված տարածքներում մեխանիկական ոռոգումը փոխարինել ինքնահոսով³:


Ակնհայտ է, որ ՀՀ ոռոգման համակարգի կառավարման բարելավման համար առաջին հերթին պետք է իրականացնել տեխնիկական վերազինում:

¹ «Ջուր և առողջություն» արձանագրություն, Հայաստանում առողջության բարելավում նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով, Նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների իրականացման աջակցության գործողությունների ծրագիր, Երևան, 2014թ, էջ 27

² Նույն տեղում՝ էջ 28-29

³ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե, Ջրամբարաշինություն, <https://www.scws.am/am/information#1>

Մակայն պետք է նշել, որ մինչ օրս Հայաստանում չկա հստակ քարտեզագրում ջրանցքների վերաբերյալ, թե որ հատվածն է բետոնապատ, որը՝ հողային: Այս խնդիրը առկա է նաև ստորգետնյա ջրանցքներում: Խնդրին լուծում է առաջարկում Geographic Information System (GIS)-ը: GIS համակարգ է, որտեղ կարող ենք հավաքագրել և պահպանել հիդրոերկրաբանական տվյալները, ինչպես նաև այս համակարգի միջոցով կարող ենք գտնել լուծումներ ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրներին¹:



Նկ. 1. GIS համակարգի օրինակ²

Համակարգը սկսել է գործել Հայաստանում: Արդեն իսկ սկսվել է Երևան քաղաքի GIS պատկերը ստանալու գործընթացը, ինչպես նաև Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության, “Stability and Development” հասարակական կազմակերպության շնորհիվ ստեղծվել է GIS կենտրոնը Գյումրի քաղաքում, որը պատրաստում է քաղաքի թվային պատկերը³:

Այս համակարգը շատ լավ հնարավորություն է ՀՀ տարածքի ջրային ռեսուրսների վիճակի վերաբերյալ թվային տեղեկություններ կազմելու համար: Այն թույլ կտա տեսնել իրական պատկերը և գտնել լուծումներ:

Սույն հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների և օրինաչափությունների հիման վրա բացահայտվել և հիմնավորվել են Հայաստանի ոռոգման համակարգի կառավարման բարելավմանն ուղղված գործոններ, որոնց կիրառությունը իր բարենպաստ ազդեցությունը կունենա ՀՀ ոռոգման համակարգի զարգացման վրա:

Եզրակացություններ: Ուսումնասիրելով ՀՀ ոռոգման համակարգի կառավարման վիճակը, վերլուծելով բարելավման հնարավոր ուղիները հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- ՀՀ ոռոգման համակարգի կառավարմանը նախ և առաջ խոչընդոտում են ենթակառուցվածքների մաշվածությունը կամ բացակայությունը: Ոռոգման համակարգի արդյունավետ կառավարման համար 2002 թվականին ստեղծվե-

¹ USAID, Application of geographic information systems in Armenia, opportunities for expanded use in the health sphere, p 6

² USAID, Application of geographic information systems in Armenia, opportunities for expanded use in the health sphere, p 6
https://pdf.usaid.gov/pdf_docs/pnadr098.pdf

³ Նույն տեղում՝ էջ 12

ցին ՋՕԸ-ը, որոնց նպատակը ոռոգման ջրի մատակարարումն է ու վճարների հավաքագրումն է: Մակայն ենթակառուցվածքների վատթար վիճակի հետևանքով դժվարանում է ոլորտի կառավարումը:

- Հանրապետությունում ոռոգման ջրի կորուստները չափազանց մեծ են: Ջրագծերը գտնվում են անմխիթար վիճակում: Ջրի կորուստը պարզապես ահռելի է: Խնդրին լուծում կարող ենք տալ միայն առկա վնասված խողովակաշարերի վերանորոգմամբ, նորերի կառուցմամբ, վթարներին արագ արձագանքմամբ, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ և որ ամենակարևորներից է ոլորտի պատշաճ վերահսկողություն իրականացնելով:
- Ոռոգման համակարգի կառավարման բարելավման գործընթացում բավականին կօգնեն նախատեսվելիք ջրամբարների կառուցումը: Այս հարցում առաջնային է ներդրումային միջավայրի բարելավումը և միջազգային կազմակերպությունների հետ շարունակական փոխգործակցությունը:
- Ոռոգման համակարգի կառավարման բարելավման համար գերակա է տեխնիկական վերազինումը, ենթակառուցվածքների վերականգնումը և ստեղծումը, առանց որոնց հնարավոր չէ բարելավել ոլորտը: Հայաստանում ջրանցքների քարտեզագրման տեղեկատվական բազան բացակայում է: Այս հարցում առաջարկվում է ներդնել GIS համակարգը, որը բացի տեղեկատվության հավաքագրումից կօգնի նաև ճիշտ կառավարել ռեսուրսները:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Հավելված ՀՀ Կառավարության 2014թ մարտի 27-ի № 442-Ն որոշման
2. ՀՀ կառավարության որոշումը, Ջրային համակարգի կառավարման լիազորմարմին ճանաչելու մասին, Ընդունված՝ 17 հոկտեմբերի 2002 թվականի N 1653-Ն
3. ՀՀ Ջրային օրենսգիրք, (Ընդունված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հունիսի 4-ին), ՀՕ-373-Ն,
4. «Ջուր և առողջություն» արձանագրություն, Հայաստանում առողջության բարելավում նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով, Նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների իրականացման աջակցության գործողությունների ծրագիր, Երևան, 2014թ,
5. Ջեկույց Արարատի և Արմավիրի մարզերում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեության արդյունավետությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների վերաբերյալ, 2021 թ, էջ 31,
6. Ջեկույց կազմված Համաշխարհային Բանկի կողմից Դեպի ջրային ռեսուրսների համալիր կառավարում, 2014թ, էջ 219

7. Հակոբյան Եվգենյա, Հայաստանի ջրային ռեսուրսները և կառավարման հիմնախնդիրները, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր). -Եր.: «Գիտություն» հրատ., 2012, էջ 144-148
8. Հաշվետվության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի 2020 թվականի գործունեության, Եր-2021,
9. Հաշվետվություն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի 2021թ գործունեության մասին , Եր-2022,
10. ՄԱԶԾ-ԿԿՀ Ծրագիր, «Կլիմայի փոփոխության պայմաններում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում իրավական, ինստիտուցիոնալ, խոցելիության գնահատման և հարմարվողականության պլանավորման բացերի ու խոչընդոտների բացահայտում և վերլուծում»,
11. ՎԿ, Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020, 2019թթ. , Ջրօգտագործում և ջրհեռացում
12. КБОУОН, Земельные ресурсы: всемирный обзор, Глава 8, Водные ресурсы стр. 220
13. USAID, Application of geographic information systems in Armenia, opportunities for expanded use in the health sphere, p 30
14. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե, Ջրամբարաշինություն, <https://www.scws.am/am/information#1>

References

1. HH 2014-2025t't' her'ankarayin zargacman r'azmavarakan c'ragir, Havelvac' HH Kar'avarowt'yan 2014t' marti 27-i № 442-N oroshman
2. HH kar'avarowt'yan oroshowmy', Jrayin hamakargi kar'avarman liazor marmin twanachelow masin, Y'ndownvac'` 17 hoktemberi 2002 t'vakani N 1653-N
3. HH Jrayin o'rensgirq, (Y'ndownvac' e' Hayastani Hanrapetowt'yan Azgayin jhoghovi koghmic 2002 t'vakani hownisi 4-in), HO'-373- N,
4. «Jowr & ar'oghjowt'yown» ard'anagrowt'yown, Hayastanowm ar'oghjowt'yan barelavowm npatakayin cowcanishneri sahmanman mijocov` jri kayown kar'avarowm, anvtang xmelow jri matcheliowt'yown & patshatw jraher'acowm apahovelow npatakov, Npatakayin cowcanishneri & npatakayin jhamketneri irakanacman ajakcowt'yan gorc'oghowt'yownneri c'ragir, Er&an, 2014t',
5. Zekowyc Ararati & Armaviri marzerowm HH tarac'qayin kar'avarman & ent'akar'owcvac'qneri naxararowt'yan jrayin komitei, dra kar'owcvac'qayin storbajhanowmneri & jrayin tntesowt'yan c'ragreri irakanacman grasenyaki gorc'owneowt'yan ardyownavetowt'yownn owsowmnasirogh qnnich hand'najhoghovi katarac' ashxatanqneri veraberyal, 2021 t', e'j 31
6. Zekowyc kazmvac' Hamashxarhayin banki koghmic Depi jrayin r'esowrsneri hamalir kar'avarowm,2014t` , e'j 219
7. Hakobyan Evgenya, Hayastani jrayin r'esowrsnery' & kar'avarman himnaxndirneri', Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrape-

- towt'yownowm (hanrapetakan gitajhoghovi nyowt'er). -Er.: «Gitowt'yown» hrat., 2012, e'j 144-148
8. Hashvetvowt'yan HH tarac'qayin kar'avarman & ent'akar'owcvac'qneri naxararowt'yan jrayin komitei 2020 t'vakani gorc'owneowt'yan, Er-2021,
 9. Hashvetvowt'yown HH Tarac'qayin kar'avarman & ent'akar'owcvac'qneri naxararowt'yan jrayin komitei 2021t' gorc'owneowt'yan masin , Er-2022,
 10. MAZC'-KKH C'ragir, «Klimayi p'op'oxowt'yan paymannerowm jrayin r'esowsneri kar'avarman olortowm iravakan, institowcional, xoceliowt'yan gnahatman & harmarvoghakanowt'yan planavorman baceri ow xochy'ndotneri bacahaytowm & verlowc'owm»,
 11. Sargsyan A., Jayin gorc'onn ardi ashxarhaqaghaqakan gorc'y'nt'acnerowm, EPH OWGY' gitakan hodvac'neri jhoghovac'ow 2015 t'. tarekan gitakan nstashrjani nyowt'er,
 12. VK, Shrjaka mijavayry' & bnakan pasharnery' Hayastani Hanrapetowt'yownowm 2020, 2019t't'. , Jro'gtagorc'owm & jrher'acowm,
 13. KBOOON, Zemel'nye resursy: vsemirnyj obzor, Glava 8, Vodnye resursy str. 220
 14. USAID, Application of geographic information systems in Armenia, opportunities for expanded use in the health sphere, p 30
 15. HH TKEN Jayin komite, Jrambarashinowt'yown, <https://www.scws.am/am/information#1>

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մերի Համբարձումի Մուրադյան

Համառոտագիր: Հոդվածում ներկայացված է ոռոգման համակարգի կառավարման բարելավման կարևորությունը ոլորտի և ամբողջ տնտեսության զարգացման գործում, որով էլ պայմանավորված է սույն հոդվածի **արդիականությունը:** Առաջնային ուշադրություն է դարձվել ոռոգման համակարգի ենթակառուցվածքների վերականգնման, տեխնիկական վերազինման միջոցով համակարգի կառավարման բարելավման վրա: Հոդվածում **նպատակ է** դրվել Հայաստանում ոռոգման համակարգի իրավիճակի ուսումնասիրությունների հիման վրա մշակել ոռոգման համակարգի կառավարման բարելավմանն ուղղված առաջարկություններ: Նպատակին հասնելու համար **խնդիր է** դրվել վերլուծել ոռոգման համակարգի վիճակը, ուսումնասիրել Հայաստանում ոռոգման համակարգի կառավարման առանձնահատկությունները, բացահայտել ոռոգման համակարգի կառավարման բարելավման ուղիները:

Հայաստանում ոռոգման համակարգի կառավարման վիճակագրական, վերլուծական մեթոդների հիման վրա կատարվել են վերլուծություններ, որոնց արդյունքում պարզ է դարձել, որ հանրապետությունում ոռոգման համակարգը գտնվում է վատթար վիճակում, համակարգի կառավարման համար անհրա-

ժեշտ է ձեռնարկել քայլեր ենթակառուցվածքների վերականգնման ու ստեղծման համար:

Սույն հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների և օրինաչափությունների հիման վրա բացահայտվել և հիմնավորվել են Հայաստանի ոռոգման համակարգի կառավարման բարելավմանն ուղղված գործոններ, որոնց կիրառությունը իր բարենպաստ ազդեցությունը կունենա ՀՀ ոռոգման համակարգի զարգացման վրա:

Հոդվածում համակարգված տեսքով ներկայացված է Հայաստանի ոռոգման համակարգի կառավարման առանձնահատկությունները, հիմնավոր է համարվել այն եզրահանգումը, որ հանրապետությունում առկա են բավարար ջրային ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ է ճիշտ կառավարել՝ ոլորտի զարգացման համար:

Բանալի բառեր. ջուր, ոռոգման համակարգ, ջրանցքներ, ենթակառուցվածքներ, ջրամբարներ, ոռոգման համակարգի կառավարում, Ջրօգտագործող ընկերություններ, Ջրային կոմիտե:

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ СИСТЕМОЙ ОРОШЕНИЯ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

Мери Амбардзумовна Мурадян

Аннотация: В статье представлена важность улучшения управления ирригационной системой в развитии отрасли и всего хозяйства, чем и обусловлена актуальность статьи. Приоритетное внимание уделялось совершенствованию управления системой орошения за счет восстановления инфраструктуры ирригационной системы и технического перевооружения оросительных систем.

Целью **статьи** является разработка рекомендаций по улучшению управления ирригационной системой на основе исследований состояния ирригационной системы в Армении. Для достижения цели была поставлена задача проанализировать состояние ирригационной системы, изучить особенности управления ирригационной системой в Армении, определить пути улучшения управления ирригационной системой.

Были проведены анализы на основе статистических и аналитических методов управления ирригационными системами Армении, в результате которых стало ясно, что ирригационная система в республике находится в плохом состоянии, необходимо принять меры по восстановлению и созданию инфраструктуры для управления системой.

Научная новизна данной статьи заключается в том, что на основе проведенных автором исследований и закономерностей были выявлены и обоснованы факторы, направленные на улучшение управления ирригационной системой Армении, применение которых окажет благоприятное воздействие на развитие ирригационной системы Армении.

В статье в систематизированной форме представлены особенности управления ирригационной системой Армении, обоснован вывод о наличии в республике достаточных водных ресурсов, которыми необходимо правильно управлять для развития отрасли.

Ключевые слова: вода, оросительная система, каналы, инфраструктура, водохранилища, управление оросительной системой, организации водопользователей, Водный комитет.

IRRIGATION SYSTEM MANAGEMENT PROBLEMS AND THEIR SOLUTION WAYS

Meri Hambardzum Muradyan

Abstract. The article presents the importance of improving the management of the irrigation system in the development of the industry and the entire economy, which is the reason for the relevance of the article. Priority was given to improving the management of the irrigation system, by restoring the infrastructure of the irrigation systems and technical re-equipment of irrigation systems.

The goal of the article is to develop recommendations for improving the management of the irrigation system based on research on the state of the irrigation system in Armenia. To achieve the goal, the objective was set to analyze the state of the irrigation system, to study the features of the management of the irrigation system in Armenia, to determine ways to improve the management of the irrigation system.

Analyses were carried out on the basis of statistical and analytical methods for managing the irrigation system of Armenia, as a result of which it became clear that the irrigation system in the Republic is in poor condition, it is necessary to take measures to restore and create infrastructure to manage the system.

The scientific novelty: Based on the research and regularities done by the author, factors aimed at improving the management of the irrigation system of Armenia were identified and substantiated, the use of which will have a beneficial effect on the development of the irrigation system of Armenia.

The article presents the features of management of the irrigation system of Armenia in a systematic way, the conclusion that there are sufficient water resources in the Republic, which must be properly managed for the development of the industry was substantiated.

Keywords: water, irrigation system, canals, infrastructure, reservoirs, irrigation system management, water user organizations, Water Committee.

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ, ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐԸ ԵՎ
ՀՀ-ՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Աշոտ Երջանիկի Ոսկանյան
Մարգո Վարդանի Ղազարյան**

Հոդվածը ստացվել է՝ 09.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Յուրաքանչյուր պետություն ազգային մակարդակով, համակարգված գործողություններով իրականացնում է տնտեսական զարգացման քաղաքականություն: Որպես տնտեսական քաղաքականության ենթահամակարգ՝ գյուղատնտեսությունն ունի առանձնահատկություններ և բարձր ռիսկայնություն, ինչով էլ պայմանավորված է պետության զգալի մասնակցությունն ոլորտի զարգացման գործում:

ՀՀ ագրարային ռեսուրսների օգտագործման, գյուղական բնակավայրերում առկա սոցիալական և տնտեսական վիճակը, աղքատության բարձր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների անկայուն եկամուտները, գյուղաբնակների ցածր կենսամակարդակը և իրականացվող պետական աջակցության իրավիճակային ծրագրերն ուղղակիորեն դրդում են բարեփոխելու և կատարելագործելու ագրարային քաղաքականությունը:

Հոդվածի նպատակն է վերհանել գյուղատնտեսության պետական աջակցության միջազգային փորձը և առանձնացնել այն ծրագրային մոտեցումները, որոնք կիրառելի կլինեն ՀՀ-ում և կապահովեն ցանկալի հետազոտություն: Նպատակի իրագործման համար խնդիր է դրվել ուսումնասիրել մի շարք զարգացած և զարգացող երկրների պետական աջակցության քաղաքականությունը և առանձնացնել հանրապետությունում առավել կիրառելի ծրագրային մոտեցումները, իրականացնել ՀՀ և այլ երկրների պետական աջակցության որոշ ծրագրերի համեմատական վերլուծություն, քաղված դասերի հիման վրա առաջարկել ՀՀ-ում պետական օժանդակության ծրագրերի դրույթներ:

Գրականության վերլուծություն

Պետական կարգավորումը և պետական աջակցությունն ագրարային ոլորտում ունի անփոխարինելի նշանակություն: Այս առումով պետության դերի գնահատման վերաբերյալ տարբեր ժամանակահատվածներում տնտեսագետները տվել են իրենց մոտեցումները: Այսպես, մերկանտիլիստները (Տ. Մեն, Ա. Մոնկրետյեն և այլոք) բարձրաձայնում էին տնտեսության մեջ պետության ակտիվ միջամտության անհրաժեշտության մասին, պետական գանձարանի համալրումն իրականացնելով արտահանման խթանման և ներմուծման կանխարգելման միջոցով:¹

¹ Фунтикова А. А., Государственное регулирование сельского хозяйства в условиях переходной экономики, диссертация, 2007г.- с. 12

Դասականների մոտեցմամբ (հատկապես Ա. Սմիթ) պետությունը պետք է ապահովեր ձեռնարկատիրոջ կյանքի և սեփականության անվտանգությունը՝ երաշխավորելով տնտեսական ազատություն, հատկապես գործունեության ոլորտի ընտրություն, ազատ մրցակցություն և առևտուր:¹

Քեյնսյան մոտեցման համաձայն պետությունը պետք է ակտիվորեն միջամտեր տնտեսության ազատ շուկայական կառուցակարգերի բացակայության դեպքում, որոնք իրոք կապահովեին տնտեսության ճգնաժամից դուրս գալը: Նեոքեյնսականները (Բ. Ֆիշեր, Մ. Ֆրիդման) մերժելով քեյնսյան պահանջարկի վերարտադրության վրա ազդելը, փոխարենն առաջարկում էին անուղղակի միջոցներով ազդել առաջարկի վրա:²

Ըստ մոնետարիստների պետությունը տնտեսության վրա պետք է ազդեր միայն անուղղակի մեթոդներով: Նրանք երկրի տնտեսության զարգացման հիմնական դերը վերապահում էին շուկայական ուժերին:³

Պետական կարգավորման և պետական աջակցության խնդիրներին նվիրված աշխատանքներ ունեն նաև տնտեսագետներ Ս. Լ. Բրյուլին, Կ. Ռ. Մակկոննելլին, Լ. Ի. Աբալկինը, Ի. Բ. Ջազայտովը, Ա. Գ. Ջելդները, Ա. Ֆ. Շիշկինը, Ս. Ավետիսյանը, Է. Ղազարյանը, Հ. Ծպնեցյանը, Ա. Ոսկանյանը և այլք:

Ըստ Ա. Ոսկանյանի պետության միջամտությունը կարևոր է «առևտրի բարենպաստ ռեժիմի ապահովման, գների, հարկման, ապրանքարտադրողների եկամտաբերության, գիտատեխնիկական առաջընթացի խթանման և աջակցության մեխանիզմների իրականացման համար»:⁴

Տնտեսագետներ Ս. Ավետիսյանը և Հ. Ծպնեցյանը հիմնավորել են ՀՀ-ում գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորման անհրաժեշտությունը՝ բացահայտելով այնպիսի սուբսիդավորման պայմաններ, որոնք կուղղվեն «տարածքային զարգացման տարբերությունները մեղմելուն և տնտեսավարման պայմանների համահավասարեցմանը, գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացմանը, էքստենսիվ և ինտենսիվ զարգացմանը, առկա ներուժի արդյունավետ օգտագործմանը, ապրանքային տնտեսությունների ձևավորման խթանմանը»:⁵

¹ Смит А., Исследование о природе и причинах богатства народов. Т. 1-2. – М., Л., 1935. Т. 1.- 371 с.

² Блауг М., Экономическая мысль в ретроспективе/ М. Блауг – М.: Дело Лтд., 1994

³ Фунтикова А. А., Государственное регулирование сельского хозяйства в условиях переходной экономики, диссертация, 2007г.- с. 14

⁴ А. Е. Восканян, К. Л. Карапетян// Необходимость применения механизмов государственного регулирования в аграрной сфере РА// Информационные технологии и управление. 4. Ереван: Энциклопедия – Армения, 2012.-87с.

⁵ Ս. Ավետիսյան, Հ. Ծպնեցյան// Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույթի սուբսիդավորման անհրաժեշտությունը և սկզբունքները// Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութ)։ – Եր.։ «Գիտություն» հրատ., 2008.- 249 էջ

Հետազոտության մեթոդաբանություն

Հոդվածում շրջանառության մեջ են դրվել հայրենական և օտարերկրյա տնտեսագետների աշխատություններ, ամսագրերի և տարբեր գիտական հոդվածների նյութեր: Կիրառվել են համակարգային մոտեցման, վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

Վերլուծությունների հիմքում ընկած է գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի» տարեկան հաշվետվությունները:

Վերլուծություն

Գյուղատնտեսության զարգացման միջազգային փորձը ցույց է տալիս, որ ոլորտի զարգացումը հնարավոր է միայն պետական աջակցության գործուն ձևերի կիրառմամբ: Զարգացած երկրներում զգալի բյուջետային միջոցներ ուղղվում են պարենային շուկաների կարգավորմանը, գյուղական բնակավայրերի սոցիալական և բնապահպանական ծրագրերին և հատկապես գյուղատնտեսական ապրանք արտադրողների աջակցմանը: Այսպես.

Եվրամիության միասնական ագրարային քաղաքականությունը պարբերաբար ենթարկվում է բարեփոխումների և ներկա փուլը հատկանշական է նրանով, որ գյուղատնտեսական բյուջեն ուղղվում է ուղղակի սուբսիդիաների և գյուղական բնակավայրերի զարգացմանը՝ շրջակա միջավայրի պաշտպանության, երիտասարդ ֆերմերների, գյուղատնտեսական արտադրության համար անբարենպաստ տարածքների, փոքր տնտեսությունների և կոոպերացման աջակցությանը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Եվրամիության գյուղատնտեսական բյուջեի ուղղությունները ¹

Խնդիրներ	ԵՄ բյուջե	
	Ագրարային առաջին բաժին	Ագրարային երկրորդ բաժին
Շրջակա միջավայրի պաշտպանություն	«Կանաչ զամբյուղի ուղղակի սուբսիդիաներ»	Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներ գյուղատնտեսության և կենդանիների բարեկեցության ոլորտում: Աջակցություն օրգանական գյուղատնտեսությանը. Natura 2000 ծրագիր
Երիտասարդ ֆերմերների աջակցություն	Լրացուցիչ վճարներ	Բիզնեսի ստեղծման և զարգացման սուբսիդիաներ: Ներդրումների ավելի բարձր սուբսիդավորում
Գյուղատնտեսական արտադրության համար	Լրացուցիչ վճարներ	Հեկտարային աջակցություն

¹ Государственная поддержка сельского хозяйства: развитие и развивающиеся страны //ЕЭК, Департамент агропромышленной политики. М-2017. стр. 4

անբարենպաստ տարածքներին աջակցություն		
Փոքր տնտեսություններին աջակցություն	Այլընտրանքային պարզեցում	Բիզնեսի զարգացման սուբսիդիաներ
Կոոպերացման աջակցություն	Իրավական հիմքերի բարելավում	Աջակցություն արտադրողների խմբերի ձևավորման, կոոպերացման, իրացման կազմակերպման համար

ԵՄ-ում գյուղատնտեսությանն աջակցությունը բնութագրվում է ինտեգրված մոտեցմամբ և իրականացվում է շուկայի կարգավորման միջոցառումների հետ միասին (քվոտաներ, շուկայական գների սահմանում և այլն):

Շուկայի կարգավորման հիմնական գործիք են հանդիսանում գնումային ինտերվենցիաները, որոնք փաստացի դարձել են հակաձգնաժամային գործիք համաշխարհային շուկայում գների լուրջ տատանումների ժամանակ: Ինտերվենցիոն գնումներ իրականացվում են, երբ ապրանքի գինն արտաքին շուկաներում որոշակի ժամանակահատվածում ցածր է սահմանված միջամտության (ինտերվենցիոն) գնի մակարդակից:

ԱՄՆ-ում պետական աջակցության կառուցվածքային տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ բյուջեի հիմնական մասն ուղղվում է «կանաչ զամբյուղի» միջոցառումներին:

Եկամտի աջակցման «չկապակցված» (FCA, Farm service Agency, Farm act PL110-246) սուբսիդավորման միջոցառման համաձայն ֆերմերներին տարեկան ուղղակի վճարներ են իրականացվում ցորենի, եգիպտացորենի, սորգոյի, գարու, վարսակի, բամբակի, բրնձի, սոյայի և այլ յուղոտու կուլտուրաների մշակության համար: Վճարների չափը հաշվարկվում է ելնելով նախորդ գյուղատնտեսական տարվա ցանքատարածություններից և յուրաքանչյուր մշակաբույսի համար հաստատված դրույքաչափերից: Սուբսիդիաներ ստանալու համար ընթացիկ տարում պարտադիր արտադրության կազմակերպում չի պահանջվում:

Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորներին աջակցելու նպատակով ՀՀ-ում նույնպես, ուղղակի վճարման միջոցով, իրականացվել և իրականացվում են ծրագրեր, մասնավորապես.

- 2012-2014թթ. «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին» ծրագրի շրջանակներում ցորենի և գարու 1 հա փաստացի մշակած ցանքատարածության համար վճարում էին 35 հազ. դրամ: Ծրագրով հատկացված գումարները (յուրաքանչյուր տարի 550 հազ. դրամ) պետք է օգտագործվեր վարի, կուլտիվացիայի, ցանքի նպատակով: Այն բավականին հաջողեց, սակայն հասցեական կառուցակարգերի բացակայության պատճառով իր հետքերեց նաև մի շարք բացասական հետևանքներ:

- 2022թ. մեկնարկել է «Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման» պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է 1 հա աշնանացան ցորենի մշակության ծախ-

սերի՝ մասնավորապես. սերմի, պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով: Ըստ ծրագրի յուրաքանչյուր շահառուի 1 հա-ի հաշվով կփոխհատուցվի հավաստագրված, ծրագրում ընդգրկված սորտերի էլիտային կամ 1-ին վերարտադրության սերմերով ցանքի դեպքում 120.0 հազ. դրամ, իսկ չհավաստագրված սերմերով ցանքի դեպքում՝ 70.0 հազ. դրամ: Պետք է ընդգծել, որ օժանդակության ծրագրի շահառուներ չեն կարող հանդիսանալ Արմավիրի և Արարատի մարզերում գործող գյուղա-ցիական տնտեսությունները:¹

ԱՄՆ-ի հատուկ-պարենի աջակցության կառուցակարգերում գլխավոր տեղ է զբաղեցնում «Իրացման փոխառություն» համակարգը, որի ներդրման միջոցով շուկայական գների անկման դեպքում ֆերմերին երաշխավորվում է պարենային ապրանքների շուկայում իրացումից ստացվող հասույթի նվազագույն մակարդակ: «Իրացման փոխառություն» ֆերմերը կարող է ստանալ բերքահավաքից հետո Ապրանքավարկային կորպորացիայից (Commodity Credit Corporation) տվյալ արտադրանքի գործող գրավի գնի մակարդակին համապատասխան: Ֆերմերը կարող է հետ գնել գրավադրված ապրանքը նշված ժամանակահատվածի ամենացածր՝ միջազգային, շուկայական կամ գրավի գնով: Եթե նշված ժամանակահատվածում միջազգային կամ շուկայական գինը գրավի գնից ավելի ցածր է, ապա ֆերմերը կարող է հետ գնել իր ապրանքը միջազգային կամ շուկայական գնով, ապահովելով լրացուցիչ եկամուտ, ապրանքի հետ գնման և գրավի գնի տարբերության չափով: Ապրանքը հետ չգնելու դեպքում այն համարվում է պետական սեփականություն:²

Վերջին տարիներին լայն տարածում է ստացել գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրական ծախսերի սուբսիդավորումը: ԱՄՆ-ում ապահովագրության հիմնական պետական ծրագրերն են բերքի բազմառիսկային ապահովագրման ծրագիրը (MPCI) և աղետից ռիսկերի պաշտպանության ծրագիրը (CAT): MPCI ծրագիրն ապահովում է պաշտպանություն բազմաթիվ տարերային աղետներից (երաշտից, ավելորդ խոնավությունից, ջրհեղեղներից, ուժեղ քամիներից և այլն): Ծրագրի շրջանակներում (ընդգրկված է 117 տեսակի մշակաբույս) ապահովագրական դեպք տեղի է ունենում, երբ փաստացի բերքը ցածր է նախորդ մի քանի տարիների միջինից (փոխհատուցում կատարվում է ելնելով նախորդ 4-10 տարիների բերքատվության ցուցանիշներից ելնելով):³

Միննույն ժամանակ Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրությունը ներդրվել է 2019թ. պիլոտային ծրագրի շրջանակներում: 2021թ. Ապահովագրվող մշակաբույսերի ցանկն ընդլայնվել է ընդգրկելով ծիրանը, խաղողը, խնձորը, դեղձը, սալորը, աշնանացան և/կամ զարնանացան հացահատիկը (ցո-

¹ ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022թ. պետական աջակցության ծրագիր, <https://mineconomy.am/page/2209>

² U.S. Government Accountability Office (GAO) official site page <https://www.gao.gov/farm-programs>

³ U.S. Government Accountability Office (GAO) official site page <https://www.gao.gov/action-tracker/agriculture-crop-insurance-2013-19>

րեն, գարի, վարսակ), կարտոֆիլը, ձմերուկը և սեխը: Մինչ 2022թ. Ապահովագրության ենթակա էր երկու ոլիսկ «Կարկտահարություն և հրդեհ» և «Գարնանային ցրտահարություն»: Ընթացիկ տարում ապահովագրվում է ևս մեկ ոլիսկ «երաշտը»: Ծրագրով ապահովագրավճարի չափը պետությունը սուբսիդավորվում է 50-60 տոկոսով: Գյուղատնտեսությունն ապահովագրողների ազգային գործակալության տեղեկատվության համաձայն 2020թ. ապահովագրական ընկերությունների կողմից փաստացի վաճառվել է 1546, իսկ 2021թ.՝ 4279 ապահովագրական պայմանագիր, իսկ կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը 2022թ. 2021թ. համեմատ աճել է 1,3 անգամ¹: Չնայած գրանցած հաջողություններին ծրագրում կան թերացումներ, հատկապես ժամանակին վնասի գնահատման աշխատանքների և փոխհատուցման գործընթացի կազմակերպման առումով:

Կանադայում ֆերմերը տնտեսության ընդհանուր գործունեությունից ստացված համախառն եկամտի նվազման դեպքում հնարավորություն ունի ստանալու սուբսիդիաներ: Միաժամանակ հաշվի չի առնվում, թե որ ապրանքի արտադրությունն է վնասաբեր եղել: Փոխհատուցումը կատարվում է վերջին 5 տարիների ընթացքում ֆերմերների ստացած միջին եկամտի համեմատությամբ: Սուբսիդավորումը ֆերմերը ստանում է ֆինանսական հաշվետվությունը ներկայացնելուց հետո 60-90 օրվա ընթացքում:²

Բելառուսի հանրապետությունում գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններին տրամադրվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի պետական աջակցություն:³ Գյուղացիական տնտեսություններին պետական աջակցության շրջանակներում տրամադրվում է ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների ֆինանսական վարձակալություն (լիզինգ): «Բելառուսի հանրապետության զարգացման բանկ» ԲԲԸ-ի հետ համաձայնեցված՝ մշակվել է վարկավորման աստիճանակարգման մեթոդաբանություն: Գյուղացիական նորաստեղծ տնտեսությունը վարում է եկամուտների և ծախսերի մատյան (կանխավճար 20%-ից սկսած), վարում է հաշվապահական հաշվառում՝ ընդհանուր սահմանված կարգով՝ կանխավճար 10%-ից սկսած՝ ելնելով վարկավորման վարկանիշից և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ երաշխիքի տրամադրումից: Գյուղացիական տնտեսությունները հնարավորություն ունեն առանց կանխավճարի (վարկային վարկանիշը ոչ ցածր «B»-ից) ձեռք բերել տեխնիկա կամ սարքավորում, եթե դրանք վարձակալվում են «Մինսկի ավտոմոբիլային գործարան» ԲԲԸ-ից:

¹ Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի 2020թ. և 2021թ. տարեկան հաշվետվություն www.mineconomy.am

² И.А. Зигаева// МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ ЖИВОТНОВОДСТВА// ВЕСТНИК СЕЛЬСКОГО РАЗВИТИЯ И СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ №2(22), 2019

³ Բելառուսի հանրապետության Գյուղատնտեսության և պարենի նախարարության պաշտոնական էջկայք <https://www.mshp.gov.by/farmer/>

Հայաստանում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի մեկնարկը տրվել է 2017թ., որի շրջանակներում տնտեսավարողներին տրամադրվում է տրակտորներ՝ տարբեր մակնիշների, կոմբայններ, հավաքիչ-մամլիչներ, շարքացաններ, գութաններ, խոտհնձիչներ, կարտոֆիլատնկիչներ, կարտոֆիլաքանդիչներ, կուլտիվատորներ, ֆրեզներ, սրսկիչներ, տրակտորային կցասայլակներ և այլ գյուղատնտեսական տեխնիկա: Ծրագրի համաձայն տարեկան տոկոսադրույքը 2% է, կանխավճարը կազմում է լիզինգի առարկայի ձեռքբերման գնի 20% չափով, լիզինգի մարման ժամկետը տատանվում է 3-10 տարվա միջակայքում՝ ելնելով ձեռքբերված տեխնիկայի տեսակից: Լիզինգի մայր գումարի և տոկոսադրույքի վճարման համար նախատեսված է դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս: Ծրագրի շրջանակում նույն լիզինգատուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 250,0 մլն դրամը:¹

Կորոնավիրուսային համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորված 2020թ. և 2021թ. լիզինգի համար սահմանվել էր 0% տոկոսադրույք: 2020թ. տրամադրվել 573, 2021թ.՝ 538 միավոր գյուղատնտեսական տեխնիկա:²

Իրականացված հարցումները վկայում են, որ գյուղացիական տնտեսություններն ունեն տեղեկատվության հասանելիության և մատչելիության պակաս, հատկապես նշվում է, որ լիզինգն ունի կարճ մարման ժամկետ, իսկ պետության կողմից սուբսիդավորվում է լիզինգի փաստացի տոկոսադրույքի 2 տոկոսային կետը (ծրագրի պայմաններն այլ են), ինչի արդյունքում ծրագրի մասնակիցները դժգոհում են պայմաններից, մի մասն էլ խուսափում են մասնակցել լիզինգի պետական աջակցության ծրագրին:

Ուկրաինայում հատկանշական է ագրոարդյունաբերական համալիրում վարկային տոկոսների նվազեցման ֆինանսական պետական աջակցության ծրագիրը: Աջակցությունը տրամադրվում է մրցույթային ձևով, իսկ փոխհատուցում տրվում է փոքր և միջին գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին 50%-ի չափով վարկային տոկոսները մարելու համար: Ծրագիրը սուբսիդավորում է արտադրական ծախսերը՝ վառելանյութի և քսանյութի, սերմերի, պարարտանյութերի և այլն: Վարկային միջոցները տրամադրվում են հատկապես մինչև 385 հազ. ԱՄՆ դոլար տարեկան հասույթ ունեցող տնտեսավարողներին:³

¹ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության 2020թ. տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, էջ 9, https://mineconomy.am/media/18869/Programs_Arm4.pdf

² ՀՀ Էկոնոմիկայի նախարարության 2021թ. տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, էջ 8, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

³ Государственная поддержка сельского хозяйства: развитые и развивающиеся страны // ЕЭК, Департамент агропромышленной политики. М-2017. стр. 31

Նման ծրագիր իրականացվել է նաև ՀՀ-ում 2015-2017թթ., երբ պետական աջակցություն էր տրամադրվում հողօգտագործողներին, տրամադրելով մատչելի գներով ագրոտական պարարտանյութ և դիզելային վառելանյութ: Այդ ծրագրի շրջանակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողներն ագրոտական պարարտանյութը ձեռք էին բերում 1 կգ 120 դրամ արժեքով (1 պարկը՝ 50կգ քաշով, 6000 դրամ): Մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման ծրագրով, մարզերում ներկայացված պահանջարկին համապատասխան, հողօգտագործողներին տրամադրում էին դիզելային վառելիք 1լ 350 դրամ արժեքով (հանդիսանում էր շուկայականից ցածր գին):¹

Հարցումները ցույց են տվել, որ ծրագրով տրամադրված ագրոտական պարարտանյութի որակը ցածր էր և չէր ապահովում ցանկալի արդյունք:

2022թ. վերսկսել է մատչելի գներով ագրոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում պարարտանյութը տրամադրվում է առավելագույնը 3 հա հողատարածքում մշակություն իրականացնելու համար՝ սուբսիդավորելով է 1 պարկի (50 կգ) հաշվով 9000 դրամ:

Ուկրաինայի «Խաղողի, պտղի և հատապտուղների երիտասարդ այգիների հիմնման և պահպանության, գալյուկաբուծության զարգացման» պետական աջակցության ծրագրի շրջանակներում փոխհատուցվում է խաղողագործությունում, պտղաբուծությունում և գալյուկաբուծությունում իրականացվող ծախսերը, որոնք ուղղված են մինչև պտղատու տարիքի հասնող բույսերի պահպանության ծախսերը, պտղատու այգում կաթիլային ոռոգման անցկացման և համապատասխան ջրային ավազանի շինարարությունը, 500 տոննա տարողությամբ սառնարանային տնտեսությունների կառուցումը:

«Խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտեսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման» ծրագիրն Հայաստանում իրականացվել է 2018-2020թթ. երկու բաղադրիչով՝ վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման և ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով: 2021թ. ծրագիրը վերանվանվել է «ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023թթ.» անվանմամբ: 2018թ. ծրագրին մասնակցել է 2 շահառու և հիմնվել է 20 հա այգի, իսկ 2020թ. շահառուների թիվը ավելացել է կազմելով 53 շահառու՝ հիմնվել է 518,6 հա: 2021թ. 2020թ. համեմատ շահառուների թիվն աճել է 120%-ով (117 շահառու), իսկ հիմնված այգիների տարածքներն ավելացել է 937,4 հա-ով՝ կազմելով 1456 հա:²

¹ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հին կայքէջ՝ www.minagro.am

² ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2021թ. տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, էջ 8, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

Ուկրաինայում անասնաբուծության ճյուղի զարգացման պետական աջակցությունն իրականացվում է ֆիզիկական անձանց խոշոր եղջերավոր անասունների մատղաշի պահվածքի և պահպանման համար՝ հատուկ բյուջետային դոտացիաների միջոցով, մասնավորապես 9.62 ԱՄՆ դոլար/գլուխ յուրաքանչյուր 3 ամսվա համար մինչև 15 ամսական հասակը: Ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ նաև արտադրական կամ ծառայություններ մատուցող կոոպերատիվների անդամները, ինչպես նաև ֆերմերային տնտեսությունները, որոնք իրենց պահած գյուղատնտեսական կենդանիներին տալիս են մորթի սեփական (կամ վարձակալական հիմունքներով) սպանդանոցներ ունեցող կամ վերամշակում իրականացնող (սպանդի գործառնություն) տնտեսություններին՝ 1կգ ԽԵԿ-ի համար 0.1 ԱՄՆ դոլար/կգ, 100-120կգ խոզի համար՝ 0.06 ԱՄՆ դոլար/կգ, 120-150կգ խոզինը՝ 0.04 ԱՄՆ դոլար/կգ:

ՀՀ-ում նմանօրինակ ծրագրեր են, «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման» և «ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ. զարգացման» պետական աջակցության ծրագրերը: «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագիրն իրականացվում է 2 բաղադրիչով՝ ծախսերի մասնակի փոխհատուցման և վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման միջոցով: Հիմնական նպատակն է բարձրացնել կենդանիների մթերատվության ցուցանիշները: 2019թ. ծրագրի շրջանակներում փոխհատուցում է ստացել 2 շահառու՝ 14.5 մլն դրամ: 2020թ. կնքվել է 35 պայմանագիր և շահագործման հանձնվել 13 անասնաշենք, իրականացվել է 20 փոխհատուցում 230.9 մլն դրամի չափով: 2021թ. համեմատ 2020թ. կնքված պայմանագրերի թիվը կրճատվել է (27 պայմանագիր), իսկ փոխհատուցումը ավելացել է կազմելով 44 (347.8 մլն դրամ):¹

«ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ. զարգացման» ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է: 2021թ. 2019թ. համեմատ գլխաքանակն ավելացել է կազմելով 750 գլուխ կենդանի՝ 565,0 մլն. դրամ արժեքով:²

Ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների շրջանում ծրագրին մասնակցելու մեծ հետաքրքրություն կա, սակայն, քանի որ դասընթացները միայն Երևան քաղաքում են կազմակերպվում, հատկապես հեռավոր մարզերից ծրագրին մասնակցելը դառնում է անհնար: Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագրի որոշ շահառուներ դժգոհություններ են հայտնում առ այն, որ զուգահեռ չեն կարողանում մասնակցել «ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ. զարգացման» ծրագրին օրինակ ֆինանսական կառույցի սահմանափակումների պատճառով:


¹ Նույն տեղում, էջ 25 <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

² Նույն տեղում, էջ 14 <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>


Ֆերմերային տնտեսությունների եկամուտների կայունացման նպատակով Ուկրաինայում իրականացվում է արտոնյալ պայմաններով վարկավորում: Կարկը տրամադրվում է սեփական կամ վարձակալած մինչև 500 հա վարելահող ունեցող ֆերմերային տնտեսություններին: Այն մրցութային է, չի նախատեսում տոկոսներ, մարման ժամկետը՝ 5 տարի, անշարժ կամ շարժական գույքի գրավադրմամբ: Կարկի չափը չի կարող գերազանցել մեկ տնտեսության հաշվով 19.2 հազ. ԱՄՆ դոլարը: Կարող է օգտագործվել սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման, շրջանառու միջոցների թարմացման, օրգանական արտադրանքի սերտիֆիկացման, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և վերամշակման, արտադրական և ոչ արտադրական տարածքների կառուցման և վերակառուցման, բազմամյա տնկարկների հիմնման, վարկային կամ սպառողական կոոպերատիվների զարգացման, ոռոգման համակարգերի ներդրման և հողերի մելիորացիայի համար:

ՀՀ-ում նույնպես իրականացվում է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր, որի շրջանակներում վարկերը տրամադրվում են 5% տոկոսադրույքով, իսկ գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3%, վարկի գումարը 3-15 մլն. դրամ:¹

Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված 2020-2021թթ. գյուղատնտեսական ոլորտին տրամադրվում էին 0% տոկոսադրույքով վարկեր, ինչի արդյունքում 2019թ. համեմատ 2020թ. 4 անգամ ավելացել է շահառուների թիվը (գծապատկեր 1 և 2):



Գծ. 1. Տրամադրված վարկերի գումար, մլն դրամ



Գծ. 2. Տրամադրված վարկերի քանակը, հազ

Ռուսաստանի դաշնությունում Գյուղատնտեսության նախարարությունը ֆերմերներին տրամադրում է աջակցության մի քանի ծրագրեր: Տնտեսավարողը, կախված տնտեսության գործունեության ձևից, կարող է հավակնել դրամաշնորհային ծրագրերի: Աջակցության առավել տարածված տեսակները դրամաշնորհներն են սկսնակ ֆերմերների, ընտանեկան տնտեսության համար և «Ագրոստարտափ» ծրագիրը:

¹ Նույն տեղում, էջ 5 <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>

Տնտեսավարողը, որը գրանցվել է որպես գյուղացիական (ֆերմերային) տնտեսություն վերջին 2 տարվա ընթացքում, կարող է դիմել սկսնակ ֆերմերների համար դրամաշնորհներին, որի դեպքում ֆերմերը պետք է գրանցվի որպես գյուղացիական տնտեսություն և վերջին 3 տարին զբաղված չլինի ձեռնարկատիրությամբ, որից հետո ղեկավարի տնտեսությունը ոչ ավել քան 24 ամիս, կազմի գյուղացիական տնտեսության զարգացման բիզնես պլան, որում շեշտվի ստացված միջոցների օգտագործման ուղիները, ունենա բիզնես պլանով նախատեսված ներդրումների 10 %-ը, գյուղատնտեսության ոլորտում փորձ (օրինակ դիպլոմի առկայություն), չունենա պարտավորություններ (հատկապես հարկերի, ապահովագրության և տույժերի առումով), ստեղծի յուրաքանչյուր 1 մլն ռուբլու համար 1 աշխատատեղ 5 տարվա ընթացքում:¹

Դրամաշնորհի առավելագույն չափը 3 մլն ռուբլին է, որը պետք ծառայի գյուղացիական տնտեսության զարգացմանը և միջոցներն ուղղի հողատեսքի առքին, կառուցման կամ վերակառուցման համար նախագծային փաստաթղթերի մշակման, պահեստների կամ արտադրական տարածքների գնման կամ վերանորոգման, ճանապարհների կառուցման, կոմունիկացիաների ստեղծման, գյուղատնտեսական կենդանիների և տեխնիկայի գնման:

Գիտական նորույթ

Ուսումնասիրելով գյուղատնտեսության պետական աջակցության միջազգային փորձը և համադրելով ՀՀ-ում իրականացված և իրականացվող համանման ծրագրերի հետ, մեր կողմից մշակվել է հետևյալ նախագծերը.

- Պարենային զամբյուղի հիմնական ապրանք հանդիսացող հացահատիկի արտադրության խթանման նպատակով ՀՀ-ում իրականացնել «Հացահատիկային տնտեսության զարգացման» պետական աջակցության համալիր ծրագիր, որի շրջանակներում նախատեսել նպատակային սուբսիդավորման մոտեցումներ, սերմնաբուծության զարգացում, հացահատիկային կուլտուրաների գնմամբ, պատվերների տրամաբ, վարկային, առևտրային և այլ բնույթի պայմանագրերի կնքմամբ զբաղվող կառույցի ձևավորում, որը հիմնված կլինի պետության և մասնավոր հատվածի համագործակցության հենքի վրա:

- Գյուղացիական տնտեսությունների եկամուտների կայունացման նպատակով կյանքի կոչել «Երիտասարդ ֆերմերների գործունեության խթանման» պետական օժանդակության ծրագիրը: Ծրագրի շահառու կհանդիսանան առավելապես ՀՀ լեռնային գոտում գործունեություն ծավալող գյուղացիական տնտեսությունները: Հետազոտությունների արդյունքում յուրաքանչյուր տարի կսահմանվի ֆերմերային գործունեության «միջին ծախսերի» ցուցանիշ: Երիտասարդ ֆերմերը մշակված արտադրատնտեսական ցուցանիշների գրանցման ձևաթղթով կներկայացնի իր տնտեսությունում կատարած ծախսերը: Եթե ֆերմերի տնտեսության ծախսերը կգերազանցեն սահմանված «միջին ծախսերից», ապա գյուղացիական տնտեսությունը հնարավորություն կունենա ստանալ սուբսիդիա

¹ Государственная поддержка сельского хозяйства: развитие и развивающиеся страны //ЕЭК, Департамент агропромышленной политики. М-2017. стр. 31

վնասի չափով: Փոխհատուցումը կկատարվի միայն գյուղացիական տնտեսության ներկայացրած ֆինանսական հաշվետվության առկայության դեպքում:

Նշված նախագծերը որոշակի հիմնավորվածության դեպքում, մասնավորապես հացահատիկային կուլտուրաների գնամաք, պատվերների տրամաք, առևտրային և այլ բնույթի պայմանագրերի կնքմամբ զբաղվող կառույցի գործառույթների սահմանումը, գյուղացիական տնտեսությունների արտադրատնտեսական ցուցանիշների գրանցման ձևաթղթի մշակումը կարող են հավակնել գիտական նորույթի:

Եզրակացություն

ՀՀ-ում 2018թ. գործողության մեջ դրվեցին պետական աջակցության մեկ տասնյակից ավել բարեփոխված ծրագրեր, որոնք միտված էին գյուղատնտեսությունում կապիտալ ներդրումների ծավալների ավելացմանը, արտադրական հզորությունների ընդլայնմանը, ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանը, տնտեսավարողների եկամուտների կայունացմանը և այլն: Կորոնավիրուսային համավարակով և պատերազմով պայմանավորված, տնտեսական մարտահրավերներին դիմակայելու նպատակով, ՀՀ կառավարության կողմից 2020-2021թթ. իրականացվեցին նոր միջոցառումներ: Մասնավորապես՝ ծրագրերն ունեին առավել արտոնյալ պայմաններ՝ 0% տոկոսադրույք և տարբեր տնտեսավարողների համար տարբերակված չափաքանակներով համաֆինանսավորման հնարավորություն: Չնայած գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի դրական արդյունքներին, վերահսկողական, մոնիթորինգի և հասցեական կառուցակարգերի բացակայության պատճառով հետազոտության գնահատականները լիարժեք պատկերացում չեն տալիս դրական և բացասական հետևանքների մասին, որոնք իրավմամբ առկա են եղել:

Միջազգային փորձի շուրջ վերլուծությունները վկայում են աշխարհում գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների զարգացմանն ուղղված պետական աջակցության ընդլայնման մասին և տարեցտարի աճելով ուղղվում է երիտասարդ ֆերմերների ներգրավմանն ու եկամուտների կայունացմանը: Հայաստանի Հանրապետությունում կիրառելի ենք համարում պետական աջակցության արդեն իսկ փորձարկված ձևերը՝ ԵՄ-ում գործող գնումային ինտերվենցիաները, ԱՄՆ-ի «Իրացման փոխառության» համակարգը և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Ս., Ծպնեցյան Հ.// Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման անհրաժեշտությունը և սկզբունքները// Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր). – Եր.: «Գիտություն» հրատ., 2008.- 249 էջ
2. Բելառուսի հանրապետության Գյուղատնտեսության և պարենի նախարարության պաշտոնական էջ կայք՝ <https://www.mshp.gov.by/farmer/>
3. Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի 2020թ. և 2021թ. տարեկան հաշվետվություն www.mineconomy.am

4. ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020թ. տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, https://mineconomy.am/media/18869/Programs_Arm4.pdf
5. ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2021թ. տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>
6. ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022թ. պետական աջակցության ծրագիր, <https://mineconomy.am/page/2209>
7. ՀՀ գյուղատնտեսության նախարարության հին կայքէջ՝ www.minagro.am
8. Блауг М., Экономическая мысль в ретроспективе/ М. Блауг – М.: Дело Лтд., 1994
9. Восканян А. Е., Карапетян К. Л. // Необходимость применения механизмов государственного регулирования в аграрной сфере РА// Информационные технологии и управление. 4. Ереван: Энциклопедия – Армения, 2012.-87с.
10. Государственная поддержка сельского хозяйства: развитие и развивающиеся страны//ЕЭК, Департамент агропромышленной политики. М-2017.
11. Зигаева И.А.// Международный опыт государственной поддержки животноводства// Вестник сельского развития и социальной политики №2(22), 2019
12. Смит А., Исследование о природе и причинах богатства народов. Т. 1-2. – М., Л., 1935. Т. 1.- 371 с.
13. Фунтикова А. А., Государственное регулирование сельского хозяйства в условиях переходной экономики, диссертация, 2007г.
14. Фунтикова А. А., Государственное регулирование сельского хозяйства в условиях переходной экономики, диссертация, 2007г.- с. 12
15. U.S. Government Accountability Office (GAO) official site page <https://www.gao.gov/farm-programs>, <https://www.gao.gov/action-tracker/agriculture-crop-insurance-2013-19>

References

1. Avetisyan S., C'pnesyan H.// Gyowghatntesakan varkeri tokosadowyqi sowbsidavorman anhrjsheshtowt'yowny' & skzbowqnery'// Social-ntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm (hanrapetakan gitajhoghovi nyowt'r). – Er.: «Gitowt'yown» hrat., 2008.- 249 e'j
2. Belar'owsi hanrapetowt'yan Gyowghatntesowt'yan & pareni naxararowt'yan pashtonakan e'jkayq՝ <https://www.mshp.gov.by/farmer/>
3. Gyowghatntesowt'yan petakan ajakcowt'yan c'ragreri 2020t'. & 2021t'. tarekan hashvetvowt'yown www.mineconomy.am
4. HH e'konomikayi naxararowt'yan 2020t'. tarekan hashvetvowt'yown, Gyowghatntesowt'yan petakan ajakcowt'yan c'ragrer, https://mineconomy.am/media/18869/Programs_Arm4.pdf

5. ՀՀ է'կոնոմիկայի նախարարո՞ւտ'յան 2021տ'. տարեկան հաշվետվո՞ւտ'յո՞ւն, Գյո՞ւղիա-տնտեսո՞ւտ'յան թեթեա՞կնա՞յն աճի զեղծո՞ւտ'յան շարժը, <https://mineconomy.am/media/18884/hashvet%202021.pdf>
6. ՀՀ-ո՞ւմ աշխարհի զարգացման արդյունքո՞ւտ'յան 2022տ'. թեթեա՞կնա՞յն աճի զեղծո՞ւտ'յան շարժը, <https://mineconomy.am/page/2209>
7. ՀՀ գյո՞ղիատնտեսո՞ւտ'յան նախարարո՞ւտ'յան հին կայքը՝ www.minagro.am
8. Blaug M., Jekonomicheskaja mysl' v retrospektive/ M. Blaug – M.: Delo Ltd., 1994
9. Voskanjan A. E., Karapetjan K. L. // Neobhodimost' primenenija mehanizmov gosudarstvennogo regulirovanija v agrarnoj sfere RA// Informacionnye tehnologii i upravlenie. 4. Erevan: Jenciklopedija – Armenija, 2012.-87s.
10. Gosudarstvennaja podderzhka sel'skogo hozjajstva: razvitye i razvivajushhiesja strany//EJeK, Departament agropromyshlennoj politiki. M-2017.
11. Zigaeva I.A.// Mezhdunarodnyj opyt gosudarstvennoj podderzhki zhivotnovodstva// Vestnik sel'skogo razvitija i social'noj politiki #2(22), 2019
12. Smit A., Issledovanie o prirode i prichinah bogatstva narodov. T. 1-2. – M., L., 1935. T. 1.- 371 s.
13. Funtikova A. A., Gosudarstvennoe regulirovanie sel'skogo hozjajstva v uslovijah perehodnoj jekonomiki, dissertacija, 2007g.
14. Funtikova A. A., Gosudarstvennoe regulirovanie sel'skogo hozjajstva v uslovijah perehodnoj jekonomiki, dissertacija, 2007g.- s. 12
15. U.S. Government Accountability Office (GAO) official site page <https://www.gao.gov/farm-programs>, <https://www.gao.gov/action-tracker/agriculture-crop-insurance-2013-19>

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ, ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐԸ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Աշոտ Երջանիկի Ոսկանյան
Մարգո Վարդանի Ղազարյան**

Համառոտագիր: Թեմայի արդիականությունը: ՀՀ ագրարային ռեսուրսների օգտագործման, գյուղական բնակավայրերում առկա սոցիալական և տնտեսական վիճակը, աղքատության բարձր մակարդակը, գյուղացիական տնտեսությունների անկայուն եկամուտները, գյուղաբնակների ցածր կենսամակարդակը և իրականացվող պետական աջակցության իրավիճակային ծրագրերն ուղղակիորեն դրդում են բարեփոխելու և կատարելագործելու ագրարային քաղաքականությունը:

Հոդվածի նպատակն է վերհանել գյուղատնտեսության պետական աջակցության միջազգային փորձը և առանձնացնել այն ծրագրային մոտեցումները, որոնք կիրառելի կլինեն ՀՀ-ում և կապահովեն ցանկալի հետազոտություն: Նպատակի իրագործման համար խնդիր է դրվել ուսումնասիրել մի շարք զար-

գացած և զարգացող երկրների պետական աջակցության քաղաքականությունը և առանձնացնել հանրապետությունում առավել կիրառելի ծրագրային մոտեցումները, իրականացնել ՀՀ և այլ երկրների պետական աջակցության որոշ ծրագրերի համեմատական վերլուծություն, քաղված դասերի հիման վրա առաջարկել ՀՀ-ում պետական օժանդակության ծրագրերի դրույթներ:

Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է գործնական ուսումնասիրությունների վրա, որոնց հիմքում ընկած է գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված «Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի» տարեկան հաշվետվությունները:

Միջազգային փորձի շուրջ վերլուծությունները վկայում են աշխարհում գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների զարգացմանն ուղղված պետական աջակցության ընդլայնման մասին և տարեցտարի աճելով ուղղվում է երիտասարդ ֆերմերների ներգրավմանն ու եկամուտների կայունացմանը: Հայաստանի Հանրապետությունում կիրառելի ենք համարում պետական աջակցության արդեն իսկ փորձարկված ձևերը՝ ԵՄ-ում գործող գնումային ինտերվենցիաները, ԱՄՆ-ի «Իրացման փոխառության» համակարգը և այլն:

Հոդվածում ներկայացված նախագծերը որոշակի հիմնավորվածության դեպքում, մասնավորապես հացահատիկային կուլտուրաների գնամբ, պատվերների տրամամբ, առևտրային և այլ բնույթի պայմանագրերի կնքմամբ զբաղվող կառույցի գործառույթների սահմանումը, գյուղացիական տնտեսությունների արտադրատնտեսական ցուցանիշների ձևաթղթի մշակումը կարող են հավակնել գիտական նորույթի, իսկ ստացված արդյունքները կնպաստեն ագրարային վարվող պարզ քաղաքականությունից անցնել բազմաքայլ քաղաքականության:

Բանալի բառեր. գյուղատնտեսություն, գյուղացիական տնտեսություններ, միջազգային փորձ, պետական աջակցություն, օժանդակության ծրագրեր, փոխհատուցում, սուբսիդիա:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА, ИЗВЛЕЧЕННЫЕ УРОКИ И ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ В РА

Ашот Ерджаникович Восканян
Марго Вардановна Казарян

Аннотация: Актуальность темы - Использование аграрных ресурсов, социальное и экономическое положение сельской местности, высокий уровень бедности, неустойчивые доходы крестьянских хозяйств, низкий уровень жизни сельских жителей и реализуемые ситуационные программы государственной поддержки в РА подталкивают к реформированию и совершенствованию аграрной политики.

Цель статьи – выявить международный опыт государственной поддержки сельского хозяйства и выделить те программные подходы, которые будут приме-

нимы в РА и обеспечивают желаемое воздействие. Для достижения цели поставлена задача изучить политику государственной поддержки ряда развитых и развивающихся стран и выделить наиболее применимые в республике программные подходы; провести сравнительный анализ некоторых программ государственной поддержки РА и других стран; на основе извлеченных уроков предложить положения программ государственной поддержки в РА.

Методология исследования основана на практических исследованиях, в основе которых лежат опросы, проведенные в крестьянских хозяйствах, годовые отчеты «Программ государственной поддержки сельского хозяйства», представленные Министерством экономики РА.

Анализ международного опыта свидетельствует о расширении государственной поддержки, направленной на развитие крестьянских хозяйств в мире, и с каждым годом направляется на привлечение молодых фермеров и стабилизацию их доходов. В Республике Армения применимы уже проверенные формы государственной поддержки: действующие в ЕС закупочные интервенции, система «заимствования» США и др.

Представленные в статье проекты при определенной обоснованности, в частности, определение функций структуры, занимающейся закупкой зерновых культур, выдачей заказов, заключением договоров коммерческого и иного характера, разработка формы производственно-экономических показателей крестьянских хозяйств могут претендовать на научную новизну, а полученные результаты будут способствовать переходу от простой аграрной политики к многоступенчатой политике.

Ключевые слова: сельское хозяйство, крестьянские хозяйства, международный опыт, государственная поддержка, программы поддержки, компенсация, субсидия.

INTERNATIONAL BEST PRACTICES OF STATE SUPPORT FOR AGRICULTURE, LESSONS LEARNED AND POSSIBILITIES OF APPLICATION IN THE RA

Ashot Erjanik Voskanyan
Margo Vardan Ghazaryan

Abstract:

Relevance of the topic. The use of agrarian resources of RA, the social and economic situation in rural areas, the high level of poverty, the unstable incomes of rural households, the low living standards of rural residents and the implemented state support programs directly motivate to reform and improve the agrarian policy.

The purpose of the article is to identify the international best practices of the state support for agriculture and to highlight the program approaches that will be applicable in RA and will ensure the desired impact. In order to achieve the goal, the objective

was to study the state support policy of a number of developed and developing countries and to identify the most applicable program approaches in the republic, to carry out a comparative analysis of some state support programs of RA and other countries, to propose provisions of state support programs in RA based on the lessons learned.

The research methodology is based on practical studies, which are based on surveys conducted in the agricultural sector, annual reports of the "State Support Programs for Agriculture" presented by the Ministry of Economy of the RA.

The analysis of international experience testifies the expansion of state support aimed at the development of peasant (farmer) economies in the world, and is directed to the involvement of young farmers and the stabilization of incomes by increasing year by year. We consider the already tested forms of state support to be applicable in the RA: purchase interventions operating in the EU, the USA's "Realization Loan" system, etc.

If the projects presented in the article are justified, in particular, the definition of the functions of the structure dealing with the purchase of grain crops, placing orders, concluding commercial and other contracts, the development of the form of production and economic indicators of agricultural farms can claim to be a scientific innovation, and the results obtained will facilitate the transition from a simple agrarian policy to a multi-stage policy.

Keywords: agriculture, farms, international experience, government support, assistance programs, compensation, subsidy.

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Լիանա Սամվելի Ազատյան Հովհաննես Սիմոնի Ասատրյան

Հոդվածը ստացվել է՝ 31.08.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Հայաստանի Հանրապետության, որի տարածությունը կազմում է 29,743 կմ², 47 %-ը կազմում են բարձրավանդակները, ինչի արդյունքում երկիրը աչքի է ընկնում վառ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, որն էլ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության միջոցով պարենային ապահովության բարձր մակարդակի ապահովման հնարավորությունների վրա:

Գյուղատնտեսական արտադրությունը և, առաջին հերթին, բուսաբուծությունը, մեծապես կախված են կլիմայական գործոններից: Եղանակային անբարենպաստ տարիներին գյուղացիական տնտեսությունները զգալի վնասներ են կրում: Հետևաբար, գյուղացիական տնտեսությունների գործունեության վրա բնակլիմայական պայմանների ազդեցության մեղմացումը, մասնավորապես, նրանց անբարենպաստ իրադարձությունների հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման համար միջոցների տրամադրումը կարևոր գործոն է գյուղատնտեսության կայուն զարգացման գործում: Ապահովագրական համակարգի զարգացումը գյուղատնտեսության մեջ դարձել է անհրաժեշտություն: Սրանով է պայմանավորված **թեմայի ընտրության արդիականությունը:**

Հոդվածի հիմնական **նպատակն** է ուսումնասիրել ՀՀ գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներկա վիճակը և արտերկրյա փորձի հիման վրա ներկայացնել դրա կատարելագործման հնարավոր ուղղությունները: Վերոնշյալի համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- ուսումնասիրել գյուղատնտեսական ապահովագրության արտասահմանյան մոտեցումները,
- վերլուծել ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության համակարգը,
- ստացված արդյունքների համադրմամբ մշակել առաջարկություններ:

Գրականության վերլուծություն:

Մասնագիտական գրականության մեջ գյուղատնտեսության ապահովագրության հարցերին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ: Դրանցում նշվում է, որ ապահովագրության իրականացման մեխանիզմը տարբեր է, յուրաքանչյուր երկիր ունի իր համակարգը, որտեղ պետության դերն ու գործառնությունները որոշվում են առաջադրված խնդիրներով, գյուղատնտեսական արտադրության ռիսկայնության աստիճանով, տնտեսության մեջ պետական միջամտության մասշտաբով, պետական հիմնարկների արդյունավետությամբ և այլն¹:

¹ Ю. А. Сплетухов - Сельскохозяйственное страхование в России и за рубежом: сравнительная характеристика, Финансовый журнал / Financial Journal №1 2018, стр 88

Գյուղատնտեսական ապահովագրության ամենամեծ շուկան ձևավորվել է Հյուսիսային Ամերիկայում. այն կազմում է բոլոր ապահովագրավճարների ավելի քան 50%-ը, ապահովագրավճարների մոտ ¼-ը հավաքագրվում է ասիական երկրներում, 20%-ից պակասը՝ եվրոպական երկրներում¹:

Ապահովագրական ընկերությունները իրենց գործունեությամբ պայմանավորված միայնացից տարբերվում են ապահովագրական ապրանքների տեսակով, մասնավոր ապահովագրողների դերով և պետության մասնակցության մեթոդներով: Ապահովագրության ամենատարածված ձևը կամավոր ապահովագրությունն է:

Կան երկրներ, որտեղ գյուղատնտեսական ապահովագրությունը պարտադիր է, այդպիսիք են Իսրայելը, Հունաստանը, Ղազախստանը, Բելառուսը, Մարոկկոն:

ԱՄՆ-ում, Իսպանիայում, Իտալիայում, Չինաստանում պետական մասնակցությամբ ապահովագրական ծրագրեր իրականացնելիս հաշվի է առնվում գյուղմթերք արտադրողների մոտ ապահովագրական պայմանագրերի առկայությունը, որը նպաստում է ապահովագրական ծրագրերում գյուղացիական տնտեսությունների ակտիվ ներգրավմանը:

Գոյություն ունեն գյուղատնտեսության ապահովագրության երեք տեսակներ՝

1) պետության գերիշխող դերով. Նման համակարգեր ունեցող երկրներն են, օրինակ, Կանադան, Հունաստանը, Հնդկաստանը, Իրանը, Ֆիլիպինները,

2) պետական և մասնավոր ապահովագրողների մասնակցությամբ: Նման համակարգեր օգտագործվում են ԱՄՆ-ում, Իսպանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Մեքսիկայում և այլն,

3) մասնավոր ապահովագրողների գերակշռությամբ. Դրանք կան, օրինակ, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Շվեդիայում, Արգենտինայում, Ավստրալիայում:²

Գյուղատնտեսական ապահովագրական համակարգում յուրահատուկ մոտեցում ունի Ֆրանսիա: Այստեղ գոյություն ունի բնական աղետի պետական ֆոնդ՝ «Գյուղատնտեսական աղետների ազգային երաշխիքային» հիմնադրամ: Հիմնադրամի առաքելությունն է՝

- մասնակցել կենդանիների կամ բույսերի հիվանդության բռնկման կամ բնապահպանական որևէ միջադեպի հետևանքով տնտեսական կորուստների ֆինանսական փոխհատուցմանը՝ վարչական մարմնի կողմից հաստատված փոխադարձ ֆինանսավորման միջոցների հաշվին,
- գյուղացիական տնտեսություններին փոխհատուցում տրամադրել՝ գյուղատնտեսական աղետներից առաջացած նյութական վնասների համար: Այս աղետները ներառում են բացառիկ ծանրության՝ չապահովագրվող վնասներ,

¹ Назарова А. А. Совершенствование сельскохозяйственного страхования с государственной поддержкой в России: дисс. на соискание ученой степени к. э. н. М.: МГУ, 2015, 184 с

² Mahul O., Stutley C. J. Government Support to Agricultural Insurance: Challenges and Opportunities for Developing Countries. Washington DC: the World Bank, 2010, 219 p

որոնք առաջանում են եղանակային, կլիմայական անոմալ երևույթների պատճառով, որոնք չեն կարող կանխվել կամ լուծվել սովորական միջոցներով:

- Ապահովագրելի վնասները ներառում են բերքին, ցանքատարածություններին, անասուններին պատճառված վնասները, բացառությամբ գյուղատնտեսական աշխատանքներում օգտագործվող շենքերի:

Այս ֆոնդի հաշվապահական հաշվառումը, ֆինանսական վերահսկողությունը պետության անունից իրականացնում է CCR վերապահովագրական կազմակերպությունը¹:

Ինչպես վկայում է արտերկրյա փորձը՝ լայն կիրառում է գտել եղանակային ինդեքսի վրա հիմնված գյուղատնտեսական ապահովագրությունը: Այն թույլ է տալիս ապահովադիրին ուղղակի մուտք գործել տեղեկատվության բազա և ապահովում է գործընթացի թափանցիկությունը: Սակայն երբեմն ապահովադիրները թաքցնում են տեղեկատվությունը իրենց ռիսկերի ազդեցության մասին, որը ապահովագրողին հասանելի չէ: Այս դեպքում ապահովագրողը կարող է սխալ գնահատի ապահովագրածի ռիսկը: Ինդեքսային ապահովագրությունը պահանջում է, որ սահմանված տարածքում բոլոր ապահովագրված ֆերմերները ունենան ապահովագրության վճարման նույն պայմանները՝ անկախ իրենց հատուկ ռիսկի ենթարկվածությունից:

Ապահովագրական ընկերությունները պետք է հստակ պատկերացում ունենան ինդեքսային պայմանագրերի, օբյեկտիվ տվյալների անհարժեշտության և ապահովագրված ինդեքսների ժամանակագրական բազայի վերաբերյալ: Տվյալների հավաքագրումը, պատրաստումը, վերլուծությունը և ինդեքսային ապրանքների մշակումը զգալի ժամանակ են պահանջում: Անգամ ԱՄՆ-ում զարգացած ապահովագրական շուկայի միջոցով պահանջվեց մոտավորապես 2 տարի ժամանակ՝ ըստ ինդեքսային բերքատվության աղետաբեր ապրանքների մշակման համար²:

Եղանակային ինդեքս ապահովագրությունը հեռանկարային ուղղություն է, որը առավել մեծ տարածում է գտնում կրթվածության առավել բարձր մակարդակ ունեցող ֆերմերների շրջանում: Խիստ կարևոր է, որ ապահովագրական այս մոդելի կիրառումը զուգորդվի եղանակային պայմանների կանխատեսման ժամանակակից և կայացած համակարգերով, որը անընդհատ և շարունակական տեղեկատվություն կտրամադրի ֆերմերներին եղանակային փոփոխությունների մասին³:

¹ Ազատյան Լ., Ասատրյան Հ. - Ֆրանսիայի տնտեսական վերելքի ուղին. Ագրարային ոլորտի մոդելը: Տնտեսական նորոգություններ. գործարկման ուղիները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, 2021, 2 (2), էջ 169, <https://economics.sci.am/wp-content/uploads/2021/12/Gitazhoghov-2021-2-tparan-1.pdf>

² Մանուչարյան Մ. – Ինդեքսային ապահովագրությունը որպես գյուղատնտեսության ապահովագրության այլընտրանքային լուծում: «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, 2014թ., N7-8, 152էջ, էջ 121, www.fineco.am

³ Ali, E., Egbendewe, A. Y. G., Abdoulaye, T., & Sarpong, D. B. (2020). Willingness to pay for weather index-based insurance in semi-subsistence agriculture: evidence from northern Togo.

Գյուղատնտեսության ապահովագրության զարգացումը ՀՀ-ում հանդիպում է բազմաթիվ խնդիրների (ֆերմերների ցածր վճարունակությունը, անվստահությունը և այլն): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման խնդիրներ առկա են այլ երկրներում նույնպես:

Նեպալում ԽԵԱ ապահովագրության վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիմնական խոչընդոտը կայանում է ոչ բավարար տեղեկացվածության մեջ: Ֆերմերներից շատերը այն համարելով կարևոր և արդյունավետ գործիք՝ ԽԵԱ կորուստների կառավարման գործում, միաժամանակ նշել են, որ բավարար տեղեկացված չեն ապահովագրության այս տեսակի օգուտներից, տարբերակներից ու ընձեռած հնարավորություններից: ԽԵԱ ապահովագրության վրա զգալի բացասական ազդեցություն ունեն ֆերմերային տնտեսության չափը և տարածաշրջանային պատկանելիությունը¹:

Ուսումնասիրությունները նաև փաստում են, որ կոոպերացիաներին անդամակցումը կամ կոլեկտիվ տնտեսության անդամ լինելը զգալի դրական ազդեցություն է ունենում գյուղատնտեսության ապահովագրություն իրականացնելու վրա: Զարգացող երկրներում, որտեղ ապահովագրական շուկան դեռևս թերզարգացած է, ֆերմերների խմբերը և կոոպերատիվները, ըստ էության հանդիսանում են միջնորդ օղակներ գյուղատնտեսական ապահովագրության ներդրման գործում:²

Մեթոդաբանություն: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են գիտական հետազոտության համեմատական, նկարագրական, տնտեսավիճակագրական և համադրման մեթոդները: Հոդվածի համար անհրաժեշտ թվական տվյալները ձեռք են բերվել ՀՀ Վիճակագրական Կոմիտեի պաշտոնական վիճակագրական տվյալներից:

Վերլուծություն: Լինելով ամենառիսկայիններից հույժ կարևոր է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման անհրաժեշտությունը, լուծելու գործադրկության սոցիալական խնդիրները, որը կնպաստի և ներքին և արտաքին միգրացիայի հետ կապված խնդիրների լուծմանը: Ուսումնասիրությունները վկայում են, որ բնական և տարերային աղետ-

Climate Policy, 1–14. doi:10.1080/14693062.2020.1745742

¹ Subedi, S., & Kattel, R. R. (2021). Farmers' perception and determinants of dairy cattle insurance in Nepal. *Cogent Food & Agriculture*, 7(1), 1911422. doi:10.1080/23311932.2021.1911422

² Devkota, D., Ghimire, Y. N., Timsina, K. P., Subedi, S., & Poudel, H. K. (2021). Determinants of livestock insurance adoption in Nepal. *Cogent Food & Agriculture*, 7(1), 1952012. doi:10.1080/23311932.2021.1952012; Kumar, D. S., Barah, B. C., Ranganathan, C. R., Venkatram, R., Gurunathan, S., & Thirumoorthy, S. (2011). An analysis of farmer's perception and awareness towards crop insurance as a tool for risk management in Tamil Nadu. *Agricultural Economics Research Review*, 24(1), 37–46. <https://ageconsearch.umn.edu/record/109413>; Kumar, D. S., Barah, B. C., Ranganathan, C. R., Venkatram, R., Gurunathan, S., & Thirumoorthy, S. (2011). An analysis of farmer's perception and awareness towards crop insurance as a tool for risk management in Tamil Nadu. *Agricultural Economics Research Review*, 24(1), 37–46. <https://ageconsearch.umn.edu/record/109413>:

ների հետևանքով գյուղատնտեսությանը միջին հաշվով պատճառվում է տարեկան 20,0 մլրդ. դրամի վնաս¹:

Հայաստանում օրենսդրության անկատարության և գյուղացիների ցածր վճարունակության պայմաններում, ապահովագրողների և ապահովադիրների միջև կա փոխադարձ անվստահություն:

Աղյուսակ 1

ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեությունը 2014-2020թթ.²

	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Արտոնագրված ապահովագրական ընկերությունների քանակը	7	7	7	7	7	7	7
Արտոնագրված ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալը	14107.6	15063.6	15063.6	15063.6	16043.6	16527.1	16527.1
<i>Գործող պայմանագրերի քանակը, միավոր</i>	<i>594 893</i>	<i>591 859</i>	<i>633 727</i>	<i>796 123</i>	<i>826 916</i>	<i>976 156</i>	<i>844 283</i>
Ապահովագրական մուտքերը, մլն. դրամ	30107.2	31424.5	33141.2	35262.8	41380.3	49276.7	44687.0
Հատույցների գումարը, մլն. դրամ	22149.7	13564.5	14222.4	18002.7	22818.9	25071.6	25358.4
Ապահովագրական պահուստներ, մլն. Դրամ	15605.0	17278.4	19185.9	19896.0	21175.1	27248.8	25284.4
Պարտավորությունների ծավալը բոլոր գործող պայմաններով, մլն. դրամ	9536083.6	9451439.3	11044823.5	28679886.3	33403060.8	38383165.4	35446877.4


Բերված աղյուսակի տվյալները վկայում են, որ չնայած ապահովագրական ընկերությունների քանակը չի փոխվել, 2014-ից 2019թթ. մի շարք ցուցանիշների գծով արձանագրվել է աճ, իսկ 2020թ-ին արձանագրվել է գործող պայմանագրերի քանակի և ապահովագրական մուտքերը ցուցանիշների նվազում:

ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության համակարգը ներդրվել և իրականացվում է ՀՀ Կառավարության (ի դեմս Էկոնոմիկայի նախարարության) և Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալության կողմից: Գործակալությունը՝ հասարակական կազմակերպություն է, որի գործունեության նպատակը՝ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրական համակարգի կոորդինացումն է՝ Գործակալության անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությանը նպաստելու և կարգավորելու՝ անդամ ապահովագրական ընկերությունների համար մասնագիտական վարքագծի կանոններ մշակելու միջոցով³:

¹ Մ.Գ. Մանուչարյան – Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019թ., էջ 88

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Ֆինանսներ: 2017թ. էջ 406, 2020թ. էջ 469

³ <https://aina.am/our-stores/>



Գծապատկեր 1. Ապահովագրավճարների և հատուցումների փոփոխությունը 2014 - 2020թթ.

ՀՀ-ում 2019 թվականից մեկնարկել է Գյուղատնտեսության ապահովագրության Պիլոտային Ծրագիրը, ըստ որի ապահովագրվել են մշակաբույսերի 5 տեսակի՝ ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի այգիները ու հացահատիկային մշակաբույսերի դաշտերը և ֆինանսավորումը իրականացվել է KFW բանկի դրամաշնորհով: 2021 թվականին նշված կուլտուրաներին ավելացավ նաև ձմերուկը, սեխը, սալորը և կարտոֆիլը: Սա հնարավորություն ստեղծեց Հայաստանի բոլոր համայնքների համար՝ ապահովագրելու իրենց այգիները և ցանքատարածությունները: 2022 թվականին այդ ցանկում ներառվելու է նաև բալի այգիները:

Մեր երկրում 2022 թվականի դրությամբ բերքը ապահովագրվում է միայն կարկուտից, հրդեհից և գարնանային ցրտահարություններից:

2021թ-ին 2020թ-ի համեմատ գրանցվել է ապահովագրական ցուցանիշների աճ: Այսպես 2020թ. ապահովագրված ֆերմերների քանակը կազմել է 1.560, իսկ հավաքագրված ապահովագրավճարները՝ 131,518,158, 2021թ.-ին համապատասխանաբար՝ 4,279 և 474,581,860: Այսինքն՝ ֆերմերների քանակը աճել է 3, իսկ հավաքված ապահովագրավճարներինը՝ 4 անգամ, ինչը վկայում է տվյալ ծրագրի նկատմամբ ֆերմերների հետաքրքրության աճի մասին:

2021թ. ապահովագրված ֆերմերների քանակը և ապահովագրավճարներն ըստ մշակաբույսերի¹

Մշակաբույսերը	Ապահովագրված ֆերմերների քանակը		Ապահովագրավճարները	
	2020	2021	2020	2021
Ծիրան	331	720	56,481,570	290,142,683
Խաղող	590	453	51,561,188	56,315,766
Դեղձ	46	90	2,999,888	9,488,500
Խնձոր	82	186	5,119,464	15,219,981
Հացահատիկ	511	2,557	15,356,048	47,275,725
Սալոր	-	94	-	5,148,585
Կարտոֆիլ	-	170	-	51,295,004
Զմերուկ և սեխ	-	9	-	1,695,616
Ընդամենը	1,560	4,279	131,518,158	474,581,860

Աղյուսակի տվյալներից երևում է, որ բացառությամբ խաղողի, մնացած մշակաբույսերի ցուցանիշները աճել են, իսկ խաղողի ցուցանիշների փոփոխությունը վերագրվում է 2020 թ հատուցումների արդյունավետությանը:

2021 թվականի տվյալներով ապահովագրական ընկերությունների կողմից կատարվել է գումարի ավելի շատ հավաքագրում, քան հատուցում, այսինքն՝ տարին այդ առումով եղել է բարենպաստ: Հատուցում ստացած ֆերմերների քանակը 2020թ եղել է 294, գումարը 145,068,626 ՀՀ դրամ, միջին հատուցման չափը՝ 493,430,70 ՀՀ դրամ: 2021թ. տվյալները եղել են համապատասխանաբար՝ 1446 ֆերմեր, 305,026,507 ՀՀ դրամ և հատուցման չափը՝ 210,945,03 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մայիսին իրականացվել է տվյալ տարվա գյուղատնտեսական ապահովագրական պայմանագրերի կնքման ժամկետը և այն իրականացվել է 1546, 2500 հա հողատարածքների համար: Ապահովագրավճարները կազմել է 130,5 մլն դրամ, իսկ սուբսիդավորված գումարը՝ 69,0 մլն. դրամ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2020թ. ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսն՝ հա, հատուցումների քանակը և գումարը, ըստ մարզերի:

¹ Լ. Քոչարյան - **ԳՅՈՒՂԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ: 2021-Ի ԱՄՓՈՓՈՒՄ**
<https://insurebusiness.am/%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%B8%D5%BE%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D6%89-2021-%D5%AB-%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D6%82%D5%B4/>

**Կատարված հատուցումները և ապահովագրված այգետարածքները,
ըստ մարզերի**

Մարզերի անվանումը	Տարածությունների մակերեսը, հա.	Հատուցումների քանակը	Հատուցումների գումարը, մլն դրամ
Արարատի	219,8	50	24,0
Արմավիր	824,4	70	47,3
Արագածոտն	179,6	20	22,3
Կոտայք	59,1	14	12,7
Տավուշ	119,1	2	0,4
Գեղարքունիք	36,2	4	2,1
Շիրակ	496,2	71	18,3
Լոռի	479,1	65	23,0
Վայոց ձոր	10,3	1	0,6
Սյունիք	110,6	3	0,7

Գիտական նորույթ: Արտերկրյա փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել է այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործմանը:

Եզրակացություն:

ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության համակարգը ներդրվել և իրականացվում է ՀՀ Կառավարության (ի դեմս Էկոնոմիկայի նախարարության) և Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալության կողմից: 2019 թվականի սեպտեմբերից Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագիր: «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի» իրականացման հիմնական նպատակը գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումն է: Ծրագրի շրջանակներում ապահովագրավճարի չափը սուբսիդավորվում է 50-60 %-ով: Ներդրված համակարգը ներառում է ապահովագրական ծածկույթի երկու ուղղություն. ծախսերի ապահովագրություն կամ եկամուտների ապահովագրություն:

Հոդվածում կարևորել ենք գյուղատնտեսական ապահովագրության շարունակական պետական աջակցությունը, որի նպատակը պետք է լինի բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման հիման վրա գյուղատնտեսական ապահովագրության հասանելիությունը և վնասների բավարար փոխհատուցման ապահովումը:

Կարևորվում է նաև կորուստների ավելի օբյեկտիվ և ամբողջական գնահատումը և գյուղատնտեսական մթերք արտադրողներին խելամիտ փոխհատուցման իրականացումը: Ընդլայնել ՀՀ-ում գյուղապահովագրության պոր-

տֆելը՝ ներառելով ֆերմերների եկամուտների կորուստների փոխհատուցումը: Մա վերաբերվում է վնասների այն տեսակին, որոնք առաջանում են, երբ գյուղ-մթերքի գները կտրուկ ընկնում են և ֆերմերների եկամուտների կորուստները խիստ մեծ են լինում: Իրականացնել բույսերի հիվանդությունների և վնասատու-ների բռնկումներից պատճառված կորուստների փոխհատուցում: Հիմնել բնական աղետի ֆոնդ, որը արտակարգ իրավիճակներում կօգտագործվի տարերային աղետների հասցրած կոնկրետ, լրկալ կորուստները փոխհատուցելու նպատակով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ապահովադիրների հետա-քրքրությունը մեծացնելու համար անհրաժեշտ է, որ ապահովագրողները տարբեր միջոցներ ձեռնարկեն նրանց խթանելու և դեպի ապահովագրություն ներգրա-վելու համար:

Արտերկրյա փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ երկրնե-րում լայն կիրառում է գտել եղանակային ինդեքսի վրա հիմնված գյուղատնտե-սական ապահովագրությունը, որը թույլ է տալիս ապահովադիրին մուտք գործել տեղեկատվության բազա և ապահովել գործընթացի թափանցիկությունը, բացա-կայում է կորուստների գնահատման հետ կապված խնդիրները և ֆերմերների մոտ բարձրանում է վստահությունը ապահովագրողների նկատմամբ:

Եղանակային ինդեքսի ապահովագրությունը հեռանկարային և արդյու-նավետ ուղղություն է, որը հաջողությամբ կարող է կիրառվել նաև Հայաստա-նում, քանի որ մեր երկրում ֆերմերների տրամադրվածությունը, եղանակային պայմանները և եղած այլ նախադրյալներ առավել հարմար են ապահովագ-րության այս տեսակի կիրառման համար: Այն աշխատատար և ծախսատար պրոցես է, որը պահանջում է պետական անխափան միջամտություն՝ համա-կարգի ներդրման և կայացման ողջ ընթացքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ազատյան Լ., Ասատրյան Հ., Ֆրանսիայի տնտեսական վերելքի ուղին. Ագրա-րային ոլորտի մոդելը, Տնտեսական նորոգություններ. գործարկման ուղիները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, 2021, 2 (2), էջ 169, <https://economics.sci.am/wp-content/uploads/2021/12/Gitazhoghov-2021-2-tparan-1.pdf>
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Ֆինանսներ: 2017թ. էջ 406, 2021թ. էջ 469, <https://armstat.am/file/doc/99504418.pdf> , <https://armstat.am/file/doc/99526903.pdf>
3. Մանուչարյան Մ., Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիր-ները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակ-չություն, Երևան, 2019թ. , էջ 88
4. Մանուչարյան Մ., Ինդեքսային ապահովագրությունը որպես գյուղատնտեսու-թյան ապահովագրության այլընտրանքային լուծում: «Ֆինանսներ և էկոնո-միկա» հանդես, 2014թ., N7-8, 152 էջ, էջ 121, www.fineco.am
5. Քոչարյան Լ., Գյուղապահովագրություն: 2021-ի ամփոփում, <https://insurebusiness.am/%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%>

[D5%BA%D5%A1%D5%B0%D5%B8%D5%BE%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D6%89-2021-%D5%AB-%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D6%82%D5%B4/](#)

6. Назарова А. А., Совершенствование сельскохозяйственного страхования с государственной поддержкой в России: дисс. на соискание ученой степени к. э. н. М.: МГУ, 2015, стр. 184
7. Сплетухов Ю. А., Сельскохозяйственное страхование в России и за рубежом: сравнительная характеристика, Финансовый журнал / Financial Journal №1 2018, 88
8. Ali E., Egbendewe A. Y. G., Abdoulaye T. and Sarpong D. B. (2020). Willingness to pay for weather index-based insurance in semi-subsistence agriculture: evidence from northern Togo. *Climate Policy*, p. 1–14. doi:10.1080/14693062.2020.1745742
9. Devkota, D., Ghimire, Y. N., Timsina, K. P., Subedi, S., & Poudel, H. K. (2021). Determinants of livestock insurance adoption in Nepal. *Cogent Food & Agriculture*, 7(1), 1952012. doi:10.1080/23311932.2021.1952012
10. Ghimire, Y. N., Timsina, K. P., Kandel, G., Thapamagar, D. B., Gautam, S., & Sharma, B. (2016). Agricultural Insurance issues and factors affecting adoption: A case of banana growers in Nepal. *Journal of Nepalese Horticulture*, 11(1), p. 74–82, <https://www.academia.edu/34199352>
11. Kumar, D. S., Barah, B. C., Ranganathan, C. R., Venkatram, R., Gurunathan, S., & Thirumoorthy, S. (2011). An analysis of farmer's perception and awareness towards crop insurance as a tool for risk management in Tamil Nadu. *Agricultural Economics Research Review*, 24(1), 37–46. <https://ageconsearch.umn.edu/record/109413>
12. Mahul O., Stutley C. J. *Government Support to Agricultural Insurance: Challenges and Opportunities for Developing Countries*. Washington DC: the World Bank, 2010, p. 219
13. Subedi, S., & Kattel, R. R. (2021). Farmers' perception and determinants of dairy cattle insurance in Nepal. *Cogent Food & Agriculture*, 7(1), doi:10.1080/23311932.2021.1911422
14. <https://aina.am/>
15. <https://armstat.am/am/>

References

1. Azatyan L., Asatryan H., Fransiayi tntesakan verelqi owghin. Agrarayan olorti modely', Tntesakan norogowt'yownner. gorc'arkman owghinery' Hayastanowm, gitakan hodvac'neri jhoghovac'ow, 2021, 2 (2), e'j 169, <https://economics.sci.am/wp-content/uploads/2021/12/Gitazhoghov-2021-2-tparan-1.pdf>
2. Hayastani vitwakagrakan taregirq: Finansner: 2017t'. e'j 406, 2021t'. e'j 469, <https://armstat.am/file/doc/99504418.pdf>
<https://armstat.am/file/doc/99526903.pdf>
3. Manowcharyan M., Gyowghatntesowt'yan apahovagrowt'yan himnaxndirneriy'

- Hayastani Hanrapetowt'yownowm, HH GAA <<Gitowt'yown>>
hratarakchowt'yown, Er&an, 2019t'. , e'j 88
4. Manowcharyan M., Indeqsayin apahovagrowt'yowny' orpes gyowghatntesowt'yan apahovagrowt'yan ayly'ntranqayin lowc'owm: <<Finansner & e'konomika>> handes, 2014t'. , N7-8, 152 e'j, e'j 121, www.fineco.am
 5. Qocharyan L., Gyowghapahovagrowt'yown: 2021-i amp'op'owm, <https://insurebusiness.am/%D5%A3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%B8%D5%BE%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D6%89-2021-%D5%AB-%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D6%82%D5%B4/>
 6. Nazarova A. A., Sovershenstvovanie sel'skohozjajstvennogo strahovaniya s gosudarstvennoj podderzhkoj v Rossii: diss. na soiskanie uchenoj stepeni k. je. n. M.: MGU, 2015, str. 184
 7. Spletuhov Ju. A., Sel'skohozjajstvennoe strahovanie v Rossii i za rubezhom: sravnitel'naja karakteristika, Finansovyj zhurnal / Financial Journal #1 2018, 88
 8. Ali E., Egbendewe A. Y. G., Abdoulaye T. and Sarpong D. B. (2020). Willingness to pay for weather index-based insurance in semi-subsistence agriculture: evidence from northern Togo. *Climate Policy*, p. 1–14. doi:10.1080/14693062.2020.1745742
 9. Devkota, D., Ghimire, Y. N., Timsina, K. P., Subedi, S., & Poudel, H. K. (2021). Determinants of livestock insurance adoption in Nepal. *Cogent Food & Agriculture*, 7(1), 1952012. doi:10.1080/23311932.2021.1952012
 10. Ghimire, Y. N., Timsina, K. P., Kandel, G., Thapamagar, D. B., Gautam, S., & Sharma, B. (2016). Agricultural Insurance issues and factors affecting adoption: A case of banana growers in Nepal. *Journal of Nepalese Horticulture*, 11(1), p. 74–82, <https://www.academia.edu/34199352>
 11. Kumar, D. S., Barah, B. C., Ranganathan, C. R., Venkatram, R., Gurunathan, S., & Thirumoorthy, S. (2011). An analysis of farmer's perception and awareness towards crop insurance as a tool for risk management in Tamil Nadu. *Agricultural Economics Research Review*, 24(1), 37–46. <https://ageconsearch.umn.edu/record/109413>
 12. Mahul O., Stutley C. J. Government Support to Agricultural Insurance: Challenges and Opportunities for Developing Countries. Washington DC: the World Bank, 2010, p. 219
 13. Subedi, S., & Kattel, R. R. (2021). Farmers' perception and determinants of dairy cattle insurance in Nepal. *Cogent Food & Agriculture*, 7(1), doi:10.1080/23311932.2021.1911422
 14. <https://aina.am/>
 15. <https://armstat.am/am/>

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Լիանա Սամվելի Ազատյան
Հովհաննես Սիմոնի Ասատրյան**

Համառոտագիր: Գյուղացիական տնտեսությունների գործունեության վրա բնակլիմայական պայմանների ազդեցության մեղմացումը, անբարենպաստ իրադարձությունների հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման համար միջոցների տրամադրումը կարևոր գործոն է գյուղատնտեսության կայուն զարգացման գործում: Ապահովագրական համակարգի զարգացումը գյուղատնտեսության մեջ լրացուցիչ խթան է ոլորտի կայունության ապահովման գործում, ինչով էլ պայմանավորված է **թեմայի արդիականությունը:**

Հողվածի հիմնական **նպատակն** է հանդիսանում ուսումնասիրել ՀՀ գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներկա վիճակը և ներկայացնել դրա կատարելագործման հնարավոր ուղղություններ: Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- ուսումնասիրել գյուղատնտեսական ապահովագրության արտասահմանյան մոտեցումները,
- վերլուծել ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության համակարգը,
- ստացված արդյունքների համադրմամբ մշակել առաջարկություններ:

Գիտական նորույթը: Արտերկրյա փորձի հիման վրա մշակվել է համապատասխան միջոցառումների փաթեթ՝ ուղղված ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործմանը:

Հետազոտության շրջանակներում կարևորել ենք գյուղատնտեսական ապահովագրության շարունակական պետական աջակցությունը, որի նպատակը պետք է լինի բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման հիման վրա գյուղատնտեսական ապահովագրության հասանելիությունը և վնասների բավարար փոխհատուցման ապահովումը: Ինչպես նաև, ուսումնասիրելով արտերկրյա փորձը, եկել ենք այն եզրահանգման, որ եղանակային ինդեքսի ապահովագրությունը հեռանկարային և արդյունավետ ուղղություն է, որը հաջողությամբ կարելի կիրառել նաև Հայաստանում:

Բանալի բառեր. գյուղատնտեսության ապահովագրության, պետական աջակցություն, եղանակային ինդեքս, ապահովագրական ցուցանիշներ, պայմանագրեր, փոխհատուցում:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ РА В КОНТЕКСТЕ ВНЕДРЕНИЯ ЗАРУБЕЖНОГО ОПЫТА

Лиана Самвеловна Азатян
Оганнес Симонович Асатрян

Аннотация: Смягчение влияния природно-климатических условий на деятельность агрохолдингов, предоставление средств на возмещение ущерба, причиненного неблагоприятными явлениями, является важным фактором устойчивого развития сельского хозяйства. Развитие системы страхования в сельском хозяйстве является дополнительным стимулом в обеспечении устойчивости отрасли, чем и обусловлена **актуальность** темы.

Основная **цель статьи** - изучить современное состояние системы сельскохозяйственного страхования РА и представить возможные направления ее совершенствования.

Для реализации указанной цели были поставлены следующие задачи.

- изучить зарубежные подходы к сельскохозяйственному страхованию,
- анализировать систему сельскохозяйственного страхования РА,
- разработать предложения путем сопоставления полученных результатов.

Научная новизна. На основе зарубежного опыта разработан пакет соответствующих мер, направленных на совершенствование системы сельскохозяйственного страхования РА.

В рамках исследования нами выделена общая государственная поддержка агрострахования, целью которой должно быть обеспечение доступности агрострахования на основе эффективного использования бюджетных средств и обеспечение достаточного возмещения убытков. Также, изучив зарубежный опыт, мы пришли к выводу, что страхование погодных индексов является перспективным и эффективным направлением, которое может быть успешно применено и в Армении.

Ключевые слова: сельскохозяйственное страхование, государственная поддержка, погодный индекс, страховые показатели, договоры, компенсации.

THE IMPROVING OF THE AGRICULTURAL INSURANCE SYSTEM OF RA BASED ON FOREIGN BEST PRACTICES

Liana Samvel Azatyan
Hovhannes Simon Asatryan

Annotation. Mitigation of the impact of climatic conditions on the activities of agricultural holdings, provision of funds for compensation of damage caused by adverse events is an important factor in the sustainable development of agriculture. The development of the insurance system in agriculture is an additional incentive in ensuring the stability of the sector. **The relevance** of the topic lies in this fact.

The main goal of this article is to study the current state of the RA agricultural insurance system and present possible directions for its improvement.

The following **objectives** are set

- to study foreign approaches to agricultural insurance,
- analyze the RA agricultural insurance system,
- develop recommendations by comparing the results obtained:

Scientific novelty. On the basis of foreign experience, a package of relevant measures was developed aimed at improving the RA agricultural insurance system. Within the framework of the study, we noted the importance of long-term state assistance to agricultural insurance, the purpose of which should be the availability of agricultural insurance based on the effective use of budget funds and ensuring sufficient compensation for damage. Having studied foreign experience, we came to the conclusion that weather index insurance is a promising and effective direction that can be successfully applied in Armenia.

Keywords: agricultural insurance, state support, weather index, insurance indicators, contracts, compensation.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

SS ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Շողեր Պյոտրի Պողոսյան

Հոդվածը ստացվել է՝ 31.08.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Համավարակը մեծ ազդեցություն ունեցավ կրթության և տնտեսության թվայնացման տեմպերի վրա, պայմանավորելով կրթության ոլորտում թվային լուծումների հաղթահարման ուղին: Թվային դարաշրջանում կրթությունը ստանձնում է առաջնորդողի դերը: Վերափոխելով կրթությունը վերափոխում ենք ինքներս մեզ, որպեսզի առավելագույնս համապատասխանենք ապագայի աշխատաշուկայի պահանջներին:

Հասարակական մակարդակում թվայնացումը լիովին փոխել է մեր կյանքը: Ներկայումս շատերին թվում է թե իրենք ապրում են անհատական աշխարհում, որտեղ ավանդական աշխատանքի վայրին մոտ լինելու զգացումը նվազում է:

Թվային շուկաները թույլ են տալիս գնորդներին և վաճառողներին կապվել ժամանակի և տարածության մեջ, մինչդեռ սոցիալական մեդիա շուկան տարածք է տրամադրում անհատական ու խմբային արտահայտման և ստեղծագործության համար՝ թույլ տալով մեզ կապվել ավելի բաց ու հասանելի աշխարհի հետ:

Թվայնացման մարտահրավերների հաղթահարման ժամանակ կրթությունը կարծես սկսում է գործել ճիշտ այնպես ինչպես էներգիայի օրենքն է. ստացած էներգիան (կրթությունը) մի տեսակից փոխակերպվում է այլ էներգիայի՝ նոր կրթության ու մասնագիտության:

Թվային դարաշրջանը ստեղծել է աշխատանքի բոլորովին նոր կատեգորիաներ, ինչը մարդկանց ստիպում է մի քանի մասնագիտություններ փոխել և նոր կրթություն ստանալ ոչ միայն երիտասարդ, այլև հասուն տարիքում: Այս համատեքստում կարևորվում է SS ուղղվածությամբ շարունակական և երկրորդային կրթության խթանման մեխանիզմների բացահայտումը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիականությունը:**

Հետազոտության **նպատակն է** SS ուղղվածությամբ շարունակական և երկրորդային կրթության ոլորտի հիմնախնդիրների բացահայտումը:

Հետազոտության **խնդիրն է** SS ուղղվածությամբ շարունակական և երկրորդային կրթության խթանման հնարավորությունների ուսումնասիրությունը, ինչը քննության է առնվել տարբեր սոցիալական, կրթական, թվայնացման, ինչպես նաև տնտեսական զարգացման տեսանկյունից:

Գրականության վերլուծություն: Թվայնացման ազդեցությունը կրթական համակարգի վրա ուսումնասիրվել են մի շարք հետազոտողների կողմից և տեղ գտել ոլորտին առնչվող միջազգային զեկույցներում, համազործակցության հու-

շագրերում, տարեկան հաշվետվություններում, կրթական ոլորտը լուսաբանող հրապարակումներում:

«Թվային տնտեսության զարգացումը 21-րդ դարում» հոդվածում Ն. Լեյնը իրականում առաջինն էր, ով սահմանեց դիտարկվող երևույթը. «Թվային տնտեսությունը. Համացանցում համակարգչային և հաղորդակցական տեխնոլոգիաների սերտաձուլումը և տեղեկատվության և տեխնոլոգիաների առաջացող հոսքը, որը խթանում է էլեկտրոնային առևտրի զարգացումը և կազմակերպչական կառուցվածքի լայնածավալ փոփոխությունները»¹: Մինևույն ժամանակ, հեղինակը կենտրոնանում է էլեկտրոնային առևտրի և թվային տնտեսության ազդեցության վրա այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են գաղտնիությունը, նորարարությունը, ստանդարտները և թվային անջրպետը:

Ըստ որոշ հեղինակների (Բրինոլֆսոն և Մաքսֆի, Ռիֆկին) ներկայիս տեխնոլոգիական փոփոխություններն առաջարկում են մի քանի արմատական նոր հնարավորություններ, որոնք կարող են հանգեցնել զգալի վերափոխումների ոչ միայն արտադրության և բիզնեսի ձևով, այլ նաև ընդհանուր տնտեսական համակարգում²: Սակայն Մեթը, Հեսը և Բենլիանը պատկերում են 4 չափումներ, որոնք ընդհանուր են թվային փոխակերպման ռազմավարությունների մեծ մասի, եթե ոչ բոլորի համար³.

Տեխնոլոգիաների օգտագործում. բիզնեսի վերաբերմունքը նոր տեխնոլոգիաների նկատմամբ և դրանք օգտագործելու կարողությունը:

Արժեքի ստեղծման փոփոխություններ. այս թվային գործիքների ազդեցությունը բիզնեսի արժեքային շղթայի և նրա հիմնական բիզնեսի վրա:

Կառուցվածքային փոփոխություններ. դրանք բիզնեսի գործողությունների և գործընթացների հիմքն են և, հետևաբար, պետք է անցնեն թվային վերափոխում:

Տինանսական տեսանկյուններ. դրանք թվային վերափոխման շարժիչ ուժն են և գործում են որպես արգելակ: Ամեն դեպքում դրանք պետք է հաշվի առնել որպես թվային վերափոխման հիմք:

Հեղինակները պատկերացնում են այս 4 չափումների փոխազդեցությունը սլաքի տեսքով, որի մարմինը ֆինանսական տեսանկյուններն են, որոնք սկզբունքորեն կապված են արժեքի ստեղծման և բիզնեսի կառուցվածքի հետ, որը պետք է փոխվի թվային փոխակերպման և տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ շարժվելու համար:

ՄԱԿ-ը հատկապես անհանգստացած է կրթության վիճակով՝ կապված

¹ Lane N., (1999), Advancing the digital economy into the 21st century / Information Systems Frontiers., Vol. 1. № 3, p. 317–320.

² Brynjolfsson E., McAfee A., 2014, The Second Machine Age: work, progress and prosperity in a time of brilliant technologies, 1st edition, W.W. Norton & Company, New York ISBN 978-0-393-23935-5., Rifkin J., 2014, The zero marginal cost society, the internet of things, the collaborative commons, and the eclipse of capitalism. Palgrave MacMillan, Basingstoke ISBN 978-1-137-28011-4

³ Digital transformation: concept, models, and examples, <https://www.intotheminds.com/blog/en/digital-transformation>

COVID-19 համաճարակի հետ, որը հանգեցրել է բազմաթիվ ուսումնական հաստատությունների փակման՝ ազդելով ուսանողների 91%-ի շահերի վրա ամբողջ աշխարհում¹:

Բարձրագույն կրթությունը զգալիորեն մեծացնում է աշխատանքի տեղավորման հնարավորությունները: Աշխատաշուկայում բարձրագույն կրթությունը ապահովում է ինչպես անհատների արտադրողական կարողությունները, այնպես էլ նրանց «ազդանշանները» պոտենցիալ գործատուներին: Այլ հավասար պայմանների դեպքում գործատուները նախընտրում են աշխատանքի ընդունել այնպիսի անձի, ով արդեն իսկ կրթության հետամուտ լինելու հարցում ցուցաբերել է ջանասիրություն, քանի որ ձեռք բերված որակավորումները հիմնական առավելությունն են աշխատաշուկայում առկա աշխատատեղերի համար աշխատողների մրցակցության մեջ²:

Մեթոդաբանություն: Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են համակարգային, նկարագրական, համեմատական վերլուծությունների, տնտեսավիճակագրական խմբավորումների մոտեցումները: Շրջանառության մեջ են դրվել Համաշխարհային բանկի տարեկան զեկույցները, ինչպես նաև կրթության ոլորտի զարգացման փոփոխությունները լուսաբանող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրատարակումները:

Վերլուծություն: Անցումը թվայնացմանն այսօր շատ պետությունների զարգացման առանցքային առաջնահերթություններից է: Փորձագետների կարծիքով՝ ապագայում երկրի մրցունակությունն ուղղակիորեն կորոշի թվայնացման մակարդակը³:

Թվային տնտեսությունը ձևավորում և խաթարում է ավանդական գաղափարներն այն մասին, թե ինչպես է կառուցված բիզնեսը. ինչպես են ընկերությունները փոխազդում, և թե ինչպես են սպառողները ստանում ծառայություններ, տեղեկատվություն և ապրանքներ⁴:

¹ Обеспечение всеохватного и справедливого качественного образования и поощрение возможности обучения на протяжении всей жизни для всех, <https://www.un.org/sustainabledevelopment/ru/education/>

² Gangl M., Education and Labour Market Entry across Europe. The Impact of Institutional Arrangements in Training Systems and Labour Markets. Mannheim. 2000 (25). pp. 3.

³ Арутюнян Г.А, «ЦИФРОВАЯ» ЭКОНОМИКА КАК НОВАЯ ПАРАДИГМА РАЗВИТИЯ, КООПЕРАЦИЯ НАУКИ И ОБЩЕСТВА – ПУТЬ К МОДЕРНИЗАЦИИ И ИННОВАЦИОННОМУ РАЗВИТИЮ: Сборник статей по итогам Международной научно-практической конференции (Екатеринбург, 29 августа 2020 г.). - Стерлитамак: АМИ, 2020. - 178, ст.103-105, <https://ami.im/sbornik/MNPK-296.pdf>

⁴ Манучарян М. Г., Цифровая экономика и ее развитие в реальном секторе Республики Армения, Международная научная конференция “Цифровизация Евразии”: Новые перспективы экономического сотрудничества и развития, 28 ноября 2018г., МГУ имени М.В.Ломоносова, Москва 2019, стр. 145-156 ISBN 978-5- 906932-18-1, <https://www.econ.msu.ru/sys/raw.php?o=53569&p=attachmenthttps://www.econ.msu.ru/sys/raw.php?o=53569&p=attachment>

Թվային տեխնոլոգիաները լավագույնս օգտագործելու և բիզնեսը ազգային և միջազգային մակարդակներում մեծացնելու նպատակով կազմակերպությունների անհրաժեշտ են տեխնիկական, բիզնես, միջանձնային և ստեղծագործական հմտությունների ճիշտ համադրություն ունեցող աշխատակիցներ: Առաջին, որպես հիմնական պահանջ՝ բոլոր մարդիկ պետք է ունենան հիմնարար հմտություններ (թվաբանական գրագիտություն): Երկրորդ, ժամանակակից տեխնիկական հմտությունները չափազանց կարևոր են ցանկացած արտադրական գործընթացի կազմակերպման կամ ծառայությունների մատուցման համար, որոնք լրացվում են առաջնորդության մակարդակի հմտություններով (C-suite մակարդակ, ձեռնարկատիրական), որոնք հատուկ հարմարեցված են թվային կառավարմանը¹: Գործատուների համար վերջերս առաջնահերթություն են դարձել պոտենցիալ թեկնածուների այսպես կոչված «փափուկ հմտությունները»՝ անձնական որակները և սոցիալական հմտությունները, օրինակ՝ թիմում աշխատելու ունակությունը, հետաքրքրասիրությունը, նախաձեռնողականությունը, քննադատական մտածողությունը, ինքնակառավարումը, կարողությունը՝ լուծել բարդ խնդիրներ և արդյունավետ շփվել տարբեր մարդկանց հետ:

Աղյուսակ 1

Ժամանակակից տնտեսությունում անհրաժեշտ հմտությունների տեսակները²

Ճանաչողական	Սոցիալ-վարքագծային	Տեխնիկական
Գրագիտություն, թվաբանություն և բարձր կարգի ճանաչողական հմտություններ (օրինակ, քննադատական և ստեղծագործական մտածողություն)	Սոցիալ-էմոցիոնալ հմտություններ և անհատականության գծեր	Ձեռքի ճարտարություն և մեթոդների, նյութերի, գործիքների օգտագործում
Խնդիրների լուծումը ինտուիտիվ մակարդակի փոխարեն գիտելիքահենք մակարդակով	Պատրաստակամություն փորձառության համար, բարեխղճությունը, համաձայնություն և հուզական կայունություն	Տեխնիկական հմտություններ, որոնք զարգացել են միջին մասնագիտական կրթության վերապատրաստման կամ աշխատանքի ընթացքում ձեռք բերված գիտելիքների շնորհիվ:
Բանավոր հաղորդակցվելու կարողություն, թվաբանություն, խնդիրների լուծում, հիշողություն, արագ մտածողություն	Ինքնակարգավորում, խստություն, մտածողություն, որոշումների կայացում և միջանձնային հմտություններ	Հմտություններ, որոնք կապված են հատուկ մասնագիտությունների հետ (օրինակ, ինժեներ, տնտեսագետ, SS մասնագետ)

Կարելի է փաստել, որ ավտոմատացումը, որը տեխնոլոգիական առաջընթացի անբաժանելի մասն է, կարող է հանգեցնել զգալի գործազրկության և զբաղ-

¹ Головенчик Г., Цифровизация белорусской экономики в современных условиях глобализации, Минск: Изд. центр БГУ, 2019. – 257с. ISBN 978-985-553-581-3, стр 61.

² Digital Dividends, World development report, p. 259 <https://documents1.worldbank.org/curated/en/896971468194972881/pdf/102725-PUB-Replacement-PUBLIC.pdf>

վածության նվազեցման: Ավտոմատացման ազդեցությունը կարող է վճռորոշ լինել այն երկրներում, որտեղ գործազրկությունը բարձր է, իսկ զբաղվածությունը՝ ցածր: Ուստի անհրաժեշտ է, որ երկրները պատրաստվեն աշխատաշուկայի վրա թվային տեխնոլոգիաների ազդեցության հետ կապված հնարավոր ռիսկերին:

Աշխատաշուկայում որակյալ կադրերի առկայությունը սկսվում է կրթությունից և ենթադրում է կոնկրետ գործողություններ: ՀՀ-ում մեծամասնությունն աշխատում է աշխատուժի ցածր արդյունավետություն ունեցող ոլորտներում: Բարձր եկամուտ ապահովելու տեսանկյունից աշխատուժի բարձր արդյունավետությունը կարևոր (սակայն ոչ բավարար) գործոն է: Հայաստանում մեծ թվով մարդիկ են աշխատում գյուղատնտեսության, առևտրի, տրանսպորտի եւ զբոսաշրջության ոլորտներում, բայց նրանց մասնակցությունը ոլորտի ընդհանուր ավելացված արժեքի ապահովման մեջ համեմատաբար փոքր է, ինչը նշանակում է, որ մեկ աշխատողի հաշվով ավելացված արժեքի մակարդակը ցածր է: Այս ոլորտներում աշխատուժի արդյունավետությունը կարող է մեծանալ միայն այն դեպքում, եթե աշխատողներն անցում կատարեն դեպի ավելի բարձր արդյունավետություն ապահովող ոլորտներ, ինչպիսիք են արտադրությունը, ՏՀՏ-ն և ժամանակակից բիզնես ծառայությունները¹:

Պ. Դյուրինգերի և Մ. Պիորեի երկակի աշխատաշուկայի տեսության մեջ բարձրագույն կրթությամբ մարդիկ, որպես կանոն, աշխատանքի են ընդունվում թափուր «լավ» աշխատատեղերում՝ հնարավոր հետագա մասնագիտական զարգացումով և կարիերայի առաջընթացով²:

Աշխատանքի այնպիսի ոչ ստանդարտ ձևերը, ինչպիսիք են crowdworking-ը և crowdsourcing-ը, որոնցում կապալառուի և հաճախորդի միջև կապն իրականացվում է առցանց հարթակի միջոցով, արդեն ժամանակակից իրավաբան գիտնականների ուսումնասիրության ոլորտում են, սակայն մինչ այժմ մնում են իրավական դաշտից դուրս ինչպես Եվրամիության, այնպես էլ ԵԱՏՄ շատ երկրներում³:

Նախկին փորձով ձեռք բերված գիտելիքը, ինչպես նաև ցանկացած հմտություններ, որոնք ինքնուսուցանվել կամ սովորել են այդ ճանապարհին, կարող են մեծ օգուտ բերել բիզնեսին: Շարունակական ուսուցումը նաև երաշխավորում է, որ իրենց աշխատակիցները կշարունակեն զարգանալ և դրսևորել իրենց մասնագիտական աճի ցանկությունը⁴:

¹ Համաշխարհային բանկ, Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար, էջ 24-25:


² Doeringer P., Piore M., (1980) Internal Labor Markets and Manpower Analysis, New York: Heath Lexington Books., 7th printing.

³ De Stefano, V. 2015. “The rise of the ‘just-in-time workforce: On-demand work, crowd work and labour protection in the ‘gig-economy’”, Comparative Labor law and Policy Journal 37(3), 471–503. [http:// dx.doi.org/10.2139/ssrn.2682602](http://dx.doi.org/10.2139/ssrn.2682602).

⁴ Курочкина О. В., Современные методологические подходы к управлению процессом интеграции организаций, Актуальные аспекты развития теории организаций : коллективная монография, под ред. А. А. Курочкиной. - СПб.: ГТЭУ, 2013, С. 26-32.

Հոգեբանական ուսումնասիրություններում նշվում է, որ ՏՀՏ-ն ազդում է ուսանողների տեսական, ստեղծագործական և մոդուլային-ռեֆլեքսիվ մտածողության ձևավորման վրա, կրթական տեղեկատվության համակարգչային վիզուալիզացիան էական ազդեցություն ունի պատկերավոր մտածողության մեջ կենտրոնական տեղ զբաղեցնող գաղափարների ձևավորման վրա¹:

Ստորև ներկայացնենք նաև ՀՀ ՏՏ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010-2021 թթ:



Գծապատկեր 1. ՀՀ ՏՏ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2010-2020թթ²

Որակական անցման համար անհրաժեշտ է ստեղծել ամուր հիմնարար գիտելիքների և հմտությունների բազա, որը պետք է ապահովի բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետների վերապատրաստում: Բայց շատերը մտավախություն ունեն, որ բնակչության զգալի մասը կմնա առանց աշխատանքի. փորձագետներն իրենց հերթին պնդում են, որ դա տեղի չի ունենա, եթե անձնակազմը ժամանակին ձեռք բերի առաջադեմ հմտություններ³: Ապագա անձնակազմի մասնագիտացումը պետք է լինի դիզայնի, ինժեների, մոդելավորողի, ֆինանսիստի և տնտեսագետի ձևավորման ուղղությամբ:

ՅՈՒՆԵՄԿՕ-ի տվյալները ցույց են տալիս, որ եթե բոլոր մեծահասակները ավարտեն միջնակարգ կրթությունը, ապա աղքատների թիվը աշխարհում կկրճատվի ավելի քան կեսով: ՄԱԿ-ի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ դպրոցական յուրաքանչյուր լրացուցիչ տարին 5-10%-ով նվազեց-

¹ Варфоломеева Т.Н., Хуббитдинов З.С., Влияние использования информационных технологий на деятельность педагогических субъектов, <https://scienceforum.ru/2015/article/2015009091>

² Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ, ՀՀ վիճակագրական կոմիտե, www.armstat.am

³ Водяненко О.И., Воздействие глобализации на социальную экономику, Вестник Саратовского государственного социально-экономического университета. 2016. № 3 (62). С. 11–15.

նում է մանկական մահացության հավանականությունը¹:

Աշխատաշուկայի և կրթության կապի ամրապնդումը շարունակական հրամայական է՝ հաշվի առնելով, որ աշխատաշուկայի պահանջներն անընդհատ փոխվում են և մասնագիտական նոր գիտելիքների, հմտությունների ձեռքբերման նպատակով շարունակական վերապատրաստումները դառնում են առաջնային խնդիր²: Այս առումով շատ կարևոր է, որ կրթության ոլորտում կատարվող ներդրումները փոխկապակցված և համահունչ լինեն երկրի տնտեսության զարգացման հետ:

Թվային դարաշրջանը ստիպում է շարունակական և երկրորդային կրթությանն հաղորդել SS ուղղվածություն՝ աշխատաշուկայում ավելի մրցունակ լինելու համար: Սակայն, շարունակական և երկրորդային կրթությունը շատերի համար մատչելի չէ, հատկապես, երբ այն առնչվում է մասնավոր հատվածի հետ: Խոսքը դասընթացների, թրեյնինգների, մասնագետ-քննարկում հանդիպումների մասին է, որը բավականին թանկ է: Ելնելով այս ամենից առաջարկվում է որպեսզի անհատը SS ոլորտում կրթության շարունակականության ապահովման հնարավորություն ունենա՝ աշխատաշուկա մտնելուն պես իր եկամտահարկը ուղղելով մասնավոր հատված՝ նոր տեխնոլոգիաների (ծրագրերի) ուսուցմամբ զբաղվող ուսումնական կենտրոններին:

Գիտական նորույթ: Շարունակական և երկրորդային կրթությանը SS ուղղվածություն հաղորդելու նպատակով առաջարկվել և հիմնավորվել է եկամտահարկի փոխանցումը նոր տեխնոլոգիաների (ծրագրերի) ուսուցմամբ զբաղվող ոլթսունական կենտրոններին, որոնք հնարավորություն կտան անհատին փոխհատուցել դասընթացի արժեքը առավելագույնս նպաստելով SS ոլորտում առկա թափուր աշխատատեղերի համալրմանը:

Եզրակացություն: Ներկայումս կարևորելով ՀՀ տնտեսության թվայնացման գծընթացները, կարող ենք առաջարկել շարունակական և երկրորդային կրթության խթանման հետևյալ ուղիները՝

- մշակել «Թվային տնտեսություն» ծրագրի իրականացմանը գիտական հանրության մասնակցության մեխանիզմներ և ձևաչափեր,
- պետություն-կրթություն-գիտություն-մասնավոր հատված սերտ համագործակցության ամրապնդում,
- հնարավորություն ընձեռել եկամտահարկի փոխանցումը նոր տեխնոլոգիաների (ծրագրերի) ուսուցմամբ զբաղվող ուսումնական կենտրոններին,
- խրախուսել թվային տեխնոլոգիաների ոլորտում առաջատար ընկերություններին համաձայնագրեր կնքել բուհերի հետ, որպեսզի ուսանողները

¹ Захарян А.Г. Качественное образование как фактор инновационного развития экономики Республики Армения, VII Международная научно-практическая интернет-конференция «Проблемы экономического роста и устойчивого развития территорий» (г. Вологда, ФГБУН ВолНИЦ РАН, 11–13 мая 2022 г.), <http://fic.vscs.ac.ru/index.php?forum/2091>

² Մարտիրոսյան Ա., «Աշխատաշուկայի զարգացումն անմիջականորեն կապված է մարդկային կապիտալի զարգացման հետ», <https://escs.am/am/news/13007>

պրակտիկա անցնեն թվային տեխնոլոգիաների գործնականում ներդրման վերաբերյալ և հնարավորինս արագ ինտեգրվեն աշխատաշուկային,

- ինժեներական կրթությամբ զբաղվող բոլոր բուհերի և մասնավոր հատվածի կապերի ամրապնդում,
- իրանել ձեռնարկությունները նոր սերնդի արտադրանքի արտադրության համար,
- իրազեկել տարբեր տարիքային խնդիրների մարդկանց ՏՏ ուղղվածությամբ ուսուցում ստանալու, ինչպես նաև երկրորդային և շարունակական կրթության առավելությունների մասին:

Օգտագործված գրականության ցանկ

24. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ, ՀՀ վիճակագրական կոմիտե, www.armstat.am
25. Համաշխարհային բանկ, Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար, էջ 24-25
26. Մարտիրոսյան Ա., «Աշխատաշուկայի զարգացումն անմիջականորեն կապված է մարդկային կապիտալի զարգացման հետ», <https://escs.am/am/news/13007>
27. Арутюнян Г.А, «Цифровая» экономика как новая парадигма развития, кооперация науки и общества – путь к модернизации и инновационному развитию: Сборник статей по итогам Международной научно-практической конференции (Екатеринбург, 29 августа 2020 г.). - Стерлитамак: АМИ, 2020. -178, ст.103-105, <https://ami.im/sbornik/MNPK-296.pdf>
28. Варфоломеева Т.Н., Хуббитдинов З.С., Влияние использования информационных технологий на деятельность педагогических субъектов, <https://scienceforum.ru/2015/article/2015009091>
29. Водяненко О.И., Воздействие глобализации на социальную экономику, Вестник Саратовского государственного социально-экономического университета. 2016. № 3 (62). С. 11–15.
30. Головенчик, Г. Г. Цифровизация белорусской экономики в современных условиях глобализации / Г. Г. Головенчик. – Минск : Изд. центр БГУ, 2019. – 257с. ISBN 978-985-553-581-3, стр 61
31. Захарян А.Г. Качественное образование как фактор инновационного развития экономики Республики Армения, VII Международная научно-практическая интернет-конференция «Проблемы экономического роста и устойчивого развития территорий» (г. Вологда, ФГБУН ВолНЦ РАН, 11–13 мая 2022 г.), <http://fic.vscs.ac.ru/index.php?/forum/2091>
32. Курочкина О. В., Современные методологические подходы к управлению процессом интеграции организаций, Актуальные аспекты развития теории организаций : коллективная монография, под ред. А. А. Курочкиной. - СПб.: ГТЭУ, 2013, С. 26-32.

33. Ларина Е. Б., Орехова Е. А., Цифровизация как фактор повышения конкурентоспособности национальной экономики на мировых рынках, Вестник СГСЭУ. 2019. № 2 (76), стр. 29-34
34. Манучарян М. Г., Цифровая экономика и ее развитие в реальном секторе Республики Армения, Международная научная конференция “Цифровизация Евразии”: Новые перспективы экономического сотрудничества и развития, 28 ноября 2018г., МГУ имени М.В.Ломоносова, Москва 2019, стр. 145-156 ISBN 978-5- 906932-18-1, <https://www.econ.msu.ru/sys/raw.php?o=53569&p=attachment>
35. Обеспечение всеохватного и справедливого качественного образования и поощрение возможности обучения на протяжении всей жизни для всех, <https://www.un.org/sustainabledevelopment/ru/education/>
36. Brynjolfsson E., McAfee A., 2014, The Second Machine Age: work, progress and prosperity in a time of brilliant technologies, 1st edition, W.W. Norton & Company, New York ISBN 978-0-393-23935-5.
37. De Stefano, V. 2015. “The rise of the ‘just-in-time workforce: On-demand work, crowd work and labour protection in the ‘gig-economy’”, Comparative Labor law and Policy Journal 37(3), 471–503. [http:// dx.doi.org/10.2139/ssrn.2682602](http://dx.doi.org/10.2139/ssrn.2682602).
38. Digital Dividends, World development report, p. 259, <https://documents1.worldbank.org/curated/en/896971468194972881/pdf/102725-PUB-Replacement-PUBLIC.pdf>
39. Digital transformation: concept, models, and examples, <https://www.intotheminds.com/blog/en/digital-transformation>
40. Doeringer P., Piore M., (1980) Internal Labor Markets and Manpower Analysis, New York: Heath Lexington Books., 7th printing.
41. Gangl M., Education and Labour Market Entry across Europe. The Impact of Institutional Arrangements in Training Systems and Labour Markets. Mannheim. 2000 (25). pp. 3.
42. Lane N., (1999), Advancing the digital economy into the 21st century / Information Systems Frontiers., Vol. 1.(3), p. 317–320.
43. Rifkin J., 2014, The zero marginal cost society, the internet of things, the collaborative commons, and the eclipse of capitalism. Palgrave MacMillan, Basingstoke ISBN 978-1-137-28011-4

References

1. Hayastani social-tntesakan vitwaky' 2020t', HH vitwakagrakan komite, www.armstat.am
2. Hamashxarhayin bank, Ashxatanq Hayastanowm aveli lav apagayi hamar, e'j 24-25
3. Martirosyan A., «Ashxatashowkayi zargacowmn anmijakanoren kapvac' e' mardkayin kapitali zargacman het», <https://escs.am/am/news/13007>
4. Varfolomeeva T.N., Hubbitdinov Z.S., Vlijanie ispol'zovanija informacionnyh tehnologij na dejatel'nost' pedagogicheskikh sub"ektov, <https://scienceforum.ru/2015/article/2015009091>

5. Arutjunjan G.A., «Cifrovaja» jekonomika kak novaja paradigma razvitija, kooperacija nauki i obshhestva – put' k modernizacii i innovacionnomu razvitiju: Sbornik statej po itogam Mezhdunarodnoj nauchno-prakticheskoy konferencii (Ekaterinburg, 29 avgusta 2020 g.). - Sterlitamak: AMI, 2020. -178, st.103-105, <https://ami.im/sbornik/MNPK-296.pdf>
6. Vodjanenko O.I., Vozdejstvie globalizacii na social'nuju jekonomiku, Vestnik Saratovskogo gosudarstvennogo social'no-jekonomicheskogo universiteta. 2016. # 3 (62). S. 11–15.
7. Golovenchik, G. G. Cifrovizacija belorusskoj jekonomiki v sovremennyh uslovijah globalizacii / G. G. Golovenchik. – Minsk : Izd. centr BGU, 2019. – 257s. ISBN 978-985-553-581-3, str 61
8. Zaharjan A.G., Kachestvennoe obrazovanie kak faktor innovacionnogo razvitija jekonomiki Respubliki Armenija, VII Mezhdunarodnaja nauchno-prakticheskaja internet-konferencija «Problemy jekonomicheskogo rosta i ustojchivogo razvitija territorij» (g. Vologda, FGBUN VolNC RAN, 11–13 maja 2022 g.), <http://fic.vsc.ac.ru/index.php?/forum/2091>
9. Kurochkina O. V., Sovremennye metodologicheskie podhody k upravleniju procesom integracii organizacij, Aktual'nye aspekty razvitija teorii organizacij : kollektivnaja monografija, pod red. A. A. Kurochkinoj. - SPb.: GTJeU, 2013, S. 26-32.
10. Larina E. B., Orehova E. A., Cifrovizacija kak faktor povyshenija konkurentosposobnosti nacional'noj jekonomiki na mirovyh rynkah, Vestnik SGSJeU. 2019. # 2 (76), str. 29-34
11. Manucharjan M. G., Cifrovaja jekonomika i ee razvitie v real'nom sektore Respubliki Armenija, Mezhdunarodnaja nauchnaja konferencija “Cifrovizacija Evrazii”: Novye perspektivy jekonomicheskogo sotrudnichestva i razvitija, 28 nojabrja 2018g., MGU imeni M.V.Lomonosova, Moskva 2019, str. 145-156 ISBN 978-5- 906932-18-1, <https://www.econ.msu.ru/sys/raw.php?o=53569&p=attachment>
12. Obespechenie vseohvatnogo i spravedlivogo kachestvennogo obrazovanija i pooshhrenie vozmozhnosti obuchenija na protjazhenii vsej zhizni dlja vseh, <https://www.un.org/sustainabledevelopment/ru/education/>
13. Brynjolfsson E., McAfee A., 2014, The Second Machine Age: work, progress and prosperity in a time of brilliant technologies, 1st edition, W.W. Norton & Company, New York ISBN 978-0-393-23935-5.
14. De Stefano, V. 2015. “The rise of the ‘just-in-time workforce: On-demand work, crowd work and labour protection in the ‘gig-economy’”, Comparative Labor law and Policy Journal 37(3), 471–503. [http:// dx.doi.org/10.2139/ssrn.2682602](http://dx.doi.org/10.2139/ssrn.2682602)
15. Digital Dividends, world development report, p. 259, <https://documents1.worldbank.org/curated/en/896971468194972881/pdf/102725-PUB-Replacement-PUBLIC.pdf>
16. Digital transformation: concept, models, and examples, <https://www.intotheminds.com/blog/en/digital-transformation>
17. Doeringer P., Piore M., (1980) Internal Labor Markets and Manpower Analysis, New York: Heath Lexington Books,. 7th printing.

18. Gangl M., Education and Labour Market Entry across Europe. The Impact of Institutional Arrangements in Training Systems and Labour Markets. Mannheim. 2000 (25). pp. 3.
19. Lane N., (1999), Advancing the digital economy into the 21st century / Information Systems Frontiers., Vol. 1.(3), p. 317–320.
20. Rifkin J., 2014, The zero marginal cost society, the internet of things, the collaborative commons, and the eclipse of capitalism. Palgrave MacMillan, Basingstoke ISBN 978-1-137-28011-4

**ՏՏ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Շողեր Պյոտրի Պողոսյան

Համառոտագիր: Համավարակը մեծ ազդեցություն ունեցավ կրթության և տնտեսության թվայնացման տեմպերի վրա, պայմանավորելով կրթության ոլորտում աշխարհը գնաց թվային լուծումների հաղթահարման ուղին: Թվային դարաշրջանում կրթությունը ստանձնում է առաջնորդողի դերը: Վերափոխելով կրթությունը վերափոխում ենք ինքներս մեզ, որպեսզի առավելագույնս համապատասխանենք ապագայի աշխատաշուկայի պահանջներին:

Թվայնացման մարտահրավերների հաղթահարման ժամանակ կրթությունը կարծես սկսում է գործել ճիշտ այնպես ինչպես էներգիայի օրենքն է. ստացած էներգիան (կրթությունը) մի տեսակից փոխակերպվում է այլ էներգիայի՝ նոր կրթության ու մասնագիտության:

Թվային դարաշրջանը ստեղծել է աշխատանքի բոլորովին նոր կատեգորիաներ, ինչը մարդկանց ստիպում է մի քանի մասնագիտություններ փոխել և նոր կրթություն ստանալ ոչ միայն երիտասարդ, այլև հասուն տարիքում: Այս համատեքստում կարևորվում է ՏՏ ուղղվածությամբ շարունակական և երկրորդային կրթության խթանման մեխանիզմների բացահայտումը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության արդիականությունը:**

Հետազոտության **նպատակն է** ՏՏ ուղղվածությամբ շարունակական և երկրորդային կրթության ոլորտի հիմնախնդիրների բացահայտումը:

Հետազոտության **խնդիրն է** ՏՏ ուղղվածությամբ շարունակական և երկրորդային կրթության խթանման հնարավորությունների ուսումնասիրությունը: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են կրթության ոլորտին առնչվող հիմնախնդիրները, որոնք ի հայտ են գալիս թվային դարաշրջանում՝ կապված տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման հետ: **Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են** համակարգային, նկարագրական, համեմատական վերլուծությունների, տնտեսավիճակագրական խմբավորումների մոտեցումները, Համաշխարհային բանկի տարեկան զեկույցները, ինչպես նաև կրթու-

թյան ոլորտի զարգացման փոփոխությունները լուսաբանող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրապարակումները:

Գիտական նորույթ: Շարունակական և երկրորդային կրթությանը SS ուղղվածություն հաղորդելու նպատակով առաջարկվել և հիմնավորվել է եկամտահարկի փոխանցումը նոր տեխնոլոգիաների (ծրագրերի) ուսուցմամբ զբաղվող ուսումնական կենտրոններին, որոնք հնարավորություն կտան անհատին փոխհատուցել դասընթացի արժեքը առավելագույնս նպաստելով SS ոլորտում առկա թափուր աշխատատեղերի համալրմանը:

Բանալի բառեր. մարտահրավեր, թվային տնտեսություն, վերապատրաստում, հմտություններ, կրթություն, աշխատաշուկա, թվային տեխնոլոգիաներ

ПРОБЛЕМЫ СОДЕЙСТВИЯ НЕПРЕРЫВНОМУ И ВТОРИЧНОМУ ОБРАЗОВАНИЮ С ИТ-НАПРАВЛЕНИЕМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Шогер Петровна Погосян

Аннотация: Пандемия оказала серьезное влияние на темпы цифровизации образования и экономику, определив пути преодоления цифровых решений в сфере образования. В эпоху цифровых технологий образование берет на себя роль лидера. Трансформируя образование, мы трансформируем себя, чтобы максимально соответствовать запросам рынка труда будущего.

При решении задач цифровизации образование, кажется, начинает работать так же, как закон энергии: полученная энергия (образование) трансформируется из одного вида в энергию другого вида, в новое образование и профессию.

Цифровая эпоха создала совершенно новые категории труда, что заставляет людей менять несколько профессий и получать новое образование не только в юном, но и во взрослом возрасте. В этом контексте важно выявить механизмы продвижения ИТ-ориентированного непрерывного и вторичного образования, что обуславливает **актуальность** нашего исследования.

Цель исследования - выявить проблемы ИТ-ориентированного непрерывного и вторичного образования.

Задачей исследования является изучение возможностей продвижения ИТ-ориентированного непрерывного и вторичного образования. В рамках исследования были изучены основные проблемы, связанные со сферой образования, которые появляются в эпоху цифровых технологий, связанные с беспрецедентным развитием технологий. Для сбора информации **использовались** подходы систематического, описательного, сравнительного анализа, экономической группировки, годовые отчеты Всемирного банка, а также отечественные и национальные отчеты, освещающие изменения в развитии сферы образования, публикации зарубежных авторов.

Научная новизна. Для придания ИТ направленности дополнительному и вторичному образованию предложено и обосновано перечисление подходящего на-

лога в учебные центры, занимающиеся обучением новым технологиям (программам), что позволит физическому лицу компенсировать стоимость курса, максимально содействуя заполнению имеющихся вакансий в сфере ИТ.

Ключевые слова: вызов, цифровая экономика, обучение, навыки, образование, рынок труда, цифровые технологии

THE PROBLEMS OF PROMOTING LIFE-LONG LEARNING AND SPECIALIZED TRAINING EDUCATION WITH IT DIRECTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Shogher Pyotr Poghosyan

Abstract. The pandemic had a major impact on the pace of digitization of education and the economy, determining the way to overcome challenges through digital solutions in the education sector. In the digital age, education takes on the role of a leader. Transforming education, we transform ourselves to meet the demands of the future labor market as much as possible.

When solving the tasks of digitization, education seems to be starting to work in the same way as the rule of energy: the received energy (education) is transformed from one kind to another, to a new education and profession.

The digital age has created completely new categories of work, which forces people to change several professions and get new education not only at a young age, but also at an adulthood. In this context, it is important to identify the mechanisms of promotion of IT focused life-long learning and specialized training, which determines the relevance of our research. The purpose of the study is to identify the problems of IT focused life-long learning and specialized training.

The objective of the research is the analysis of the possibilities of promoting IT focused life-long learning and specialized training. In the framework of the study, the main problems related to the field of education, which appear in the era of digital technologies, related to the unprecedented development of technologies, were studied. Systematic, descriptive, comparative analysis, economic grouping, annual reports of the World Bank, as well as domestic and national reports covering changes in the development of education, publications of foreign authors were used to collect information.

Scientific novelty. To give an IT focused life-long learning and specialized training, the transfer of income tax to educational centers engaged in training in new technologies (programs) is proposed and justified. This will allow an individual to compensate the cost of the course and maximally assist in filling available vacancies in the field of IT.

Keywords. challenge, digital economy, training, skills, education, labor market, digital technologies

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ¹

Սվետլանա Արկադիի Դալլաքյան Սարգիս Հարությունի Սարգսյան

Հոդվածը ստացվել է՝ 07.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 23.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Աշխարհն ապրում է աննախադեպ տեխնոլոգիական ինովացիաների և թվայնացման դարաշրջանում, ինչն ազդարարում է «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» սկիզբ: Վերջինս յուրաքանչյուր երկրի համար դարձել է արտաքին գործունեության միջավայրը ձևավորող կարևորագույն գործոն, ինչպես նաև տնտեսության, գործարարության և առանձին կազմակերպությունների մրցունակությունն ապահովող հիմնական նախապայման: Ավելին, արդի պայմաններում չորրորդ արդյունաբերականից անցում է կատարվում դեպի X.0 արդյունաբերության, որն իրենից ենթադրում է արտադրության արագացված վերափոխում՝ հիմք ընդունելով ինովացիան, թվայնացումը և գլոբալալիզացիան²: Վերջինս մեծ սոցիալ-տնտեսական նշանակություն ունի հասարակության համար, որը թույլ է տալիս բնակչությանը մատուցել նոր որակի ծառայություններ, թվայնացված տնտեսական հարաբերություններ, նպաստում է ձեռներեցության (գործարարության) թվայնացման գործընթացի արագացմանը: Ինովացիոն գործունեությունը և թվային տեխնոլոգիաները դարձել են տնտեսական բարգավաճման հիմնական շարժիչ ուժն են:

Հետազոտության արդիականությունը:

Տնտեսության թվայնացման աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքների արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ «մոտ ապագայում նոր թվային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումն է, որ կորոշի ինչպես առանձին ընկերությունների, այնպես էլ ողջ երկրների միջազգային մրցունակությունը³: Քովիդ-19 համավարակը և Արցախյան 2-րդ պատերազմը ևս մեկ անգամ ապացուցեցին, որ ՀՀ տնտեսությունը պետք է զարգանա ինովացիոն համատեքստում և գործարարությունն էլ դրվի թվային հիմքերի վրա:

Հոդվածի նպատակն է ներկայացնել գործարարության զարգացման և մրցունակության ապահովման հնարավորություններն ինովացիոն տնտեսության համատեքստում՝ շեշտադրելով թվայնացման գործընթացները:

¹ Հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ «21T-5B234» ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում

² Nataliia K., Oleksandr M., Innovative-digital entrepreneurship as key link of industry x.0 formation in the conditions of virtual reality, Vol. 7, No. 1, 2021, <https://doi.org/10.30525/2256-0742/2021-7-1-47-56>, p. 47

³ Г. И. Абдрахманова, К. О. Вишнеvский, Л. М. Гохберг и др. Доклад к XX Апр. междунар. науч. конф. по проблемам развития экономики и общества/Науч. ред. Л. М. Гохберг. Москва, 9-12 апреля 2019 г.; Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». М.: Изд. дом Высшей школы экономики, 2019. 82 с

Ներկայացված նպատակի իրագործման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրներ.**

- Պարզաբանել «ինովացիոն տնտեսություն» հիմնադրույթը և վերլուծել այն բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր,
- Ներկայացնել գործարարության մեջ ինովացիաների դրսևորումները՝ շեշտադրում անելով թվայնացման վրա՝ պարզաբանելով X.0 արդյունաբերությունը,
- Կատարել կազմակերպության թվայնացման հնարավորությունների գնահատում SWOT վերլուծության միջոցով,
- Ներկայացնել կազմակերպության ինովացիոն ներուժի գնահատման մոտեցումներ թվային տնտեսության համատեքստում:

Գրականության ակնարկ:

Նորարարական գործընթացները պետք է հասկանալ որպես սոցիալ-տնտեսական համակարգի տնտեսական գործունեության տեխնիկական և տեխնոլոգիական գործոնների և տնտեսական պայմանների որակական վերափոխման գործընթացներ, որոնցում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները անմիջականորեն ներգրավված են նորարարությունների ստեղծման և ներդրման մեջ:

Նորարարությունը նոր սոցիալական պարադիգմի ներդրումն է, որը Պորտերի մոտ ստացել է «Մրցակցային առավելություն»¹ անվանումը: Տեխնոլոգիայի և գիտելիքների վրա հիմնված տնտեսության ձևավորման կարևորագույն պայմանը բարձր ինովացիոն ակտիվությունն է կառավարման բոլոր մակարդակներում՝ հասարակական, պետական, ձեռնարկատիրական, ինչպես նաև հասարակության ինովացիոն ներուժի հիմնարար բաղադրիչը: Ինովացիոն տնտեսության հիմքը արդյունավետ ինովացիոն ենթակառուցվածքի առկայությունն է²: Գիտնականների մեծամասնությունը առաջնային են դիտում արտադրության առկա պայմանները փոխելու նորարարությունների կարողությունը: Ֆ.Նիքսոնը դրանք ներկայացնում է որպես արդյունաբերական, տեխնիկական, ինչպես նաև առևտրային միջոցառումների մի ամբողջություն, որոնց իրականացումը հանգեցնում է շուկայում կատարելագործված և բոլորովին նոր ապրանքների ի հայտ գալուն: Բ. Սանտոն նորարարությունը բնութագրում է որպես գյուտերի և գաղափարների գործնական կիրառման միջոցով տեխնոլոգիաների և լավագույն բնութագրերով արտադրանքի ձևավորման գործընթաց, որի արդյունքում արտադրողը կարող է լրացուցիչ եկամուտ ստանալ³: Նորարարության ժամանակակից տեսության հիմքերը դրված են Ն.Դ. Կոնդրատևի⁴, Պ.Ա. Սորոկինի և այլ տնտեսագետների աշխատություններում: Նորարարական գաղափարները, որոնք ուղղված

¹ Porter M. Competitive advantage: creating and sustaining superior performance. New York: Free Press; 1998. ISBN 0684841460.

² Schumpeter J. "Business Cycles: A Theoretical, Historical and Statistical Analysis of the Capitalist Process" New York, 1939, vol. p.100-101.

³ Dyatlov S.A. TSifrovaya ekonomika: novyye metodologicheskiye problemy issledovaniya. Sovremennyye tekhnologii: aktualnyye voprosy, dostizheniya i innovatsii, 2017, pp. 84–88.

⁴ Kondratyev N.D., Yakovets Yu.V., Abalkin L.I. Bolshiy tsikly konyunktury i teoriya predvideniya. Moscow, 2002, 766 p

են տեխնոլոգիաների արդիականացմանը, արտադրանքի որակի կատարելագործմանը, արտադրության ժամանակի կրճատմանը և ծավալների մեծացմանը, նպաստում են արտադրանքի, ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը, մրցունակության բարձրացմանը և, որպես հետևանք, շահութաբերության բարձրացմանը¹: Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը հնարավորություն է տալիս իրագործել վերը նշված գործընթացները: Արդյունաբերություն 4.0-ն, որպես չորրորդ արդյունաբերական հեղափոխության մաս, ներառում է բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնց հիմնական նպատակն է ստեղծել միասնական վիրտուալ հարթակ տվյալների փոխանակման, բիզնես գործընթացների և օբյեկտների վիրտուալ վիզուալացման համար, ինչպես նաև նախատեսում է ռոբոտային համակարգերի փոխազդեցությամբ և ինտերնետ տեխնոլոգիաների միջոտրոդությամբ ստեղծել «խելացի» ձևաչափով ձեռնարկություններ²: 4.0 արդյունաբերության ձևավորման պայմանների և զարգացման վերաբերյալ իրենց հետազոտություններն են կատարել Այսաքսոն³ և Շանտարենկովան⁴, որտեղ ներկայացնում են, որ 4.0 արդյունաբերությունը գործում է զարգացած երկրներում, և որում առկա են թվայնացման ամենաշատ փուլերը՝ ներառելով «խելացի գործարարությունը»՝ ներառելով այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝ «Մեծ տվյալներ», մեքենայական ուսուցում, արհեստական բանականություն, Մ2Մ հազորդակցություն և նոր ռոբոտների սերունդ: Սակայն թվայնացման գործընթացների արդիականացումը հանգեցնում է X.0 արդյունաբերության: Ըստ Վ. Դ. Չեկինան, Դ. Յու. Չերեվատսկին, (2018), Օ. Հոլբորոդկան, Ն. Մ. Կրաուսը, Կ. Մ. Կրաուսը (2018 առկա է համապարփակ մոտեցման անհրաժեշտություն, որը կհիմնավորի X.0 արդյունաբերության ձևավորման և զարգացման մեխանիզմների պարադիգմը և ավանդական ձեռներեցության ու գործարարության վերափոխումը դրա թվայնացմանը՝ նոր տնտեսական հարաբերությունների զարգացման համատեքստում, ինչն որոշվում է վիրտուալ իրականությամբ: Այսինքն X.0 արդյունաբերության մեջ շեշտադրում է արվում ձեռներեցության ինովացիոն- թվայնացման բաղադրիչի վրա և ի հայտ են գալիս նոր թվային տեխնոլոգիաների համակարգված մոտեցումներ՝ թվային ձեռներեցություն, STEM կրթություն, էկոհամակարգերի արտադրություն և ի վերջո բնակչության թվային կարողությունների կատարելագործում⁵:

¹ Гладылин А.В., Герасимов А.Н., Громов Е.И. Эконометрика. Москва, 2011. (3-е изд., стер.)
² Kateryna K., Nataliia K., Oleksandr M.V., Fourth industrial revolution as a driver of the digitalization of production and urbanization, March 19, 2022, ISSN 2534 - 9228 (2022)VUZF Review,7(1), 177-191 p.
³ Isaacson W. (2017). Innovators: how a group of hackers, geniuses and geeks made the digital revolution. Kyiv: Nash Format Publishing House. ,
⁴ Shantarenkova M. (2017). Notes on digital enterprise. Industry X.0 – “Itization” is endless! Part 2, December 12. (in Ukrainian).
⁵ Nataliia K., Oleksandr M., Innovative-digital entrepreneurship as key link of industry x.0 formation in the conditions of virtual reality, Vol. 7, No. 1, 2021 , <https://doi.org/10.30525/2256-0742/2021-7-1-47-56>, p. 49

Մեթոդաբանություն: Սույն հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել համակարգային մոտեցման, համեմատական վերլուծության, գրաֆիկական, ինդուկցիայի և դեդուկցիայի, քանակական և այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս թվային և ինովացիոն տնտեսությունը բնութագրող ցուցանիշները և համաթվերը դիտարկել դինամիկայի մեջ, բացահայտել առաջացած հակասությունները և բնորոշ առանձնահատկությունները Հայաստանի տնտեսության համար: Քանակական գնահատման համար լայնորեն կիրառվել է ինովացիոն և թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և գործակիցներ: SWOT մեթոդի միջոցով իրականացվել է կազմակերպության թվայնացման ներքին և արտաքին միջավայրերի վերլուծություն: Վերը նշված հետազոտական նպատակի իրագործման համար հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքները և հոդվածները: Իսկ տեղեկատվության համար հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի և արժույթի միջազգային հիմնադրամի և այլ կառույցների պաշտոնական նյութերը և ՀՀ կառավարության պաշտոնական կայքը:

Վերլուծություն: Նորարարության դերը անշեղորեն աճում է և կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են ինովացիոն գործունեություն, ինովացիոն գործընթաց, ինովացիոն ներուժ և թվայնացում: Նորարարությունը համալիր խնդիրների համար լուծումներ որոնելու մշտական գործընթաց է, որը հիմնված է շարունակական ուսուցման և գիտելիքներ կուտակելու վրա: Հենց այս տրամաբանությամբ է կառուցված համաշխարհային նորարարության համաթիվ (ՀՆՀ), որը որպես ծախսերի և արդյունքի հարաբերակցություն հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել այս կամ այն երկրում ինովացիայի զարգացմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի համաշխարհային նորարարական համաթիվը իր երկու ենթահամաթիվերով և ցուցանիշներով 2018-2021թթ.-ի կտրվածքով¹

№	Ցուցանիշի անվանումը	2018		2019		2020		2021 ²
		Միավորը (0-100)	Դիրքը	Միավորը (0-100)	Դիրքը	Միավորը (0-100)	Դիրքը	Դիրքը
1	Համաշխարհային նորարարական համաթիվ (ՀՄՀ, GII)	32.81	68	33.98	64	32.67	60	69

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով՝ Global innovation index 2018, Energizing the World with Innovation, 11th edition, p. 221, Global innovation index 2019, Energizing the World with Innovation, 12th edition, p.221, Global innovation index 2020, Energizing the World with Innovation, 13th edition, p. 218

² 2021թ. տվյալները ներկայացված են ամփոփ մասնավորապես բացակայում են ցուցանիշների միավորները, ինչպես նաև ենթահամաթիվ 1-ի և 2-ի համապատասխան ցուցիչները, քանի որ հիմնական տարեկան հաշվետվությունը դեռ լույս չի տեսել: Global innovation index 2021, Executive Summary, 14th edition, p. 30:

https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2021_exec.pdf

2	Ենթահամաթիվ 1. Ինովացիոն հետազոտության համար անհրաժեշտ ռեսուրսները և պայմանները (Innovation Input).	24.7	94	39.36	85	39.13	83	-
2.1	• Ինստիտուտներ	60.8	67	63.2	64	64.3	64	65
2.2	• Մարդկային կապիտալ և հետազոտություններ	15.2	110	19.9	107	20.5	94	94
2.3	• Ենթակառուցվածքներ	36.5	93	40.2	85	34.4	90	80
2.4	• Շուկայի զարգացվածության աստիճան	43.5	81	50.1	55	49.6	68	99
2.5	• Գործարար միջավայրի զարգացվածության աստիճան	26.1	88	26.3	89	24.6	69	98
3	Ենթահամաթիվ 2. Ինովացիաների իրականացումը և ձեռքբերված գործնական արդյունքը (Innovation Output)	34.1	50	26.80	50	27.15	45	-
3.1	• Գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունքներ	23.2	62	25.5	54	28.5	45	64
3.2	• Ստեղծագործական արդյունքներ	35.0	48	32.2	48	25.8	56	49

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ից, ՀՆՀ-ը 2019թ.-ից սկսած առկա է դիրքերի բարելավում՝ 2018թ.-ին զբաղեցրել է 68-րդ հորիզոնականը 2019 և 2020 թվականներին՝ համապատասխանաբար 64 և 60-րդ դիրքերը: Սա պատահական չէ, քանի որ դիրքերի բարելավում է նկատվել նաև 2-րդ (Innovation Input) և 3-րդ (Innovation Output) ենթահամաթվերում՝ համապատասխանաբար 85-ից 83 և 50-ից 45-րդ դիրքեր: Սակայն պետք է փաստել, որ 2021թ. արձանագրել ենք ՀՆՀ դիրքի անկում՝ 60-69-րդը, ավելին Global innovation index 2021 հետազոտության մեջ նշվում է, որ աշխարհի 9 պետությունները, որի մեջ է նաև Հայաստանն է, այլևս ձեռքբերումներ չունեն նորարարությունների մեջ¹: Վերջինս պատճառները կարող ենք վերլուծել, երբ հրապարակվի 2021թ. հաշվետվության ամբողջական տարբերակը: Աղյուսակ 1-ից երևում է նաև, որ առաջին ենթահամաթվի մեջ առկա 2.5 ցուցանիշի՝ գործարար միջավայրի զարգացվածության աստիճան, դիրքի կտրուկ դրական փոփոխություն է նկատվել 2020թ.-ին 2019-ի համեմատ՝ 20 տեղով: Այս ցուցանիշի մեջ ներառված են այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են՝ գիտելիքներով օժտված աշխատակիցներ (knowledge workers), նորարարական կապեր (innovation linkages), գիտելիքի կլանում (knowledge absorbtion), որոնց մասով ունեցել ենք դիրքերի բարելավում: Սակայն նույնը չի կարելի ասել 2021թ.-ին մասին, քանի որ ունենք այդ դիրքի վատթարացում՝ 69-ից 98-րդը և վերջինս վատագույն դիրքն է բոլոր մյուս ցուցանիշների մեջ:

Ինովացիոն տնտեսության պայմաններում հարկ է անդրադառնալ նաև

¹ Նույն տեղում էջ 27

թվայնացման գործընթացները բնութագրող համաթվերին, որպեսզի ստանանք համալիր պատկերացում Հայաստանի ինովացիոն և թվային գործընթացների վերաբերյալ: Առկա են թվային տնտեսությունը բնութագրող բազմաթիվ համաթվեր (թվային տնտեսության և հասարակության համաթիվը (DESI) բազմաբաղադրյալ ինդեքս, Թվային մրցունակության համաթիվ (DSR), միջազգային հեռահաղորդակցության զարգացման համաթիվ (ICT development index), թվային (ցանցային) պատրաստվածության (ապահովվածության) համաթիվը (NRI), Էլեկտրոնային կառավարման զարգացման համաթիվը (EGDI), թվային տեխնոլոգիաների տարածման համաթիվը (DAI), կյանքի թվային որակի համաթվում (DQLI), կիրառական տեխնոլոգիայի համաթիվ (GCI)), որոնք վերլուծվել են հեղինակի կողմից և կատարվել են առաջարկներ ՀՀ դիրքը բարելավելու վերաբերյալ¹: Պետք է փաստել, թվային տնտեսությունը բնութագրող նշված համաթվերից ոչ բոլորն են արդիական Հայաստանի համար և միայն հաշվարկվում են.

1. **Թվային (ցանցային) պատրաստվածության համաթիվը** չափում է տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման մակարդակը, 134 երկրների մեջ 2021թ. 60-րդ ենք,

2. **Էլեկտրոնային կառավարման զարգացման համաթիվը**, որը երեք բաղկացուցիչ ենթահամաթվերի՝ առցանց ծառայությունների մասշտաբ և որակ (ՄՕՄՈ), հեռահաղորդակցական ենթակառուցվածքների (ՀԵ) և մարդկային կապիտալի (ՄԿ) կշռված միջինն է և Հայաստանը 2020թ. 193 երկրների շարքում զբաղեցրել է 68-րդ տեղը: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ ԷԿԶՀ դեպի ծով ելք չունեցող երկրների շարքում 2020 թ.-ի տվյալներով Հայաստանը աշխարհում երկրորդն է զիջելով միայն Ղազախստանին²:

3. **Թվային կյանքի որակի համաթվում** արտացոլված է այն, որ բնակչության կենսամակարդակում իրենց ուրույն տեղն ունեն թվային տեխնոլոգիաների և թվայնացման գործընթացների ներթափանցումը մարդկանց կենսագործունեության բոլոր ոլորտներ: Այս համաթվով 2021թ.-ին Հայաստանն ունի վատագույն դիրք ԵԱՏՄ երկրների շարքում՝ զբաղեցնելով 81-րդ տեղը³: Նշված անբարենպաստ դիրքի պատճառներից են համացանցին հասանելիությունը և էլեկտրոնային անվտանգությունը:

4. **Կիրառական տեխնոլոգիայի համաթիվ**: Այս համաթվի հաշվարկման նպատակն է երկրներին ուղղորդել բացահայտել կիրառական տեխնոլոգիայի հարթակում բարելավման ոլորտները, որոնք դառնում են պատճառ բազմաթիվ կիրառական տեխնոլոգիաների համար: 2020թ. Հայաստանը հայտնվել է 90-րդ մակարդակում՝ 182 երկրների շարքում⁴: Սա շատ անհանգստացնող է, քանի որ Հայաստանը

¹ Դալլաքյան Ս., Սարգսյան Ս., Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, «Թվային տնտեսությունը բնութագրող համաթվերի վերլուծությունը և թվային օրակարգը հայաստանում», գիտաժողովի նյութեր, Եր., 2022թ. էջ 269-287

² United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, p 58

³ <https://surfshark.com/dq12021>, Last Update 24.08.2022


⁴ Global Cybersecurity index, ITU 2020, p. 26, Last Update 28.08.2022

գտնվում է պատերազմող իրավիճակում և կիրքերանվտանգությունը ՀՀ-ի համար թվայնացված բոլոր ոլորտները՝ սկսած բանկային վերջացրած տեղեկատվական, անչափ կարևոր են: Հայաստանի տնտեսական և առհասարակ թվային անվտանգության ապահովման համար:

Այսպիսով, ներկայացված ՀՀ ինովացիոն և թվային տնտեսությունը բնութագրող համաթվերից էլնելով կարող ենք եզրահանգել, որ Հայաստանը զբաղեցնում է միջինից ցածր դիրքեր: ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 11-ի N 183-Լ որոշման համաձայն հաստատվել է «Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ.» փաստաթուղթը, նպատակ ունի ապահովել կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումը ուղղված լինելով՝

1. *արդյունավետ, արագ, թափանցիկ և տվյալահեն պետական կառավարմանը,*
2. *թվային հարթակների ու խելացի լուծումների միջոցով տնտեսության մասնավոր հատվածի արդիականացմանը և մրցունակության բարձրացմանը,*
3. *թվային հմտություններին տիրապետող՝ ապագայի տնտեսությանը պատրաստ, աշխատուժի ձևավորմանը, և թվային լուծումների լայն կիրառմանը հանրության կողմից:¹*

Վերը նշված նպատակների իրագործման համար առաջարկում ենք թվային և ինովացիոն քաղաքականության բարեփոխման հիմնական ոլորտային լուծումներ, որոնք ուղղված են X.O արդյունաբերության հիմնական մաս հանդիսացող թվային ձեռնարկատիրության հնարավորինս արագ զարգացմանը (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Թվային ձեռնարկության կառուցվածքում ինովացիոն քաղաքականության մակարդակները²

https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf

¹ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183 - Լ որոշում, Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ., էջ 8

² Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով իրականացված հետազոտությունը

Բիզնես միջավայր (Ֆինանսներ, ռազմավարություններ և հաստատություններ).

- Կենսունակ կապիտալի շուկաներ,
- Ձեռնարկատիրության բարձր մակարդակ,
- Մշակույթի փոխգործողության և համագործակցության,
- Ուժեղ տեղեկատվա-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների առկայություն, մասնավորապես բիզնեսում,
- Ուժեղ կառավարչական հմտություններ

Տեխնոլոգիաների քաղաքականության միջավայր (Նորարարության համապատասխան հիմնական կառուցվածքային տարրեր).

- Կրթություն և հմտություններ,
- Տեխնոլոգիական հետազոտությունների և առևտրայնացման ենթակառուցվածք,
- Թվային տեխնոլոգիաների ենթակառուցվածք և էկոհամակարգ:

Կարգավորող միջավայր (Կազմակերպությունների համար նորարարություն ընձեռող շրջանակ).

- Սրբակցային և բաց առևտրի ռեժիմ,
- Բիզնես սկսելու հեշտություն,
- Թափանցիկություն և օրենքի գերակայություն,
- Աջակցություն մրցունակ արտադրանքին,
- Թվային տնտեսության սահմանափակ կարգավորումներ,
- Պետական գնումներ՝ հիմնված կատարողների չափանիշների վրա,
- Պրո-ինովացիոն հարկային համակարգ:

Այսպիսով, տվյալների վրա հիմնված թվայնացման աշխարհում բոլոր ավանդական արդյունաբերական ձեռնարկությունները նոր վիրտուալ իրականության մեջ պետք է դառնան մեկ թվային էկոհամակարգի մաս, և նրանցից շատերը պահանջում են առանձին հարթակներ: Հարթակը, էկոհամակարգի հետ համատեղ օգտագործելով, հնարավորություն է ընձեռնվում բիզնեսը դարձնել նորարարության և աճի գեներատոր:

Ձեռներեցության թվայնացումը, ինչպես ցանկացած ոլորտի թվայնացման գործընթացն ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Վերջինս պարզելու համար կատարենք կազմակերպության գործունեության թվայնացման արտաքին և ներքին միջավայրերի SWOT վերլուծություն.

Կազմակերպության ներքին և արտաքին միջավայրի թվայնացման SWOT-վերլուծություն ¹

ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> • Արտադրական գործընթացների ճկունություն • Հեռավար աշխատանքային գործունեության հնարավորություն • Հնարավորություն հետևել աշխատանքներին ավտոմատ ձևաչափով, • Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն • Ֆինանսական տնտեսումներ • Ներառված տվյալների հավաստիության բարձր մակարդակ • Արտադրության գործընթացում արագ որոշումների ընդունում • Հնարավորություն է ընձեռնված ստեղծել թվային համակարգ, որը կհետևի բիզնեսում առկա բոլոր օղակների գործունեության որակին 	<ul style="list-style-type: none"> • Որակավորված մասնագետների պակաս • Թույլ ձևավորված իրավա-նորմատիվային բազա, • Ելքային տվյալների վատ որակ և արագ հնացում • Քիչ քանակությամբ որակավորված մասնագետներ • Կայուն և անվտանգ տեղեկատվական-հեռահաղորդակցության ենթակառուցվածքների ստեղծում մեծ ծավալով տվյալների մշակում և պահպանում
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ
<ul style="list-style-type: none"> • Նոր արտադրանքի ավելի արագ դուրս բերումը շուկա գործընթացի • Արտադրության արդյունավետության բարձրացում • Արտադրական գործընթացների առավել մեծ ճկունություն • Արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում 	<ul style="list-style-type: none"> • Ներդրված թվային և ինովացիոն տեխնոլոգիաների արագ բարոյական մաշվածություն, արագ վերազինելու անհրաժեշտություն • Տվյալների թվային պահպանումը ենթադրում է լրացուցիչ վտանգների առկայություն՝ կորուստ կամ կողոպուտ (այստեղ ի հայտ է գալիս կիրառական գույքությունը) • Ընդունվող որոշումների կախվածություն մեծաքանակ տվյալներից

Կազմակերպության արտաքին և ներքին միջավայրերի թվայնացման SWOT վերլուծություն կատարելուց հետո անհրաժեշտ է պարզել, թե կազմակերպության թվայնացման ինչպիսի՞ ինովացիոն ներուժ է առկա: Ինովացիոն ներուժ ասելով հասկանում ենք համակարգային ցուցանիշ, որը ցույց է տալիս կազմակերպության պատրաստվածության աստիճանը՝ նոր արտադրանքի թողարկման և իրացման մասով: Ներկայումս գոյություն ունեն ինովացիոն ներուժի գնահատման մի շարք մեթոդներ.

- Օ.Ի Միտյակովայի կողմից առաջարկված ցուցանիշի հաշվարկման վերլու-

¹ SWOT վերլուծությունը կատարվել է հեղինակի կողմից

ծական մեթոդ¹,

- Ս.Դ. Շեկովայի՝ Ինտեգրալ հաշվարկման մեթոդ՝ հիմնված լոգիստիկ ռեգրեսիոն մոդելի վրա²,
- Ա.Ա. Տրիֆիլովայի կողմից՝ ֆինանսա-տնտեսական վերլուծական մեթոդ³,
- Ռ.Ա. Ֆատխուտդինովի առաջարկած փորձագիտական գնահատականների մեթոդ⁴:

Բիզնես-գործընթացների արդյունավետության բարձրացման և կազմակերպության տեղեկատվական ներուժի ավելացման նպատակով անհրաժեշտ է շեշտադրում անել բիզնես-գործընթացների թվայնացման վրա: Մի շարք հետազոտողներ ինովացիոն ներուժին տալիս են ինտեգրալ համակարգային բնութագիր, որը կարող է չափվել ինովացիոն զգայունության, ակտիվության և մրցունակության գնահատման ճանապարհով: Առանձնացվում է ինովացիոն ներուժի չորս խումբ⁵.

1. Բնութագրում է կազմակերպությունում տեխնիկա-արտադրական ռեսուրսների առկայությամբ, որոնք անհրաժեշտ են ինովացիոն ներուժի համար
2. Բնութագրում է կազմակերպության ֆինանսա-կառավարչական ռեսուրսները
3. Բնութագրում է կազմակերպության ինովացիոն ակտիվության գործոնները (ինովացիաների նկատմամբ պատրաստվածություն և հնարավորության առկայություն)
4. Բնութագրում է կազմակերպության տեղեկատվական ապահովվածությունը:

Ինովացիոն ներուժի կախվածությունը նրա մաս կազմող մասնակի գործոններից հնարավորություն են տալիս առանձնացնել ցուցանիշներ, որոնք բնութագրում են կազմակերպության կարողությունը և պատրաստվածությունը ինովացիոն գործունեությանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր չորս խմբերը:

Ամփոփելով ներկայացված 4 խումբ գործոնները՝ առաջարկում ենք ինովացիոն ներուժի հաշվարկման ընդհանուր *ինտեգրալ ցուցանիշ*՝ հաշվի առնելով բոլոր հնարավոր գործոնները (տես բանաձև 1):

$$\text{ՑՈՒՑԱՆԻՇ}_{\text{ինտ}} = \sum_{i=1}^n W_i P_i \quad (1)^6,$$

¹ Митякова О.И. Оценка инновационного потенциала промышленного предприятия // Финансы и кредит. – 2004. – № 13(151)

² Щекотурова С.Д. Применение методики оценки эффективности инновационного развития предприятия на примере ПАО «Русполимет» // Финансы и кредит. – 2016. – № 47(719). – с. 27-46.

³ Трифилова А.А. Оценка эффективности инновационного развития предприятия. / Монография. – М.: Финансы и статистика, 2005. – 304 с

⁴ Фатхутдинов Р.А. Инновационный менеджмент. / Учебник для вузов. 6-е изд. – СПб.: Питер, 2008. 448 с

⁵ Захарова Е.В., Митякова О.И. Оценка инновационного потенциала предприятия с учетом цифровизации экономики // Вопросы инновационной экономики. – 2020. – Том 10. – № 3. – С. 1653-1666. doi: 10.18334/vines.10.3.110601

⁶ Բանաձևը դուրս է բերվել հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով վերը կատարված վերլուծությունը

որտեղ P_i –ն ինովացիոն ներուժի i -րդ ցուցանիշի նշանակությունն է, որը մանրամասն կներկայացվի հետագա հետազոտությանն ներքին մեջ:

W_i - կշռված գործակից է, որը արտացոլում է i -րդ գործակիցի նշանակությունը:

Կշիռների որոշման մեթոդաբանությունը ներկայացնենք՝ հիմք ընդունելով կատարված վերլուծությունը, որը հետագա հետազոտությունների ժամանակ կունենա ճշգրտում, մասնավորապես փորձագետների կարծիքների հավաքագրում և դրանց հաշվի առնում:

$$W_1P_1 + W_2P_2 + W_3P_3 + W_4P_4 = P_10.2 + P_20.2 + P_30.3 + P_40.3 \quad (2)$$

Վերը նշված մեթոդի օգտագործման արդյունքում հնարավոր է դառնում բացահայտել կոնկրետ տարրեր, որոնց համար անհարժեշտ է կիրառել կառավարչական ազդեցություն, որպեսզի ավելանա կազմակերպության ինովացիոն ներուժը:

Ինովացիոն ներուժի հաշվարկումը հնարավորություն է տալիս նաև որոշել կազմակերպության ներուժի «թույլ և ուժեղ» կողմերը, դուրս հանել կազմակերպության «նեղ» մասերը, որոնք նախկինում թաքնված են եղել և չեն երևացել կազմակերպության ղեկավարի համար:

Գիտական նորույթ: Ուսումնասիրվել է ինովացիոն և թվային տնտեսությունը գործարարության համատեքստում և մշակվել է կազմակերպության թվայնացման գործընթացի SWOT վերլուծություն և առաջարկվել է ինովացիոն ներուժի հաշվարկման ընդհանուր ինտեգրալ ցուցանիշ:

Եզրակացություն:

Եզրափակելով հետազոտությունը՝ նշենք, որ նորարարությունը նպաստում է տնտեսության մրցունակության աճին, ապահովում է տնտեսության կառուցվածքի օպտիմալացմանը: Ընդհանուր առմամբ, ակնհայտ է դառնում, որ տարածաշրջանում նորարարությունների կիրառումը կարող է դրականորեն ազդել նրա մրցունակության վրա: Այն կարող է ծառայել որպես ձեռնարկությունների և դրանց կառավարման համակարգերի զարգացման ցուցիչ, ինչպես նաև օգնել ռազմավարական խնդիրների լուծմանը¹:

Հետազոտության մեջ ներկայացվել է նորարարությունը, նորարարական և թվային տնտեսությունը մեկնաբանող օտարերկրյա հետազոտողների մոտեցումներ և ՀՀ նորարարական ու թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր: Պարզ է դարձել, որ ՀՆՀ 2019թ.-ից արձանագրել է դիրքի բարելավում, սակայն 2021 թվականին անկում է արձանագրվել զբաղեցնելով՝ 60-ից 69-րդ տեղը: Ամենաշատ անկում ունեցել է «գործարար միջավայրի զարգացվածության աստիճան» ենթահամաթիվը՝ 69-ից 98-րդը և վերջինս վատագույն դիրքն է բոլոր մյուս ցուցանիշների մեջ (աղյուսակ 1):

Հետազոտության մեջ ներկայացվել է X.0 արդյունաբերության հիմնական մաս հանդիսացող թվային ձեռնարկատիրության հնարավորինս արագ զարգաց-

¹ Даллакян С. А. «Инновационная экономика РА: перспективы, возможности, тенденции» Монография.- Ер.: Институт экономики им. М. Котаняна НАН РА, 2022., стр 167

մանն ուղղված թվային ձեռնարկության կառուցվածքում ինտվացիոն քաղաքականության բրգաձև մոտեցում, որտեղ առանձնացված հարթակներն են՝ *բիզնես միջավայր (Ֆինանսներ, ռազմավարություններ և հաստատություններ), տեխնոլոգիաների քաղաքականության միջավայր (Նորարարության համապատասխան հիմնական կառուցվածքային տարրեր), կարգավորող միջավայր (Կազմակերպությունների համար նորարարություն ընձեռող շրջանակ) (գծապատկեր 1): Հողվածում կատարված կազմակերպության ներքին և արտաքին միջավայրի թվայնացման SWOT-վերլուծությունից պարզ դարձավ, որ թվայնացման գործընթացի ուժեղ կողմերի և հնարավորությունների ճիշտ օգտագործմամբ հնարավոր է չեզոքացնել սպառնալիքները և թույլ կողմերը :*

Օգտագործված գրականության ցանկ

1. Դալլարյան Ս., Սարգսյան Ս., Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, «Թվային տնտեսությունը բնութագրող համաթվերի վերլուծությունը և թվային օրակարգը Հայաստանում», գիտաժողովի նյութեր, Եր., 2022թ. էջ 269-287
2. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 - Ս որոշման ՀՀ կառավարության ծրագիր, 70 էջ, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>
3. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183 - Լ որոշում, Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025թթ.. 27 էջ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>
4. Абдрахманова Г. И., Вишневский К. О, Гохберг Л. М. и др. Доклад к XX Апр. междунар. науч. конф. по проблемам развития экономики и общества/Науч. ред. Л. М. Гохберг. Москва, 9-12 апреля 2019 г.; Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». М.: Изд. дом Высшей школы экономики, 2019. 82 с
5. Гладилин А.В., Герасимов А.Н., Громов Е.И. Эконометрика. Москва, 2011. (3-е изд., стер.)
6. Гладилин В.А. Этапы инвестиционной привлекательности региона, как факторы развития территории. В сборнике: закономерности и тенденции развития науки в современном обществе. Сборник статей Международной научно-практической конференции: в 3-х частях. 2016. С. 39-41.
7. Гладилин В.А., Гладилин А.В. Регрессионное моделирование и прогнозирование в туристско-рекреационном комплексе региона. Инновационная наука. 2016. № 4-1. С. 117-120.
8. Даллакян С. А. «Инновационная экономика РА: перспективы, возможности, тенденции» Монография.- Ер.: Институт экономики им. М. Котаняна НАН РА, 2022.- 214 стр
9. Захарова Е.В., Митякова О.И. Оценка инновационного потенциала предприятия с учетом цифровизации экономики // Вопросы инновационной экономики. – 2020. – Том 10. – № 3. – С. 1653-1666. doi: 10.18334/vines.10.3.110601
10. Митякова О.И. Оценка инновационного потенциала промышленного предприятия // Финансы и кредит. – 2004. – № 13(151)

11. Трифилова А.А. Оценка эффективности инновационного развития предприятия. / Монография. – М.: Финансы и статистика, 2005. – 304 с
12. Фатхутдинов Р.А. Инновационный менеджмент. / Учебник для вузов. 6-е изд. – СПб.: Питер, 2008. 448 с
13. Щекотурова С.Д. Применение методики оценки эффективности инновационного развития предприятия на примере ПАО «Русполимет» // Финансы и кредит. – 2016. – № 47(719). – с. 27-46.
14. Dyatlov S.A. TSifrovaya ekonomika: novyye metodologicheskiye problemy issledovaniya. Sovremennyye tekhnologii: aktualnyye voprosy, dostizheniya i innovatsii, 2017, pp. 84–88.
15. Global Cybersecurity index, ITU 2020, 172 , Last Update 28.08.2022
https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf
16. Global innovation index 2021, Executive Summary, 14th edition, 28 p: Last Update 31.08.2022
https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2021_exec.pdf
17. Isaacson W. (2017). Innovators: how a group of hackers, geniuses and geeks made the digital revolution. Kyiv: Nash Format Publishing House. 560p.,
18. Kateryna K., Nataliia K., Oleksandr M.V., Fourth industrial revolution as a driver of the digitalization of production and urbanization, March 19, 2022, ISSN 2534 - 9228 (2022)VUZF Review,7(1), 177-191 p.
19. Kondratyev N.D., Yakovets Yu.V., Abalkin L.I. Bolshiye tsikly konyunktury i teoriya predvideniya. Moscow, 2002, 766 p
20. Kraus, N. M., Kraus, K. M., & Anvrusiak, N. O. (2020). Tsyfrovyyi kubichnyj prostir iak nova ekonomichna dopovnena realnist [Digital cubic space as new economic augmented reality]. Science and innovation, vol. 16, no. 3, pp. 96–111.
21. Nataliia K., , Oleksandr M., Innovative-digital entrepreneurship as key link of industry x.0 formations in the conditions of virtual reality, Vol. 7, No. 1, 2021 , <https://doi.org/10.30525/2256-0742/2021-7-1-47-56>,
22. Porter M. Competitive advantage: creating and sustaining superior performance. New York: Free Press; 1998. ISBN 0684841460.
23. Schumpeter J. “Business Cycles: A Theoretical, Historical and Statistical Analysis of the Capitalist Process” New York, 1939, vol. p.100-101.
24. Shantarenkova M. (2017). Notes on digital enterprise. Industry X.0 – “Itization” is endless! Part 2, December 12. (in Ukrainian).
25. United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, p 58 <https://surfshark.com/dql2021>. Last Update 24.08.2022

References

1. Dallaqyan S., Sargsyan S., Social-tntesakan zargacman ardi himnaxndirneriy' HH-own, «T'vayin tntesowt'yowny' bnowt'agrogh hamat'veri verlowc'owt'yowny' & t'vayin o'rakargy' hayastanowm», gitajhoghovi nyowt'er, Er., 2022t'. e'j 269-287

2. HH kar'avarowt'yan 2019 t'vakani p'etrvari 8-i N 65 - A oroshman HH kar'avarowt'yan c'ragir, 70 e'j, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>
3. HH kar'avarowt'yan 2021 t'vakani p'etrvari 11-i N 183 - L oroshowm, Hayastani t'vaynacman r'azmavarowt'yown 2021-2025t't'.. 27 e'j, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>
4. Abdrahmanova G. I., Vishnevskij K. O, Gohberg L. M. i dr. Doklad k XX Apr. mezhdunar. nauch. konf. po problemam razvitija jekonomiki i obshhestva/Nauch. red. L. M. Gohberg. Moskva, 9-12 aprelja 2019 g.; Nac. issled. un-t «Vysshaja shkola jekonomiki». M.: Izd. dom Vysshej shkoly jekonomiki, 2019. 82 s
5. Gladilin A.V., Gerasimov A.N., Gromov E.I. Jekonometrika. Moskva, 2011. (3-e izd., ster.)
6. Gladilin V.A. Jetapy investicionnoj privlekatel'nosti regiona, kak factory razvitija territorii. V sbornike: zakonomernosti i tendencii razvitija nauki v sovremennom obshhestve. Sbornik statej Mezhdunarodnoj nauchno-prakticheskoy konferencii: v 3-h chastjah. 2016. S. 39-41.
7. Gladilin V.A., Gladilin A.V. Regressionnoe modelirovanie i prognozirovanie v turistskorekrecionnom komplekse regiona. Innovacionnaja nauka. 2016. # 4-1. S. 117-120.
8. Dallakjan S. A. «Innovacionnaja jekonomika RA: perspektivy, vozmozhnosti, tendencii» Monografija.- Er.: Institut jekonomiki im. M. Kotanjana NAN RA, 2022.- 21, str
9. Zaharova E.V., Mitjakova O.I. Ocenka innovacionnogo potenciala predpriyatija s uchetom cifrovizacii jekonomiki // Voprosy innovacionnoj jekonomiki. – 2020. – Tom 10. – # 3. – S. 1653-1666. doi: 10.18334/vinec.10.3.110601
10. Mitjakova O.I. Ocenka innovacionnogo potenciala promyshlennogo predpriyatija // Finansy i kredit. – 2004. – # 13(151)Trifilova A.A. Ocenka jeffektivnosti innovacionnogo razvitija predpriyatija. / Monografija. – M.: Finansy i statistika, 2005. – 304 c
11. Fathutdinov R.A. Innovacionnyj menedzhment. / Uchebnik dlja vuzov. 6-e izd. – SPb.: Piter, 2008. 448 c
12. Shhekoturova S.D. Primenenie metodiki ocenki jeffektivnosti innovacionnogo razvitija predpriyatija na primere PAO «Ruspolimet» // Finansy i kredit. – 2016. – # 47(719). – c. 27-46.
13. Трифилова А.А. Оценка эффективности инновационного развития предприятия. / Монография. – М.: Финансы и статистика, 2005. – 304 с
14. Dyatlov S.A. TSifrovaya ekonomika: novyye metodologicheskiye problemy issledovaniya. Sovremennyye tekhnologii: aktualnyye voprosy, dostizheniya i innovatsii, 2017, pp. 84–88.
15. Global Cybersecurity index, ITU 2020, 172 , Last Update 28.08.2022 https://www.itu.int/dms_pub/itu-d/opb/str/D-STR-GCI.01-2021-PDF-E.pdf
16. Global innovation index 2021, Executive Summary, 14th edition, 28 p: Last Update 31.08.2022 https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2021_exec.pdf

17. Isaacson W. (2017). Innovators: how a group of hackers, geniuses and geeks made the digital revolution. Kyiv: Nash Format Publishing House. 560p.,
18. Kateryna K., Nataliia K., Oleksandr M.V., Fourth industrial revolution as a driver of the digitalization of production and urbanization, March 19, 2022, ISSN 2534 - 9228 (2022)VUZF Review,7(1), 177-191 p.
19. Kondratyev N.D., Yakovets Yu.V., Abalkin L.I. Bolshiye tsikly konyunktury i teoriya predvideniya. Moscow, 2002, 766 p
20. Kraus, N. M., Kraus, K. M., & Anvrusiak, N. O. (2020). Tsyfrovyyi kubichnyj prostir iak nova ekonomichna dopovnena realnist [Digital cubic space as new economic augmented reality]. Science and innovation, vol. 16, no. 3, pp. 96–111.
21. Nataliia K., Oleksandr M., Innovative-digital entrepreneurship as key link of industry x.0 formations in the conditions of virtual reality, Vol. 7, No. 1, 2021, <https://doi.org/10.30525/2256-0742/2021-7-1-47-56>,
22. Porter M. Competitive advantage: creating and sustaining superior performance. New York: Free Press; 1998. ISBN 0684841460.
23. Schumpeter J. "Business Cycles: A Theoretical, Historical and Statistical Analysis of the Capitalist Process" New York, 1939, vol. p.100-101.
24. Shantarenkova M. (2017). Notes on digital enterprise. Industry X.0 – "Itization" is endless! Part 2, December 12. (in Ukrainian).
25. United Nations e-government survey 2020 Department of Economic and Social, Affairs digital government in the decade of action for sustainable development, p 58 <https://surfshark.com/dql2021>, Last Update 24.08.2022

ԳՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Սվետլանա Արկադիի Դալլաքյան Սարգիս Հարությունի Սարգսյան

Համառոտագիր: *Հողվածի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ՀՀ կառավարության 2019թ. ծրագրի 7.1 և 7.2 կետերում ներկայացված է, որ Հայաստանը պետք է դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական և թվայնացված երկիր, որը հաշվի առնելով հողվածում շեշտադրում է արվել կազմակերպությունների ինովացիոն և թվային գործընթացները: Հողվածի նպատակն է ներկայացնել գործարարության զարգացման և մրցունակության ապահովման հնարավորություններն ինովացիոն տնտեսության համատեքստում, շեշտադրելով թվայնացման գործընթացները: Առաջադրված խնդիրներն են պարզաբանել «ինովացիոն տնտեսություն» հիմնադրույթը և վերլուծել այն բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր, ներկայացնել գործարարության մեջ ինովացիաների դրսևորումները՝ շեշտադրում անելով թվայնացման վրա՝ պարզաբանելով X.0 արդյունաբերությունը, կատարել կազմակերպության թվայնացման հնարավորությունների գնահատում SWOT վերլուծության միջոցով, ներկայացնել կազմակերպության ինովացիոն ներուժի գնահատման մոտեցում թվային*

տնտեսության համատեքստում: *Մեթոդաբանություն:* Հետազոտության մեջ կիրառվել են համընդհանուր գիտական մեթոդներ՝ համակարգային մոտեցման, համեմատական վերլուծության, գրաֆիկական, ինդուկցիայի և դեդուկցիայի, քանակական և այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս թվային և ինովացիոն տնտեսությունը բնութագրող ցուցանիշները և համաթվերը դիտարկել դինամիկայի մեջ, բացահայտել առաջացած հակասությունները և բնորոշ առանձնահատկությունները Հայաստանի տնտեսության համար: *Ստացված հիմնական արդյունքներ:* Վերլուծվել են ինովացիոն և թվային տնտեսությունը բնութագրող համաթվեր և ենթահամաթվեր, ներկայացվել է X.0 արդյունաբերության հիմնական մաս հանդիսացող թվային ձեռնարկատիրության հնարավորինս արագ զարգացմանն ուղղված թվային ձեռնարկության կառուցվածքում ինովացիոն քաղաքականության բրգաձև մոտեցում: Կատարվել է կազմակերպության ներքին և արտաքին միջավայրի թվայնացման SWOT-վերլուծություն և առանձնացվել է «ինովացիոն ներուժ» հասկացության տարբեր մեկնաբանումներ և առաջարկվել է վերջինիս հաշվարկման ընդհանուր *ինտեգրալ ցուցանիշ*՝ տալով բանաձևի տեսք (բանաձև 1): *Գիտական նորույթ:* Ուսումնասիրվել է ինովացիոն և թվային տնտեսությունը գործարարության համատեքստում և մշակվել է կազմակերպության թվայնացման գործընթացի SWOT վերլուծություն և առաջարկվել է ինովացիոն ներուժի հաշվարկման ընդհանուր ինտեգրալ ցուցանիշ: *Ստացված արդյունքի կիրառման հնարավորություն:* Ստացված արդյունքները կարող են կիրառել ՀՀ կառավարությունը, քաղաքականություն և ռազմավարություն մշակողները, ինչպես նաև ոլորտի հետազոտողները և անկախ փորձագետները:

Բանալի բառեր. տնտեսության թվայնացում, չորրորդ արդյունաբերական հեղափոխություն, X.0 արդյունաբերություն, արտադրության թվայնացում, թվային վերափոխում, ինովացիոն ներուժ, թվային հարթակ:

БИЗНЕС И ИННОВАЦИОННАЯ ЭКОНОМИКА

Светлана Аркадиевна Даллакян
Саргис Арутюнович Саргсян

Аннотация: *Актуальность статьи обусловлена тем, что в пунктах 7.1 и 7.2 программы 2019г. Правительства РА представлено, что Армения должна стать высокотехнологичной, индустриальной и цифровизированной страной и, учитывая этот факт, в статье главная цель направлена на инновационные и цифровые процессы организаций.*

Цель статьи – представить возможности развития бизнеса и обеспечения конкурентоспособности в контексте инновационной экономики с акцентом на процессы цифровизации. Выдвигаемые в исследовании задачи - уяснить основоположение «инновационная экономика» и проанализировать, характеризующие его индексы и субиндексы, представить проявления инноваций в бизнесе с акцентом на цифровизацию путем уточнения X.0 индустрии, оценить возможности циф-

ровизации организации посредством SWOT-анализа, представить подход к оценке инновационного потенциала организации в контексте цифровой экономики.

Методология. В исследовании использовались универсальные научные методы: логические, системного подхода, сравнительного анализа, графические, индукционно-дедуктивные, количественные и другие методы, позволяющие проследить в динамике показатели и индексы, характеризующие цифровую и инновационную экономику, выявить возникшие противоречия и характерные черты для экономики Армении. *Полученные основные результаты.* Проанализированы индексы и субиндексы, характеризующие инновационно-цифровую экономику, и *представлен* пирамидальный подход к инновационной политике в структуре цифрового предприятия, направленный на максимально быстрое развитие цифрового предпринимательства, являющегося основной частью X.0 индустрии. Проведен SWOT-анализ цифровизации внутренней и внешней среды организации и выделены различные трактовки понятия «инновационный потенциал» и предложен общий *интегральный показатель* для расчета последнего, дающий вид формулы (формула 1).

Научная новизна. Изучена инновационно-цифровая экономика в контексте бизнеса и разработан SWOT-анализ процесса цифровизации организации и предложен общий интегральный показатель для расчета инновационного потенциала.

Возможность применить полученный результат. Полученные результаты могут быть использованы Правительством РА, разрабатывающими политику и стратегию, а также исследователями и независимыми экспертами в этой сфере.

Ключевые слова: цифровизация экономики, четвертая промышленная революция, индустрия X.0, цифровизация производства, цифровая трансформация, инновационный потенциал, цифровая платформа.

BUSINESS AND INNOVATION ECONOMY

Svetlana Arkady Dallaqyan
Sargis Harutyun Sargsyan

Abstract. *The relevance of the Article is due to the fact that* in items 7.1 and 7.2 of the program of 2019 of the RA Government it is presented that Armenia should be made a high-tech, industrial and digitized country, so taking into account the mentioned fact the main purpose becomes the innovative and digital processes of organizations. *The purpose of the article is* to present the opportunities for business development and ensuring competitiveness in the context of the innovation economy, emphasizing digitalization processes. *The objectives set forth in the research* are the following: to clarify the basic foundation of the "innovation economy" and analyze the indexes and sub-indexes characterizing it, to present the manifestations of innovations in business with an emphasis on digitalization by clarifying the X.0 industry, to evaluate the digitalization opportunities of the organization through SWOT analysis, to

present approach to the evaluation of the organization's innovation potential in the context of the digital economy.

Methodology. The universal scientific methods were used in the research: a logical, systematic approach, comparative analysis, graphic, induction and deduction, quantitative and other methods, which make it possible to observe the indicators and indexes characterizing the digital and innovative economy in dynamics, to identify the contradictions and typical features for the economy of Armenia. *Main results obtained:* Indexes and subindexes characterizing the innovative and digital economy were analyzed, and a pyramidal approach to innovation policy in the structure of a digital enterprise aimed at the fastest possible development of digital enterprise, which is the main part of the X.0 industry, was presented. A SWOT analysis of the digitalization of the internal and external environment of the organization was carried out and different interpretations of the concept of "innovation potential" were distinguished and a general *integral index* for its calculation was recommended, giving the appearance of a formula (formula 1). *Scientific novelty.* The innovative and digital economy in the context of business was studied and SWOT analysis of the digitization process of the organization was developed and a general integral index for calculating the innovation potential was proposed. *Possibility to apply the obtained result.* The obtained results can be applied by the Government of RA, policy and strategy makers, as well as researchers and independent experts of the mentioned sphere.

Keywords: digitization of the economy, fourth industrial revolution, X.0 industry, digitization of production, digital transformation, innovation potential, digital platform.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՇՈՒՐՋ

Արմինե Գրիգորի Զախարյան

Նոյեմբեր 18.08.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս փուլում ինովացիոն գործունեության խթանումը հանդիսանում է ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման, նոր աշխատատեղերի ստեղծման, պետական բյուջեի եկամուտների ավելացման, ինչպես նաև արտահանման ուղղությունների ընդլայնման կարևորագույն նախապայմաններից մեկը: Ինովացիոն գործունեության ակտիվացումը, որպես կանոն, ենթադրում է մրցունակ կրթական համակարգի առկայություն: Վերջինս պահանջում է կրթության ոլորտի թվային փոխակերպում, ինչպես նաև գիտության, բիզնեսի և պետության փոխգործակցության ակտիվացում: Հատուկ ուշադրության է արժանի նաև կրթության թվային փոխակերպման խթանման հիմնախնդիրը: Այս համատեքստում հատկապես կարևորվում է ՀՀ-ում կրթության ոլորտի ֆինանսավորման հնարավորությունների և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր **հետազոտության թեմայի արդիականությունը:**

Հետազոտության նպատակն է կրթության ոլորտի թվային փոխակերպման հնարավորությունների ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներուժի արդյունավետ կիրառման և մրցունակության բարձրացման եղանակների բացահայտումը: **Հետազոտության խնդիրներն են** կրթության ոլորտի թվային փոխակերպման մեխանիզմների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության զարգացման հնարավոր ուղիների մշակումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության գրեթե բոլոր կարևորագույն ոլորտներում (տեղեկատվական տեխնոլոգիաներ, գյուղատնտեսություն, ռազմաարդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, զբոսաշրջություն և այլն) նկատվում է ինովացիոն զարգացման անհրաժեշտություն: Վերջինս մեծապես պայմանավորված է որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությամբ: Այս համատեքստում հատկապես կարևորվում է կրթության ոլորտի թվային փոխակերպումը: Նշված ոլորտներում զարգացած երկրների առաջավոր փորձը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության համար: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև ինովացիոն գործունեության և կրթության ոլորտի թվային փոխակերպման խթանման պետական քաղաքականության իրականացման փորձը՝ տնտեսության համաչափ և կայուն զարգացման շեշտադրմամբ:

Նշվածում մանրամասնորեն դիտարկվել են թվային տնտեսության զարգացման նախադրյալները, կրթության ոլորտի թվային փոխակերպման խնդիրները, կրթության և գիտության ոլորտում նորարարական տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը, ինչպես նաև կրթության թվային փոխակերպման հա-

մաշխարհային առաջատար փորձը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել կրթության ոլորտի թվային փոխակերպման խթանման պետական քաղաքականությանը և վերջինիս հետագա բարելավման հնարավորություններին, ինչպես նաև վերլուծվել են 2010–2021 թթ. կրթության ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերի ցուցանիշները: **Այնուամենայնիվ, ելնելով հողվածի ծավալների սահմանափակության հանգամանքից, ինչպես նաև դիտարկվող հիմնախնդրի կարևորությունից հետազոտությունը կշարունակվի նաև մեր հետագա աշխատանքներում:**

Գրականության ակնարկ

Տնտեսության և կրթության թվային փոխակերպման հիմնահարցերը դիտարկվել են մի շարք աշխատություններում: Մասնավորապես՝ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները ներկայացված են **Հ.Սարգսյանի, Ռ. Գևորգյանի, Կ. Մինասյանի, Ժ. Մխիթարյանի և Հ. Չաքարյանի** հետազոտություններում¹: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության արդի զարգացումները, ինչպես նաև Հայաստանի տնտեսությունը տեխնոլոգիական զարգացման նոր մակարդակ տեղափոխելու անհրաժեշտությունը՝ աշխատանքում ներկայացվել են թվային փոխակերպումների դինամիկայի գնահատման մեթոդաբանական մոտեցումները, որոնք կարող են ծառայել որպես տվյալ ոլորտում հանրային քաղաքականության իրականացման գիտամեթոդական հիմք: Հեղինակներն առաջարկվել են նաև ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների իրականացման ինստիտուցիոնալ կառուցակարգեր: Առանձնակի ուշադրություն է դարձվել թվայնացման միտումներին Եվրասիական տնտեսական միության տարածքում, ինչպես նաև թվայնացման ճյուղային կառուցակարգերի մշակմանը՝ ֆինանսական ոլորտի օրինակով:

Կրթության թվային փոխակերպման հիմնախնդիրները ուսումնասիրված են **Ա.Յու. Ուվարովի** հետազոտություններում², որտեղ հանրակրթության ոլորտի թվային փոխակերպման գաղափարը դիտարկվում է որպես հանրակրթության համակարգի զարգացման գործընթացների բնական բաղադրիչ: Այս զարգացումը բազմակողմ է և կարող է ներկայացվել հավանական սցենարների մի քանի խմբերով (ներառյալ հակասականները): Հեղինակն առանձնացրել է զարգացման մոդելային (իդեալական, տեսական) սցենարների երեք խումբ և ցույց տվել, որ թվային տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են յուրաքանչյուր խմբի սցենարներում, սակայն տեխնոլոգիական լուծումները կարող են տարբերվել: Աշխատանքում ներկայացվել են նաև որոշակի առաջարկություններ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի հետևել կրթության թվային փոխակերպման գործընթաց-

¹ Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Մինասյան Կ., Մխիթարյան Ժ., Չաքարյան Հ. ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները, Եր.: ԵՊՀ հրատ., 2020, 160 էջ:

² Уваров А. Ю. Цифровая трансформация и сценарии развития общего образования/ Национальный исследовательский университет «Высшая школа экономики», Институт образования. — М.: НИУ ВШЭ, Современная аналитика образования. № 16(46), 2020. — 108 с.

ների զարգացմանը և կառավարել դրանք:

Կրթության թվային փոխակերպման մեխանիզմները մանրամասնորեն ներկայացված են **Կ.Ի. Կորչակի, Վ.Վ. Կրասիլնիկովի և Վ.Ս. Տոխսկինի** հետազոտություններում¹, որտեղ դիտարկվել է սիներգիստական մոտեցման ներուժը՝ որպես նոր կրթական համակարգի հիմնարար սկզբունք: Աշխատանքում կրթության թվային փոխակերպումը սահմանվել է որպես կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների, դիդակտիկ նյութերի և դասավանդման մեթոդների համատեղ կիրառման միջոցով կրթական համակարգի որակական վերափոխման նպատակաուղղված և կառավարվող գործընթաց:

«Տեխնոլոգիաների և նորարարությունների 2021թ.» զեկույցում² հիմնավորված է, որ մոտ ապագայում տեղի են ունենալու խորքային և արագ տեխնոլոգիական փոփոխություններ, որոնք էապես կազդեն համաշխարհային շուկաների և մարդկանց կենսամակարդակի վրա: Բոլոր երկրները պետք է իրագործեն՝ գիտատեխնիկական և ինովացիոն հավասարակշռված քաղաքականություն՝ իրենց տնտեսական, սոցիալական և բնապահպանական զարգացման մակարդակներին համապատասխան, ինչը պահանջում է գիտության, տեխնիկայի և աշխատաշուկայի ներդաշնակության ապահովում:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մակրո և միկրո տնտեսագիտության, կառավարման, միջազգային տնտեսական հարաբերություններին առնչվող աշխատությունները, տնտեսության տարբեր ոլորտների զարգացման խթանման հիմնախնդիրները լուսաբանող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրապարակումները, գիտաժողովների հրապարակած նյութերը, դիտարկվող ոլորտների գործառնությունները և փոխհարաբերությունները կանոնակարգող նորմատիվ բնույթի իրավական ակտերը և այլն:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների մեթոդները:

Վերլուծություն

«Թվային տնտեսություն» եզրույթն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Դոն Տապսկոտը 1994 թվականին լույս տեսած իր «Թվային տնտեսություն» (Digital Economy: Promise and Peril in the Age of Networked Intelligence) գրքում: Մասնագիտական գրականությունում հաճախ կարելի է հանդիպել նաև այլ հարակից եզրույթների, այդ թվում՝ «նոր տնտեսություն», «ցանցային տնտեսություն», «հավելվածների տնտեսություն», «հետարդյունաբերական տնտեսություն»,

¹ Корчак К.И., Красильников В.В., Тоискин В.С. Современные подходы к понятию цифровой трансформации образования // Проблемы современного образования. 2022. № 1. С. 171–183. DOI: 10.31862/2218-8711-2022- 1-171-183.

² Technology and innovation report 2021, United nations conference on trade and development, https://unctad.org/system/files/official-document/tir2020_en.pdf

«համացանցային տնտեսություն» և այլն, որոնք ներկայանում են իբրև «թվային տնտեսության» հոմանիշներ¹:

Թվային տնտեսությանն անցումը, լինելով բոլոր երկրների համար քաղաքականության կարևոր առաջնահերթություն, հատկապես կարևոր է զարգացող երկրների համար²: Թվային տնտեսությունը վերջիններիս համար ծնում է և՛ լուրջ մարտահրավերներ, և՛ մեծ հնարավորություններ: Այդ երկրները կարող են նշանակալի տնտեսական օգուտներ քաղել թվային զարգացումից: Այսպես, թվային զարգացումը կարող է.

- Արտասահմանյան շուկաներն արտահանման համար առավել հասանելի դարձնել, այդ թվում՝ տեղական ընկերությունները և փոքր ու միջին ձեռնարկությունները գլոբալ արժեշրթաներին կապելու ճանապարհով:
- Ստեղծել կամ հասանելի դարձնել նոր շուկաներ գյուղատնտեսության, կրթության, առողջապահության և այլ ոլորտներում:
- Հնարավորություն ընձեռել կիրառելու նոր բիզնես-մոդելներ զարգացող երկրների ձեռներեցների և փոքր ու միջին ձեռնարկությունների համար³:

Կրթության ոլորտում թվային տեխնոլոգիան ինքնուրույն ուղղորդվող և համատեղ ուսման նոր ոլորտ է ի հայտ բերում: Մովորողների, ուսուցիչների և ծնողների միջև հարաբերությունները, ինչպես նաև ֆիզիկական ենթակառուցվածքի հնարավորությունները լրացվում են արդյունավետ ուսուցման համար ամբողջական և նպաստավոր միջավայր ստեղծելու համար: Կրկնվելու բնույթ կրող գործընթացներն ավտոմատացվում են, որպեսզի կրթող մասնագետները կենտրոնանան իրենց բուն աշխատանքի վրա⁴:

Թվային ուսուցման հայեցակարգը սկսել է ակտիվորեն ներմուծվել համաշխարհային կրթական համակարգ 1990թ.-ի վերջին: Գլոբալ կրթական տարածքում Կորեայի Հանրապետության կրթական համակարգը լավագույններից մեկն է աշխարհում, իսկ կորեացի ուսանողները՝ լավագույն եռյակում են: Կորեան առաջատար դիրք է զբաղեցնում որպես լայնաշերտ ինտերնետ և ձայնային հաղորդակցություն օգտագործող բարձր տեխնոլոգիական երկրներից մեկը: Երկրում թվայնացման ծրագրի իրականացման գործում առանցքային դերը պատկանում է պետությանը: Միաժամանակ, երկրի հաջողությունը պայ-

¹ Стрелкова И.А. Цифровая экономика: новые возможности и угрозы для развития мирового хозяйства, Экономика. Налоги. Право, №2, 2018 г., стр. 19, <http://elibr.ru/art2018/bv483.pdf/view>

² Корчак К.И., Красильников В.В., Тоискин В.С. Современные подходы к понятию цифровой трансформации образования // Проблемы современного образования. 2022. № 1. С. 171–183. DOI: 10.31862/2218-8711-2022- 1-171-183.

³ World Investment Report 2017. Investment and the Digital Economy, United Nations Conference on Trade and Development, Geneva, 2019, p. 156, https://unctad.org/system/files/official-document/wir2017_en.pdf

⁴ Մարգարյան Հ., Գևորգյան Ռ., Մինասյան Կ., Մխիթարյան Ժ., Զաքարյան Հ. ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները, Եր.: ԵՊՀ հրատ., 2020, էջ 25:

մանավորված է թվային սեփականաշնորհմամբ՝ մասնավոր խաղացողների ներգրավմամբ: Կորեայում **«Ապագայի դպրոցը»** (School of the Future)¹ դարձավ նորարարական նախագիծ, որի նպատակն էր դպրոցականներին սովորեցնել լինել հարմարվողական, փոփոխություններին և էլեկտրոնային ուսուցմանը պատրաստակամ, տեղեկատվական հսկայական հոսքերում արագ կողմնորոշվող և թվային տեխնոլոգիաների կիրառմանն ունակ: Այն դպրոցականներին հնարավորություն ընձեռեց ստանալ ինտերակտիվ կրթություն դպրոցի համակարգչային դասարաններում, օգտագործել մուլտիմեդիա գործիքներ հիմնական ուսումնական ծրագրերով ուսուցիչների կողմից նախապատրաստված նյութերի ստացման նպատակով, կիրառել էլեկտրոնային ուսուցման տարրեր, լսել այլ դպրոցների ուսուցիչների և համալսարանների դասախոսների հեռավար դասախոսությունները, օգտվել համացանցում ներկայացված տարբեր տեղեկատվական ռեսուրսներից (էլեկտրոնային գրադարաններ, ցուցահանդեսներ և այլն) և ստանալ հեռավար խորհրդատվություն²: Կորեական **«Խելացի դպրոցները»** (Smart schools)³ համակարգիչներով ամբողջապես հագեցված հանրակրթական ուսումնական հաստատություններ են, որոնք կազմակերպում են տեղեկատվական ռեսուրսների օգտագործման ուսուցում: Թվային լուծումները պետական մակարդակով ինտեգրելու համար հաստատվել են քաղաքականություններ և ռազմավարական ծրագրեր, որոնց պետք է հետևեն բոլոր ուսումնական հաստատությունները՝ դպրոցական կրթության բոլոր մակարդակներում: Կորեայի **«Խելացի կրթություն»** (Smart Education)⁴ նախագիծը հնարավորություն տվեց ավանդական թղթային դասագրքերից անցնել էլեկտրոնայինների՝ ստեղծելով ուսումնական նյութերի ցանցային նոր բազա:

ՀՀ Կառավարության ներկայիս ծրագրի առաջնահերթություններից է պետական կառավարման բոլոր ոլորտներում գիտելիքի և տեխնոլոգիաների հիման վրա կառավարման արդյունքով նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի ստացումը, հասանելի, մատչելի, հուսալի, անվտանգ, բարձրորակ և միջազգայնորեն մրցունակ ծառայությունների ապահովումը՝ ուղղված ՀՀ տնտեսության զարգացմանը և բնակչության կյանքի որակի բարձրացմանը: Այս նպատակի իրականացման համար նախատեսված քայլերից են⁵.

- ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերում թվային տնտեսության անընդհատ աճող պահանջների արդյունավետ փոխգործակցման և սպասարկման

¹ Jang D.-H., Yi P., Xing I.-S. Exploring the Effectiveness of Using Digital Textbooks in Student Education in South Korea: A Meta-Analysis. Asia-Pacific Education Researcher, 2015.

² Sung-Mi K. Smart education with the Keris scheme. [Electronic resource]. Access mode: <http://www.koreaitimes.com>

³ Seo I. Smart education in Korea: an initiative to create digital textbooks [Electronic resource]. Access mode: <http://www.koreaitimes.com>

⁴ Seo I. Smart education in Korea: an initiative to create digital textbooks [Electronic resource]. Access mode: <http://www.koreaitimes.com>

⁵ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ս որոշման:

համար արդի պահանջներին համապատասխան ենթակառուցվածքների ներդրումը՝ ապահովելով տեղեկատվական և կիբեռանվտանգություն, անձնական տվյալների պաշտպանություն, ինչպես նաև պետական մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման էլեկտրոնային հարթակների զարգացում,

- պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության թվայնացումը, միասնական և համապարփակ շտեմարանների ձևավորումը, պետական տեղեկատվական ծրագրերի համաժամանակեցումը, տեղեկատվական համակարգերի փոխադարձ համալրումը և ռացիոնալ օգտագործումը,
- նշված մարմինների կողմից թվային տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ծախսերի կրճատումը, ստացվող արդյունքի մաքսիմալացումը, քաղաքացիներին տրամադրվող տեղեկատվության և ծառայությունների որակի բարելավումը,
- միջազգային զարգացումներին համապատասխան՝ ՏՀՏ-ների ոլորտի պետական ստանդարտների մշակումը, ներդրումը և վերահսկողությունը՝ միջազգային մրցունակության և համագործակցության խթանման նպատակով,
- ՀՀ տարածքում լայնաշերտ, շարժական և ամրակցված գերարագ ինտերնետային կապի հասանելիության ապահովումը,
- միջազգային ծրագրերում մասնակցությամբ կիբեռանվտանգության, կապի և թվային ենթակառուցվածքների, նորագույն տեխնոլոգիաների զարգացման և տնտեսության տարբեր բնագավառներում օգտագործման ապահովումը:

Տեխնոլոգիական առաջընթացի ներկա փուլը, որն ուղեկցվում է զանգվածային բնույթ կրող թվայնացման¹ և ինֆորմատիզացիայի² գործընթացներով, ենթադրում է հասարակության անդամների կյանքի բոլոր ոլորտներում գլոբալ փոփոխությունների իրականացում: Հասարակությունը, որի զարգացման մակարդակը փոխկապակցված է տեխնոլոգիաների և աշխատանքի գործիքների հետ, ներկայումս գտնվում է սկզբունքորեն նոր տեխնոլոգիական պայմաններին հարմարվելու փուլում: Այս գործընթացը՝ համապատասխանում է արդյունաբերական հեղափոխության սահմանմանը՝ որպես տեխնոլոգիաներում և տեխնիկայում իրականացվող նորարարությունների ազդեցության ներքո հասարակության վերակառուցում: Արտադրության նորացման բարձր տեմպերը զգալիորեն մեծացնում են նորարարական տեխնոլոգիաների, ինչպես նաև կրթության ու գիտության՝ որպես այդ տեխնոլոգիաներն արտադրող ոլորտների դերն ու նշանակությունը:

¹ Юдина Т. Н. Цифровизация как тенденция современного развития экономики Российской Федерации: Pro y contra // Государственное и муниципальное управление. Ученые записки. 2017. № 3. С. 139–143.

² Лонский И. И. Информатизация и эволюция общества // Перспективы науки и образования. 2015. № 2 (14). С. 29–35.

Ակնհայտ է, որ նոր տեղեկատվական սկզբունքների և արտադրական տեխնոլոգիաների հիման վրա կառուցված հասարակությունը պետության և անհատի շահերից բխող անձի դաստիարակության և կրթության նոր համակարգի կարիք ունի: Այդ մասին է վկայում «21-րդ դարի նոր կրթական իրավասությունների» ի հայտ գալը, որոնք հիմնականում հասարակության մեջ նոր մասնագիտությունների հանդեպ առաջացած պահանջարկի արդյունք են¹:

Նշենք նաև, որ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ)՝ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՁ ՄԿՈԻ) ծրագրի շրջանակում 2022թ.-ի մայիսի 10-ին կազմակերպված «VR գործիքների փորձարկում մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում» աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են VR գործիքների կիրառության կարևորությունը ՄԿՈԻ ոլորտում, ինչպես նաև կարիերայի ուղղորդման ու մասնագիտական կողմնորոշման համար ժամանակակից տեխնոլոգիաների նշանակությունը և առավելությունները²: GIZ-ն արդեն երկար տարիներ աշխատում է մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում՝ փորձարկելով տարբեր ծրագրեր: Շուրջ հինգ տարի է, ինչ Հայաստանի քոլեջներում և ուսումնարաններում պիլոտավորվում է դուրս կրթական համակարգը, որի նպատակն է Հայաստանի տնտեսության և կրթության համար մեծ նշանակություն ունեցող ոլորտներում ներդնել նորարարական լուծումներ: Դուրս կրթությունը Հայաստանում 2017 թ.-ից փորձարկվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀՀ/GIZ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՁ ՄԿՈԻ) ծրագրի համագործակցության շրջանակում: Հայաստանում պիլոտավորվող այս համակարգն օգնում է զարգացնել ՄԿՈԻ շրջանավարտների մասնագիտական կարողությունները՝ ապահովելով նրանց մրցունակությունն աշխատաշուկայում: Դուրս համակարգի հիմքում դրված է աշխատանքի վրա հիմնված ուսուցման հայեցակարգը:

Կրթության ոլորտում նոր սերնդի տեղեկատվական գործիքների կիրառումը գնալով ավելի գերակշռող է դառնում: Համավարակը ստիպեց վերջին երկու տարիներին կրթության կազմակերպման գործընթացում տեխնոլոգիաների ներդրման թռիչքային զարգացում ապրել³: Դրանք պարտադրված քայլեր էին, որոնք միտված էին կրթության շարունակականության ապահովմանը: Այդ քայլերը միաժամանակ բացահայտեցին նոր ճանապարհներ և հնարավորություններ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարող են տեխնոլոգիաներն օգտագործվել կրթության և ուսուցման գործընթացում: Վիրտուալ իրականության գործիքներն

¹ Уваров А. Ю. Об описании компетенций XXI в. // Образовательная политика, 2014, № 4(66), с. 13–30.

² «VR գործիքների փորձարկում մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում» խորագրով աշխատաժողովի նյութեր, <https://escs.am/am/news/12473>

³ Անդրեասյան Ժ.Ա. Կրթության կազմակերպման գործընթացում տեխնոլոգիաների ներդրումը թռիչքային զարգացում է ապրել, <https://escs.am/am/news/12473>

անփոխարինելի են հատկապես ՄԿՈՒ ոլորտում, որտեղ էական նշանակություն ունեն սովորողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացումը: Վիրտուալ իրականության գործիքների կիրառմամբ էապես փոխվելու են նաև հաստատությունների հագեցվածության և ենթակառուցվածքների բազայի վերաբերյալ պատկերացումները: Այդ գործիքները թույլ կտան ֆիզիկական ենթակառուցվածքների պատկերացումներից անցում կատարել դեպի վիրտուալ ենթակառուցվածքներ»: Կարևոր է նաև, որ նոր գործիքը փորձարկվում է զբոսաշրջության ոլորտի մասնագիտությունների համար՝ հաշվի առնելով, որ այդ ճյուղը ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից է: Համավարակի ժամանակ բազմաթիվ մշակութային հաստատություններ ստեղծարար մոտեցում ցուցաբերեցին՝ վիրտուալ գործիքների շնորհիվ նորովի ներկայանալով այցելուին, որը վիրտուալ զբոսաշրջության իրագործում էր:

2. Asei Ito (2019) Digital China: A Fourth Industrial Revolution with Chinese Characteristics?, *Asia-Pacific Review*, 26:2, 50-75, DOI: 10.1080/13439006.2019.1691836;
3. Genia Kostka, Xuehua Zhang & Kyoung Shin (2019): Information, technology, and digitalization in China's environmental governance, *Journal of Environmental Planning and Management*, DOI: 10.1080/09640568.2019.1681386;
4. Ka Ho Mok & Dennis Leung (2012) Digitalisation, educational and social development in Greater China, *Globalisation, Societies and Education*, 10:3, 271-294, DOI: 10.1080/14767724.2012.710118;
5. Джан Л., Чен С. (2019) Цифровая экономика Китая: возможности и риски // Вестник международных организаций. Т. 14. № 2. С. 275–303 (на русском языке). DOI: 10.17323/1996-7845-2019-02-11.;
6. Жилина И.Ю., Перспективы цифровизации экономики Китая // Социальные и гуманитарные науки: Отечественная и зарубежная литература. Сер. 2, Экономика: Реферативный журнал. 2019. №1, С. 136-144;
7. Ковалев М. М. Китайский опыт развития цифровой экономики / М. М. Ковалев, ХэЯньхай // Цифровая трансформация. – 2020. – № 2 (11). – С. 16–25. <https://doi.org/10.38086/2522-9613-2020-2-16-25>;
8. Ярова Т.В., Опыт цифровизации в Китае и перспективы развития цифровой экономики в России на примере банковской отрасли // Социально-экономическое развитие и взаимодействие РФ и КНР, С. 517-523, <https://docplayer.com/220047619-Опыт-цифровизации-в-китае-и-перспективы-развития-цифровой-экономики-в-россии-на-примере-банковской-отрасли.html>;
9. Томайчук Л.В. Цифровизация экономики Китая: риски и возможности для общества // *ЕВРАЗИЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ: экономика, право, политика*. 2019; (3):31-36.;
10. ЮйХао, Развитие электронной торговли в Китае в контексте цифровизации мировой экономики // Научные публикации, Научно-производственный журнал, 5/ 2021, С. 44-47, http://vsbel.by/Portico/2021/5/120_%D0%AE%D0%B9%20%D0%A5%D0%B0%D0%BE.pdf ;
11. Цифровая трансформация промышленности Китая: опыт для ЕАЭС / Г. Г. Головенчик, Ван Юань; под общ. ред. М. М. Ковалёва. – Минск: Изд. центр БГУ, 2020. – 166 с.;
12. Цифровая трансформация Китая. Опыт преобразования инфраструктуры национальной экономики / МаХуатэн, Мэн Чжаоли, Ян Дели, ВанХуалей; Пер. с кит. — М.: Интеллектуальная литература, 2019. — 250 с.;

13. ЕЭК, McKinsey: Цифровой Китай: повышение конкурентоспособности за счет цифровых технологий // Обзор цифровой повестки в мире, 2017, с. 21-28.

References

1. Mahmood Ahmad, Abdul Majeed, Muhammad Asif Khan, Muhammad Sohaib & Khurram Shehzad (2021): Digital financial inclusion and economic growth: provincial data analysis of China, *China Economic Journal*, DOI: 10.1080/17538963.2021.1882064, p. 291-310;
2. Asei Ito (2019) Digital China: A Fourth Industrial Revolution with Chinese Characteristics?, *Asia-Pacific Review*, 26:2, 50-75, DOI: 10.1080/13439006.2019.1691836;
3. Genia Kostka, Xuehua Zhang & Kyoung Shin (2019): Information, technology, and digitalization in China's environmental governance, *Journal of Environmental Planning and Management*, DOI: 10.1080/09640568.2019.1681386;
4. Ka Ho Mok & Dennis Leung (2012) Digitalisation, educational and social development in Greater China, *Globalisation, Societies and Education*, 10:3, 271-294, DOI: 10.1080/14767724.2012.710118;
5. Dzhan L., Chen S. (2019) Цифровая экономика Китая: возможности и риски // *Vestnik mezhdunarodnykh organizacij*. Т. 14. № 2. С. 275–303 (на русском языке). DOI: 10.17323/1996-7845-2019-02-11.;
6. Zhilina I.YU., *Perspektivy cifrovizacii ekonomiki Kitaya // Social'nye i gumanitarnye nauki: Otechestvennaya i zarubezhnaya literatura*. Ser. 2, *Ekonomika: Referativnyj zhurnal*. 2019. №1, S. 136-144;
7. Kovalev M. M. *Kitajskij opyt razvitiya cifrovoj ekonomiki / M. M. Kovalev, He Yan'haj // Cifrovaya transformaciya*. – 2020. – № 2 (11). – S. 16–25. <https://doi.org/10.38086/2522-9613-2020-2-16-25>;
8. Yarovova T.V., *Opyt cifrovizacii v Kitae i perspektivy razvitiya cifrovoj ekonomiki v Rossii na primere bankovskoj otrasli // Social'no-ekonomicheskoe razvitie i vzaimodejstvie RF i KNR*, S. 517-523, <https://docplayer.com/220047619-Opyt-cifrovizacii-v-kitae-i-perspektivy-razvitiya-cifrovoy-ekonomiki-v-rossii-na-primere-bankovskoy-otrasli.html>;
9. Tomajchuk L.V. *Cifrovizaciya ekonomiki Kitaya: riski i vozможности dlya obshchestva // EVRAZIJSKAYA INTEGRACIYA: ekonomika, pravo, politika*. 2019;(3):31-36.;
10. YUjHao, *Razvitie elektronnoj trgovli v Kitae v kontekste cifrovizacii mirovoj ekonomiki // Nauchnye publikacii, Nauchno-proizvodstvennyj zhurnal*, 5/ 2021, S. 44-47, http://vsbel.by/Portico/2021/5/120_%D0%AE%D0%B9%20%D0%A5%D0%B0%D0%BE.pdf ;
11. *Cifrovaya transformaciya promyshlennosti Kitaya: opyt dlya EAES / G. G. Golovenchik, Van YUAN'*; pod obshch.red. M. M. Kovalyova. – Minsk: Izd. centr BGU, 2020. – 166 s.;

12. Cifrovaya transformaciya Kitaya. Opyt preobrazovaniya infrastruktury nacional'noj ekonomiki / MaHuaten, Men CHzhaoli, YAn Deli, VanHualej; Per. s kit. — M.: Intellektual'naya literatura, 2019. — 250 s.;
13. EEK, McKinsey: Cifrovoy Kitaj: povyshenie konkurentospobnosti za schet cifrovyyh tekhnologij // Obzor cifrovoy povestki v mire, 2017, s. 21-28.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ. ՉԻՆԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գևորգ Արամի Հարությունյան

Համառոտագիր: Չինաստանի կողմից իրականացվող թվայնացման ռազմավարությունը ազգային առանձնահատկությունների համատեքստում կարող է լավ օրինակ հանդիսանալ Հայաստանի տնտեսության թվայնացման համար, ինչով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հոդվածի նպատակն է Չինաստանի թվայնացման մոդելի հիմնական բաղադրիչները ուսումնասիրության արդյունքում առաջարկել այն ուղիները, որոնք կարող են կիրառվել ՀՀ տնտեսության թվայնացմանը գործընթացում:

Հետազոտական աշխատանքի հիմնական խնդիրներն են՝ Չինաստանի թվային զարգացման պատմության ուսումնասիրությունը, թվային ներդրման մակարդակի գնահատումը, Չինաստանի թվային տնտեսության առանձնահատկությունների վերլուծությունը և բացահայտումը, Հայաստանի թվային տնտեսությունը արդիականացնելու նպատակով համապատասխան ուղիների առաջարկելը՝ Չինաստանի փորձի հիման վրա:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են գիտական վերլուծության հետևյալ մեթոդները՝

- տեսական և մեթոդական (գիտական գրականության և հետազոտական հիմնախնդրի ընթացիկ կարգավորող դաշտի վերլուծություն);
- վերլուծական (բովանդակության վերլուծություն):

Արդյունքները: Չինաստանի տնտեսության, մասնավորապես արդյունաբերության թվային փոխակերպման փորձի վերլուծության արդյունքում մշակվել և առաջարկվել է Հայաստանի տնտեսության թվային զարգացմանն ուղղված ակտրիթ:

Գիտական նորույթը: Մշակվել են ՀՀ-ի և Չինաստանի միջև համագործակցության մեխանիզմներ՝ տնտեսության թվայնացման համատեքստում՝ մասնավորաբար արդյունաբերության թվայնացմանը առնչվող, ինչպես նաև Չինաստանի տնտեսության թվային վերափոխման հաջողված փորձի հիման վրա առաջարկվել է համապատասխան ակտրիթ այն ՀՀ-ում տեղայնացնելու ուղղությամբ:

Գործնական նշանակությունը: Ստացված արդյունքները կարող են կիրառվել թվային զարգացման ռազմավարության, Հայաստանի արդյունաբերական քաղաքականության մշակման, ինչպես նաև բիզնես գործընթացների թվայնացման գործընթացում:

Բանալի բառեր. թվային փոխակերպում, արտադրություն, արդյունաբերություն, Չինաստան, Հայաստան, էլեկտրոնային առևտուր, ֆինանսական տեխնոլոգիաներ

ЦИФРОВАЯ ТРАНСФОРМАЦИЯ ЭКОНОМИКИ: ОПЫТ КИТАЯ И ПУТИ ЕГО ПРИМЕНЕНИЯ В АРМЕНИИ

Геворг Арамович Арутюнян

Аннотация: Реализуемая Китаем стратегия цифровизации в контексте национальных особенностей может стать хорошим примером цифровизации экономики Армении, чем и обусловлена актуальность темы.

Целью статьи является определение ключевых элементов, формирующих модель цифровизации Китая, выявление возможных путей применения китайского опыта цифровизации экономики в Армении.

К основным задачам исследовательской работы относятся: изучение истории цифрового развития Китая, оценка уровня цифрового внедрения, анализ и выявление особенностей цифровой экономики Китая, предложение путей заимствования китайского опыта в целях модернизации цифровой экономики Армении.

Методология исследования. При подготовке исследовательской работы автор опирался на следующих методах научного анализа:

- теоретико-методологический (анализ научной литературы и актуальной нормативно-правовой базы по проблеме исследования);
- аналитический (контент-анализ).

Полученные результаты. В результате анализа опыта цифровой трансформации экономики Китая, в частности сферы промышленности, выявлены как уникальные так и общие аспекты цифрового развития. По результатам анализа представлен алгоритм заимствований для цифрового развития экономики Армении.

Научная новизна. Разработаны механизмы сотрудничества Армении и Китая в рамках цифровизации экономики, в частности по цифровой трансформации промышленности, а также предложен алгоритм заимствований для Армении исходя из успешного опыта Китая по цифровой трансформации экономики.

Практическая значимость. Полученные результаты могут быть использованы при разработке стратегии цифрового развития, промышленной политики Армении, а также при цифровизации бизнес-процессов.

Ключевые слова: цифровая трансформация, производство, промышленность, Китай, Армения, электронная торговля, финансовые технологии

DIGITAL TRANSFORMATION OF THE ECONOMY: THE CASE OF CHINA AND THE WAYS OF ITS APPLICATION IN ARMENIA

Gevorg Aram Harutyunyan

Abstract: An analysis of how China manages to successfully implement a digitalization strategy and combines it with national specifics is a good example in the digitalization of the Armenian economy, what determines the relevance of the topic.

The purpose of the article is to identify the key elements that form the digitalization model of China, to identify possible ways to apply the Chinese experience of digitalization on the economy of Armenia.

The main objectives of the research work include: studying the history of China's digital development, assessing the level of digital adoption, analyzing and identifying the features of China's digital economy, proposing appropriate ways to modernize Armenia's digital economy based on China's experience:

Research methodology. In preparing the research work, the author relied on the following methods of scientific analysis:

- theoretical and methodological (analysis of scientific literature and the current regulatory framework on the research problem);
- Analytical (content analysis).

Results. As a result of the analysis of the experience of the digital transformation of the Chinese economy, in particular industry, an algorithm aimed at the digital development of the Armenian economy was developed and proposed.

Scientific novelty. Mechanisms for cooperation between Armenia and China have been developed in the context of the digitalization of the economy, in particular, on the digital transformation of industry, as well as based on best practices of China's economy's digital transformation an algorithm for modernizing Armenia has been proposed.

Practical significance. The results obtained can be used in the development of a digital development strategy, industrial policy of Armenia, as well as in the digitalization of business processes.

Keywords: digital transformation, manufacturing, industry, China, Armenia, e-commerce, financial technologies.

ԿԱՆԱԶ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱԿԱԴԱՐՁ ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Մարո Հայկազի Դեթոլոճի

Հոդվածը ստացվել է՝ 04.10.22, ուղարկվել է գրախոսման՝ 06.10.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Բնական ռեսուրսների սահմանափակությունը, սպառման ցուցանիշների ավելացումը և շրջակա միջավայրի աղտոտվածությունը հիմք են հանդիսանում ներդնելու կանաչ գաղափարներ ամբողջ աշխարհում: Կանաչ մարքեթինգը արտադրանքի մշակումն ու առաջնորումն է՝ ուղղված ֆիզիկական միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելուն և դրա որակի բարելավմանը, ուստի անհրաժեշտ է նաև ձևավորել ու կատարելագործել հակադարձ լոգիստիկական համակարգեր՝ արտադրանքը և դրա օգտագործումից առաջացած թափոնները դարձնելով բազմակի օգտագործման ու վերամշակման ենթակա: Սրանով էլ պայմանավորված է **թեմայի արդիականությունը**:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել կանաչ մարքեթինգի և հակադարձ լոգիստիկայի նշանակությունն ու կարևորությունը, ՀՀ-ում այդ համակարգերի կիրառման հնարավորությունները և ուղիները, գնահատել առկա իրավիճակը և կատարել համապատասխան առաջարկություններ, որի համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել և բացահայտել կանաչ մարքեթինգի կիրառման հիմնական ուղղությունները և ռազմավարությունները,
- բացահայտել ՀՀ-ում կանաչ մարքեթինգի համատեքստում հակադարձ լոգիստիկայի կիրառման անհրաժեշտությունը, մասնավորապես, սննդաբյուրեղների արտադրության ոլորտում պլաստիկ և ապակյա տարաների օգտագործման հետ կապված:

Գրականության վերլուծություն

Գոյություն ունեն կանաչ մարքեթինգի վերաբերյալ տարբեր սահմանումներ: Այսպես, Ս. ՄակԴանիելը և Դ. Ռիլանդերը կանաչ մարքեթինգ հասկացությունն օգտագործել են՝ բնութագրելու համար շրջակա միջավայրի մասին հոգ տանող սպառողներին կողմնորոշված մարքեթինգային ռազմավարություն մշակելու մարքեթոլոգների ջանքերը:¹ Մեկ այլ սահմանման համաձայն՝ կանաչ մարքեթինգը սպառողների պահանջմունքների բավարարման գործընթաց է շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող ապրանքների և ծառայությունների առաջարկմամբ, ապրանքի կենսացիկլի բոլոր փուլերում՝ ստեղծված բնական ռեսուրսների հնարավոր նվազագույն ծավալների օգտագործմամբ:² Մարքե-

¹ McDaniel S. Strategic Green Marketing / S. McDaniel, D. Rylander. - The Journal of Consumer Marketing No. 10(3), 1999, p. 4-10.

² Хачатуров А.Е. Экологический маркетинг // Маркетинг в России и за рубежом № 4, 2000, с. 23

թինգի ամերիկյան ասոցիացիան, իր հերթին, կանաչ մարքեթինգը սահմանում է հետևյալ բնութագրերով.

- արտադրանքի էկոլոգիապես անվտանգ իրացում,
- շրջակա միջավայրի վրա նվազագույն բացասական ազդեցություն թողնող կամ շրջակա միջավայրի որակը բարելավող արտադրանքի մշակում,
- կազմակերպության էկոլոգիական հիմնախնդիրներով մտահոգվածությունը վկայող ապրանքի արտադրության, փաթեթավորման, առաջարժման և գովազդի կազմակերպում:¹

Մեկ այլ մեկնաբանությամբ կանաչ կամ էկոլոգիական մարքեթինգը իր մեջ ներառում է գործունեության բոլոր տեսակները, որոնք ստեղծում և հեշտացնում են ցանկացած փոխանակում՝ ուղղված մարդու պահանջմունքների և ցանկությունների բավարարմանը՝ բնական միջավայրի վրա նվազագույն վնասակար ազդեցությամբ:²

Մեթոդաբանությունը

Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական, համեմատական, որակական և քանակական վերլուծության մեթոդներ:

Վերլուծություն

Մեր մոլորակը բխվում է բազմաթիվ սպառնալիքների, ինչպիսիք են՝ օդի և ջրի աղտոտումը, սննդի թափոնները, պլաստիկ աղտոտումը և անտառահատումները: Գործարանների կողմից արտադրվող քիմիական նյութերը կարելի է գտնել ցանկացած վայրում: Մպառողների շրջանում աճում է էկոլոգիական իրազեկվածության մակարդակը, և մարդիկ ցանկանում են ձեռք բերել էկոլոգիապես մաքուր ապրանքներ՝ չնայած դրանց բարձր գներին:

Կանաչը թույլ է տալիս շահել սպառողների, հաճախորդների վստահությունն ու հավատարմությունը: Այն օգնում է.

- ✓ աչքի ընկնել աճող մրցակցային միջավայրում,
- ✓ նվազեցնել արտադրության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,
- ✓ խնայել էներգիան, նվազեցնել բնական ռեսուրսների օգտագործումը,
- ✓ արտադրել վերամշակվող արտադրանք,
- ✓ բարելավել սպառողների վստահությունը,
- ✓ ձեռք բերել նպատակային լսարանի նոր հատված,
- ✓ իրականացնել նորարարություններ,
- ✓ ստանալ ավելի բարձր եկամուտ:

Գոյություն ունեն կանաչ մարքեթինգի բազմաթիվ ռազմավարություններ, որոնց կիրառման միջոցով կարելի է ստեղծել կայուն բրենդ: Դրանցից են.

¹ Brand management in green marketing [Электронный ресурс] // American marketing association: официальный сайт. - Электрон.дан. - URL: <https://www.ama.org/Pages/default.aspx>

² Polonsky M.J. Reevaluating Green Marketing: A Strategic Approach / M.J. Polonsky, P.J. Rosenberger. - Business Horizons, 2001, p.2

➤ **Կայուն դիզայն.** Խոսքը ոչ միայն արտադրանքի փաթեթավորման վրա վերամշակման պատկերանշանի մասին է, այլ արտադրանքի ամբողջական կյանքի ցիկլի: Ընկերությունները պետք է վերահսկեն առաջացած թափոնների քանակը, արտադրանքի փաթեթավորումը և առաքումը:

➤ **Պատասխանատվություն.** Կանաչ մարքեթինգը աղտոտվածության մասին գիտակից դառնալն է: Անհրաժեշտ է վերանայել ընկերությունը էկոլոգիական և սոցիալական պատասխանատվության տեսանկյունից և ցույց տալ հաճախորդներին, որ դուք հոգում եք մեր մոլորակի, մասնավորապես, հասարակության առողջության և շրջակա միջավայրի աղտոտվածության մասին:

➤ **Կանաչ գնագոյացում.** Էկոլոգիապես մաքուր արտադրանքները սովորաբար ունեն բարձր արժեք՝ կայուն դիզայնի թանկացման պատճառով: Այնուամենայնիվ, գնորդները պատրաստ են վճարել դրանց համար, չնայած բարձր ծախսերին: Հետևաբար, եթե ընկերությունը բարձր գներ է սահմանում էկո արտադրանքի համար, անհրաժեշտ է ապահովել մանրամասն տեղեկատվություն՝ ապացուցելու համար, որ այդ ապրանքներն արժեն սահմանված բարձր գնին:

➤ **Կայուն փաթեթավորում.** Մեր մոլորակի աղտոտվածության թիվ մեկ պատճառը պլաստիկի չափից ավելի օգտագործումն է: “Greenpeace” կազմակերպության տվյալներով՝ 1950-ականներից ի վեր արտադրվել է 8,3 միլիարդ տոննա պլաստիկ, մինչդեռ միայն մոտ 9%-ն է վերամշակվել:¹ Մեր օրերում սպառողներն ավելի պատասխանատու են և փորձում են խուսափել պլաստիկ փաթեթավորումից: Հետևաբար ապրանքանիշի համար ցանկալի է ստեղծել վերամշակված կամ ոչ պլաստիկ փաթեթավորում:

Կազմակերպությունների համար կանաչ մարքեթինգի հիմնական գործառնություններն են.

- Կառավարել սպառողների ընտրությունը. տեղեկացնել սպառողներին, որ ընկերության արտադրանքը կամ ծառայությունները էկոլոգիապես մաքուր են: Շրջակա միջավայրը մշտապես աղտոտվում է, և հասարակությունն ավելի ու ավելի է գիտակցում այդ մասին: Այդ իսկ պատճառով, տեղեկատվությունն այն մասին, որ ընկերությունն օգտագործում է այս տեսակի մարքեթինգը, առաջնահերթ ընտրության խթան է սպառողներին՝ որպես ապրանքի մեջ ներառված արժեքի ներդրում:

- Ընկերության մարքեթինգային համալիրի վերակողմնորոշում. Տնտեսական և բնապահպանական նպատակների համապատասխանեցում այնպես, որ դրանք չհակասեն, այլ լրացնեն միմյանց և իրագործելի լինեն բիզնեսի համար:

- Բիզնեսի կազմակերպում. ընկերությունը հոգ է տանում այն բոլոր ռազմավարությունների մասին, որոնք կիրականացվեն ապրանքը կամ ծառայությունը շուկա դուրս բերելու ժամանակ՝ առանց շրջակա միջավայրին վնաս պատճառելու: ²

Կանաչ մարքեթինգի հիմնական ուղղություններն են.

¹ <https://www.greenpeace.org/international/>

² <https://ru.economy-pedia.com/11032539-green-marketing>

- Հետևել բնապահպանական օրենքներին,
- Ապրանքանիշի իմիջի բարելավում շուկայում և հասարակության մեջ,
- Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով աղտոտիչների առաջացման նկատմամբ վերահսկողության ուժեղացում,
- Սպառողների կարիքների ու պահանջմունքների բավարարում՝ միաժամանակ չաղտոտելով շրջակա միջավայրը:

Բազմաթիվ հայտնի կազմակերպություններ փորձում են առավելագույնս բավարարել իրենց հաճախորդների ցանկությունները և սկսել են նման ապրանքների արտադրությունը: Կանաչ մարքեթինգը դրական ազդեցություն ունի մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վիճակի վրա: Մարքեթինգի այս տեսակը ներառում է բիզնեսի բոլոր փուլերը՝ փաթեթավորումից մինչև հասարակայնության հետ կապեր:

Ստեղծելով էկոլոգիապես մաքուր ապրանքներ՝ ընկերությունը ցուցաբերում է կայուն զարգացման և սոցիալական պատասխանատվության սկզբունքներին հավատարմություն: Այն օգնում է կազմակերպության հեղինակությանը: Երբ ընկերություններն արտադրում են էկոլոգիապես մաքուր արտադրանք, կանաչ մարքեթինգը կարող է օգտագործվել գովազդային արշավներում և ցույց տալ, որ ընկերությունն օգնում է շրջակա միջավայրին:

Չնայած երկարաժամկետ հեռանկարում կանաչ մարքեթինգի ռազմավարության կիրառումը կարող է խնայել գումար փաթեթավորման և էներգիայի սպառման վրա, շատ ընկերություններ չեն ցանկանում այն կիրառել, քանի որ նախնական ծախսերը մեծ են:

Ապրանքի էկոլոգիապես մաքուր վաճառքը չի աշխատի, եթե դա իրականությանը չի համապատասխանում: Գոյություն ունեն կանաչ մարքեթինգի կանոններ և իրավական չափանիշներ, որոնց պետք է համապատասխանի ընկերության գործունեությունը և ապրանքը: Հակառակ դեպքում դա կլինի ոչ թե կանաչ մարքեթինգ, այլ «կանաչ լվացում» (Greenwashing) կամ «կանաչ քողարկում», որը միջոց է ապրանքը գովազդելու «կանաչ» անվան տակ: «Կանաչ լվացումը» (Greenwashing) տեղի է ունենում, երբ ընկերությունը բնապահպանական պահանջ է ներկայացնում կազմակերպության գործունեությանը, որը նպատակ ունի խթանել շրջակա միջավայրի վրա ազդեցության զգացումը, որն իրականում գոյություն չունի:¹ Ըստ էության, «կանաչ լվացումը» կեղծ գովազդ է: Այս մոտեցումը, ի վերջո, կվնասի ընկերության հեղինակությանը, քանի որ սպառողները ինչ-որ կերպ կհասկանան, որ ընկերության արտադրանքն այնքան էլ էկոլոգիապես մաքուր չէ, որքան գովազդվում է: Համոզվելու համար, որ ապրանքը իսկապես «կանաչ» է, անհրաժեշտ է փաթեթավորման վրա փնտրել իրական վկայականների ցուցումներ: Եթե կազմակերպությունները ցանկանում են խթանել էկոլոգիական կամ կանաչ մարքեթինգի սկզբունքները, ապա պետք է անցնեն հատուկ սերտիֆիկացում, որպեսզի կարողանան հատուկ պիտակ տեղադրել

¹ <https://www.techtarget.com/whatis/definition/greenwashing>

արտադրանքի և կայքի վրա:

Երբ գնորդները մտնում են մանրածախ առևտրի օբյեկտ (խանութ, սուպերմարկետ և այլն)՝ ապրանքներ գնելու, նրանց հետաքրքրում են հիմնականում հետևյալ հարցերը.

- ի՞նչ արժե ապրանքը,
- կան արդյո՞ք հատուկ առաջարկներ:

Սակայն վերջին շրջանում գնորդները լրացուցիչ հարցեր են տալիս իրենց գնումների վերաբերյալ.

- արդյո՞ք արտադրանքը էկոլոգիապես մաքուր է,
- արդյո՞ք արտադրանքն օրգանական է,
- արժե արդյո՞ք տվյալ ապրանքի համար լրացուցիչ/ավելի թանկ վճարել:

Սննդարդյունաբերության ոլորտում էկոլոգիական մոտեցումը ներկայումս կարևոր առաջնահերթություն է: Կանաչ մարքեթինգի կիրառման համատեքստում կարող ենք փաստել, որ սննդարդյունաբերության մեջ օգտագործվող պլաստիկ տարաները (օրինակ՝ շշերը) և տոպրակները, դարձել են խնդիր ամբողջ հանրապետության համար: Կրկնակի օգտագործման ենթակա չլինելով՝ դրանք դառնում են կենցաղային աղբ և աղտոտում շրջակայքը: Նույնը կարող ենք փաստել նաև ապակյա տարաների համար: Մինչդեռ դրանց կազմակերպված հավաքումը և վերամշակումը շահեկան է ոչ միայն շրջակա միջավայրի աղտոտվածության կրճատման առումով, այլև տնտեսապես: Սակայն պոլիէթիլենային տարաների վերամշակման ու ՊԷՏ (PET) ստանդարտի շշերի վերարտադրման, ինչպես նաև ապակյա դատարկ տարաների հետ վերադարձի մեխանիզմները միայն մասամբ են գործածելի Հայաստանում, ուստի անհրաժեշտ է հիմնախնդրի հետ կապված գտնել արդյունավետ լուծման ուղիներ:

Պլաստիկ թափոնը, լինի գետում, օվկիանոսում, թե ցամաքում՝ դարերով կարող է պահպանվել և եթե ներկայիս միտումները շարունակվեն, ապա 2050թ. օվկիանոսները կարող են պարունակել ավելի շատ պլաստիկ, քան ձուկ: Պլաստիկ առարկաներից շատերը ամբողջությամբ չբայթայվելու արդյունքում գնալով փոքրանում են և հաճախ սննդի հետ յուրացվում գյուղատնտեսական կենդանիների և ձկների կողմից: Ներթափանցելով ջրատար համակարգ՝ պլաստիկ թափոնները և հատկապես պլաստիկ տոպրակները բարձրացնում են վարակիչ հիվանդությունների տարածման հավանականությունը: Բարեբախտաբար աշխարհն արդեն հասցեագրել է այդ մարտահրավերը և կառավարությունները սկսել են գործել այդ ուղղությամբ:

Ներկայումս ՀՀ-ում կանաչ մարքեթինգը չի հանդիսանում ուժեղ շուկայական միտում՝ հաշվի առնելով ՀՀ-ում դրա ներդրման համեմատաբար կարճ պատմությունը՝ համեմատած ԱՄՆ-ում և Եվրոպայում կանաչ մարքեթինգի մոտ 30 տարվա զարգացման ժամանակահատվածը:

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N65-Ա որոշմամբ որպես շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություն ամրագրված է նաև մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության

աստիճանական կրճատումը և արգելումը, որի կատարումն ապահովելու նպատակով՝ գործընթացի առաջին փուլում, որպես թիրախային խումբ, ընտրվել են պոլիէթիլենային տոպրակներն ու պարկերը:¹

Հանրապետությունում առևտրի և սպասարկման ոլորտներում պոլիէթիլենային պարկերի և տոպրակների լայն կիրառումը հանգեցրել է բնապահպանական խնդիրների առաջացման: Շրջակա միջավայր արտանետված պոլիէթիլենային փաթեթները երկար ժամանակ պահպանվում են և չեն ենթարկվում կենսաբանական քայքայման, որի հետևանքով դրանք առաջացնում են կայուն աղտոտվածություն: Թաղանթի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակների օգտագործման միջին ժամանակահատվածը 10-15 րոպե է, իսկ բնության մեջ դրա քայքայման համար անհրաժեշտ է ավելի քան 400 տարի: Միջազգային գիտահետազոտական կառույցների կողմից արդեն իսկ հրապարակվել են տվյալներ, որոնք փաստում են միկրոպլաստիկի առկայությունը ոչ միայն ջրային և հողային ռեսուրսներում, այլ նաև կենդանի օրգանիզմներում և սննդամթերքի մեջ: Օգտագործված պլաստիկ արտադրանքով, այդ թվում նաև պոլիէթիլենային փաթեթներով և դրանց մնացորդներով աղտոտված են Հայաստանի Հանրապետության ջրային տարածքները, հանգստավայրերին և զբոսաշրջության վայրերին կից տարածքները: Ըստ ԵԱՀԿ-ի գնահատականի՝ պլաստիկ տարաները, շէրը և տոպրակները հանդիսանում են Հայաստանում ջրերի հիմնական աղտոտիչները:² Առկա վիճակը պայմանավորված է նաև հասարակության մոտ բնապահպանական մշակույթի անբավարար ձևավորմամբ, ուստի նախատեսվում է տնտեսական լծակների միջոցով փոխել սպառողի վարքագիծը, ինչը սպառողին կստիպի օգտագործել այլընտրանքային (շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանման տեսանկյունից անվտանգ), բազմակի օգտագործման պարկեր և տոպրակներ: Խնդրի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շուրջ 120 երկիր արդեն իսկ ընդունել են ազգային իրավական կարգավորիչ միջոցներ՝ պլաստիկ թափոնների կառավարման, մասնավորապես, դրանց նվազեցմանը նպաստող տնտեսական գործիքների (բնապահպանական հարկեր, վճարներ, նվազագույն գնի սահմանում և այլն) կիրառմամբ: Հետևաբար, նպատակահարմար է մանրածախ առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից տվյալ ապրանքների տրամադրման արգելք:

ՀՀ Ազգային ժողովը 2020թ. ապրիլի 17-ին ընդունել է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, համաձայն որի 2022թ. հունվարի 1-ից արգելվում է առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, այդ թվում՝ շրջիկ առևտրի կետերում մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման և երկրոր-

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=128281>

² <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11303&Reading=0>

դային հումքից արտադրվածների) վաճառքը և իրացումը: Ներկայումս խանութներում 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների մանրածախ վաճառքի գինը կազմում է 50 դրամ, սակայն ՀՀ մանրածախ առևտրի կետերի ուսումնասիրությունների արդյունքում կարելի է փաստել հետևյալը. խանութներում դեռևս վաճառվում են մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակներ, սակայն արդեն ոչ թե 10-20, այլ 40-50 դրամով, որն, իհարկե, լրացուցիչ եկամուտ ստանալու և օրենքի կիրառման նկատմամբ ոչ բավարար վերահսկողության արդյունք է:

Էկոլոգիական խնդիր է նաև պլաստիկ տարաների (շշերի) օգտագործումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պլաստիկ թափոնների միայն 12%-ն է ներկայումս վերաօգտագործվում կամ վերամշակվում, այն պարագայում, երբ զարգացած երկրներում վերամշակման կամ երկրորդական օգտագործման է ենթարկվում թափոնների առավելագույն մասը, մասնավորապես, Մեծ Բրիտանիայում՝ 70%-ը, Գերմանիայում՝ 80-85%-ը, Շվեդիայում՝ 90-95%-ը:¹

Այս համատեքստում կարևոր է հակադարձ լոգիստիկայի գործուն մեխանիզմների մշակումը և արդյունավետ կիրառումը, մասնավորապես, սննդարդյունաբերության ոլորտում:² Հակադարձ լոգիստիկան վերաբերում է արտադրանքի և նյութերի կրկնակի օգտագործման հետ կապված բոլոր գործողություններին: Ըստ լոգիստիկայի կառավարման խորհրդի (Council of Logistics Management, CLM) սահմանման՝ հակադարձ լոգիստիկան հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, պատրաստի արտադրանքի, սպասարկման և դրանց հետ կապված տեղեկատվության պլանավորման, իրացման և արդյունավետ վերահսկողության գործընթաց է սպառման կետից մինչև ծագման կետ՝ նպատակ ունենալով ինքնարժեքի վերադարձի կամ ճիշտ ուտիլիզացիայի:³ Սովորաբար լոգիստիկան պատասխանատու է ապրանքը հաճախորդին հասցնելու համար: Հակադարձ լոգիստիկայի դեպքում ապրանքն իրականացնում է առնվազն մեկ քայլ հետ մատակարարումների շղթայով: Օրինակ՝ հաճախորդը կարող է վերադարձնել ապրանքը արտադրողին կամ վաճառողին: Հակադարձ լոգիստիկան կարող է իր մեջ ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ ապրանքների ավելցուկների կրկնակի օգտագործումը, ապրանքների վերադարձը մատակարարներին կամ փաթեթավորման վերականգնումը (օրինակ՝ ապակյա տարաների): Բազմակի օգտագործման փաթեթավորման համակարգի համար պահանջվում է հակադարձ լոգիստիկայի արդյունավետ կիրառում, օրինակ՝ ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների բազմակի օգտագործման տարաները և

¹ Thomas Hundertmark, Mirjam Mayer, Chris McNally, Theo Jan Simons, and Christof Witte, How plastics waste recycling could transform the chemical industry. Artcile, December, 2018

² Մ. Դեթլոֆֆ, Պլաստիկ թափոնների վերամշակման լոգիստիկ շղթայի ձևավորման ուղիները ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, «Հետազոտական կարողությունների զարգացում» միջազգային գիտաժողով (18 հունիսի, 2021), գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2021, էջ 227-236 https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/hetazotakan_karoxutyunneri_zargacum.pdf

³ <https://cscmp.org/>

այլն, որը, սակայն, ՀՀ-ում թերի է իրականացվում: Այսպես, սննդամթերքի վաճառքով զբաղվող մանրածախ առևտրի կազմակերպություններում վաճառվող բազմակի օգտագործման ապակյա տարաներով ըմպելիքների դատարկ տարաները հիմնականում վերադարձման ենթակա չեն, քանի որ մանրածախ առևտրականները հրաժարվում են հետ ընդունել դրանք, ուստի օգտագործված դատարկ ապակյա տարաները հիմնականում հայտնվում են աղբամանում, իսկ քանի որ աղբի տեսակավորման աղբամանները ՀՀ ում կամ բացակայում են, կամ էլ շատ հազվադեպ կարելի է հանդիպել, ուստի ապակյա տարաները հայտնվում են ընդհանուր աղբամաններում, կամ էլ որոշ դեպքերում՝ կոտրվում փողոցներում: Բացառություն են կազմում հասարակական սննդի օբյեկտները, որտեղ օգտագործված դատարկ տարաները հավաքվում են և վերադարձվում մատակարարին:

Դատարկ ապակյա շշերի ընդունման գործընթացն իրականացվում է հիմնականում դրանց ընդունմամբ զբաղվող մարդկանց, ձեռներեցների միջոցով: Մակայն հասարակությունում առկա կարծրատիպի համաձայն՝ շիշ հանձնելու ճանապարհով ներկայումս վաստակում կամ գոյատևում են գործազուրկ շատ քաղաքացիներ, ովքեր շշերը հավաքում են հիմնականում աղբարկղերից: Դատարկ ապակյա շշերի ընդունման կետերում ընդունվում են այն շշերը, որոնք գործարանների կողմից հետ են ընդունվում, այսինքն՝ քաղաքացին շիշը վաճառում է շշահանձնման կետին, որոնք էլ վաճառում են գործարաններին: Ներկայիս իրավիճակը կարելի է փոխել՝ կիրառելով հակադարձ լոգիստիկայի գործուն մեխանիզմներ, որոնք իրենց արդյունավետ կիրառությունն են գտել մի շարք եվրոպական երկրներում: Օրինակ՝ գերմանական փաթեթավորման օրենքը (VerpackG) ներդրել է փաթեթավորման եվրոպական քաղաքականությունը (94/62/EG) գերմանական օրենսդրություն: Այն կարգավորում է փաթեթավորման շուկայահանումը, ինչպես նաև փաթեթավորման թափոնների վերադարձը և բարձրորակ վերամշակումը: Օրենքը 2019 թվականին փոխարինել է Փաթեթավորման վերաբերյալ գործող հրամանագրին (VerpackV) և փոփոխվել 2021 թվականին: VerpackG2-ը գործում է 2021 թվականի հուլիսի 3-ից և միայն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:¹ Ըստ նշված օրենքի՝ մանրածախ առևտրով զբաղվող այն կազմակերպությունները, որոնք վաճառում են պլաստիկ և ապակյա շշերով ապրանքներ, պարտավոր են կազմակերպել դատարկ պլաստիկ և ապակե շշերի հետզման գործընթացը տեղում, որի համար խանութներում հիմնականում տեղադրված են հատուկ ավտոմատ սարքավորումներ:² Իսկ հետ ընդունված դատարկ շշերը վաճառվում են դրանց վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններին: Ուստի առաջարկվում է, ելնելով կանաչ մարքեթինգի սկզբունքներից, ՀՀ-ում ներդնել հակադարձ լոգիստիկայի գործուն մեխանիզմներ՝ գործընթացը կարգավորելով համապատասխան օրենքով: Մասնավորապես, Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում կատարել լրացում՝ հատուկ

¹ <https://www.verpackungsgesetz.com/>

² <https://www.buzer.de/gesetz/3971/index.htm>

հողվածներով կարգավորելով պլաստիկ և ապակյա դատարկ շշերի հետ ընդունման (հետզնման) գործընթացը խմիչքների առևտրով զբաղվող մանրածախ առևտրի կազմակերպություններում, որտեղից էլ հետ ընդունված դատարկ պլաստիկ տարաները կգնեն պլաստիկի վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունները, իսկ ապակյա շշերը՝ արտադրող կազմակերպությունները: Դրա արդյունքում կշահեն և գնորդները, և վերամշակող կազմակերպությունները, և շրջակա միջավայրը:

Գիտական նորույթը

Կանաչ մարքեթինգի կիրառման համատեքստում առաջարկվել է ներդնել հակադարձ լոգիստիկայի գործուն մեխանիզմներ՝ Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում կատարելով լրացում:

Եզրակացություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանաչ մարքեթինգի կիրառումը 21-րդ դարի հրամայականն է, որի սկզբունքներն արդեն կիրառվում են զարգացած երկրներում՝ համապատասխան օրենքներով, հետևաբար, զարգացող երկրները, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը, պետք է համապատասխան քաղաքականություն իրականացնեն կանաչ մարքեթինգի կիրառման և զարգացման ուղղությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Դեթլոֆֆ, Պլաստիկ թափոնների վերամշակման լոգիստիկ շղթայի ձևավորման ուղիները ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, «Հետազոտական կարողությունների զարգացում» միջազգային գիտաժողով (18 հունիսի, 2021), գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2021, 261 էջ, https://www.isec.am/images/gitakan_hrapa_rakumner/hetazotakan_karoxutyunneri_zargacum.pdf
2. Хачатуров А.Е. Экологический маркетинг // Маркетинг в России и за рубежом № 4., 2000, с. 23 [Hachaturov A.E. Jekologicheskij marketing // Marketing v Rossii i za rubezhom # 4., 2000, s. 23]
3. Brand management in green marketing [Электронный ресурс] // American marketing association: официальный сайт. - Электрон.дан. - URL: <https://www.ama.org/Pages/default.aspx>
4. McDaniel S. Strategic Green Marketing / S. McDaniel, D. Rylander. - The Journal of Consumer Marketing No. 10(3), 1999, p. 4-10
5. Polonsky M.J. Reevaluating Green Marketing: A Strategic Approach / M.J. Polonsky, P.J. Rosenberger. - Business Horizons, 2001, p. 2
6. Thomas Hundertmark, Mirjam Mayer, Chris McNally, Theo Jan Simons, and Christof Witte, How plastics waste recycling could transform the chemical industry. Article, December, 2018
7. <https://www.greenpeace.org/international/>
8. <https://ru.economy-pedia.com/11032539-green-marketing>
9. <https://www.techtarget.com/whatis/definition/greenwashing>
10. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=128281>

11. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11303&Reading=0>
12. <https://cscmp.org/>
13. <https://www.verpackungsgesetz.com/>
14. <https://www.buzer.de/gesetz/3971/index.htm>

References

1. M. Det'loff, Plastik t'ap'onneri veramshakman logistik shght'ayi d'avorman owghinery' HH-owm, HH GAA GKMK, «Hetazotakan karoghowt'yownneri zargacowm» mijazgayin gitajhoghov (18 hownisi, 2021), gitakan hodvac'neri jhoghovac'ow, Er&an 2021, 261 e'j, https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/hetazotakan_karoxutyunneri_zargacum.pdf
2. Hachaturov A.E. Jekologicheskij marketing // Marketing v Rossii i za rubezhom # 4., 2000, s. 23
3. Brand management in green marketing [Jelektronnyj resurs] // American marketing association: oficial'nyj sajt. - Jelektron.dan. - URL: <https://vvv.ama.org/Pages/default.aspx>
4. McDaniel S. Strategic Green Marketing / S. McDaniel, D. Rylander. - The Journal of Consumer Marketing No. 10(3), 1999, p. 4-10
5. Polonsky M.J. Reevaluating Green Marketing: A Strategic Approach / M.J. Polonsky, P.J. Rosenberger. - Business Horizons, 2001, p. 2
6. Thomas Hundertmark, Mirjam Mayer, Chris McNally, Theo Jan Simons, and Christof Witte, How plastics waste recycling could transform the chemical industry. Article, December, 2018
7. <https://www.greenpeace.org/international/>
8. <https://ru.economy-pedia.com/11032539-green-marketing>
9. <https://www.techtarget.com/whatis/definition/greenwashing>
10. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=128281>
11. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11303&Reading=0>
12. <https://cscmp.org/>
13. <https://www.verpackungsgesetz.com/>
14. <https://www.buzer.de/gesetz/3971/index.htm>

**ԿԱՆԱԶ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ՀԱԿԱԴԱՐՁ
ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ**

Մարո Հայկազի Դեթլոֆֆ

Համառոտագիր: Կանաչ մարքեթինգը ուշադրություն է գրավում իր նորարարությամբ և արդյունավետությամբ, իսկ մարքեթինգային բացատրական այլ ռազմավարությունների հետ համադրելիս կարող է դառնալ ամուր հիմք բիզնեսի հաջողության համար: Քանի որ կանաչ մարքեթինգը արտադրանքի մշակումն ու առաջնորդումն է՝ ուղղված ֆիզիկական միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելուն և դրա որակի բարելավմանը, ուստի

անհրաժեշտ է ձևավորել ու կատարելագործել հակադարձ լոգիստիկական համակարգեր՝ արտադրանքը և դրա օգտագործումից առաջացած թափոնները դարձնելով բազմակի օգտագործման ու վերամշակման ենթակա: Սրանով էլ պայմանավորված է **թեմայի արդիականությունը**:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել կանաչ մարքեթինգի և հակադարձ լոգիստիկայի նշանակությունն ու կարևորությունը, ՀՀ-ում կանաչ մարքեթինգի և հակադարձ լոգիստիկ համակարգերի կիրառման հնարավորությունները և ուղիները, գնահատել առկա իրավիճակը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ հիմնախնդիրների լուծման ուղիների վերաբերյալ, որի համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել և բացահայտել կանաչ մարքեթինգի կիրառման հիմնական ուղղությունները և ռազմավարությունները,
- բացահայտել ՀՀ-ում կանաչ մարքեթինգի համատեքստում հակադարձ լոգիստիկայի կիրառման անհրաժեշտությունը, մասնավորապես, սննդարդյունաբերության ոլորտում պլաստիկ և ապակյա տարաների օգտագործման հետ կապված:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական, համեմատական, որակական և քանակական **վերլուծության մեթոդներ**:

Մննդարդյունաբերության ոլորտում էկոլոգիական մոտեցումը ներկայումս կարևոր առաջնահերթություն է: Կանաչ մարքեթինգի կիրառման համատեքստում կարող ենք փաստել, որ սննդարդյունաբերության մեջ օգտագործվող պլաստիկ տարաները (օրինակ՝ շշերը) և տոպրակները, դարձել են խնդիր ամբողջ հանրապետության համար: Կրկնակի օգտագործման ենթակա չլինելով՝ դրանք շարժվում են որպես կենցաղային աղբ և աղտոտում շրջակայքը: Նույնը կարող ենք ասել նաև ապակյա տարաների համար: Մինչդեռ դրանց կազմակերպված հավաքումը և վերամշակումը շահեկան է ոչ միայն շրջակա միջավայրի աղտոտվածության կրճատման առումով, այլև տնտեսապես:

Հողվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ կանաչ մարքեթինգի կիրառման համատեքստում առաջարկվել է ներդնել հակադարձ լոգիստիկայի գործուն մեխանիզմներ՝ Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում կատարելով լրացում, որոնց իրագործումը կնպաստի ՀՀ ինչպես էկոլոգիական, այնպես էլ տնտեսական միջավայրի բարելավմանը:

Բանալի բառեր. կանաչ մարքեթինգ, ապրանք, թափոն, դատարկ տարա, պլաստիկ, շրջակա միջավայր, հակադարձ լոգիստիկա, օրենք

НЕОБХОДИМОСТЬ ПРИМЕНЕНИЯ ОБРАТНОЙ ЛОГИСТИКИ В РА В КОНТЕКСТЕ ВНЕДРЕНИЯ ЗЕЛЕННОГО МАРКЕТИНГА

Маро Айказовна Детлофф

Аннотация. Зеленый маркетинг привлекает внимание своей инновационностью и эффективностью, а в сочетании с другими стратегиями объяснительного маркетинга может стать прочной основой для успеха в бизнесе. Поскольку зеленый маркетинг – это разработка и продвижение продукции, направленные на минимизацию негативного воздействия на физическую среду и повышение ее качества, необходимо проектировать и совершенствовать системы обратной логистики, делая продукт и образующиеся в результате его использования отходы пригодными для повторного использования и вторичной переработки. Именно поэтому **тема актуальна.**

Цель исследования - изучить и представить значение и важность зеленого маркетинга и обратной логистики, возможности и пути применения систем зеленого маркетинга и обратной логистики в РА, оценить текущую ситуацию и представить соответствующие рекомендации по путям решения проблем, для чего были поставлены следующие **задачи:**

- изучить и определить основные направления и стратегии применения зеленого маркетинга,
- определить необходимость использования обратной логистики в контексте зеленого маркетинга в РА, особенно в отношении использования пластиковой и стеклянной тары в пищевой промышленности.

В ходе исследования использовались аналитические, сравнительные, качественные и количественные **методы анализа.**

Экологический подход в пищевой промышленности в настоящее время является важным приоритетом. В контексте применения зеленого маркетинга можно констатировать, что пластиковая тара (например, бутылки) и пакеты, используемые в пищевой промышленности, стали проблемой для всей республики. Не будучи пригодными для повторного использования, они выбрасываются как бытовые отходы и загрязняют окружающую среду. То же самое можно сказать и о стеклянной таре. Между тем их организованный сбор и переработка выгодны не только с точки зрения снижения загрязнения окружающей среды, но и с экономической точки зрения.

Научная новизна статьи заключается в том, что в контексте применения зеленого маркетинга предложено внедрить эффективные механизмы обратной логистики путем внесения поправки в Закон РА «О торговле и услугах», реализация которой будет способствовать улучшению как экологической, так и экономической среды РА.

Ключевые слова: зеленый маркетинг, товар, отходы, пустая тара, пластик, окружающая среда, реверсивная логистика, закон.

IN THE CONTEXT OF INTRODUCING GREEN MARKETING, THE NECESSITY OF APPLICATION OF REVERSE LOGISTICS IN RA

Maro Haykaz Detloff

Abstract. Green marketing attracts attention for its innovation and effectiveness, and when combined with other explanatory marketing strategies, it can become a solid foundation for business success. Since green marketing is the development and promotion of products aimed at minimizing the negative impact on the physical environment and improving its quality, it is necessary to design and improve reverse logistics systems, making the product and the waste generated from its use reusable and recyclable. This is why the topic is **relevant**.

The purpose of the research is to study and present the meaning and importance of green marketing and reverse logistics, the possibilities and ways of applying green marketing and reverse logistics systems in RA, to evaluate the current situation and make appropriate recommendations on ways to solve the **problems**, for which the following objectives were set:

- to study and identify the main directions and strategies for the application of green marketing,
- identify the need to use reverse logistics in the context of green marketing in RA, particularly in relation to the use of plastic and glass containers in the food industry.

Analytical, comparative, qualitative and quantitative **analysis methods** were used during the research.

An ecological approach in the field of food industry is currently an important priority. In the context of the application of green marketing, we can state that plastic containers (for example, bottles) and bags used in the food industry have become a problem for the entire republic. Not being reusable, they are thrown away as household waste and pollute the environment. The same can be said for glass containers. Meanwhile, their organized collection and processing is beneficial not only in terms of reducing environmental pollution, but also economically.

The scientific novelty of the article lies in the fact that in the context of the application of green marketing, it was proposed to introduce effective reverse logistics mechanisms by making an amendment to the RA Law on Trade and Services, the implementation of which will contribute to the improvement of both the ecological and economic environment of RA.

Keywords: green marketing, product, waste, empty container, plastic, environment, reverse logistics, law

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հակոբ Վասակի Թարփոշյան

Հոդվածը ստացվել է՝ 04.10.22, ուղարկվել է գրախոսման՝ 04.10.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Հայաստանում ձեռնարկատիրական միջավայրի զարգացմանն ու բարելավմանն ուղղված ինստիտուցիոնալ բարեփոխումների դերն էլ ավելի է կարևորվում Հայաստանի Հանրապետության առաջ ծառայած անվտանգության, ժողովրդագրական և առողջապահական հիմնախնդիրների համատեքստում:

Ձեռնարկատիրական որակյալ ինստիտուտ ստեղծելու համար առաջնային պայմանը համապատասխան բարենպաստ միջավայրի առկայությունն է:

Հայաստանում ձեռնարկատիրական միջավայրի ձևավորման գործում շրջահարույց դեր ունեցավ Խորհրդային Միության փլուզումն ու անկախության հռչակումը և դրան հաջորդած համայնավարականից ազատ շուկայական տնտեսության անցումը: Այսինքն, Հայաստանում ձեռնարկատիրական միջավայրի ձևավորվել է Խորհրդային Հայաստանի կապիտալի մասնավորեցման և ինստիտուցիոնալ համակարգի հիման վրա:

Հարկ է նկատել, որ Հայաստանում մի շարք գործոններով, այդ թվում՝ կարճաժամկետ ներդրումների գերակայությունով պայմանավորված ձեռնարկությունները ապահովում են ցածր արտադրողականության մակարդակը, ինչը իր հերթին հանգում է ցածր մրցունակ արտադրանքի թողարկումը: Վերջինս էլ հետևանք է դառնում երկարաժամկետ ներդրումների ֆինանսավորման բացակայության:

Ոլորտին առնչվող փորձագիտական խմբերի ներկայացուցիչ փորձագետների գիտելիքները և փորձառությունը մեզ թույլ կտա բացահայտել Հայաստանում ձեռնարկատիրական միջավայրին առնչող խնդիրները և զարգացման առաջնահերթությունները:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում ձեռնարկատիրական միջավայրի առկա խնդիրները և բացահայտել միջավայրի բարելավման ուղիները: Հետազոտության նպատակին հասնելու համար հետազոտության շրջանակներում հիմնական խնդիրներն են հանդիսացել բացահայտել ՀՀ ձեռնարկատիրական միջավայրում առկա խոչընդոտները և դրանց չեզոքացմանն ուղղված առաջնահերթությունները՝ փորձագիտական հարցման միջոցով:

ՀՀ ձեռնարկատիրական միջավայրի վիճակը գնահատելու և զարգացման հնարավորությունները բացահայտելու համար սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է փորձագիտական հարցում ոլորտի հետ առնչվող տարբեր խմբերի շրջանում:

Գրականության վերլուծություն

Չնայած ձեռնարկատիրությունը ստանձնում է առաջնային կարևորություն տնտեսագետների շրջանում, ոլորտում մի շարք հիմնախնդիրներ դեռևս մնում

են չբացահայտված և չլուծված¹:

Երկրի տնտեսական աճը և հարստության ստեղծումը խարսխված է ձեռնարկատիրական մթնոլորտի վրա, ինչն էլ իր հերթին հիմնված է ձեռնարկատերերի և կառավարիչների կարողությունների վրա²: Ձեռնարկատիրությունը մեծապես նպաստում է տնտեսական աճին, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աղքատության հաղթահարմանը: Ձեռնարկատիրությունը կարևոր դեր է խաղում նաև աշխատանքի շուկայում՝ աշխատատեղերի ստեղծման առումով³:

Ձեռնարկատիրությունը տնտեսական գործունեության այն ոլորտներից է, որը ամենաարագն է զարգանում տնտեսության, կառավարման, ֆինանսների և նույնիսկ օրենսդրական հատվածում⁴: Բացի դրանից, ձեռնարկատիրության ակտիվությունից է որոշակիորեն կախված աղքատության մակարդակի կրճատումը, որի վառ օրինակն է ՉՏՀ-ն⁵:

Ռեսուրսների միջոցով կարիքների բավարարման համատեքստում առանցքային է ռեսուրսների սահմանափակության խնդիրը, ինչը հրամայական է դառնում տնտեսության սուբյեկտների որոշումների կայացման և տնտեսության միտումների համար⁶: Ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրն ավելի առաջնահերթ է դառնում հատկապես բնակչության թվի աճի և տնտեսության համակարգային ցնցումների համատեքստում: Այս համատեքստում ձեռնարկատիրությունը տնտեսական շարժիչի համար դառնում է կարևորագույն բաղադրիչը, քանի որ ինչպես արդեն նշվեց տնտեսության մեջ բարիքների ստեղծման նպատակով արտադրական սահմանափակ ռեսուրսների համակցությունը իրականացվում է առևտրային ձեռնարկությունների միջոցով:

Մեթոդաբանություն

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել արտասահմանյան հեղինակների գիտական աշխատությունները և հետազոտության շրջանակներում իրականացված փորձագիտական հարցումը: Հետազոտության ընթաց-

¹ Urbano, D. and Aparicio, S. and Audretsch, D. (2019) "Twenty-five years of research on institutions, entrepreneurship, and economic growth : what has been learned?", *Small business economics.*, 53 (1). pp. 21-49

² Cuervo Á., Ribeiro D., Roig S., "Entrepreneurship: Concepts, Theory and Perspective. Introduction", Álvaro Cuervo & Domingo Ribeiro & Salvador Roig (ed.), València, 2007, vol. 7(4), p. 11

³ Decker R., Haltiwanger J., Jarmin R., Miranda J., "The secular decline in business dynamism in the US", University of Maryland and NBER, Maryland, 2014, p. 29

⁴ Baron R., Henry R., "How Entrepreneurs Acquire the Capacity to Excel: Insights From Research on Expert Performance", *Strateg. Entrep. J.*, Oklahoma, 2010, vol. 4(1), p. 60

⁵ Naudé W., "Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy", IZA Discussion Paper, Cork, 2013, no. 7507, p. 17

⁶ Stam E. Andre S. (2009) *Types of Entrepreneurship and Economic Growth*. United Nations University - Maastricht Economic and Social Research Institute on Innovation and Technology (MERIT) United Nations General Assembly, (2015) *Transforming our world: The 2030 agenda for sustainable development A/RES/70/1*, <https://www.unfpa.org/resources/transforming-our-world-2030-agenda-sustainable-development>

քում կիրառվել են համակարգային մոտեցման, գրաֆիկական վերլուծության, մտահանգման մեթոդները:

Փորձագետների հարցման մեթոդը

Իրականացվող փորձագիտական հարցման համար ընտրվել է անվանական խմբային մեթոդը, որը ենթադրում է տարբեր ոլորտների կամ խմբերի փորձագետների հետ հարցման իրականացում¹:

Փորձագիտական հարցման համար նախ ընտրվել են հիմնական խմբերը, որոնց առնչությունը ոլորտի հետ ավելի մեծ է կամ կարևոր: Այդ խմբերն են՝

- Պետական քաղաքականության մշակում և իրականացում,
- Կրթություն, գիտություն և հետազոտություններ,
- Ձեռնարկատիրական գործունեություն,
- Բիզնես և աջակցման ծառայությունների մատուցում, այդ թվում՝ ֆինանսական կառույցներ:

Փորձագիտական հարցումը իրականացվել է երեք հաջորդական փուլերով՝

Փուլ I - Պիլոտային խորքային հարցում («in-depth interview»)՝ հիմնական չորս խմբերի քիչ քանակով ներկայացուցիչների հետ: Խորքային հարցումներն իրականացվել են առանձին-առանձին և տևել են 1.5-2 ժամ: Հավաքագրված տվյալների և արդեն իրականացված հետազոտության հիման վրա մշակվել են փորձագիտական հարցման երեք հիմնական ուղղությունները՝ պետական աջակցություն և քաղաքականություն, մարդկային կապիտալ և կրթություն, գիտելիքի փոխանցում (R&D transfer): Ըստ այդմ՝ մշակվել է նախնական հարցաթերթ: Հարցման մեջ ներառվել են նաև բաց հարցեր՝ բացահայտելու ձեռնարկատիրական միջավայրի ինստիտուցիոնալ խնդիրների լուծման ուղիները:

Փուլ II - Պիլոտային փորձագիտական հարցում (Pilot survey)՝ հիմնական չորս խմբերի 30 ներկայացուցիչների հետ: Այս փուլի նպատակն է նախնական հարցաթերթի միջոցով հարցերի որակական ստուգումը և ճշգրտումը, ինչպես նաև փորձագետների շրջանակի ճշգրտումը: Պիլոտային հարցման փորձագետների քանակը որոշվել է հիմնվելով Cooper and Schindler (2014)² հետազոտության վրա, ըստ որի, պիլոտային հարցման համար օպտիմալ է 25-ից 50 հարցումը:

Փուլ III - Հիմնական հարցում՝ նախորդ երկու փուլերի միջոցով մշակված և ճշգրտված հարցաթերթի և հարցման մեթոդաբանության հիման վրա:

Հարցման Փուլ I-ը իրականացվել է Անհատական հարցազրույցի միջոցով՝ դեմ առ դեմ (Face to face), իսկ Փուլ II-ը և Փուլ III-ը իրականացվել են առցանց (online) հարցման միջոցով՝ նախապես մշակված հարթակի շնորհիվ: Հարցաթերթը մշակվել է հայերեն:

Հարցումն իրականացվել է անանուն. պարտադիր կերպով հավաքագրվել են տվյալներ՝ փորձագետների կրթության մակարդակի, մասնագիտացման փոր-

¹ Nancy R. Tague's The Quality Toolbox, Second Edition, ASQ Quality Press, 2004, pages 364–365. Oxford University Press (2017) Definition of hypothesis

² Cooper R., Schindler S., "Business Research Methods", McGraw-Hill Education, New York, 2014, 744 page

ձի տարիների քանակի և մեր կողմից սահմանված խմբերին պատկանելիության վերաբերյալ, որի նպատակը փորձագիտական տարբեր խմբերի կարծիքների մեջ տարբերության ուսումնասիրությունն է: Ընտրանքը իրականացվել է փորձագիտական խմբերի, սեռատարիքային բաշխման հիման վրա, որակական ստուգումը կրթության մակարդակի, մասնագիտության և տարիքային բաշխման միջոցով: Հարցման արդյունքները չեն կշռվել:

Հարցաթերթի մեջ ներառված են հարցեր՝ ոլորտին առնչվող մի քանի հիմնական ուղղությունների վերաբերյալ, այդ թվում՝ Պետական քաղաքականություն, Կրթության և վերապատրաստումներ, Գիտահետազոտական մշակումների փոխանցում և ոլորտում առկա այլ խնդիրներ՝ դրանց լուծման վերաբերյալ:

Հարցումը ներառել է նաև փորձագետի վերաբերյալ հարցերի բլոկ:

Փորձագետների ընտրության չափանիշները, ընտրության մեթոդները և ծավալի հիմնավորումը

Փորձագետների ընտրության համար սահմանվել է մի քանի չափանիշ:

1. Նախապես սահմանված չորս խմբերում ընդգրկված լինելը:
2. Փորձը, որի որոշման ցուցանիշներն են՝ մասնագիտական ստաժը, հրատարակված աշխատանքների թիվը,
3. Մասնագետի գիտելիքները և ոլորտում ծավալվող գործունեությունը,
4. Փորձագետի անհատական որակները (մտածողության ճկունությունը, որակապես նոր տվյալներ յուրացնելու ունակությունը և այլն):

Սահմանված չափանիշները ստուգվել են նախ մուտքային փուլում, իսկ դրանցից որոշները՝ նաև հարցման առանձին խումբ հարցերի («Հարցեր փորձագետի վերաբերյալ») միջոցով:

Փորձագետներին ընտրությունն իրականացվել է նպատակաուղղված ընտրանքի և «ձևակույտի» մեթոդների միջոցով:

Այսպես, նախ փորձագիտական յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է փորձագետների և ոլորտում կարևոր նշանակություն ունեցող կառույցների ցանկ:

Աղյուսակ 1

Փորձագիտական խումբ և նպատակաուղղված ընտրանք

Փորձագիտական խմբի անվանում	Նպատակաուղղված ընտրանք
Պետական քաղաքականության մշակում և իրականացում	Նախարարություններ, օրենսդիր մարմին, ՊՈԱԿներ և այլն
Կրթություն, գիտություն և հետազոտություններ	Համալսարաններ, ինստիտուտներ, գիտական կառույցներ, հետազոտական կենտրոններ և այլն
Ձեռնարկատիական գործունեություն	Սկսնակ ձեռնարկատերեր, նորարար ձեռնարկատերեր, սթարթափներ և այլն
Բիզնես և աջակցման ծառայություններ մատուցող՝ այդ թվում ֆինանսական կառույցներ	Գործադիր մարմնին կից աջակցող կառույցներ, խորհրդատվական ընկերություններ, ինկուբատորներ, բանկեր, ներդրողներ, և այլն

Հարցազրույցների թիվը որոշվել է՝ հիմնվելով տեղեկատվության հագեցվածության սկզբունքի վրա (հարցման արդյունքների հավաքագրումը դադարեցվել է մտքերի պարբերական կրկնության որոշակի պահից):

Փորձագետների բաշխում և տվյալների վավերականություն

Հարցմանը մասնակցել է 103 փորձագետ, իսկ հարցման գործընթացը տևել է 25 օր: Ստորև ներկայացված է հարցմանը մասնակցած փորձագետների բաշխումը, ըստ սահմանված խմբի պատկանելիության:

Բոլոր հարցվածները ունեն բարձրագույն կրթություն, նրանց 80%-ի տարիքը 30-ից բարձր է: Հարցվածների 68%-ը հանդիսանում են տնտեսագետ, իսկ մյուսները ունեն տարբեր այլ մասնագիտացումներ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2


Հարցման մասնակիցների բաշխումը

Բաշխում	Բացարձակ թվով	Կշիռը, %
Ընդամենը	103	100%
Ըստ սեռի		
Տղամարդ	66	64%
Կին	37	36%
Ըստ տարիքի		
Մինչև 30	22	21%
30-45	43	42%
46 և ավելի	38	37%
Ըստ կրթական ամենաբարձր աստիճանի		
Հիմնական	0	0%
Միջնակարգ	0	0%
Միջին մասնագիտական կրթություն	0	0%
Համալսարան/ինստիտուտ	4	4%
Մագիստրոս, գիտության թեկնածու կամ ավելի բարձր	99	96%
Ըստ հիմնական գործունեության		
Պետական քաղաքականության մշակում և իրականացում	17	17%
Կրթություն, գիտություն և հետազոտություններ	40	39%
Ձեռնարկատիպական գործունեություն	21	20%
Բիզնես և աջակցման ծառայություններ մատուցող՝ այդ թվում ֆինանսական կառույցներ	25	24%
Մասնագիտություն		
Տնտեսագիտություն	70	68%
Կառավարում	11	11%
Ճարտարագիտություն	5	5%
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	4	4%
Մաթեմատիկա	3	3%
Խորհրդատվություն	2	2%
Ֆինանսներ	2	2%
Մարքեթինգ	2	2%
Իրավունք	1	1%
Ֆիզիկա	1	1%
Տնտեսական ժուռնալիստիկա	1	1%
Քաղաքագիտություն	1	1%

Տվյալների վավերականությունը ստուգելու նպատակով օգտագործվել է Քրոնբախի ալֆա գործակիցը, ինչը հարցման տվյալների դեպքում կազմում է 0.882 և հատում է անհրաժեշտ մակարդակի շեմը՝ 0.7-ը¹:

Վերլուծություն

Հարցման արդյունքները վկայում են, որ ձեռնարկատիրական միջավայրի զարգացումը չափազանց կարևոր է Հայաստանի հնգամյա զարգացման համար : Փորձագիտական բոլոր խմբերի կարծիքները այս հարցի շուրջ գրեթե համընկնում են: Ձեռնարկատիրությունը մյուս խմբերից որոշակիորեն ցածր են կարևորում միայն պետական քաղաքականության մշակումով և իրականացումով զբաղվող փորձագետները:



Գծապատկեր 1. Ձեռնարկատիրության կարևորությունը ՀՀ հնգամյա զարգացման համար (0՝ ընդհանրապես կարևոր չէ, 5՝ չափազանց կարևոր է)²

Պետական աջակցություն և պետական քաղաքականություն

Ըստ փորձագետների, խնդիրներ առկա են ինչպես ձեռնարկատիրության խթանմանն ուղղված պետական ծրագրերի քանակի, այնպես էլ այդ ձեռնարկություններին աջակցելիս՝ պետական մարմինների աշխատակիցների անհրաժեշտ բանիմացության և արդյունավետության հետ կապված: Այլ կերպ ասած, Հայաստանում ձեռնարկությունները գրեթե չեն կարող օգտվել պետական օժանդակության լայն շրջանակից հատկապես գիտահետազոտական գործունեության բնագավառում: Այս նույն մտքին կարելի է հանգել նաև միջազգային համեմատություններ իրականացնելու արդյունքում: Մասնավորապես, հետազոտությունների և զարգացումների (Research and Development) ֆինանսավորումը Հայաստանում ՄԱԿ-ի գնահատումներով չի գերազանցել ՀՆԱ-ի 0.3%-ը: Համեմատության համար նույն ցուցանիշը ցածր եկամուտ ունեցող երկրներում միջինում կազմում է՝ 0,58%, միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 1,73%, բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 2,59%, իսկ ասենք Բսրայելում՝ 4,95%³:


¹ Nunally J., "Psychometric Theory", McGraw-Hill, New York, 1948, 701 pages

² Մշակվել է հեղինակի կողմից իրականացված փորձագիտական հետազոտության հիման վրա

³ Համաշխարհային բանկի տվյալների բազա, հասանելի է՝ <http://wdi.worldbank.org/table/5.13#>, հիմնված ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (UNESCO) տվյալների վրա, հասանելի է՝ <http://data.uis.unesco.org/> (վերջին մուտքը՝ 21.01.2022թ.)

Կրթություն

Փորձագիտական հետազոտության արդյունքների հիման վրա պարզ դարձավ, որ ձեռնարկատիրական որակի բարելավման համար ամենակարևոր խոչընդոտներից մեկը կրթության որակն է:



Գծապատկեր 2. Կրթական համակարգը Հայաստանում¹

Ընդ որում այս դեպքում կարող է փաստել ձեռնարկատիրական կրթության կարևորությունը, այս առումով առավել մեծ կարևորություն ունեն շարունակական կրթական համակարգերը («lifelong learning»), որոնք, ըստ փորձագետների, Հայաստանում ունեն ցածր արդյունավետություն:

Կրթական մյուս օղակներից այս ինստիտուտների առավել մեծ կարևորությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մյուս օղակների հիմնական առաքելությունը հանդիսանում է աշխատանքի շուկայում առաջարկի ապահովումը, իսկ այս օղակը փաստորեն դառնում է միջոց՝ արդեն որակյալ մասնագետներին ձեռնարկատերեր դարձնելու համար:

Գիտահետազոտական մշակումների փոխանցում (R&D transfer)

Փորձագիտական հարցման արդյունքում պարզվել է, որ ձեռնարկատիրական միջավայրի զարգացման համար առկա խոցելի խնդիրներից է նաև գիտատեխնիկական մշակումների ստեղծման և դրանց փոխանցման գործունե համակարգի բացակայությունը: Հարցման արդյունքներով գիտահետազոտական մշակումների առևտրայնացման գործընթացում առկա են խնդիրներ, սակայն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ խնդիրը ոչ միայն մշակումների առևտրայնացումն է, այլ կապվում է հենց գիտության և տեխնոլոգիաների բազայի հետ: Կառավարության կողմից այս խնդրի լուծմանն ուղղված քայլերին, մասնավորապես՝ բիզնեսից գիտությանը պատվերներ տալուն աջակցող կառույցի ստեղծման մասին պլաններին:

Հարցման արդյունքում բացահայտված ձեռնարկատիրական միջավայրին զարգացմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ խնդիրներից են նաև՝

- Աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակը,
- Օրենսդրական բացերը,
- Մրցակցային միջավայրի անկատարությունը,

¹ Mckinsey and company, "Armenia 2021–2041", Future Armenia, Yerevan, 2021, p. 8

- Պետական քաղաքականության անորոշությունը և անկանխատեսելիությունը,
- Շուկայի բարդության ցածր մակարդակը,
- Փոքր և սկսնակ ձեռնարկություններում արտադրողականության բարելավման և նորարարության ցածր կարողությունները:

Միջավայրի բարելավման ուղիներ

Թվարկված խնդիրների լուծմանն ուղղված տնտեսապես արդյունավետ և համակարգային միջոցառումները թույլ կտան առավելագույնս օգտագործել Հայաստանում ձեռնարկատիրական տաղանդը՝ ՀՀ կենսամակարդակի բարձրացման և համամարդկային խնդիրների լուծման գործում:

Ստորև ներկայացված են Հայաստանում ձեռնարկատիրական միջավայրի զարգացմանն ու բարելավմանն ուղղված առաջարկությունները, որոնք ոլորտին առնչվող տարբեր փորձագիտական խմբերի շրջանում իրականացված հետազոտության վրա:

1. Արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորում

Ըստ փորձագիտական հարցման ՀՀ-ում շուկայում ազատ մրցակցային պայմանների խոչընդոտների առկայությունը դարձել է առավել կարևոր խնդիրներից մեկը:

Եթե տնտեսությունում գործող ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներն այնպիսին են, որ ձեռնարկությանը՝ իր նպատակները իրականացնելու ճանապարհին առավել հեշտ է շրջանցել ներդրումները, քան դրա միջոցով հասնել նպատակներին, ապա ձեռներեցը կշրջանցի այն: Կամ այլ կերպ ասած՝ մրցակցային շուկայական տնտեսությունում ձեռնարկությունները գիտակցաբար կամ առանց հասկանալու ցանկանում են և «ստիպված» են միջոցներն ուղղել նոր ներդրումները և նորարարական լուծումներին, քանի որ երկարաժամկետ նպատակներին հասնելու համար գոյություն ունեցող այլընտրանքային միջոցները, ասենք՝ կարտելները, կոռուպցիան և այլն, դառնում են ավելի ռեսուրսատար: Այդ պատճառով՝ շուկայում դիրքը ամրապնդելու համար ձեռնարկությունները ստիպված են լինում զբաղվել նորարարությունով և աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ ավելացնել ձեռնարկությունների կողմից ստեղծվող ավելացված արժեքը, ինչը երկար ժամկետում նպաստում է տնտեսական բարդության ավելացմանը:

ՀՀ-ում մրցակցային միջավայրի հետ կապված խնդիրների լուծման միջոցառումներ կարող են դառնալ՝

- Գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների և այլ թիրախային ոլորտների ձեռնարկությունների համար պարտադիր կերպով բաց բաժնետիրական ընկերության իրավաբանական կարգավիճակ ունենալու մասին իրավական ակտի ընդունումը,
- Գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների և այլ թիրախային ոլորտների ձեռնարկությունների

համար պարտադիր կերպով կապիտալի որոշակի մասով¹ հրապարակային արժեթղթերի թողարկման մասին իրավական ակտի ընդունումը,

- Պետական մարմիններում կարգավորման հետ կապված թափանցիկության մակարդակի բարձրացումը,
- ՏՄՊՊՀ գործիքակազմի ընդլայնումը,
- Պետության և ձեռնարկությունների միջև համագործակցության նոր մակարդակի սահմանումը:

Իրականացնող մարմին. Կառավարություն, ԱԺ

2. Պետական թիրախային աջակցություն

Փորձագիտական հետազոտության համաձայն, Հայաստանում այժմ ձեռնարկություններին պետական աջակցության դիտարկված միջոցառումները գնահատվում են միջինից ցածր, ինչը մի կողմից բացատրվում է իրականացնող միջոցառումների ծավալների անբավարարության, իսկ մյուս կողմից՝ դրանց թիրախավորման և համակարգային մոտեցման հետ կապված խնդիրներով:

Պետական աջակցությունն իհարկե կարող է լինել ամենապարզ՝ գիտահետազոտական մշակումների աջակցման հիմնադրամների ստեղծման միջոցով, ֆինանսական աջակցության տեսքով: Մեկ այլ մոտեցում կարող է լինել հարկային խթանող քաղաքականությունը, օրինակ՝ հարկային արձակուրդների տրամադրման հայեցակարգի մշակումը՝ որոշակի չափանիշներին համապատասխանող բարձր աշխատանքի արտադրողականություն կամ նորարարական գործունեություն ծավալով ձեռնարկությունների համար: Գիտահետազոտական բնույթի ծախսերի՝ որպես շահութահարկից նվազեցվող արտոնյալ ծախսի (օրինակ՝ կրկնակի) դասակարգումը նույնպես խթանող քաղաքականության օրինակ կարող է ծառայել:

Պետական աջակցությունը կարելի է իրականացնել նաև անուղղակի մեթոդներով: Մասնավորապես, օգտակար կլինի մշակել տարեկան մրցանակներ ըստ ոլորտների ամենաբարձր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունների համար՝ խթանելու մրցակցությունը այս ասպարեզում:

Իրականացնող մարմին. Կառավարություն

3. Գիտահետազոտական մշակումների փոխանցումների («R&D transfer») ինստիտուտի հիմնում

Գրականության և տվյալների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ-ում գիտության և իրական հատվածի միջև առկա է խզում: Իսկ իրականացված փորձագիտական հարցման շրջանակներում արդեն պարզ դարձավ, որ այս խզումից բացի, կա խնդիր գիտահետազոտական բազայի հետ: Այսինքն՝ մի կողմից, Հայաստանում գիտությունը մի շարք պատճառներով (այդ թվում՝ մարդկային կապիտալ, ֆինանսավորում) չի ապահովում այնպիսի որակի ԳՀՓԿԱ-ներ, որոնք հնարավոր կլինի առևտրայնացնել իրական հատվածում, ինչն էլ հանգում

¹ Ըստ հեղինակի կողմից իրականացված փորձագիտական հարցման՝ արդյունավետ միջակայք է հանդիսանում 20-40%-ը

է գիտության նկատմամբ հետաքրքրության անկմանը, մյուս կողմից՝ ձեռնարկությունները չեն հետաքրքրվում գիտական մշակումների առևտրայնացման հնարավորություններով, ինչը ստեղծում է մի իրավիճակ, որտեղ գիտական մշակումներն ունենում են ֆինանսավորման խնդիր, իսկ ձեռնարկությունները չեն կարողանում բավարարել նորարարության պահանջը: Այս երկու օղակների միջև որպես կապող կարող է դառնալ տեխնոլոգիաների տրանսֆերի կառույցների ինստիտուտի ստեղծումը: Պետք է նկատել, որ Կառավարության ծրագրով սահմանվում է նմանատիպ կառույցի հիմնում, սակայն նման ինստիտուտի արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար կլինի մասնավոր հատվածի ձեռնարկությունների խրախուսումը և պետական կառույցի միջոցով դրանց վերահսկողությունը:

Իրականացնող մարմին. Կառավարություն, մասնավոր հատված

4. Ձեռնարկատիրության և նորարարության կրթության ընդգրկումը բուհերում Քանակական տվյալները փաստում են, որ այլ երկրների համեմատ, Հայաստանում սկսնակ գործունեության մեջ ներգրավված ձեռնարկատերերը դժվար են կայանում:

Պետք է փաստել, որ մի շարք ինկուբատորներ, աքսելերատորներ և բիզնես դպրոցներ հաջողել են որոշակիորեն լուծել այս խնդիրը, այնուհանդերձ, խնդրի մասշտաբային լուծմանը կարող են նպաստել բուհերը, որոնք, ըստ էության, կապող օղակ են միջնակարգ կրթության, գիտության և իրական հատվածի միջև:

Աշխարհում լավագույն փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս խնդրի լուծման ուղիներից մեկը կրթական համակարգում ձեռնարկատիրության և նորարարության ընդգրկումն է: Այս գործընթացը կարելի է իրականացնել երեք զուգահեռ միջոցառումների միջոցով.

- ձեռնարկատիրության վերաբերյալ առկա տարբեր ուղղությունների ուսանողների համար ձեռնարկատիրության վերաբերյալ ընտրովի առարկաների ներառումով (որոշ բուհերում արդեն գործում է),
- ձեռնարկատիրության կրթական ծրագիր- ընդ որում այս ուղղության թիրախային խմբում ընդգրկվում են նաև արդեն փորձ ունեցող ձեռնարկատերերը,
- ինկուբատոր / աքսելերատոր հիմնադրամների հիմնում- հիմնադրամները կարող են աշխատել առևտրային հիմունքներով՝ հեռանկարային գաղափարներ ունեցող ուսանողներին մրցութային կարգով տարածքների և ֆինանսավորման տրամադրման ու շահաբաժիններին մասնակցության շնորհիվ:

Իրականացնող մարմին. Բուհեր

5. Կորպորատիվ կառավարման ինստիտուտի կայացում

Ձեռնարկատիրական միջավայրի զարգացման համար առաջնային կարևորություն ունեցող ինստիտուտներից հաջորդը կորպորատիվ կառավարումն է, որին Հայաստանում տրվում է ցածր կարևորություն¹: Խոշոր և միջին ձեռնար-

¹ <http://www.saharating.com/~saharati/en/world-corporate-governance-index/>

կությունների շրջանում ներդրումների խթանումը ինչպես նաև դրանց օրգանական աճը մեծապես պայմանավորված է հենց կորպորատիվ կառավարման գործուն համակարգի առկայությամբ: Պետության կողմից այս ինստիտուտի զարգացումը կնպաստի ձեռնարկությունների շրջանում արտադրողականության բարելավման արժևորմանը և դրանից ստացված ավելացված արժեքի բարձրացմանը:

- Խոշոր և միջին ձեռնարկատերերի տարբեր խմբերի միջազգային հայտնի ձեռնարկություններում ցուցահանդեսների և/կամ այցելության և/կամ շրջազայությունների ծախսերի հիմնական մասի համաֆինանսավորում,
- ISO 37000:2021 – կազմակերպության կառավարման (Governance of organizations) որակավորում ունեցող ձեռնարկությունների համար նվազեցված շահութահարկի սահմանում,
- Խոշոր և միջին ձեռնարկություններում շահութահարկի հետ կապված ծախսագրման հոդվածներում, ըստ ոլորտների, ISO ստանդարտավորման հետ կապված ծախսերի ամբողջությամբ և արտոնյալ կարգավիճակով (օրինակ՝ կրկնակի) ներառում,
- ISO ստանդարտավորման հետ կապված գործընթացներում խորհրդատվական ծախսերի համաֆինանսավորում:

Իրականացնող մարմին. Կառավարություն, Ձեռնարկություններ

Գիտական նորույթը. Պետական կառույցների ներկայացուցիչների, գիտակրթական հաստատությունների, ձեռնարկությունների և դրանց աջակցող կառույցների ներկայացուցիչ փորձագետների շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքում ուսումնասիրվել են ձեռնարկատիրական միջավայրի զարգացման ինստիտուցիոնալ խնդիրները և սահմանվել են դրանց լուծմանն ուղղված առաջնահերթությունները:

Եզրակացություն

Այսպիսով, ձեռնարկատիրությունը հանդիսանում է շուկայական տնտեսության շարժիչ ուժը, որի զարգացման համար բարենպաստ միջավայրի առկայություն պարտադիր պայման է տնտեսության զարգացման կայուն համար:

Հիմնվելով հետազոտության իրականացված վերլուծությունների և փորձագիտական արդյունքների ամփոփման վրա կարելի է պնդել, որ ՀՀ-ում ձեռնարկատիրության միջավայրին առնչվող հիմնական խնդիրները կապված են Կրթության և գիտության որակի, Գիտության և ձեռնարկատիրության միջև թույլ կապի, Պետական ֆինանսավորման ցածր մակարդակի և թիրախավորման և որոշ այլ խոչընդոտների հետ: Հետազոտության շրջանակներում իրականացված փորձագիտական հարցման հիման վրա ներկայացվել է առաջարկությունների փաթեթ և միջոցառումների ցանկ, որոնց կարելի է խմբավորել՝ արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորում, պետական թիրախային աջակցություն, գիտահետազոտական մշակումների փոխանցումների («R&D transfer») ինստի-

տուտի հիմնում, ձեռնարկատիրության և նորարարության ընդգրկումը բուհերում, կորպորատիվ կառավարում ինստիտուտի կայացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Baron R., Henry R., "How Entrepreneurs Acquire the Capacity to Excel: Insights From Research on Expert Performance", *Strateg. Entrep. J.*, Oklahoma, 2010, vol. 4(1), p. 60
2. Cooper R., Schindler S., "Business Research Methods", McGraw-Hill Education, New York, 2014, 744 page
3. Cuervo Á., Ribeiro D., Roig S., "Entrepreneurship: Concepts, Theory and Perspective. Introduction", Álvaro Cuervo & Domingo Ribeiro & Salvador Roig (ed.), València, 2007, vol. 7(4), p. 11
4. Decker R., Haltiwanger J., Jarmin R., Miranda J., "The secular decline in business dynamism in the US", University of Maryland and NBER, Maryland, 2014, p. 29
5. Mckinsey and company, "Armenia 2021–2041", Future Armenia, Yerevan, 2021, p. 8
6. Nancy R. Tague's The Quality Toolbox, Second Edition, ASQ Quality Press, 2004, pages 364–365. Oxford University Press (2017) Definition of hypothesis
7. Naudé W., "Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy", IZA Discussion Paper, Cork, 2013, no. 7507, p. 17
8. Naudé, W., "Entrepreneurship and Economic Development: Theory, Evidence and Policy", IZA Discussion Paper No. 7507, 2010 <http://ftp.iza.org/dp7507.pdf>
9. Nunally J., "Psychometric Theory", McGraw-Hill, New York, 1948, 701 pages
10. Stam E. Andre S. (2009) Types of Entrepreneurship and Economic Growth. United Nations University - Maastricht Economic and Social Research Institute on Innovation and Technology (MERIT) United Nations General Assembly, (2015) Transforming our world: The 2030 agenda for sustainable development A/RES/70/1, <https://www.unfpa.org/resources/transforming-our-world-2030-agenda-sustainable-development>
11. Urbano, D. and Aparicio, S. and Audretsch, D. (2019) "Twenty-five years of research on institutions, entrepreneurship, and economic growth : what has been learned?", *Small business economics.*, 53 (1). pp. 21-49
12. <http://wdi.worldbank.org/table/5.13#>
13. <http://www.saharating.com/~saharati/en/world-corporate-governance-index/>

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՌԻԴԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հակոբ Վասակի Թարփոջյան

Համառոտագիր: Հոդվածի արդիականությունը. Ժողովրդագրական իրավիճակի, տնտեսության համակարգային ցնցումների և սահմանափակ միջոցներով հասարակության կարիքների բավարարման համատեքստում, ձեռնարկատիրական առողջ միջավայրի առկայության հիմնախնդիրը դարձել է հրամայական

ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդրի լուծման և տնտեսության զարգացումների համար, ինչով պայմանավորված Հայաստանում ձեռնարկատիրական միջավայրի բարելավման ուղիների բացահայտումը ստանում է հրատապ արդիականություն:

Նպատակը. Հողվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում ձեռնարկատիրական միջավայրի առկա խնդիրները և բացահայտել միջավայրի բարելավման ուղիները:

Խնդիրները. Հետազոտության նպատակին հասնելու համար հետազոտության շրջանակներում հիմնական խնդիրներն են հանդիսացել բացահայտել ՀՀ ձեռնարկատիրական միջավայրում առկա խոչընդոտները և դրանց չեզոքացմանն ուղղված առաջնահերթությունները՝ փորձագիտական հարցման միջոցով:

Մեթոդաբանությունը. Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել արտասահմանյան հեղինակների աշխատությունները և հետազոտության շրջանակներում իրականացված փորձագիտական հարցումը: Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային մոտեցման, գրաֆիկական վերլուծության, մտահանգման մեթոդները:

Ստացված հիմնական արդյունքները. Հետազոտության արդյունքում բացահայտվել են ձեռնարկատիրական միջավայրին առնչվող հիմնական խնդիրները ինչպիսիք են՝ Կրթության և գիտության որակը, Գիտության և ձեռնարկատիրության միջև թույլ կապը, Պետական ֆինանսավորման ցածր մակարդակը և թիրախավորումը, և ներկայացվել է դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

Գիտական նորույթը. Պետական կառույցների ներկայացուցիչների, գիտակրթական հաստատությունների, ձեռնարկությունների և դրանց աջակցող կառույցների ներկայացուցիչ փորձագետների շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքում ուսումնասիրվել են ձեռնարկատիրական միջավայրի զարգացման ինստիտուցիոնալ խնդիրները և սահմանվել են դրանց լուծմանն ուղղված առաջնահերթությունները:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունը. Հետազոտության արդյունքում մշակված առաջարկությունները կարող են օգտագործվել պատասխանատու օրենսդիր և գործադիր գերատեսչությունների ու մարմինների կողմից՝ տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ:

Բանալի բառեր. ձեռնարկատիրություն, ձեռնարկատիրական միջավայր, փորձագիտական հարցում, գործարար միջավայր, բիզնես, գիտահետազոտական մշակումներ, կրթություն, աշխատանքի արտադրողականություն

ТЕКУЩЕЕ СОСТОЯНИЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ СРЕДЫ В РА И ПУТИ ЕЕ УЛУЧШЕНИЯ: ЭКСПЕРТНЫЙ ОПРОС

Акоп Васакович Тарпошян

Аннотация: Актуальность статьи: В условиях демографической ситуации, системных потрясений экономики и удовлетворения потребностей общества при ограниченных ресурсах проблема существования здоровой бизнес-среды стала императивной для решения задачи эффективного использования ресурсов и развития экономики, в связи с чем выявление путей улучшения бизнес-среды в Армении приобретает срочную актуальность.

Цель: Цель статьи - изучить существующие проблемы бизнес-среды в РА и определить пути улучшения среды.

Анализ проблемы: В рамках исследования основная цель состояла в том, чтобы посредством экспертного опроса выявить препятствия в деловой среде РА и приоритеты, направленные на их нейтрализацию.

Методология: Теоретической основой исследования послужили работы зарубежных авторов и проведенный в рамках исследования экспертный опрос. В ходе исследования применялись методы системного подхода, графического анализа, логического мышления.

Основные результаты: В результате исследования были выявлены основные проблемы, связанные с бизнес-средой, такие как: качество образования и науки, слабая связь науки и бизнеса, низкий уровень и адресность государственного финансирования, и представлен пакет предложений, направленных на их решение.

Научная новизна: В результате экспертного опроса, проведенного среди представителей государственных органов, научных и образовательных учреждений, предприятий и экспертов, представляющих их обеспечивающие структуры, были изучены институциональные проблемы развития бизнес-среды и определены приоритеты их решения.

Возможность применения полученных результатов: Рекомендации, разработанные в результате исследования, могут быть использованы ответственными органами законодательной и исполнительной власти при разработке и реализации экономической политики.

Ключевые слова: предпринимательство, предпринимательская среда, экспертный опрос, бизнес-среда, бизнес, научно-исследовательские разработки, образование, производительность труда

STATE OF ENTREPRENEURIAL ENVIRONMENT IN RA AND WAYS OF IMPROVING IT. EXPERT SURVEY

Hakob Vasak Tarposhyan

Abstract: Relevance of the article: In the context of the demographic situation, systemic shocks of the economy and meeting the needs of the society with limited resources, the problem of the existence of a healthy entrepreneurial environment has become solution of problem of effective use of resources and development of the economy. In this connection, the identification of ways to improve the entrepreneurial environment in Armenia is becoming urgent.

Purpose: The purpose of the article is to study the existing problems of the entrepreneurial environment in the Republic of Armenia and identify ways to improve the environment.

Objectives: As part of the research, the main objective was to identify the obstacles in the RA business environment and the priorities aimed at neutralizing them, through an expert survey.

Methodology: This research was theoretically based on scientific works by foreign authors and on expert surveys conducted within the framework of the study. Methods used for the research included graphic analysis, and in-depth survey.

Main results: Based on the results of the research, the main problems related to the business environment were identified, including the low level and not targeted nature of state funding for entrepreneurs, the weak connection between science and business, and a set of recommendations was made aimed at solving them.

Scientific novelty: In an expert survey conducted among representatives of state structures, educational institutions, and enterprises, as well as experts representing the supporting structures of those structures, institutional problems of the development of the business environment were identified and priority solutions were determined.

The possibility of applying the obtained results: The research recommendations can be used to support the development and implementation of economic policies by responsible legislative and executive departments and bodies.

Keywords. Entrepreneurship, Entrepreneurial Environment, Expert survey, Business Environment, Business, Research & Development, Education, Labor productivity

4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿԱՄ «ԵՎ ՆՈՐԻՑ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Ռոբերտ Ներսեսի Սարինյան

Հոդվածը ստացվել է՝ 01.08.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Անդրադարձի առիթը տնտեսագիտության դոկտոր Հովսեփ Աղաջանյանի «Եվ նորից Կարլ Մարքսի տնտեսագիտական ուսմունքի պարադոքսների մասին» նոր ուսումնասիրությունն է: Այն շարունակությունն է հեղինակի մտահղացման՝ դասականներից սկսած տնտեսագիտական դպրոցները ներկայացնել իրենց հաջորդափոխության ընթացքի մեջ:

Ինչպես հայտնի է, արժեքի հարցը հանգուցային է և՛ դասական տնտեսագետների, և՛ Մարքսի հայեցողության մեջ: Ա.Սմիթը տարբերում է ապրանքի երկու արժեքներ՝ սպառողական և փոխանակային: Սմիթի ժամանակ կապ չէին տեսնում օգտակարության և գնի միջև: Այդ պատճառով էլ նրա մոտ սպառողական արժեքի հարցը չի դառնում քննության առարկա: Իսկ փոխանակային արժեքի չափանիշը աշխատանքն է, Այն «միակ չափանշն է, որի միջոցով կարող ենք միմյանց հետ համեմատել տարբեր ապրանքների արժեքներն ամեն ժամանակ և բոլոր տեղերում»: Եվ բնականաբար այն համամասնությունները, որոնցով փոխանակվում են ապրանքները, որոշվում են աշխատանքի ծախսումներով?: Սակայն Սմիթը արժեքն աշխատանքով որոշելը ճշմարիտ է դիտում հասարակական զարգացման պարզագույն ձևերի համար: Այստեղ աշխատանքի արդյունքն ամբողջությամբ պատկանում է աշխատողին, իսկ դա նշանակում է, որ ինչպես ապրանքի արտադրության, այնպես էլ փոխանակության դիմաց ստացած աշխատանքներն իրար հավասար են: Սակայն զարգացած հասարակարգերում հարկ է նկատի առնել ոչ միայն աշխատանքը, այլ նաև կապիտալը և հողը: Հետևապես արժեքը որոշվում է որպես աշխատավարձի, շահույթի և ռենտայի գումար: «Աշխատավարձը, շահույթը և ռենտան ամեն մի եկամտի երեք սկզբնական աղբյուրներն են, հավասարապես նաև ամեն մի փոխանակային արժեքի»³:

* Այդ շարքից լույս են տեսել նրա «Աղամ Սմիթ և Դավիթ Ռիկարդո. Տեսության հանգույցներում», Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2018, №3, «Տնտեսագիտական դետերմինիզմի պարադոքսները», Համահայկական հանդես «Վեմ» 2019, №4 հոդվածները:

¹ Смит А. Исследование о природе и причинах богатства народов, т.1, М., 1935, с. 35.

² Նույն տեղում, էջ 25:

³ Смит А., նշվ. աշխ., էջ 49:

Կ.Մարքսն արժեքաստեղծ աշխատանքը ենթարկում է նոր հիմնավորման, ի դեմս կոնկրետ և արստրակտ աշխատանքի: Այդ հասկացությունների մարքսյան հիմնավորումների ավարտվածությունն ամփոփված է այն հետևությանը, թե աշխատանքը մի կողմից կոնկրետ է, որը ստեղծում է ապրանքի սպառողական արժեքը, իսկ մյուս կողմից՝ վերացական և որպես աշխատանքի ծախս ընդհանրապես ստեղծում է ապրանքի արժեքը: Այստեղ է, որ Մարքսի վերլուծական արստրակցիան հասնում է մերկ ծայրահեղության, արժեքի մեծությունը չափորոշելու անհրաժեշտությանը: Նա պատկերավոր ձևով նմանություն է գծում Շեքսպիրի «Кароль Генрих IV» Կվիկլիի գրական կերպարի հետ: Մի անգամ Կվիկլին պատասխանելով Ֆալստաֆի սիրահետման երկվությանը, նրան ասում է՝ բոլորը «գերագանց գիտեն, թե ինչպես կարելի է ինձ գրավել»: «Ապրանքների արժեքը, գրում է Մարքսը, - ... նրանով է տարբերվում այրի Կվիկլիից, որ հայտնի չէ, թե որ կողմից մոտենալ նրան: Ապրանքային մարմինների կոշտ շոշափելիության... ուղիղ հակադրությունը կազմելով, ապրանքների արժեքը... բնանյութի ոչ մի ատոմ չի պարունակում: Դուք կարող եք ամեն մի առանձին ապրանք շոշափել և տնտղել, ինչ ուզեք՝ անել, նա իբրև արժեք անորսալի է մնում»¹:

Եվ Մարքսի արժեքի տեսության մեջ վերը նշված մտակառույցը, ինչպես նկատում է Հ.Աղաջանյանը, ծայր է տալիս մի շարք պարադոքսների.

- կոնկրետ և արստրակտ աշխատանքի, հետևապես՝ սպառողական արժեքի և արժեքի միջև ենթադրվող հակասությունն աղճատում է երևույթների իրական բովանդակությունը, քանի որ «բարիքի արժեքը հենց պայմանավորված է նրա օգտակարությամբ, հետևապես՝ սպառողական արժեքով»,

- առավել, քան հակասական է ներկայացնում «հասարակական անհրաժեշտ աշխատածամանակ» հասկացությունը, որը կոչված է չափելու ապրանքի մեջ «կարծրացած» աշխատանքի քանակները: Եվ սկսում է գործել չգտնված ճշմարտության տրամաբանությունը՝ կապված այնպիսի լուծում չունեցող հարցերի հետ, թե ինչպես սահմանել հավասար աշխատանքի «կարծրացած» քանակները, x, y, z արտադրողների մոտ տարբեր ինտենսիվության, պարզ և բարդ աշխատանքի ու բազմաթիվ այլ պայմանականությունների հետ,

- վերջինիս անորոշությունը ենթադրում է հարցի լուծման նոր որոնումներ, «տարանջատելով և իրար հակադրելով բարիքի արժեք և գին» կատեգորիաները, որոնք կարող են նաև իրար չհամընկնել, երբ առաջարկը և պահանջարկն իրար չեն համապատասխանում: Դասական ֆիզիկայի կանոնները չեն գործում տնտեսական հարաբերությունների օրինաչափությունների պարագայում: Բարիքի արժեքը լինելով «բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների բարդ ու անտեսանելի համադրություն, որոնց ազդեցության չափերը, ըստ էության, գնահատելի չեն», ուստի արժեքը և գինը հայտնվում են «համարժեքության» հակասական ու չմիացող գծերի հարաբերակցություններում: Այդ աններդաշնակությունն էլ ծնում է հաջորդ պարադոքսը, թե բնության ռեսուրսները,

¹ Կ.Մարքս, Կապիտալ, հ.1, Եր., 1954, էջ 54:

որոնք որպես աշխատանքի արդյունք չեն կարող գին ունենալ «առանց արժեք ունենալու»,

- արժեքի ստեղծման մեջ աշխատանքի, կապիտալի և բնական ռեսուրսի մասնակցության Մմիթի հասկացության և Մարքսի միայն արժեքաստեղծ աշխատանքի պոստուլատի հատման կետը պիտի ծայր տար այն հարցին, թե այդ դեպքում ինչպես են ձևավորվում արտադրության պրոցեսին չմասնակցող՝ ձեռնարկատերերի, հողասեփականատերերի, առևտրականների, բանկիրների եկամուտները շահույթի, ռենտայի տոկոսի ձևով¹:

Հարցն իր լուծման վավերացումները ստանում է Մարքսի հավելյալ արժեքի մասին ուսմունքում: Այն, որ արժեքը որոշվում է աշխատանքով, Մարքսը համարում է ապացուցված, որին հաջորդում է վերլուծության մի ամբողջ շղթա՝ կապված հավելյալ արժեքի արտադրության մեխանիզմի՝ աշխատօրն անհրաժեշտ և հավելյալ ժամանակների բաժանելու, փողը կապիտալի փոխարկվելու Ա-Փ-Ա և Փ-Ա-Փ¹ շրջապտույտների, կապիտալը հիմնական և շրջանառու և հաստատուն ու փոփոխական մասերի տրոհելու, փոփոխական կապիտալի ինքնաճման առանձնահատկությունները և այլն՝ որպես մինչ այդ չգրված ճշմարտությունների, իսկ իրականում իրենց շատ մասերով խոցելի հասկացությունների, որոնց մասին տնտեսագիտական միտքը բազմիցս անդրադարձել է:

Ս.Բուլգակովը նկատում է, որ Կ.Մարքսը հավասար կապիտալները ոչ հավասար համամասնությամբ բաժանում է հաստատուն կապիտալի և փոփոխական կապիտալի: Բայց հավելյալ արժեքը ստեղծվում է միայն այն մասով, որը ծախսվել է աշխատավարձի վրա, հավասար կապիտալների աշխատավարձի վրա անհավասար ծախսի արդյունքում կստանան անհավասար հավելյալ արժեք: Կապիտալի հավասար ծախսի արդյունքում, այն կապիտալը, որը վարձել է 10 բանվոր, կստանա 10 անգամ պակաս շահույթ, քան նա, որը վարձել է 20 բանվոր, այսինքն՝ հավասար կապիտալները կբերեն անհավասար շահույթ ի շնորհիվ դրանց կազմի անհավասարության: Այս հենքի վրա կառուցված «Կապիտալի» 1-ին հատորի ամբողջ տրամաբանությունը հակասում է շուկայի պրակտիկային և «այդ անհամապատասխանությունը շահույթի հավասարության և արժեքի աշխատանքային տեսության միջև հանդիսանում է այն, որ Մարքսի մոտ անվանվում է «սֆինքսի հանելուկ»:

Ֆ.Էնգելսը մի անգամ չէ, որ խոստացել է լուծել այդ հանելուկը: Եվ միայն առաջին հատորի հրապարակումից 27 տարի անց է բացահայտվում այդ գաղտնիքը: Բայց, երբ լույս տեսավ «Կապիտալի» III հատորը, որը, որպես թե լուծում է այդ գաղտնիքը, բերեց միայն մեծ հուսախաբություն և պարզվեց, որ իրականում ոչ մի հանելուկ էլ չկա... շուկայական փոխանակությունը բոլորովին չի համապատասխանում աշխատանքային արժեքին²: Կամ՝ Ռոդբերտուսը, որը Մարքսի արտահայտությամբ «ճիշտ է կռահում կապիտալիստական արտադրության էությունը», 1881-ին հրատարակած իր մի աշխատության մեջ նկա-

¹ Պատմություն և քաղաքականություն.գիտական հանդես, 3(20), 2022, էջ 92-98:

² С.Булгаков, История экономических и социальных учений, М., 2007, с. 669-670.

տում է, թե «ընդհանրապես Մարքսի գիրքը ոչ այնքան կապիտալին նվիրված մի ուսումնասիրություն է, որքան բանակոծիվ կապիտալի արդի ձևի դեմ, որը նա շփոթում է կապիտալի բուն գաղափարի հետ, որտեղից և բխում են նրա բոլոր սխալները»¹: Այսինքն՝ հավելյալ արժեքն, ըստ էության, վեր է ածվել հենման կետի՝ հասարակությունը տրոհելով դասակարգային բևեռացման: Մինչդեռ, ինչպես նկատում է Հ.Ադաջանյանը, վարձու աշխատանքը «ձևավորվել է տեխնոլոգիական զարգացման, աշխատանքի հասարակական բաժանման խորացման, տնտեսության արդյունավետության բարձրացման, կառավարման և նյութական շահագրգռվածության նոր ձևերի և մեթոդների կիրառման անհրաժեշտության արդյունքում: ... Ձեռնարկատերերի, ովքեր ծավալում են հսկայական գործունեություն՝ կապված արտադրության կազմակերպման և կառավարման, շուկայական մրցակցությանը դիմակայելու, նորագույն տեխնոլոգիաների կիրառման, նոր շուկաների հայտնաբերման, արտադրանքի քանակական ու որակական պարամետրերի բարելավման, նորարարական գործունեության իրականացման հետ...»²:

Ինչպես հայտնի է, տնտեսական պրոցեսների վերաբերյալ ֆիզիոկրատների ընդհանուր հայեցողությունն արտահայտվել է շրջանառության, հասարակական արդյունքի և բաշխման գաղափարներում, որոնք խտացված են Ֆ.Քեյնսի «տնտեսական աղյուսակում»: Վերջինս տնտեսության «ստացիոնար վիճակի» արդյունքների և փողի անընդհատ շրջանառող հոսքերի առաջին վերլուծությունն է: Կ.Մարքսի հասարակական ամբողջական արդյունքի իրացման սխեմաները նոր փորձ էր՝ ձևակերպելու մակրոտնտեսական հավասարակշռության պայմանները: Անհրաժեշտություն չեմ տեսնում անդրադառնալու պարզ և ընդլայնված վերարտադրության իրացման պայմաններին, ինչը հանգամանալից արված է Հ.Ադաջանյանի աշխատանքում: Եվ նորից արժեքաստեղծ աշխատանքի միագիծ մոտեցումն ի հայտ է բերում նոր հակասություններ: Ա.Սմիթն արտադրողական աշխատանքի գաղափարը կապում է նյութական արտադրության հետ ընդհանրապես: Նրա մտքի ընթացքը հանգում է հետևյալին. Աշխատանքի մի տեսակը մեծացնում է առարկայի արժեքը, մյուսը՝ ոչ: Բանվորի աշխատանքը մեծացնում է վերամշակվող նյութերի արժեքը «իր գոյության պահպանության և տիրող շահույթի չափով»: Տնային ծառայողի աշխատանքը «ոչինչ չի ավելացնում արժեքին»: Առաջինը «ամրապնդվում և իրացվում է մի առանձին ապրանքում», երկրորդը «վերանում է կատարելու պահին» և իրենից հետո արժեք չի թողնում: Աշխատանքի առաջին տեսակը արտադրողական է, որի մեջ մտնում են բոլոր նրանք, ովքեր զբաղված են նյութական արտադրության մեջ, երկրորդը ոչ արտադրողական է, որի մեջ ներառվում են պետական կառավարման անձնակազմի, բանակի, այսպես կոչված, ազատ մասնագիտությունները՝ երգիչների, հոգևորականների, իրավաբանների, դերասանների, երաժիշտների, բժիշկների

¹ Տե՛ս, Կ.Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 555-ի ծանոթությունը:

² Պատմություն և քաղաքականություն..., էջ 103:

աշխատանքը¹: Հետևապես առաջինը ենթադրում է հարստության ստեղծում, իսկ երկրորդը՝ թեև օգտակար, բայց սպառում:

Ադամ Սմիթի այդ կոնցեպցիան հաճախ դիտվում է որպես «տնտեսագիտության մտքի պատմության ամենակործանարար կոնցեպցիաներից մեկը», որը սակայն «երկիմաստ և անհեթեթ չէ»: Նա տնտեսական զարգացման առաջնահերթ խնդիր է դիտում կապիտալի կուտակումը: Մինչդեռ ծառայությունների ոլորտում վատնողական պահանջարկի բավարարման համար խնայողությունների անարտադրողական օգտագործումը կարող է խոչընդոտել տնտեսական զարգացմանը²: Ոչ արտադրողական աշխատանքի Ա.Սմիթի դոկտրինան Կ.Մարքսի կողմից ստացավ նոր լիցք: XX դարում, այն երկրներում, որտեղ տիրապետող էր մարքսիստական հայեցողությունը, ազգային եկամտի հաշվարկման հիմքում այն շարունակում էր մնալ որպես մեթոդոլոգիական ուղեցույց³:

Արտադրողական և անարտադրողական աշխատանքի մարքսյան դրվածքը առիթ է տալիս նրա վերարտադրության սխեմաներում խոսելու նոր պարադոքսների մասին, երբ ասում է, թե ռեստորանում խոհարարների և մատուցողների աշխատանքը արտադրողական է, իսկ նույն մարդկանց աշխատանքը՝ որպես տնային ծառայողների՝ անարտադրողական, կամ «բոլոր նրանք, ովքեր այս կամ այն ձևով մասնակցում են ապրանքի արտադրությանը՝ սկսած, բառի բուն իմաստով, բանվորից և վերջացրած տնօրեններով, ինժեներներով (բացառությամբ կապիտալիստների)» արտադրողական աշխատանքի կրողներ են⁴: Այսինքն, նկատում է Հ.Ադաջանյանը, վերարտադրության պրոցեսների նրա աբստրակցիան ենթադրում է ընդհանուր հասարակական աշխատանքի ֆունկցիայի նեղացում, դուրս թողնելով սպասարկման և հոգևոր ոլորտները, «ստեղծված վերջնական սպառման բարիքների մի մասի արժեքը ներառված չէ ՀՆԱ-ի մեջ», որը չի կարող լիարժեք արտահայտել վերարտադրության օրինաչափությունները: Այդ է հաստատում նաև այն սուբյեկտիվ միտումը, թե կուտակման աղբյուր է հանդիսանում միայն հավելյալ արժեքը, իրական գործընթացներից դուրս թողնելով եկամուտների մնացած տեսակները, և հատկապես աշխատավարձը, որը կազմում է եկամտի 50-70 տոկոսը: Կամ «բնության բարիքները, որոնք իրենց օգտակարության համապատասխան ունեն արժեք» չներառել ՀՆԱ-ի մեջ: Տնտեսագիտական միտքը անտես չի արել նաև մարքսյան վերարտադրության սխեմաների հստակության մասին տեղ գտած բնութագրությունները՝ նշելով, որ առաջին և երկրորդ ստորաբաժանումների միջև կապը տրամաբանական է միայն առերևույթ, իսկ իրականում պայմանական բնույթ ունի: «... երկու ստորաբաժանումներից բաղկացած մոդելը, - գրում է Բլաուզը, - ներկայացնում է անհուսալի գործիք՝ իրական էկոնոմիկան դինամիկայում վերլուծության համար:

¹ Смит А. Исследование ..., т.1, с.132.

² Блауг М. Экономическая мысль в перспективе, М., 1994, с. 49

³ Студенский П. Доход нации, М. 1968, с. 20-25.

⁴ Պատմություն և քաղաքականություն..., էջ 107 (Մարքսի այդ դիտողությունների մասին տե՛ս, Маркс К. Энгельс Ф., соч., 2-ое издание, т. 26, с. 140, 138).

Շատ ճյուղեր ամբողջությամբ չեն մտնում մեկ կամ մյուս կատեգորիայի մեջ, կապիտալային կամ սպառողական բարիքներ, օրինակ, քարածխի արդյունահանումը, տրանսպորտը, քիմիան: Բացի այդ, կապված պահանջարկի կառուցվածքի փոփոխության հետ, այդ ճյուղերի ներսում փոխվում է բարիքների բաժանումը կապիտալային և սպառողական կատեգորիաների: Արդյունքում, ընդլայնված վերարտադրության մարքայան պայմաններից քարը քարի վրա չեն մնում»¹: Իսկ դա, առավել, քան տեխնոլոգիական հեղափոխության ներկա ժամանակաշրջանում, երբ մարդկության սոցիալական ու տնտեսական կատարելագործման իրական միջոցների քանակությունը տեսնում է գիտության մեջ և ընդլայնվում է ոչ նյութական ոլորտի շրջանակները, ինչպես նկատում է Հ.Ադաջանյանը, պարզապես անհնար է «ներդրումները մարդկային կապիտալում» ձևել իրացման պայմաններ մարքայան բանաձևերով:

Պարադոքսների թելը շարունակվում է նաև Մարքսի շահույթի և արտադրության գնի տեսությունում: Ինչպես և Դ. Ռիկարդոյի մոտ, շահույթի նորմայի հարցը Կ.Մարքսի ուսմունքում ստանում է առանձնահատուկ նշանակություն, Ի դեպ, շատ տնտեսագետներ նկատել են մի հետաքրքիր օրինաչափություն, որ հավասարամեծ կապիտալները բերում են հավասար շահույթ: Եթե արժեքը ստեղծվում է մարդկային աշխատանքով, ապա այն ճյուղերում, որոնցում զբաղված է ավելի շատ աշխատուժ, պետք է ավելի մեծ լինի հավելյալ արժեքը: Ինչո՞ւ ձեռնարկատերերը եկամուտ են ստանում ոչ թե փոփոխական կապիտալի, այլ ամբողջ ավանսավորված կապիտալին համապատասխան: Կ.Մարքսի համար մի բան է հավելյալ արժեքը, իսկ մի այլ բան նրա իրական բաշխումը: Գոյություն ունեն իրենց օրգանական կազմով կամ տեխնիկական հագեցվածությամբ բարձր, ցածր և միջին պայմաններին համապատասխանող ճյուղեր: Այդ տարբերություններն էլ բերում են շահույթի տարբեր նորմաների առկայությունը: Միջճյուղային մրցակցության արդյունքում, որի նպատակը կապիտալների շահութաբեր տեղադրումն է, կապիտալները սկսում են բարձր օրգանական կազմով ճյուղերից հոսել դեպի ցածր օրգանական կապով ճյուղերը, որտեղ շահույթի նորման ավելի բարձր է: Պահանջարկի և առաջարկի օրենքին համապատասխան առաջին ճյուղերում կապիտալը կկրճատվի, կպակասի թողարկվող արտադրանքը, գները կբարձրանան և կմեծանա շահույթը: Երկրորդ, կամ ցածր օրգանական կազմով ճյուղերում կկատարվի հակառակ պրոցեսը: Դա կշարունակվի այնքան, մինչև կձևավորվի շահույթի միջին նորմա՝ բոլոր ճյուղերի համար: Այն գինը, որով կատարվում է ապրանքների իրացումը, Կ.Մարքսն անվանում է արտադրության գին: Վերջինս ներկայացնում է արտադրության ծախքերի և միջին շահույթի գումարը²:

«Կապիտալի» առաջին հատորում ապրանքների իրացումը կատարվում է արժեքի օրենքով, իսկ երրորդ հատորում արտադրության գնով: Վերջնական արդյունքում այդ շեղումներն իրար հավասարակշռում են, հասարակական

¹ Блауг М., նշվ. աշխ., էջ 233:

² Հարցի շարադրանքը տե՛ս, Կ.Մարքս, Կապիտալ, հ.3, մաս 1, Եր., 1947:

մասշտաբով իրացումը կատարվում է արժեքի օրենքին համապատասխան, իսկ հավելյալ արժեքի զանգվածը վերաբաշխվում է ներդրած կապիտալներին համամասնական չափով:

Այսպիսի բացատրություն լոկ գործում է Կ.Մարքսի տեսական կառուցվածքում: Սակայն, ոչ առանց հիմքի, բերվում են այն մերժող մի շարք փաստարկներ: Նախ, որ միջին շահույթի կազմավորման սխեմաներն ունեն մտահայաց և ապօրինի թվային օրինակների տեսք, որոնք հեռու են տնտեսական կյանքն արտահայտելուց: Կամ, եթե ճիշտ են, ապա միայն կատարյալ մրցակցության պայմաններում: Եվ, որ Կ.Մարքսը պարզապես «ամբողջ եկամուտը վերագրում է աշխատանքի կիրառման էֆեկտին, դրանով իսկ հավելյալ արժեք-փոփոխական կապիտալ հարաբերակցությունը համարելով ապացուցված», եթե նույն ձևով նա ելակետ ունենար «արժեքի կապիտալին տեսությունը և ամբողջ հավելյալ արժեքը վերագրեր մեքենաներին և սարքավորումներին ու որոշեր հավելյալ արժեքի նորման որպես հավելյալ արժեք-հաստատուն կապիտալ հարաբերակցություն, ճիշտ նույն ձևով կարող էր ապացուցեր արժեքի փոխակերպությունը գնի»¹: Բաշխման նույն սկզբունքը գործում է նաև մյուս սեփականատերերի միջև: Այստեղ, ինչպես նկատում է Հ.Ադաջանյանը, անպատասխան է մնում, թե ոչ նյութական ոլորտի «բարիքների գինն ինչպես է ձևավորվում արտադրության գնի ձևավորման մեխանիզմի միջոցով» և, որ «բացակայում է ներձյուղային մրցակցությունից միջձյուղայինին անցնելու մեխանիզմը»: Նրա հայեցողության մեջ «արժեքի չափողականության խնդիրը՝ հայտնվեց տրամաբանական հակասությունների մեջ»²: Նա «փորձեց հասարակական բարդ գործընթացների, մասնավորապես՝ սոցիալական արդարության, շահագործողական հարաբերությունների պատճառահետևանքային կապերը բացատրել տնտեսական, մասնավորապես՝ սեփականատիրական հարաբերություններով» մինչդեռ «վերջիններս ածանցյալ են բարդ սոցիալ-հոգեբանական, մշակութային, այսինքն՝ քաղաքակրթական զարգացման գործընթացների նկատմամբ...»³: Սույն առաջադրույթի հետ կապված նկատեմ, որ Կ.Մարքսն իր վաղ շրջանի աշխատություններում, հատկապես «Տնտեսագիտական-փիլիսոփայական ձեռագրեր»-ում, շեշտում էր այն վտանգը, որ, եթե ընչազուրկ (յուրմպենը) մասնակից դառնա աշխարհի վե-

¹ Блауг М., նշվ. աշխ., էջ 217 (ի դեպ, Ռիկարդոն արժեքաստեղծ աշխատանքի, իր իսկ հաճախ նկատվող մոնիստական հայացքի նկատմամբ կասկածներ է ունեցել, նշելով, որ ապրանքի փոխանակային արժեքը ձևավորվում է «երկու աղբյուրներից՝ հազվագյուտությամբ և աշխատանքի քանակով» (Д.Рикардо, соч., т. 1, 1955, с. 33) կամ միտք է հայտնել, որ արժեքի մեջ պետք է մտցնի նաև շահույթը: Իսկ իր գլխավոր աշխատության հրապարակումից հետո, Մակ-Կուլոյիսին ուղղված նամակներից մեկում աշխատանքի քանակը համարելով արժեքի գլխավոր կարգավորիչը, երևում է, թե այդ դոկտրինայում պետք է կատարվեն «շատ փոփոխություններ», և որ «Ես բավարարված չեմ այն բացատրության հետ, որ տվել եմ արժեքը կարգավորող սկզբունքներին» (Д.Рикардо, соч., т. V, 1961, с. 184)):

² Պատմություն և քաղաքականություն..., էջ 115:

³ Նույն տեղում, էջ 116:

րափոխությանը, ապա այն կարող է վերածվել ուրիշի հարստության թալանի՝ դրանով իսկ դատաստան տեսնելով այն գաղափարի հետ, որ մասնավոր սեփականության սկզբունքով բոլորը չէ, որ կարող են այն տնօրինել: Եվ, եթե նույնիսկ պիտի վերացվի մասնավոր սեփականության հաստատությունը, ապա միայն բնաշրջման մի այնպիսի փուլում և այնպիսի մարդկանց կողմից, որոնք ունեն հոգևոր բարձր զարգացվածություն և արդեն «անցկացրել են հարստանալու տենդի հիվանդությունը»:

Վաղ շրջանի Մարքսի դիտողությունները մնում են լոկ ինքնաբուխ ձևով ասված մտքեր, որոնք չեն ստանում իրենց հետագա զարգացումը: Կարճ ժամանակ անց, նա կտրուկ շրջադարձ է կատարում՝ իր ապագա հասարակական շինությունը կառուցելով այն թեզի վրա, որը ենթադրում էր վերջ տալ «մասնավոր սեփականության կեղտին», որը ոչ այլ ինչ էր, քան «եսասիրական մարդու» վերացումը:

Գրականության մեջ հաճախ Կ.Մարքսը հակադրվել է Պրուդոնին, իսկ, եթե նույնիսկ շփումներ էին նշմարվում, ապա դրանք դիտվում են որպես վերջինիս հետ համագործակցության նկատառումների դրսևորում: Մինչդեռ Կ.Մարքսն իր հայեցողությունը մասնավոր սեփականության վերաբերյալ ինչպես գաղափարական, այնպես էլ բարոյագիտական բովանդակության կտրվածքներով կառուցել է Պրուդոնի աշխատության հիմքի վրա: Ահա թե, ինչպես է բնութագրել նա վերջինիս բերած նորույթի նշանակությունը. «Քաղաքականության բոլոր դատողությունների նախադրյալը մասնավոր սեփականությունն է: Այդ հիմնական նախադրյալը քաղաքատնտեսության մեջ ընդունվում է որպես անվիճելի փաստ, որին քաղաքատնտեսությունը վերաբերում է միայն «պատահականորեն», ինչպես դա միամտորեն խոստովանում է Սեյը: Իսկ Պրուդոնը, քաղաքատնտեսության հիմքը՝ մասնավոր սեփականությունը, ենթարկում է քննադատական հետազոտության և ընդ որում՝ առաջին վճռական, անողոք և միևնույն ժամանակ գիտական հետազոտության: Դրանում է նրա կողմից կատարված մեծ գիտական առաջընթացը, որը հեղաշրջում է քաղաքատնտեսությունը և առաջին անգամ հնարավոր է դարձնում քաղաքատնտեսությունը վերածել իսկական գիտության: Պրուդոնի «Ինչ է սեփականությունը» աշխատությունն ունի այնպիսի նշանակություն նորագույն քաղաքատնտեսության համար, ինչպիսին Միենի «Ինչ է երրորդ դասակարգը» ստեղծագործությունը նորագույն քաղաքականության համար»¹:

Իսկ սեփականության հարցում Պրուդոնի տեսակետը միանգամայն հստակ ու ավարտուն է՝ «սեփականությունը գողություն է»: Մարքսյան դավանանքը հենց այդ դիտակետից էլ մերժում է մասնավոր սեփականությունը: Նրա ուսմունքի հիմքը դասակարգային պայքարն է, որը չի ճանաչում բարոյական արժեքներ և ամեն ինչ ենթարկված է հակադրությունների, կորուստների և բռնությունների անխուսափելիությանը: Այն, ինչպես իրավացիորեն նկատում է Հ.Ադաջանյանը, Մարքսի և Էնգելի 1848-ին հրատարակած «Կոմունիստական

¹ Маркс К. Энгельс Ф., соч., 2-ое издание, т. 2, с. 34.

կուսակցության մանիֆեստի» բազիսի և վերնաշենքի տեսության տնտեսական հիմնավորումն է: Մի տեսություն, որն այսօր գրեթե օտարված է փիլիսոփայության բառապաշարից¹:

Մի ուշագրավ փաստաթղթի մասին: «Մանիֆեստի» հրապարակումից 70 տարի անց, երկու ռուս վտարանդիներ Պ.Միլյակովը և Պ.Ստրուվենը հայտնել են, որ իրենց ձեռքում է Ֆ.Էնգելսի մոր նամակի բնագիրն ուղղված որդուն, որում գրված է. «Եվ նաև ասեմ քեզ, տղաս, որ այդ տեսությունից, որը դուք մտածել եք քո ընկերոջ Մարքսի հետ, ոչինչ չի ստացվի: Այն (расчитана) իդեալական մարդկանց համար է, իսկ այդպիսիք չկան»²: Քաղաքականությունից հեռու, արիստոկրատական ծագում ունեցող այդ կինն ավելի խորաթափանց է գտնվել:

Օգտագործված գրականություն

1. Աղաջանյան Հ., Եվ նորից Կարլ Մարքսի տնտեսագիտական ուսմունքի պարադոքսների մասին:
2. Կ.Մարքս, Կապիտալ, հ.1, Եր., 1954,
3. Մերգել Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, հ. IV, 2004:
4. Блауг Марк, Экономическая мысль в перспективе, М., 1994, с. 49.
5. Булгаков Сергей, История экономических и социальных учений, М., 2007.
6. Литературная газета, 6-12 марта, 2019г.
7. Маркс Карль. Энгельс Фридрих., соч., 2-ое издание, т. 26,
8. Маркс Карль. Энгельс Фридрих., соч., 2-ое издание, т. 2.
9. Рикардо Давид, спч., т. 1, 1955.
10. Рикардо Давид,, спч., т. V, 1961.
11. Смит Адам. Исследование о природе и причинах богатства народов, т.1, М., 1935,
12. Студенский П. Доход нации, М. 1968.

References

1. Aghajanyan H., Ev noric Karl Marqsi tntesagitakan owsmownqi paradoqsneri masin:
2. K.Marqs, Kapital, h.1, Er., 1954,
3. Sergej Sarinyan, Hayoc grakanowt'yan erkow dary', h. IV, 2004:
4. Blaug Mark, Jekonomicheskaja mysl' v perspektive, M., 1994, s. 49
5. Bulgakov Sergej, Istorija jekonomicheskikh i social'nyh uchenij, M., 2007.
6. Literaturnaja gazeta, 6-12 marta, 2019g.
7. Marks Karl'. Jengel's Fridrih., soch., 2-oe izdanie, t. 26.
8. Marks Karl'. Jengel's Fridrih., soch., 2-oe izdanie, t. 2.
9. Rikardo David, spch., t. 1, 1955.
10. Rikardo David,, spch., t. V, 1961.
11. Smit Adam. Issledovanie o prirode i prichinah bogatstva narodov, t.1, M., 1935.
12. Studenskij P. Dohod nacji, M. 1968.

¹ Մերգել Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, հ. IV, 2004, էջ 355:

² Տե՛ս, Литературная газета, 6-12 марта, 2019г.

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿԱՄ «ԵՎ ՆՈՐԻՑ ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Ռոբերտ Ներսեսի Սարինյան

Համառոտագիր: Հոդվածը վերլուծական էքսկուրս է Հ.Ադաջանյանի Եվ նորից «Կարլ Մարքսի տնտեսագիտական ուսմունքի պարադոքսների» ուսումնասիրության վերաբերյալ: Մասնավորապես խոսքը արժեքի աշխատանքային տեսության, հավելյալ արժեքի տեսության, հասարակական արդյունքի իրացման պայմանների և շահույթի ու արտադրության գնի տեսության պարադոքսների մասին է: Աշխատանքի, որպես արդյունքաստեղծ միակ աղբյուրի, դոկտրինան դառնում է մի շարք հակասությունների ապրանքի սպառողական արժեքի և արժեքի «հասարակական անհրաժեշտ աշխատաժամանակի» անորոշության, արժեքի և գնի, արտադրության պրոցեսին չմասնակցող շերտերի եկամուտների ձևավորման վերաբերյալ մեկնություններում: Հավելյալ արժեքի տեսությունը, որը Մարքսի ուսմունքի հենման կետն է, հասարակությունը տրոհում է դասակարգային բևեռացման: Վերարտադրության պրոցեսների նրա արստրակցիան ենթադրում է ընդհանուր հասարակական աշխատանքի ֆունկցիայի նեղացում, դուրս թողնելով սպասարկման և հոգևոր ոլորտները, սպառված վերջնական սպառման բարիքների մի մասը չներառելով ՀԱԱ-ի մեջ, որը չի կարող լիարժեք արտահայտել վերարտադրության օրինաչափությունները: Իսկ առավել, քան տեխնոլոգիական հեղափոխության ներկա ժամանակաշրջանում, երբ մարդկության սոցիալական ու տնտեսական կատարելագործման իրական միջոցների քանակությունը տեսնում է գիտության մեջ և ընդլայնվում է ոչ նյութական ոլորտի շրջանակները:

Պարադոքսների թելը շարունակվում է նաև Մարքսի շահույթի և արտադրության գնի տեսությունում:

Մարքսը սոցիալական արդարության պատճառահետևանքային կապերը փորձում է բացատրել սեփականատիրական հարաբերություններով, մինչդեռ վերջիններս, ինչպես նկատում է Հ.Ադաջանյանը, դրանք «աձանցյալ են բարդ սոցիալ-հոգեբանական, մշակութային, այսինքն՝ քաղաքակրթական զարգացման գործընթացների նկատմամբ...»:

Բանալի բառեր. արժեքի աշխատանքային տեսություն, հավելյալ արժեք, հասարակական արդյունք, արտադրողական և ոչ արտադրողական աշխատանք, շահույթ և արտադրության գին, սպասարկման և հոգևոր ոլորտներ, մասնավոր սեփականություն:

ОБЗОР ИЛИ «И СНОВА О ПАРАДОКСАХ ЭКОНОМИЧЕСКОГО УЧЕНИЯ КАРЛА МАРКСА»

Роберт Нерсесович Саринян

Аннотация: Статья является аналитическим экскурсом по исследованию О. Агаджаняна «О парадоксах экономического учения Карла Маркса». В частности, речь идет о парадоксах в теории трудовой стоимости, теории прибавочной стоимости, условиях реализации общественного продукта, теории прибыли и цены производства. Доктрина о труде - как единственном источнике создания стоимости, воплощает ряд противоречий в толкованиях потребительской стоимости товара, в неопределенности «общественного необходимого труда», стоимости и цены, в формировании доходов слоев общества, не участвующих в процессе производства. Теория прибавочной стоимости является точкой опоры в учении Маркса, общество разделяет на классовую поляризацию. Его абстракция воспроизводительных процессов предполагает сужение функций общественного труда, игнорируя обслуживающие и духовные сферы, и не учитывая в ВВП часть потребляемых товаров конечного потребления, что не отражает закономерности воспроизводства. А тем более в эпоху современной технологической революции, когда человечество видит в науке ряд реальных средств социального и экономического совершенствования и расширяет рамки нематериальной сферы.

Нить парадоксов продолжается в теории Маркса о прибыли и цене производства.

Маркс пытается объяснить причинно-следственные связи социальной справедливости отношениями собственности, а последние, как замечает О. Агаджанян, являются «производными сложных социально-психологических, культурных, т. е. цивилизационных процессов развития...».

Ключевые слова: трудовая теория стоимости, прибавочная стоимость, общественный продукт, производительный и непроизводительный труд, прибыль и цена производства, обслуживающие и духовные сферы, частная собственность.

REFLECTION OR "AND AGAIN ABOUT THE PARADOXES OF THE ECONOMIC DOCTRINE OF KARL MARX"

Robert Nerses Sarinyan

Abstract: The article is an analytical excursion on the study of H. Aghajanyan and again "About the paradoxes of the economic doctrine of Karl Marx". In particular, we are talking about the labor theory of value, the theory of added value, the conditions for the realization of a social product and the paradoxes of the theory of profit and the price of production. . The doctrine of labor as the only source of production leads to a

number of contradictions in the interpretations of the uncertainty of the consumer value of goods and the cost of "necessary social working time", cost and price, the formation of incomes of layers not involved in the production process, the theory of value added, which is the fulcrum of Marx's doctrine, divides society into class polarization. His abstraction of reproductive processes presupposes a narrowing of the function of general social labor, excluding the spheres of service and spirituality, not including a part of the consumed goods of final consumption in the gross national product, which cannot fully express the laws of reproduction. And more than in the current period of the technological revolution, when the number of real means of social and economic improvement of mankind sees in science and the scope of the intangible sphere is expanding. The thread of paradoxes continues in Marx's theory of profit and cost of production.

Marx tries to explain the causal relationships of social justice by proprietary relations, while the latter, as H. Aghajanyan notes, are "derived from complex socio-psychological, cultural, that is, the processes of civilizational development..."

Keywords: labor theory of value, value added, social product, production and non-production work, profit and price of production, service and spirituality, private property.

«ՌԱՑԻՈՆԱԼ ՄԱՐԴՈՒ» ՄՈՂԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԿԱՆԸ ԿԱՄ ՌԻԶԱՐԴ ԹԵՅԼԵՐԻ «ՍԽԱԼ ՎԱՐՔԱԳԻԾԸ»

Ռոբերտ Ներսեսի Սարինյան Բեյլա Վալերիի Գաբրիելյան

Հոդվածը ստացվել է՝ 01.08.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

1982-ին Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջ.Ստիգլերին հարցնում են, թե ինչն է են հումանիտար և հասարակական գիտություններից Նոբելյան մրցանակներ ստանում միայն տնտեսագետները, բայց ոչ սոցիոլոգները, հոգեբանները, պատմաբանները, փիլիսոփաները: Նա պատասխանում է, թե մնացած բոլորի համար Նոբելյան մրցանակ նախատեսված է գրականության գծով¹: Տնտեսագետը, հավանաբար, նկատի ուներ այն, որ տնտեսագիտությունը նշվածներից միակն է, որ Փ.Սամուելսոնի խոսքերով ասած «մաթեմատիկայի համբուրածից հետո» դարձել էր գիտություն: Մակայն, ինչպես իրավացիորեն նկատում է Ա.Բեյլանինը, ժամանակի ընթացքում նշված գիտությունները երևույթների առնչությունների մեջ, սկսել են օգտվել մաթեմատիկայի վերլուծական ապարատից՝ ընդլայնելով նաև տնտեսագիտական ընդհանրացումների տեսադաշտը: Իսկ դա արդեն ենթադրում է «տնտեսական մարդու» մոդելը ենթարկել նոր իմաստավորումների: Տնտեսագիտությունն ի վերջո նպատակ ունի բացահայտել մարդու տնտեսական պահվածքը, այդ պահվածքի դրդապատճառները, նպատակի և վերջինիս հասնելու ճանաչողական հնարավորությունները, որը ոչ այլ ինչ է, քան որոշակի սոցիալ-տնտեսական համակարգի կոորդինատներում գործող անհատի մոդել, նրա վարքագիծը:

Միջանկյալ դիտարկում: Հայտնի ֆիզիկոս Մաքս Բորնը բերում է այսպիսի մի դեպք իր կյանքից. «Ես ունեի ինձնից մեծ մի հորեղբոր որդի, որը սովորում էր համալսարանում, երբ ես դեռ դպրոցական էի: Քիմիայի գծով մասնագիտանալով, նա պարապում էր նաև փիլիսոփայություն: Եվ ահա մի օր նա հանկարծ այսպիսի հարց տվեց. «Դու իրականում ի՞նչ նկատի ունես, երբ ասում ես, որ այս տերևները կանաչ են, իսկ երկինքը՝ կապույտ»: Այդ հարցն ինձ բավականին շինծու թվաց, և ես պատասխանեցի. «Ես պարզապես նկատի ունեմ կանաչն ու կապույտը, քանի որ այդ գույներն այնպես են տեսնում, ինչպես դու ինքդ ես տեսնում»: Մակայն նա չբավարարվեց իմ պատասխանով և առարկեց. «Դու ի՞նչ գիտես, որ իմ կանաչը ճիշտ նույնն է, ինչ-որ քո կանաչը»: Իմ պատասխանը. «Որովհետև բոլոր մարդիկ այդ գույնը միևնույն ձևով են տեսնում, իհարկե», - դարձյալ չբավարարեց նրան: «Չէ՞, որ գոյություն ունեն դալտոնիկներ, - ասաց նա, - նրանք այլ կերպ են տեսնում գույները: Ոմանք, օրինակ, չեն կարողանում կարմիրը տարբերել կանաչից»: Ես հասկացա, որ նա ինձ դեմ է արել պատին, ստիպում է տեսնել, որ ոչ մի միջոց չկա համոզվելու այն բանում, թե հատկապես

¹ «Вопросы экономики», 2018, с. 5.

ինչ է զգում ուրիշը, և որ նույնիսկ այն պնդումը, թե «նա նույնն է զգում, ինչ-որ ես», զուրկ է իմաստից...

Սակայն պրոբլեմն այն է, թե ինչպես պետք է զանազանել, սուբյեկտիվն ու օբյեկտիվը, այլ այն, թե ինչպես պետք է ազատվել սուբյեկտիվից և կարողանալ ձևակերպել օբյեկտիվ պնդումները»¹:

* *
*

«Անտարես» հրատարակչությունը հայերեն թարգմանությամբ լույս է ընծայել Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռիչարդ Հ.Թեյլերի «Սխալ վարքագիծ» աշխատությունը (խմբագիր Վահագն Խաչատուրյան): Հեղինակը, որի համար նրա դեկավարը մագիստրական ուսումն ավարտելուց հետո «մեծ սպասելիքներ» չէր ակնկալում հեռանկարի առումով, արդեն ուսանողական տարիներին «խոտոր մտքեր ուներ» տնտեսագիտության տեսության մասին, թե արդյո՞ք տնտեսագիտության տեսության առաջադրած դեղատոմսերն արտահայտում են իրականությունը: Գրքի բնաբան է ընտրվել Վիլֆրեդո Պարետոյի այն խոսքերը, թե «Քաղաքատնտեսության և առհասարակ ցանկացած հասարակական գիտության հիմքը, ակնհայտորեն հոգեբանությունն է: Գուցե կգա այն օրը, երբ մեզ կհաջողվի հասարակական գիտությունների օրենքները արտածել հոգեբանության սկզբունքներից»: Եվ ոչ պատահականորեն: Այն, ըստ էության, ցուցադրում է գրքում արծարծվող հարցերի վերլուծական որոնումների ուղղությունը: Այստեղ է, Ռիչարդ Թեյլերը տնտեսագիտությունը սուզում է վարքագծային ոլորտում՝ ցույց տալով, որ տնտեսական մտածելակերպը փոփոխության կարիք ունի, որ «իրական կյանքում մարդկանց վարքագիծն ամեն ձևով տարբերվում է տնտեսագիտական մոդելներում բնակվող մտացածին արարածների վարքագծից: Երբեք նպատակ չեն ունեցել ասելու, որ մարդկանց առումով ինչ-որ բան սխալ է, մենք բոլորս մարդ արարածներ ենք՝ homo sapiens: Ավելի ճիշտ, ինդիքը հենց տնտեսագետների կողմից կիրառվող մոդելն է, մի մոդել, որում homo sapiens-ը՝ բանական մարդը, փոխարինվել է մտացածին արարածով, որի անունն է homo economicus՝ տնտեսվար մարդ կամ ռացիոնալ մարդ, որին ես հակիրճ սիրում եմ անվանել «Տնտես»: Ի տարբերություն Տնտեսների մտացածին աշխարհի՝ իրական կյանքում մարդիկ հաճախ սխալ վարքագիծ են դրսևորում, իսկ սա նշանակում է, որ տնտեսական մոդելները բազմաթիվ սխալ կանխատեսումներ են անում, որոնք կարող են ունենալ շատ ավելի լուրջ հետևանքներ...: Փաստն այն է, որ ոչ մի տնտեսագետ չկարողացավ կանխատեսել 2007-2008թթ. տնտեսական ճգնաժամը՝ դեռ շատերը կարծում էին, որ թե ճգնաժամը և թե՛ դրա հետևանքները պարզապես լինելու բան չէին»²: Թերևս, հենց այդ մարդկային վարքագծի սխալ պատկերացման վրա է հիմնված, ինչպես հաճախ անվանում են, տնտեսագիտության «կայսերական գոռոզամտությունը»: Դա բացատրվում է

¹ Մաքս Բորն, Իմ կյանքն ու հայացքները, Եր., 1978, էջ 134-135:

² Ռիչարդ Թեյլեր, Սխալ վարքագիծ, Եր., 2021, էջ 58:

նախ, որ «քաղաքական խորհրդատվության» դաշտում հասարակական մյուս գիտություններին հատկացվում է «ստորադաս» տեղ, և ապա որպես «հիմնա-սյունների» տնտեսագիտությունը կառուցված է «մի քանի հիմնարար ելակետային դրույթների վրա», զուգահեռ գծելով ֆիզիկայի հետ: Սակայն, «ռացիոնալ ակնկալիքներ» կամ օպտիմալացում գումարած հավասարակշռություն տնտեսագիտության կոմբինացիան, որը բացակայում է մյուս հասարակական գիտություններում, չի գծագրում երևույթների իրական բովանդակությունը: Իսկ դա թերևս պայմանավորված է բնական գիտությունների օրինաչափությունները տնտեսագիտության մեջ տեղայնացման շարունակվող իներցիայով:

Տնտեսագիտության տեսությունը դասավանդվում էր տնտեսական կախվածությունները բացատրելով բնական գիտությունների օրենքների զուգահեռներով, անտեսելով, որ «մարդու հավատքի և արմատացած նրա այլ սովորույթների իրական կախվածությունները միանգամայն տարբեր են ֆիզիկայում կամ քիմիայում ծագող կախվածությունից» (Ջ.Մերլ): Եվ, ինչպես նկատել է տնտեսագետներից մեկը, եթե դուք բացեք տնտեսագիտության դասագիրքը, ապա կիմանաք, որ *homo orronomicus*-ը ընդունակ է մտածելու ինչպես Ալբերտ Էյնշտեյնը, տնօրինում է գերհամակարգչի հիշողությանը և Մախմուտ Գանդիի կամքի ուժին...: Բայց իրական մարդիկ, որոնց մենք գիտենք, ուրիշ են: Նրանք ընդունակ չեն առանց հաշվարկիչի բաժանել մեծ թվերը, հաճախ մոռանում են ընտանեկան տոների օրերը, իսկ հունվարի 1-ի առավոտյան տանջվում խումարից: Նրանք ոչ թե *homo orronomicus* են, այլ *homo sapiens*: Մենք չենք ուզում ձեռնարբեռնել լատիներենով և երևակայական ու իրական արարածներին պիտի կոչենք համապատասխանաբար «տնտեսների» և «մարդկանց»¹: Չուր չէր նոր պատմական դպրոցի հայտնի տնտեսագետ Գ.Շմոլերը մերժում մաթեմատիկական մոդելների կիրառումը՝ կարևորելով տնտեսության վրա ունեցած «հոգեբանական-էթիկական» գործոնների ունեցած ազդեցության վերլուծությունը, քանի որ «մարդկային հոգեբանության ռեակցիաները չափից շատ բարդ են դիֆերենցիալ հաշվարկների համար»²:

Այս իմաստով տեղին եմ գտնում ուրվագծել իռացիոնալի և ռացիոնալի վերաբերյալ մտքի անալիտիկայում բերվող փաստարկները: Եվ այսպես, իռացիոնալի օգտին բերվող հղումները հանգում են հետևյալին.

- այն, ինչ ռացիոնալ է մի կոնցեպտուալ և արժեքային համակարգի համար, ոչ ռացիոնալ է մյուսների համար, հետևապես նրանց միջև ռացիոնալ երկխոսությունն անհնար է: Ռացիոնալի վերաբերյալ արտահայտությունները գործում են միայն նախադրյալների որոշակի համակարգի ներսում,
- արդի անկայուն և սոցիալական կապերի արագ փոփոխվող աշխարհում, երբ ջնջվում են նորմայի և նրանից շեղումների սահմանները, մարդը ձեռք է բերում իսկական ազատություն այն կաշկանդող ռացիոնալ կարգադրագրերից,
- արդի գիտական երկխոսություններում հաճախ են հղումներ կատարում

¹ «Вопросы экономики», 2012, №10, с. 71.

² Селичмен Б. Основные течения современной экономической мысли, М., 1968, с. 27.

մարդկային պահվածքում և մտածողության մեջ իռացիոնալ գործոնների դերի մասին: Ավելին, համաձայն որոշ հոգեբանական մտակառույցների մարդն ընդհանրապես ոչ թե ռացիոնալ, այլ իռացիոնալ է և, որ ռացիոնալությունը ինքնախաբեություն է,

- մարդիկ իրենց գործողություններում առաջնորդվում են ոչ թե ռացիոնալ նորմերով, այլ մշտապես խախտում են դրանք,

- գոյություն ունեն բազմաթիվ հիմնահարցեր, իսկ ժամանակակից աշխարհում առավելապես, որոնց լուծման համար մարդու կարողությունների ռեսուրսները սահմանափակ են: Մարդը զիջում է համակարգչին, նա որոշումներ է կայացնում ոչ լրիվ տեղեկատվության պայմաններում, իսկ դա նշանակում է ռացիոնալության համար պակասում են ինչ-ինչ տեսանկյուններ գծելով «նվազագույն ռացիոնալիզմի» սահմանը:

Մակայն, բերված փաստարկներն ունեն դրանք մերժելու իրենց զուգահեռը,

- ռացիոնալության հասկացությամբ կուլտուրական և պատմական փոփոխականությունը չի նշանակում, թե ընդհանուր ստանդարտներ գոյություն չունեն և, որ ռացիոնալության ըմբռնման տարբեր ներկայացուցիչների միջև բանավեճը հնարավոր չէ: Օրինակ, ժամանակակից ֆիզիկայի դիտակետից կարելի է հասկանալ Արիստոտելի ֆիզիկան և բացատրել նրա սահմանները,

- բնավ չլինելով հոգեվերլուծության կողմնակից, և մարդկային կյանքում ոչ գիտակցականի մոտիվներին հատկացնելով կարևոր տեղ, չի կարելի չտեսնել, որ մասնակցությունը սոցիալական կյանքում ենթադրում է ոչ գիտակցական հակումների ռացիոնալ վերահսկողություն: Հենց ռացիոնալությունն է պատասխանատու արարքների հնարավորությունների պայմանը,

- գոյություն ունեն ռացիոնալ որոշումների ընդունման սահմաններ, խնդիրը հանգում է ռացիոնալ որոշումների ընդունման հնարավորությունների ընդլայնմանը, դրա համար օգտագործելով տարբեր օժանդակ միջոցներ, այդ թվում նաև համակարգչի ինտելեկտը¹:

Ինչպես ակներև է, նույնիսկ ռացիոնալի օգտին բերվող փաստարկներն ավելի շատ հաստատում են իռացիոնալի հանգամանքը և դժվարությունն այն է, թե ինչպես Մաքս Բորնի խոսքերով «ազատվել սուբյեկտիվից և կարողանալ ձևակերպել օբյեկտիվը», տվյալ դեպքում, թե որքանով է մարդու և կազմակերպությունների ռացիոնալության կեղևի տակ դիտարկումները համապատասխանում իրական պահվածքի տարընթաց միտումներին: Այս առումով Ռ.Թեյլերի աշխատության ամբողջ շարադրանքը մարդկային հոգեբանության պեղումներն են և ցուցադրում են վերջինս ճնող պատճառները: Օրինակ, մթերային խանութներում առաջարկվում են ապրանքների միլիոնավոր կոմբինացիաներ, որոնք տեղավորվում են ընտանեկան բյուջեում, սակայն հազիվ թե կարելի է պնդել, որ մարդկանց կատարած բոլոր ընտրություններն օպտիմալ են, կամ հոգեբանների կողմից փաստագրված է, որ մարդիկ ընտրություններ կատարելիս անկանխակալ չեն, կամ «Տնտեսի համար նախորդ օրերին սննդի համար կատարած ծախսը

¹ «Вопросы философии», 2010, № 8, с. 28-29.

որոշիչ դեր չի խաղում, թե ինչ քանակությամբ սնունդ ուտի այսօր», կամ արդյո՞ք ընտրություններն են օպտիմալ «մասնագիտության, հիփոթեքի կամ ամուսնական գուզրնկերոջ ընտրության», ժամանակ և այլն: Այն, որ ֆերմերները կօգտագործեն ավելի շատ պարարտանյութ, եթե գինը նվազի «սուկ էֆեկտի ուղղություն է: Նույնն է, թե կանխատեսես, որ, երբ խնձորները ծառից ընկնեն, ապա դրանք կընկնեն ներքև և ոչ թե վերև: Կանխատեսումն ինքնին ճիշտ է, բայց դա հենց ձգողականության է ճշգրիտ օրենքը չէ»¹: Այն, որ մարդիկ ի հայտ են բերում «Տնտեսի» տրամաբանությանը չհամապատասխանող պահվածք գործունեության բոլոր ոլորտներում ավելի շուտ օրինաչափություն է, քան բացառություն, հետևապես «այն տեսությունները, որոնք հենվում են այն ենթադրության վրա, որ բոլոր մարդիկ Տնտեսներ են, պետք է մերժվեն»: Այստեղ է, որ Ռ.Թեյլերը առաջադրում է երևույթները մեկնաբանելու «տնտեսագիտության տեսության կատարելագործված տարբերակի» հայեցողության ստեղծման անհրաժեշտությունը, որպես «վարքագծային տնտեսագիտություն», որը «նոր գիտություն չէ, սա նույն տնտեսագիտությունն է, պարզապես զգալիորեն հարստացված է հոգեբանության և այլ հասարակական գիտությունների նվաճումներով»²:

Աշխատության վերլուծությունները ոչ թե տեսաբանություններ են, այլ կիրառական ոլորտից փաստարկներ, որոնք խզվածություններ են դրսևորում ավանդական տեսությունների մոդելների հետ: Միաժամանակ հարկ է նկատել, որ այսպես կոչված «սխալ տնտեսագիտության» կազմավորման ուղին մեկնաբանվում է այլևայլ տեսությունների հետ ունեցած աղերսների, քննադատության կամ մերժելու դրվածքներով: Եվ այս իմաստով գրքում կարելի է հանդիպել հայ ընթերցողին բազմաթիվ հայտնի և անհայտ անունների՝ Ադամ Սմիթ, Հերբերտ Սայմոն, Կահնեման և Տվերսկի, Դանիել Բեռնուլի, Գարի Բեքթեր, Ֆոն Նեյման և Մոզես Նոտեմ, Վեռնոն Սմիթ, Քեններ Էրոու, Ջոն Հիքս, Փոլ Սամուելսոն, Միթոն Ֆրիդմեն, Ջոն Մեյնարդ Բեյնս, Ֆրանկո Մոդիլյանի, Ջոն Նեշ և շատ ուրիշներ՝:

Այսպես, հայտնի է, Միթոն Ֆրիդմենի դոկտրինայում ազատ անհատն իր գործողություններում ռացիոնալ մարդ է, այս իմաստով գտնելով, որ պոզիտիվ տնտեսագիտությունը սկզբունքորեն անկախ է որևէ վարքագծային դիրքից: Ռ.Թեյլերը վկայակոչում է Մ.Ֆրիդմենի էսսեյից այն օրինակը, որ «ճշգրիտ կանխատեսումներ կստացվեին այն հիպոթեզից, որ բիլիարդ խաղացողը գնդակին հարվածները հասցնում է այնպես, որ, կարծես թե, ինքը գիտի այն բարդ մաթեմատիկական բանաձևերը, որոնք գնդակին տալիս են օպտիմալ ուղղություն, որ, կարծես թե, կարող է աչքաչափով որոշել, թե գնդակները միմյանց հանդեպ ինչ անկյան տակ են գտնվում և այլն, և որ կարող է այդ բանաձևերով կայծակնային արագությամբ հաշվարկներ անել ու հետո գնդակները շարժել այն ուղղությամբ,

¹ Ռիչարդ Թեյլեր, նշվ. աշխ., էջ 11:

² Ռիչարդ Թեյլեր, նշվ. աշխ., էջ 7-12:

* Վարքագծային տնտեսագիտության ստեղծման գործում Թեյլերը, հատկապես շրջադարձային է դիտում հանդիպումը հոգեբանական տնտեսագիտության հիմնադիրներից Դ.Կահնեմանի և Է.Տվերսկու հետ, երկար տարիներ համագործակցելով տարբեր հետազոտական ծրագրերի իրականացման աշխատանքներում:

որ ցույց են տվել բանաձևերը: Այս հիպոթեզի նկատմամբ մեր վստահությունը բխում է ոչ թե այն համոզմունքից, որ բիլիարդ խաղացողները, ներառյալ պրոֆեսիոնալները, կարող են անցնել կամ անցնում են նկարագրված գործընթացով, այլ ավելի շուտ բխում է այն համոզմունքից, որ եթե խաղացողներն այս կամ այն կերպ չկարողանային հասնել, ըստ էության, նույն արդյունքին, ապա նրանք իրականում չէին լինի բիլիարդի պրոֆեսիոնալ խաղացողներ»¹: Սակայն գոյություն ունի հոգեբանական գործոնի հանգամանքը, որտեղ ռացիոնալ ու իռացիոնալը հատվում են, և «Միսլ վարքագծի» տեսաբանը նույն օրինակի վրա հակադարձում է «Բիլիարդի պրոֆեսիոնալ խաղացողը գուցե և խաղում է այնպես, որ, կարծես թե, նա գիտի երկրաչափության և ֆիզիկայի բոլոր համապատասխան օրենքները, բայց սովորական խաղացողը սովորաբար նշանառության տակ է վերցնում անցքին **ամենից մոտ գնդակը**, հարվածում և վրիպում: Եթե մենք ցանկանում ենք օգտակար տեսություններ ունենալ, թե ինչպես են սովորական մարդիկ գնումներ կատարում, խնայողություններ անում թոշակի համար, աշխատանք փնտրում կամ ճաշ եփում, ապա ճիշտ կլինի, որ այդ տեսությունները չկառուցվեն այն ենթադրության վրա, որ բոլոր մարդիկ գործում են այնպես, որ, կարծես թե, իրենք փորձագետ են»²: Երևույթների վերլուծության այն մեթոդաբանական բանավեճը, որ առաջադրում է Ֆրիդմենը, ցուցադրում է տնտեսական քաղաքականության նոր լուծումներ, սակայն տնտեսագիտական մտքի նոր շարժում է ենթադրում վարքագծի դիտակետից արմատացած տեսակետների նոր ընթերցումների անհրաժեշտությունը, որը կրնալայնի նրա ներքին բովանդակությունը և ճշգրիտ բանալիներ կարող է տալ այդ լուծումներին:

Թեյլերի գրքում «Ենթադրաբար անկարևոր գործոններ», «Տիրապետման էֆեկտը», «Ցուցակը», «Արժեքի տեսությունը», «Կալիֆոռնյան երազանք», «Գանակոծում», «Մտային հաշվապահություն», «Պոկերի սեղանի շուրջ», «Միսլ վարքագիծն իրական աշխարհում», «Արդարության խաղեր», «Ամերիկյան ֆուտբոլ» և շատ ու շատ ավանդական տնտեսագիտությունից դուրս, առաջին հայացքից անհամակարգ թվացող շարադրանքում բացահայտվում են վարքագծային տնտեսագիտության շերտերն ու տիրույթները: Ջ.Մ.Քեյնսը մի անգամ նկատել է, որ դժվարությունը ոչ թե նոր գաղափարների յուրացումն է, այլ հին պատկերացումներից հրաժարվելը³: Օրինակ, Ռ.Թեյլերը բերում է արսիոմատիկ դարձած, տնտեսագիտության հիմնարար տեսության այն դրույթը, թե պահանջարկի կորերը ցած են իջնում, իսկ առաջարկի կորերը վեր են բարձրանում: Այսինքն, որքան բարձր է վարձատրությունը այնքան ավելի շատ է աշխատանքի առաջարկը: Մինչդեռ ընդհանրության մեջ այս բնորոշումները վիճարկելի աղերսներ ունեն: Այսպես թվում է, թե, եթե տաքսու վարորդների վարձատրությունը կրկնապատկվի, ապա ավելի շատ մարդիկ կուզենար տաքսի վարել նաև այն

¹ Ռիչարդ Թեյլեր, Միսլ վարքագիծ, Եր., 2021, , էջ 59-60:

² Ռիչարդ Թեյլեր, նշվ. աշխ, էջ 61:

³ Джон Мейнард Кейнс, Общая теория занятости, процента и денег. Избранное, М., 2007, с. 18-19

օրերին, երբ հնարավորություն կա ավելի շատ վաստակել և քիչ վարպետներ կուզենան այդ օրը հանգիստ վերցնել: Մինչդեռ գիտափորձը ցույց է տվել, որ որքան բարձր է վարձատրությունը, այնքան վարորդներն ավելի քիչ են աշխատում, հատկապես սկսնակ վարորդների համար յուրաքանչյուր օրվա համար նպատակային եկամուտ սահմանելը կատարում են ինքնատիրապետման գործառույթ¹:

«Միսլ վարքագիծը» իր հիմնավորումներն է գտնում այնպիսի ոլորտներում, ինչպես թոշակի անցնելու համար արվող խնայողությունների, հիփոթեքի ընտրության, արժեթղթերի շուկայում արվող ներդրումների ժամանակ կամ «հեռանկարային տնտեսություն», կրթություն, ավիացիա, լեռնագնացություն և այլն, հաստատելով նոր մոտեցումների անհրաժեշտության իրավունքը:

Տնտեսագիտության տեսությունը գերազանցապես հիմնավորված չէ էմպիրիկ դիտարկումներով, իսկ ռացիոնալ ընտրությունից եկող արքսիոմները բխեցվում են անկախ նրանից, թե դրանք «որևէ կապ ունեն, թե ոչ այն ամենի հետ, ինչին մենք առնչվում ենք մեր առօրյա կյանքում»: Այստեղ է, որ փաստը տրամաբանական ճշմարտության հասնող ըմբռնումից դառնում է օրինաչափություն, ինչպիսին է «տիրապետման էֆեկտը», համաձայն որի «մարդիկ ավելի շատ արժևորում են այն, ինչն արդեն իրենց ունեցվածքի մասն է կազմում, քան այն, ինչը կարող է դառնալ իրենց ունեցվածքի մի մասը, այսինքն՝ այն, ինչը հասանելի է, բայց դեռ իրենց սեփականությունը չէ»²: Դրա հիմքում ընկած է հոգեբանական ֆենոմենը: Եթե մի դեպքում նա ցավ կզգա դրանից բաժանվելու համար, իսկ, եթե չի տնօրինում՝ բավականություն այն ստանալու դեպքում: Եվ այս իմաստով ապրանքի ցածր կամ բարձր գների երևույթը հաճախ բացատրելի չէ գործարքի ավանդական տեսության պոստուլատներով: Նույնիսկ տնտեսագիտության պրոֆեսոր Ռ.Ռոզերը լինելով գինու վաղեմի հավակնորդ, իր հավաքածուից գինին երբեք չէր վաճառում նաև այն դեպքերում, երբ ցանկացողները յուրաքանչյուր 22ի համար առաջարկում էին մի քանի անգամ բարձր գին: Թվում է ռացիոնալ մարդը պետք է օգտագործեր առիթը: Սակայն գործում է մտածելակերպի երևույթը. մարդիկ ավելի զգայական են կորուստների, քան ձեռքբերումների համար:

Հայտնի է, որ Ջ.Քեյնսը բազմիցս անդրադարձել է տնտեսական երևույթների ճանաչողության ժամանակ ռացիոնալի և իռացիոնալի խնդրին: Այսպես, անդրադառնալով երկարաժամկետ սպասումներին, նա գտնում է. «...չի կարելի եզրակացնել, թե աշխարհում ամեն ինչ կախված է մարդկային հոգեբանության իռացիոնալ ուժերի խաղերից: Ընդհակառակ, երկարաժամկետ սպասումների վիճակը ոչ հաճախ բավական կայուն է, և եթե դա այդպես չէ, ապա մյուս գործոններն ունենում են փոխհատուցող ազդեցություն: Պետք է միայն հիշել, որ մարդկային որոշումները որքանով դրանք ազդում են ապագայի վրա՝ անձնական, քաղաքական կամ տնտեսական գործերում՝ սպասումները չեն կարող

¹ Ռիչարդ Թեյլեր, նշվ. աշխ, էջ 261:

² Ռիչարդ Թեյլեր, նշվ. աշխ, էջ 24:

ենթարկվել խիստ մաթեմատիկական հիմնավորումների, քանի որ բացակայում է դրանց հիմնավորման բազան: Հենց գործունեության մեր բնածին ծարավն է այն ուժը, որը շարժում է աշխարհը, մեր «եսի» ռացիոնալ կեսը, ինչպես կարողանում է զբաղվում է այլընտրանքների ընտրությամբ, հաշվարկում է այնտեղ, որտեղ կարելի է, սակայն հաճախ այն հայտնվում է երջանկությունն փնտրելու մեր քմահաճույքների, տրամադրությունների և ցանկությունների իշխանության ներքո»¹: Ակներև է, որ, այնուամենայնիվ, շատ բան է կախված «մարդկային հոգեբանության իռացիոնալ ուժերի խաղերից: Այստեղ է, որ նա կառուցում է երևույթների գնահատման իր փիլիսոփայությունը, ռացիոնալության հասկացությունը քննելով մարդու բնույթի խորքային չափումների մեջ, դրանով իսկ առաջադրելով «սահմանափակ ռացիոնալության» գաղափարը, որը դարձավ նոր ինստիտուցիոնալիզմի հիմնադրություններից մեկը: Սակայն, ինչպես նկատում է Ռ.Թեյլերը, Քեյնսի մակրոտնտեսագիտական արժարժումները չդարձան ավանդույթ և շարունակություն չստացավ:² Մինչդեռ, տնտեսագիտության այդ ոլորտը վարքագծի դիտակետից ներքին բովանդակության ընդլայնման և նոր լուսաբանումների կարիք ունի: Մարդկանց վարքագիծն էական է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության լուծումների առումով, հատկապես ֆինանսական ճգնաժամերի ժամանակ: Պատճառների ճանաչողական չափումները մնում են նույն հարթության մեջ, մի դեպքում պաշտպանելով Քեյնսի տեսակետը, թե կառավարությունը պետք է իրականացնի նոր ներդրումներ, իսկ մի այլ դեպքում, թե դա կտանի բյուջեի ճգնաժամի կամ գնաճի: Իսկ սպառողի վարքագծային նրբությունների հաշվառումը կամ ակտիվ ձեռներեցությամբ զբաղվելու միջոցառումները կարող են շահեկան արդյունքների հանգեցնել:

Ռ.Թեյլերի գրքի վերաբերյալ էքսկուրսը կապված է որոշակի դժվարությունների հետ: Միայն վարքագծի վերաբերյալ նրա մեկնությունները՝ կառուցված բազում օրինակների վրա, ավելի լավ ու ավելի համոզիչ, քան արված է գրքում, գրեթե հնարավոր չէ: Նորանոր փաստերի մեջ նա տեսնում է վարքագծային տնտեսագիտության զարգացման մղումն ու նոր կապերի լուծման ուղիները: Ուստի փաստեր և նորից փաստեր, որոնք թույլ կտան «փոխելու մեր գործելաոճը», «սխալ կանխատեսումներից խուսափելու համար», իսկ նրանք «ովքեր համառորեն կառչել են միայն Տնտեսներից բաղկացած մտացածին աշխարհից, անտեսանելի ձեռքի փոխարեն սպիտակ դրոշ կծածանեն»³ :

Նա իրեն համարում է այն «ուխտագնաց» տնտեսագետը, որն ապագան տեսնում է վարքագծային տնտեսագիտության մեջ: Իսկ «ընթերցողներին իմ միակ խորհուրդը հետևյալն է՝ այլևս մի կարդացեք, եթե նկատեք, որ ընթերցանությունը գրավիչ չէ: Հակառակն անելը պարզապես սխալ վարքագծի դրսևո-

¹ Джон Мейнард Кейнс, նշվ. աշխ, էջ 160:

² Ռիչարդ Թեյլեր, նշվ. աշխ, էջ 449:

³ Ռիչարդ Թեյլեր, նշվ. աշխ, էջ 461:

րում է»¹: Տնտեսագետների համար սխալ վարքագծի դրսևորում կլինի, եթե չկար-
դան Թեյլերի աշխատությունը, առավելապես շուկայական տնտեսությանն անց-
նող երկրներում, որոնք հազեցված են տնտեսական ու սոցիալական հակասու-
թյուններով ու մոլորություններով: «Միայն վարքագիծ» աշխատությունը հայ
տնտեսագետներին ուղղորդում է նոր ուսումնասիրությունների:

Օգտվազորված գրականության ցանկ

1. Մաքս Բորն, Իմ կյանքն ու հայացքները, Եր., 1978:
2. Ռիչարդ Թեյլեր, Միայն վարքագիծ, Եր., 2021:
3. «Вопросы экономики», 2018.
4. «Вопросы экономики», 2012, №10.
5. Селичмен Б. Основные течения современной экономической мысди, М., 1968, с. 27.
6. «Вопросы философии», 2010, № 8.
7. Джон Мейнард Кейнс, Общая теория занятости, процента и денег. Избранное, М., 2007.

References

1. Maqs Born, Im kyanqn ow hayacqner'y', Er., 1978:
2. R'ichard T'eyley, Sxal varqagic', Er., 2021:
3. «Voprosy jekonomiki», 2018.
4. «Voprosy jekonomiki», 2012, #10.

¹ Նույն տեղում, էջ 14:

* Առիթի բերումով նկատես, որ վարքագծային տնտեսագիտության թեմատիկան դուրս չէ
հայ տնտեսագիտական մտքի ուշադրությունից: Ռացիոնալի և իռացիոնալի հարաբե-
րակցության՝ կապված մարդկային պահվածքի ճանաչողական սահմանների ընդլայն-
ման հետ, ուշագրավ վերլուծություններ է կատարել Հովսեփ Աղաջանյանը (տե՛ս,
«Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսում տպա-
գրված հոդվածաշարը, 2006, № 1, 2, 3, 2007, № 3, և այլ ուսումնասիրություններ):
Թեմատիկայի որոշակի տեսակետներ են արծարծվում Ատոմ Մարգարյանի «Ժամա-
նակակից տնտեսագիտության մեթոդաբանական հիմունքների շուրջ» (Բանբեր ՀՊՏՀ,
2004№ 2), Ատոմ Վարդանյանի՝ «Քեյնսյան տեսության վարքագծային տեսանկյուն-
ները» (Բանբեր ՀՊՏՀ, 2010, № 1), և ուրիշներ:

Վ.Միրզոյանի և Ա.Մարտիրոսյանի «Հոգեբանության և տնտեսագիտություն» (2018)
աշխատությունը դիտողություններ են հայ մշակույթի պատմության կտրվածքով, իսկ
Մ.Եղիազարյանի և Ա.Մարտիրոսյան «Ինստիտուցիոնալիզմի հոգեբանական ուղղու-
թյան ներդրումն տնտեսագիտական վերլուծություն» (2016) ու Ա.Մարտիրոսյանի և Բ.Մար-
տիրոսյանի «Գիտատեխնիկական նորարարությունների տնտեսական նշանակու-
թյունը և ինստիտուցիոնալ տեսությունը գործնականում» (2016) մենագրությունների
վերնագրերն արդեն ցուցադրում են հարցի հետազոտական ուղղվածությունները:
Վարքագծային տնտեսագիտության իր անդրադարձերն է ստացել նաև Ռ.Մարինյանի
«Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության» երկրորդ և երրորդ
գրքերում (2014, 2019):

Ինչպես ասում է Ռ.Թեյլերը, վարքագծային տնտեսագիտությունը դադարել է «լուսանց-
քային գործունեություն» լինելուց և վերածվում է «մեյնսթրիմի՝ հիմնական հոսանքի»:

5. Selichmen B. Osnovnye techenija sovremennoj jekonomicheskoy mysdi, M., 1968.
6. «Voprosy filosofii», 2010, # 8.
7. Dzhon Mejnard Kejns, Obshhaja teorija zanjatosti, procenta i deneg. Izbrannoe, M., 2007.

«ՌԱՑԻՈՆԱԼ ՄԱՐԴՈՒ» ՄՈՂԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԿԱՆԸ ԿԱՄ ՌԻՉԱՐԴ ԹԵՅԼԵՐԻ «ՍԽԱԼ ՎԱՐՔԱԳԻԾԸ»

**Ռոբերտ Ներսեսի Սարինյան
Բելլա Վալերիի Գաբրիելյան**

Համառոտագիր: Հոդվածը համառոտ էքսկուրս է Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռիչարդ Թեյլերի «Սխալ վարքագիծ» աշխատության վերաբերյալ: Գրքի անվանումն ինքնին ցույց է տալիս արծարծվող հարցերի որոնումների ուղղությունը: Ինչ խոսք, ընդլայնվել են տնտեսագիտության սահմանները, յուրացնելով նաև այլ գիտությունների տարածքները: Մինչդեռ իրական կյանքում մարդկանց վարքագիծը տարբերվում է տնտեսագիտական մոդելներում բնակվող մտացածին վարքագծից: Դա բացատրվում է նրանով, որ տասնամյակներ շարունակ տնտեսագիտության տեսությունը սովորեցնում էին որպես բնագիտական առարկա: Գործունեության բոլոր ոլորտներում մարդիկ դրսևորում են ռացիոնալ մարդու տրամաբանությանը չհամապատասխանող վարքագիծ, որն ավելի շուտ օրինաչափություն է: «Կատարելագործված տնտեսագիտության տեսության» ստեղծումը դարձել է անհրաժեշտություն, որը չի հանդիսանում նոր գիտություն, որպես «վարքագծային տնտեսագիտություն» դա նույն տնտեսագիտություն է՝ հարստացված հոգեբանությամբ և այլ հասարակական գիտությունների նվաճումներով:

Տնտեսագիտության այն ոլորտը, որը, հատկապես կարիք ունի ներքին բովանդակության ընդլայնման՝ մակրոտնտեսագիտությունն է: Ռ.Թեյլերի գիրքը հայ տնտեսագետներին ուղղորդում է նոր հետազոտությունների:

Բանալի բառեր. վարքագծային տնտեսագիտություն, հոգեբանություն, ռացիոնալ մարդ, մաթեմատիկական մոդելներ, մակրոտնտեսագիտություն, ռացիոնալ և իռացիոնալը:

ВОПРОС ИСТИННОСТИ МОДЕЛИ «РАЦИОНАЛЬНОГО ЧЕЛОВЕКА» ИЛИ «ПЛОХОЕ ПОВЕДЕНИЕ» РИЧАРДА ТЕЙЛОРА

**Роберт Нерсесович Саринян
Белла Валерьевна Габриелян**

Аннотация: Статья представляет собой краткий экскурс по труду «Плохое поведение» нобелевского лауреата Ричарда Тейлора. Само название книги указывает на направление исследования обсуждаемых вопросов. Конечно, границы эко-

номической науки расширились, заняв территории и других наук. Между тем поведение людей в реальной жизни отличается от фиктивного поведения в экономических моделях. Это объясняется тем, что на протяжении десятилетий экономическая теория преподавалась как предмет науки. Во всех сферах деятельности люди демонстрируют поведение, не соответствующее логике разумного человека, что является скорее закономерностью. Создание «Усовершенствованной экономической теории» - необходимость на века, которая не является новой наукой, как и «поведенческая экономика» - это такая же экономическая наука, обогащенная психологией и достижениями других общественных наук.

Область экономики, которая особенно нуждается в расширении внутреннего содержания — это макроэкономика. Книга Р. Тейлора направляет армянских экономистов к новым исследованиям.

Ключевые слова: поведенческая экономика, психология, рациональный человек, математические модели, макроэкономика, рациональное и иррациональное.

THE QUESTION OF THE TRUTH OF “THE RATIONAL MAN” MODEL OR “MISBEHAVING” OF RICHARD THALER

Robert Nerses Sarinyan
Bella Valeri Gabrielyan

Abstract: The article is a brief digression on the work of Nobel Prize winner Richard Thaler called "Misbehaving". The very title of the book indicates the direction of the raised issues examination. Of course, the boundaries of the economy have expanded, having also mastered the areas of other sciences. Meanwhile, the behavior of people in real life differs from the imaginary behavior that lives in economic models. This is due to the fact that for decades the theory of economics has been taught as a natural science discipline. In all spheres of activity, people exhibit behavior that does not correspond to the logic of a rational man, which is rather a pattern. The creation of an "Improved Economic Theory" has become a necessity, which is not a new science, as "behavioral economics", it is the same economics enriched with psychology and the achievements of other social sciences.

Macroeconomics is an area of the economics that particularly needs to expand its internal content. R. Thaler's book directs Armenian economists to new research.

Keywords: behavioral economics, psychology, rational man, mathematical models, macroeconomics, the rational and the irrational.

ԵՐԿՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԻ ԿԵՐՏՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Տարևիկ Սմբատի Փարսադանյան

Հոդվածը ստացվել է՝ 17.08.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն. Ժամանակակից պայմաններում գնալով կարևորվում է պետության՝ գաղափարների և նպատակային տեղեկատվական հոսքերի միջոցով արտաքին և ներքին հասարակության վրա ազդելու հնարավորությունը: Պետական առաջնահերթությունների հետ մեկտեղ (ինչպիսիք են նորարարությունը, ենթակառուցվածքները, տնտեսական աճը) վարկանիշը հատուկ տեղ է զբաղեցնում: Այն դիտարկվում է որպես պետության ռազմավարական զարգացման պայման, երկրի և նրա քաղաքացիների շահերի անհրաժեշտ և հաջող պաշտպանության միջոց, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքականության աջակցություն¹:

Հոդվածի նպատակը և խնդիրները. Հոդվածի նպատակն է վերլուծել և առանձնացնել բրենդի, իմիջի, վարկանիշի տարբերություններն ու նմանությունները, ընդգծել պետության վարկանիշի կայացման և գնահատման գործընթացը միջազգային մակարդակով և կատարել տեղայնացված առաջարկություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հոդվածում փորձ է արվել.

- ✓ ուսումնասիրել, վերլուծվել և բացատրել վարկանիշի կապը այլ հասկացությունների հետ,
- ✓ ընդգծել այլ հասկացությունների հետ «երկրի վարկանիշ» հասկացության նմանությունները և տարբերությունները,
- ✓ քննարկել երկրի վարկանիշի գնահատման մեթոդաբանությունը,
- ✓ առաջարկել ՀՀ վարկանիշի բարելավման հիմնական մոտեցումները:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը. Երկրի վարկանիշի մասին ուսումնասիրությունները սակավ են: Այն գիտական գրականության մեջ սկսել է շրջանառվել 20-րդ դարի կեսերից սկսած և գործածվել հոգեբանության՝ որպես առանձին ճյուղի, զարգացման հետ զուգահեռ:

Գրականության վերլուծություն.

Ի.Ս. Վաժենինսան և Ս.Գ. Վաժենինը «Տարածքի իմիջը, վարկանիշը և բրենդը» հոդվածում առանձին-առանձին բնութագրում են հասկացությունները, տրվում են դրանց սահմանումները: Նշվում է, որ ներկայումս Ռուսաստանի և նրա շրջանների դրական իմիջի, բրենդի և վարկանիշի ձևավորումը գնալով ավելի կարևոր է դառնում: Հոդվածում ներկայացված են այս խնդրի լուծման ուղիները Ռուսաստանի տարբեր շրջանների օրինակով²:

¹ Столярова Е. В. Формирование международного имиджа страны во внешней политике Республики Беларусь. Международные отношения: история, теория, практика: материалы II науч.-практ. конф. молодых ученых фак. междунар. отношений БГУ, Минск, 2 апр. 2012 г. / редкол. : В. Г. Шадурский [и др.]. – Минск: Изд. центр БГУ, 2012. – 252 с.

² Важенина И.С., Важенин С.Г. Имидж, репутация и бренд территории. Всероссийский экономический журнал ЭКО, 2008 г., стр. 3-16

Կ.Ե. Բոուլդինգը «Ազգային իմիջ և միջազգային համակարգեր» հոդվածում անդրադառնում է ազգ և պետություն հասկացություններին: Ներկայացնում է հետևյալ մոտեցումը, որ որոշակի ժամանակաշրջանում ընդունված «համապատասխան փոփոխականները» կարող են անընդունելի լինել մեկ այլ ժամանակաշրջանի և ազգի համար: Նշում է՝ կերտած իմիջը պետք է արտացոլի իրականությունը¹:

Ա. Ն. Չումիկովի հոդվածների հավաքածուն տեսական և կիրառական մակարդակով ներկայացնում է գործունեության տեխնոլոգիաները սեփական իմիջ ձևավորելու, հետագայում այն դրական վարկանիշի, այնուհետև կայուն բրենդի վերածելու նպատակով: Հեղինակն առաջարկում է մի շարք դեպքեր, որոնք ցույց են տալիս տարբեր ոլորտներում և իրավիճակներում նախագծային խնդիրների լուծման պրակտիկան: Միաժամանակ ցուցադրվում են ինչպես ավանդական մոտեցումներ, այնպես էլ տեղեկատվական դաշտի չափման և հետագայում դրանում համապատասխան մասնաբաժնի ձևավորման ժամանակակից մեթոդներ²:

Մեթոդաբանություն. Սույն աշխատանքի շրջանակում օգտագործվել են համընդհանուր գիտական՝ պատմա-տրամաբանական և մասնավոր՝ հավաքագրման մեթոդները, ինչպես նաև պահպանվել է վալիդության սկզբունքը:

Վերլուծություն. Երկրի վարկանիշը հասարակական կյանքի հիմնական ոլորտների (քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական, սպորտային, բնապահպանական) վերաբերյալ կարծրատիպային և էմոցիոնալ պատկերացումների հավաքածու է: Այլ կերպ ասած, այն մարդկանց գիտակցության մեջ գոյություն ունեցող կերպարն է: Ցանկացած պետություն ունի վարկանիշ՝ առանց հաշվի առնելու դրա վրա ով է աշխատում կամ չի աշխատում:

Երկրի վարկանիշի սահմանումները բազմազան են, և գործարար գրականության մեջ «իմիջ», «կերպար», «հարաբերություններ», «փառք» հասկացությունները շատ հաճախ օգտագործվում են հոմանիշներ:

Չնայած վերը շարադրված պնդմանը, այնուամենայնիվ պետք է փաստենք, որ այս հասկացությունների բովանդակության մեջ զգալի տարբերություններ կան: Այսպիսով, պետության կողմից ստեղծված պատկերների և հաղորդագրությունների հավաքածու է, որոնցից յուրաքանչյուրը իրեն հասանելի ձևերով բաց է թողնում արտաքին աշխարհին: Բրենդը ազգային արտադրանքի կամ հենց պետության մասին ակնկալիքների և զգացումների ամբողջություն է: Իսկ հեղինակությունը պետության մասին կայուն գնահատող կարծիք է, որը ժամանակի ընթացքում զարգանում է նրա հանրության շրջանում՝ յուրաքանչյուրի համար համապատասխան չափանիշներին համապատասխան: Այսինքն, հեղինակության վրա անուղղակի կերպով ազդում են բնակչության դիրքորոշումները, համոզմունքները³:


¹ Boulding K.E. National images and international systems. Journal of Conflict Resolution (JCR), Vol 3, Issue 2, 1959. p. 120-131

² Чумиков А.Н. Имидж – репутация – бренд: традиционные подходы и новые тенденции. Изд. Директ-Медиа, Москва|Берлин, 2015г., с. 107

³ <https://www.management.com.ua/marketing/index.php?type=0&page=5>, № 98

Գրականության մեջ վարկանիշի կերտման տարբեր մեթոդալոգիաներ են առկա, որոնք արժանի են քննարկման:

Վերը նկարագրվածը պատկերենք գծապատկերի տեսքով հասկանալու համար՝ ինչ դիրքում է գտնվում երկրի վարկանիշը:



Գծապատկեր 1. Պետության վարկանիշի կառուցվածքը¹

Այսպիսով, այս հասկացությունների միջև հիմնական տարբերությունն այն է, թե որքանով է պետությունը ազդում իր «վերջնական արտադրանքի» վրա: Իմիջը մեծապես ստեղծվում է հենց պետության կողմից, բրենդի ձևավորմանը նպաստում են սպառողները, վարկանիշը ենթակա է նվազագույն վերահսկողության, քանի որ այն ձևավորվում է «այլոց ուղեղներում»՝ պետության և նրա հետ հարաբերությունների մեջ մտած պետությունների բացահայտ գործողությունների արդյունքում:

Միաժամանակ, վարկանիշը պետության ակտիվներից է, որը կարող է ինչպես վնասել, այնպես էլ օգնել: Ակտիվը ցանկացած տեսակի սեփականություն է, որն արժեք ունի փոխանակման ժամանակ: Եվ որպեսզի վարկանիշը դառնա ակտիվ, դրա նկատմամբ պետք է ձևավորվի դրական վերաբերմունք հասարակության, լրատվամիջոցների, աջակիցների, ներդրողների և այլ խմբերի մոտ, որոնք մի կողմից ազդում են պետության քաղաքականության վրա, մյուս կողմից որոշ չափով կախված են դրանից:

Այսպիսով, պետության վարկանիշի կայացման գործում պետք է անցնել 3 փուլերը՝ ինքնության, իմիջի, բրենդի փուլերը:

Նկատելի է, որ մարքեթինգի մասնագետներն ավելի շատ օգտագործում են իմիջ, քան պատկեր տերմինը, և նույնիսկ առանձնացնելով այդ հասկացությունները՝ լուրջ սահման չեն գծում դրանց միջև: Ռոժկովը և Կիսմերեշկինը, խոսելով պատկերի և իմիջի տարբերության մասին, գրում են, որ «պատկերը առարկայի կամ արտադրանքի որակների վերաբերյալ պատկերացումների ամբողջություն

¹ <https://cyberleninka.ru/article/n/otsenka-i-formirovanie-korporativnogo-imidzha-malyh-predpriyatiy/viewer>

է, որը ցանկանալի է ներմուծելի զանգվածային գիտակցության մեջ¹: Իմիջը այն է, ինչ ձևավորվում է զանգվածային գիտակցության մեջ նախորդ փուլի ներմուծման արդյունքում: Իմիջի հիմնական առանձնահատկությունն այն է որ, արտացոլելով անցյալը և ուղղորդվելով դեպի ապագա, այն միշտ երկրորդային է իրական օբյեկտի նկատմամբ: Այն այնքան չի արտացոլում իրականությունը, որքան ստեղծում է վիրտուալ օբյեկտներ»²:

Իմիջի ստեղծման պատասխանատուն հենց ինքն է՝ պետությունը: Իմիջի ստեղծման համար պետք է համապարփակ ուսումնասիրել բնակչության գիտելիքները, դիրքորոշումները և համոզմունքները: Հետագայում մարքեթինգի և PR գործիքների ներգործությամբ դրանց հիման վրա կերտել երկրի վարկանիշը: Համապարփակ իմիջի բնութագրիչներն են.

1. Սոցիալական – թիրախային հասարակությունների գիտակցության մեջ ներդրում տվյալ երկրի հասարակության տնտեսական, սոցիալական և մշակութային նպատակների և գաղափարների դերի մասին:
2. Տեսողական – դիզայնի, բրենդինգի և այլ գրաֆիկական տեղեկատվություն պարունակող հատկանիշների նպատակաուղղված ազդեցություն տեսողական զգայարանների վրա:
3. Գործարար – սուբյեկտի՝ տվյալ դեպքում երկրի, գործարար գործունեության մասին պատկերացումների ձևավորում:

Ժամանակակից ազատ շուկայական պայմաններում երկրի վարկանիշի ստեղծման համար անհրաժեշտ է ոչ միայն անցնել վերը թվարկված փուլերով, այլ նաև բարձրացնել հաղորդակցման, բանակցությունների հստությունները, ինչպես նաև փոխադարձ շահավետության հարցը:


Երկրի վարկանիշը պետք է կատարի հետևյալ հաղորդակցական գործառույթները.

1. Նույնականացում – դրական երկրի կյանքի կողմերի մասին տեղեկատվության ընկալման դյուրացում (տվյալ օբյեկտի (երկրի) մասին որքան հնարավոր է արագ տեղեկության հավաքումը), քանի որ զանգվածային գիտակցությունն ավելի հավանական է, որ ստանա միայն առանցքային տեղեկատվությունը, որը համարվում է հիմնականը:
2. Իդեալականացում - երկրի պատկերների ընկալման համար առավել բարենպաստ պայմանների ապահովում, այսինքն թիրախային լսարանի համար ընդգծելով այն հատկանիշները, որոնք առավել նախընտրելի են:
3. Հակադրում - սեփական երկրի դրական վարկանիշի ստեղծման համար հողի նախապատրաստում (այլ երկրների կամ սեփական երկրի անցյալի օրինակով):

¹ Рожков И.Я., Кисмерешкин В.Г. Бренды и имиджи. М.: РИП-холдинг, 2006 г. 256 с., стр. 18.

² Гравер А.А. Образ, имидж и бренд страны: понятия и направления исследования. ВЕСТНИК ТОМСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА, Философия. Социология. Политология, 2012 г. №3(19), стр. 29-45.

4. Անվանական – ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում այլ պետություններից քո երկրի առանձնացում՝ ընդգծելով տարբերվող հատկությունները:
5. Էսթետիկ – երկրի ստեղծած տպավորության մեծարման նախատեսում:
6. Հասցեական – կոնկրետ լսարանի նկատմամբ նպատակաուղղվածություն: Ժամանակակից պայմաններում, երբ ակտիվորեն ընթանում է համաշխարհային առաջնորդների ազդեցության գոտիների բաժանման գործընթացը, երկրներին անհրաժեշտ են մեխանիզմներ՝ իրենց դրական վարկանիշի ապահովման գործում՝ հաշվի առնելով ինչպես համաշխարհային իրողությունները, այնպես էլ պետականության առանձնահատկությունները¹: Մեկ այլ մոտեցմամբ ինքնության, բրենդի, իմիջի, վարկանիշի փոխկապվածությունը բնութագրվում է հետևյալ կերպ: Այդ հասկացությունները տեղադրելով կոորդինատային հարթության քառորդներում: Առանցքները անվանակոչելով՝ ընկալում, ներքին և արտաքին անվանումներով: Ստորև ներկայացնենք գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 2. Երկրի ինքնության, իմիջի, բրենդի և վարկանիշի համակարգող գծանկար²

¹ https://new-disser.ru/_avtoreferats/01002636636.pdf
² Buhmann A. Measuring Country Image. Theory, Method, and Effects. Springer Fachmedien Wiesbaden, 2017, p. 165. DOI 10.1007/978-3-658-15407-3. Available at: https://www.academia.edu/27715438/Measuring_country_image_Theory_method_and_effects (accessed in 28.06.2022թ.)

Գծապատկեր 2–ից երևում է, որ առաջին քայլը երկրի ինքնության գիտակցումն է, որը հիմնված է երկրի հատկանիշների (փիլիսոփայություն, արժեք, մշակույթ (գծ. 1)), հաջորդիվ՝ PR–ի և գովազդի միջոցով, այսինքն՝ հաղորդակցման արդյունքում, բրենդի ձևավորում՝ ազգային արտադրանքի նկատմամբ վերաբերմունքի ձևավորում և ներկայացում: Բրենդի ընկալման և պետության միջամտության արդյունքում առաջանում է միջազգային հանրության սուբյեկտիվ վերաբերմունքը երկրի նկատմամբ՝ երկրի իմիջ: Իսկ երկրի վարկանիշը առաջ է գալիս բրենդի և իմիջի սինթեզի արդյունքում՝ այսինքն՝ հանրության կարծիքի հիման վրա:

Տեսականորեն և գործնականում գոյություն ունեն վարկանիշի գնահատման տարբեր մեթոդներ և միջոցներ: Վստահաբար կարելի է ասել, որ երկրի վարկանիշի համար պետք է կիրառել այն մոտեցումը, որի դեպքում գնահատումը իրականացվում է 360° մեթոդով: Համապարփակ ներկայացվում են ազգային և միջազգային հանրության, ինչպես նաև այլ երկրների ղեկավար կազմի գնահատականները:

Վարկանիշի գնահատումը տեղի է ունենում փորձի, արժեքային կողմնորոշումների, ընդհանուր ընդունված նորմերի, սկզբունքների հիման վրա: Օբյեկտիվ պայմանների արդյունքում վարկանիշը կարող է լինել դրական, բացասական և ոչ հստակ:

Պետության նպատակն է ստեղծել դրական վարկանիշ, որը բարձրացնում է մրցունակությունը, գրավում հասարակության ուշադրությունը, ինչպես նաև ավելացնում է աջակիցների թիվը, ինչը թույլ է տալիս ակտիվացնել ֆինանսական, տեղեկատվական, մարդկային և նյութական ռեսուրսները:

Ստորև ներկայացված է երկրի վարկանիշի գնահատման մեթոդներից մեկը, որը հիմնված է այն ենթադրության վրա, որ վարկանիշը, որպես արտաքին միջավայրի վրա ազդելու գործիք, պետք է մոտեցնել դրականին՝ դրանով իսկ բարձրացնելով երկրի «միջազգային հզորությունը»: Գնահատումը¹.

«5 արժեք» - եթե այս գործոնի կարգավիճակը լիովին համապատասխանում է դրական վարկանիշին.

«4 արժեք» - եթե այս գործոնի կարգավիճակը ոչ լիովին է համապատասխանում դրական վարկանիշին.

«3 արժեք» - եթե այս գործոնի կարգավիճակը թույլ է համապատասխանում դրական վարկանիշին.


«2 արժեք» - եթե այս գործոնի կարգավիճակն ընդհանրապես չի համապատասխանում դրական վարկանիշին:

Պետության վարկանիշի և դրա յուրաքանչյուր բաղադրիչի գնահատումը որոշվում է որպես միջին արժեք.

$$\bar{b} = \frac{1}{m \cdot n} \sum_{i=1}^m \sum_{j=1}^n b_{ij} ,$$


¹ Попов В. В. Имидж как фактор повышения конкурентоспособности автотранспортного предприятия на рынке пассажирских перевозок». Ростов-на-Дону – 2011г., стр. 167

որտեղ, *bij*-ը դրական վարկանիշին *i*-րդ գործոնի համապատասխանության աստիճանի *j*-րդ փորձագետի գնահատականն է.
n-ը փորձագետների քանակ,
*l*m-ը դիտարկվող գործոնների քանակ:
 Ստորև գծապատկեր 1-ի միջոցով ներկայացնենք երկրի վարկանիշը բնութագրող տնտեսական գործոնները.



Գծապատկեր 3. Երկրի վարկանիշի տնտեսական գործոնները¹

Գծապատկերում ներկայացված գործոնները յուրաքանչյուր փորձագետի կողմից գնահատվում է, հետագայում միջինացնելու նպատակով: Այսինքն, գնահատականները կարող են տատանվել 2-5 ընկած միջակայքում:



Գծապատկեր 4. Երկրի վարկանիշի և դրական վարկանիշի համապատասխանության սանդղակ

Գնահատման ժամանակ փորձագետների ընտրությունը պետք է կատարվի առանց նախապատվության(ընտրել տարածաշրջանի երկրները, զարգացած կամ զարգացող երկրները): Փորձագետների տվյալ ընտրության դեպքում վերջնական գնահատականը կլինի օբյեկտիվ:

Երկրի վարկանիշի գնահատման համար կարելի վերը նշված 5 տնտեսական գործոններից վերցնել այն տնտեսական գործոնները, որոնցով կարելի իրա-

¹ Чепкасов А. В. Средства массовой информации и публичный дискурс регионального ли-
 дера как инструменты формирования имиджа региона (на примере Кемеровской области).
 Дисс. докт. фил. наук. Кемерово, 2019, с. 434. стр. 64. Электронный ресурс:
Գրականության վերլուծություն

Ռուսաստանում նոր աղքատություն են անվանում 1990-ական թվականների շուկայական բարեփոխումներից հետո առաջացած աղքատությունը, 2000-ականների տնտեսական աճի հետևանքով առաջացած բնակչության եկամուտների բարեկեցության և նորմալ կենսամակարդակի հարաբերական ընկալումների փոփոխությունը, ինչպես նաև 2010-ականների տնտեսական հիմնախնդիրների ֆոնին բնակչության կենսամակարդակի անկումը:

Հայտնի է, որ 1990-ականների շուկայական բարեփոխումները հանգեցրին ԽՍՀՄ-ում գործող բազմաթիվ սոցիալական ծրագրերի փլուզմանը: Մասնավորապես, զբաղվածությունը դադարեց պարտադիր լինելուց, առաջացավ գործազրկությունը, որն էլ ավելի խորացավ տնտեսական անկմամբ: Պետական սոցիալական ապահովությունը փոխարինվեց սոցիալական ապահովագրության տարբեր ձևերով, որոնք շատ ավելի համահունչ էին շուկայական պայմաններին: Արդյունքում ձևավորվեց նոր աղքատների խավ: Աղքատությանը նվիրված ռուս հեղինակների աշխատություններում¹ նշվում է, որ նոր աղքատները սովորական տնային տնտեսություններ են, որոնք նախկինում վարում էին նույն կենսակերպը, ինչ հասարակության հիմնական մասը: Նրանց մեծ մասն աշխատում է պետական հատվածում (բյուջետային հաստատություններում): Իրենց հերթին, հին աղքատներն այն տնային տնտեսությունների ներկայացուցիչներ են, որոնք դեռևս բարեփոխումներից առաջ էլ աղքատ էին. դրանք են՝ բազմազավակ ընտանիքները, միայնակ մայրերը, բարոյազրկված հարբեցողների ընտանիքները և հաշմանդամները: Ռուս հեղինակները իրենց աշխատություններում նշում են նաև, որ բարեփոխումներից տուժածների թվում հիմնականում գտնվում են նախկինում արդյունաբերական ձեռնարկություններում աշխատած բանվորական խմբերի այն ներկայացուցիչները, որոնք չեն կարողացել գոյատևել տնտեսական նոր պայմաններում:

Հարկ է նշել, որ 2000-ականների սկզբին գրանցված տնտեսական աճը նվազեցրեց աղքատության շեմից ցածր գտնվող մարդկանց թիվը և այս առումով

¹ Тихонова, Н.Е. Феномен городской бедности в современной России. - М.: Летний сад, 2003, 408 с.2. Численность населения с денежными доходами ниже величины прожиточного минимума и дефицит денежного дохода (Росстат. Дата обращения: 5 мая 2020), Бирюкова С.С. и др. Семьи с детьми в России: уровень жизни и политика социальной поддержки. - М.: Изд. дом Высшей школы экономики, 2019. 153 с

առավել արդիական դարձան ոչ թե բացարձակ, այլ հարաբերական աղքատության չափանիշները: Սակայն, վերջին ժամանակաընթացքում, կապված տնտեսական հիմնախնդիրների հետ նկատվում է բնակչության կենսամակարդակի իջեցում, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ պատճառներով, այնպես էլ սուբյեկտիվ զգացումներով: Այդ իսկ պատճառով էլ, նոր աղքատություն հասկացությունը սկսում է կիրառվել նոր համատեքստում: Օրինակ՝ նշվում է, որ աղքատությունը «երիտասարդացել է»։ «աղքատների խմբում ներկայումս (2021թ. ՌԴ տվյալներով) 31%-ը կազմում են մինչև տասնվեց տարեկան երեխաները, իսկ դրանց տեսակարար կշիռը 2007թ.-ին բնակչության ընդհանուր թվաքանակում կազմում էր ընդամենը 21%»: Այսինքն՝ վերջին տասնչորս տարում այն ավելացել է 10%-ով:

Աշխարհի մնացած երկրներում նույնպես կիրառվում է «Նոր աղքատություն» բառակապակցությունը: Օրինակ, Մեծ Բրիտանիայում երբեմն «Նոր աղքատություն» են անվանում սոցիալական պետության փլուզման հետևանքով առաջացած բնակչության կենսամակարդակի անկումը: Այդ նույն համատեքստում նոր աղքատության ֆենոմենը ուսումնասիրվել է Եվրոպական համայնքի երկրների և Միացյալ Նահանգների նկատմամբ: Բացի այդ, մտավախություն կա, որ կյանքի սպասվող տևողության ավելացումը ևս կարող է հանգեցնել նոր աղքատության:

Դեռևս 1988 թվականին լույս տեսած «Համառոտ քաղաքական բառարան»-ում տրված է «Նոր աղքատներ» հասկացության մեկնաբանությունը հետևյալ կերպ՝ «Նոր աղքատներ» հասկացությունը առաջացել է 70-80-ական թվականների վերջին, այն ձևավորվել է զարգացած կապիտալիստական երկրներում 70-ական թվականների սոցիալ-տնտեսական ճգնաժամի ժամանակ գործազուրկների կոնկրետ զանգվածային խմբին բնութագրելու համար: Որպես կանոն, «Նոր աղքատներ» են անվանում նախկինում հմուտ և լավ վարձատրվող բանվորներին ու ծառայողներին, ովքեր ստանում են գործազրկության նպաստ կամ ունեն եկամտի այլ, երբեմն թաքնված աղբյուրներ (զբաղվածություն այսպես կոչված «սև» կամ «ընդհատակյա» տնտեսությունում, այսինքն՝ օրենքը շրջանցելով ստեղծված և գործող ձեռնարկություններում): Դրանք երբեմն ներառում են նաև համեմատաբար հարուստ ընտանիքների երիտասարդներին, ովքեր աշխատանք չեն գտնում դպրոցը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո և ապրում են իրենց ծնողների հաշվին: Իրենց սոցիալական բնույթով «Նոր աղքատներ»-ը զգալիորեն տարբերվում են ավանդական գործազուրկներից: Նրանք սովորաբար ավելի հեշտ են դիմանում գործազրկությանը նյութական առումով և ավելի դժվար՝ հոգեբանորեն: Սոցիալական խմբերին պատկանող «Նոր աղքատների» շարքում , որոնք մինչև վերջերս գրեթե չեն բախվել գործազրկության հետ, տարածված են թմրամոլությունը և ալկոհոլիզմը, իսկ ինքնասպանությունների տոկոսը բարձր է: Ավելի լայն իմաստով, «Նոր աղքատներ» հասկացությունը կիրառվում է բոլոր անապահով մարդկանց նկատմամբ՝ ընդգծելու զանգվածային աղքատության երևույթի ֆենոմենի «նորույթը», որն առաջացել է զարգացած կապիտալիստական երկրներում համեմատաբար

երկար ընդմիջումից հետո:»¹

«Գիտական գրականության մեջ չքավորներին՝ չունևորներին որպես սոցիալական շերտի, ինչպես և այդ շերտի այնպիսի կատեգորիաներին, ինչպիսիք են աղքատներն ու մուրացկանները, դասում են նաև հաշմանդամներին, ցածր վարձատրվող աշխատողներին, բազմազավակ ընտանիքներին, անօթևաններին և բնակչության մնացած նմանատիպ խմբերին, մասնավորապես, հատուկ շերտերում առանձնացնելով «նոր (աշխատող) աղքատներին» և, այսպես կոչված, «վտանգավոր դասին»²:

Իսկ եռհատորյա սոցիոլոգիայի գրքի բառարանում «Նոր աղքատներ» հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. ««Նոր աղքատներ»-ը բնակչության այն շերտերն են, որոնք իրենց կրթությամբ և որակավորմամբ, սոցիալական կարգավիճակով և ժողովրդագրական իրավիճակով նախկինում երբևէ չեն պատկանել բնակչության ստորին շերտերին (դրանք են՝ պետական հատվածում զբաղված բյուջետային հիմնարկների աշխատողները՝ բանվորները և ծառայողները, որոնք ներկայումս իրենց կենսամակարդակի իջեցման հետևանքով սովյալ պահին գտնվում են աղքատության շեմին):»³

Աշխարհի տարբեր երկրներում նոր աղքատության երևույթը կապում են նաև սոցիալական աջակցության ոլորտում պետության դերի նվազման հետ: Պետության մասնակցության անկումը սրվեց 1980-ականների բարեփոխումներից հետո. Ռեյգանոմիկան՝ ԱՄՆ-ում, Թեյչերիզմը՝ Մեծ Բրիտանիայում, տնտեսական ռացիոնալիզմը՝ Ավստրալիայում և այդպես շարունակ:

Ռեյգանոմիկան (անգլ. Reaganomics) իրենից ներկայացնում է 1981-1989 թթ. Ռոնալդ Ռեյգանի նախագահության օրոք ամերիկյան կառավարության վարած տնտեսական քաղաքականությունը: Այն ԱՄՆ-ում Հանրապետական կուսակցության պահպանողական մտածողությամբ ուժերի իշխանության գալու հետ կապված, այսպես կոչված, նեոպահպանողական ալիքի բարձրացումն է արևմտյան զարգացած շատ երկրներում: Ռեյգանոմիկայի տեսական հիմքը դեպի առաջարկը կողմնորոշված տնտեսագիտությունն էր: Դրանից գործնական եզրակացությունը հանգում էր ապրանքների և ծառայությունների պահանջարկի կարգավորումից դեպի դրանց արտադրության խթանմանը անցման շեշտադրումներին: Ներդրումների և նորարարությունների գործընթացների ծավալման, արտադրության վրա կատարված ծախսերի կրճատման, խնայողությունների աճման և մասնավոր կապիտալի կուտակման անհրաժեշտությունը պահանջում էր խոշոր հարկային բարեփոխումներ: Ռեյգանոմիկայի հիմնական ուղղություններն էին. կառավարության ծախսերի աճման տեմպերի իջեցումը, հարկային դրույքաչափերի իջեցումը, տնտեսական զարգացման վրա պետության ազդեցու-

¹ Краткий политический словарь. М., 1988, с. 279.

² Бондаренко Ю.В. Социальные сети малоимущих граждан Ставропольского края, диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Ставрополь, 2018, стр.16 (197 страниц).

³ Социология: в 3-ех томах: словарь по книге. - М.: Социологический факультет МГУ им. М. В. Ломоносова. В. И. Добреньков, А. И. Кравченко. 2003-2004.

թյան նվազեցումը: Մինևսյն ժամանակ, Ռեյգանը մտադիր էր հարկերի կրճատման ֆոնին ավելացնել սպառազինությունների ծախսերը ռազմական բյուջեի գրեթե բոլոր առանցքային հոդվածների ուղղությամբ, և դրանով էլ նրա վարած քաղաքականությունը արմատապես տարբերվում էր Նիքսոնի, Ֆորդի և Քարթերի նախորդ վարչակազմերի քաղաքականությունից:

Թետչերիզմը¹ (անգլ. Thatcherism) Մեծ Բրիտանիայի պահպանողական կառավարության քաղաքականությունն է Մարգարետ Թետչերի (1979-1990) գլխավորությամբ, որն ուղեկցվում է նախկինում ազգայնացված ձեռնարկությունների և տնտեսության ճյուղերի սեփականաշնորհմամբ, ֆինանսատնտեսական ոլորտում մոնետարիզմով, սոցիալական ծրագրերի կրճատմամբ, կրթության և առողջապահության սոցիալական ոլորտներում մասնավորեցմամբ: Ազատ շուկայի, բայց ուժեղ կառավարության գաղափարները միավորող գաղափարախոսությունը, որն առաջ քաշեց Մարգարետ Թետչերը, իրականում իրենից ներկայացնում էր «նոր աջերի» քաղաքական փիլիսոփայության բրիտանական տարբերակը: Թետչերիզմի հայեցակարգը սերտորեն կապված է նեոլիբերալիզմի և «շուկային թերապիայի» սոցիալ-տնտեսական հասկացությունների և կատեգորիաների հետ: Նրա վարած ներքին քաղաքականության հիմնական ուղղություններն էին. պետական ծախսերի խստագույն սահմանափակումը. Աշխատավարձի և գների նկատմամբ վերահսկողության բացառումը, մասնավոր ձեռներեցությանը աջակցումը. խոշոր կապիտալների ներդրումը գիտատեխնիկական հետազոտությունների աշխատանքներում և արդյունաբերության նոր ճյուղերում, անկարգությունների և գործադուլների դաժանորեն ճնշումը:

Համաշխարհային պրակտիկայում սոցիալական աջակցության համակարգի ձևավորումը սկսվել է 20-րդ դարի կեսերից՝ Մեծ դեպրեսիայից հետո, որն ուղեկցվում էր հսկայական ակամա գործազրկությամբ և կրում էր երկարատև բնույթ: Ելակետը համարվում է 1942 թվականի Բներիջի զեկույցը, որում ձևավորվել է սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործում պետության ակտիվ մասնակցության գաղափարը: Պետությունը իր վրա վերցրեց ռիսկերի նշանակալի մասը կապված աշխատավորների աշխատանքի կորստի, հաշմանդամության և կյանքի այլ անբարենպաստ հանգամանքների հետ: Ծնունդ առավ, այսպես կոչված, «ակտիվ զբաղվածության քաղաքականություն», որն ուղղված էր գործազրկության ժամանակաընթացքում աշխատանք փնտրելու, վերապատրաստման և վերուսուցման աջակցությանը: 1980-ական թվականներից սկսած, տնտեսական ռիսկերի բեռը կրկին աստիճանաբար սկսեց տեղափոխվել քաղաքացիների ուսերի վրա²: Այս առումով զարգացած երկրներում մտավախություններ առաջացան բնակչության կենսամակարդակի անկման հետ կապված: «Նոր աղքատություն» հասկացությունը սկսեց կիրառվել այն մարդկանց նկատմամբ, ովքեր դարձան պարտվածներ նոր տնտեսական պայմանների առաջ

¹ Այդ հասկացության հեղինակը բրիտանական լրագրողուհի Բեատրիս Քեմփբելլն է:

² Hacker J. The Great Risk Shift: The New Economic Insecurity and the Decline of the American Dream. Oxford University Press, 2008. p.250 .

գալու հետևանքով, այսինքն՝ ընդհանրապես իրենցից չկախված պատճառներով:¹

Նոր աղքատության հնարավոր աճը կապում են նաև կյանքի երկարատևության աճի հետ: Մարդիկ անցնում են թոշակի՝ չունենալով ապրելու համար բավարար միջոցներ: Այս պարագայում նվազում է նաև ֆինանսական հասանելիությունը, քանի որ ֆինանսական հատվածը կրճատում է տարեց մարդկանց մատուցվող ծառայությունների թիվը: Բացի այդ, տարեց մարդիկ ավելի հաճախ են ենթարկվում ֆինանսական ռիսկերի իրենց ֆիզիկական կամ ճանաչողական կարողությունների նվազման հետևանքով: Նրանք ունեն ցածր ֆինանսական գրագիտություն և ավելի հաճախ են դառնում ֆինանսական խարդախությունների գոհ:

Չնայած բազմաթիվ հրապարակումներին, այնուհանդերձ դեռևս գոյություն չունի արդեն իսկ ձևավորված «նոր աղքատներ» բնակչության խմբի ուսումնասիրության համար մի ամբողջական հայեցակարգ և մեթոդաբանություն, ինչը հնարավորություն կընձեռի բացահայտել դրանց հիմնական հատկանիշները մեր հանրապետության հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքում:

Մեթոդաբանություն

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին ստեղծված իրավիճակներով պայմանավորված (Արցախյան 44-օրյա պատերազմ, հետպատերազմյան անկայուն իրավիճակ, Քովիդ-19 համավարակ, Ռուս-Ուկրաինական ներկա պատերազմ) մեր հետազոտությունում փորձենք ներկայացնել հանրապետությունում նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափի (դրամ), բնակչության ծննդյան պահից սկսած կյանքի սպասվող տևողության (տարի), կենսաթոշակառուների թվաքանակի ցուցանիշների շարժընթացը (դինամիկան) վերջին հինգ տարիներին՝ 2016-2020 թթ. ընկած ժամանակահատվածում որպես նոր աղքատության դրսևորման երևույթի և բնակչության խոցելի խմբերից մեկի: Հաշվարկման համար հիմք են ծառայել վիճակագրական սոցիալ-տնտեսական երևույթների դինամիկայի ուսումնասիրության հիմնական ցուցանիշները (բացարձակ հավելած, աճի և հավելածի տեմպեր): Տեղեկատվական բազան՝ ՀՀ Վիճակագրության կոմիտեի կողմից հրատարակած ամենամյա տարեգրքերի տվյալներն են:

Մինևույն ժամանակ, մեր կողմից առաջարկություն է կատարվել ՀՀ ՎԿ-ին «2023 թվականի վիճակագրական ծրագիր»-ում ներառել «նոր աղքատներ» բնակչության խմբի վերաբերյալ տեղեկատվություն (հնարավորության դեպքում), ինչպես նաև մշակել մեթոդաբանություն՝ տեղայնացնելով այն մեր հանրապետության առանձնահատկություններին համապատասխան:

Վերլուծություն

Ներքոհիշյալ աղյուսակ 1-ում ներկայացված են տվյալներ ՀՀ նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափի (դրամ), բնակչության ծննդյան պահից

¹ Armstrong S. *The New Poverty*. Verso, 2017. p. 256, Room G. *New Poverty in European Community*. Palgrave Macmillan, 1990. p. 135.

սկսած կյանքի սպասվող տևողության (տարի), կենսաթոշակատուների թվաքանակի ցուցանիշների շարժընթացի (դինամիկայի) վերաբերյալ վերջին հինգ տարիներին՝ 2016-2020 թթ. ընկած ժամանակահատվածում:

Ինչպես վկայում են աղյուսակ 1-ում բերված տվյալները, վերջին հինգ տարիների ընթացքում կենսաթոշակատուների թվաքանակը առանձնապես չի փոխվել, միայն մեկ տարում այն աճել է 0,1 % -ով, կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից սկսած 2020թ. կազմել է 73.5 տարի 2019թ.-ի 76.5 տարվա դիմաց, կամ նվազել է 3,9 %-ով (նվազման տեմպը կազմել է 96,1%), այլ կերպ ասած, կրճատվել է 3 տարով (ինչը բավականին բացասական երևույթ է), իսկ նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը աճել է ընդամենը 3559 դրամով կամ՝ 8,8 %-ով (հետպատերազմյան, համավարակի, ինչու չէ նաև ներկայիս ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով հանրապետությունում օրեցօր ահազնացող գնաճի պայմաններում բոլոր ապրանքային խմբերի նկատմամբ):

Աղյուսակ 1¹

ՀՀ կենսաթոշակի միջին չափի, կյանքի սպասվող տևողության, կենսաթոշակատուների թվաքանակի դինամիկան 2016-2020 թթ.

Ցուցանիշ	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	Աճի/նվազման տեմպ,% 2020/2019
Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը, դրամ	40 397	40 634	40 478	40 424	43 983	108,8
Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, տարի	75.0	75.4	75.9	76.5	73.5	96,1
Կենսաթոշակատուների թվաքանակը, հազար մարդ	468, 5	458,2	463,1	466,6	467,0	100,1

Գիտական նորույթը

Հետազոտության գիտական նորույթը կայանում է հետևյալում.

ՀՀ նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափի (դրամ), բնակչության ծննդյան պահից սկսած կյանքի սպասվող տևողության (տարի) և կենսաթոշակատուների թվաքանակի (մնացած խմբերի վերաբերյալ բացակայում են պաշտոնական վիճակագրական տվյալները), ցուցանիշների դինամիկայի վերլուծության հիման վրա հաշվարկվել են 2016-2020 թթ. ընկած ժամանակահատվածում դրանց աճման (նվազման) տեմպերը, որոնք հնարավորություն են տալիս որոշելու «նոր աղքատներ» խմբի քանակական և որակական պարամետրերը:

Եզրակացություն

Փաստորեն, ուսումնասիրելով կենսաթոշակատուների խմբում նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը, հանգում ենք այն եզրակացության, որ, իրոք, մեր երկրում ևս ձևավորվել է նոր աղքատների խումբ և այդպիսի խմբերը շատ են, բացի կենսաթոշակատուներից, դրանց թվում են նաև բազմա-

¹ Աղյուսակը կազմված և հաշվարկված է հեղինակի կողմից ՀՀ ՎԿ-ի պաշտոնական տվյալների համաձայն, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2021», էջ 114,122

զավակ ընտանիքները, քաղաքային բնակչության որոշակի շերտերը, գործազուրկները, մուրացկանները, թմրամոլները, հաշմանդամները, որոնց թվաքանակը նկատելիորեն աճեց հատկապես Արցախյան 44-օրյա պատերազմից հետո և այլն: Միայն 43 983 դրամով ի նչ ծախսեր կարող են հոգալ մեր կենսաթոշակառուները՝ սննդի, կոմունալ ծախսերի, տրանսպորտային ծախսերի, թե՛ ոչ պարենային ապրանքների:

Եվ այսպես, «նոր աղքատության» և «նոր աղքատների» հարցը ժամանակակից պայմաններում նաև ՀՀ-ի համար դարձել է խիստ արդիական՝ ինչպե՞ս գոյատևել նման ծանր ճգնաժամային պայմաններում: Հետևաբար, «նոր աղքատության» խնդիրը և «նոր աղքատներ» սոցիալական շերտի առաջացումը պահանջում է հետազոտություն և վերլուծական խորը հետազոտություն՝ Հայաստանում աղքատության հաղթահարման ռազմավարությունների ձևակերպման համար: Կարծում ենք, բնակչության սոցիալական աջակցության ոլորտում հարկավոր է նպաստել պետության դերի բարձրացմանը, բնակչության խոցելի խմբերում վերանայելով կենսաթոշակների, նվազագույն աշխատավարձի, նպաստների ամսական չափերը, հասնել այն բանին, որ դրանք դառնան գնաճին համահունչ:

«Նոր աղքատների»՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի տեսական նկարագրությունը հարկավոր է տալ աղքատության գնահատման հիմնական տնտեսական ցուցանիշների համակարգվածության հիման վրա՝ բնութագրելով դրա էությունը, արտացոլելով այդ հասկացության տարբեր տեսակետները և առանձնացնելով դրանք հետևյալ խմբերում.

- բնակչության եկամուտների ցուցանիշներ;
- բնակչության կողմից նյութական բարիքների և ծառայությունների վրա կատարված ծախսերի և սպառման ցուցանիշներ;
- խնայողություններ;
- կուտակված գույքի ցուցանիշներ;
- բնակչության եկամուտների, աղքատության մակարդակի և սահմանների տարբերակման ցուցանիշներ;
- բնակչության կենսամակարդակի՝ որպես կարևորագույն սոցիալական կատեգորիայի ընդհանրացնող գնահատականների ցուցանիշները՝ հիմնվելով այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք կենսամիսիմունը և սպառողական զամբյուղն են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Тихонова, Н.Е. Феномен городской бедности в современной России. - М.: Летний сад, 2003, 408 с.
2. Численность населения с денежными доходами ниже величины прожиточного минимума и дефицит денежного дохода (Росстат. Дата обращения: 5 мая 2020)
3. Бирюкова С.С. и др. Семьи с детьми в России: уровень жизни и политика социальной поддержки. - М.: Изд. дом Высшей школы экономики, 2019. 153 с.
4. *Краткий политический словарь. М., 1988, с. 279.*

5. Бондаренко Ю.В. Социальные сети малоимущих граждан Ставропольского края. Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук, Ставрополь, 2018, 197 страниц.
6. Социология: в 3-ех томах: словарь по книге. – М.: Социологический факультет МГУ им. М. В. Ломоносова. В. И. Добреньков, А. И. Кравченко. 2003-2004.
7. Hacker J. The Great Risk Shift: The New Economic Insecurity and the Decline of the American Dream. Oxford University Press, 2008. p.250 .
8. Armstrong S. The New Poverty. Verso, 2017. p. 256, Room G. New Poverty in European Community. Palgrave Macmillan, 1990. p. 135.
9. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2021», ՀՀ ՎԿ

References

1. Tihonova, N.E. Fenomen gorodskoj bednosti v sovremennoj Rossii. - M.: Letnij sad, 2003, 408 s.
2. Chislennost' naselenija s denezhnymi dohodami nizhe velichiny prozhitochnogo minimuma i deficit denezhnogo dohoda (Rosstat. Data obrashhenija: 5 maja 2020)
3. Birjukova S.S. i dr. Sem'i s det'mi v Rossii: uroven' zhizni i politika social'noj podderzhki.- M.: Izd. dom Vysshej shkoly jekonomiki, 2019. 153 s.
4. Kratkij politicheskij slovar'. M., 1988, s. 279.
5. Bondarenko Ju.V. Social'nye seti maloimushhih grazhdan Stavropol'skogo kraja. Dissertacija na soiskanie uchenoj stepeni kandidata sociologicheskikh nauk, Stavropol', 2018, 197 stranic.
6. Sociologija: v 3-eh tomah: slovar' po knige. – M.: Sociologicheskij fakul'tet MGU im.M. V.Lomonosova.V. I. Dobren'kov, A. I. Kravchenko. 2003-2004.
7. Hacker J. The Great Risk Shift: The New Economic Insecurity and the Decline of the American Dream. Oxford University Press, 2008. p.250 .
8. Armstrong S. The New Poverty. Verso, 2017. p. 256, Room G. New Poverty in European Community. Palgrave Macmillan, 1990. p. 135.
9. «Hayastani vitwakagrakan taregirq-2021»

**«ՆՈՐ ԱՂՔԱՏՆԵՐ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԴՐԱԵՎՈՐՈՒՄՆԵՐ**

**Գոհար Վազգենի Վարդանյան
Գառնիկ Լյովայի Մամիկոնյան**

Համառոտագիր: Աղքատության հիմնախնդիրը վերաբերում է աշխարհի բոլոր երկրներում և՛ քաղաքականության, և՛ գիտության մեջ առավել լայն քննարկվող խնդիրների թվին: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ դրա մասին ամեն ինչ արդեն ասվել է, և եթե աղքատության մասին հարցը դեռևս կարող է քննարկվել, ապա ավելի շուտ դա կվերաբերի ամենից առաջ այդ երևույթի դեմ գործնական միջոցառումների մշակման ուղղություններին, քան նրա էու-

թյան, պատճառների և հիմնական դրսևորումների վերլուծության հարցերին: Այնուհանդերձ, կարող ենք անվերապահորեն հաստատել, որ դա ամեննին էլ այդպես չէ: Վերջին տասնամյակների ընթացքում շատ հաճախ է խոսվում «նոր աղքատության» երևույթի մասին, և շատ է խոսվում բնակչության «նոր աղքատ» խմբերի մասին: «Նոր աղքատություն» տերմինը բազմաթիվ իմաստներ ունի, այն նկարագրում է մի շարք տարբեր երևույթներ, որոնք կապված են հենց աղքատության ընկալման փոփոխության հետ: Այս արտահայտությունն օգտագործում են տարբեր ոլորտների հետազոտողները, ինչու չէ՝ լրագրողները, և այս հայեցակարգի ընկալումը կախված է կոնկրետ կոնտեքստից: «Նոր աղքատություն» արտահայտությունը հայտնվել է վերջին տասնամյակներում և տարբեր երկրներում ու տարբեր ժամանակներում տարբեր կերպ է ընկալվում: **Հողվածի նպատակը:** Այս հետազոտությունում նպատակ է դրված ուսումնասիրել «նոր աղքատություն» և «նոր աղքատներ» հասկացությունները, տալ դրա սահմանումները տարբեր հեղինակների կողմից, ուսումնասիրել բնակչության այդ շերտի դրսևորման առանձնահատկությունները աշխարհի տարբեր երկրներում և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում: Այս նպատակին հասնելու համար մեր կողմից դրվեցին հետևյալ խնդիրները.

- ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած պաշտոնական տվյալների հիման վրա վերլուծել մեր հանրապետությունում վերջին հինգ տարիների ընթացքում կենսաթոշակառուների միջին ամսական կենսաթոշակի դինամիկան՝ բնակչության այս հատվածը դիտարկելով որպես «Նոր աղքատների» դրսևորման առանձնահատկություններից մեկը,

- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության բնակչության ծնունդից ի վեր կյանքի տևողության դինամիկան վերջին հինգ տարիների ընթացքում՝ կյանքի տևողության աճը համարելով որպես «նոր աղքատության» դրսևորման հատկանիշ,

- ուսումնասիրել ՀՀ-ում կենսաթոշակառուների թվաքանակի դինամիկան վերջին հինգ տարիներին՝ 2016-2020 թթ. որպես աղքատության նոր շեմի ամենախոցելի խմբերից մեկը:

Մեթոդաբանությունը: Հետազոտության համար հիմք են ծառայել վիճակագրական սոցիալ-տնտեսական երևույթների դինամիկայի ուսումնասիրության հիմնական ցուցանիշները (բացարձակ հավելած, աճի և հավելածի տեմպեր): Տեղեկատվական բազան ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տարեգիրքների պաշտոնական վիճակագրական տվյալներն են: Միաժամանակ առաջարկություն ենք ներկայացրել ՀՀ վիճակագրական կոմիտեին՝ «2023 թվականի վիճակագրական ծրագրում» ընդգրկել «նոր աղքատ» խմբի մասին տեղեկատվությունը (հնարավորության դեպքում), ինչպես նաև մշակել մեթոդաբանություն՝ տեղայնացնելով այն մեր հանրապետության առանձնահատկություններին համապատասխան:

Գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը կայանում է հետևյալում. ՀՀ նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափի (դրամ), բնակչության ծննդյան պահից սկսած կյանքի սպասվող տևողության (տարի) և

կենսաթոշակատուների թվաքանակի (մնացած խմբերի վերաբերյալ բացակայում են պաշտոնական վիճակագրական տվյալները), ցուցանիշների դինամիկայի վերլուծության հիման վրա հաշվարկվել են 2016-2020 թթ. ընկած ժամանակահատվածում դրանց աճման (նվազման) տեմպերը, որոնք հնարավորություն են տալիս որոշելու «նոր աղքատներ» խմբի քանակական և որակական պարամետրերը:

Վերոնշյալում կատարված վիճակագրական վերլուծությունը ցույց տվեց, որ վերջին հինգ տարիների ընթացքում կենսաթոշակատուների թվաքանակը առանձնապես չի փոխվել և, ուսումնասիրելով կենսաթոշակատուների խմբում նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը, հանգում ենք այն եզրակացության, որ, իրոք, մեր երկրում ևս ձևավորվել է նոր աղքատների խումբ և այդպիսի խմբերը շատ են, բացի կենսաթոշակատուներից, դրանց թվում են նաև բազմազավակ ընտանիքները, քաղաքային բնակչության որոշակի շերտերը, գործազուրկները, մուրացկանները, թմրամոլները, հաշմանդամները, որոնց թվաքանակը նկատելիորեն աճեց հատկապես Արցախյան 44-օրյա պատերազմից հետո և այլն:

Բանալի բառեր. նոր աղքատներ, նոր աղքատություն, ռեյզանմիկա, թեւջերիզմ, բնակչության կենսամակարդակ, տնային տնտեսություններ, բազմազավակ ընտանիքներ, կենսաթոշակատուներ, հաշմանդամներ, տնտեսական նոր պայմաններ:

ПОНЯТИЕ «НОВЫЕ БЕДНЫЕ»: ИСТОРИЯ И ПРОЯВЛЕНИЯ

Гоар Вазгеновна Варданян
Гарник Леваевич Мамиконян

Аннотация: *Актуальность статьи.* Проблема бедности является одной из самых широко обсуждаемых тем в политике и науке во всех странах мира. Создается впечатление, что о ней уже все сказано, и вопрос о бедности если и может еще стоять, то скорее в плане разработки практических мер по борьбе с ней, чем с точки зрения анализа ее сущности, причин и основных проявлений. Тем не менее можно утверждать, что это далеко не так. В последние десятилетия очень часто обсуждается феномен «новой бедности», много говорят о «новых бедных» группах населения. Термин «Новая бедность» имеет многозначное выражение, оно описывает ряд различных явлений, связанных с изменениями восприятия самой бедности. Это словосочетание используется исследователями разных областей, почему бы и не журналистами, а восприятие этого понятия зависит от конкретного контекста. Словосочетание «новая бедность» появилось в последние десятилетия и по-разному воспринимается в разных странах и в разное время.

Цель статьи. Целью данного исследования является изучение понятий «новая бедность» и «новые бедные», дать ее определения разными авторами, изучить осо-

бенности проявления этого слоя населения в разных странах мира, в частности, в Республике Армения. Для достижения поставленной цели нами были поставлены следующие *задачи*:

- на основании официальных данных, опубликованных Статкомитетом РА, проанализировать динамику среднемесячной пенсии пенсионеров нашей республики за последние пять лет, рассматривая этот слой населения как одну из особенностей проявления «новых бедных»,

- изучить динамику ожидаемой продолжительности жизни с момента рождения населения Республики Армения за последние пять лет, рассматривая увеличение продолжительности жизни как признак проявления «новой бедности»,

- изучить динамику численности пенсионеров РА за последние пять лет, 2016-2020 гг. как одна из наиболее уязвимых групп в новой черте бедности.

Методология: В основу исследования положены основные показатели изучения динамики статистических, социально-экономических явлений (абсолютный прирост, темпы роста и прироста). Информационной базой являются официальные статистические данные ежегодников, издаваемых Статистическим комитетом РА. В то же время мы внесли предложение в Статистический комитет РА о включении информации о группе населения «новые бедные» в «Статистической программе 2023 года» (по возможности), а также разработать методику, локализовав ее в соответствии с особенностями нашей республики.

Научная новизна: Научная новизна исследования заключается в следующем: по данным официальной статистики РА, нами была выделена и представлена социальная группа «новые бедные» в структуре современного армянского общества по трем показателям: средний размер ежемесячной пенсии, назначенной РА (драмов), ожидаемая продолжительность жизни с момента рождения (годы) и численность пенсионеров (остальные официальные статистические данные по группам отсутствуют), на основе анализа статистических показателей динамики рассчитаны темпы роста и прироста вышеуказанных показателей за период 2016-2020 годы, позволяющие определить количественные и качественные параметры группы «новых бедных».

Вышеприведенный статистический анализ показал, что численность пенсионеров за последние пять лет практически не изменилась, и изучая средний размер назначенной месячной пенсии, мы приходим к выводу, что действительно в нашей стране образовалась группа новых бедных, и таких групп, помимо пенсионеров, немало, среди них многодетные семьи, отдельные слои городского населения, безработные, нищие, наркоманы, инвалиды, численность которых заметно возросла особенно после 44-дневной Арцахской войны и т.д.

Ключевые слова: новые бедные, новая бедность, рейганомика, тетчеризм, уровень жизни населения, домашние хозяйства, многодетные семьи, пенсионеры, инвалиды, новые экономические условия.

THE CONCEPT OF "NEW POVERTY": HISTORY AND MANIFESTATIONS

Gohar Vazgen Vardanyan
Garnik Lyova Mamikonyan

Abstract: The problem of poverty is one of the most widely discussed topics in politics and science in all countries of the world. One gets the impression that everything has already been said about it, and the issue of poverty, if it can still stand, is more likely in terms of developing practical measures to combat it than in terms of analysis of its essence, causes and main manifestations. However less can be argued that this is far from the case. **Purpose of the article:** The purpose of this study is to reveal the concepts of "new poverty" and "new poor", to give its definitions by different authors, to study the features of the manifestation of this segment of the population in different countries of the world, in particular, in the Republic of Armenia. To achieve this goal, the article set the objective to identify the relevant groups of "new poor" in the Republic of Armenia.

Methodology: The main indicators of studying the dynamics of statistical social and economic phenomena (absolute growth, rates of growth) served as the basis for the calculation.

Scientific novelty: The scientific novelty of the research consists of the following: - based on the analysis of the dynamics of the average monthly pension (AMD) assigned to RA, life expectancy since the birth of the population (years) and the number of pensioners (official statistical data on other groups is missing), the rates of their growth (decline) in the period 2016-2020 are calculated, allowing to determine the quantitative and qualitative parameters of the group "new poor".

Statistical analysis of the above has shown that over the past five years, the number of pensioners has not been changed much. Studying the average the monthly pension assigned to a group of pensioners, we come to the conclusion that, indeed, a new group of the poor has also formed in our country, and there are many such groups besides pensioners, including large families, certain segments of the urban population, the unemployed, the poor, drug addicts, the disabled, whose number has increased markedly, especially after the 44-day Artsakh war, etc.

Keywords: New poor, new poverty, Reaganomics, Thatcherism, living standard of population, households, large families, pensioners, the disabled, new economic conditions

ԳՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԺԻ ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Լիանա Կառլենի Հարությունյան

Հոդվածը ստացվել է՝ 13.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 15.09.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն

Արդի տնտեսական կազմակերպությունը բնավ այնպիսին չէ, որ երաշխավորի տնտեսական կյանքի կատարյալ և ներդաշնակ զարգացումը: Հակառակը, այն իր մեջ կրում է նրա ներդաշնակ զարգացմանը խոչընդոտող և հեշտությամբ տնտեսական խանգարումներ ծնող մի շարք պահեր:

Կապիտալիստական արտադրության պայմաններում հավասարակշռությունը կապված է արտադրական կապիտալի որոշակի առանձնահատկությունների հետ: Շատ տնտեսագետներ որպես հավասարակշռության վերականգնման խոչընդոտ դիտում են ժամանակը, որն անհրաժեշտ է կապիտալային բարիքների պատրաստման համար՝ սպառողական բարիքների պակասը լրացնելու նպատակով: Մյուսները գտնում են, որ սպառողական ապրանքների նկատմամբ պահանջարկի աճը տանում է առկա արտադրության միջոցների առավել ինտենսիվ օգտագործմանը: Ուստի աշխուժացումը իսկույն գուգորդվում է սպառողական ապրանքների թողարկման աճով: Ստացվում է, որ «դժվարությունների արմատը» պետք է փնտրել ոչ թե արդյունաբերության այն ճյուղերում, որոնք արտադրում են ինդուստրիալ սարքավորումներ, այլ նրանցում, որոնք արտադրում են սպառողական բարիքներ:

Այդ «դժվարությունների արմատը» ընկած է գնագոյացման և գների շարժի մեխանիզմի խորքերում:

Տնտեսագիտության տեսության մեջ ոչինչ այդքան սխալի և տարաձայնությունների առիթ չի հանդիսացել, որքան «արժեք» հասկացության անորոշ և ոչ հստակ իմաստի մեկնաբանությունները, այնուհանդերձ, տնտեսական կյանքում վերջինիս ունեցած դերը բացառիկ է, հաշվի առնելով դրանց՝ բոլոր տնտեսական չափումների հիմքում ընկած լինելու հանգամանքը: Դրանով է բացատրվում սույն հոդվածի արձարծումների **արդիականությունն ու նպատակը**:

Խնդիր է դրվել ներկայացնել գնագոյացման և գների ընդհանուր շարժի մեխանիզմները, վեր հանել կապիտալացման և սպառման միջև առկա փոխկապերը՝ դրանով իսկ նշմարելով տնտեսական կյանքի հավասարակշռության պահպանման հանգուցային թելերը:

Գրականության վերլուծություն

Արժեքի տեսության, բարիքների օգտակարության, կապիտալացման և գերարտադրության հարցերի վերլուծության մեթոդոլոգիական մոտեցումները տրվել են ինչպես դասականների, այնպես էլ տնտեսագետների բազմաթիվ սերունդների աշխատություններում:

Ուշագրավ է հայ տնտեսագետ Մենտոր Բունիաթյանի(1877-1969) վերը նշված հարցերի շուրջ կատարած հետազոտությունները, որոնցում տնտեսական

Ճգնաժամերի հարցը բխեցնելով արժեքի, ինչպես նաև գների շարժի հիմնահարցից, նա ծավալուն հետազոտությամբ ներկայացնում է վերջիններիս փոխկապվածությունը: Եվ թեև Բունիայթյանի հրապարակումները ուշադրության են արժանացել թե իր ժամանակի և թե որոշ ժամանակակից տեսաբանների կողմից, այնուհանդերձ Econlit-ում (American Economic Association) չկա և ոչ մի գրառում կապված նրա անվան հետ, իսկ PCI-ում (Periodicals Contents Index) վերջին գրառումը եղել է 1968 թ.-ին: Մինչդեռ արդի զարգացումները Բունիայթյանի հայացքների ներքին տրամաբանության ու մեթոդաբանության հետ ունեցած կապերի առումով անգնահատելի են:

Մեթոդաբանություն.

Որպես շարադրման սկզբունք ընտրվել է պատմաքննական վերլուծության մեթոդը:

Վերլուծություն.

Հայտնի, որ գների համակարգը արտահայտում է բարիքների հասարակական արժեքի փոխադարձ հարաբերությունները: Բարիքների ընդհանուր արժեքի մասին խոսելիս՝ հաշվի առնելով նրա արատրակտ բնույթը, պետք է նկատի ունենալ յուրաքանչյուր բարիքի հարաբերական քանակական նշանակությունը: Նշվում է բարիքի արժեքի փոփոխության երկակի ազդեցությունը. այն մի կողմից ազդում է գների ընդհանուր մակարդակի վրա՝ որպես վերջինիս ամբողջության մի մասի փոփոխության՝, մյուս կողմից՝ ազդելով մի շարք այլ ապրանքների արժեքների վրա, փոփոխում է գների ողջ համակարգը: Այդ փոփոխությունների հիմքում ընկած է բարիքի սահմանային օգտակարության փոփոխությունը, որի ազդեցությունը այլ բարիքների սահմանային օգտակարության մեծության վրա կարող է բավականին տարբեր լինել: Նման փոխազդեցության պատճառը, ըստ Մենտոր Բունիայթյանի, բարիքների միջև առկա արտադրական կապն է, այսինքն, այն որ մի բարիքից օգտվելը կապված է այլ կոմպլիմենտար բարիքների առկայությունից և որ շատ կարևոր է, այդ բոլոր բարիքների արժեքները, բարիքների նշանակության հարցում, իրենց հիմքում ունեն շփման մի ընդհանուր կետ, այն է՝ բավարարել մարդու պահանջումները: Բնական է, որ նման փոխազդեցության դեպքում բարիքների արժեքների ճիշտ հարաբերակցությունը ենթադրում է նաև բարիքների գների և արժեքների փոփոխություն: Ինչ վերաբերում է գների ընդհանուր մակարդակի փոփոխություններին, ապա վերջիններս արտահայտում են բարիքների հասարակական սահմանային օգտակարության մակարդակի փոփոխությունները: Ըստ որում՝ վերը նշված փոփոխությունները ուղեկցվում են գնագոյացման կարևոր գործոնի՝ հասարակական բաշխման մեջ համապատասխան փոփոխություններով:

Ինչպես գիտենք, բարիքների որոշակի կատեգորիայի ամբողջական քանակության ընդհանուր արժեքը որոշում է այդ բարիքների տերերի անվանական

* Նկատենք որ, որոշ տնտեսագետներ, մասնավորապես Ա.Մարշալը, գինը առանց մնացորդի տարրալուծել է արժեքի մեջ, ինչը շատերի կողմից արժանացել է բավականին լուրջ քննադատության:

գնողունակ ուժը: Այդ բարիքների ընդհանուր արժեքը կարող է փոփոխվել ինչպես գների շարժման ուղղությամբ, այնպես էլ հակառակ: Փորձելով տեսնել բոլոր բարիքների ամբողջության ընդհանուր արժեքի շարժը, Բունիաթյանը հատուկ կանգ է առնում բարիքների արժեքի ձևավորման՝ որպես տնտեսագիտության ֆունդամենտալ հիմնախնդրի, հիմնական օրենքի վրա: Իր քննությունը նա սկսում է հոլանդահնդկական ընկերության մի օրինակից, երբ Հնդկաստանից Եվրոպա արտահանվող ապրանքների մի մասը գնվում և ոչնչացվում էր այդ ընկերության կողմից՝ ակնկալելով մնացածի համեմատությամբ շատ ավելի մեծ շահույթ, քան կարելի էր սպասել սկզբնական քանակության վաճառքից: Նման օրինակներն էլ պատճառ հանդիսացան XVII դարավերջին, Արթուր Քինգի հետազոտությունների հիման վրա ձևակերպելու բերքատվությունից կախված հացահատիկի գների կազմավորման օրենքը, որը գների տեսության համար ունենալով նկատելի նշանակություն, հետագայում առիթ տվեց նոր հետազոտությունների և նոր կանոնների սահմանման: Ինչպես օրինակ Ու.Ջևոնսի ձևակերպումը, որը վերջինիս տալիս է մաթեմատիկական արտահայտություն, ըստ որի բերքատվության փոփոխությունը թվաբանական պրոգրեսիայով բերում է գնի փոփոխության երկրաչափական պրոգրեսիայով, բերքատվության նկատմամբ հակառակ ուղղությամբ: Ընդ որում՝ նա գտնում է, որ այդ օրենքը զարմանալի համապատասխանություն է հայտնաբերում Վերեր-Ֆեյնների հոգեֆիզիկական այն հիմնական օրենքի հետ, համաձայն որի զգացողություններն աճում կամ թուլանում են երկրաչափական պրոգրեսիայով, այն դեպքում, երբ այդ զգացողություններն առաջ բերող զրգոման ուժը մեծանում կամ փոքրանում է թվաբանական պրոգրեսիայով: Այստեղից էլ, հոգեֆիզիկական օրենքն արտահայտելով արժեքի տեսության լեզվով և կոնյունկտուրայի տեսության հիմքում ելակետ ընդունելով հենց այդ հետազոտական դաշտը, Մ.Բունիաթյանը նույն տրամաբանությամբ ձևակերպում է բարիքների սուբյեկտիվ արժեքի ձևավորման իր սկզբունքը. «Բարիքների սահմանային օգտակարությունը մեծանում կամ փոքրանում է երկրաչափական պրոգրեսիայով, երբ բարիքների ամբողջության քանակական հարաբերակցությունը իրենց պահանջի նկատմամբ փոփոխվում է հակառակ ուղղությամբ, այն էլ թվաբանական պրոգրեսիայով»¹: Փաստորեն, բարիքների քանակության թվաբանական պրոգրեսիայով ավելացման և դրանց նկատմամբ անփոփոխ պահանջի դեպքում, կամ էլ պահանջի թվաբանական պրոգրեսիայով պակասեցման և բարիքների անփոփոխ քանակության դեպքում դրանց սահմանային օգտակարությունը պակասում է երկրաչափական պրոգրեսիայով:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք, ստացվում է, որ սուբյեկտիվ արժեքի ձևավորման հիմնական կանոնը կազմում է բարիքների հասարակական արժեքի կազմավորման հիմքը. որն է բարիքի քանակության փոքրացումը տանում է այդ բարիքի մեկ միավորի արժեքի և գնի այնպիսի աճի, որ նույնիսկ տվյալ բարիքի այդ պակաս քանակության ընդհանուր արժեքը սկզբնականի համեմատ աճում

¹ М.Бунятян, Экономические кризисы, М.,1915, с.146.

է, և ըստ որում՝ որքան մեծ է քանակության պակասը, այնքան մեծ է ընդհանուր արժեքի աճը: Բարիքների քանակության ավելացման դեպքում տեղի է ունենում ուղիղ հակառակը: Արդյունքում, երկու դեպքում էլ հետևանքը լինում է այն, որ փոխվում է թե՛ գների ընդհանուր մակարդակը, և թե՛ բոլոր բարիքների ամբողջության ընդհանուր արժեքը: Փաստորեն, ինչպես բարիքների առանձին տեսակների գները, այնպես էլ գների ընդհանուր մակարդակը տատանվող մեծություններ են և շատ զգայուն՝ բարիքների անհրաժեշտության և դրանց քանակության հարաբերակցության նկատմամբ: Ինչ վերաբերում է պահանջմունքների փոփոխության ազդեցությանը գների վրա, ապա այստեղ նշվում է այն հանգամանքը, որ մարդկանց պահանջմունքները, բարիքների արժեքի վրա ազդեցություն ունենալու կարողության հետևանքով կախվածության մեջ են գտնվում գնողունակ ուժից: Այդ պատճառով, պահանջարկի փոփոխությունը հանգեցվում է գնողունակ ուժի բաշխմանը՝ դրանով իսկ ունենալով տարբեր ազդեցություն առանձին բարիքների արժեքների վրա: Այս առումով, Բունիայայանը դիտարկում է երեք սխեմաներ: Առաջին դեպքում նա ցույց է տալիս, թե ինչպես է պահանջարկի մասամբ տեղափոխումը մի բարիքից մյուսը, մի կողմից առաջացնում ապրանքների առանձին խմբի հասարակական սահմանային օգտակարության և գների անկում, իսկ մյուս կողմից՝ ապրանքների մեկ այլ խմբի օգտակարության և գների աճ՝ դրանով իսկ փոխհատուցելով բոլոր բարիքների գների ընդհանուր մակարդակի և ընդհանուր արժեքի վրա ազդեցությունը: Երկրորդը այն դեպքն է, երբ մի շարք բարիքների պահանջարկը կենտրոնանում է մեկ կամ քիչ թվով բարիքների վրա, սակայն ի տարբերություն առաջինի, այստեղ տեղի է ունենում ոչ միայն պահանջարկի տեղափոխում, այլև պահանջարկի ինտենսիվության փոփոխություն: Փաստորեն ստացվում է, որ այդ քիչ թվով բարիքների պահանջարկը դառնում է շատ ավելի ինտենսիվ և հետևաբար ազդեցությունը վերջիններիս արժեքների բարձրացման վրա լինում է շատ ավելի ուժեղ, քան մեծ թվով բարիքների պահանջարկի համապատասխան իջեցումը դրանց արժեքների փոքրացման վրա: Բնական է, որ պահանջարկի կրճատումը կրեքի տվյալ բարիքների արժեքի և գների իջեցման, իսկ ավելացումը՝ արժեքի և գների շատ ավելի մեծ բարձրացման: Հետևաբար, չեզոքացվում է ոչ միայն բարիքների գների ընդհանուր մակարդակի և ընդհանուր արժեքի իջեցումը, այլև գրանցվում է որոշակի աճ: «Այսպիսով, - եզրակացնում է Բունիայայանը, - պահանջարկի համակենտրոնացումը առաջ է բերում բարիքների ամբողջության արժեքի և գների ընդհանուր մակարդակի բարձրացում»¹: Դժվար չէ նկատել պահանջարկի համակենտրոնացման առկայությունը նույնիսկ այն դեպքում, երբ բարիքների քանակը կրճատվում է, իսկ դրանց նկատմամբ պահանջը մնում է անփոփոխ: Մինչդեռ, երբ այդ բարիքների ընդհանուր արժեքը մեծանում է, գնորդներից բնականաբար պահանջվում է ավելի մեծ գնողունակ ուժ՝ ընդ որում նվազ անհրաժեշտ այլ բարիքների հաշվին: Միակ տարբերությունն այն է, որ միևնույն գնի

¹ М.Бунятян, Экономические кризисы, М.,1915, с.156.

Ժամանակ բարիքների ամբողջության ընդհանուր արժեքը այս դեպքում լինում է ավելի ցածր, քան պահանջարկի մեծացման ժամանակ:

Եվ վերջապես, պահանջարկի փոփոխման երրորդ դեպքը ենթադրում է մի բարիքի (կամ ոչ մեծ քանակությամբ բարիքների) պահանջարկի տեղափոխումը հայտնի քանակով (կամ ավելի մեծ թվով) բարիքներին: Այստեղ, ի տարբերություն նախորդի, տեղի է ունենում ոչ թե «պահանջարկի համակենտրոնացում», այլ «պահանջարկի դիֆուզիա»: Որոշ խումբ բարիքների արժեքի և գների բարձրացումը ոչ թե չեզոքացնում է պահանջարկի կրճատմամբ պայմանավորված որոշակի բարիքների արժեքի և գների անկումը, այլ ինքն է չեզոքացվում վերջինիս ազդեցությունից: Տնտեսական փոփոխականների միջև ուղիղ կախվածությունները ավելի քիչ են, քան հակադարձը: Տվյալ դեպքում նույնպես. բարիքների ամբողջության ընդհանուր արժեքն ու գների ընդհանուր մակարդակը իջնում են: Այս դեպքում էլ, եթե զուգահեռ տանենք որևէ բարիքի քանակության ավելացման հետ դրա նկատմամբ անփոփոխ պահանջի դեպքում, ապա կտեսնենք, որ վերջինիս ընդհանուր արժեքը իջնում է՝ դրանով իսկ թույլ տալով նախկինում պահանջվող գնողունակ ուժին ուղղվելու դեպի մի շարք այլ ապրանքների կողմը: Պարզ է, որ այստեղ էլ մինևույն գնի դեպքում բարիքների ամբողջության ընդհանուր արժեքը կլինի ավելի բարձր, պահանջարկի կրճատման դեպքի համեմատ:

Հենց այդ տրամաբանությամբ էլ Մ.Բունիայանը ընդհանրացնում է. «առանձին բարիքների գների փոփոխությունները, թե դրանց պահանջարկի տեղափոխման և թե քանակության փոփոխման հետևանքը լինելուց զատ, առաջացնում են բարիքների ամբողջության դրամական արժեքի ուժեղ տատանումներ և գների ընդհանուր շարժ դեպի առանձին բարիքների սկզբնական փոփոխությունների կողմը»¹: Ըստ էության վերը թվարկված երեք դեպքերը ժամանակակից գրականության մեջ ստացել են «միացում մեծամասնությանը», «սնորի» էֆեկտ և Վեբլենի էֆեկտ անվանումները:² Ինքնըստինքյան առաջադրվում է գների շարժի մի նոր գործոն: Խոսքը բաշխման մասին է:

Հայտնի է, որ կապիտալիստական տնտեսակարգում գները հասարակական բաշխման կարևորագույն լծակն են: Գների շարժի ժամանակ բարիքների ընդհանուր արժեքի և գնողունակ ուժի փոփոխությունները, լինելով հասարակական հարստության գնահատման հետևանք, իրենց հիմքում ունեն հարաբերական արժեքի տարբեր միավորներ, քանի որ հարաբերական արժեքը կամ փողի գնողունակ ուժը փոքրանում է գների վերելքի հետ, և մեծանում՝ գների անկման ժամանակ:

Այսպիսով, ընդհանուր գնողունակ ուժի տատանումները, ըստ Մ.Բունիայանը, ստանում են հասարակական բաշխման փոփոխության վրա ազդող գոր-

¹ M.Bouniatian, Les crises économiques, Essai de morphologie et théorie des crises économiques périodiques, Paris, 1930, p.247.

² Лейбенштайн Х. Эффект присоединения к большинству, эффект сноба и эффект Веблена в теории покупательского спроса/ Вехи экономической науки. Теория потребительского поведения и спроса. Т1. Под ред. В.М. Гальперина. СПб.: Экономическая школа. 2000. С. 304-326.

ծոնի նշանակություն: Գների բարձրացումը կենտրոնացնում է գնողունակ ուժը, իսկ գների իջեցումը՝ ապակենտրոնացնում այն:

Ըստ էության, վերը նշված գնային փոփոխություններն արտացոլում են կոնյունկտուրայի շարժման սկիզբը: Հետևելով գների շարժման մեխանիզմին, Մ.Բունիայանը փորձում է գտնել դրանց սահմանները: Նախ, նա քննում է գների ընդհանուր պրոգրեսիվ բարձրացման ընթացքի ծագումն ու զարգացումը: Գների համեմատաբար հավասարակշռված մակարդակի ժամանակ որևէ սպառողական բարիքի արժեքի կտրուկ մեծացումը բարձրացնում է վերջինիս և նման բարիքների գները՝ կենտրոնացնելով գնողունակ ուժը այդ բարիքի տերերի ձեռքում: Գների հետագա ընթացքը կախված է այդ գնողունակ ուժի բաշխումից: Հիմնականում այն ուղղվում է արտադրամիջոցների ձեռքբերմանը և շատ հազվադեպ է ունենում նույն կիրառումը, ինչ որ նախորդներին էր: Բնական է, որ այդ դեպքում գների շարժումը այդքանով կվերջանար: Ինչ վերաբերում է առաջինին, ապա դա շատ արդարացված ընտրություն է, քանի որ խնայողությունների գլխավոր միջոցը՝ դրանց վերածումն է արտադրամիջոցների: Իսկ կապիտալի կուտակումն ու հարստացումը, ինչը ավելանում է բաշխման անհավասարաչափ աճի հետևանքով, տնտեսական գործունեության կարևոր խթաններից մեկն է, և իր հենարանն այն գտնում է հենց ստեղծված կոնյունկտուրայում: Սպառողական բարիքների գների աճը մեծացնելով դրանց արտադրությունը, էլ ավելի է մեծացնում արտադրության միջոցների նկատմամբ պահանջարկը՝ նոր դաշտ ստեղծելով կապիտալացման համար: Պահանջարկի կենտրոնացումը դեպի արտադրական բարիքներն ունենում է նույն հետևանքները՝ արժեքի և գների բարձրացում և դրանց սեփականատերերի ձեռքում գնողունակ ուժի կենտրոնացում, ինչը շղթայաբար կրկին տանում է արտադրամիջոցների արտադրության ավելացմանը: Եվ այդպիսով, սկիզբ է դրվում գների վերելքային շարժին, որն ինքնաբերաբար պահպանվում ու ընդլայնվում է: Ուշագրավն այն է, որ մի կողմից, որպես այդ շարժման ելակետ կարելի է ընդունել արտադրական բարիքների գները, բայց մյուս կողմից՝ դրանց գների բարձրացման սկզբնապատճառը սպառողական բարիքների արժեքի բարձրացումն էր: Սակայն նկատենք, որ արտադրամիջոցների նկատմամբ պահանջարկը պայմանավորված է ոչ միայն սպառողական բարիքների արտադրությամբ, այլ նախ և առաջ խնայողությունների բաշխմամբ, ինչն էլ՝ կախված բարիքների հարաբերական արժեքի դիֆերենցիալային, գների բարձրացումը տարածում է գրեթե բոլոր կարգի բարիքների վրա: Նման պարագայում գների ընդհանուր բարձրացումը խթանում է ձեռնարկատիրական գործունեությանը, իսկ հարաբերական արժեքի միավորի փոքրացումը՝ նպաստում է սպեկուլյացիայի առաջացմանը: Այստեղ նույնպես առաջատարի դերում արտադրական բարիքների արտադրությունն է, սակայն եթե նույնիսկ ձեռնարկատերը ունենում է զուտ անվանական շահույթ, այնուհանդերձ, այն պայքարի միջոց է՝ ուղղված բաշխման մեջ ոչ բարենպաստ փոփոխություններին:

Այն, որ գների վերելքային շարժումը մշտապես չի կարող շարունակվել՝ հասկանալի է, բայց ո՞րն է վերջինիս սահմանը: Մ.Բունիայանը տալիս է

հետևյալ պատասխանը.«գների բարձրացումը մի կողմից՝ ազդելով բաշխման, իսկ մյուս կողմից արտադրության վրա հենց ինքն է ստեղծում իր սահմանները»¹: Գների բարձրացումը գնողունակ ուժը կենտրոնացնում է այն քիչ թվով ձեռներեցների ձեռքում, որոնց բարիքների հարաբերական արժեքը մեծացել է: Բնական է, որ ֆիքսված եկամուտ ունեցողների գնողունակ ուժը կրճատվում է, կրճատելով նաև սպառումը, բայց ոչ բացարձակ իմաստով, քանի որ տնտեսական վերելքի փուլում արտադրական գործընթացի ինտենսիվացման ժամանակ սպառումը իրականում մեծանում է: Սակայն, ինչպես նկատում է Բունիաթյանը, «գնողունակ ուժի կենտրոնացումը անկախ սպառման մեծացման հետ որևէ համապատասխանությունից պետք է տանի պահանջարկի կազմի և հասարակական արտադրության բաշխման փոփոխությունների՝ ի օգուտ արտադրական բարիքների»²: Քանի դեռ ոչինչ չի խանգարում արտադրական բարիքների ինտենսիվ արտադրությանը, այն գնալով միայն ընդլայնվում է: Սակայն վերջիններիս նկատմամբ առկա այդ պահանջարկի անընդհատությունը ենթադրում է, որ ուժեղ կապիտալացումը կարող է անկախ լինել սպառման մեծացումից և բոլորովին չվնասել կապիտալի արժեքին, այսինքն՝ արտադրական բարիքների հասարակական սահմանային օգտակարությանը՝:

Հայտնի է, որ կապիտալի տեսությունը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դասականների հայեցողության մեջ: Դա միանգամայն համապատասխանում էր հաղթականորեն զարգացող կապիտալիզմի ոգուն: Ինչպես ասում էր Ջ.Ս.Միլը, «կապիտալի ցանկացած ավելացում անսահման մեծացնում է կամ ունակ է մեծացնելու արտադրությունը»³, սակայն չառաջացնելով գերարտադրություն:

